

ՀԱՋԳԵՆ ԿԱՐԳԱՆՑԱՆ

ՖԻԼԱՆՍՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՐ ՏԵՄԻՔՅՈՒՆ,
ՖԻԼԱՆՍՆԵՐ.

ՁԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻԼԱՆՍՆԵՐ.

ՁԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.

ՈՒՍՈՐՆԱԿԱՆ ՁԵՆՆԱՐԿ

ՎԱԶԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ՖԻՆԱՆՍՆԵՐ.
ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍՆԵՐ.
ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՉԵՌՆԱՐԿ

**«ԵԳԵԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2005**

ՀՏԴ 336 (07)

ԳՄԴ 65.9 (2) 29 ց73

Վ 301

«ՄՖԲ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԳԵՄԻԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱԶԳԵՆ ԱՐԱՍԱՅԻՄԻ

Վ 301 Ֆինանսների ընդհանուր տեսություն. ֆինանսներ.
Չեղմարկությունների ֆինանսներ.
Չեղմարկությունների տնտեսագիտություն.- Եր.: Եգեա, 2005.-
էջ 464:

Նախատեսված է բուհերի, քոլեջների «Ֆինանսներ և վարկ» և այլ տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների, դասախոսների, ասպիրանտների և մագիստրանտների համար, ինչպես նաև պետական ֆինանսական մարմինների, ՏԻՄ-երի , առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսագիտական ծառայությունների աշխատակիցների ու անհատ ձեռնարկատերերի համար:

Վ $\frac{0605010204}{0069 (01) 05}$ 2005թ.

ԳՄԴ 65.9 (2) 29 ց73

ISBN 99941-931-9-8

*

© Վարդանյան Վ., 2005թ.
© «Եգեա», Զևավորման և տպագրության համար

«ՄՖԲ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԳԵՄԻԱ

Հրատարակվում է «ՄՖԲ» ֆինանսական ակադեմիայի երաշխավորությամբ

Մասնագիտական խմբագիր՝ Կարինե Թերլեմեզյան, տ.գ.թ., դոցենտ, Տերնուպոլի պետական

տնտեսագիտական համալսարան, Երևանյան մասնաճյուղ

Ուսումնական ձեռնարկի նախաբանը՝ Կորյուն Աթոյանի, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի փոխնախարար, տնտեսագիտության դոկտոր

Գրախոսներ՝

ՀՀ ԿԱ Հարկային պետական ծառայության պետի տեղակալ՝ Արմեն Ալավերդյան, տ.գ.թ.

Էլիզա Զախյան, տ.գ.թ. , դոցենտ

Հայ-նուսական (սլավոնական)

պետական համալսարան,

ՀՀ ԳԱԱ.Տնտեսագիտության

ինստիտուտի ավագ գիտաշխատող

Սերժ Օհանջանյան, տ.գ.թ., դոցենտ, ԵՊՃՀ

Ն.Հայրիյան, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ

Շենգավիթ մասնաճյուղի կառավարիչ

Գեղամ Մերգոյան, ՀԳԱ-ի դասախոս,

«Գարանտ-Լիմենս» ապահովագրական

ընկերության տնօրեն

ОБЩАЯ ТЕОРИЯ ФИНАНСОВ . ФИНАНСЫ.
ФИНАНСЫ ПРЕДПРИЯТИЯ.
ЭКОНОМИКА ПРЕДПРИЯТИЯ

Учебное пособие
(на армянском языке)

Учебное пособие состоит из трех самостоятельных дисциплин: общая теория финансов (финансы), финансы предприятия и экономика предприятия. Причем, темы этих дисциплин рассмотрены во взаимосвязи, в 14 главах: с теоретической и практической точки зрения, с решением десятков задач.

Рассматриваются актуальные аспекты общей теории финансов, вопросы функционирования и организации государственных, местных, хозяйствующих субъектов и домашних хозяйств в условиях рыночной экономики в Армении. Эти вопросы впервые представляются на армянском языке при рыночных условиях. Также рассматриваются роль, принципы, сущность, функции, формы проявления, распределения (перераспределения), использования и контроля финансов государства, местных органов самоуправления, хозяйствующих субъектов и домашних хозяйств (населения).

Рассматриваются также финансовая политика, бюджетная система, финансовое планирование, бюджеты всех уровней, внебюджетные фонды, налоги и налогообложение в РА и вопросы организации контрольно-аналитической работы в финансовых органах и на предприятиях. Рассмотрены вопросы обеспечения безубыточности предприятий посредством эффективности сил финансового рычага, финансовый левиредж и другие вопросы организации финансов и экономики предприятия.

Для студентов и преподавателей экономических, финансовых вузов и студентов других вузов и колледжей, обучающихся по специальности "Финансы и кредит" и других экономических специальностей, работников финансовых органов, финансово-экономических служб предприятий, бизнесменов и для аспирантов, магистрантов по специальности "Финансы и кредит".

Е р е в а н – 2 0 0 5

Նվիրում եմ սիրելի ուսանողությանը՝
Որպես գիտական արժեք,
Սպասում գիտելիքների բարձրացմանը
Որպես փոխհատուցում՝ համարժեք:

Հարգանքներով՝ հեղինակ

Հեղինակը շնորհակալություն է հայտնում «ԵԳԵԱ» հրատարակչության ղեկավարությանը և ամբողջ կողակտիվին՝ սույն ուսումնական ձեռնարկի հրատարակության գործում իրենց բարեխիղճ և որակով աշխատանքի համար:

Հեղինակը շնորհակալություն է հայտնում նաև «ՄՅԲ» ֆինանսական ակադեմիայի ղեկավար՝ պրոֆեսոր Էդուարդ Գասպարյանին՝ ուսումնական ձեռնարկի հրատարակությանը աջակցելու համար:

Հեղինակը, միաժամանակ, երախտապարտ է ուսումնական ձեռնարկի գրախոսողներին, մասնագիտական խմբագրին և երախտապարտ կլինի նաև այն դասախոս-գիտնականներին, արհեստավարժ մասնագետներին, որոնք իրենց առաջարկություններն ու դիտողությունները կհայտնեն հեղինակին և որը հաշվի կառնվի ուսումնական ձեռնարկի հետագա հրատարակության ժամանակ:

Միաժամանակ, հարկ է նշել, որ թեև հեղինակն աշխատում է Տերնոպոլի պետական տնտեսագիտական համալսարանի երևանյան մասնաճյուղում, որպես դոցենտ (1999 թվականից համարվում է Երևանի կիրառական բիտեխնոլոգիայի ինստիտուտի պրոֆեսոր, սակայն դեռևս ձևակերպված չէ ՀՀ ԲՈՀ-ով), որը դեռևս չունի գիտխորհուրդ և ամբիոններ, իսկ ըստ ուկրաինական Տերնոպոլի պետական տնտեսագիտական համալսարանի ղեկավարության, մասնաճյուղի տնօրենն իրավասու չէ ուսումնական ձեռնարկն ինքնուրույն երաշխավորել հրատարակության Հետևապես, հրատարակության հարցը Տերնոպոլի պետական տնտեսագիտական համալսարանի միջոցով լուծելու համար կայահանգժվի երկար ժամանակ: Եվ քանի որ, հեղինակը երկար տարիներ համարվել է «ՄՅԲ» ֆինանսական ակադեմիայի դոցենտ, ապա ձեռնարկը հրատարակվում է ակադեմիայի երաշխավորությամբ:

© Մտավոր սեփականության հեղինակային իրավունքը պաշտպանելու համար առևտրային նպատակով գրքի պատճենահանումը, հրատարակումն այլ անձանց կողմից, խստիվ արգելվում է: Խախտումը հետապնդվում է «Հեղինակային իրավունքի մասին» ՀՀ օրենքով:

Հեղինակ

Ուսումնական ձեռնարկի տնտեսագիտական հաշվարկներին մասնակցել են նաև տնտեսագետ-հաշվառիներ՝ Լյովա, Արմեն և Արթուր Վարդանյանները ու հաշվապահ Արև Ջահանի Ասիրյանը:

* * *

Այս ուսումնական ձեռնարկը, որն առաջինն է գրված մայրենի լեզվով, կարող է փոխարինել երեք ինքնուրույն դասընթացների հիմնական գրականությանը՝ ներքոնկառուցված ուսուցանողական (ուսումնական ձեռնարկներին), որոնք նախատեսված են բուհերի «Ֆինանսներ և վարկ» և տնտեսագիտական այլ մասնագիտությունների ուսանողների և համանման մասնագիտության քոլեջների սովորողների համար:

1. Общая теория финансов. Финансы.

2. Финансы предприятия.

3. Экономика предприятия.

Մեր կողմից գրված ամբողջական ուսումնական ձեռնարկը համապատասխանում է ոչ միայն վերը նշված ուսուցանողական (ուսումնական ձեռնարկների) պահանջներին, այլև պետական բուհերի «Ֆինանսներ և վարկ» և տնտեսագիտական այլ մասնագիտությունների ուսումնական առարկայական ծրագրերին:

Այս ուսումնական ձեռնարկը առաջինն է մեր երկրում, որ ամբողջական կարգով և գրված է մայրենի լեզվով՝ հաշվի առնելով նմանօրինակ ուսումնական գրականության միջազգային և ռուսական փորձը, ինչպես նաև գիտատեսական և գիտագործնական հարուստ նյութերի հիման վրա շարադրված է ֆինանսների էությունը, ֆինանսական, բյուջետային, հարկային համակարգերը, բոլոր մակարդակների բյուջեները և նրանց կատարման վիճակը:

Ուսումնական ձեռնարկի գրելուն նպաստել է վերջին 15 տարիների (1991-2005թթ.) մեր աշխատանքի փորձը՝ կապված նշված երեք դասընթացների պետական և ոչ պետական բուհերում դասավանդման, «Ֆինանսներ և վարկ» մասնագիտության, այդ թվում՝ «Ֆինանսներ և բանկային գործ» մասնագիտացման ուսումնական պրակտիկայի ղեկավարի մեր փորձը (ուսանողների պրակտիկայի կազմակերպումը, պրակտիկայի հաշվետվությունների, կուրսային և դիպլոմային աշխատանքների ղեկավարումը):

Դրան նպաստել է նաև արտադրության մեջ մեր 20-ամյա աշխատանքի փորձը տարբեր պաշտոններում (հաշվապահ, գլխավոր տնտեսագետ, պետական ձեռնարկության տնօրեն), այնուհետև գիտամանկավարժական աշխատանքի փորձը (ավագ դասախոս, դոցենտ, ամբիոնի վարիչ, բաժնի վարիչ, պրոֆեսոր՝ ֆինանսական մենեջմենթ ուսումնական ձեռնարկը 1999թ. հրատարակելու համար) և վերջապես հիմքը հանդիսացել

է ատենախոսության պաշտպանությունը՝ «Արտադրանքի ինքնարժեքի իջեցման, շահույթի ավելացման և շահութաբերության բարձրացման ուղիները» թեմայով:

Եվ վերջապես, հարկ ենք համարում հիշեցնել մեր գործընկերներին՝ ամերիկյան ժամանակակից մենեջմենթի հիմնադիր Փիթեր Դրաքերի հետևյալ իմաստուն խոսքերը. «Գիտությունը գիտունների համագործակցության արդյունք է: Գիտունները հեռանում են աշխարհից, իսկ գիտությունը, որպես արժեք, մնում է»:

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ



Ստանալով տնտեսագիտական բարձրագույն կրթություն, իսկ մինչ այդ հաշվապահի որակավորում, երկար տարիներ աշխատել է արտադրության մեջ (շինարարություն, շինանյութերի արդյունաբերություն, գյուղատնտեսություն) սկզբում՝ որպես հաշվապահ, գլխ. տնտեսագետ, ապա պետական ձեռնարկության տնօրեն: Սովորել և ավարտել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետը՝ ստանալով գիտական տնտեսագետ-կազմակերպչի որակավորում, ինչպես նաև սովորել և ավարտել է

նախկին ՀՀ Կենտկոմին առընթեր երեկոյան համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, ապա Էկոնոմիկայի և կազմակերպման գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրան՝ պաշտպանելով ատենախոսություն՝ «Արտադրանքի ինքնարժեքի իջեցման, շահույթի ավելացման և շահութաբերության բարձրացման ուղիները» թեմայով և 1976 թ. սեպտեմբերին ստացել տնտեսագիտական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ հետագայում դոցենտի կոչում:

1999 թ. հրատարակած «Ֆինանսական մեներջմենթ» ուսումնական ձեռնարկի համար (28.5 մամուլ, 456 էջ) ստացել է պրոֆեսորի կոչում, որը դեռևս ձևակերպված չէ ՀՀ ԲՈՂ-ով: 1982 թ. անցել է գիտամանկավարժական աշատանքի՝ սկզբում նախկին Միութենական հողային ռեսուրսների գիտահետազոտական ինստիտուտի հայկական մասնաճյուղում, որպես ավագ գիտաշատող, իսկ 1985 թ. փետրվարից՝ ագրոարդյունաբերական համալիրի կառավարման նախկին բարձրագույն դպրոցում (որպես ավագ դասախոս, այնուհետև դոցենտ): 1990 թ. կառավարման բարձրագույն դպրոցը վերակազմավորվել է հանրապետական ուսումնամեթոդական կենտրոնի, ուր աշխատել է որպես «Մեներջմենթի և ագրոբիզնես»-ի ամբիոնի վարիչ, այնուհետև ամբիոնի վերակազմավորման հետևանքով՝ բաժնի վարիչ:

1982-1989 թթ, միաժամանակ, համատեղությամբ աշխատել է նախկին գյուղատնտեսական ինստիտուտում դասավանդելով «Կառավարում» և «Կազմակերպում» դասընթացները: 1990 թ. որպես դասախոս, երեք ամսով

վերապատրաստվել է Մոսկվայի Տիմիրյազևի անվան ակադեմիայում, որը, ինչպես և բուհը, ասպիրանտուրան ավարտել է գերազանց առաջադիմությամբ: Միաժամանակ, 1991-1998 թթ սովորել և ավարտել է մեներջմենթի և բիզնեսի դպրոցները, հաշվապահների որակավորման բարձրացման դասընթացները՝ ստանալով համապատասխան սերտիֆիկատներ:

1991-1992 թթ ուս. տարվանից մինչև հիմա տնտեսագիտություն, ֆինանսներ, հաշվապահական (ֆինանսական) հաշվառում է դասավանդել երկրի տարբեր պետական և ոչ պետական բուհերում: 1997-1998 ուս.տարվանից մինչև 2003-2004 ուս. տարին դասավանդել է նաև «ՄՖԲ» ֆինանսական ակադեմիայում և 2001-2002 ուս. տարվանից նաև Տերնոպոլի պետական տնտեսագիտական համալսարանի երևանյան մասնաճյուղում: 2003 թ. մարտից հիմնական աշխատանքի է անցել նշված պետական տնտեսագիտական համալսարանի երևանյան մասնաճյուղում՝ որպես դոցենտ:

Հեղինակ է 132 գիտական աշխատանքների, այդ թվում տասնյակ գրքույկների, (գիտական, ուսումնա-մեթոդական) և երեք ուսումնական ձեռնարկի, ինչպես նաև նախկին Միութենական մասնագիտական ամսագրերում տասնյակ գիտական հոդվածների:

Հեղինակի՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Վազգեն Վարդանյանի կողմից ներկայացված ամբողջական ուսումնական ձեռնարկը բաղկացած է հետևյալ երեք դասընթացներից. «Ֆինանսների ընդհանուր տեսություն», «Ձեռնարկությունների ֆինանսներ» և «Ձեռնարկությունների տնտեսագիտություն», որոնք սերտորեն շաղկապված են իրար հետ: Հաշվի առնելով այդ առանձնահատկությունը և նկատի ունենալով բուհերի, քոլեջների տնտեսագիտական, այդ թվում՝ «Ֆինանսներ և վարկ» մասնագիտությունների ուսանողների համար ամբողջական և մայրենի լեզվով մասնագիտական գրականության նկատմամբ մեծ պահանջարկը, հեղինակը նպատակահարմար է համարել, որ նշված երեք դասընթացները հրատարակվեն ոչ թե առանձին-առանձին, այլ ամբողջական մեկ ձեռնարկի տեսքով, որն էլ ընդունելի է և այն ավելի ոյուրին կդարձնի այդ դասընթացների ուսումնասիրումը ուսանողների կողմից:

Այդ տեսակետից շնորհակալ գործ է կատարել դոցենտ Վ. Վարդանյանը, որը մայրենի լեզվով հրատարակության է պատրաստել ուսումնական ձեռնարկ: Նշված դասընթացների թեմաների բովանդակությունը իրար հետ շաղկապված ձևով, ըստ պետական բուհերի ուսումնական առարկայական ծրագրերի, (հեղինակը 2001-2002 ուստարվանից աշխատում է Տերնոպոլի պետական տնտեսագիտական ակադեմիայի Երևանյան մասնաճյուղում որպես դոցենտ, իսկ մինչ այդ աշխատել է «ԱՅԲ» ֆինանսական ակադեմիայում) քննարկվում են 14 գլուխներում՝ տեսական և գործնական կարգով և երեք տասնյակից ավելի խնդիրների լուծումներով: Թվական տվյալներն ամփոփված են 30 աղյուսակներում: Շուկայական տնտեսությանը համապատասխան պարզաբանված են ֆինանսների էությունը, ֆինանսների և փողի առանձնահատկությունները, ֆինանսների և ֆինանսական համակարգի ծագումը, կառուցվածքը, ֆինանսների ընդհանուր տեսությունները (ըստ հեղինակների ուսմունքների), ֆինանսների տեսակները, ձևավորումը, բաշխումը, (վերաբաշխումը), օգտագործումն ու վերահսկողությունը՝ պետական, տեղական, տնտեսավարող սուբյեկտների ու բնակչության ֆինանսների և նրանց բյուջեների մակարդակով: Նրանում բերված են տասնյակ սխեմաներ և աղյուսակներ: Ուսումնական ձեռնարկում պարզաբանված են նաև երկրի ֆինանսական քաղաքականությունը, ՀՀ բյուջետային և հարկային համակարգերը, հարկատեսակները և նրանց բնութագիրը, բոլոր մակարդակների բյուջեները (2003-2005թթ.), եկամտների աղբյուրները և ծախսերի ուղղությունները, նրանց կառուցվածքը (ըստ աղյուսակների), պետբյուջեի կատարողականը (2002-2004 թթ.), ֆինանսական պլանավորումն և ֆինանսական աշխատանքների կազմակերպումը, սեփական ու փոխառու միջոցների արդյունավետությունը և այլ ֆինանսական ու ձեռնարկությունների տնտեսագիտության հարցեր:

Ուսումնական ձեռնարկի հրատարակությունը կարող է լավ նվեր հանդիսանալ բուհերի և քոլեջների ուսանողության համար, որոնք ուսումնասիրում են նշված դասընթացները:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի փոխնախարար, տնտեսագիտության դոկտոր Կ.ԱՌՈՅԱՆ
 «14».....03.....2005թ.

«Ֆինանսների ընդհանուր տեսությունը» կամ «Ֆինանսներ» դասընթացը գիտություն է տնտեսական հարաբերությունների, փոխադարձ կապերի համընդհանրության մասին, որոնք տեղի են ունենում փողի շրջապտույտի (դրամաշրջանառության) մեջ՝ սպասարկելով արտադրության ու շրջանառության ոլորտները և տնային տնտեսությունները: Նախկին հասարակարգում ֆինանսներն ուսումնասիրվում էր «Ֆինանսներ և վարկ» դասընթացով: Մինչդեռ, շուկայական տնտեսության պայմաններում «Ֆինանսներ և վարկ»-ը մասնագիտություն է և վարկը ուսումնասիրվում է «Փող, վարկեր, բանկեր» դասընթացով: Ֆինանսները ուսումնասիրվում են ընդհանուր և ճյուղային կտրվածքով, այսինքն որպես «Ֆինանսների ընդհանուր տեսություն» կամ «Ֆինանսներ» և «Ձեռնարկությունների ֆինանսներ»: 1970 թվականից Արևմուտքի երկրներում ձևավորվել է ընդհանուր ֆինանսների կառավարման վերաբերյալ մի նոր ինքնուրույն գիտություն՝ ֆինանսական մենեջմենթ (management -կառավարում), որը ուսուցանվում է նոր անկախություն ստացած Հայաստանում, այդ թվում ԱՊՀ-ի մյուս երկրների բուհերում:

Ֆինանսները ապրտահայտում են ապրանքափողային, ֆինանսական և դրամական հարաբերություններ: Ֆինանսների միջոցով ձևավորվում է երկրի ֆինանսական համակարգը:

«Ֆինանսների ընդհանուր տեսություն» կամ «Ֆինանսներ» դասընթացն ուսումնասիրում է երկրի ֆինանսական համակարգը որպես միասնական ամբողջություն, թեև այն իր կառուցվածքով բաղկացած է հիմնական և ենթապահովող համակարգերից, որոնք սպասարկում են երկրի տնտեսության իրական և մասնավոր հատվածները:

Ֆինանսների մասին գիտության խնդիրն է շուկայական տնտեսության պայմաններում պատրաստել ֆինանսիստներ, ֆինանսիստ-տնտեսագետներ, ֆինանսների գծով մենեջերներ (managere - կառավարիչ):

«Ֆինանսների ընդհանուր տեսություն» կամ «Ֆինանսներ» դասընթացի ուսումնասիրման օբյեկտները հանդիսանում են տնտեսական, կազմակերպական, իրավական և սոցիալական հարաբերություններ, որոնք ապրանքափողային, ֆինանսական և դրամական հարաբերությունների հետ համատեղ տեղի են ունենում առևտրային և ոչ առևտրային՝ բյուջետային կազմակերպություններում, պետական ֆինանսական և տեղական ինքնակառավարման մարմիններում, այսինքն գյուղական և

քաղաքային համայնքներում:

Դասընթացի ուսումնասիրան օբյեկտները համարվում են սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված ձեռնարկությունների և յուրսահատուկ առևտրային այլ կազմակերպությունների (առևտրային բանկեր, վարկային, ֆինանսական, ներդրումային, ապահովագրական և այլ կազմակերպություններ), ինչպես նաև պետական և տարածքային կազմավորումների, տնային տնտեսությունների (բնակչության) ֆինանսները՝ շուկայական տնտեսության պետական ֆինանսական կարգավորումը գործող հարկային, մաքսային և այլ օրենսդրությունների նորմատիվա-իրավական ակտերի հիման վրա:

«Ֆինանսների ընդհանուր տեսություն» կամ «Ֆինանսներ» դասընթացի ուսումնասիրման նպատակը հանդիսանում է ֆինանսավորման գործընթացի կազմակերպումը՝ կապված ֆինանսների ձևավորման, բաշխման (վերաբաշխման), օգտագործման և վերահսկողության հետ:

Ամբողջական ուսումնական ձեռնարկը բաղկացած է ինքնուրույն հետևյալ երեք դասընթացներից.

- Ֆինանսների ընդհանուր տեսություն. ֆինանսներ.
- Ձեռնարկությունների ֆինանսներ.
- Ձեռնարկությունների տնտեսագիտություն:

Այդ դասընթացների ուսումնասիրման թեմաները շաղկապված են իրար հետ և նպատակատարմար ենք համարել այն ուսումնասիրել մեկ ամբողջական ուսումնական ձեռնարկով, մանավանդ, որ բուհերի «Ֆինանսներ և վարկ» և տնտեսագիտական այլ մասնագիտությունների ուսանողներին ուսումնական ծրագրերով ուսուցանվում են այդ երեք ինքնուրույն դասընթացները:

1-ին բաժին - ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ (ՖԻՆԱՆՍՆԵՐ) ԳԼՈՒԽ 1. ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

1.1. Դասընթացի էությունը, խնդիրները և մեթոդները

Այս դասընթացը տնտեսագիտական գիտություն է, որն ուսումնասիրում է ֆինանսների էությունը և ֆինանսական հարաբերությունները՝ հետևյալ մակարդակով. պետական ֆինանսների, համայնքների ֆինանսների, տնտեսավարող սուբյեկտների ֆինանսների և բնակչության ֆինանսների մակարդակով: Ֆինանսները տնտեսական հարաբերություններ են, որոնք կապված են կենտրոնացված և ոչ կենտրոնացված ֆինանսների ձևավորման, բաշխման (վերաբաշխման), օգտագործման և վերահսկողության հետ:

Ֆինանսներն ուսումնասիրվում են ընդհանուր ֆինանսների տեսություն (ֆինանսներ) և ձեռնարկությունների ֆինանսներ դասընթացներով: Նախկին հասարակարգում դասընթացը ուսումնասիրվում էր «Ֆինանսներ և վարկ» դասընթացով: Արևմուտքի երկրներում 1970 թվականից ձևավորվել է ֆինանսական մի նոր գիտություն, որը կոչվում է «ֆինանսական մեներջմենթ»: Ֆինանսները կառավարում է մեներջերը: Այս դասընթացն ուսումնասիրում է ոչ միայն ֆինանսների էությունը, ձևավորումը, այլև նրա կառավարումը, որպեսզի տնտեսավարող սուբյեկտը չենթարկվի ֆինանսական սնանկացման: Ֆինանսները ուսումնասիրվում է պետական ֆինանսների մակարդակով, որն իր արտացոլումն է գտնում պետական բյուջեում: Ըստ նրա, ձևավորվում է պետական ֆինանսները, որի հաշվով էլ կառավարվում է վերաբաշխում, իրականացվում պետական կառավարման, ինչպես նաև սոցիալական ոլորտի ծախսերը: Այն ուսումնասիրում է նաև տնտեսավարող սուբյեկտների ֆինանսների ձևավորումը, բաշխումը, օգտագործումը և նրա նկատմամբ վերահսկողության ապահովումը:

Պետական ֆինանսների շնորհիվ դեռևս 16-րդ դարի վերջին ստեղծվել են ֆինանսական համակարգեր: «Ֆինանսներ» տերմինը (հասկացությունը) առաջացել է լատիներեն *finanso* բառից, որը նշանակում է վճարել, ինչպես նաև ֆրանսերեն *finance* բառից, որը նշանակում է եկամուտ, նաև՝ վճարել:

Այս դասընթացը պետական, ինչպես նաև համայնքների, տնտեսավարող սուբյեկտների մակարդակով ուսումնասիրում է հետևյալ ներքոհիշյալ հարցերը, որոնք համարվում են դասընթացի խնդիրները: Դրանք են՝

• ֆինանսների էությունը և ծագման նախադրյալները, ապրանքափողային, ֆինանսական և դրամական հարաբերությունները, ֆինանսների և փողի առանձնահատկությունները,

- ֆինանսական համակարգը և նրա կառուցվածքը,
- ֆինանսների ընդհանուր տեսությունները և հիմնադիրները,
- ֆինանսների տեսակները և ֆունկցիաները (գործառույթները),
- բյուջե հասկացությունը և նրա տեսակները (ըստ բնույթի և եկամուտների ապահովվածության),

• Պետական ֆինանսներ և պետական բյուջե: ՀՀ օրենքը պետբյուջեի մասին: Պետբյուջեի եկամուտները, նրա աղբյուրները և կառուցվածքը: Եկամուտների կառուցվածքի որոշման կարգը,

• Ֆինանսավորումը շուկայական տնտեսության պայմաններում: Կոմերցիոն (առևտրային) հաշվարկը և ինքնաֆինանսավորումը,

• Պետբյուջեի ծախսերի էությունը և նրանց ուղղությունները: Պետբյուջեի ծախսերի կառուցվածքը: Պետբյուջեի ծախսերի կառուցվածքի որոշման կարգը,

• Պետբյուջեի դեֆիցիտը (deficite - ճեղքվածք) և նրա ծածկման աղբյուրները,

• Տարածքային (համայնքային) բյուջե: Տեղական բյուջեի եկամուտների աղբյուրները և ծախսերի ուղղությունները,

• Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսները և ֆինանսական պլանը՝ եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը,

• Տնտեսավարող սուբյեկտների ծախսերը և եկամուտները (հասույթը): Հասույթի և շահույթի ձևավորման աղբյուրները և նրանց բաշխման կարգը,

• Հարկերը և հարկումը տնտեսավարող սուբյեկտներում: Արթուր Լաֆերի կորը հարկադրույթների և պետբյուջեի եկամուտների վերաբերյալ,

• Ֆինանսական պլանավորում (ծրագրավորում): Տնտեսավարող սուբյեկտների ինքնաֆինանսավորումը և սեփական ֆինանսական պաշարների աղբյուրները,

• Բնակչության (տնային տնտեսության) ֆինանսները: Բնակչության եկամուտներն ու ծախսերը և նրանց կառուցվածքը: Բնակչության եկամուտների և ծախսերի կառուցվածքի որոշման կարգը,

• Ֆինանսական՝ գործառնական արդյունավետության լծակ: Ֆինանսական լեբրիդջ (ֆինանսական լծակ, միջոցներ՝ նպատակին հասնելու համար) և նրա արդյունավետությունը,

• Ներդրումները որպես ֆինանսներ: Ներդրումների տեսակները և ուղ-

ղությունները,

• Ֆինանսական մարմինները: Ֆինանսների և ֆինանսական աշխատանքների կազմակերպումն ու վերահսկողությունը:

• Դասընթացի ուսումնասիրման մեթոդների հիմքը հանդիսանում է տնտեսագիտության տեսությունը, սակայն ֆինանսներին բնորոշ է նաև դրա շակի յուրահատուկ մեթոդներ, ինչպիսիք են ֆինանսական վիճակի վերլուծությունը, գործակիցների վերլուծության մեթոդը, կառուցվածքի վերլուծությունը, ֆինանսների գործառնական լծակի և իրացվելիության վերլուծությունը, ֆինանսական լեբրիդջի արդյունավետության որոշումը և այլն:

1.2. Ֆինանսների էությունը և ծագման նախադրյալները:

Ապրանքափողային, ֆինանսական և դրամական հարաբերությունները որպես ֆինանսներ

Պետական մակարդակով ֆինանսները ձևավորվել են 16-րդ դարի վերջին, երբ կապիտալիզմը հաղթանակ տարավ ճորտատիրության նկատմամբ: Այդ ժամանակ էլ ձևավորվել է երկրների ֆինանսական համակարգը և նրանց պետական բյուջեները: Մյուսից, ստրկատիրական և ճորտատիրական հասարակարգերի ժամանակ պետության գոյատևման հիմքը հանդիսացել են հարկերը: հիմնականում բնամթերքի տեսքով, իսկ կապիտալիզմի ժամանակ բոլոր տեսակի հարկերը փոխարինվել են այր-ժեքային ձևի և հանդես եկել որպես ֆինանսներ: Ֆինանսները տնտեսական հասկացություններ են և այտահայտում են տնտեսական, ֆինանսական և դրամական հարաբերություններ: Այդ հարաբերությունների հիմքը տնտեսական, ֆինանսական գործարքներն են, որոնք հանդես են գալիս ապրանքափողային հարաբերությունների ձևով:

1.3. Ապրանքափողային, ֆինանսական և դրամական հարաբերությունները որպես ֆինանսներ

Ապրանքափողային հարաբերությունները կատարվում են երկու կողմերի միջև, որոնք կարող են հանդես գալ ֆիզիկական և իրավաբանական անձի կարգավիճակով: Դրանք կապված են հումքի և նյութերի ու զանազան ապրանքների առք ու վաճառքի, ինչպես նաև դրամական հոսքերի, դրամական փոխադարձ վճարումների հետ: Ֆինանսները ֆինանսական հարաբերություններ են և նրանց ծագման նախադրյալները հանդիսանում են պետության ծագումը և փողի առաջացումը: Պետությունը ծագել

է դեռևս ստրկատիրական հասարակարգի ժամանակ, երբ առաջացել է հողի և արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը: Ֆինանսները արտահայտում են որոշակի հարաբերություններ, հետևապես նրանք փող չեն: Ընդ որում, եթե փողը որպես ապրանք շոշափելի է, ապա ֆինանսներն չեն շոշափվում ձեռքով և ապրանք չեն: Ֆինանսների անհրաժեշտությունը պայմանավորված է պետության և փողի գոյությամբ: Ֆինանսները պետությանը անհրաժեշտ են նրա ֆունկցիաները կատարելու համար: Պետության ֆունկցիաներն են երկրի պաշտպանումնականությունը, ազգային անվտանգությունը, պետական կառավարման ծախսերի ապահովման, երկրի տնտեսության զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման (ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով) և սոցիալական ոլորտի բարելավման խնդիրները:

Ֆինանսների գոյությունը պայմանավորված է նաև ապրանքափոխանակման հարաբերություններով, այսինքն ապրանքների առք ու վաճառքով կամ ապրանքափոխանակությամբ: Վերջինս մի ապրանքի փոխանակումն է մյուսով, որն առաջացել է նախնադարյան համայնական հասարակարգի քայքայման ժամանակ: Մի համայնքի ավելցուկ բարիքները փոխանակվել են մեկ այլ համայնքի ավելցուկ ապրանքներով: Այդ ապրանքափոխանակությունը կոչվել է պարզ ապրանքափոխանակություն: Այն կատարվել է ժամանակակից տնտեսագիտության հիմնադիր, անգլիացի տնտեսագետ-գիտնական Ադամ Սմիթի արժեքի աշխատանքային տեսության հիման վրա (1776թ.): Այդ տեսության էությունը այն է, որ ապրանքափոխանակությունը կատարվում էր համարժեքության սկզբունքով: Դրա հիմքում դրված էր աշխատաժամանակը: Այսպես, եթե մի որսորդ եղնիկի որսելու վրա ծախսել էր 2 մարդ-ժամ, իսկ մեկ այլ որսորդ նապաստակի վրա՝ 4 մարդ-ժամ, ապա փոխանակությունը կատարվել է 2 : 1 հարաբերությամբ: Ինչպես ամեն մի գիտություն, այնպես էլ ապրանքափոխանակությունը անցել է էվոլյուցիոն (փոփոխական) զարգացման ուղի: Հետևապես, գոյություն է ունեցել ապրանքափոխանակության հետևյալ ձևերը՝ պարզ, ընդլայնված կամ ծավալուն և արժեքային: Շուկայական տնտեսության անցման շրջանում առաջացել է ապրանքափոխանակության մի այլ ձև, որը կոչվում է բարտերային և կատարվում է ԱՊՀ երկրների միջև՝ բնեղեն ձևով ու համարժեքության սկզբունքով:

Ընդլայնված (ծավալուն) ապրանքափոխանակման ժամանակ ապրանքները փոխանակվել են բնեղեն տեսքով: Ընդ որում, ծավալուն ապրանքափոխանակության դեպքում բնեղեն ապրանքներից առանձնաց-

վել են ընդհանրական համարժեքներ, (մթերքներ, այդ թվում՝ գինի, գարեջուր, վայրի զագանների քանկարժեք մորթիներ և այլն): Իտալիայում ընդունված էր նաև կենդանին՝ պեկուս և դրանից առաջացել է իտալական փողի նախկին դրամական միավորը՝ պեկունիան):

Արժեքային ապրանքափոխանակությունը կապված է փողի, որպես ապրանքի և բոլոր ապրանքների համար ընդհանրական համարժեքի առաջացման հետ: Ընդ որում, ապրանքափոխանակության հիմքը հանդիսանում է ապրանքային արտադրությունը: Ապրանքային է կոչվում այն արտադրությունը, որի դեպքում պատրաստի արտադրանքի զգալի մասը իրացվում է: Այն առաջացել և զարգացել է կապիտալիզմի ժամանակաշրջանում, երբ տեղի էր ունենում կապիտալի նախնական կուտակում: Ապրանքափոխանակության զարգացման համար հիմք հանդիսացավ նաև զանգվածային արտադրությունը (Անգլիա, 1830թ., այսինքն, երբ ջրադացով հացահատիկից արտադրեցին տարբեր տեսակի այլուր): Ապրանքափոխանակության զարգացման ընթացքում բնեղեն ապրանքներին սկսեցին փոխարինել մետաղների ձուլածո կտորները (երկաթ, պղինձ, ալյումին, արծաթ, ոսկի): 18-րդ դարի սկզբին, որպես ընդհանուր համարժեք հանդես եկան ազնիվ մետաղները՝ արծաթը և ոսկին: Այսպես, Հայաստանում ոսկի է ձուլվել Տիգրան Մեծ թագավորի (մ.թ.ա. 95-55թթ.) օրոք: 19-րդ դարի սկզբից աշխարհի պետությունները սկսել են հատել ոսկե մետաղադրամներ: Օրինակ, Ռուսաստանը 1820թ. հատել է 1-20 դրամանոց ոսկե մետաղադրամներ: Դեռևս 17-րդ դարի վերջին առանձին երկրներ թողարկել են բանկային տոմսեր, որոնք համարվել են թղթադրամներ: Այսպես, անգլիական բանկը դեռևս 1694թ. թողարկել է բանկային տոմս: Հետագայում դրանք փոխարինվել են գանձապետական տոմսերով և որպես թղթադրամ ունեցել են ոսկու համարժեքություն: ԱՄՆ-ում 1863թ. թողարկվել է դոլարը՝ որպես թղթադրամ և ունի կանաչ գույն, որը ստացել է հայազգի, ամերիկահայ քիմիկոս, լաբորատորիայի վարիչ, պրոֆեսոր Խաչատուր Սերոբյանը: Ռուսաստանում 19-րդ դարի կեսերին թողարկվել է ռուբլու թղթադրամ: Թղթադրամները մինչև 1990թ. ունեին ոսկու համարժեքություն, սակայն ոսկու պաշարները աշխարհում նվազելուց հետո պետությունները գանձապետական պարտատոմսերը թողարկում են որպես թղթադրամ, որը չունի ոսկու բովանդակություն (ոսկու պաշարները աշխարհում կազմում են 65000 տոննա, որից 35 հազար տոննան ԱՄՆ-ում): Հայաստանի Հանրապետությունում ոսկերչությունը համարվում է գերակայող ճյուղ և 2003թ. արտադրվել է 3200 տոննա ոսկի:

Այսպես, 1993թ. նոյեմբերի 23-ին ՀՀ-ում թողարկվեց և շրջանառության մեջ դրվեց 900 մլն դրամի հայկական թղթադրամ՝ շրջանառությունից հանելով նախկին ԽՍՀՄ 200 մլրդ ռուբլին, փոխանակումը կատարելով 1 : 200 հարաբերությամբ, իսկ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 14.5 : 1 հարաբերությամբ: Այսպիսով, փողը հանդես է գալիս որպես ապրանք և բոլոր ապրանքների համար ընդհանրական համարժեք: Ընդ որում, գոյություն ունի փողի ծագման վերաբերյալ երկու հայեցակետ.

- առաջին, փողը կապված է ապրանքափոխանակության ժամանակ մարդկային հարաբերությունների հետ: Այդ հայեցակետը առաջին անգամ մշակել է հին հույն փիլիսոփա Արիստոտելը, և որը պաշտպանել է ժամանակակից տնտեսագիտության հիմնադիրներից մեկը՝ Փոլ Մամյուելտոնը: «Էկոնոմիքս» գրքում նրա հեղինակները (Կ. Մակկոնեյլ և Լ. Բրյու) նշել են, որ փողը զայթակղում է մարդուն, այսինքն փչացնում է մարդուն:

- երկրորդ, փողը հանդիսանում է ապրանք, որի նախադրյալը համարվում է ապրանքը, ապրանքային փոխանակությունը և պետության առաջացումը: Այս հայեցակետը մշակել է գերմանացի գիտնական, փիլիսոփա Կ. Մարքսը, որը համարվում է ժամանակակից տնտեսագիտության երկրորդ հանճարը: Այսպես, նա է առաջինը ցույց տվել ապրանքի էությունը, նրա հատկանիշները, ապրանքի արժեքի բանաձևը ($W = C + V + M$) և ապրանքային արտադրության էությունը: Դա ցույց է տվել 1867թ. գրած «Կապիտալ» աշխատության առաջին հատորում, որին կանդիդատ-դոկտոր «Ֆինանսների ընդհանուր տեսություն» հարցում:

1.4. Ֆինանսների և փողի առանձնահատկությունները

Փողը և ֆինանսները նույնը չեն, քանի որ եթե փողը ապրանք է, ապա ֆինանսները ապրանք չեն և նրանք արտահայտում են ապրանքափողային, ֆինանսական և դրամական հարաբերություններ: Սակայն ոչ բոլոր ապրանքափողային հարաբերություններն են, որ համարվում են ֆինանսներ: Այսպես, եթե բնակչությունը ձեռք է բերում սննդամթերք, հագուստ, կոշիկ, կատարում ընթացիկ վճարումներ կոմունալ ծառայությունների համար, ապա նա մասնակցում է երկրի ֆինանսական համակարգի զարգացմանը, կատարում է ապրանքների առք ու վաճառք, որը էությանը ֆինանսներ չեն: Ֆինանսներ չեն նաև մարդու գրպանում, ուսանողի պայուսակում և տանը պահված ու ստոեցված փողը: Հետևապես, փողը, որպեսզի փոխարկվի ֆինանսի, այն պետք է դրվի գործի մեջ, այսինքն կա-

տարվի ներդրում՝ եկամուտ, շահույթ ստանալու նպատակով: Դա կատարվում է անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական անձանց և բնակչության երկարաժամկետ ներդրումների միջոցով: Երբ փողը դրվում է գործի մեջ, նա փոխարկվում է կապիտալի, իսկ կապիտալն ունի ինքնահատկություն: Այսինքն, գործունեության ավարտին ստացված կապիտալն ավելի մեծ է, քան սկզբնական կապիտալը: Կապիտալը՝ դա ձեռնարկությունների ունեցվածքն է, նրա հարստությունը: Տարբերում են կապիտալի հետևյալ տեսակները.

- ֆիզիկական, որը ձեռնարկությունների ունեցվածքն է, նրա տնտեսական միջոցները (ակտիվները), որը չափվում է բնեղեն և արժեքային ձևով, քանի որ ունի նյութական արժեք:

- ֆինանսական կապիտալ, որն իրենից ներկայացնում է ֆինանսական ներդրումները արժեթղթերում (բաժնետոմսեր, պետական պարտատոմսեր, մուրհակներ, չեկեր և այլն),

- վարկային, այսինքն՝ կոմերցիոն (առևտրային) բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկերը,

- ձեռնարկատիրական կապիտալ, դա այն կապիտալն է, որ անհատ ձեռնարկատերը կամ ձեռներեց իրավաբանական անձը ներդնում է գործի մեջ: Երբ փողը դրվում է գործի մեջ, այն կատարում է շրջապտույտ՝ հետևյալ երեք փուլերով.

- առաջին փուլ - փողով զնվում է արտադրության միջոցներ՝ փող-ապրանք: Ներդրված կապիտալը բաժանվում է հիմնական և շրջանառու կապիտալի, այսինքն հիմնական կապիտալի հաշվին ձեռք է բերվում հիմնական միջոցներ, իսկ շրջանառու կապիտալի հաշվին՝ շրջանառու միջոցներ (հումք և նյութեր)

- երկրորդ փուլ - կազմակերպվում է ապրանքների արտադրություն և ստացվում է ապրանք ավելի մեծ արժեքով ($W = C + V + M$), այսինքն՝ Արտ ... Ա' ($U' > U$) հիմնական միջոցի ամուրտիզացիան + շրջանառու միջոցներ):

- երրորդ փուլ - ապրանքը իրացվելով ստացվում է դրամական միջոցներ (հասույթ), որի արժեքը մեծ է ներդրված կապիտալից՝ ($U' - \Phi$):

Փողի, այսինքն՝ գործի մեջ ներդրված կապիտալի շրջապտույտի նշված երեք փուլերը կարելի է արտահայտել մեկ ուրվագծով՝

Փող - Ապրանք ... Արտադրություն ... Ապրանք' ... Փող', որտեղ $\Phi' > \Phi$ և կազմում է ներդրողի շահույթը,

Փող - Ապրանք ($\Phi - U$) - ներդրողի ծախսերն են,

Ա՝ - Ա - Գեոդոզի եկամուտներն են,

Փ՝ - Փ - Գերդոզի շահույթն է:

Ինչպես նշեցինք, ֆինանսները արտահայտում են ապրանքափողային հարաբերություններ: Սակայն ոչ բոլոր ապրանքափողային հարաբերություններն են համարվում ֆինանսներ: Ֆինանսները արտահայտում են հետևյալ ապրանքափողային հարաբերությունները.

- տնտեսավարող սուբյեկտների և պետության միջև՝ կապված հարկելի վճարման հետ,

- գնորդ կազմակերպությունների և մատակարարների միջև՝ կապված ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվներ (պաշարներ, հումք և նյութեր) ձեռքբերման հետ,

- կազմակերպությունների և սոցիալական ապահովագրության մարմինների միջև (կենսաթոշակային հիմնադրամի միջև)՝ կապված պարտադիր սոցիալական վճարների վճարման հետ,

- կազմակերպության և իր անձնակազմի միջև՝ կապված աշխատավարձի, նրան հավասարեցված վճարումների և գործողման ծախսերի վճարման հետ,

- կոմերցիոն կազմակերպությունների և բանկերի միջև՝ կապված կարճաժամկետ, միջինժամկետ և երկարաժամկետ վարկերի և նրանց տոկոսավճարի վճարման հետ,

- կազմակերպությունների և կրեդիտորների միջև՝ կապված դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, այսինքն՝ կարճաժամկետ ու երկարաժամկետ պարտավորությունների վճարման՝ (կապված ջրամատակարարման, գազամատակարարման հետ):

Սակայն ապրանքափողային հարաբերություն է նաև բնակչության կողմից ապրանքների առք ու վաճառքը՝ ընթացիկ կարիքները բավարարելու համար (սննդամթերք, հագուստ, կոշիկ և այլն), մինչդեռ դրանք, ինչպես նշել ենք, ֆինանսներ չեն: Բնակչության այն փողն է ֆինանսներ, որը դրվում է գործի մեջ՝ երկարաժամկետ ապրանքներ ձեռք բերելու և առևտրական բանկերում որպես ավանդներ ներդնելու դեպքում (Գերդոզները անշարժ և շարժական գույքի գնման և արժեթղթերում ներդրումները): Այսպիսով, որպես բնակչության ֆինանսներ համարվում են միայն երկարաժամկետ ներդրումները, որնք փոխարկվում են կապիտալի, ինչպես նաև բանկային ավանդների ներդրումները և ներդրումները պարտատոմսերում և բաժնետոմսերում՝ շահաբաժին (դիվիդենդ)՝ եկամուտ ստանալու նպատակով:

Ֆինանսները արտահայտում են նաև ֆինանսական հարաբերություններ: Դրանք ներդրումներն են արժեթղթերում: Ֆինանսական հարաբերու-

թյուններ են համարվում նաև զանազան ներդրումները:

Ֆինանսներ են համարվում նաև դրամական հարաբերությունները, ինչպիսիք են՝

- տնտեսական պայմանագրերի պայմանների խախտման հասարակացված կամ զանձված տույժերը և տուգանքները, այսինքն՝ տնտեսական սանկցիաները (բռնագանձումները),

- համատեղ ձեռնարկություններում (ՀՁ) կատարված ներդրումները, երբ ստանում են շահույթ (համատեղ ձեռնարկություններ են կոչվում այն ձեռնարկությունները, որտեղ օտարերկրյա ներդրումները կազմում են 250 մլն դրամից ոչ պակաս),

- ձեռնարկությունների կողմից որևէ ընկերության բաժնետեր լինելու դեպքում ստացված շահաբաժինը,

- այլ ընթացիկ բոլոր տեսակի վճարումները:

Հարկ է նշել, որ վարկերը էությամբ ֆինանսներ չեն և այդ հաշվով գոյություն ունի երկու տարբեր հայեցակետեր: Ընդ որում ճիշտ է այն, որ վարկերի մայր գումարները և վարկերի տոկոսավճարները արտահայտում են վարկային հարաբերություններ, հետևաբար նրանք ֆինանսներ չեն: Մինչդեռ կարճաժամկետ վարկի (մինչև մեկ տարի) տոկոսավճարը համարվում է ֆինանսներ, քանի որ այն ներառվում է արտադրանքի (ծառայության) ինքնարժեքի մեջ՝ որպես անուղակի (վարչական) և ընթացիկ ծախս:

Վարկային հարաբերությունները տեղի են ունենում երկու անձանց՝ վարկատուի և վարկառուի (փոխառուի) միջև, մինչդեռ ապրանքափողային հարաբերություններում կարող են մասնակցել երկուսից ավելի անձինք: Այսպես, ենթադրենք ձեռնարկությունը մատակարարի պարտքը վճարում է բանկից ստացած վարկի հաշվին, քանի որ իր հաշվարկային հաշվում տվյալ պահին չունի միջոցներ: Ելնելով դրանից, նախկին ԽՍՀՄ-ում 1930-1950թթ., որպես արտադրանքի (ծառայության) ինքնարժեքի իջեցման մի ուղի, համարում էին կարճաժամկետ վարկի տոկոսավճարի իջեցումը, որն արգելակում էր վարկերի օգտագործումը: Վարկերը նրա ստացման փուլում ֆինանսներ չեն, սակայն մեր կարծիքով, նրա ներդրման փուլում կարելի է համարել ֆինանսներ:

1.5. Ֆինանսների տեսակները և ֆունկցիաները

Ֆինանսներն արտահայտում են երեք տեսակի հարաբերություններ՝ ապրանքափողային, ֆինանսական և դրամական: Ֆինանսները ձևավոր-

վում են ֆինանսական համակարգի հետևյալ օղակներից՝ պետական սեփականության օբյեկտներ, տեղական ինքնակառավարման մարմինների օբյեկտներ, տնտեսավարող սուբյեկտներ և բնակչություն: Այդ տնտեսական օղակներին համապատասխան գոյություն ունեն ֆինանսների հետևյալ տեսակները:

- **պետական ֆինանսներ**, դրանք այն ֆինանսներն են, որոնք կրենց արտացոլում են գտնում պետական բյուջեում: Դրանք ձևավորվում են պետական սեփականության օբյեկտների, տնտեսավարող սուբյեկտների, տեղական և բնակչության ֆինանսների, այսինքն՝ հարկատուների հաշվին:

- **տեղական ֆինանսներ**: Դրանք տարածքային , այսինքն տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսներն են, որոնք իրենց արտացոլում են գտնում տեղական բյուջեում: Տեղական բյուջեի եկամուտների ձևավորման կարգը մոտ է պետականին և հիմնականում ստացվում է հարկերի հաշվին:

- **տնտեսավարող սուբյեկտների ֆինանսներ**, որոնք հանդես են գալիս եկամուտների, հասույթի, շահույթի , հարկերի և ընթացիկ ծախսերի ձևով: Տնտեսավարող սուբյեկտները համարվում են հիմնական հարկատուներ: Նրանց ֆինանսները իրենց արտացոլում են գտնում տարեկան ֆինանսական պլանում, որը համարվում է բիզնես-ծրագրի հիմնական բաժիններից մեկը: Ըստ էության, այն հանդիսանում է ձեռնարկությունների եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը:

- **բնակչության ֆինանսներ**: Տնային տնտեսությունների, այսինքն բնակչության այն եկամուտներն են, որոնց հաշվին կատարվում են ոչ ընթացիկ ծախսեր:

Ֆինանսների ֆունկցիաները: Ֆունկցիան մաթեմատիկայում նշանակում է կախվածություն, իսկ տնտեսագիտության մեջ՝ գործառույթ: Ֆինանսները կատարում են իրենց ֆունկցիաները երկու մակարդակով:

- **պետական ֆինանսների չևով** - դրանք այն ֆինանսներն են , որոնք գործառույթ են կատարում պետական մակարդակով: Դրանք են՝

- **ֆինանսների վերաբաշխման ֆունկցիա**: Ըստ այդ ֆունկցիայի (fx) հարկատուներից հավաքագրվում են հարկերը ու ոչ հարկային մուտքերը և ձևավորվում է պետական բյուջեի եկամուտները, որն էլ վերաբաշխվում է:

- **Ֆինանսների չևավորման և օգտագործման ֆունկցիա** : Ըստ այդ ֆունկցիայի, հարկատուները պետական բյուջե են մուծում հարկերը և դրանց հաշվին ձևավորվում են պետական ֆինանսները: Պետբյուջեի

մասին օրենքի ընդունումով որոշվում է ծախսերի ուղղությունները, որը գործնականում կիրառվում է տարվա ընթացքում:

- **Վերահսկողության ֆունկցիա**- ըստ որի ձևավորման (հավաքագրման) օգտագործման ժամանակ վերահսկիչ մարմինների կողմից տարվա ընթացքում վերահսկողություն է իրականացվում պետական ֆինանսների նկատմամբ: Որպես վերահսկիչ մարմիններ հանդիսանում են ՀՀ նախագահի վերահսկողական ծառայությունը, ԱԺ վերահսկիչ պալատը և կառավարության վերահսկողության ծառայությունը:

Երկրում դրամաշրջանառությունը և ազգային արժույթի (դրամի) փոխարժեքի կայունությունը վերահսկում է Կենտրոնական բանկը: Պետական ֆինանսները վերահսկվում են նաև երկրի ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության վերահսկողության վարչության կողմից, իսկ հարկային մուտքերի հավաքագրումը՝ հարկային պետական ծառայության, մաքսային մուտքերը՝ մաքսային պետական կոմիտեի կողմից:

Որոշակի ֆունկցիաներ են կատարում նաև տնտեսավարող սուբյեկտների ֆինանսները: Նրանց ֆունկցիաները համարվում են՝

- **ֆինանսների չևավորումը**, (եկամուտների ստացումը, ծախսերի կատարումը),

- **ֆինանսների բաշխման**, այսինքն հասույթից ծախսերի հատուցումը և շահույթի որոշումը, ինչպես նաև շահույթի բաշխումը տնտեսական խթանման և հատուկ ֆոնդերին (հիմնադրամ), այսինքն արտադրության գարգացման և սոցիալական կարիքների համար:

- **ֆինանսների օգտագործումը**, ըստ որի, եկամուտների (հասույթի) հաշվին կատարվում են ծախսեր և շահույթի հաշվին օգտագործվում են ֆոնդերի միջոցները:

- **վերահսկողության ֆունկցիա**, որն իրականացվում է տնտեսավարող սուբյեկտի կողմից: Բաժնետիրական ընկերություններում բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ստեղծվում է վերստուգիչ հանձնաժողով, որն էլ տարվա ընթացքում վերահսկում է ընկերության ֆինանսական վիճակը: Տնտեսավարող սուբյեկտներում այս ֆունկցիայով զբաղվում է նաև ֆինանսական բաժինը և ֆինանսների գծով փոխտնօրենը (փոխնախագահը):

Ինչպես երևում է, ֆինանսները կատարում են որոշակի ֆունկցիաներ՝ երկու մակարդակով՝ պետական ֆինանսների և տնտեսավարող սուբյեկտների ֆինանսների մակարդակով:

Տարբերությունն այն է, որ պետական ֆինանսների մակարդակով ֆինանսները վերաբաշխվում են, իսկ տնտեսավարող սուբյեկտների մա-

կարողակով՝ բաշխվում:

Ֆինանսները, որպես տնտեսագիտական հասկացություն, հանդես են գալիս նրանց գործառույթներում: Ֆինանսների մասին գիտության տեսանկյունից գոյություն ունի որոշակի միասնություն՝ պետական, ձեռնարկությունների և տնային տնտեսությունների (բնակչության) ֆինանսների գործառույթների մեջ: Մյուսույն ժամանակ, նրանց միջև գոյություն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են մի կողմից համապետական, մյուս կողմից՝ անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական անձ ձեռներեցների (տնտեսավարող սուբյեկտներ) և բնակչության անձնական շահերով:

Բացի նշված գործառույթներից, ֆինանսներին բնորոշ են նաև հետևյալ գործառույթները՝ ծրագրավորումը (պլանավորումը), կազմակերպումը և խթանումը:

Այժմ համառոտակի անդրադառնանք նաև այդ գործառույթներին:

Ծրագրավորման գործառույթը ենթադրում է նպատակների ձևակերպումը և նրանց հասնելու ուղիները՝ կենտրոնական, տեղական ինքնակառավարման մարմինների և տնտեսավարող սուբյեկտների միջև իրավասությունների սահմանազատման հիման վրա, ինչպես նաև կանխատեսումների ու տնտեսավարող սուբյեկտների բիզնես-ծրագրերի մշակում, տնային տնտեսությունների եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմում: Ֆինանսական ծրագրավորման գործառույթը իրականացվում է նաև տարբեր մակարդակների բյուջեների կազմումով (պետական, տեղական և ձեռնարկության ֆինանսական պլան, որը նրա բիզնես-ծրագրի բաժիններից մեկն է), կանխատեսումները ընթացիկ տարում և հեռանկարում, ֆինանսական պաշարների հաշվեկշռի կազմումով, հարկման կարգի սահմանումով և այլն:

Ֆինանսների կազմակերպման գործառույթն իր մեջ ներառում է ձեռնարկությունների կազմակերպական-իրավական ձևերի, բյուջետային կառուցվածքի ընտրությունը, ինչպես նաև բյուջետային գործընթացում օրենսդիր (ՀՀ նախագահի աշխատակազմ և Ազգային ժողով) և գործադիր մարմինների, այսինքն՝ իշխանության ու կառավարության միջև իրավասության սահմանազատումը և ֆինանսական մարմինների ստորաբաժանումների միջև իրավունքի ու պարտականության սահմանումը: Այդ գործառույթի հետ կապված է բյուջետային հոսքերի և ձեռնարկությունների ու տնային տնտեսությունների ֆինանսական պաշարների կարգավորման ու վերահսկողության ներքին համակարգի կազմակերպական գործընթացը:

Ֆինանսների խթանման գործառույթը ենթադրում է օպտիմալ (անհ-

րաժեշտ) միջոցների և մեթոդների ընտրությունը, որն ապահովի առաջադրված նպատակների իրացումը: Այդ գործառույթը ներառում է ֆինանսական գործունեության վրա: Ընդ որում, այդ գործում մեծ է մարդկային վերաբերմունքի գործոնը՝ ֆինանսների վերաբերյալ, նրանց կողմից ընդունված որոշումների առումով: Տնտեսաֆինանսական գործունեության ընթացքում, որոնք կապված են փողի շրջապտույտի (դրամաշրջանառության) կարգավորման հետ, գործնականում կատարվում են ֆինանսների հիմնական երեք գործառույթներ՝ **վերարտադրողական, բաշխիչ (վերաբաշխիչ) և վերահսկողական:**

Ֆինանսների վերարտադրողական գործառույթը լսանդիսանում է նյութական, աշխատանքային և ֆինանսական պաշարների համամասնությունների սահմանումը կապիտալի պարզ և ընդլայնված վերարտադրության գործընթացում: Ընդ որում, շուկայական տնտեսության պայմաններում, վերարտադրությունը տեղի է ունենում տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ինքնուրույնության և տնտեսական ազատության ու ազատ մրցակցության պայմաններում: Բոլոր մակարդակների ֆինանսները օգտագործվում են ընթացիկ և կապիտալ (հիմնական, երկարաժամկետ) ներդրումների ձևով: Ներդրումները (լատին. Investicione) նշանակում է դրամական միջոցների օգտագործում կապիտալի բնույթի կարգավիճակով, որն ունի ինքնաձեռնարկություն և ներդրողին բերում է եկամուտ, շահույթ, քանի որ այդ միջոցները ներդրվում են գործի մեջ (սեփական, թե՛ ձեռներեցության, գործարարության մեջ՝ իրավաբանական անձի կողմից): Հետևապես, ֆինանսները կատարում են նաև **ներդրումային գործառույթ:** Ընդ որում, կապիտալի ներդրումներին և նրանց տեսակներին կանոնադառնանք հաջորդ գլխի վերջին հարցում:

1.6. Ֆինանսների դերը և սկզբունքները

Ֆինանսները մեծ դեր են խաղում երկրի և տարածքային կազմավորումների սոցիալ-տնտեսական խնդիրների, տնտեսավարող սուբյեկտների բիզնես-ծրագրի իրականացման և բնակչության կենսամակարդակի բարելավման գործում: Այն հանդիսանում է սոցիալ-տնտեսական խնդիրների համար անհրաժեշտ ֆինանսավորման պայման, տնտեսական արդյունավետության և սոցիալական արդարության միջև հավասարակշռվածության ու համամասնությունների ապահովում: Ֆինանսների այդ դերը գործնականում իրականացվում է պետության հետևյալ գործա-

նույնների կատարման միջոցով.

- կարգավորող,
- վերաբաշխիչ,
- սոցիալական,
- վերահսկողական:

Այժմ համառոտակի պարզաբանենք պետության այդ գործառնությունների էությունը: Գոյություն ունեն բնագավառներ, որտեղ պետությունը զբաղեցնում է առաջնահերթ դիրքերը, օրինակ, երկրի պաշտպանությունը, ազգային անվտանգությունը, ներքին կարգը՝ կարգավորումը ոստիկանության միջոցով, ինչպես նաև բնակչության սոցիալական ծառայությունների մատուցումը: Այդ նպատակով պետությունը՝ ի դեմս ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և երկրի Կենտրոնական բանկի, պետական ֆինանսական մյուս մարմինների (հարկային պետական ծառայություն և այլն) հետ մշակում են տնտեսական, ֆինանսական, այդ թվում՝ հարկային, մաքսային, գնային, բյուջետային քաղաքականություն: Բացի այդ, պետությունը լինելով իշխող դիրքերի սեփականատեր, փոխհամագործակցում է երկրի տնտեսության մասնավոր հատվածի հետ: Պետության **կարգավորիչ դերը** վերաբերվում է ինտելյալ բնագավառներին՝ ֆինանսավարկային, ֆինանսական, բյուջետային, սոցիալական, արտաքին-տնտեսական, բնական մենաշնորհի (հանրային ծառայությունների) սահմանման առումով), տնտեսական և ազգային անվտանգության, պաշտպանության, ոստիկանության և ձեռներեցության բնագավառներին:

Ընդհանրապես, շուկայական տնտեսության պետական կարգավորման մասին առաջին անգամ տեսություն է մշակել անգլիացի տնտեսագետ-գիտնական, աշխարհահռչակ ֆինանսիստ Ջոն Զեյնգը: Նա 1936թ. հրատարակել է «Զբաղվածության, շահույթի և փողի ընդհանուր տեսությունը» գիրքը, որտեղ ցույց է տվել, որ շուկայական տնտեսությունը պետք է կարգավորվի «ինչ որ անտեսանելի ձեռքի միջոցով», որը մինչև 1946թ. համարվել է հեղափոխական միտք: 1946 թվականից պարզել են, որ խոսքը վերաբերում է պետության կարգավորիչ դերին, այսինքն, որ շուկայական տնտեսությունը ոչ թե պետք է զարգանա տարերայնորեն, քառսային ձևով, այլ պետք է կարգավորվի պետության կողմից: Նրա տեսությունը պետության կարգավորիչ դերի ու ֆինանսների բնագավառում հարկային տեսության և պետական բյուջեի մասին, օգտագործվել է 1946-1970 թթ., որից հետո գործնականում կիրառվում է ներքայնականների (New -նոր) տեսությունները հակաճգնաժամային, թերբյուջետային

ֆինանսավորման, դեֆիցիտային բյուջեի և ֆինանսական այլ տեսությունների վերաբերյալ: Ընդ որում, շուկայական տնտեսության գաղափարը առաջին անգամ տվել է անգլիացի տնտեսագետ-գիտնական, ժամանակակից տնտեսագիտության հիմնադիր և առաջին հանճար Ադամ Սմիթը (1776թ.): Տնտեսագիտության հայրենիքը Անգլիան է, որն առաջինն է անցել շուկայական տնտեսության: Թերևս, 13-րդ դարում կիրառվել է շուկայական տնտեսության որոշ տարրեր: Շուկայական տնտեսությունը հիմնված է շուկայի վրա: Շուկան սոցիալ-տնտեսական մի միջավայր է, որտեղ կատարվում է ապրանքափոխանակություն, այսինքն՝ ապրանքների առք ու վաճառք և որտեղ ապրանքների գները որոշվում են պահանջարկի և առաջարկի հիման վրա: Պահանջարկը պահանջմունքների այն մասն է, որն արահովված է գնողուճակությամբ, այսինքն շուկայի ապրանքների այն չափն է, որը կարող են գնել սպառողները: Առաջարկը ապրանքների այն ծավալն է, որ ապրանքարտադրողները ի դեմս վաճառողների, փոխադրել են շուկա՝ վաճառքի համար:

Պետության **կարգավորիչ դերին** վերաբերում են նաև հարկային քաղաքականությունը, որին կանոնադրաբան սույն ձեռնարկի 3-րդ գլխում: Պետության կարգավորիչ դերը գործնականում կենսագործվում է օրենսդրություններով (քաղաքացիական, աշխատանքային, հարկային, մաքսային), այսինքն իրավական օրենքներով և կառավարության ենթաօրենսդրական ակտերով (նորմատիվային իրավական ակտեր):

Այսպիսով, շուկայական տնտեսության պետական կարգավորման գործիքները համարվում են.

- հարկերը,
- մաքսավճարները,
- մաքսատույքերը,
- պետական տուրքերը,
- գնային սահմանափակումները,
- երկրի ԿԲ-ի տոկոսադրույքները, փողի հաշվարկային փոխարժեքը (Ազգային արժույթի փոխարժեք),
- ԿԲ-ի կողմից սահմանվող արտարժույթի պաշտոնական փոխարժեքը,
- ծախսերի և սպառման չափն ու չափանիշները,
- նվազագույն գամբյուր (ՀՀ-ում 2004թ. նոյեմբերից ամսական 14 հազար դրամ՝ մեկ շնչի հաշվով մեկ ամսում),
- նվազագույն աշխատավարձ (ՀՀ-ում 2004թ. հունվարից՝ ամսական 13 հազ. դրամ),

- բյուջետային պարտավորությունները,
- ֆինանսավորման լիմիտները (չափերը) և այլն:

Վերաբաշխիչ գործառույթը ուղղված է Ազգային եկամտի վերաբաշխմանը՝ նրա արտադրողների և սպառողների միջև: Այդ գործառույթի կենսագործման համար վճարակալ դերը համարվում է պետական կառավարման մարմինների և տնտեսավարող սուբյեկտների միջև, ինչպես նաև պետության ու տնտեսական սուբյեկտների (ուչ առևտրային՝ բյուջետային կազմակերպությունների) միջև հարաբերությունները: Վերաբաշխման նպատակին ծառայում է երկրի հարկային և բյուջետային համակարգերը:

Ֆինանսների սոցիալական գործառույթի էությունը կայանում է նրանում, որ պետությունը պետք է պաշտպանի սոցիալական արդարությունը և բնակչության կենսամակարդակը որոշակի մակարդակի վրա, երաշխավորի նվազագույն զամբյուղի չափը, աշխատավարձի աճի չափը՝ տոկոսով և բացարձակ թվով, աշխատանքի արտադրողականությունը (երկրի տնտեսության մասշտաբով ՀՆԱ-ն բաժանած աշխատունակ բնակչության թվի վրա), ապահովել բնակչության զբաղվածությունը և տնտեսական անվտանգությունը: Այդ գործառույթի իրականացման գործում վճարակալ դեր է խաղում պետության ֆինանսատնտեսական պոտենցիալը (հնարավորությունը): Այդ գործառույթի իրականացումը կապված է պետական ֆինանսական պահանջմունքների ընդլայնման, երկրի տնտեսության և տնային տնտեսությունների սոցիալական հատվածի պահանջարկի հետ: Այդ գործառույթի կենսագործման մեխանիզմները համարվում են.

- սոցիալական տրանսֆերտների (ֆինանսական օգնության) համակարգը,
 - զարգացման սոցիալական ծրագրերը՝ պետական, մարզային և տեղական մակարդակով (ՀՀ կառավարության աղքատության դեմ պայքարի ծրագիրը 2005-2015 թթ. համաշխարհային բանկի հետ համատեղ),
 - պետական ապահովագրության համակարգը,
 - ընտանեկան նպաստների համակարգը,
 - բնակչության կենսաթոշակային ապահովության համակարգը:
- Ֆինանսների վերահսկողության գործառույթը պետության կողմից հանգում է հետևյալին.
- ստեղծում է սոցիալ-տնտեսական զարգացման կողմնորոշիչներ,
 - նախատեսում է տնտեսական աճի և սոցիալական զարգացման չափանիշներ,
 - որոշում է արտաքին տնտեսական զարգացման պայմանները,
 - ձևավորում է ընթացիկ տնտեսական միջինժամկետ, երկարաժամ-

կետ և սոցիալական ծրագրեր, որոնց կատարումն էլ հանդիսանում է վերահսկողության օբյեկտը:

Այդ գործառույթների իրականացումը ապահովվում է պետական վերահսկողության մարմինների (ՀՀ նախագահի վերահսկողության ծառայություն, Ազգային ժողովի վերահսկիչ պալատ, ՀՀ կառավարության և նրա կենտրոնական ու ճյուղային նախարարությունների վերահսկողության ստորաբաժանումներ) կողմից՝ որոշակի ցուցանիշների, չափանիշների համակարգի օգնությամբ, տնտեսական, ֆինանսական, իրավական սանկցիայի, խրախուսման և արտոնությունների համակարգի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման նախապատվությունների համակարգի միջոցով:

Տնտեսական հարաբերությունների փոփոխությունն ճշանակում է անցում տնտեսական կայուն աճի, որը հիմնված է շուկայական տնտեսության վրա, փողի արժեզրկման ցածր մակարդակի և գործազրկության, արտաքին տնտեսական հավասարակշռվածությամբ (վճարային հաշվեկշռի դրական սալդոյով՝ մնացույթով կամ լինի-հավասարակշռված), այդ թվում դրական առևտրային հաշվեկշռով, այսինքն արտահանումը ներազանցի ներմուծմանը կամ լինեն հավասար (մեր երկրում մինչև 2000թ. հարաբերակցությունը եղել է 1: 3.5, իսկ 2001—2004թթ. դարձել է 1: 2.5), այսինքն ներկայումս ապանքների ներկրումը՝ 2.5 անգամ բարձր է նապրանքների այտահանման ծավալներից (արժեքային արտահայտությամբ): Վերափոխումների նպատակն է ստեղծել մարքեթինգային կողմնորոշումով շուկայական տնտեսություն, նկատի ունենալով, որ մարքեթինգը շուկայական տնտեսության կառավարման մեթոդ է¹: Տնտեսության բարեփոխումների շնորհիվ նրա կայունացումը զուգակցվում է ֆինանսական կայունությամբ: Այդ պայմաններում երկրի պետբյուջեն լինում է հավելյուրդային (երբ եկամուտները գերազանցում են ծախսերին) կամ հավասարակշռված և կայունանում է ազգային արժույթի փոխարժեքի, բարձրանում բնակչության կենսամակարդակը: Այսպես, եթե 1999-2000թթ. այդ ցուցանիշը մեր երկրում կազմել է 450-500 \$, ապա 2004թ. կազմել է 1150\$. այսինքն 2000թ. նկատմամբ ավելացել է 2.4 անգամ: Սալդային բնակչության 40 տոկոսը մեր երկրում, ըստ էության, չի օգտվում տնտեսական աճի արդյունքից, քանի որ ընտանիքում չունեն կենսաթոշա-

1. Վ. Ա. Վարդանյան - Ֆինանսական մեքենաներ, Ռուսումնական ձեռնարկ, Երևան, 1999:

կառու, չեն ստանում ընտանեկան կամ գործազուրկի նպաստներ, չեն աշխատում բյուջետային, այլ աշխատում են ոչ պետական կազմակերպությունում: Այդպիսի ընտանիքների վրա ազդեցություն չի ունենում տնտեսական աճը, եթե չի բարձրանում իրենց եկամուտները:

Ֆինանսական կայունությունը ձեռք է բերվում ֆինանսավորման կայուն աղբյուրներով, կապիտալի շուկայում միջոցների ներգրավման, պաշարների կուտակման և երկրի յուրական ու մասնավոր հատվածների զարգացման միջոցով (2004թ. հոկտեմբերի 1-ի տվյալներով, ըստ ՀՀ ԱՎԾ-ի տվյալների, մասնավոր հատվածը տալիս է ՀՆԱ-ի 80 տոկոսը): Երկրի տնտեսության վերափոխումները ֆինանսական կայունության ստրատեգիական (ռազմավարական) ոլորտերի տեսանկյունից, իր մեջ ներառում է.

- զների ազատականացումը (ֆրանսերեն՝ liberale բառից), այսինքն ապրանքների զների ազատ արձակումը,
- սեփականաշնորհումը (1999թ. մասնավորեցումը, այսինքն միայն փողով և միջազգային կամ տեղական մրցույթով),
- սոցիալական պայմանների բարելավումը,
- աշխարհի ֆինանսական համակարգին ինտեգրացումը (Integrations-միավորվել, միացում):

Եթե նախկին հասարակարգում ապրանքների զները և ծառայությունների սակագները սահմանվում էր պետության կողմից, ապա Արևմուտքի երկրներում ապրանքների զներն ազատ են արձակվել 1980 թվականից, նախկին Արևելյան Եվրոպայի սոցիալիզմի երկրներում՝ 1989թ. իսկ նախկին Խորհրդային Միության փլուզման (1992թ.) հետևանքով անկախություն ձեռքբերած ԱՊՀ-ի և Մերձբայթյան երկրներում՝ 1994 թվականից: Շուկայական տնտեսության անցման փուլում մեր երկրում 1992թ. փետրվարից գյուղատնտեսության մեջ և 1993 թվականից արդյունաբերության մեջ, առևտրի փոքր օբյեկտներում և անավարտ շինարարության մեջ տեղի է ունեցել սեփականաշնորհում, այսինքն պետական մեծաշնորհային սեփականության ձևի փոփոխություն՝ ապապետականացում, որի շնորհիվ սեփականության բազմազան ձևերի (քաղաքացիների՝ մասնավոր, կոլեկտիվ, պետական և դրանց ածանցյալ ձևերի՝ բաժնետիրական, ընկերակցական, կոոպերատիվ, վարձակալական և խառը ձևեր) հիման վրա կազմակերպվեցին տնտեսավարող սուբյեկտներ (առ 1-ը հոկտեմբերի 2003թ. 117560 սուբյեկտ, որից 51110 ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, 2004թ. հոկտեմբերին՝ 51240, մյուսները անհատ ձեռնարկատերեր են): Բացի այդ, գործում են 21 առևտրային բանկեր, 8 վարկային և 17 ապահովագրական կազմակերպություններ, 336 հազար գյուղա-

ցիական և 322 գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ, այդ թվում 250-ից ավելի ֆերմերային (ազարակային) տնտեսություններ: Սակայն, «Սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի խախտման պատճառով (1992-1998թթ. սեփականաշնորհումը մեր երկրում կատարվել է 96.4 %-ը՝ սեփականաշնորհման սերտիֆիկատներով՝ հավաստագրերով և միայն 3.6 %-ը՝ազգային արժույթով, մինչդեռ օրենքով սերտիֆիկատներով պետք է կատարվեր 30%-ը): Ելնելով էական սխալներից և ազգային ունեցվածքի թալանից, էժան սեփականաշնորհումից, 1999 թվականից մեր երկրում սեփականաշնորհումը փոխարինվել է մասնավորեցումով, այսինքն միայն փողով և տեղական ու միջազգային մրցույթով:

Սոցիալական վերափոխումներ նշանակում է, որ պետության հետ մեկտեղ սոցիալական ոլորտի ֆինանսավորմանը մասնակցություն է ունենում նաև բնակչությունը՝ շահագրգիռ անձինք, ֆինանսական խմբերը, այդ թվում՝ գործատուները, վարձու աշխատողները և այլն:

Ինչ վերաբերում է Համաշխարհային ֆինանսական համակարգի ինտեգրացմանը, ներկայիս գլոբալիզացման՝ խոշորամասշտաբ արտադրության կազմակերպում՝ օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ , ապա դա ենթադրում է անդամակցում համաշխարհային առևտրական կազմակերպությանը (ՀԱԿ) և այլ կազմակերպություններին, որոնց ներկայումս անդամակցում է նաև Հայաստանը:

Ֆինանսները երկրի տնտեսության մեջ ունեն վճռական դեր, քանի որ նրանով է պայմանավորված սոցիալ-տնտեսական զարգացումը:

- Ֆինանսների դերը տնտեսության մեջ կայանում է հետևյալում.
- տնտեսական կայունությունը,
 - տնտեսական հարաբերությունների փոփոխությունները,
 - ֆինանսական համակարգի հարմարվելը շուկայական բարեփոխումներին,
 - ներդրումային ակտիվության խթանումը,
 - սոցիալական խնդիրների լուծումը:

Այժմ համառոտակի անդրադառնալով տնտեսության մեջ ֆինանսների ունեցած այդ դերին: Երկրի տնտեսական կայունությունը մակրո- և միկրոտնտեսական մակարդակներում անբաժանելի է տնտեսության մեջ ընդհանուր ֆինանսական կայունությունից: Դրա համար է մակրոտնտեսական ցուցանիշների (ՀՆԱ, ՀԱԱ, ԱԵ, ԶԱ) մոնիտորինգը (դիտարկումը), այդ թվում տնտեսական աճի տեմպը և փողի ինֆլյացիան (արժեզրկումը), արտարժույթի, տարադրամի փոխարժեքը, գործազրկության մակարդակը, վճարային, այդ թվում առևտրային հաշվեկշռի վիճակը, աշ-

խատանքի վարձատրության մակարդակը, բնակչության տարբեր խմբերի եկամուտների հարաբերակցությունը, վարկերի և դեպոզիտների (ավանդների) տոկոսադրույքները, որոնք հնարավորություն են տալիս ֆինանսների բնագավառում բացահայտել իրավիճակը :

Տնտեսական կայունության հիմնախնդիրը ծագել է տնտեսական անհամասնությունների, գնաճի, ալաճի, պահանջարկի, անվճարումակության և այլ պատճառներով: Ի դեպ, դեռևս 1920-1936թթ. ռուս գիտնական Վլադիմիր Կոնդրատևը մշակել է տեսություն և ցույց տվել, որ երկրի տնտեսությունը չի կարող զարգանալ միայն վերընթաց: Դա հակասում էր տվյալ հասարակարգի և իշխող կուսակցության գաղափարախոսությունը, որի պատճառով մա 1936թ. գնդակահարվեց: Ժամանակակից տնտեսագիտության մեջ դա հայտնի է «Կոնդրատևյան տեսություն» անվամբ: Նրա ուսմունքը գործնականում կիրառեցին եվրոպական երկրները, ԱՄՆ-ը, որի շնորհիվ դարձան տնտեսապես զարգացած երկրներ: Արևմուտքում կոնդրատևյան տեսությունը զարգացրեց ավստրիացի տնտեսագետ-գիտնական Շամփիթերը: Խոսքը վերաբերվում է գործարարության պարբերաշրջանների պատճառների բացահայտմանը: Վլ. Կոնդրատևը առաջինը բացահայտեց, որ աշխարհում տեղի են ունենում բնական աղետներ (երկրաշարժ, ջրհեղեղ, երաշտ և այլն), ինչպես նաև արտակարգ այլ երևույթներ (հրդեհ, փոթորիկ, վթարներ և այլն), որոնք արգելակում են երկրի տնտեսության զարգացումը, նրան ետ շրջում տասնյակ տարիներով և հակառակը՝ տեղի են ունենում նոր գյուտեր, գրանցվում արտոնագրեր, մշակվում են նոր և բարձր առաջադիմական տեխնոլոգիաներ, նախագծվում նոր ապրանքներ (ծառայություններ) և կազմակերպվում նյանց արտադրությունը, որն է արտադրության մեքենայացման, ավտոմատացման, ռոբոտոտեխնիկայի և համակարգչային տեխնիկայի կիրառման շնորհիվ զարգանում է երկրի տնտեսության ճյուղերը և տեղի է ունենում առաջընթաց, աճում են մակրոտնտեսական (ՀԱԱ, ՀՆԱ, ԱԵ) և միկրոտնտեսական ցուցանիշները (ՀԱ, ՀԵ, զուտ եկամուտ՝ շահույթ): Հետևապես, քանի որ այդ երևույթները կրկնվում են պարբերաբար, ապա երկրների տնտեսությունը զարգանում է ոչ թե վերընթաց, այլ վեր ու վար տատանումներով: Երկրի տնտեսության վեր ու վար տատանումները կոչվում են գործարարության պարբերաշրջաններ:


ԱՄՆ-ի տնտեսության զարգացման վիճակի վերլուծությամբ (1900-1990թթ.) ամերիկացի տնտեսագետ-գիտնական Ռոբերթ-Մոլոտոնը բացահայտեց օրինաչափություններ (կրկնվող երևույթներ), որոնք վերաբերում են ոչ միայն ԱՄՆ-ի, այլև աշխարհի մյուս երկրների շուկայական տնտեսությանը: Ընդ որում, նա բացահայտեց, որ գործարարության պարբեր-

աշրջաններն ունեն չորս փուլ՝ բուռն աճ, կրճատում, տնտեսական անկում և վերելքի փուլ:

Այժմ ցույց տանք գործարարության պարբերաշրջանների նշված փուլերի ուրվագիծը (Ուրվագիծ 1):

Ուրվագիծ 1

Տնտեսության զարգացումը ըստ գործարարության պարբերաշրջանների և նրա փուլերը



Երկրի ֆինանսական համակարգի վրա դրական ազդեցություն է ունենում բուռն աճի փուլը, որը կոչվում է նաև տնտեսական զարգացման փուլ:

Այդ փուլում բարձր են լինում մակրոտնտեսական (մակրո- հումարեն բառ է, որ նշանակում է մեծ, ընդհանուր և վերաբերում է երկրի տնտեսության ընդհանուր զարգացման ցուցանիշներին և միկրոտնտեսական (այսինքն՝ տնտեսության ճյուղերի հաշվով) ցուցանիշները (միկրո - նշանակում է փոքր, ճյուղային): Այս փուլում տնտեսավարող սուբյեկտները աշխատում են մեծ ծանրաբեռնվածությամբ, բարձր է աշխատունակ բնակչության զբաղվածության և ցածր՝ գործազրկության մակարդակը, բարձր է նաև բնակչության եկամուտները (աշխատավարձ, ձեռնարկատիրական եկամուտ, քոչակներ, նպաստներ և այլ եկամուտներ): Հետևապես, այս փուլում բարձր են լինում նաև ներդրումները: Սակայն, բնական աղետների և արտակարգ իրավիճակների պատճառով տեղի է ունենում ներդրումների կրճատում, ձեռնարկությունների թերբեռնված աշխատանք, աշխատավարձի իջեցում, գործազրկության մակարդակի բարձրացում, որն էլ բացասաբար է անդրադառնում տնտեսության զարգացման վրա և բյուջեն դառնում է դեֆիցիտային: Եթե երկրի կառավարությունն անհրաժեշտ քայլեր չի ձեռնարկում, ինչպես նախկին իշխանությունը 1993-1997թթ. Հայաստանում, ապա տեղի է ունենում տնտեսական

անկում և եթե այն տևում է վեց ամիս ու ավելի (ինչպես Հայաստանում), ապա այն փոխարկվում է տնտեսական ճգնաժամի: Այդ փուլում զանգվածային կարգով փակվում են ձեռնարկությունները, առաջանում է զանգվածային գործազրկություն, խիստ կրճատվում են բնակչության եկամուտները, աճում են ապրանքների գները և բնակչությանը մատուցվող ծառայությունների սակագները, առաջանում է փողի մեծ արժեզրկում (գերարժեզրկում և գերգնաճ), վատթարանում է բնակչության սոցիալական պայմանները, ինչպես մեր երկրում 1993-1997 թվականներին: Երկրի տնտեսությունը այդ վիճակից սկսում է բարելավվել աստիճանաբար, վերելքի փուլում, երբ իշխանության և կառավարության ջանքերով մշակվում է հակաճգնաժամային ծրագիր և դրան համապատասխան տնտեսական, ֆինանսական, այդ թվում հարկային և մաքսային քաղաքականություն, խթանվում է տեղական և օտարերկրյա կապիտալ ներդրումները և դրա շնորհիվ երկրի տնտեսությունը վերելք է ապրում, ինչպես մեր երկրի տնտեսությունը 1998 թվականի հուլիս ամսից: Սակայն, ամերիկյան ֆինանսիստ Ջոն Սորոսի ջանքերով ՌԴ-ում 1998թ. օգոստոսի 18-ին կազմակերպվել է ֆինանսական ճգնաժամ, ոռոսական ռոբլու լվացման պատճառով, ըստ որի ոռոսական ռոբլին արժեզրկվեց արտարժույթի և մեր ազգային արժույթի նկատմամբ գրեթե հինգ անգամ (1 : 84 հարաբերությունից իջնելով 1 : 18): Այդ պատճառով մեր երկրի տնտեսությունը կրկին հայտնվեց տնտեսական ճգնաժամի փուլում, քանի որ հայկական տնտեսական և ֆինանսական շուկան կապված է ՌԴ-ի շուկաների հետ, և միայն 1999թ. կեսերից նորից սկսեց վերելքի փուլը: Մեր երկրի տնտեսությունը 2001-2004թթ. վերելք է ապրում և զգալիորեն բարձրացել են մակրոտնտեսական և միկրոտնտեսական ցուցանիշները, բարձրացել բնակչության եկամուտները, կրճատվել գործազրկության մակարդակը և բարելավվում է սոցիալական ոլորտը: Դա հնարավորություն է տալիս երկրում ապահովել տնտեսական կայունությունը:

Գոյություն ունի ֆինանսների հետևյալ սկզբունքները.

- միասնություն,
- հավասարակշռվածություն,
- նպատակային ուղղվածություն,
- դիվերսիֆիկացիա (լատին. - diversifikation ընդլայնում),
- ռազմավարական կողմնորոշում:

Այժմ համառոտ կարգով պարզաբանենք ֆինանսների նշված սկզբունքները: “

Ֆինանսների միասնության սկզբունքը հիմնված է այն բանի վրա, որ գոյություն ունի օրենսդրական և նորմատիվա -իրավական բազայի (հեն-

քի) միասնություն, դրամական, վարկային, հարկային, մաքսային համակարգեր, ֆինանսական փաստաթղթավորման ձևեր և հաշվետվություններ, կանխիկ և անկանխիկ հաշվարկների և վճարումների կազմակերպում¹, ծախսերի և ֆինանսական արդյունքների ձևավորում, բռնագանձումների կիրառում՝ ֆինանսական, հաշվարկա-վճարային և հարկային կարգապահության խախտման համար:

Հավասարակշռվածության սկզբունք նշանակում է, որ տնտեսավարող սուբյեկտների ունեցվածքի արժեքային գնահատումն ունի ձևավորման կոնկրետ աղբյուր՝ դրամական միջոցների մուտքերի, այդ թվում՝ առևտրային բանկերի սեփական, փոխառու, ներգրավված միջոցները:

Եթե ունեցվածքը ձևավորվում է սեփական եկամուտների հաշվին, ապա բացակայում է ֆինանսական պարտավորությունը և արտաքին պարտքը՝ հակազործակալների հանդեպ: Այդ դեպքում միշտ էլ գոյություն ունեն պարտավորություն պետությունից և պետական արտաբյուջետային հիմնադրամի նկատմամբ: Եթե ունեցվածքը ձևավորվում է բանկային կամ առևտրային վարկի հաշվին (ֆրանս. credere - վարկ, որ նշանակում է հավատալ, պարտք),² ապա ծագում են ֆինանսական պարտավորություններ և ստեղծվում է կրեդիտորական պարտք (երբ տվյալ սուբյեկտը պարտք է ուրիշին): Տոկոսավճարով ներգրավված միջոցները պահանջում են համարժեք տոկոսադրույք և ծախսերի փոխհատուցում:

Բյուջեի և արտաբյուջեկալին հիմնադրամների հավասարակշռվածության սկզբունքը նշանակում է, որ նախատեսված ծախսերի հանրագումարը պետք է համապատասխանի համախառն եկամուտներին, որոնք ձևավորվում են հարկային և ոչ հարկային մուտքերից, ինչպես նաև փոխառու միջոցներից: Ֆինանսների հավասարակշռվածությունը մակրոտնտեսական մակարդակով հիմնվում է միկրոտնտեսական մակարդակի ֆինանսների կայունության վրա, այսինքն որքան մեծ լինեն տնտեսավարող սուբյեկտների ֆինանսները (ըստ եկամուտների աղբյուրների), այնքան շատ կլինեն հարկային մուտքերը և հակառակը: Ֆինանսների հավասարակշռվածությունը ապահովվում է ֆինանսական պարտավորությունների լրիվ և ժամանակին կատարման միջոցով:

Ֆինանսների անհավասարակշռվածությունը արտահայտվում է հետաձգված պարտքերի և պարտավորությունների աճով, որը տնտեսավարող սուբյեկտին հասցնում է ֆինանսական սնանկացման (երբ ընթացիկ պարտքերը և պարտավորությունները կազմում են մեկ միլիոն դրամ և ավելի):

1. Վսզգեն Վարդանյան, « Բանկային գործ. բանկային մենջմենթ. փող, վարկեր, բանկեր», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2004, էջ 253-342:

2. Նոյն տեղում, էջ 391-526

Ֆինանսների մյուս սկզբունքը հանդիսանում է նպատակային ուղղվածությունը: Ձեռնարկատիրական, այսինքն ազատ տնտեսական շահավետ գործունեության ավանդական նպատակներին վերաբերում են.

- շահույթի ստացումը,
- արտադրության շահութաբերության և աշխատանքի արտադրողականության բարձրացումը,
- շուկայական դիրքի կայունության ապահովումը,
- գյուքական, աշխատանքային և ֆինանսական պաշարների բավարարվածությունը:

Պեղական ֆինանսների նպատակային ուղղվածությունը հանդիսանում է.

- եկամուտների հավաքագրումը հարկերի ձևով,
- ոչ հարկային մուտքերի հավաքագրումը,
- պաշարների վերաբաշխումը՝ հաստատված չափորոշիչների հիման վրա և նպատակաուղղումը տնտեսության իրական ու մասնավոր հատվածների, սոցիալական ոլորտի գարգացման և ներդրումային ծրագրերի կատարման համար:

Ֆինանսավորման աղբյուրների և ներգրավված պաշարների դիվերսիֆիկացիայի սկզբունքը հանդես է գալիս երկակի ձևով.

առաջին, ֆինանսների ներդրումը տարբեր աղբյուրների հաշվին՝ տարբեր օբյեկտներում,

երկրորդ, բազմաճյուղ ձեռնարկության ստեղծում, որը զբաղվի ձեռնարկատիրական տարբեր տեսակի և ոչ առևտրային գործունեությամբ:

Ֆինանսների դիվերսիֆիկացիան ապահովում է եկամուտների ընդհանուր աճ: Այն հնարավորություն է տալիս նվազեցնել ֆինանսական սնանկացման ռիսկը և բարձրացնել տնտեսավարող սուբյեկտների մրցունակությունը: Դա պահանջում է նրանց օգտագործման մեծ չափով մանկրում, ինչպես տեղի է ունենում արժեթղթերի փաթեթում շահութաբեր արժեթղթի տեսակարար կշռի բարձրացման ժամանակ:

Ֆինանսների ռազմավարական կողմնորոշումը նշանակում է, որ կոնկրետ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է ֆինանսական պաշարների հավաքագրման հատուկ ռազմավարություն, որն ապահովի արտադրության, ծառայությունների ոլորտի օպտիմալ և արդյունավետ ֆինանսավորումը, ներառյալ ոչ միայն ընթացիկ ծախսերի փոխհատուցումը, այլև ներդրումների ավելացումը:

Բացի առանձնահատուկ սկզբունքներից, ֆինանսների վրա ազդեցություն է ունենում նաև տնտեսական գործընթացների կառավարման սկզբունքները:

Վ.Ա. Վարդանյան - ֆինանսական մենեջմենթ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 1999, գլուխ 1, էջ 48-58:

ԳԼՈՒԽ 2. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2.1. Ֆինանսական համակարգը և

նրա կառուցվածքը

Թեև պետությունը և մասնավոր սեփականությունն առաջացել են դեռևս ստրկատիրական հասարակարգի ժամանակ, սակայն պետական ֆինանսական համակարգը ձևավորվել է 16-րդ դարի վերջին, երբ կապիտալիզմը հաղթանակ տարավ ճորտատիրության նկատմամբ: Մինչ այդ, ֆինանսները գտնվում էր պետության տիրակալի տնօրինության ներքո՝ իր անձնակազմի հետ միասին և ծախսվում էր նրա՝ հայեցողությամբ: Ֆինանսական համակարգի հիմքը համարվում են ֆինանսները, որոնք ձևավորվում են հարկերի, մաքսավճարների, մաքսատուրքերի, պետական տուրքերի և ոչ հարկային եկամուտների ձևով: Պետական ֆինանսական համակարգի առաջացումը պայմանավորված է նրա ֆունկցիաների կատարման համար անհրաժեշտ ֆինանսներով: Ընդ որում ստրկատիրական և ճորտատիրական հասարակարգի ժամանակ հարկերը և մաքսատուրքերը հիմնականում եղել են բնամթերքով, իսկ կապիտալիզմի ժամանակ, որը հիմնված է ապրանքային արտադրության վրա՝ դրամական ձևով: Ֆինանսներն անհրաժեշտ են պետության հետևյալ ֆունկցիաները կատարելու համար՝

- երկրի պաշտպանության ,
- ազգային անվտանգության ,
- երկրի պետական կառավարման ,
- երկրի տնտեսության մեջ համապետական նշանակության օբյեկտների շինարարության համար (ռոտզման ցանց, ջրամբարներ, անտեսների հիմնում, բնապահպանական խնդիրներ, հողերի բարելավում),
- բնական աղետների դեմ պայքարելու ,
- արտակարգ իրավիճակների հետևանքները վերացնելու ,
- բնակչության կենսամակարդակը բարձրացնելու ,
- երկրի սոցիալական ոլորտի զարգացման (գիտություն, պետական կրթություն, մշակույթ, սպորտ, առողջապահություն),

Պետական ֆինանսների աղբյուրը համարվում են դրամական միջոցները, որոնք ստացվում են երկրի տնտեսության տնտեսավարող և տնտեսական սուբյեկտներից, ինչպես նաև բնակչությունից:

Որպես հիմնական հարկատուներ համարվում են տնտեսավարող սուբյեկտները: Տնտեսավարող են կոչվում այն սուբյեկտները, որոնք զբաղվում են ձեռնարկատիրական՝ ազատ տնտեսական շահավետ գործունեությամբ և բիզնեսով՝ կամերցիոն (առևտրային) գործունեու-

թյամբ: Որպես տնտեսավարող սուբյեկտներ՝ համարվում են նյութական արտադրության բոլոր կարգի ձեռնարկությունները, այսինքն՝ կոմերցիոն կազմակերպությունները (ՄՊԸ, ԼՏԸ, ԲԲԸ, ՓԲԸ և այլն): Տնտեսավարող սուբյեկտներ են համարվում նաև բոլոր կոմերցիոն բանկերը (ՀՀ-ում 21 առևտրային բանկ), ապահովագրական ընկերությունները (17 ընկերություն), վարկային կազմակերպությունները (2003-2004 թթ. Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել են 8 վարկային կազմակերպություններ), անշարժ գույքի գործակալությունները, ֆինանսական, ներդրումային կազմակերպությունները, անհատական և ընտանեկան ձեռնարկությունները, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը (մինչև 2001թ. կոչվում էին անհատ ձեռներեցներ, իսկ 2001թ. ապրիլի 3-ի «Անհատ ձեռնարկատերերի մասին» օրենքով՝ անհատ ձեռնարկատերեր): Որպես տնտեսական սուբյեկտներ համարվում են պետական սեփականության բյուջետական կազմակերպությունները (ոչ կոմերցիոն կազմակերպությունները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները), այսինքն՝ գյուղական և քաղաքային համայնքները (932 համայնքներ, այդ թվում 48 քաղաքային): Ընդ որում, նախատեսվում է առաջիկայում համայնքները խոշորացնել և հասցնել 360 համայնքի: Երևան քաղաքը բաղկացած է քաղաքային 12 համայնքներից՝ թաղապետարաններից): Հարկել են վճարում նաև բնակչությունը: Թեև բյուջետային կազմակերպությունները պետությանը վճարում են՝ եկամտահարկ, սակայն նրանք հարկատուներ չեն համարվում, բայց, ինչպես և տնտեսավարող սուբյեկտները, համարվում են գործատուներ: Այսպիսով, պետական ֆինանսական համակարգի ձևավորմանը մասնակցում են հետևյալ սուբյեկտները.

- պետությունը, ի դեմս կենտրոնական ֆինանսական մարմինների (ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, հարկային պետական ծառայություն, բանկերի և վարկային կազմակերպությունների հարկային տեսչություն, մաքսային պետական կոմիտե, գնումների պետական գործակալություն),
- տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպություններ (գյուղական և քաղաքային համայնքներ),
- տնտեսավարող սուբյեկտներ,
- բնակչությունը՝ որպես տնային տնտեսություն:

Պետական ֆինանսական մարմիններն իրականացնում են շուկայական տնտեսության պետական կարգավորումը, հարկային պետական ծառայությունը զբաղվում է հարկահավաքով, մաքսային պետական կոմիտեն՝ հումքի, նյութերի և այլ ապրանքների արտահանման և ներմուծման

համար մաքսավճարների ու մաքսատուրքերի գանձումով, տեղական ինքնակառավարման մարմինները՝ հողի հարկի, գույքահարկի և այլ հարկերի գանձումով, իսկ նոտայական գրասենյակները, ավտոտեսչությունները, իրավաբանական ծառայությունները և դատախիզական համակարգի մարմինները՝ պետական տուրքերի գանձումով: Այսպիսով, հարկերի, մաքսավճարների, մաքսատուրքերի, պետական տուրքերի, պետական սեփականության օբյեկտների վարձակալությունից և պետական կապիտալի գործառնություններից ստացված դրամական միջոցների, ինչպես նաև ոչ հարկային մուտքերի հաշվին ձևավորվում է երկրի ֆինանսական համակարգը:

Երկրի ֆինանսական համակարգի հիմքը համարվում է տնտեսական համակարգը, որը հնարավոր է կազմակերպել հետևյալ երկու մեթոդներից որևէ մեկով՝

առաջին, կենտրոնացված պլանավորման և պաշարների կենտրոնացված բաշխման մեթոդով: Այդ մեթոդը բնորոշ էր սոցիալիզմին, որը համարվում էր որպես պլանային տնտեսություն՝ հիմնված վարչական, կազմակերպական-կարգադրական համակարգի վրա, որի ժամանակ հիմքը համարվում էր դեկավարների սուբյեկտիվ կամքը: Այդ մեթոդի ժամանակ անտեսվում էր տնտեսական (տնտեսագիտական) օրենքների պահանջները: Դրա համար էլ նախկին Արևելյան Եվրոպայի սոցիալիզմի երկրները 1989թ. հրաժարվեցին սոցիալիզմից և անցան շուկայական տնտեսության: Նախկին ԽՍՀՄ-ը քայքայվեց 1992թ. և անկախություն ստացած 15 երկրները (12-ը միավորվեցին ԱՊՀ-ի մեջ) հրաժարվեցին սոցիալիզմից և նույնպես անցան շուկայական տնտեսության,

• երկրորդ, շուկայական տնտեսության մեթոդ, որը հիմնված է շուկայական ազատ հարաբերությունների վրա: Ընդ որում, շուկայական տնտեսության գաղափարը առաջին անգամ տվել է անգլիացի գիտնական Ադամ Սմիթը (1776թ.), որի համար նա համարվում է ժամանակակից տնտեսագիտության առաջին հանճարը: Նա համարվում է նաև ֆինանսների մասին գիտության հիմնադիրը: Շուկայական տնտեսությունը ապրանքափոխանակության ոլորտ է, որի դեպքում կատարվում է ապրանքների առք ու վաճառք և, որի դեպքում գները որոշվում են պահանջարկի և առաջարկի հիման վրա: Երկրի ֆինանսական համակարգը առաջին մեթոդի ժամանակ ունեցել է օժանդակ դեր, մինչդեռ շուկայական տնտեսության պայմաններում այն ունի վճռական դեր: Դա պայմանավորված է սուբյեկտների և հարկատեսակների բազմազանությամբ ու շուկայական տնտեսությունը պետության կողմից կարգավորելու դերով:

Շուկայական տնտեսության մեջ բոլոր տեսակի սուբյեկտներն ունեն տնտեսական ազատություն, ինքնուրույնություն, սակայն ապրանքի գնե- յը որոշվում են շուկայի կողմից (նախկին հասարակարգում՝ պետության կողմից): Նախկին Արևմտյան Եվրոպայում գներն ազատ են արձակվել 1980 թվականին, իսկ Արևելյան մասում՝ 1989 թվից, ՌԴ-ում, ԱՊՀ-ում, այդ թվում՝ ՀՀ-ում՝ 1994թվականից: Ապրանքների իրացումից և ծառայու- թյունների մատուցումից ձևավորվում է տնտեսավարող սուբյեկտների ե- կամուտները, այդ թվում շահույթը, որից էլ պետությանը տրվում է շահութահարկ: Հետևապես, կարևոր է դրամական հոսքերի (մուտք-եյք) արագության ապահովումը: Ֆինանսները փողի այն մասն են: որոնք դը- վում են գործի մեջ: Տնտեսավարող սուբյեկտների դրամական միջոցները պահվում են ձեռնարկությունների դրամարկում, հաշվարկային հաշ- վում, փոխատվական և այլ հատուկ հաշիվներում և համարվում են որպես դրամական միջոցներ (կանխիկ և անկանխիկ): Կան նաև թաքնված փո- դեր (ներդրված արժեթղթերում) և դրամական ֆոնդեր (կլիմադրամներ), որոնք ձևավորվում են տնտեսաֆինանսական գործունեության վերջնա- կան ֆինանսական արդյունքի հաշվին, այսինքն՝ շահույթի հաշվին: Հետևապես, որքան մեծ լինի տնտեսավարող սուբյեկտների դրամական հոսքերը , հասույթը, շահույթը, այնքան մեծ կլինեն հատուկ ֆոնդերի և տն- տեսական խթանման ֆոնդերի, ինչպես նաև հարկերի չափը: Երկրի ֆի- նանսական համակարգի ձևավորմանը մասնակցում են նաև այլ սու- բյեկտներ, ինչպես նաև բնակչությունը, երբ ձեռք է բերում երկարաժամ- կետ ապրանքներ:

Ֆինանսական համակարգը ձևավորվում է ի հաշիվ՝ առաջին, պետական ֆինանսների, որն իր արտացոլումն է գտնում երկրի պետական բյուջեում և հիմնականում ձևավորվում է հարկատունե- րի միջոցների հաշվին,

երկրորդ , տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսներ, որոնք ձևավորվում են հողի հարկի, տարածքի հարկի, տարածքի վարձա- կալման և գույքառևարկի, ինչպես նաև տեղական տուրքերի հաշվին,

երրորդ , տնտեսավարող սուբյեկտների ֆինանսներ, որոնք իրենց ար- տացողումն են գտնում ձեռնարկությունների եկամուտների և ծախսերի հաշվեկշռում, այսինքն ֆինանսական պլանում,

չորրորդ, բնակչության ֆինանսներ, այսինքն տնային տնտեսության ֆինանսներ, որոնք ձևավորվում են բնակչության եկամուտների և ծախ- սերի հաշվին:

Բնակչությունը կատարելով ապրանքների առք ու վաճառք՝ մասնակ-

ցում է ֆինանսական համակարգի ձևավորմանը: Սակայն , ինչպես նշել ենք, բնակչության ֆինանսներ են համարվում միայն երկարաժամկետ ապրանքների ծախսերը և երկարաժամկետ ներդրումները:

Այսպիսով, երկրի ֆինանսական համակարգն իր մեջ ընդգրկում է հետևյալ օղակների ֆինանսները (պետական սեփականության կազմա- կերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, տնտե- սավարող սուբյեկտների և բնակչության ֆինանսները): Հետևապես, ֆի- նանսական համակարգ ասելով հասկացվում է տարբեր մակարդակների կազմակերպությունների ամբողջությունը, որոնք իրենց ֆինանսներով ձևավորում են երկրի ֆինանսական համակարգը: Նրա մեջ ներառվում են՝

- առաջին , կենտրոնացված ֆինանսական մարմինները (ֆինանսնե- րի և էկոնոմիկայի նախարարություն, հարկային պետական ծառայու- թյուն, մաքսային պետական կոմիտե, Կենտրոնական բանկ, գնումների պետական գործակալություն),

- երկրորդ, բյուջետային, այսինքն՝ ոչ կոմերցիոն կազմակերպությունները,
- երրորդ , տեղական ինքնակառավարման մարմինները (գյուղական և քաղաքային համայնքները):

Ֆինանսական այդ օղակները համարվում են երկրի ֆինանսական համակարգի հիմնական օղակներ:


Շուկայական տնտեսության պայմաններում երկրի ֆինանսական համակարգը բաղկացած է ոչ միայն հիմնական, այլև օժանդակ համա- կարգից: Որպես օժանդակ համակարգ համարվում են յուրահատուկ կազմակերպությունները, ինչպիսիք են՝

- ֆինանսավարկային կազմակերպությունները (առևտրային բանկերը),
- վարկային կազմակերպությունները,
- ֆինանսական կորպորացիաները (լատիներեն՝ corpuse - մեկ մար- մին)՝ համարվում է նույն գործունեության ձեռնարկությունների կամավոր միավորում կամ ինքնուրույն ֆինանսական միավորում, կամ կարող է հանդես գալ հողիինգի ձևով (հողինգ - 1. միավորում, 2. ֆինանսական կառավարման իրավասություն),

- ներդրումային կազմակերպությունները,
- ապահովագրական ընկերությունները,
- անշարժ գույքի գործակալությունները:

Այսպիսով, երկրի ֆինանսական համակարգը բաղկացած է հիմնա- կան և ենթաապահովող համակարգերից: Երկրի ֆինանսական համա- կարգը սխեմայի (ուրվագծի) ձևով պատկերվում է հետևյալ կերպ. (ուրվագիծ 2)

Ուրվագիծ 2




Ֆինանսներն իրենցից ներկայացնում են տնտեսական հարաբերությունների համընդհանրություն, որոնք ծագում են իրական դրամական հոսքերի ձևով՝ ֆինանսական պաշարների և դրամական ֆոնդերի ձևավորման, վերաբաշխման, օգտագործման ժամանակ: Դրամական հոսքերը հանդիսանում են ֆինանսների նյութական հիմքը: Իրական դրամական հոսքերը՝ դա տնտեսական գործընթաց է, արժեքի շարժ, որն ուղեկցվում է դրամական վճարումների և անկանխիկ հաշվարկների հոսքով: Իրական դրամական հոսքերի օբյեկտը հանդիսանում է ֆինանսական պաշարները՝ որպես ընդլայնված վերարտադրության ֆինանսավորման

աղբյուր: Նրանց վերաբերում են շահույթը, եկամուտները, ծախսերը, հարկերը և այլն: Ֆինանսական պաշարների հաշվին ձևավորվում են դրամական միջոցների ֆոնդերը, ինչպիսիք են շահույթի բաշխման հաշվին ձևավորվող հատուկ և տնտեսական խթանման ֆոնդերը, կանոնադիր (բաժնեհավաք) կապիտալը, լրացուցիչ կապիտալը, պահուստային կապիտալը և այլն: Ֆինանսներն արտահայտում են տնտեսական հարաբերություններ, որոնք կապված են պետական տարածքային (մարզային) և տնտեսության մասնավոր հատվածի, արտադրության, շրջանառության և տնային տնտեսությունների ֆինանսավորման աղբյուրների ապահովման հետ: Ֆինանսների միջոցով ապահովվում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը: Երկրի տնտեսության իրական և մասնավոր հատվածների, տնային տնտեսության ֆինանսները կազմում են պետական ֆինանսական համակարգը: Այն կարելի է ցույց տալ հետևյալ ուրվագծով (ուրվագիծ 3):

Ուրվագիծ 3

Պետական ֆինանսական համակարգի օղակները



Պետական և տարածքային (մարզային) ֆինանսներն իրենցից ներկայացնում են տնտեսական հարաբերությունների ամբողջությունը, որոնք ծագում են իրական դրամական հոսքերի դեպքում կենտրոնացված ֆոնդերի ֆինանսական պաշարների ձևավորման, վերաբաշխման, օգտագործման և վերահսկողության ժամանակ՝ կենտրոնացված և տեղական մակարդակով:

Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսները տնտեսական հարաբերությունների համընդհանրություն է, որոնք ծագում են իրական դրամական հոսքերի ձևով՝ ապակենտրոնացված ֆոնդերի ֆինանսական պաշարների

ձևավորման, բաշխման, օգտագործման և վերահսկողության ժամանակ:

Տնային տնտեսությունների, այսինքն բնակչության ֆինանսները տնտեսական հարաբերություններ են, որոնք ծագում են տնային տնտեսությունների յրական դրամական հոսքերի ժամանակ:

Պետական ապահովագրությունը տնտեսական հարաբերություններ են, որոնք ծագում են դրամական հոսքերի ձևով՝ ապահովագրական ֆոնդի ֆինանսական պաշարների ձևավորման, բաշխման և օգտագործման ժամանակ:

Պետական արտաբյուջետային ֆունդերը սոցիալական ապահովագրության և պահուստային ֆոնդի միջոցներ են, որոնք արտահայտում են տնտեսական հարաբերություններ, և որոնք ծագում են նրանց ձևավորման, բաշխման և օգտագործման ժամանակ:

Ֆինանսներն ունեն հատուկ նպատակային կողմնորոշում: Ֆինանսական հոսքը բնութագրվում է փողի շրջանառության արագությամբ (փողի մոնետարիզմ), այսինքն թե մեկ դրամը տարվա մեջ քանի անգամ է պտույտ կատարում: Դրանից կախված է արտադրության և իրացման, այսինքն շրջանառության վիճակը: Հետևապես, կարևոր է ճիշտ և ժամանակին ընդունել կառավարչական ֆինանսական որոշում, այսինքն թե որտեղից պետք է ձևավորվեն ֆինանսները, ինչպես պետք է բաշխվեն (վերաբաշխվեն) և օգտագործվեն՝ սոցիալ-տնտեսական խնդիրները լուծելու համար¹:

2.2. Պետության ֆինանսական քաղաքականությունը

Պետության ֆինանսական քաղաքականությունը՝ ֆինանսների օգտագործման ուղղությամբ պետության գործունեությունն է՝ իր հնարավորությունների (տնտեսական, քաղաքական, ռազմական, բնապահպանական, սոցիալական) ամրապնդման և իմիջի (վարկի, հեղինակության) բարձրացման համար: Ֆինանսական քաղաքականությունն իրենից ներկայացնում է պետության կողմից կիրառվող ներգործության ձևերի, մեթոդների ուղղությունները՝ ֆինանսական համակարգի կենսագործունեության վրա: Երկրի տնտեսության զարգացման, մեծ և փոքր բիզնեսի՝ ձեռնարկատիրական գործունեության ծավալման համար: Վերջինս իրականացվում է տնտեսական կազմակերպական միավորների², այսինքն տն-

1. Վ.Ա.Վարդանյան - Ֆինանսական մեմբերներ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 1999, էջ 149 և էջ 173

2. Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին ՀՀ օրենքը, (Քաղաքացիական օրենսգիրք), Երևան, 1999:

տեսավարող սուբյեկտների (անկախ սեփականության ձևից) և անհատ ձեռնարկատերերի կողմից: Ֆինանսական քաղաքականությունը հանդիսանում է պետության տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասը և հանդես է գալիս կառավարման մեթոդների և ձևերի համակարգում, այսինքն՝ ֆինանսական պաշարների հավաքագրման, կուտակման և պետության ներսում լստ տարածքների և լստ երկրի տնտեսության ճյուղերի, պետական և տեղական ֆինանսների ձևավորման ու վերաբաշխման համար, որոնք արտացոլվում են պետական և տեղական բյուջեներում:

Պետության ֆինանսական քաղաքականության կենսագործման մեխանիզմը իր մեջ ընդգրկում է.

առաջին, պետության ֆինանսական համակարգի զարգացման կոնցեպցիայի (հայեցակետի) մշակում,

երկրորդ, պետության տնտեսական քաղաքականության մեջ ֆինանսական մեխանիզմի օգտագործման հիմնական ուղղությունների որոշում, երրորդ, համապետական և տարածքային (մարզային, համայնքային) ֆինանսների և ամբողջ երկրի հնարավորությունների ամրապնդման ուղղությամբ նպատակային ծրագրերի մշակում,

չորրորդ, առաջադրված նպատակներին հասնելու համար միջոցառումների մշակում:

Պետության ֆինանսական քաղաքականությունը որպես կառավարման մակրոտնտեսական մեխանիզմ, իր մեջ ընդգրկում է կառավարման ստրատեգիան (ռազմավարությունը) և տակտիկան (գործելակերպը): Ռազմավարություն ասելով հասկացվում է միջոցների օգտագործման եղանակը և ընդհանուր ուղղությունները՝ առաջադրված նպատակին հասնելու համար: Այն հնարավորություն է տալիս ջանքերը նպատակաուղղել գործունեների ընդունման լավագույն տարբերակի ընտրությանը:

Ֆինանսական ռազմավարությունը ոլորտում է պետության գործողությունները ֆինանսական համակարգի զարգացման և ֆինանսների բնագավառում: Այն նպատակաուղղված է նպատակային ծրագրերի մշակմանը, որոնց կենսագործման համար պահանջվում է և ժամանակ, և ֆինանսական պաշարներ: Գործելակերպի անվան ներքո հասկացվում է ինչ որ վերաբերմունքի ուղղությունը, որն ընտրված է առաջադրված նպատակին հասնելու համար:

Ֆինանսական գործելակերպը առաջադրված նպատակներին որոշակի պայմաններում հասնելու մեթոդներն և ձևերն են, գործողությունները, վերաբերմունքը: Ֆինանսական գործելակերպի խնդիրը հանդիսանում է

տվյալ տնտեսական իրավիճակում առավել լավագույն որոշումների ընդունումը: Ֆինանսական քաղաքականության բովանդակությունը հանդիսանում է հանրապետական ու համայնքային բյուջեներով եկամուտների և ծախսերի նախատեսումը:

Պետության ֆինանսական քաղաքականության բովանդակությունը հանդիսանում է նաև ֆինանսական կայունացուցիչների օգտագործման մեխանիզմի կազմակերպումը: Ֆինանսական կայունացուցիչները իրենցից ներկայացնում են ֆինանսական մեխանիզմի մեթոդները և ձևերը (լծակները)՝ երկրի տնտեսության կայունության բարձրացման համար: Երկրի տնտեսական վիճակի վրա ներգործություն են ունենում այնպիսի գործոններ, որոնք կրում են ծայրահեղ կամ պատահական բնույթ: Ֆինանսական կայունացուցիչներին վերաբերում են հարկումը և հարկերը, պետական ապահովագրությունը, պետական դատացիան, փոխհատուցումները, նպաստները, քաղաքացիների անձնական խնայողությունները: Երկրի տնտեսության վրա այդ կայունացուցիչների ազդեցությունը բնութագրվում է հետևյալ կերպ: Հարկերն իրենց կարգավորող, խրախուսող, բաշխիչ և ֆիսկալ ֆունկցիաներով (գործառույթներով) ներգործում են երկրի տնտեսական հնարավորությունների օգտագործման, տնտեսության և նրա առանձին ճյուղերի զարգացման, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների, այդ թվում անհատ ձեռնարկատերերի գործունեության վրա: Հարկերի աճը ստեղծում է նախադրյալներ պահանջարկի իջեցման և ներդրումների կրճատման համար: Հարկերի իջեցումը պայմաններ է ստեղծում տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից դրամական ազատ միջոցների աճի համար: Դա էլ նախադրյալներ է ստեղծում պահանջարկի ավելացման և կապիտալ ներդրումների աճի համար:

Պետության ֆինանսական քաղաքականության բովանդակությունը հանդիսանում է համապետական և տարածքային բյուջեների և արտաբյուջետային հիմնադրամների ձևավորումը: Պետության ֆինանսական քաղաքականությունը փոխադարձ և սերտ կապի մեջ է դրամավարկային քաղաքականության հետ: Վերջինս վարում է երկրի Կենտրոնական բանկը: Տնտեսական քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկի՝ ապրանքների գների և բնակչությանը մատուցվող ծառայությունների սակագների կայունության ապահովողը հանդիսանում է երկրի Կենտրոնական բանկը: Այդ նպատակառիչ Կենտրոնական բանկի կողմից մշակվում և հաստատվում է դրամավարկային քաղաքականության ծրագիրը: Պետության դրամական քաղաքականությունը իրենից ներկայացնում է դրամաշրջանառության վերաբերյալ միջոցառումների համընդհանրությունը:

ույունք ուղղվում են ազգային արժույթի արժեզրկման արգելակմանը և երկրի վճարային հաշվեկշռի հավասարակշռվածության ապահովմանը: Դրամական քաղաքականության հիմնական ուղղությունները համարվում են.

- բյուջեների ցուցանիշների փոխկապակցվածության ապահովման նպատակով տնտեսական իրավիճակի վերաբերյալ և կանխատեսումը,
- շրջանառության մեջ փողի զանգվածի առավելագույն չափի տնտեսական հիմնավորումը,
- փողի շրջապտույտի (դրամաշրջանառության) կարգավորման հիմնական մեթոդները:

Երկրի ֆինանսական քաղաքականությունն իրենից ներկայացնում է երկու տեսակի քաղաքականության համընդհանրություն, այսինքն ընթացիկ և երկարաժամկետ ֆինանսական քաղաքականություն: Ընթացիկ ֆինանսական քաղաքականությունը հանդիսանում է ֆինանսական շուկայի և նրա օղակների օպերատիվ կարգավորումը, ֆինանսական համակարգի բոլոր օղակների միջև ֆինանսական մեխանիզմի համաչափ կենսագործունեությունը:

Երկարաժամկետ ֆինանսական քաղաքականությունը նպատակաուղղվում է խոշորամասշտաբ տնտեսական խնդիրների լուծմանը, որոնք պահանջում են ժամանակի և կապիտալի մեծ ծախսեր: Դրա համար էլ այն ընդգրկում է երկարաժամկետ հատված և հաճախ շոշափում է ֆինանսական համակարգի և ֆինանսական մեխանիզմի փոփոխություն: Ըստ այդ հատկանիշի, պետության ֆինանսական քաղաքականության կազմում ներառվում է.


- բյուջետային քաղաքականությունը,
- հարկամաքսային քաղաքականությունը,
- վալյուտային քաղաքականությունը,
- վարկային քաղաքականությունը,
- հաշվային դիսկոնտային (disconte - զեղում) քաղաքականությունը,
- ֆինանսների կառավարման քաղաքականությունը:

Ֆինանսական քաղաքականությունն իր մեջ ներառում է ֆինանսական համակարգը և նրա օղակները կարգավորող բազմաթիվ հնտություններ ու ձևեր: Այդ կարգավորող մեթոդները կարելի է ընդգրկել երկու խմբի մեջ.

- դեֆյացիտն՝ հակաարժեզրկումային գործընթաց, այսինքն, երբ շրջանառության մեջ գտնվող փողի զանգվածը կրճատվում է,
- ռեֆլացիոն, այսինքն երբ տեղի է ունենում հակառակ գործընթացը:

Ըստ այդ հատկանիշի, պետության ֆինանսական քաղաքականությունն իրենից ներկայացնում է մի համակարգ, որը բաղկացած է դեֆյացի-

ցյուն և ռեֆյացիոն քաղաքականությունից: Ֆինանսական քաղաքականության կազմը կարելի է պատկերել հետևյալ ուղղվածով (ուրվագիծ 4):
Ուրվագիծ 4



Այժմ անդրադառնանք ֆինանսական քաղաքականության այդ ուղղությունների էության պարզաբանմանը:

Բյուջետային քաղաքականությունն իրենից ներկայացնում է իրավական, տնտեսական, կազմակերպական համալիր միջոցառումներ, որոնք կապված են բյուջեների կազմման, բյուջետային գործընթացի կարգավորման, բյուջետային ղեկիցիտի կառավարման և բյուջետային վերահսկողության հետ: Բյուջետային քաղաքականությունը՝ պետական իշխանության գործունեության նպատակաուղղումն է երկրի և վարչատարածքային կազմավորումների ֆինանսական պլանի (պետական և տեղական բյուջեներ) կազմման նպատակով: Բյուջետային քաղաքականությունը սերտորեն շաղկապված է հարկային քաղաքականության հետ, քանի որ ցանկացած մակարդակի բյուջեի հաշվով հարկերը համարվում են հիմնական գործիք նրա եկամտային մասը ձևավորելու համար, որոնք ծախսվում են բյուջետային կազմակերպությունների գործունեության ֆինանսավորման նպատակով:

Հարկային քաղաքականությունն իրենից ներկայացնում է պետության միջոցառումների համակարգը՝ հարկման բնագավառում, որին կանոնադառնանք ձեռնարկի 3-րդ գլխում:

Վալյուտային (Valute - արտաժույթ) քաղաքականությունը՝ տնտեսական, իրավական և կազմակերպական ձևեր ու մեթոդներ են՝ վալյուտային հարաբերությունների բնագավառում, որն իրականացվում է պետության (հանձինս՝ ԿԲ-ի) և համաշխարհային ֆինանսավալյուտային կազմակերպությունների կողմից: Վալյուտային քաղաքականությունը պետության գործունեությունն է, որն ուղղված է վալյուտային միջոցների նպատակային օգտագործմանը: Ի դեպ, գոյություն ունի վալյուտայի երկու տեսակ՝ ազգային վալյուտա (ազգային արժույթ) և համաշխարհային վալյուտա (արտաժույթ): Ուրպես համաշխարհային վալյուտա համարվում է մեկ ունցիա ոսկին, որը հավասար է 31.1 գրամ ոսկու (ունցիան կշռի միավոր է), ինչպես նաև ամերիկյան 38 \$-ը, որը համարված է մեկ ունցիա ոսկու (1970թ. համարված է եղել 35դոլարը): Վալյուտային քաղաքականությունը մեր երկրում որոշվում է Կենտրոնական բանկի խորհրդի, իսկ ՌԳ-ում՝ վալյուտա-տնտեսական հանձնաժողովի կողմից: Գոյություն ունի նաև վալյուտային-դիսկոնտային քաղաքականություն: Այն իրենից ներկայացնում է տնտեսական և կազմակերպական միջոցառումներ՝ ուղղված տոկոսի հաշվային դրույթի որոշման ու օգտագործման հետ, որով կարգավորվում է ներդրումների շարժը և վճարային պարտավորությունների հավասարակշռվածությունը՝ վալյուտային փոխարժեքի (տարադրամի) ճշգրտման միջոցով: Վալյուտային-դիսկոնտային քաղաքականությունը ներգործում է փողի պահանջարկի, ապրանքների գների և դինամիկայի (ըստ տարիների փոփոխություն), ինչպես նաև փողի զանգվածի վրա:

Վալյուտային ղեկավարող քաղաքականությունն իրենից ներկայացնում է վալյուտային փոխարժեքի կարգավորման մի համակարգ, որը կապված է վալյուտայի առք ու վաճառքի հետ: Դա տեղի է ունենում վալյուտային ինտերվենցիայի (ներխուժման) և վալյուտային սահմանափակումների միջոցով: Վալյուտային ինտերվենցիան՝ դա ՀՀ Կենտրոնական բանկի նպատակային գործունեությունն է՝ տարադրամի առք ու վաճառքի գծով, ըստ որի սահմանափակվում է ազգային արժույթ փոխարժեքի փոփոխությունը՝ ավելացման կամ նվազեցման իմաստով: Ընդ որում, 2004թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցավ մեր ազգային արժույթի փոխարժեքի կտրուկ տատանումներ ամերիկյան դոլարի

նկատմամբ՝ իջեցման իմաստով, որը սպեկուլյատիվ (վերավաճառքային) խաղ էր: Դա համարվում է հուլանդական հիվանդություն (մեծան երևույթ առաջին անգամ նկատվել է Հոլանդիայում) , քանի որ դրան չուղեկցեց ապրանքների գների և բնակչությանը մատուցվող ծառայությունների սկզբների իջեցումը: Երկրի Կենտրոնական բանկը մինչև ղեկտեմբեր ամսվա կեսերը գործընթացին չմիջամտեց՝ բողոքելով լողացող փոխարժեքի ազատ լինելը, սակայն տեսնելով, որ դա ոչ թե ֆինանսական շուկայում փողի պահանջարկի և առաջարկի հարաբերության արյունք է, այլ սպեկուլյատիվ խաղ ֆինանսական շուկայում, ստիպված եղավ (ՀՀ նախագահի միջամտությունից հետո) միջամտել և ստուգումներից պարզվեց, որ տարադրամի փոխանակման 15 կետեր (չենջեր՝ Exchange), զբաղվում են սպեկուլյատիվ խաղով, այսինքն անօրինական գործարքով, քանի որ տարադրամի առքն ու վաճառքը չէր ձևակերպվում օրինական կարգով և գործում էին սովորում: Եղել են փոխանակման կետեր, որոնցում հայտնաբերվել են 50-60 հազար \$-ի չձևակերպված միջոցներ: Այդ ընթացքում մեր ազգային արժույթը ամերիկյան դոլարի նկատմամբ, իբր կայունացման միտում էր ապահովում՝ 590 դրամից իջնելով 465 դրամի և միջամտությունից հետո երկու օրվա ընթացքում փոխարժեքը բարձրացավ 485 դրամի: Սակայն երեք օրից հետո նույնը շարունակվեց և 2005թ. ապրիլի կեսին ազգային արժույթի փոխարժեքը կազմում էր 446 դրամ: ԱՄՆ-ի համերկրային պահուստային համակարգը (ԱՄՆ-ում գործում է 12 ՀԱՀ) այդ ընթացքում 0,25%-ով բարձրացրել է ԱՄՆ-ի վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ինչը կնպաստի դոլարի կայունացմանը: Համաշխարհային ֆինանսական շուկաներում ձևավորված այդ միտումները տվյալ ժամանակ իր ազդեցությունն ունեցավ նաև ՀՀ առևտրային բանկերի գործունեության վրա:

Վալյուտային սահմանափակումներն իրենցից ներկայացնում են տնտեսական, իրավական, կազմակերպական միջոցառումների մի համակարգ, որը կարգավորում է ազգային արժույթի և տարադրամի փոխանակման ու այլ վալյուտային գործառնությունները: Ընդ որում, վալյուտային քաղաքականությունը մշակվում է ոչ միայն ընթացիկ, այլև երկարաժամկետ կարգով:

Վարկային քաղաքականությունն իրենից ներկայացնում է տնտեսական մեթոդների և իրավական չափանիշների համընդհանրությունը, որի նպատակն է կառավարել վարկային կապիտալի շարժը: Վարկային քաղաքականության գործողությունները առաջին հերթին ընդգրկում է վարկային շուկան, ինչպես նաև «կարճ փողերի» ու արժեթղթերի շուկան: Կարգավորել վարկային կապիտալի շարժը, նշանակում է կարգավորել

փողի շրջապտույտը, այսինքն՝ դրամաշրջանառությունը: Շրջանառության մեջ գտնվող փողի գումարվածի՝ կարգավորումը շուկայական տնտեսության պայմաններում հիմնականում կատարվում է կառավարման տնտեսական և ոչ թե վարչական մեթոդներով: Դրանք են.

- վարկերի ծավալների որոշումը, որը մրցութային կարգով տրվում է երկրի Կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերին,

- լստ վարկերի հաշվային դրույքի, այսինքն տոկոսավճարի դրույքի հաշվարկը, որը տրվում է երկրի ԿԲ-ի կողմից՝ առևտրային բանկերին,

- պարտադիր պահուստների չափի սահմանում, որը առևտրային բանկերի կողմից տեղաբաշխված է Կենտրոնական բանկում

Վարկային քաղաքականության հետ սերտորեն շաղկապված է հաշվային (դիսկոնտային) քաղաքականությունը: Երկրի Կենտրոնական բանկը դրան հասնում է մանրերելու ճանապարհով, այսինքն պաշտոնային հաշվային դրույքի բարձրացման, կամ իջեցման միջոցով՝ նպատակ ունենալով ներգործել վարկի ծավալի, փողի արժեգրկման տեմպի ու վճարային հաշվեկշռի վրա:

Հաշվային դրույքը այն դրույքն է, որն օգտագործվում է հաշվարկների ժամանակ, երբ որոշվում է հաշվային տոկոսի չափը: Հաշվային տոկոսն իրենից ներկայացնում է վճար, որը վերցնում է առևտրային բանկը՝ մուրհակների, արժեթղթերի և այլ պարտքային պարտավորությունների գնման միջոցով՝ մինչև նրանց վճարման ժամկետը լրանալը: Ըստ էության, հաշվային տոկոսն իրենից ներկայացնում է մուրհակի անվանական արժեքի և առևտրային բանկի կողմից նրա գնման ժամանակ վճարած գումարի տարբերությունը:² Առևտրային բանկերն իրականացնում են արժեթղթերով գործառնություններ և կարող են, միաժամանակ, կիրառել մի քանի հաշվային դրույքներ: Հաշվային տոկոսը ազդում է վարկի արժեքի վրա, որը ֆինանսավարկային կազմակերպությունը տրամադրում է իր հաճախորդներին (ֆիզիկական և իրավաբանական անձանց): ԿԲ-ի կողմից հաշվային տոկոսի բարձրացումը նպատակաուղղված է երկրում փողի զանգվածի և վարկի ծավալի սահմանափակմանը և խրախուսում է օտարերկրյա կապիտալի ներհոսքը:

Հաշվային տոկոսի իջեցումը «էժան փողերի» քաղաքականությունն է:

2.3. Ֆինանսական շուկաները և նրանց տեսակները

Ֆինանսները կազմում են ֆինանսական համակարգի հիմքը: Ֆի-

1 Վ.Ա. Վարդանյան, Ֆինանսական մենեջմենթ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 1999, էջ 168-169:

2 Նույն տեղում, էջ 267-270:

նանսները և ֆինանսական համակարգն իրենց գործողությունները հանդես են բերում ֆինանսական շուկայում: Ֆինանսական շուկան իրենց ներկայացնում է բարդ տնտեսական համակարգ, որը համարվում է.

- տնտեսական հարաբերությունների ոլորտ, այսինքն, երբ բաշխվում է նոր ստեղծված արժեքը և նրա իրացումը՝ փողի փոխանակումը ֆինանսական ակտիվների հետ:

Որպես ֆինանսական ակտիվներ համարվում են ֆինանսական պաշարները և ներդրումները: Ներդրումային արժեքները համարվում են ֆինանսական պաշարների ձևավորման ֆինանսական գործիք (արժեթղթեր, վալյուտային արժեքներ, ոսկի և այլն),

- գնորդ-ներդրողների և վաճառող-ներդրողների համընդհանրություն, որոնց փոխգործողությունների շնորհիվ կատարվում է փոխանակություն նրանց միջև,

- ֆինանսական ակտիվների գնորդների և վաճառողների շահերի համաձայնեցման գործիքներ,

- ֆինանսական ակտիվների գնորդների և վաճառողների միջև տնտեսական հարաբերությունների դրսևորման ոլորտ:

Ֆինանսական շուկայում պահանջարկը (ի դեմս ֆինանսական ակտիվի գնորդի) հակադրվում է առաջարկի հետ (ի դեմս վաճառողի): Նրանցից ամեն մեկն ունի իր շահերը, որոնք կարող են համընկնել կամ չհամընկնել: Շահերի համընկնման դեպքում կատարվում է ֆինանսական ակտիվների առք ու վաճառքի գործարքը: Դա նշանակում է արժեքի և սպառողական արժեքի իրացում, որոնք ներառված են տվյալ ակտիվի մեջ,

- այն ապրանքների տնտեսական հարաբերությունների ոլորտ, որ տեղի է ունենում արժեքի և սպառողական արժեքի միջև և որոնք շրջանառվում են այդ շուկայում:

Ապրանքները, որոնք շրջանառվում են ֆինանսական շուկայում՝ ֆինանսական ակտիվներն են: Դրանց վերաբերում են փողը (որպես ազգային արժույթ և արտարժույթ), դեպոզիտները (ավանդները), արժեթղթերը, փոխառվական կապիտալը, թանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները, անշարժ գույքի օբյեկտները՝ հող, տուն, բնակարան, ամառանոց, ավտոտնակ և այլն:

Ֆինանսական շուկան կոնկրետ ձեռներեցի (անհատ ձեռնարկատեր, ձեռներեցի՝ իրավաբանական անձ) համար իրենից ներկայացնում է գնորդների (սպառողներ, ավանդատուներ) համընդհանրությունը, որոնք շահագրգռված են ֆինանսական ակտիվներ գնելու գործում և այլ ծառայություններում, որոնք առաջարկում են վաճառողները: Ամեն մի ձեռներեց կախված է շուկայից, նրա մի հատվածից: Այլ կերպ, շուկան ապրանքափոխանակության ոլորտ է, որտեղ կատարվում են ապրանքների առք ու վա-

ճառք, ապրանքափոխային հարաբերություններ, որոնք տեղի են ունենում գնորդների ու վաճառողների միջև: Ցանկացած ձեռներեց հարուստ է ոչ թե նրանով, որ ունի ունեցվածք (ֆիզիկական և ֆինանսական կապիտալ), վարձու աշխատողներ, այլ նրանով, որ ունի շուկա, որտեղ իրացվում է նրա արտադրանքը, այդ թվում ֆինանսական ակտիվները և ծառայությունները:

Այսպիսով, ֆինանսական շուկան համարվում է ֆինանսական ակտիվների իրացման և տնտեսական հարաբերությունների ոլորտ, որոնք տեղի են ունենում այդ ակտիվների ներդրող-գնորդների և ներդրող-վաճառողների միջև: Ֆինանսական շուկան ոչ միայն տնտեսագիտական, այլև պատմական կատեգորիա (հասկացություն) է: Այն ծագել է ֆինանսների հանդես գալու հետ մեկտեղ և ապրանքափոխային հարաբերությունների զարգացման վուլում, այսինքն, երբ այդ հարաբերությունները թևակոխել են զարգացման հատուկ ոլորտ: Ֆինանսական շուկան որպես տնտեսական հասկացություն, հանդիսանում է տնտեսական հարաբերությունների ոլորտ, որի ժամանակ իրացվում է ապրանքի սպառողական արժեքը և արժեքը: Այդ տնտեսական հարաբերությունները որոշվում են օբյեկտիվ տնտեսական օրենքներով և պետության ֆինանսական քաղաքականությամբ, որով կանխորոշվում է նաև ֆինանսական շուկայի էությունը: Ֆինանսական շուկայի էությունը և նրա դերը երկրի տնտեսության մեջ, առավել լրիվ է բացահայտվում նրա գործառույթներում: Ֆինանսական շուկայի գործառույթները հանդիսանում են.

- ապրանքի արժեքի և սպառողական արժեքի իրացումը, որն ամրագրված է ֆինանսական ակտիվներում,

- ֆինանսական ակտիվները մինչև սպառողներին հասցնելու գործընթացի կազմակերպումը,

- ներդրումների և սպառման գործընթացների ֆինանսական ապահովումը,

- փողի շրջապտույտի (դրամաշրջանառության) վրա ունեցած ազդեցությունը

Ֆինանսական շուկայի առաջին գործառույթի գործընթացի ժամանակ տեղի է ունենում ապրանքի արժեքի շարժ, որն արտահայտվում է ապրանքափոխանակության միջոցով, այսինքն փող — ֆինանսական ակտիվ: Դրանով ավարտվում է ապրանքի առք ու վաճառքի գործընթացը: Ֆինանսական շուկայի երկրորդ գործառույթի ժամանակ ֆինանսական ակտիվները կազմակերպման միջոցով հասցվում են սպառողին: Այդ գործառույթը կատարելու համար ստեղծվում են ֆինանսավարկային կազմակերպություններ, տարադրամի փոխանակման կետեր, արժեթղթերի բուրսա, բրոքերային (միջնորդական) գրասենյակներ և այլն: Ֆինանսական ապահովման գործառույթի բովանդակությունը հանդիսանում է պայման-

ների ստեղծումը, անհրաժեշտ ֆինանսական պաշարների հավաքման համար: Այն իր մեջ ներառում է կապիտալի կուտակումը, վարկերի ստացումը և այլն: Ներգործության գործառույթի բովանդակությունը հանդիսանում է ֆինանսական շուկայի կողմից պայմանների ստեղծումը, որպեսզի ապահովի փողի շարժը և շրջանառության մեջ փողի զանգվածը:

Ֆինանսական շուկան հանդիսանում է պետական մարմինների կառավարման օբյեկտ:

Որպես կառավարման օբյեկտ- ֆինանսական շուկան բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով.

- ֆինանսական շուկայի տարրությունը,
- շուկայի իրավիճակը,
- ֆինանսական ակտիվների պահանջարկի և առաջարկի հավասարակշռվածության մակարդակը,


• ֆինանսական ակտիվների իրացման պայմանները:

Ֆինանսական շուկայի տարրություն ասելով հասկացվում է ապրանքափոխանակության տարեկան ծավալը: Ֆինանսական շուկայի տարրությունը կախված է նրա տեսակից, շուկայի իրավիճակից, զների մակարդակից (փոխարժեք, շահաբաժին, տոկոսադրույք, կոմիսիոն խրախուսում, զեղչում), գովազդի ծախսերից, ինչպես նաև երկրի տնտեսական ու քաղաքական իրավիճակից:

Ֆինանսական շուկայի իրավիճակը պահանջարկի և առաջարկի հարաբերակցությունն է: Դրա հիմնական ցուցանիշներն են՝ զինը, այսինքն փոխարժեքը, շահաբաժինը, զեղչումը, տոկոսադրույքը, կոմիսիոն խրախուսումը: Ֆինանսական շուկայի կայունությունը որոշվում է ակտիվների նկատմամբ պահանջարկի և առաջարկի հարաբերակցությամբ, որը հնարավորություն է տալիս ազատ իրացնել ֆինանսական ակտիվները: Հարկ է նկատի ունենալ, որ ֆինանսական ակտիվները նյութական ապրանքների համեմատությամբ ունեն մեծ իրացվելիություն: Նրանց կարելի է գնել և վերավաճառել: Դա գործարարի համար ստեղծում է պայմաններ շուկայում խաղալու նպատակով: Շուկան խաղ է թվերի հետ և առավել ևս ֆինանսական շուկան ու հատկապես տարադրամի փոխանակման կետերը:

Ֆինանսական շուկան իրենից ներկայացնում է առանձին, ինքնուրույն շուկաների համակարգ, որոնցից յուրաքանչյուրում առանձնացվում է ֆինանսական ակտիվների կոնկրետ տեսակի շուկան:

Ֆինանսական շուկաները դասակարգվում են ըստ տարածման ոլորտի, ըստ հիմնական խմբերի, ըստ ֆինանսական ակտիվների տեսակների և ըստ կազմակերպվածության մակարդակի: Դա երևում է նրա ուրվագծից (ուրվագիծ 5):



Ֆինանսական շուկայի տեսակները՝ ըստ ռասակարգման

Ուրվագիծ - 5

Ըստ տարածման ոլորտի, գոյություն ունի ֆինանսական ակտիվների համաշխարհային և ներքին շուկա: Դրանք էլ համապատասխանաբար բաժանվում են տարածքային շուկաների, որոնց հաշվով կազմավորվում են ֆինանսական կենտրոններ (բանկային, բորսայական, ֆինանսական ընկերություններ և այլն): Համաշխարհային ֆինանսական կենտրոնները բանկերի և այլ ֆինանսավարկային կազմակերպությունների համակարգ է, որոնք կատարում են համաշխարհային վայրուտային և վարկային գործառնություններ, ոսկով, արժեթղթերով և այլ ֆինանսական ակտիվներով: Առավել խոշոր համաշխարհային (միջազգային) ֆինանսական կենտրոններ են համարվում Լոնդոնի, Փարիզի, Նյու Յորքի, Տոկիոյի, Մինգապուրի և այլ ֆոնդային բորսաները (ֆինանսական կենտրոնները): Համաշխարհային ֆինանսական կենտրոններին յուրահատուկ է կապիտալի կենտրոնացման բարձր մակարդակը: Ֆինանսավարկային հիմնարկները (բանկեր, բորսաներ, ապահովագրական և բորքերային ընկերություններ և այլն), որոնց միջոցով կատարվում են միջազգային ֆինանսավարկային գործառնություններ, ունեն արտոնյալ վայրուտային և հարկային ռեժիմ՝ այդ գործառնությունների կատարման համար:

Ներքին ֆինանսական շուկան՝ դա ֆինանսական շուկա է, որը գործում է տվյալ երկրի տարածքում: Ֆինանսական շուկայի ապրանքը ֆինանսական ակտիվներն են, այսինքն ապրանքներ, որոնց կարելի է գնել և վաճառել այդ շուկայում: Որպես հիմնական ապրանքներ համարվում են վայրուտային արժեքները (արտերկրների վայրուտա և արժեթղթեր՝ արտահայտված վայրուտայով), քանկարժեք քարերը, քանկարժեք մետաղները, արժեթղթերը՝ ֆոնդային, առևտրային՝ արտահայտված ազգային արժույթով), փողը՝ ազգային արժույթի բանկային տոմսեր, ավանդներ, դեպոզիտներ (ավանդի տեսակ և ըստ Ջ.Ս. Կացենելբաումի բանկերի համար քաջնված փող), վարկային կապիտալ (վարկ, փոխառություններ), ապահովագրական ընկերությունների պարտքային պարտավորությունների արժեթղթեր և կենսաթոշակային մասնավոր հիմնադրամ: Ըստ ֆինանսական ակտիվների հիմնական խմբերի, ֆինանսական շուկաները դասակարգվում են վայրուտային շուկայի, քանկարժեք քարերի և քանկարժեք մետաղների շուկաների, արժեթղթերի շուկա, փողի շուկա, վարկային շուկա, ապահովագրական շուկա և անշարժ գույքի շուկա:

Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ ֆինանսական ակտիվների բոլոր տեսակի շուկաները սերտորեն շաղկապված են իրար հետ և մեր երկրում դրանց նկատմամբ վերահսկողություն է իրականացնում արժեթղթե-

րի հանձնաժողովը: Ըստ ֆինանսական շուկաների կազմակերպվածության աստիճանի, տարբերում են կազմակերպված և անկազմակերպ շուկաներ: Կազմակերպված ֆինանսական շուկան գործում է որոշակի կանոններով, որը սահմանվում է ֆինանսական կազմակերպության (առևտրային բանկ, գրավատուն, ֆոնդային բորսա և այլն) կողմից: Անկազմակերպ ֆինանսական շուկան իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվների առք ու վաճառքի ոլորտ՝ այլ ֆինանսական կառուցվածքների և ֆիզիկական անձանց միջոցով:

2.4. Բյուջետային համակարգ, նրա կառուցվածքը, իրավական հիմքերը և սկզբունքները

Պետության ֆինանսական համակարգի առանձնահատուկ մասն է կազմում բյուջետային համակարգը¹, որի համաձայն «Բյուջետային համակարգի մասին» ԱՄ-ի կողմից 1997թ, հունիսի 24-ին ընդունված ՀՀ օրենքի (հոդ.2) բաղկացած է պետական և համայնքային բյուջեներից՝ որպես պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված իրավասությունների իրականացման համար անհրաժեշտ պահանջարկի միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրեր: ՀՀ պետական բյուջեի և ՀՀ համայնքների բյուջեների հանրագումարի արդյունքում ձևավորվում է համախմբված բյուջեն (հոդ.3), որպես պետական և տեղական բյուջեների բոլոր տեսակի եկամուտների և ծախսերի ամփոփ ֆինանսական պլան:

Հանդիսանալով մեկ համակարգի բաղադրամասեր՝ պետական և համայնքների բյուջեներն ուղղված են պետության ֆինանսական քաղաքականության իրականացմանը: Պետական և համայնքային բյուջեները պետության ֆինանսական համակարգի մյուս օղակների հետ մեկտեղ, հիմնվում են ֆինանսական, դրամարկղային, հարկային միասնական պետական քաղաքականության վրա:

Այսպիսով, բյուջետային համակարգն իրենից ներկայացնում է երկրի օրենսդիր, գործադիր մարմինների և նրանց ենթակա բյուջետային կազմակերպությունների ամբողջությունը, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են բյուջետային հատկացումների հաշվին, այսինքն ըստ

¹ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը (Հարկային տեղեկատու, քիվ 18, հոկտեմբեր, 1997), Երևան, 1997:

ծախսերի նախահաշվի:

Այսպիսով, բյուջետային համակարգի մեջ ներառվում են.

- օրենսդիր մարմինները, այսինքն պետական իշխանության օրգանները (ՀՀ նախագահի աշխատակազմ, Ազգային ժողով),

- գործադիր մարմինները, այսինքն կառավարությունը՝ կենտրոնական և ճյուղային նախարարություններով և նրանց ենթակա բյուջետային կազմակերպությունները,

- դատա-իրավական մարմինները,

- երկրի պաշտպանության, Ազգային անվտանգության և Ոստիկանության մարմինները:


Մեր երկրի բյուջետային համակարգը բաղկացած է երկու մակարդակից.

- պետական բյուջե և պետական արտաբյուջետային հիմնադրամ,

- տեղական բյուջե, այսինքն տեղական ինքնակառավարման մարմինների (գյուղական և քաղաքային համայնքներ) բյուջեներ:

Բյուջետային համակարգը մեր երկրում կառուցված է պարզ վարչատարածքային սկզբունքով՝ ըստ որի գործում է երկմակարդակ բյուջե՝ պետական և տեղական: Պետական բյուջեն և արտաբյուջետային հիմնադրամը (սոցիալական ապահովագրության հիմնադրամ) հաստատվում է Ազգային ժողովի կողմից՝ օրենքի ձևով, իսկ տեղական բյուջեները հաստատվում են համայնքների Ավագանիների նիստերում՝ ընդունելով այդ մասին համապատասխան որոշում: Հետևապես, ցույց տանք ՀՀ բյուջետային համակարգի ուրվագիծը (Ուրվագիծ 6):

33 բյուջետային համակարգի ուրվագիծը



Պետական և համայնքային բյուջեները, որպես բյուջետային համակարգի երկու մասեր, սերտորեն շաղկապված են միմյանց հետ: Բյուջետային համակարգի սլայդումավետ կառավարման կարևոր հիմքերից մեկը բյուջետային հարաբերությունների հստակ և արդյունավետ կարգավորումն է: Այն իրականացվում է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան, բյուջեների միջև եկամուտների բաշխման, բյուջետային դասակարգման և բյուջեներում լրացումների ու փոփոխությունների կատարման ուղղությամբ իրավասու մարմինների օրենքով իրենց վերապահված իրավասությունների սահմաններում իրականացվող գործողություն: Բյուջետային հարաբերությունները կարգավորվում են օրենքով սահմանված բյուջեների միասնականության մեկ գրույթի հիման վրա: Այսպես, միասնականության սկզբունքով և իրավական հիմքով կարգավորվում է բյուջետային գործընթացը, բյուջետային միասնական դասակարգումը, բյուջետային հաշվառման, հաշվետվության և բյուջեների կատարման միասնական մեթոդաբանությունն ու դասական համակարգը, միասնական բյուջետային քաղաքականության իրականացումը: Բյուջետային հարաբերությունների կարգավորման կարևոր ուղղություններից մեկը բյուջեների միջև եկամուտների բաշխումն է: Պետական բյուջեի և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) բյուջեների փոխհարաբերությունների կարգավորման խնդիրները, դրանց եկամուտների ձևավորման շրջանակներում առնչվում են՝

- պետության կողմից ՏԻՄ-երին տրված իրավասությունների ֆինանսական ապահովման,
- իրավասությունների իրականացման ուղղությամբ համայնքների ֆինանսական հիմքերի ապահովման,
- համայնքների տնտեսապես հավասար զարգացման նպատակով ֆինանսական հնարավորությունների առկա տարբերությունների նվազեցման,
- պետական բյուջեից ՏԻՄ-երին փոխառու միջոցների տրամադրման հետ:

Պետության կողմից ՏԻՄ-երին տրված իրավասությունները ենթակա են պարտադիր ֆինանսավորման և անընդմեջ կատարման (հաղված 10): Պարտադիր իրավասությունները ֆինանսավորվում են ի հաշիվ համայնքների բյուջեներին ամբողջական կամ մասհանումային տարբերակով ամրագրված հարկերից, պարտադիր այլ վճարներից, ինչպես նաև պետական

1.Տեղական ինքնակառավարման մարմինների ուսուցման մեթոդական ձեռնարկ, Երևան, 2003, էջ 176:

բյուջեից տրամադրվող պաշտոնական տրանսֆերտների հաշվին: «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանվում են նաև բյուջետային դասակարգման կառուցվածքի խոշոր բաղկացուցիչները, իսկ բյուջետային դասակարգումն ըստ առանձին հոդվածների, առավել մանրամասնելու, ինչպես նաև դրանց կիրառման կարգը սահմանելու իրավասությունը օրենքով վերապահված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը:

Բյուջետային հարաբերությունների կարգավորման գործընթացը սերտորեն առնչվում է նաև բյուջեների կազմաարակշռվածության խնդրին:

ՀՀ բյուջետային հարաբերությունների հստակ կարգավորումը պահանջում է ունենալ միասնական բյուջետային դասակարգում՝ պետական և համայնքների բյուջեների եկամուտների ու ծախսերի խմբավորում՝ ըստ դրանց տեսակների և ուղղությունների: Բյուջետային դասակարգման տեսակները և կառուցվածքը սահմանված են «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով և դրանց կիրառումը բյուջետային գործառնությունների պլանավորման ու կատարման բնագավառում պարտադիր է պետական և տեղական բոլոր մարմինների համար:

Երկրի բյուջետային համակարգն իր գործունեությունը կազմակերպում է որոշակի սկզբունքներով, որը կազմում է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի բովանդակությունը: Այդ սկզբունքներն են՝

- բյուջետային համակարգի միասնությունը,
- բյուջետային համակարգի մակարդակների միջև եկամուտների և ծախսերի սահմանազատումը,
- բյուջեների ինքնուրույնությունը,
- բյուջեների և արտաբյուջետային հիմնադրամի եկամուտների և ծախսերի լրիվ արտացոլումը,
- բյուջեների հավասարակշռվածությունը,
- բյուջետային միջոցների խնայողաբար և արդյունավետ օգտագործումը, բյուջեների ծախսերի համընդհանուր ծածկումը,
- հյապարակայնությունը,
- բյուջեների հավաստիությունը,
- բյուջետային հատկացումների օգտագործման հասցեականությունը և Օպատակային բնույթը:

Այժմ համառոտակի անդրադառնանք բյուջետային համակարգի կենսագործունեության նշված սկզբունքների տրայան պարզաբանմանը:

Բյուջեային համակարգի միասնության սկզբունքը նշանակում է

միասնական իրավական հենք, դրամական համակարգ, բյուջետային փաստաթղթերի միասնական ձևեր, բյուջետային գործընթացի միասնական սկզբունք, բյուջետային օրենսդրության խախտման համար սանկցիա, բյուջետային համակարգի բոլոր մակարդակների բյուջեների եկամուտների և ծախսերի ֆինանսավորման միասնական կարգ, պետական և տեղական բյուջեների միջոցների հաշվապահական (ֆինանսական) հաշվառման միասնական կարգ:

Բյուջեների մակարդակների միջև եկամուտների և ծախսերի սահմանազատման սկզբունքը նշանակում է համապատասխան տեսակի եկամուտների ամրացում, այսինքն եկամուտների ձևավորում ըստ աղբյուրների և ծախսերի հատկացում ըստ ուղղությունների, ինչպես նաև ծախսերի կատարում ըստ իրավասության:

Բյուջեների ինքնուրույնության սկզբունքը նշանակում է.

- պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների օրենսդրական և ներկայացուցչական իրավունքը բյուջետային համակարգի ամեն մի մակարդակում ինքնուրույն է իրականացնում բյուջետային գործընթացը, այսինքն բյուջեի նախագծի մշակման, քննարկման և ընդունման կարգը,

- բյուջետային համակարգի ամեն մի մակարդակի բյուջեի եկամուտների սեփական աղբյուրների առկայությունը,

- համապատասխան մակարդակի բյուջեի եկամուտների ձեավորումը ըստ իրավասու մարմնի՝ այսինքն եկամուտների կարգավորում օրենսդրական կարգով,

- պետական և տեղական իշխանությունների իրավունքը՝ ինքնուրույն որոշել բյուջեի ծախսերի ուղղությունները և համապատասխան բյուջեի դեֆիցիտի (ճեղքվածքի) ֆինանսավորման, այսինքն դեֆիցիտի ծածկման ներքին և արտաքին աղբյուրները,

- բյուջեի եկամուտների գանձման անթույլատրելիությունը, որը ստացվել է բյուջեի մասին օրենքի կատարման ընթացքում, այսինքն, երբ բյուջեի եկամուտները գերազանցել են ծախսերին, ինչպես նաև, երբ տեղի է ունեցել բյուջեի ծախսերի տնտեսում,

- բյուջետային համակարգի տարբեր մակարդակի բյուջեների հաշվին միջոցների փոխհատուցման անթույլատրելիությունը՝ եկամուտների կորուստների և լրացուցիչ ծախսերի հաշվով, որոնք ծագել են բյուջեի մասին օրենքի կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, որոնք կապված են օրենսդրական փոփոխությունների հետ:

Բյուջեների և արտաբյուջեային հիմնադրամի եկամուտների և ծախսերի լրիվ արտացոլման սկզբունքը նշանակում է, որ բյուջետային և արտաբյուջետային եկամուտները և ծախսերը ենթակա են լրիվ չափով բյուջեում արտացոլման: Պետական և տարածքային բոլոր ծախսերը ենթակա են ֆինանսավորման՝ բյուջեների և հիմնադրամների հաշվին, որոնք կուտակվել են բյուջետային համակարգում:

Հետաձգված և ժամկետանց հարկերը և այլ պարտադիր վճարումները պետք է լրիվ արտացոլվեն բյուջեի եկամուտների և ծախսերի կազմում:

Բյուջեների հավասարակշռության սկզբունքը նշանակում է, որ բյուջետային ծախսերի նախատեսված չափը պետք է գումարային առումով համապատասխանի բյուջեի եկամուտներին, այսինքն լինի հավասարակշռված բյուջե: Դրան կարելի է հասնել բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների որոնման հաշվին, երբ նախատեսվում է բյուջեի դեֆիցիտի ծածկման ներքին և արտաքին աղբյուրները:

Բյուջեային միջոցների խնայողաբար և արդյունավետ օգտագործման սկզբունքը նշանակում է, որ բյուջեների կազմման և կատարման ժամանակ իրավասու ֆինանսական մարմինները և բյուջեի միջոցները ստացողները պետք է հասնեն նախատեսված արդյունքների, որի համար անհրաժեշտ է նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործել այդ միջոցները:

Բյուջեների ծախսերի համընդհանուր ծածկման սկզբունքը նշանակում է, որ պետական և տեղական բյուջեների ծախսերը պետք է ծածկվեն համընդհանուր սկզբունքով, այսինքն համախմբված բյուջեի եկամուտների և դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների հաշվին:

Հրապարակայնության սկզբունքը նշանակում է.

- բյուջեների նախագծերի և բյուջեի մասին հաստատված օրենքի, ինչպես նաև բյուջեների կատարման մասին հաշվետվությունների հրապարակում մամուլում, որպեսզի հասարակությունը տեղեկություն ունենա բյուջեների և նրանց կատարման մասին,

- բյուջեների նախագծերի բաց քննարկում և ընդունում, այդ թվում այն հարցերի հրապարակայնության ապահովումը, որոնք առաջացնում են տարածայնություններ Ազգային ժողովում կամ տեղական մարմնի Ավագանիների միջոցով:

Բյուջեների հավաստիության սկզբունքը նշանակում է սոցիալ-տնտեսական զարգացման ցուցանիշների կանխատեսումների հուսալիություն և բյուջեների տվյալների հավաստիություն, այսինքն, որ բյուջեները

բում, իրոք, հաշվարկված են բոլոր տեսակի եկամուտները՝ ըստ աղբյուրների և անհրաժեշտ ծախսերն՝ ըստ ուղղությունների:

Բյուջեպային միջոցների հասցեականության և նպատակային բնույթի սկզբունքը նշանակում է, որ բյուջետային միջոցները հատկացվում են կոնկրետ կարգով՝ ըստ հասցեականության և նպատակային կարգով, որն էլ պետք է օգտագործվի ըստ նպատակային նշանակման:

Այսպես, պետբյուջեի միջոցների հաշվին գյուղական և քաղաքային համայնքների բյուջեներին հատկացվում են սուբսիդիաներ և սուբվենցիաներ, այսինքն պետական նպաստներ:

• **Սուբսիդիան** (sybsidie – նպաստ) պետական նպաստ է, որը պետական բյուջեի հաշվին տրվում է տեղական բյուջեին (կամ մի պետություն մեկ այլ պետության) առավելապես դրամական ձևով և անվերադարձ կարգով: Սուբսիդան կարող է տրվել ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ որոշակի ծրագիր իրականացնելու նպատակով:

• **Սուբվենցիան** (sybventie- նպաստ) նույնպես պետական նպաստ է, որը տրվում է ուղղակի կամ անուղղակի կարգով՝ պետբյուջեի հաշվին համայնքային բյուջեին կամ երկրի տնտեսության որևէ ճյուղի կամ որևէ ձեռնարկության, որը, ի տարբերություն դատացիայի, տրվում է որոշակի նպատակով և այլ նպատակի ուղղվել չի կարող:

• **Դոտացիան** (dotation- միջոցների անվերադարձ հատկացում) պետական բյուջեից հատկացում է տեղական բյուջեին՝ համահարթեցման նպատակով, այսինքն տեղական բյուջեի եկամուտների և ծախսերի հավասարակշռման համար: Այլ կերպ, դոտացիան տեղական բյուջեի դեֆիցիտի ծածկման աղբյուր է:

Այժմ անդրադառնանք բյուջետային համակարգի գործունեության իրավական հիմքերին: Բյուջետային համակարգի գործունեությունը իրականացվում է իրավական հիմքերի հիման վրա: Որպես իրավական հիմք համարվում է.

• բյուջետային օրենսդրությունը, այսինքն չՉ օրենքը բյուջետային համակարգի մասին և չՉ օրենքը պետբյուջեի մասին:

Ընդ որում, պետբյուջեի մասին չՉ օրենքը կապագաբանեք ձեռնարկի 4-րդ գլխում:

Բյուջետային համակարգի մասին օրենքն ընդունվել է 1997 թվականին և այն ընդգրկում է.

- չՉ բյուջետային համակարգի մասին օրենքը,
- չՉ նախագահի հրամանագրերը՝ բյուջետային համակարգի և պետ-

բյուջեի վեյաբերյալ.

• չՉ կառավարության նորմատիվային իրավական ակտերը:

«Բյուջետային համակարգի մասին» չՉ օրենքը, բյուջետային համակարգի վերաբերյալ օրենքների ժողովածու է, որը համարվում է իրավական հիմք բյուջետային համակարգի համար: Այն իրենից ներկայացնում է չՉ բյուջետային համակարգի գործունեության և զարգացման մասին օրենքների ժողովածու, որն ապահովում է բյուջետային հարաբերությունների ֆինանսական կարգավորումը, սահմանում է բյուջետային օրենսդրության ընդհանուր սկզբունքները, տարբեր մակարդակների բյուջեների կենսագործունեության իրավական հիմքերը, բյուջետային հարաբերությունների սուբյեկտների իրավական դրույթները, միջբյուջետային հարաբերությունների կարգավորման կարգը, որոշում է բյուջետային գործընթացի հիմունքները և բյուջետային օրենսդրության խախտման համար պատասխանատվության հիմքերն ու տեսակները:

«Բյուջետային համակարգի մասին» չՉ օրենքով սահմանված են բյուջետային հարաբերությունները: Այդ հարաբերություններն են.

• հարաբերություններ, որոնք ծագում են բյուջեների եկամուտների ձևավորման և ծախսերի իրականացման գործընթացում,

• հարաբերություններ, որոնք ծագում են արտաբյուջետային հիմնադրամի եկամուտների ձևավորման և ծախսերի իրականացման գործընթացում,

• հարաբերություններ, որոնք ծագում են պետական և համայնքային (տեղական) բյուջեների նախագծերի կազմման, քննարկման, հաստատման և կատարման գործընթացներում:

ՉՉ նախագահի հրամանագրերով կարգավորվում են բյուջետային հարաբերությունները, որոնք ծագում են պետական և տեղական բյուջեների և արտաբյուջետային հիմնադրամի եկամուտների ձևավորման, պետական և տեղական պարտքերի կարգավորման և հարաբերություններ, սրունք կապված են բյուջեների նախագծերի կազմման, քննարկման, հաստատման և կատարման հետ:

ՉՉ կառավարության նորմատիվային իրավական ակտերը նույնպես կարգավորում են բյուջետային հարաբերություններ՝ իրենց իրավասության սահմաններում: Ընդ որում, եթե միջազգային պայմանագրերով սահմանված են լինում այլ հարաբերություններ, ապա ընդունվում են միջազգային պայմանագրերի պայմանները:

Պետբյուջեի մասին օրենքի նախագիծը, որը կազմում և ներկայացնում

է ՀՀ կառավարությունը (ի դեմս ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության) Ազգային ժողովին, քննարկվում և ընդունվում է օրենք «ՀՀ պետությունների մասին», որն էլ հաստատվում է ՀՀ նախագահի հրամանագրով:

Բյուջետային համակարգի վիճակը հանդիսանում է կարևոր չափանիշ՝ երկրի սոցիալ-տնտեսական պայմանների գնահատման համար:

Բյուջետային համակարգի ստեղծման, ամրապնդման և զարգացման համար հիմք է հանդիսանում բյուջետային քաղաքականությունը: Բյուջետային քաղաքականությունը՝ պետության իրական պարտավորությունն է: Բյուջետային քաղաքականության հիմնական խնդիրները համարվում են.

- երկրի տնտեսության ֆինանսական առողջացումը,
- բոլոր տեսակի մակարդակների, այսինքն՝ պետական և համայնքների իրական բյուջեների մշակում,
- բյուջետային քաղաքականության նպատակների մանրակրկիտ ուսումնասիրում,
- ձեռներեցության զարգացման հիման վրա պետական և տեղական բյուջեների եկամուտների ավելացում:

Դրա համար անհրաժեշտ է պարբերաբար կատարելագործել հարկային համակարգը, ուժեղացնել իրավական դաշտը, պայքար կազմակերպել ստվերային տնտեսության դեմ և ուժեղացնել պետական ֆինանսական վերահսկողությունը:

Միաժամանակ անհրաժեշտ է զարգացնել միջբյուջետային հարաբերությունները:

ՀՀ կառավարությունը բնորոշել և առաջին անգամ հրապարակել է հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների (եկամուտներ և ծախսեր, դեֆիցիտ և արտաքին պարտք) գծով երկարաժամկետ նպատակները: Կառավարությունը նկատի ունի համակշռել սոցիալական ծախսեր կատարելու անհրաժեշտությունը՝ կայուն հարկաբյուջետային քաղաքականություն ապահովելու անհրաժեշտության հետ՝ ժամանակի ընթացքում պարտքերի կուտակում թույլ չտալու նպատակով¹: Ընդունելով կայուն հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը մշակել է երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ՝ միջին ժամկետ ծախսային ծրագրի (ՄԺԾ) պետական բյուջեի նախագծի մշակման ընթացքում դեկավարվելու համար: Հարկաբյուջետային սկզբունքները 2002-2015թթ. հաշվով հանդիսանում է.

• ՀՆԱ-ի անվանական արժեքը 2002-2015թթ. կաճի շուրջ 2.9 անգամ: Այդ պայմաններում կանխատեսվում է համախմբված բյուջեի հարկային եկամուտների 3.7 անգամ աճ: Ըստ աղբյուրների էական փոփոխությունների կենթարկվի եկամուտների կառուցվածքը: Մասնավորապես, արտաքին աղբյուրներից եկամուտների (պաշտոնական տրանսֆերտների) նվազման միտումը կզուգակցվի հարկային և ոչ հարկային եկամուտների աճով: Ներքին աղբյուրներից եկամուտների ավելացումը տեղի է ունենալու տնտեսական աճի շնորհիվ, ինչպես նաև հարկային ու մաքսային վարչարարության միջոցով,

• Համախմբված բյուջեի եկամուտների աճին զուգահեռ, կավելանան նաև ծախսերը, որոնց չափը անվանական արժեքով 2015թ կավելանա 2.9 անգամ: Հաշվի առնելով պետական արտաքին պարտքի կառավարման և պետբյուջեի դեֆիցիտի կարգավորման անհրաժեշտությունը, ՀՆԱ-ի նկատմամբ բյուջետային ծախսերի հարաբերության ցուցանիշը էականորեն չի փոխվի և կմնա ՀՆԱ-ի 25.0-25.5 տոկոսի սահմաններում,

• Տեղի կունենա պետական պարտքի բեռի աստիճանական թեթևացում: Դրան զուգընթաց կնվազի պարտքի սպասարկման հետ կապված տոկոսների վճարման տեսակարար կշիռը՝ բյուջեի ընդհանուր ծախսելու (2002թ 4.6 %-ից մինչև 2.7 %՝ 2015թ.),

• Բյուջետային միջոցների հաշվին իրականացվող կապիտալ ծախսերի միջին մակարդակը 2004-2015թթ. կպահպանվի ՀՆԱ-ի նկատմամբ շուրջ 4%-ի սահմաններում: Կապիտալ ծախսերն իրենց ուղղվածությամբ և կառուցվածքով չեն փոխարինի համապատասխան մասնավոր ներդրումներին, այլ կլինեն փոխլրացնող: Դրանք հիմնականում կուղղվեն սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների վերականգնմանը, վերակառուցվանը և զարգացմանը,

• Համախմբված բյուջեի ձևավորումը և կատարումը 2004-2015թթ. ևս տեղի կունենա բյուջետային եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ: Ընդ որում, բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումը իրականացվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից: Բյուջետային դեֆիցիտը աստիճանաբար կնվազի՝ ՀՆԱ-ի նկատմամբ 2.4%-ից մինչև 1.6 %-ը՝ 2015թվականին:

ՀՀ կառավարությունը այդ սկզբունքներով ուղղորդվել է 2005թ. պետբյուջեի մասին օրենքի նախագծի ռազմավարությունը մշակելու ժամանակ, որն էլ քննարկվել և ընդունվել է պետբյուջեի մասին օրենքով:

1. ՀՀ պետբյուջե. համառոտ ուղեցույց, Երևան, 2005

Գ Լ ՈՒ Խ 3. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐԸ

3.1. Ադամ Սմիթի արժեքի աշխատանքային տեսությունը

Ֆինանսների ընդհանուր տեսությունները մշակվել են 18-20-րդ դարերում: Հետևապես, ֆինանսների մասին գիտությունը, ինչպես և մյուս տնտեսագիտական գիտությունները ենթարկվել են եվոլյուցիոն (փոփոխական) զարգացման: Ֆինանսների հիմնադիրներ են համարվում ժամանակակից տնտեսագիտության հիմնադիրները: Այսպես, ժամանակակից տնտեսագիտության հիմնադիր Ադամ Սմիթը համարվում է նաև ֆինանսների մասին գիտության առաջին հիմնադիրը: Նա առաջինն է հասկացություն մշակել ֆինանսների , ֆինանսական համակարգի և նրա ձևավորման կարգի մասին: 1776թ. նա մշակել է առաջին հարկային տեսությունը և հարկային սկզբունքները: Նա ցույց է տվել, որ պետությունը կարող է գոյատևել միայն պետական ֆինանսական համակարգի առկայության դեպքում: Նա է առաջինը մշակել ֆինանսական հասկացությունների բովանդակությունը, այսինքն՝ հարկերի, մաքսավճարների, մաքսատուրքերի, պետական տուրքերի էությունը:

Հարկային տեսության մշակման ժամանակ Ա. Սմիթը տեսության հիմքում դրել է իր կողմից մշակված արժեքի աշխատանքային տեսությունը և առևտրի բնագավառում՝ բացարձակ և հարաբերական առավելությունների տեսությունները: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ միջազգային առևտրի ժամանակ, այսինքն՝ ապրանքների ներմուծման և արտահանման դեպքում պետք է հաշվի առնել առևտրի բացարձակ և հարաբերական առավելությունների տեսությունների պահանջները: Ապրանքների բացարձակ առավելությունն այն է, որ երկիրը, ունենալով տվյալ ապրանքն արտադրելու համար բնական մեծ պաշարներ, արտադրողական զարգացած ուժ (արտադրության միջոցներ և աշխատուժ) արտադրում է էժան ապրանքներ: Հետևապես, տվյալ երկիրը պետք է արտահանի նշված ապրանքից և ներմուծի այն ապրանքները, որի համար չունի անհրաժեշտ բնական պաշարներ և զարգացած արտադրողական ուժ: Ա. Սմիթը ցույց է տվել, որ պետությունը չի կարող գոյատևել առանց հարկերի: Հետևապես, հարկեր պետք է գանձել ոչ միայն սեփականատերերից, այլև իրավաբանական անձանցից ու բնակչությունից և ապրանքների ներմուծման ու արտահանման ժամանակ: Ընդ որում հարկերը պետք է գանձել եկամուտներից (աշխատավարձ, ձեռնարկատիրա-

կան եկամուտ, շահույթ) և կապիտալից, այսինքն՝ ունեցվածքից (գույքահարկ, հողի հարկ):

Ա.Սմիթը ցույց է տվել ոչ միայն ֆինանսական համակարգի, այլև երկրի պետությունից անհրաժեշտությունը, այսինքն, որ պետության հարկային և ոչ հարկային եկամուտները լինեն ավելի շատ, քան ծախսերը:

3.2. Դավիթ Ռեկարդոյի հարկային տեսությունը

Ֆինանսների ընդհանուր տեսության մասին մշակումներ է կատարել նաև անգլիացի տնտեսագետ-գիտնական Դավիթ Ռեկարդոն (1819թ.): Նա զարգացրել է Ադամ Սմիթի հարկային տեսությունը և ցույց տվել ֆինանսների առանձին տարրերի դերը: Այսպես, 1819թ. նա մշակել է ռենտայի տեսությունը (ռենտա նշանակում է՝ 1. տնտեսագիտական հասկացությամբ՝ շահույթ գյուղատնտեսության մեջ, 2. ֆինանսական հասկացությամբ՝ պարբերաբար հավասար վճարումներ): Իր տեսությամբ, նա Ա. Սմիթի համեմատությամբ ($W = V$) որոշ չափով կատարելագործել է ապրանքի արժեքի բանաձևը՝

$$W = V + R ;$$

այսինքն ապրանքի արժեքը որոշվում է ոչ միայն աշխատանքային ծախսերի, այլև շահույթի (R) գումարով: Ռեկարդոն առանձնացրել է ֆինանսների տեսակ, որոնք հանդես են գալիս դիֆերենցյալ (տարբերակված) ռենտա-1 և դիֆերենցյալ ռենտա -2: Նա ցույց է տվել դրանց առաջացման աղբյուրները և կարգը: Այսպես, դիֆերենցյալ ռենտա 1-ը ստացվում է բնական բարձր բերրի հողատեսքերից (օրինակ, Արարատյան դաշտավայրի հողատեսքերից): Դիֆերենցյալ ռենտա - 2-ը ստացվում է լրացուցիչ ներդրումների հաշվին (պարարտացում, մեխորացիա՝ հողատեսքերի բարելավում), որի շնորհիվ մեկ հա հողատեսքից ստացվում է լրացուցիչ բերք, հետևաբար նաև լրացուցիչ շահույթ՝ համեմատած լեռնային տալածքների հողերի, որտեղ լրացուցիչ ներդրումներ չեն կատարվում:

3.3.Ջեյմս Միլլի արդյունավետ հարկային տեսությունը

Ֆինանսների բնագավառում տեսություններ է մշակել նաև անգլիացի տնտեսագետ-գիտնական Ջեյմս Միլլը (1848-1850թթ.): Նա է առաջինը մշակել նվազագույն զամբյուղ և նվազագույն հարկային շեմ հասկացությունները: Այսպես, նվազագույն զամբյուղ ասելով հասկացվում է բնակչության գոյատևման համար անհրաժեշտ միջոցները մեկ շնչի հաշվով՝ մեկ ամսում:

Ըստ ՄԱԿ-ի սոցիալական ծառայության հանձնաժողովի հաշվարկի, այն հաշվարկվում է անհրաժեշտ սննդամթերքի, առաջին անհրաժեշտության 40 տեսակ ապրանքների մեկ շնչի հաշվով նորմաներից (չափից) բնեղեն ձևով և տվյալ երկրում գործող ապրանքների շուկայական գներից: 2003թ. նոյեմբերին մեր երկրում Ազգային ժողովի կողմից ընդունվել է օրենք նվազագույն զամբյուղի մասին, սակայն կոնկրետ չափը հաստատվել է 2004թ. նոյեմբերին՝ ամսական 14 հազար դրամ: Մինչդեռ, ըստ հաշվարկների, նվազագույն զամբյուղը Հայաստանի Հանրապետությունում կազմում է ոչ պակաս 45հազ. դրամ մեկ շնչին մեկ ամսում: Սակայն ՀՀ կառավարությունը 2003թ. նոյեմբերին մտադիր էր ընդունել 19000 դրամ, ցավոք, այն մեկ տարի հետո ընդունվեց 14 հազար դրամ, որի չափը բնդամենը 1000 դրամով է ավելի նվազագույն ամսական աշխատավարձից (13 հազար դրամ): ԱՄՆ-ում նվազագույն զամբյուղը 4 շնչից բաղկացած ընտանիքի էամար մինչև 2000թ սահմանված է եղել տարեկան 12750 \$, իսկ ներկայումս՝ 15000 \$: Տարբեր երկրներում նվազագույն զամբյուղի չափը տարբեր է:

Գոյություն ունի նաև նվազագույն աշխատավարձ հասկացությունը: Այն մեր երկրում 1996թ. սահմանվել է ամսական 1000 դրամ, որը մինչև այժմ կիրառվում է հարկային օրենքները խախտելու դեպքում, տույժ ու տուգանքների ժամանակ (5.95դրամ x173.1ժամ=1000 դրամ):1999թ. հունվարից նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվել է 5000 դրամ, որը գործնականում չի կիրառվել, թեև ըստ ժամային դրույքի պետք է լիներ 10000դրամ (59.5. x 173.1 ժամ = 10000 դրամ): Նվազագույն զամբյուղի էությունը կայանում է նրանում, որ աշխատավարձը, կենսաթոշակները և ընտանեկան նպաստները չպետք է ցածր լինեն նվազագույն զամբյուղի չափից (2005թ. հունվարից ՀՀ-ում ընտանեկան նպաստները սահմանվել է 12500 դրամ, նախորդ տարվա 9500 դրամի դիմաց): Նվազագույն զամբյուղի մեջ գերակշռողը համարվում է նվազագույն աշխատավարձը: Այն 2004թ. հունվարից ՀՀ-ում սահմանվել է ամսական 13000 դրամ: Դրանից օգտվել են ոչ կոմերցիոն, այսինքն բյուջետային կազմակերպությունների շուրջ 40հազ. աշխատողներ: : Ըստ էության, դա վերաբերվում է նաև ոչ պետական կազմակերպություններին: Այսպիսով, անգլիացի Ջեյմս Միլը առաջինն է սահմանել նվազագույն զամբյուղ, նվազագույն աշխատավարձ և եկամտի չհարկվող շեմ հասկացությունները: Այսպես, պետությունները սահմանում են հարկային օրենքներ, այդ թվում եկամտահարկի մասին, որով նախատեսվում է եկամտի (աշխատավարձի) չհարկվող մասը: Ըստ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի, աշխա-

տավարձի չհարկվող շեմը սահմանված է 20հազ.դրամ: Դա այն չափն է, որով պետք է գոյատևի տվյալ աշխատողը: Ջ. Միլը կողմնակից էր հիմնավորված հարկային օրենքների և եկամուտների հավասարաչափ քաշխման՝ հաշվի առնելով երկրի բնակչության սոցիալական բոլոր խմբերի շահերը: Նա գտնում էր, որ պետական բյուջեի եկամուտները պետք է բաշխել արդար ձևով, հաշվի առնելով սոցիալական բոլոր խմբերի ապրելակերպի վիճակը: Նա մշակել է հարկայն տեսություններ և կատարելագործել է Ադամ Սմիթի հարկային սկզբունքները: Ֆրանսիայում ֆինանսների ընդհանուր տեսություն է մշակել նաև Պ. Բուազիլերը:

3.4.Ֆինանսների մասին մարքսիստական տեսությունը և նրա ազդեցությունը շուկայական տնտեսության ֆինանսների ընդհանուր տեսությունների վրա

Աշխարհի երկրների գիտնականները ֆինանսների ընդհանուր տեսություններ, այդ թվում՝ հարկային, մաքսային տեսություններ, մշակել են 18-19-րդ դարերում տնտեսագիտական դպրոցի հիմնադիրները (Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ռուսաստան, ԱՄՆ): Ընդ որում, 19-րդ դարում սկսեց զարգանալ նյութական արտադրությունը, միջազգային արտաքին առևտուրը, որն էլ հարկադրեց մշակել հարկային, մաքսավճարների և մաքսատուրքերի մասին օրենքներ: Ֆինանսների ընդհանուր տեսության վրա 19-րդ դարի կեսերին իր ազդեցությունն ունեցան մարքսիստական տեսությունները:

Գերմանացի տնտեսագետ- գիտնական, փիլիսոփա Կարլ Մարքսը, ուսումնասիրելով և վերլուծելով ապրանքային արտադրությունը՝ մշակեց տեսություն՝ ապրանքի հատկանիշների (սպառողական արժեք և արժեք) և ապրանքի արժեքի որոշման մասին ($W = C + V + M$): Նա ցույց տվեց կապիտալի շրջապտույտը, այսինքն, որ փողը, դրվելով գործի մեջ, փոխարկվում է կապիտալի, որն էլ եկամուտ է բերում: Նա իր տեսությունը մշակել է 1867թ. իրատարակած «Կապիտալ» աշխատության մեջ (1-ին հատոր):

Ինչ վերաբերում է «Կապիտալ» աշխատության 2-րդ և 3-րդ հատորներին, որտեղ Մարքսը մշակել էր ուսմունք գիտական սոցիալիզմի մասին, ապա այն չընդունվեց կապիտալի աշխարհում:

Նա սահմանեց ապրանքի արժեքի տնտեսագիտորեն հիմնավորված բանաձև, կատարելագործելով ապրանքի արժեքի որոշման վերաբերյալ Ադամ Սմիթի ($W = V$), Դավիթ Ռիկարդոյի ($W = V + R$), ֆրանսիացի Սեյի ($W = V + M$) կողմից մշակված բանաձևերը: Նա սահմանեց ապրանքի

արժեքի բուսնաձև ($W = C + V + M$), որը կիրառվեց թե կապիտալիզմի և թե սոցիալիզմի տնտեսագիտությամբ, այսինքն՝ պլանային տնտեսության և շուկայական տնտեսության պայմաններում: Դրանով Կ. Մարքսը դարձավ ժամանակակից տնտեսագիտության երկրորդ հանճարը՝ նրա հիմնադիր Ադամ Սմիթից հետո: Այլապես շուկայական տնտեսագիտությամբ չէր նշվի Մարքսի անունը:

Մարքսը վերլուծեց ապրանքային արտադրությունը և ցույց տվեց, որ գործում է արժեքի օրենքը: Այն պայմանավորում է ապրանքների արտադրությունն ու փոխանակումը նրանց արժեքին համապատասխան: Արժեքի օրենքի՝ որպես տնտեսական օրենք, գործողությունը դրսևորվում է աշխատանքային ծախսումների հաշվառման արժեքային ձևի մեջ: Աշխատանքային ծախսումներին համապատասխան կողմնորոշումը օգտագործվում է աշխատանքի տնտեսումը խթանելու համար: Չեռնարկությունները դրանով հարկադրված են խնայողաբար և արդյունավետ օգտագործել պաշարները, իջեցնել ապրանքի գինը, արագացնել գիտատեխնիկական նվաճումների (Նուու-հաու) ներդրումը արտադրության մեջ: Գներն իջեցնելով որոշվում են ձեռնարկությունների միջև ապրանքի փոխանակման և վերջնական ու միջանկյալ սպառողների կողմից ապրանքի իրացման համամասնությունները:

Գինը փոխեստուցում է ապրանքի մեջ մարմնավորված աշխատանքի ամբողջ անցյալ ու կենդանի ծախսումները: Դա ապահովում է ընդլայնված վերարտադրության և սոցիալական ուղարտի կարիքները:

20-րդ դարի նախաշեմին՝ կապիտալիզմի զարգացման ժամանակ ծագեցին նոր երևույթներ, որոնք կանխորոշեցին մոնոպոլիստական կապիտալիզմի դարաշրջանը: Այդ նոր երևույթների վրա ուշադրություն է դարձրել Կ. Մարքսը: Մարքսիստական տեսությունը ցույց է տվել, որ ամեն մի դասակարգային հակասություններով լի հասարակարգ, իր պատմության մեջ, անցնում է զարգացման երկու փուլ.

- առաջին փուլ - երբ նրա տնտեսական հարաբերությունները նպաստում են արտադրողական ուժերի զարգացմանը,

- երկրորդ փուլ - երբ արտադրողական ուժերի զարգացման փուլից այդ հարաբերությունները արգելակվում են:

Նա ցույց է տվել, որ արտադրության կենտրոնացման և համակենտրոնացման ժամանակ տեղի է ունենում կապիտալի կուտակում, որին անվանեց կապիտալի նախասկզբնական կուտակում: Առաջացան ձեռնարկությունների նոր միավորումներ և սեփականատերեր, այդ թվում ֆինան-

սական օլիգարխների (ֆինանսական խմբեր) մեծ բանակ: Միավորումների նպատակն էր ներդրած կապիտալի հաշվով ապահովել մենաշնորհային գերշահույթ: Դա ձեռք էր բերվում մենաշնորհային բարձր գների, ուժեղ մրցակցային պայմաններում: Խոշոր ձեռնարկությունների կապիտալը ձևավորվում էր հետևյալ երեք աղբյուրների հաշվին.

- ֆինանսական խմբերի կողմից ներդրված միջոցների հաշվին,

- փոքր սեփականատերերի բաժնետոմսերի վաճառքից ստացած եկամուտների հաշվին,

- փոխառու (ներգրավված) միջոցների հաշվին:

Այսպիսով, մենաշնորհային միավորումների շահույթը ստացվում է նրա կապիտալի, իսկ գերակշռող մասը իշխող դասակարգի՝ ֆինանսական խմբերի կապիտալի հաշվին: Փոքր սեփականատերերը ստանում են միայն իրենց բաժնետոմսերի հաշվով դիվիդենտ (Dividende - շահաբաժին): Մենաշնորհային միավորումների (մոնոպոլիաներ) հաշվով միասնության և մրցակցության հակասությունը առաջին անգամ բացահայտել է Կ. Մարքսը: Նա ցույց է տվել, որ մենաշնորհային կապիտալիզմը չի վերացնում, այլ խորացնում է մրցակցային պայքարը: Փոքր և միջին ձեռնարկություններն ի վիճակի չեն գերիշխել ուրիշներին, հետևապես բացակայում է ազատ մրցակցությունը: Մենաշնորհային միավորումները հնարավորություն ունեն մրցակիցներին զրկել հումքի ու նյութերի, ապրանքի իրացման շուկաներից և խոշոր չափերի վարկից, իսկ ապրանքի վաճառքի գների հարցում մրցակիցներին թելադրում են իրենց սուբյեկտիվ կամքը: Արտադրության մրցակցությունը և բանկերի միավորումը արդյունաբերության հետ, ծագեց ֆինանսական կապիտալը և առաջացավ ֆինանսական օլիգարխիան (oligarchie- ֆինանսական խմբեր, այսինքն մեծահարուստների խումբ, որ 1994 թվականից ձևավորվել է նաև Հայաստանում):

Ֆինանսական կապիտալը իրենից ներկայացնում է մենաշնորհային միավորումների արդյունաբերական կապիտալը՝ միաձուլված մենաշնորհային միավորումների բանկային կապիտալի հետ: Շուկայական տնտեսության պայմաններում գոյություն ունեն կապիտալի բոլոր ձևերը, որոնք ծագել են ազատ մրցակցության շնորհիվ: Արդյունաբերական կապիտալը իր կենսագործունեությունն ապահովում է արտադրության և առևտրի բնագավառում, այսինքն մեծածախ և մանրածախ առևտրի, իսկ փոխառությունը՝ վարկի ոլորտում: Ֆինանսական կապիտալը կենտրոնացված է ֆինանսական խմբերի, այսինքն մեծահարուստների ձեռքում, որոնք իշխում են երկրի տնտեսության բոլոր ճյուղերի վրա, ինչպես նաև հիմա Հայաս-

տանում: Ֆինանսական խմբերը յուրացնում են երկրի ազգային հարստության գերակշռող մասը և գրավում են երկրի քաղաքական իշխանությունը: Ֆինանսական կապիտալի իշխանության կազմակերպական ձևը ֆինանսա-արդյունաբերական խմբերն են, որոնք երբեմն անանուն են: Դրանք միլիոնատերեր և միլիարդատերեր են, որոնք իրենց ձեռքին են կենտրոնացնում երկրի տնտեսության գլխավոր դիրքերը և կանխորոշում են պետության քաղաքական, տնտեսական և ֆինանսական, այդ թվում՝ հարկային ու մաքսային քաղաքականությունը: 20-րդ դարում ֆինանսավարկային կազմակերպություններում տեղի են ունեցել էական փոփոխություններ: Այսպես, ֆինանսական-արդյունաբերական խմբերն իրենց գործունեությամբ սկսեցին հենվել կոմերցիոն (առևտրային) բանկերի վրա և նշանակալիորեն կատարելագործեցին ժամանակավոր ազատ դրամական միջոցների կենտրոնացման մեխանիզմը՝ բնակչության սոցիալական բոլոր խմբերի խնայողությունների զգալի մասը կենտրոնացնելով իրենց մոտ՝ որպես ավանդներ: Դրա շնորհիվ առաջացան մասնավոր ներդրումային բանկերի հզոր համակարգ: Մենաշնորհային միավորումները ստանալով գերշահույթ, 20-րդ դարից սկսեցին կապիտալի արտահանումը, որպես ուղղակի, փաթեթային և ոիսկային ներդրումներ, որոնց էությանը կանդրադատանք հաջորդ գլոխներում: Դրա շնորհիվ, 20-րդ դարում տեղի ունեցավ աշխարհի տնտեսական բաժանում, այսինքն առանձին ապրանքների համաշխարհային արտադրությունը կենտրոնացվեց խոշոր մենաշնորհային միավորումների ձեռքում: Հետևապես, կատարվեց ապրանքի իրացման շուկաների և ֆինանսական շուկաների բաժանում:

Մարքսը վերլուծելով ապրանքային արտադրությունը, մշակեց նաև ուսմունք ֆինանսների մասին, որը բնորոշում էր սոցիալիզմի հասարակարգը: Նա ցույց տվեց, որ ֆինանսների միջոցով կատարվում է երկրի ազգային եկամտի վերաբաշխում: Ընդ որում, ազգային եկամտի զգալի մասը կենտրոնացվում է երկրի պետական բյուջեում, որի միջոցով պետությունն իր ձեռքում է կենտրոնացնում տնտեսավարող սուբյեկտներում ստեղծված համախառն շահույթի մի մասը:

Ֆինանսները վճռական դեր են խաղում նյութական արտադրության ոլորտում, արժեքի բաշխման գործում: Ֆինանսների միջոցով գոտ եկամտի (շահույթի) բաշխման ու վերաբաշխման կոնկրետ ձևերը կախված են երկրի տնտեսության զարգացման մակարդակից և հասարակարգի բնույթից:

Նա ցույց է տվել, որ ֆինանսները համարվում են ընդլայնված վերարտադրության (երբ արտադրության ծավալներն ավելացվում են, ի տար-

բերություն պարզ վերարտադրության, երբ վերարտադրվում են նույն ծավալներով) ֆինանսական աղբյուրը:

Այսպիսով, մարքսիստական տեսությունը ֆինանսների վերաբերյալ իր բացասական, ինչու չէ, նաև դրական ազդեցությունն ունեցավ 19-րդ դարի կեսերին գործող հարկային, այդ թվում ընդհանուր ֆինանսների տեսությունների վրա:

3.5.Ջոն Բեյնզի հարկային տեսությունը և շուկայական տնտեսության պետական կարգավորումը

20-րդ դարի կեսերին ֆինանսների ընդհանուր տեսություններ, այդ թվում հարկային, մաքսային, մշակել է անգլիացի տնտեսագետ գիտնական, ֆինանսիստ Ջոն Բեյնզը, որը 1936թ. գրել է «Ձբաղվածության, շահույթի և փողի ընդհանուր տեսությունը» գիրքը: Այդ գրքով նա ցույց է տվել, որ շուկայական տնտեսությունը պետք է կարգավորվի ինչ որ անտեսանելի ձեռքի միջոցով, և մինչև 1946թ. նրա տեսությունը գործնականում չէր կիրառվել, քանի որ համարում էին հեղափոխական միտք: Մինչդեռ, 1946թ. գիտնականների կողմից պարզվեց, որ Բեյնզը նկատի է ունեցել շուկայական տնտեսության պետական կարգավորումը: Ըստ Բեյնզի, շուկայական տնտեսությունը պետք է զարգանա ոչ թե տարերայնորեն, քառսային ձևով, այլ պետք է կարգավորվի պետության կողմից: Դա նշանակում է, որ պետությունը պետք է մշակի տնտեսական քաղաքականություն և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիման վրա ֆինանսական, այդ թվում հարկային, մաքսային քաղաքականություն: Երկրի իշխանությունը, մշակելով և գործի դնելով հարկային, մաքսային օրենքներ, պայմաններ է ստեղծում ձեռներեցության, հատկապես փոքր բիզնեսի աջակցման, ինչպես նաև ապրանքների գների կարգավորման համար: Պետությունը սահմանում է օրենքներ՝ ապրանքների արտահանման, ներմուծման և կապիտալ ներդրումների խրախուսման համար: Միաժամանակ, պետությունը սահմանում է նվազագույն գամբյուր, աշխատավարձի նվազագույն չափ, ընտանեկան նպաստներ, կենսաթոշակներ, որով կարգավորում է երկրի շուկայական տնտեսությունը: Իր տեսությունների հիման վրա Բեյնզը համարվում է ժամանակակից տնտեսագիտության երրորդ հանճարը: Ըստ նրա տեսության՝

$$\begin{aligned} & \text{հարկեր} + \text{խնայողություններ} = \text{ներդրումներ} + \\ & + \text{պետական կառավարման ծախսեր:} \\ & \text{Հետևապես, եզրակացնում է Բեյնզը, որպեսզի երկրում տեղական և օ-} \end{aligned}$$

տարերկրյա ներդրումներն ավելացվեն, պետք է կրճատել պետական կառավարման ծախսերը:

Ջ. Քեյնզի ֆինանսական, հարկային տեսությունները գործնականում կիրառվել են 1946-1970 թվականներին: Նա նկատի ուներ, որ հարկային և ոչ հարկային մուտքերի հաշվին ձևավորված պետական բյուջեն պետք է ապահովի երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը: Դրա համար անհրաժեշտ է, որ պետբյուջեի եկամուտները ավելի շատ լինեն, քան ծախսերը, կամ գոնե դրանք լինեն իրար հավասար: Սակայն, 1970 թ. հետո երկրների պետբյուջեի միջոցները չէին բավարարում տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար, քանի որ ուռճացվում էր ուղղման և ծախսերը: Դրա պատճառով էլ 1970 թվականից ֆինանսների ղնդհանուր տեսության մեջ առաջ եկավ մի նոր տեսություն, որի հիմնադիրները կոչվեցին նեոքեյնզականներ: Այդ ուղղության առաջին հիմնադիրներն էին գերմանական տնտեսագիտական դպրոցների հիմնադիրներ Գ. Շմոլլերը, Ա. Վեբերը և Ա. Վազները: Ֆինանսների բնագավառում, հատկապես, մեծ ներդրում է ունեցել Ա. Վազները, որն անդրադարձել է պետական ֆինանսների ձևավորմանը, հարկային և մաքսային տեսություններին, հարկային սկզբունքներին, կապիտալի կուտակմանը և կողմնակից է եղել եկամուտների արդարացի բաշխմանը: Բնակչության միջին խավի շահերը պաշտպանելու նպատակով 19-րդ դարում ձևավորվեց մանր բուրժուական տնտեսագիտություն (1819-1841թթ.)՝ ներկայացուցիչները՝ Միսնոնդին և Դրոտոնը: Նրանք համապատասխանաբար գրել են 1819թ. «Տնտեսագիտության սկզբունքները» և 1841թ. «Ի՞նչ է հարստությունը» գրքերը, որով կոչ էին անում իշխանավորներին, որ պետբյուջեի եկամուտները արդար վերաբաշխեն և պաշտպանեն ոչ միայն բուրժուազիայի (մեծահարուստներ), այլև միջին ու փոքր սոցիալական խմբերի շահերը: Գերմանական տնտեսագիտական դպրոցի հիմնադիրները կողմնակից էին նրանց սկզբունքներին:

3.6. Նեոքեյնզականների ֆինանսական տեսությունները հակաճգնաժամային իրավիճակների վերաբերյալ

Ֆինանսների ղնդհանուր տեսության և պետբյուջեի եկամուտների վրա բացասաբար է անդրադառնում երկրի ստվերային տնտեսությունը: Ստվերային են համարվում այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք թեև ունեն լիցենզիա, սակայն ձգտում են հարկային մարմիններից թաքց-

ՈՆԻ եկամուտների մի մասը՝ խուսափելով հարկերից: Ստվերային են համարվում նաև այն տնտեսավարող սուբյեկտները, որանք չունեն լիցենզիա, գործում են գաղտնի, այսինքն գրանցված չեն պետտեղիստրի կազմակերպությունում, հաշվառման մեջ չեն գտնվում հարկային տեսչությունում և խուսափում են հարկերից:

1929-1930թթ. աշխարհում տեղի ունեցավ համաշխարհային գործառնության պարբերաշրջաններ, այսինքն տնտեսական ճգնաժամեր, որանք բացասաբար էին անդրադառնում երկրների պետբյուջեի եկամուտների վրա, մասնավոր, որ առաջանում էր պետբյուջեի դեֆիցիտ:

Ելնելով այդ իրավիճակից, նեոքեյնզականները մշակեցին մի շարք ֆինանսական, այդ թվում հարկային տեսություններ: Դրանք են՝

- հակաճգնաժամային ֆինանսավորում,
- դեֆիցիտային ֆինանսավորում,
- թերբյուջետային ֆինանսավորում,
- դոտացիոն ֆինանսավորում:

Այդ տեսությունները 1979 թվականից մինչև այժմ օգտագործվում են ֆինանսների բնագավառում:

Այժմ համառոտակի բնութագրենք դրանց էությունը:

Հակաճգնաժամային ֆինանսավորում. - Դրա էությունը կայանում է նրանում, որ տնտեսական զարգացման բուռն աճի փուլում տնտեսավարող սուբյեկտները գտնվում են ֆինանսական լավ պայմաններում և պետական բյուջեի ու տնտեսավարող սուբյեկտների եկամուտներից առանձնացնում են որոշակի հիմնադրամ՝ գործարարության պարբերաշրջանի մյուս փուլերի դեպքում (կրճատում, տնտեսական անկում՝ տնտեսական ճգնաժամ, վերելքի փուլ) ֆինանսավորելու համար:

Մեր երկրում դեռևս այդ ձևը տարածում չի գտել:

Դեֆիցիտային ֆինանսավորում. - Դրա էությունը կայանում է նրանում, որ եթե առաջանում է պետական բյուջեի դեֆիցիտ, ապա պակասը (ճեղքվածքը) մարվում է երկրի ներքին և արտաքին ֆինանսական աղբյուրների հաշվին:

Թերբյուջետային ֆինանսավորում. - Դրա էությունը կայանում է նրանում, որ եթե երկրի բյուջեն փաստացի թերակատարվել է, ապա բյուջետային, այսինքն՝ ոչ կոմերցիոն կազմակերպություններին տարվա ընթացքում պետական բյուջեից ֆինանսավորվում է համապատասխան չափով: Այս տեսությունը կիրառվում է նաև մեյր երկրում:

Դոտացիոն ֆինանսավորում. - Դա նշանակում է ֆինանսավորում

պետական բյուջեի միջոցների հաշվին՝ բյուջեի դեֆիցիտը ծածկելու համար: Բյուջետային ֆինանսավորումը բնորոշ է բյուջետային համակարգին: Նախկին հասարակարգում դոտացիա էր տրվում ոչ միայն բյուջետային կազմակերպություններին, այլև նյութական արտադրության ձեռնարկություններին՝ նրանց ստացած վնասը ծածկելու համար: Հետևապես, ձեռնարկությունները շահագրգռված չէին շահույթով աշխատելու համար: Դոտացիան համակարգի շրջանակը առավել նեղ է շուկայական տնտեսության պայմաններում: Այսպես, «ՀՀ պետբյուջեի մասին» օրենքի համաձայն դոտացիա տրվում է միայն գյուղական փոքր համայնքներին (որոնք ունեն մինչև 100 ծովա) և Երևանի քաղաքային 12 համայնքներից միայն երկուսին՝ Նորք-Մարաշին և Դավթաշենին, քանի որ նրանց տարածքում քիչ հարկատուներ կան: Բացի դոտացիան միջոցներից, պետական բյուջեից համայնքներին տրվում են նաև պետական նպաստներ (սուբսիդիաներ և սուբվենցիաներ): Բացի այդ, համայնքներին տրվում է նաև պաշտոնական տրանսֆերտներ (լատ. transforte- ֆինանսական օգնություն): Դրանց շնորհիվ համայնքների բյուջեն մախատեսվում է հավասարակշռված ձևով:

3.7. Ֆինանսների ընդհանուր տեսությունները Ռուսաստանում և Հայաստանում

Ֆինանսների ընդհանուր տեսությունները են մշակվել նաև Ռուսաստանում: Այսպես, Ն. Տուրգենևը 1818թ. գրել է «Հարկային տեսության փորձը» գիրքը, որում ցույց է տվել հարկերի էությունը, նշանակությունը և արտերկրների հարկային աշխատանքի փորձը: Հրատարակվել է նաև Ի. Յանժուլայի, Ի. Օգերովայի, Ի Կուվչելայի, Վ. Լեբեդևի և այլոց գրքերը: Ֆինանսները սոցիալիզմի ժամանակ ուսուցանվել է «Ֆինանսներ և վարկ» (Ի. Բրոտին) , 1956թ. Վ. Դյաչենկոյի «ԽՍՀՄ ֆինանսները», «ԽՍՀՄ ֆինանսները և վարկը» դասընթացների ձևով: Նման դասագիրք է լույս տեսել 1974թ. Գ. Տորչինիկայի խմբագրությամբ, 1982թ. Ուկրաինայում հրատարակվել է « Ғұрұш тә крәдүш» ձեռնարկը, ապա՝ Վ. Գերաշենկոյի «Ֆինանսներ և վարկ» դասագիրքը: Սակայն շուկայական տնտեսության պայմաններում վարկը ուսումնասիրվում է «Փող, վարկեր, բանկեր» դասընթացով, իսկ ֆինանսները՝ «Ֆինանսների ընդհանուր տեսություն» կամ «Ֆինանսներ» և «Չեռնարկությունների ֆինանսներ» դասընթացներով: Ռուսաստանում «Ֆինանսներ»-ի վերաբերյալ դասընթացներն օգտագործվել են նաև Հայաստանում, քանի որ Արցախը 1813թ.

(ըստ Գյուլիստանի պայմանագրի) և Արևելյան Հայաստանը 1928-1929թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո միացվել են Ռուսաստանին, իսկ 1922-1929թթ. մախակին Խորհրդային Միությանը:

3.8. Հարկային քաղաքականությունը և հարկերի էությունը: Հարկային հասկացությունները և հարկերի բնութագիրը Հայաստանում

Ֆինանսական համակարգերը և հարկային, մաքսային օրենսդրությունները 18-20-րդ դարերում ենթարկվել են էվոյուցիոն (փոփոխական) զարգացման: Հարկային օրենսդրությունը իրենից ներկայացնում է հարկերի մասին օրենքների ժողովածու, մաքսայինը՝ մաքսավճարների և մաքսատուրքերի մասին օրենքների ամբողջությունը: Հարկային և մաքսային օրենքներն ընդունվում են երկրի խորհրդարանի (ՀՀ-ում՝ Ազգային ժողովի) կողմից: Ընդ որում , 1991-1995 թթ. Հաստատանի Հանրապետության խորհրդարանը կոչվել է Գերագույն խորհուրդ, ապա՝ Ազգային ժողով:

Հարկային և մաքսային օրենքները պետք է համապատասխանեն երկրի տնտեսության և նրա արտադրողական ուժերի զարգացման մակարդակին: Հետևապես, քանի որ տնտեսական զարգացման տեմպերը տարբեր ժամանակաշրջանում տարբեր են, ապա պարբերաբար կատարելագործվում, վերանայվում են այդ օրենքները: Վերջին անգամ, ընդհանուր փաթեթով հարկային և մաքսային օրենքներում փոփոխություն է կատարվել 2003թ. դեկտեմբերի 26-28-ին և 2004թ. դեկտեմբերի 24-ին:

Ըստ էության, հարկերը, որպես ֆինանսներ, ձևավորում են երկրի պետական բյուջեն՝ ներառյալ պետտուրքերը, ոչ հարկային մուտքերը և այլ մուտքերը:

Պետության ֆինանսական քաղաքականության քաղկացուցիչ մասն է կազմում հարկային քաղաքականությունը: Այն իրենից ներկայացնում է պետության կողմից հարկային միջոցառումների համակարգի մշակումը: Հայաստանի Հանրապետության հարկային քաղաքականությունը հեռանկարում նպատակաուղղված կլինի տնտեսավարող սուբյեկտների հարկային բեռի թեթևացմանը, որպեսզի էլ ավելի խթանվի տեղական և հատկապես օտարերկրյա կապիտալ ներդրումները: Դա կնպաստի երկրի տնտեսության զարգացմանը: Հարկային քաղաքականության հիմքը հանդիսանում է ՀՀ օրենքը հարկերի մասին, որը ԱԺ-ի կողմից ընդունվել է 1997թ. ապրիլի 14-ին և գործողության մեջ դրվել 1997թ. հուլիսի 1-ից:

Հարկային հարաբերությունների կարգավորումը հանդիսանում է հարկային քաղաքականության հիմքը: Հարկային հարաբերությունները

կարգավորվում են.

առաջին, հարկային օրենսդրությամբ, որը բաղկացած է հարկերի մասին օրենքից (մայր օրենք) և առանձին հարկատեսակների մասին օրենքներից,

երկրորդ, ՀՀ կառավարության որոշումներով՝ հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

երրորդ, հարկային պետական ծառայության ակտերով:

Ըստ հարկերի մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի, որպես հարկատեսակներ հանդիսանում են եկամտահարկը, շահութահարկը, ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ), ակցիզային հարկը, գույքահարկը և հողի հարկը: Բացի այդ, 19 տեսակի ձեռնարկատիրական գործունեության հաշվով սահմանված են նաև հաստատագրված վճարներ, ինչպես նաև պարզեցված հարկման ձևեր: Սակայն մեր խնդիրը չէ, պարզաբանել հարկատեսակների վերաբերյալ օրենքները, հարկերի հաշվարկման կարգը, հարկային արտոնությունները, պատասխանատվությունը: Այլ մեր խնդիրն է համառոտակի անդրադառնալ հարկային քաղաքականությանը, հարկման և հարկային համակարգի էությանը:

Տնտեսավարող սուբյեկտների հարկումը հանդիսանում է եկամուտների բաշխման մեթոդը տնտեսավարող սուբյեկտի և պետության միջև: Ինչպես նշել ենք, որպես տնտեսավարող սուբյեկտներ հանդիսանում են անհատ ձեռնարկատերերը, իրավաբանական անձ ձեռներեցները (ձեռնարկությունները, այսինքն առևտրային կազմակերպությունները), որոնք զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ՝ տնտեսական շահավետ ազատ (անկախ սեփականության ձևից), ինչպես նաև սեփականատերերը, ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ տնտեսավարող սուբյեկտները:¹

Հարկերը հանդիսանում են պարտադիր վճարումներ, որոնք գանձվում է պետության կողմից (ֆիզիկական և իրավաբանական անձ) տնտեսավարող սուբյեկտներից: Հարկումը իրականացվում է որոշակի սկզբունքներով, որոնք հիմնականում հանդիսանում են համաչափությունը և որոշակիությունը: Համաչափություն նշանակում է պետության միասնական մոտեցումը հարկատուների նկատմամբ օրենքի և կիրարկման մեխանիզմի միասնական կանոնները, ինչպես նաև տարվա ընթացքում հարկերի համաչափ գանձումը:

Որոշակիության սկզբունքի էությունը հանդիսանում է նրանում, որ

հարկադրույթները և նրանց գանձման, վճարման ժամկետները, հարկման կարգը սահմանվում է նախօրոք, այսինքն՝ հարկերի չափերը և նրա վճարման, գանձման ժամկետները նախօրոք հայտնի են դառնում տնտեսավարող սուբյեկտներին: Պետությունը որոշում է հարկատեսակները և հարկադրույթները, հարկաչափերը, գանձման, վճարման, տույժերի ու տուգանքների չափերը և ժամկետները, պայմանները, որոնք սահմանվում են հարկերի մասին և հարկատեսակների օրենքների իրավական չափանիշներով: Ընդ որում, ֆինանսական միջոցները, որոնք մուծվում են հարկերի տեսքով, չունեն նպատակային նշանակություն: Նրանք մուտք են լինում պետության (կամ տեղական ինքնակառավարման, այսինքն՝ համայնքային բյուջե) և ուղղվում են պետության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կարիքներին: Հարկերը վճարվում են անվերադարձելիության սկզբունքով: Այսպիսով, հարկման էությունը հանդիսանում է ի շահ պետության ինքնուրույն տնտեսավարող սուբյեկտներից և քաղաքացիներից եկամտի որոշակի մասի գանձումով, որը նախօրոք սահմանվում է օրենքով՝ ըստ հարկատեսակների:

Հարկային քաղաքականության մեջ առանձնացվում են հետևյալ հասկացությունները. հարկեր, հարկման օբյեկտ, հարկադրույթ, հարկման միավոր, հարկերի վճարման ժամկետ, հարկերի գծով արտոնություն, հարկերի կարգավորող ֆունկցիաներ (գործառույթներ) և այլն: Այժմ անդրադառնանք դրանց էության համառոտակի պարզաբանմանը:

Հարկերը բաժանվում են երկու խմբի.

առաջին, **ուղղակի հարկեր**: Դրանցից է՝

• **շահութահարկը**, որը գանձվում է իրավաբանական անձի կազավիճակ ունեցող տնտեսավարող սուբյեկտներից,

• **եկամտահարկը**, որը գանձվում է ֆիզիկական անձանց աշխատավարձից, որոնք աշխատում են առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում (բացառությամբ ուժային համակարգի աշխատողներից),

• **գույքահարկը**, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձ տնտեսավարող սուբյեկտների անշարժ և շարժական գույքի համար,

• **հողի հարկ**, որը գանձվում է հողի սեփականատերերից, մշտական կամ ժամանակավոր օգտագործողներից:

երկրորդ, **անուղղակի հարկեր**, որոնք կախված են տնտեսավարող սուբյեկտների ապրանքների (ծառայությունների, իրացման շրջանառության (ապրանքաշրջանառության) հետ: Դրանք են.

• **ԱԱՀ-ն**, որով հարկվում է ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացման շրջանառությունը (ապրանքաշրջանառությունը),

1. ՀՀ հարկային տեղեկագիր, քիվ 14-24, 1997-2004:

• **ակցիզային հարկ**, որով հարկվում է ենթակցիզային համարվող ապրանքների իրացման շրջանառությունը (ապրանքաշրջանառու թյունը) (վիճյալ-օլու արտադրանք, կոնյակ, գինի, գարեջուր, ծխախոտ, ոսկերչական իրեր, բյուրեղապակի, ավտոմեքենա, անվադողեր, մորթեղեն, ձեռագործ գորգեր, բենզին և այլն):

Հարկային օրենսդրությամբ հստակեցվել են հարկային արտոնության տեսակները: **Արտոնություն** է համարվում այս կամ այն հարկատեսակից տնտեսավարող սուբյեկտներին (ֆիզիկական և իրավաբանական անձ) ազատելը՝ լրիվ կամ մասնակի չափով կամ որոշակի ժամկետով: Արտոնություն է համարվում նաև տույժերից ու տուգանքներից նրանց ազատելը: Արտոնությունները հիմնականում անրագրվել են օրենքով: Հարկեր են վճարում տնտեսավարող այն սուբյեկտները (ֆիզիկական և իրավաբանական անձ), որոնք զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ:

Ձեռնարկատիրական գործունեություն է համարվում շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով պարբերաբար իրականացվող տնտեսական գործունեությունը: Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, զբաղմունք, սրն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց՝ ակնկալելով շահույթ (եկամուտ): Դա ամրագրված է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով:

Հարկատուն պետք է՝

- ունենա լիցենզիա (գործունեության հատուկ թույլտվություն),
 - գրանցված լինի պետական ռեգիստրի կազմակերպությունում,
 - հաշվառման մեջ լինի հարկայն տեսչությունում՝ ստանալով հարկ վճարովի հաշվային համար (ՀՎՀՀ),
 - վարի գործունեության հաշվապահական հաշվառում,
 - հարկային մարմիններին սահմանված ժամկետին ու կարգով ներկայացնի ֆինանսական հաշվետվությունները, ժամանակին մուծի բոլոր հարկերը,
 - գրանցված լինի սոցիալական ապահովագրության հիմնադրամում (կենսաթոշակային ֆոնդ),
 - գրանցված լինի Ազգային վիճակագրական ծառայությունում (ԱՎԾ):
- Ժամանակակից տնտեսական կյանքը զգալի չափով որոշվում է երկրի իրավական ու հարկային-իրավական վիճակով: Հարկային իրավունքը հատուկ տեղ է գրավում տնտեսապես զարգացած երկրների տնտեսական կյանքում, որոնց երբեմն անվանում են «ամենաբարձր հարկերի երկրներ»: Դրանց վերաբերում են Ավստրիան, ԳՂՀ-ն և որոշ վերապահումով նաև Ծվեյցարիան: Նրանց հարկային օրենսդրությունը շատ բարդ է,

և կարող են տիրապետել միայն համապատասխան մասնագետները: Բարձր հարկեր սահմանած երկրներում առավել բարձր հարկատեսակը դա եկամտահարկն է: Օրինակ, Ավստրիայում որպես եկամտահարկ համարվում է աշխատողների աշխատավարձից պահվող եկամտահարկը, կորպորացիայի հարկ և օժանդակ հարկը: Վերջինս զանձվում է ֆիզիկական անձանցից և արդյունաբերական ձեռնարկություններից: Ավստրիայում եկամտահարկի այդ տեսակները 1988թ. իջեցվել և հասցվել են 50 տոկոսի (1972թ. այն եղել է 62 տոկոս): Հայաստանի Հանրապետությունում այն ներկայումս կազմում է 10-20 տոկոս:

Գոյություն ունի «կրկնակի հարկում» հասկացությունը, որից փորձում են խուսափել ԱՊՀ-ի երկրները: Դրա համար կողմերը պայմանավորվում են պայմանագրերի ընդունման միջոցով կրկնակի չլարկել: «Կրկնակի հարկման» անվան ներքո հասկացվում է երկու ինքնիշխան պետությունների կողմից հարկման իրավունքը՝ հարկման մույն օբյեկտի նկատմամբ: Կրկնակի հարկումից խուսափելու համար շատ երկրներ իրար միջև կնքել են պայմանագրեր, երկկողմանի համաձայնագրեր, որոնք սահմանում են եկամտահարկի, ակցիզային հարկի, ԱԱՀ-ի գումարների զանձման կարգը: Օրինակ, անշարժ գույքի համար հարկը զանձում է այն երկիրը, որտեղ գտնվում է գույքը: Կրկնակի հարկումից խուսափելու համար կարելի է կամ մեկ երկրում կատարել հարկերի հաշվառում վճարված մյուս երկրում, կամ այդ հարկատեսակից ազատում մի երկրում և հարկի զանձում մյուս երկրում: Դա իրագործվում է երկկողմանի համաձայնագրերի միջոցով, որը կատարվում է ՄԱԿ-ի «Տնտեսական համագործակցության և զարգացման» կազմակերպության կողմից հաստատված պայմանագրի ձևին համապատասխան: Հարկային քաղաքականությունը պետության ռազմավարությունը և գործելակերպն է՝ հարկերի կիրառման բնագավառում, նպատակ ունենալով ապահովել սեփական ֆինանսական պաշարներ, որը հնարավորություն տա իրեն կատարելու պետության գործառնությունները, ինչպես նաև խրախուսելու կամ արգելելու որոշակի տնտեսական գործունեություն ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից: Հարկային քաղաքականությունը հանդիսանում է պետության ֆինանսական քաղաքականության քաղկացուցիչ մասը: Այն փոխվում է տնտեսական պայմանների, հասարակարգի փոփոխման հետևանքով՝ ելնելով կանկրետ իրավիճակից, նպատակներից և սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերից, որով նախատեսվում են երկրի տնտեսության զարգացման խնդիրները:

Հարկային համակարգ. Հարկային համակարգը իրենից ներկայացնում է հարկային մարմինների և նրանց ստորաբաժանումների ընդհանրությունը:

Հարկային արտոնություններ- Իրենից ներկայացնում է բացառությամբ ընդհանուր կանոններից: Այն նախատեսվում է օրենքով՝ հաշվի առնելով տնտեսավարող սուբյեկտների վճարումնալարությունը: Հարկային արտոնությունը՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց լրիվ կամ մասնակի ազատումն է առանձին հարկատեսակներից: Հարկային արտոնությունը համարվում է հարկային քաղաքականության տարրերից մեկը: Տարածված է հարկային հետևյալ արտոնությունների տեսակները. հարկվող նվազագույն եկամուտ, հարկային զեղչեր, հարկատուի որոշ ծախսերի նվազեցում համախառն եկամտից, շահույթից: Հարկվող եկամտից որոշակի եկամտի տեսակները նվազեցում է կատարվում, եթե եկամուտը ստացվել է արտերկրում և այնտեղ ենթարկվել է հարկման (կրկնակի հարկումից խուսափելու նպատակով), նախկինում վճարված հարկերի ավել գումարի վերադարձում կամ հաշվանցում առաջիկա ժամանակաշրջանի վրա (օրինակ, 1995-1996 թթ. ՀՀ բնակչության 16.7 տոկոսի համար սխալ վճարված գույքահարկը, որը հաշվանցվել է 1997թ. հաշվին), որոշ հարկերից լրիվ կամ մասնակի ազատումը՝ ընդհանրապես կամ հետաձգում որոշակի ժամկետի հաշվով, ինչպես նաև տույժերից և տուգանքներից ազատումը, որոշակի հարկատուների ազատումը՝ ապրանքների արտահանման և ինվեստիցիաների (կապիտալ ներդրումների) խրախուսման նպատակով:

Հարկային դրույքաչափեր. Հարկային վճարի չափ: Հարկային դրույքաչափը արտահայտվում է հարկվող եկամտի նկատմամբ տոկոսով (անվանական աշխատավարձի, համախառն եկամտի, եկամտի, շահույթի, գույքի բացարձակ արժեքի նկատմամբ):

Հարկային կարգավորում- Պետության կողմից անուղղակի միջոցառումների համընդհանրությունը՝ ձեռնարկատիրական գործունեության զարգացումը ապահովելու նպատակով:

Հարկ.- Բյուջեի պարտադիր վճարում, որը չունի նպատակային նշանակություն և իրականացվում է հարկատուի կողմից համապատասխան հարկատեսակի մասին օրենքով:

Հարկման սուբյեկտը- տնտեսավարող սուբյեկտը համարվում է հարկատու՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որոնք պարտավոր են օրենքին համապատասխան վճարել հարկերը: Հարկատուի հիմնական հատկանիշը հանդիսանում է եկամտի ինքնուրույն աղբյուրի առկայությունը, որն իրավական-տնտեսական առումով հիմնավորված է ձեռնարկատիրական գործունեության լիցենզիայով, պետական ռեզիստրի գրանցումով և հարկային տեսչությունում հաշվառումով կամ ֆիզիկական անձ, որը աշխատում է պետական և ոչ պետական ձեռնարկություններում:

Հարկատուների հաշվառումը ՀՀ հարկային տեսչությունում պարտադիր է և սովորական տնտեսությամբ զբաղվելու արգելվում է «Հարկերի մասին» օրենքով, որի խախտման համար նախատեսված է վարչական, քրեական պատասխանատվություն, տույժ և տուգանք, ընդհուպ մինչև տնտեսավարող սուբյեկտի ունեցվածքի բռնագրավում: Պետական և ոչ պետական առևտրային բանկերը տնտեսավարող սուբյեկտների (հարկատուների) համար հաշիվ են բացում միայն հարկային տեսչությունում և պետական ռեզիստրում գրանցվելու մասին փաստաթղթի ներկայացման դեպքում և հնգօրյա ժամկետում նրանց հայտնում են հաշվի բացման մասին:

Հարկման օբյեկտ. - Հարկման օբյեկտ է հանդիսանում այն, ինչ օրենքի ուժով ենթակա է հարկման, այսինքն դա այն քանակապես չափվող տնտեսական օբյեկտն է, որը հիմք է ծառայում ձեռնարկատիրական գործունեության, հետևապես հարկերի հաշվարկման համար: Որպես հարկման օբյեկտ կարող է հանդիսանալ ոչ միայն եկամուտը՝ համախառն եկամուտ, շահույթ, աշխատավարձ, շահաբաժին, տոկոս, ձեռնարկատիրական եկամուտ, այլև կապիտալը (անշարժ և շարժական գույքը): Այսպիսով, հարկման օբյեկտ են հանդիսանում համախառն եկամուտը, շահույթը, եկամուտը, աշխատավարձը, որոշակի ապրանքների (ծառայությունների) արժեքը, գործունեության այն տեսակները, որոնք օրենքով արգելված չեն, արժեթղթերի հետ կատարվող գործառնությունները, բնական պաշարների օգտագործումը, ֆիզիկական և իրավաբանական անձանց ունեցվածքը, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ավելացված արժեքը, այլ օբյեկտները, որոնք սահմանված են օրենքով և իրականացվում է տնտեսապես շահավետ գործունեություն: Միևնույն օբյեկտը կարող է հարկման ենթարկվել միայն մեկ հարկատեսակով (օրինակ, հողի սեփականատերերի համար սահմանված է հողի հարկ, անհատ ձեռնարկատերերի համար՝ հաստատագրված վճարներ, աշխատող քաղաքացիների՝ ֆիզիկական անձանց համար՝ եկամտահարկ և այլն): «Հարկման օբյեկտից» տարբերվում է «հարկման աղբյուր» հասկացությունը: Ինչպիսին էլ որ լինի հարկման օբյեկտը, հարկային վճարների աղբյուրը միշտ հանդիսանում է հարկման օբյեկտը: Հարկային վճարների աղբյուրը միշտ էլ հանդիսանում է համախառն եկամուտը, գուտ եկամուտը, աշխատավարձը, ձեռնարկատիրական եկամուտը, շահույթը:

Հարկադրույք. - Հարկի չափը, որը սահմանված է հարկման միավորի հաշվով: Հարկադրույքը սահմանված է կամ կայուն դրույքաչափով կամ տոկոսներով եկամտի նկատմամբ և կրում է հարկային քվոտաներ անվանումը (cvote - չափի արտոնություն):

Հարկման միավոր .- Դա հարկման օբյեկտի մի մասն է, որի հիման վրա սահմանվում է հարկադրույթը:

Հարկի վճարման ժամկետ .- Այն ժամկետը, որի ընթացքում վճարվում է հարկը: Այն հիշատակվում է հարկերի և հարկատեսակների մասին օրենքներում և նրա խախտման դեպքում տնտեսավարող սուբյեկտները ենթարկվում են վարչական (տույժ, տուգանք) կամ քրեական պատասխանատվության:

Պրեֆերենցիա (առավելություն, արտոնություն, նախապատվություն).- Հատուկ նախապատվելի արտոնություններ են, որը տրվում է մեկ պետության կողմից մյուսին՝ փոխադարձ սկզբունքով կամ միակողմանի կարգով առանց տարածելու երրորդ երկրի վրա: Պրեֆերենցիաները հաճախ կիրառվում են մաքսային գեղչերի ձևով: Մաքսային արտոնությունները Հայաստանում սահմանված են «Մաքսատուրքերի մասին» ՀՀ օրենքով:

Հարկերի էությունը հանդես է գալիս նրանց ֆունկցիաներում (գործառույթներում): Հարկերը կատարում են հետևյալ գործառույթները, կարգավորող, խթանող, բաշխիչ և ֆիսկալ:

Հարկերի կարգավորող ֆունկցիան հանդիսանում է այն, որ պետությունը մանրելով հարկային դաշտում, ըստ հարկային քաղաքականության և օրենքների, սահմանում է հարկերի դրույքաչափեր, արտոնություններ, տույժեր, տուգանքներ, հարկման կանոններ և պայմաններ է ստեղծում տնտեսության ու նրա ճյուղերի արտադրության զարգացման համար, այսինքն կարգավորում է շուկայական տնտեսությունը:

Հարկերի խթանող ֆունկցիան հանդես է գալիս նրանում, որ հարկերի օգնությամբ պետությունը խթանում է գիտատեխնիկական առաջընթացը (նոու-հաու), աշխատատեղերի ավելացումը, աշխատունակ բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացումը, որն էլ նպաստում է տնտեսական աճին՝ ՀԱԱ-ի և ՀՆԱ-ի աճին, որպես մակրոտնտեսական ցուցանիշներ:

Հարկերի բաշխիչ ֆունկցիան արտահայտվում է նրանում, որ հարկերի օգնությամբ պետական բյուջեում կուտակվում են դրամական միջոցներ, որոնք հետագայում ուղղվում են համապետական հիմնահարցերի լուծմանը: Հարկերի օգնությամբ պետությունը վերաբաշխում է նյութական արտադրության ձեռնարկությունների շահույթի մի մասը, ֆիզիկական անձանց եկամուտները և նպատակաուղղում ոչ նյութական ոլորտի զարգացմանը:

Հարկերի ֆիսկալ ֆունկցիան (լատիներեն՝ fiscus բառից, որ ոուսերեն նշանակում է ֆիսկ, պետական գանձարկղ, գանձապետարան) հանդիսանում է նրանում, որ հարկերի օգնությամբ լրացվում է պետական գան-


ձարանը և որն օգտագործվում է հետագայում պետական անձնակազմի պահպանման և տնտեսաֆինանսաական գործունեության համար:

Հարկերի տեսակները .- Հարկերը լինում են երկու տեսակի՝ ուղղակի և անուղղակի հարկեր, որոնք պատկերվում են հետևյալ ուրվագծով (ուրվագիծ 7):

Հարկերի դասակարգման ուրվագծում պատկերվում են հարկատեսակները, որոնք գանձվում են տնտեսավարող սուբյեկտներից: Հարկատեսակները և նրանց դրույքաչափերը սահմանվում են համապատասխան օրենքներով, որն ընդունվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից (ԱԺ), որպես իշխանության բարձրագույն մարմին:

Ուրվագիծ 5

Հարկերի դասակարգման ուրվագիծը



Այժմ ցույց տանք կարկերի բնութագիրը, որոնք գանձվում են տնտեսավարող սուբյեկտներից (ուրվագիծ 8):

Հարկերի բնութագիրը

Ուրվագիծ 8

Հարկատեսակը	Վճարողը	Հարկման օբյեկտը	Հարկադրույքը	Հարկի վերագրյալը	Հարկի վճարման ժամկետները
1	2	3	4	5	6
1. Շահութահարկ	Բոլոր տնտեսավարող սուբյեկտները (ծեղնարկությունները), բացի բյուջետային կազմակերպություններից, գյուղացիական տնտեսություններից	Համախառն եկամուտի	Միասնական, %	Համախառն եկամուտ	Մինչև եռամսյակի հաջորդ ամսվա 25-ը (կանխավճարի կարգով)
2. Եկամտահարկ	Կոմերցիոն հաշվարկով աշխատող ձեռնարկությունների և բյուջետային կազմակերպությունների անձնակազմը, անհատ ձեռնարկատերերը	Աշխատավարձ, եկամուտ	Հարկադրույքները տարբերակված են (սահմանված է սանդղակ)	Աշխատավարձ, եկամուտ	Սճճնակազմին ձեռնարկություններում (կազմակերպություններում) աշխատավարձ հաշվարկելիս փոխանցումը բանկից, աշխատավարձը ստանալու օրը: Անհատ ձեռնարկատերերը շահութահարկի համար սահմանված ժամկետում
3. Գույքահարկ	սեփականատերերը	Անշարժ և շարժական գույքի արժեքից	Դրույքաչափերը տարբերակված են	Անշարժ և շարժական գույքի արժեքը	

1	2	3	4	5	6
4. Հողի հարկ	Բոլոր սեփականատերերը և մշտական ու ժամանակավոր հողօգտագործողները	Հողի տարածքի հաշվով ելնելով հողի կադաստրային գուտ եկամտից (անօգտագործելի հողերը կադաստրային արժեքից)	Դրույքաչափերը միասնական են, բացառությամբ խաղողի այգիների, որը սահմանվում է 50 տոկոսի չափով	Հողի տարածքի հաշվով ելնելով հողատեսքի կադաստրային գուտ եկամտից կամ արժեքից	Մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը
5. ԱԱԳ	Բոլոր տնտեսավարող սուբյեկտները, որոնք իրականացնում են ձեռնարկատիրական գործունեություն	Իրացման շրջանառությունից (ապրանքաշրջանառություն)	Նյութական արտադրության և առևտրի ոլորտում	Իրացման շրջանառություն (ապրանքաշրջանառություն)	
6. Ակցիզային հարկ	Բոլոր տնտեսավարող սուբյեկտները, որոնք զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ	Ենթակցիզային ապրանքների իրացման շրջանառությունից	Դրույքաչափերը տարբերակված են ըստ ենթակցիզային ապրանքների	Ենթակցիզային ապրանքների իրացման շրջանառությունը	Ներմուծվող ապրանքները 10 օրվա ընթացքում վճարումնալության դեպքում սահմանը հատելիս (մաքսատամը)

Այժմ համառոտակի պարզաբանենք ուղղակի և անուղղակի հարկերը, որոնք սահմանված են ըստ հարկատեսակների մասին ՀՀ օրենքների և որոնք ամբողջությամբ կազմում են հարկային օրենսդրությունը:¹

Ըստ հարկերի մասին օրենքի (14.04.1997) 12-րդ հոդվածի Հայաստանի հանրապետությունում սահմանվում են հարկերի հետևյալ տեսակները.

- շահութահարկ,
- եկամտահարկ
- գույքահարկ,
- հողի հարկ,
- ավելացված արժեքի հարկ,
- ակցիզային հարկ:

1. Հարկային օրենսդրություն, Երևան, 1998:

Քանի որ պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը (ՀՀ-ում՝ 85-86%-ը) համարվում են հարկային մուտքերը և հարկերը համարվում են ֆինանսներ, ապա համառոտակի անդրադառնանք հարկատեսակների էությանը և բնույթին:

Շահութահարկ. Շահութահարկի մասին օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1997թ. սեպտեմբերի 30-ին, սակայն նրանում լրացումներ և փոփոխություններ է կատարվել 1998-2004թթ.¹: Վերջին անգամ հարկային ընդհանուր փաթեթով փոփոխություններ և լրացումներ է կատարվել 2003թ. դեկտեմբերի 26-ին և 2004թ. դեկտեմբերի 24-ին: Շահութահարկը ուղղակի հարկ է, քանի որ սահմանվում է ձեռնարկությունների, այսինքն առևտրային կազմակերպությունների շահույթից: Այն իրենից ներկայացնում է ապրանքի իրացումից ստացված դրամական միջոցների մուտքի և կատարված ընթացիկ ծախսերի տարբերությունը: Այլ կերպ, շահույթն իրենից ներկայացնում է իրացումից հասույթի և ինքնարժեքի տարբերությունը: Շահութահարկը հաշվարկվում է տնտեսավարող սուբյեկտների համախառն շահույթից: Այն իրենից ներկայացնում է գործառնական և ոչ գործառնական գործունեությունից ստացված շահույթի հանրագումարը:

Շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական (ֆինանսական) հաշվառման համակարգով և կազմվում է ֆինանսական սահմանված հինգ հաշվետվությունները:

Համախառն շահույթը բաժանվում է հարկվող և չհարկվող շահույթի: Այդ բաժանման հասկացությունը առաջին անգամ ցույց է տվել ամերիկացի Դևիդ Մոլոմոնը: Ընդ որում, հարկվող շահույթը շահութահարկն է, իսկ չհարկվող շահույթը՝ համախառն շահույթի և շահութահարկի տարբերությունն է, այսինքն՝ մնացորդային, բաշխման ենթակա շահույթը, որը մնում է տնտեսավարող սուբյեկտի տնօրինության ներքո և նրա հայեցողությամբ բաշխվում է հատուկ նշանակության և տնտեսական խթանման ֆոնդերին (հիմնադրամներին): «Շահութահարկի մասին» օրենքով շահույթը դիտարկվում է որպես համախառն եկամտի (որպես բոլոր տեսակի եկամուտների հանրագումար) և նվազեցումների (ընթացիկ ծախսերի՝ ինքնարժեքի) տարբերություն: Ըստ Ազգային ժողովի 2003թ. դեկտեմբերի 26-ի փոփոխության, շահութահարկը սահմանված է համախառն շահույթի 20%-ի չափով: Սակայն, որոշ տնտեսավարող սուբյեկտներ դեռ գործում են ստվերում և խուսափում են հարկերից: Այսպես

2002թ. 4700 խոշոր ու միջին չափի ձեռնարկություններ «Շահույթի և վնասի մասին», այսինքն «Ֆինանսական հետևանքների մասին» հաշվետվությամբ ցույց են տվել, որ, իբր, աշխատել են վնասով և շահութահարկ չեն մուծել: Նրանց վնասի չափը ըստ հաշվետվությունների կազմել է 128.5 մլրդ դրամ: Ելնելով վիճակից, ՀՀ կառավարությունը որոշեց հարկային պետական ծառայությունում ստեղծել «խոշոր հարկատուների վարչություն»: Բացի այդ, շահութահարկի մասին օրենքում 2003թ. դեկտեմբերի 26-ին կատարվել է լրացումներ և փոփոխություններ: Ըստ դրա, այն տնտեսավարող սուբյեկտները, որոնց համախառն շահույթի չափը կազմի իրացումից հասույթի մինչև 5 %-ը, ապա պետք է պետբյուջե մուծեն նաև հասույթի մեկ տոկոսը: Դա կիրառվում է 2004թ. հունվարից և տասը ամսում ավելի շատ շահութահարկ է մուծվել պետբյուջե, քան նախորդ տարում: Այսպիսով, ներկայումս շահութահարկ են մուծում բոլոր 51240 տնտեսավարող սուբյեկտները (իրավաբանական անձինք), քանի որ, եթե նույնիսկ վնասով աշխատեն, միևնույնն է՝ հասույթի մեկ տոկոսի չափով մուծում են շահութահարկ:

Եկամտահարկ. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքը¹ ընդունվել է

Ազգային ժողովի կողմից 1997թ. դեկտեմբերի 27-ին և նրանում լրացումներ ու փոփոխություններ են կատարվել 1998-2004 թվականներին: Եկամտահարկը նույնպես ուղղակի հարկ է, քանի որ այն սահմանվում է եկամտից: Եկամտահարկը հարկ վճարողների կողմից սահմանված կարգով ու չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է: Եկամտահարկ վճարում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, որոնք աշխատում են կոմերցիոն (առևտրային) և ոչ առևտրային կազմակերպություններում, այսինքն Հայաստանի և արտերկրների քաղաքացիները, որոնք աշխատում են Հայաստանում: Որպես եկամուտ, որից պահվում է եկամտահարկ, հանդիսանում են բոլոր տեսակի եկամուտները (աշխատավարձ, ձեռնարկատիրական եկամուտ և այլ բնույթի եկամուտներ): Ըստ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի, չհարկվող նվազագույն չենք կազմում է ամսեկան 20 հազար դրամը:

Օրենքի 9-րդ հոդվածով սահմանված է հարկադրույքների հետևյալ անդրակը.

1. ՀՀ հարկային օրենքները, Երևան, 2002:

ՀՀ հարկային օրենքներ, Երևան, 2002:

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 20000 դրամ	0 %
20000 – 80000	10 %
80000 և ավելի	8 հազար դրամ գումարած 8000 դրամը գերազանցող գումարի 20 %-ը

Այսպիսով, հարկային գործակալի կողմից եկամտահարկի հաշվարկման բանաձևը կարելի է արտահայտել այսպես.

$$\text{ԵԿԱՍՏԱՅԱՐԿ} = \left[\begin{array}{l} 80 \text{ հազար} \\ \text{դրամը} \\ \text{չգերազանցող} \\ \text{ամսական} \\ \text{հարկվող} \\ \text{եկամուտ} \end{array} \right] \times 10\% + \left[\begin{array}{l} 80 \text{ հազար} \\ \text{դրամը} \\ \text{գերազանցող} \\ \text{ամսական} \\ \text{հարկվող} \\ \text{եկամուտ} \end{array} \right] \times 20\%$$

$$\left[\begin{array}{l} \text{ՀՀ} \\ \text{քաղաքացու} \\ \text{(ոեգիդենտ)} \\ \text{հիմնական} \\ \text{հարկվող} \\ \text{եկամուտ} \end{array} \right] = \left[\begin{array}{l} \text{Ամսական} \\ \text{համախառն} \\ \text{եկամուտ} \end{array} \right] + \left[\begin{array}{l} \text{Նվազեցվող եկամուտ} \\ + \text{ սոցիալական} \\ \text{վճարումներ} \\ + \text{ բարեգործական} \\ \text{հատկացումներ} \\ + \text{ անձնական} \\ \text{նվազեցում} \end{array} \right]$$

$$\left[\begin{array}{l} \text{Օտարերկրյա} \\ \text{քաղաքացու} \\ \text{ամսական} \\ \text{հարկվող} \\ \text{եկամուտ} \end{array} \right] = \left[\begin{array}{l} \text{Ամսական} \\ \text{համախառն} \\ \text{եկամուտ} \end{array} \right] + \left[\begin{array}{l} \text{Շահաբաժին և} \\ \text{արժեթղթերից} \\ \text{ստացված} \\ \text{եկամուտ} \end{array} \right]$$

Եկամտահարկ է գանձվում նաև ձեռնարկատիրական, այսինքն ազատ տնտեսական շահավետ գործունեությունից՝ փզնեսից (Business - գործարարություն) ստացված տարեկան եկամտից՝ հետևյալ չափով.

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 960 հազ. դրամ	Հարկվող գումարի 10 %-ը
960 հազ. դրամից ավելի	96 հազ. դրամ գումարած 960 հազար դրամը գերազանցող գումարի 20 տոկոսը

Ինքնահայտարարազրմամբ՝ հարկային գործակալի միջոցով չհարկված տարեկան հարկվող եկամուտներից՝

$$\text{ԵԿԱՍՏԱՅԱՐԿ} = \left[\begin{array}{l} 960 \text{ հազար} \\ \text{դրամը} \\ \text{չգերազանցող} \\ \text{տարեկան} \\ \text{հարկվող} \\ \text{եկամուտ} \end{array} \right] \times 10\% + \left[\begin{array}{l} 960 \text{ հազար} \\ \text{դրամը} \\ \text{գերազանցող} \\ \text{տարեկան} \\ \text{հարկվող} \\ \text{եկամուտ} \end{array} \right] \times 20\%$$

$$\left[\begin{array}{l} \text{Տարեկան} \\ \text{հարկվող} \\ \text{եկամուտ} \end{array} \right] = \left[\begin{array}{l} \text{Տարեկան} \\ \text{համախառն} \\ \text{եկամուտ} \end{array} \right] + \left[\begin{array}{l} \text{Նվազեցվող} \\ \text{եկամուտ} \\ + \text{ ծախսեր} \\ + \text{ սոցվճարներ} \\ + \text{ բարեգործական} \\ \text{հատկացումներ} \\ + \text{ անձնական} \\ \text{նվազեցում} \end{array} \right]$$

Եկամտահարկից ազատվում են ուժային նախարարությունների աշխատակիցները (ՀՀ պաշտպանության նախարարություն, Ազգային անվտանգության ծառայություն, Ոստիկանություն): Եկամտահարկը պահում են հարկային գործակալները: Որպես հարկային գործակալներ համարվում են գործատուները՝ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները և այլ հարկատուները (հոդված 20):

Որպես եկամուտ, ըստ «Եկամտահարկի մասին» օրենքի, հաշվարկվում է համախառն եկամտի (որպես բոլոր տեսակի եկամուտների հան-

բազումար) և նվազեցումների (փաստաթղթերով հիմնավորված ծախսերի) տարբերությունը: Ոչ առևտրային (բյուջետային կազմակերպություններում և տնտեսավարող սուբյեկտներում վարձու աշխատողների եկամուտը համարվում է նրանց ամսական անվանական, այսինքն հաշվարկված աշխատավարձը: Անվանական աշխատավարձի և պահումների (եկամտահարկ, 3% սոցիալական վճար) տարբերությունը կազմում է առձեռն վճարվող, այսինքն իրական աշխատավարձը:

Գույքահարկ .- Գույքահարկի մասին ՀՀ օրենքը՝ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997թ. դեկտեմբերի 27-ին և լրացումներ ու փոփոխություններ է կատարվել 1998-2004 թվականներին: Գույքահարկ վճարում են ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես առևտրային կազմակերպություններ: Գույքահարկը ուղղակի հարկ է, այսինքն պետբյուջե վճարվող պարտադիր վճարում: 2003թ. սեպտեմբերից գյուղական և քաղաքային համայնքները իրենք են հավաքագրում գույքահարկը և հողի հարկը ու նրանց գումարը լրիվ մնում է տեղական բյուջեում:

Գույքահարկ վճարվում է անշարժ (շենք, տուն, բնակարան, ամառանոց, ավտոտնակ) և շարժական (ավտոմեքենաներ, կենցաղային իրեր, կահույք, զանազան տեխնիկա) գույքի համար: Ֆիզիկական անձինք գույքահարկ են վճարում սեփական տան, բնակարանի, ամառանոցի, ավտոտնակի և ավտոմեքենաների համար: Ընդ որում, սեփական տան, բնակարանի արժեքը երեք տարին մեկ անգամ գնահատվում է կադաստրի պետական վարչության կողմից (cadastre- գնահատում) և տվյալները ներկայացնում են հարկային տեսչություններին, որոնք էլ կատարում են գույքահարկի հաշվարկը: Հարկային տեսչությունը գույքահարկի չափի մասին ծանուցում է համայնքներին և վերջինն էլ բնակչությանը, որոնք էլ կատարում են վճարումները: Ըստ գույքահարկի մասին օրենքի 7-րդ հոդվածի, շինությունների գույքահարկի դրույքաչափերը սահմանված են.

Հարկման բազան	Հարկի դրույքաչափը
մինչև 3 մլն դրամ	հարկման բազայի 0 տոկոսը
3 – 10 մլն դրամ	100 դրամ գումարած հարկային բազայի 3 մլն դրամը գերազանցող գումարի 0.1 տոկոսը
10-20 մլն դրամ	7100 դրամ գումարած հարկային բազայի 10 մլն դրամը գերազանցող գումարի 0.2 տոկոսը
20-30 մլն դրամ	27100 դրամ գումարած հարկային բազայի 30 մլն դրամը գերազանցող գումարի 0.4 տոկոսը
30-40 մլն դրամ	67100 դրամ գումարած հարկային բազայի 40 մլն դրամը գերազանցող գումարի 0.6 տոկոսը
40 մլն դրամ և ավելի	127100 դրամ գումարած հարկային բազայի 40 մլն դրամը գերազանցող գումարի 0.8 տոկոսը

Ընդ որում, սեփական տան, բնակարանի գույքահարկի գծով որպես չհարկվող շեն ընդունված է 3 մլն դրամը:

Գույքահարկ է վճարվում նաև փոխադրամիջոցների համար: Ըստ գույքահարկի մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի սահմանված է փոխադրամիջոցների գույքահարկի դրույքաչափերը.

- ջրային փոխադրամիջոցների համար գույքահարկի տարեկան դրույքաչափը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 1500 դրամ կամ յուրաքանչյուր կիլովատի դիմաց՝ 240 դրամ,
- ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով.
- մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝
 - մինչև 120 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ,
 - 120-250 ձիաուժ, յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 400 դրամ,
 - 250 ձիաուժ և ավելի, յուրաքանչյուր ձիաուժի համար՝ 500 դրամ,

1. ՀՀ հարկային օրենքները, Երևան, 2002:

• 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար և բեռնատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝

- մինչև 200 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 100 դրամ,
- 200 ձիաուժ և ավելի, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ:

Մինչև երեք տարվա վաղեմության ավտոմեքենաների համար գույքահարկը հաշվարկվում է լրիվ չափով (100%), իսկ երեք տարուց ավելի վաղեմություն ունեցող ավտոմեքենաների համար գույքահարկը հաշվարկվում է երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար հարկի գումարի 10 %-ի չափով պակաս, բայց ոչ ավելի, քան հարկի գումարի 50 տոկոսը:

Ըստ գույքահարկի մասին օրենքի 10-րդ հոդվածի, գույքահարկից ազատվում են ՀՀ զինված ուժերում կամ միջազգային պայմանագրերով դաշնակից երկրների զինված ուժերում ժամկետային ծառայության մեջ գտնվող անձինք (եթե հարկվող օբյեկտ համարվող գույքն այդ ընթացքում չի տրվել վարձակալության)՝ ծառայության ողջ ընթացքում՝

- միանձնյա սեփականության իրավունքով իրենց պատկանող հարկվող օբյեկտի մասով,
- ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող հարկվող օբյեկտի մասով, եթե մյուս համասեփականատերերն անչափահաս կամ անաշխատունակ անձիք են,
- ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող հարկվող օբյեկտի դեպքում՝ հարկվող օբյեկտի իրենց բաժնի մասով, եթե հարկվող օբյեկտ համարվող գույքն այդ ընթացքում չի տրվել վարձակալության:

ՀՀ Ազգային ժողովը 2004թ. դեկտեմբերի սկզբին երկրորդ ընթերցմամբ փոփոխություններ է կատարել «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում: Առաջին փոփոխությունը հանգում է նրան, որ քաղաքային համայնքներին գույքահարկի մասին տրամադրվող տեղեկատվության ժամկետը երկարաձգել մինչև ընթացիկ տարվա վերջը, որպեսզի իրավաբանական անձ տնտեսավարող սուբյեկտներից գանձել գույքահարկ՝ սկսած 2005 թվականից: Մյուս փոփոխությունն այն է, որ դուրս գրել գույքահարկի գծով կուտակված տույժ և տուգանքները՝ հին ավտոմեքենաների հաշվով՝ որոնք պիտանի չեն օգտագործման համար: Այդպիսի ավտոմեքենաներ շատ են կուտակվել հատկապես երկրի մարզերում՝ գյուղական համայնքներում, որոնք չեն շահագործվում, սակայն հաշվարկվում է գույքահարկ, տույժ և տուգանքներ: ՀՀ կառավարությունը նախատեսում է կատարել հաշվառում և 2005-2006թթ. այդպիսի ավտոմեքենաների սե-

փականատերերին ազատել գույքահարկից:

Հողի հարկ .- Հողի հարկի մասին ՀՀ օրենքը՝ ընդունվել է Ազգային ժողովի կողմից՝ 1994թ. փետրվարի 14-ին: Նրանում լրացումներ և փոփոխություններ է կատարվել 2000թ. ապրիլի 29-ին և 2005թ. ապրիլի 14-ին: Հողի հարկը տեղական բյուջե վճարվող ուղղակի հարկ է, այսինքն պարտադիր վճարում է:

Ըստ հողի հարկի մասին օրենքի 1-ին հոդվածի, հողի հարկ են վճարում հողի սեփականատերերը (գյուղացիական 336 հազ. տնտեսություններ), հողօգտագործողները (322 գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները) և պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողները:

Գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային գուտ եկամուտը, իսկ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը: Այսպիսով, հողի հարկի չափը կախված չէ գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների գործունեության արդյունքներից:

Գյուղատնտեսական նշանակության հողերի, տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է դրանց կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային գուտ եկամտի 15%-ի չափով:

Հողի կադաստրային գնահատումը կատարվում է հինգ տարին մեկ անգամ «Հայպետհողշիննախագիծ» ինստիտուտի կողմից ու ամփոփվում է կադաստրի պետական վարչության կողմից և տվյալները ներկայացվում են գյուղական և քաղաքային համայնքներին: Խաղողագործության ճյուղի զարգացման համար հողի հարկը գանձվում է արտոնյալ չափով՝ հողի կադաստրային գուտ եկամտի 7.5 %-ի չափով: Եթե 1990թ. երկրում կար 36 հազ. հեկտար խաղողի այգի, ապա 1993-1998թթ. նրա 75 %-ը վերացվեց՝ հացահատիկային մշակաբույսերի մշակման նպատակով և որպեսզի վերականգնել կորցրածը, տրվել է այդ արտոնությունը:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողի հարկը սահմանվում է հետևյալ չափերով.

- արդյունաբերության (ներառյալ հանքավայրերը և արտադրական

1. ՀՀ հարկային օրենքները, Երևան, 2002:

գործունեությունից ազատված տարածքները), տրանսպորտի, կապի, հեռուստառադիոհաղորդումների և պաշտպանության նպատակով օգտագործվող, գազատար խողովակաշարերով զբաղեցված հողատարածքների, ինչպես նաև ջրային ֆոնդի հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է համապատասխան կադաստրային շրջանացման գոտիների տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի նկատմամբ հետևյալ չափերով.

- բնակավայրերի ներսում՝ 1%,
- բնակավայրերից դուրս՝ 0.5 %,

• անտառային ֆոնդի հողերի համար (բացառությամբ դրանց գյուղատնտեսական հողատեսքերի) հողի հարկի դրույքաչափը սահմանվում է համապատասխան կադաստրային շրջանացման գոտիների անօգտագործելի հողերի կադաստրային գնահատման միջին արժեքի 1 %-ի չափով,

• ոչ գյուղատնտեսական նշանակության մյուս հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի մեկ տոկոսի չափով:

Հողի հարկը հաշվարկվում է սկսած հողատեսքի սեփականության, մշտական կամ ժամանակավոր օգտագործման իրավունքի ձեռքբերման հաջորդ ամսից:

Հողի հարկից ազատվում են՝

- բյուջետային կազմակերպությունները, պետական արգելանոցները և արգելավայրերը, զբոսայգիները, պատմամշակութային հողերը,
- բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող հողերը,
- ուսումնական հաստատություններին հատկացված հողատեսքերը,
- նոր հիմնված և երիտասարդ բազմամյա տնկարքերը (խաղողի և պտղատու այգիները),

• պետական անտառային ֆոնդի հողերը:

Հողի հարկից 50%-ի չափով ազատվում են՝

- գյուղատնտեսական գիտահետազոտական հիմնարկները,
- սերմնաբուծական, տնկարանային, տոհմային ձեռնարկությունները, կայանները և հենակետերը,

Ավելացված արժեքի հարկ .- ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997թ. մայիսի 14-ին և նրանում լրացումներ ու փոփոխություններ է կատարվել 1997-2004 թվականներին:

ԱԱՀ-ն անուղակի հարկ է, որը գանձվում է որպես հարկ պետբյուջե՝ ապրանքների ներմուծման, երկրի տարածքում դրանց արտադրության ու

շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: ԱԱՀ վճարողներ են համարվում ինքնուրույն ձեռնարկատիրական գործունեություն վարող ֆիզիկական և իրավաբանական անձինք: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ԱԱՀ է գանձվում ՀՀ տարածք ապրանքներ ներմուծելիս, եթե նրանց կողմից ներմուծվող ապրանքների քանակը կամ արժեքը գերազանցում է օրենքով սահմանված չափերը: Իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը տվյալ օրացուցային տարում համարվում են ԱԱՀ վճարող, եթե դրան նախորդող օրացուցային տարում այդ անձանց գործարքներից հասույթը (ներառյալ հաշվարկված հարկվող ապրանքաշրջանառության գումարը) գերազանցել է 30 մլն դրամը: Անկախ նշված չափից, ԱԱՀ վճարող համարվում են հետևյալ անձինք.

- գերազանցել են սահմանված չափը,
- համարվում են պարզեցված հարկ վճարողներ,
- իրականացնում են ԱԱՀ-ով և հաստատագրված վճարով հարկվող գործունեություն:

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք տվյալ տարում համարվում են ԱԱՀ վճարող, եթե նրանց գործարքներից հասույթի գումարը գերազանցել է 3 մլն դրամը: Այդ անձինք ԱԱՀ հաշվարկում և վճարում են 3 մլն դրամը գերազանցող մասի համար: Մեկից ավելի անձինք կարող են լինել մեկ կենտրոնացված ԱԱՀ վճարող, որի ցանկը սահմանում է կառավարությունը:

ԱԱՀ-ով հարկվող գործարքներ են համարվում.

- ապրանքների մատակարարումը,
- ծառայությունների մատուցումը,
- անհատույց (մասնակի հատուցումով) սպառումը,
- «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծումը,

• կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից այն ապրանքների ներմուծումը, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանված է զրո տոկոս և որոնք ենթակա չեն ակցիզային հարկով հարկման:

ԱԱՀ-ով չեն հարկվում՝

- պետական տուրքի գումարը,
- ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց գործարքները,

- սեփականության իրավունքի փոփոխման գործարքները,
- կազմակերպությունների վերականգնման գործարքները,
- պետական ձեռնարկությունների հիման վրա ստեղծված վարձակալական ձեռնարկությունների վարձակալության գործարքները,
- պետությանն անցած արժեքների և պետության կողմից գնված արժեքների իրացման շրջանառությունը,
- բյուջետային կազմակերպությունների կողմից ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը,
- ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման իրերի ներմուծումը,

ՀՀ մշտական բնակության մեկնող քաղաքացիների անձնական գույքի ներմուծումը:

Երբ գնորդ կազմակերպությունները մատակարարներից ձեռք են բերում հումք և նյութեր կամ այլ ապրանքներ, ապա հաշիվ-ֆակտուրայի (ֆակտուրա նշանակում է ապրանքագիր) առաջին տողով ցույց է տրվում ապրանքի քանակը, գինը և գումարը, իսկ երկրորդ տողով՝ ԱԱՀ-ի չափը (արժեքի 20 %-ի չափով), ապա ընդամենը գումարը: Մատակարարի ապրանքի արժեքը՝ վաճառքի արժեքն է իրացման գներով, իսկ ԱԱՀ-ն (20%) մատակարարը որպես հարկատու փոխանցում է պետական բյուջե: Գնորդ կազմակերպության համար նյութերի և այլ նյութական պաշարների արժեքը մուտքագրվում է ձեռքբերման գներով՝ ներառյալ ԱԱՀ-ն և փոխադրման ծախսերը:

Եթե ԱԱՀ-ի գումարը ներառված է ապրանքի (ծառայության) արժեքի մեջ, ապա ԱԱՀ-ն հաշվարկվում է ապրանքների և ծառայությունների ամբողջ արժեքի նկատմամբ 16.67% հաշվարկային դրույքաչափով: Այսպես, ամբողջը՝ 100 % + 20 % ԱԱՀ = 120%, որոշում ենք, թե 20 % ԱԱՀ-ն 120 %-ի ո՞ր մասն է կազմում տոկոսով.

$$\text{Լուծում} = \frac{20\% \cdot 100}{120} = 16.67 \text{ տոկոս:}$$

Ակցիզային հարկ .- Ակցիզային հարկի մասին ՀՀ օրենքը¹ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2000թ. հուլիսի 7-ին և նրանում լրացումներ ու փոփոխություններ է կատարվել 2001թ. դեկտեմբերի 27-ին: Ակցիզային հարկը, ինչպես և ԱԱՀ-ն անուղղակի հարկ է (ակցիզ - նշանակում է բա-

1. ՀՀ հարկային օրենքները, Երևան, 2002:

ժին): Ակցիզային հարկը սահմանված ապրանքների ներմուծման կամ ՀՀ տարածքում ապրանքարտադրողների կողմից դրանց օտարման (իրացման) համար սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող անուղղակի հարկ է: Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները համարվում են ենթաակցիզային ապրանքները (զարեջուր, գինի, օղի, կոնյակ, գինեկոնյակ, սպիրտ, ծխախոտի սիգարետներ, սիգարետաներ , դրանց փոխարինիչներ, նավթ և նավթամթերքներ (բենզին, դիզելային վառելանյութ և այլն), հեղուկ գազ, բացառությամբ բնական գազի:

Ակցիզային հարկ վճարողներ են համարվում ապրանքարտադրողները և վաճառողները (ֆիզիկական և իրավաբանական անձինք):

- Ակցիզային հարկով հարկվող օբյեկտ է համարվում.
- «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծումը,
 - երկրի տարածքում այն ապրանքարտադրողները, որոնց ապրանքի համար սահմանված է ակցիզային հարկ:

Որպես հարկման բազա (հենք) համարվում է ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ծավալը (բնեղեն ձևով քանակը):

Ակցիզային հարկի դրույքաչափերը սահմանվում են (դրամ).

• մեկ լիտր զարեջրի համար՝	70,
• մեկ լիտր գինու համար՝	180,
• մեկ լիտր շամպայնի համար՝	250,
• խմորման ենթակա ըմպելիքների մեկ լիտրի համար՝	180,
• մեկ լիտր էթիլային սպիրտի համար՝	600,
• սպիրտային խմիչքներ՝	1500,
• Կոնյակ, լիկյոր, օղի՝ մեկ լիտրի համար՝	300,
• ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ (1 կգ-ի համար)՝	1500,
• հում նավթ և նավթամթերքներ (1 տ)՝	27000,
• հեղուկ գազ, բացի բնական գազից՝	1000:

Տնտեսավարող սուբյեկտներում հարկումը կատարվում է հետևյալ ձևերով.

հարկման սովորական ձև, այսինքն, երբ հարկատուն հարկերը հաշվարկում և վճարում է ընդհանուր կարգով, այսինքն՝ ըստ հարկատեսակների: Այս դեպքում իրականացվում է գործունեության հաշվապահական (ֆինանսական) հաշվառում դասական համակարգի միջոցով, այսինքն ավանդական ձևով և հաշվապահական հաշվառման մեթոդներով, այդ թվում ըստ հաշվապահական հաշվառման կրկնակի գրանցման մեթոդի և ֆինանսական հաշվառման յոթ քայլերի.

պարզեցված հարկման չև,

հասարակագրված վճարումների չև, որի չափը կախված չէ գործու-
նեության արդյունքներից:

Այժմ համառոտակի անդրադառնալիս պարզեցված հարկման և հաս-
տատագրված վճարումների ձևերին:

պարզեցված հարկման չև .- Պարզեցված հարկի մասին ՀՀ օրենքը¹
Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2000թ. հունիսի 5-ին և նրանում լրա-
ցումներ ու փոփոխություններ են կատարվել 2001-2002թթ. դեկտեմբերին և
2005թ. ապրիլին: Այս օրենքը կարգավորում է պարզեցված հարկի հաշ-
վարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է
վճարողների շրջանակը, հարկի դրույքաչափը, հաշվարկման և վճարման
կարգը: Ըստ այդ օրենքի 2-րդ հոդվածի, պարզեցված հարկը օրենքով սահ-
մանված չափերով ու ժամկետներում ձեռնարկատիրական գործունեու-
թյան համար պետական բյուջե վճարվող հարկ է: Ընդ որում, անհատ ձեռ-
նարկատերերի (ֆիզիկական անձանց) համար պարզեցված հարկը փո-
խարհում է ԱԱՀ-ին և եկամտահարկին, իսկ իրավաբանական անձանց
համար՝ ԱԱՀ-ին և շահութահարկին: Պարզեցված հարկի վճարողներ են
համարվում անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում մատա-
կարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման
ապրանքաշրջանառության գումարը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 30
մլն դրամը: Այս սահմանափակումը չի տարածվում խանութների,
առևտրական կրպակների, տաղավարների միջոցով առևտրային գործու-
նեության վրա: Պարզեցված հարկման ձևին անցնելու համար հարկատու
պետք է դիմում՝ հայտարարագիր ներկայացնի հարկային տեսչությանը՝
տվյալ տարվա հունվարի 1-25-ը: Հարկով հարկվող օբյեկտը համարվում է
հաշվետու ժամանակաշրջանում պարզեցված հարկ վճարողի կողմից մա-
տակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների ապրան-
քաշրջանառությունը՝ հետևյալ դրույքաչափերով.

- մինչև 30 մլն դրամի նկատմամբ՝ 5 %,
 - 30 մլն դրամը գերազանցող գումարի նկատմամբ՝ 7 տոկոս:
- Արտադրանքի իրացման շրջանառության հաշվով պարզեցված հար-
կը հաշվառվում է հետևյալ դրույքաչափերով.
- մինչև 30 մլն դրամի նկատմամբ՝ 8 %,
 - 30 մլն դրամը գերազանցող գումարի նկատմամբ՝ 13 տոկոս:

1. ՀՀ հարկային օրենքները, Երևան, 2002:

Հարկ վճարողները պարզեցված հարկի գումարի հաշվարկումը կա-
տարում են ինքնուրույն, յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով և
սահմանված դրույքաչափերով: Հաշվետու ժամանակաշրջանում հաշ-
վարկված պարզեցված հարկի գումարը նվազեցվում է տվյալ ժամանա-
կաշրջանում ձեռքբերված ապրանքների, ծառայությունների, ինչպես
նաև աշխատանքի վարձատրության համար կատարված և փաստաթղ-
թերով հիմնավորված ծախսերը (ներառյալ անուղղակի հարկերը): Պար-
զեցված հարկ վճարողները մինչև հաշվետու ժամանակաշրջանի հաջոր-
դող ամսվա 25-ը հարկային տեսչություն են ներկայացնում հարկի հաշ-
վարկը՝ սահմանված հաշվետվության ձևով: Պարզեցված հարկ վճարող-
ների համար պահպանվում է գույքահարկի, հողի հարկի վճարման, աշ-
խատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից հարկերի հաշ-
վարկման և վճարման, մաքսային կետում զանձվող ԱԱՀ-ի, ակցիզային
հարկի և այլ պարտադիր վճարումների հաշվարկման ու վճարման կարգը:

Նկատի ունենալով, որ «Ֆինանսների ընդհանուր տեսություն» (ֆի-
նանսներ) և «Ձեռնարկությունների ֆինանսներ» դասընթացներն ուսում-
նասիրող ուսանողները ուսումնական ծրագրով մասնակցում են «Հարկեր
և մաքսեր» դասընթացը, ապա չենք անդրադառնում գործնական հաշ-
վարկների կարգին: Մյուս կողմից, նկատի է առնվում, որ հարկային եկա-
մուտները ֆինանսներ են և կազմում են երկրի պետբյուջեի եկամուտների
գերակշռող մասը:

2000թ. պարզեցված հարկի անցած են եղել 2100 տնտեսավարող սու-
բյեկտներ, որոնք պետբյուջե են մուծել պարզեցված հարկի գծով 2 մլրդ
դրամ: 2004թ. այդ սուբյեկտների թիվը հասել է 20 հազարի, մինչդեռ պար-
զեցված հարկի գծով պետբյուջե է մուտքագրվել ընդամենը 3-4 անգամ ա-
վելի գումար: Այսպիսով, պարզեցված հարկով հարկվող սուբյեկտների
թիվը ավելացել է 5-7 անգամ, մինչդեռ հարկի չափն ավելացել է 3-4 ան-
գամ, այսինքն՝ 1.7-2 անգամ պակաս:

Ելնելով այդ վիճակից, ՀՀ հարկային պետական ծառայության նախա-
ձեռնությամբ 2004թ. դեկտեմբերի սկզբին ԱԺ է ներկայացվել «Պարզեցված
հարկի մասին» օրենքի նախագիծ՝ նրանում փոփոխություններ կատարելու
վերաբերյալ: Ըստ այդ փոփոխության, որն ընդունվել է Ազգային ժողովի
կողմից և կիրառվելու է 2005թ. հունվարից, պարզեցված հարկով չեն կարող
հարկվել մի շարք ոլորտների տնտեսավարող սուբյեկտներ (լեռնահանքա-
յին արդյունաբերության, էներգահամակարգի՝ արտադրող և բաշխող, ձեռ-
նարկությունները և կապիտալ շինարարության կազմակերպությունները):

Ըստ մյուս փոփոխության, հարկային պետական ծառայությանը իրավունք է վերապահված, որ մեկ անձի անունով մի քանի տնտեսավարող սուբյեկտներ լինելու դեպքում (և իրոք կան), հաշվարկել հարկը նրանց ապրանքաշրջանառության ընդհանուր գումարից և ոչ թե առանձին-առանձին: Բացի այդ, թույլատրված է միասնական հարկադրույթի մեջ միավորել նաև այլ գործունեությանը զբաղվողների պարզեցված հարկը՝ բացի առևտրից և հարկվող չափը 7 %-ից իջեցնել 6 տոկոսի, որոնք ունեն ամսեկան մինչև 30 մլն դրամ ապրանքաշրջանառություն, իսկ եթե վերջինս կազմում է 30-50 մլն դրամ, ապա հարկման չափը դարձնել 13 տոկոս:

Հաստատագրված վճարումներ .- ՀՀ օրենքը՝ հաստատագրված վճարումների մասին Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. հուլիսի 7-ին և հետագա լրացումներ ու փոփոխություններ է կատարվել 2000-2001թվականներին:

Այդ օրենքը կայագավորում է գործունեության 19 տեսակների համար հաստատագրված վճարների հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է հարկը վճարողների շրջանակը, հարկի հաշվարկման և վճարման կարգը: Հաստատագրված վճարը վճարողների կողմից պետբյուջե վճարվող ԱԱՀ-ին կամ շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող պարտադիր հարկ է, որի չափը կախված չէ հարկատուի գործունեության արդյունքներից: Հետևաբար, ֆիզիկական անձանց համար հաստատագրված վճարը փոխարինում է ԱԱՀ-ին և եկամտահարկին, իսկ իրավաբանական անձանց համար՝ ԱԱՀ-ին և շահութահարկին: Հաստատագրված վճարի գումարի մեջ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունն ընդունվում է 60 %-ի չափով, բացառությամբ արտարժույթի փոխանակման կետերում արտարժույթի առք ու վաճառքի, արժույթային դիվերների (միջնորդների), վիճակախաղերի գործունեության տեսակները, որոնց համար ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունն ընդունվում է զրո տոկոս:

Հաստատագրված վճարի հարկվող օբյեկտները համարվում են գործունեության հետևյալ տեսակները.

- 30 քմ-ից ոչ ավելի առևտրական մակերես ունեցող խանութների, առևտրական կրպակների, տաղավարների միջոցով իրականացվող առևտրային գործունեությունը,
- առևտրի իրականացման վայրի կազմակերպումը,
- հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը,

1. ՀՀ հարկային օրենքները, Երևան, 2002:

- ավտոտրանսպորտային գործունեությունը,
 - վարսավիրանոցների մատուցման ծառայությունը,
 - լուսանկարչական, ավտոտեխսպասարկման կայանների, ավտոկանգառների գործունեությունը,
 - արդյունաբերական ձկնորսության գործունեությունը,
 - արտարժույթի առք ու վաճառքը,
 - խաղատների, համակարգչային խաղերի կազմակերպումը,
 - դրամական շահումով խաղային ավտոմատների (ինքնաշխատ սարքերի) շահագործումը,
 - տեսամագնիտոֆոնների և տեսաժապավենների վարձույթը,
 - վիճակախաղերի կազմակերպումը,
 - բաղնիքների և սաունաների (ցնցողարանների) կազմակերպումը,
 - ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեությունը:
- Ընդ որում, հարկման տվյալների նկատմամբ կիրառվում են ուղղիչ գործակիցներ՝ կախված օբյեկտի գտնվելու վայրից:

Հաստատագրված վճարի չափի որոշումն իրականացվում է վճարողների կողմից, ինքնուրույն, բացառությամբ իրավական այլ ակտերով սահմանված դեպքերի:

Հարկեր են համարվում նաև **մաքսավճարները և մաքսապորտքերը**, որոնց մասին օրենքների ամբողջությունը կոչվում է **մաքսային օրենսդրություն**: Համառոտակի անդրադառնանք նաև դրանց էությանը ու բնութագրին:

Մաքսավճարներ .- ՀՀ օրենքը՝ մաքսավճարի մասին ընդունվել է Ազգային ժողովի կողմից՝ 1998թ. դեկտեմբերի 28-ին: Այդ օրենքով սահմանվում է մաքսավճար վճարողների շրջանակը, մաքսավճարի չափը, հաշվարկման և վճարման կարգը: Մաքսավճարը պետբյուջե վճարվող պարտադիր վճար է, որը սահմանվում է ապրանքների, այդ թվում՝ արժույթի, արտարժույթի արտահանման և ներմուծման դեպքում: Մաքսավճարը վճարվում է մաքսային ձևակերպումների իրականացման (բացառությամբ բեռների փոխադրման գործառնություններից) համար և գանձվում է 3500 դրամ մաքսավճար: Բեռնափոխադրումների համար մաքսավճարը գանձվում է.

- մինչև մեկ տոննա կշռով ապրանքների մաքսային հսկողության համար մեկ հազար դրամ,
- մեկ տոննայից ավելի յուրաքանչյուր լրացուցիչ կամ ոչ լրիվ տոննա-

1. ՀՀ օրենքը մաքսավճարի մասին, Երևան, 1999:

յի համար՝ 300 դրամ:

Մաքսային մարմինների կողմից սահմանված տեղերից ավելի ապրանքների մաքսային ձևակերպումների կատարման համար մաքսավճարը գանձվում է սահմանված դրույքաչափերի կրկնապատիկի չափով: Մաքսային մարմինների կողմից փաստաթղթերի հաշվառման ռեեստրների (ձևերի) (Invaive – հաշիվ-ապրանքագիր) համար գանձվում է մեկ հազար դրամ մաքսավճար:

ՀՀ տարածքով ապրանքների մաքսային ուղեկցման համար յուրաքանչյուր հարյուր կմ-ի համար գանձվում է 10 հազար դրամ մաքսավճար: Մաքսային մարմինների կողմից ապրանքների պահպանման համար մքսավճարը գանձվում է.

- մինչև մեկ տոննայի համար՝ օրական 1000 դրամ, բայց ոչ ավելի դրանց մաքսային արժեքի 0.01 տոկոսից,

- մեկ տոննայից ավելի յուրաքանչյուր լրացուցիչ կամ ոչ լրիվ տոննայի համար՝ օրական 1000 դրամ, բայց ոչ ավելի դրանց մաքսային արժեքի 0.01 տոկոսից:

Փոխադրամիջոցների մաքսային հսկողության համար մաքսավճարը գանձվում է.

- մինչև 10 նստատեղով մայրաքաղաքի ավտոմեքենաների համար՝ 2000 դրամ,

- այլ փոխադրամիջոցների համար՝ 5000 դրամ:

Մաքսավճարից ազատվում են՝

- այն ապրանքները, որոնք մուտք են գործում ՀՀ մաքսային տարածք մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում,

- ֆիզիկական անձանց (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի) կողմից ՀՀ մաքսային սահմանով փոխադրվող՝ օրենքով ուղեկցվող ապրանքները, բացառությամբ անհատական օգտագործման փոխադրամիջոցները,

- ֆիզիկական անձանց (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի) կողմից ներմուծվող ապրանքները՝ «Մաքսատուրքերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված չափերը (բաղաբացիները կարող են առանց մաքսատուրք վճարելու ՀՀ մաքսային տարածք որպես ուղեկցող բեռ ներմուծել 500\$ -ին համարժեք ընդհանուր արժեքով ապրանքներ, այդ թվում 50 կգ կշռով միատեսակ, բաժանելի բեռներ և այլն),

- օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավորապես արտահանվող և հետադարձ ներմուծվող մշակութային արժեքները,

- միջազգային կանոնավոր փոխադրումներ իրականացնող փոխադ-

րամիջոցները:

Սկսած 2000թ. փետրվարից՝ յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածի համար մաքսավճարի բացարձակ մեծությունը (դրամով) սահմանված չափերն ավելացվում են տոկոսային ձևով՝ նախորդ տարվա ընթացքում ազգային արժույթի փոխարժեքի փոփոխության չափով: Հետաքրքիր է, որ գնաճը որպես մակրոտնտեսական ցուցանիշ Արևմուտքի տնտեսապես զարգացած երկրներում դեռևս 1990թվականից կառավարությունների որոշմամբ ընդունված է բոլոր ոլորտներում: Այսպես, եթե գնաճը կազմել է 10 % և վարձու աշխատողի աշատավարձը՝ 50 հազար դրամ է, ապա վճարվում է 10 %-ով ավելի, այսինքն 55 հազար դրամ: Հետևապես, հաշվի է առնվում և ազգային արժույթի փոխարժեքի իջեցումը և ապրանքների գնաճը: Սակայն մեր երկրում դա բնակչությունից և իրավաբանական անձանցից գանձվում է արտերկրներից ապրանքներ ներմուծելիս, մինչդեռ աշխատողների եկամուտները (աշխատավարձ, ձեռնարկատիրական եկամուտ) և կենսաթոշակներն ու ընտանեկան նպաստները չեն բարձրացվում ազգային արժույթի փոխարժեքի անկման (սղաճ) կամ գնաճի դեպքում: Հարկ է, որ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը բնակչության եկամուտների և ծախսերի, ինչպես նաև աշխատողների աշխատավարձի աճը նախատեսելիս հաշվի առնի այդ հանգամանքը: Սակայն դրա համար նախ անհրաժեշտ է, որ կառավարությունը ընդունի որոշում՝ գնաճը որպես մակրոտնտեսական ցուցանիշ հաշվարկելու համար:

Մաքսավճարի վճարումն իրականացվում է համապատասխան ծառայությունների մատուցման պահից ետօրյա ժամկետում: Մաքսավճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարողից գանձվում է տույժ՝ ժամանակին չվճարած մաքսավճարի գումարի 0.1 տոկոսի չափով:

Մաքսատուրքեր .- Մաքսատուրքերի մասին ՀՀ օրենքը¹ ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1998թ. դեկտեմբերի 15-ին: Օրենքը սահմանում է մաքսատուրքերի հասկացությունը, դրանց տեսակները, դրույքաչափերը և կիրառման կարգը, ինչպես նաև ՀՀ մաքսային տարածք ներմուծվող և այդ տարածքից արտահանվող ապրանքները մաքսավճարով հարկելու կանոնները: Մաքսատուրքը պետք է վճարվող պարտադիր վճար է: Մինչև 6 ամիս ժամկետով մաքսատուրքը և դրա դրույքաչափը սահմա-

1. ՀՀ օրենքը մաքսատուրքերի մասին, Երևան, 1999:

նում է կառավարությունը, իսկ 6 ամսից ավելի կիրառելու դեպքում՝ սահմանվում է «Մաքսատուրքերի մասին» ՀՀ օրենքով: Մաքսատուրքերը սահմանվում են ըստ գործառնության բնույթի: Ընդ որում, օրենքով սահմանված են հետևյալ մաքսատուրքերը.

- ՀՀ մաքսային տարածքից արտահանվող ապրանքների համար,
- ՀՀ մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար,
- առանձին ապրանքներ սեզոնային կարգով ՀՀ մաքսային տարածք ներմուծելու և տարածքից արտահանելու համար:

Ըստ հաշվարկման մեթոդի, Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են հետևյալ մաքսատուրքերը.

- աղվալորային (արժեքային) մեթոդ, որի դեպքում մաքսատուրքը հաշվարկվում է տոկոսով՝ հարկման ենթակա ապրանքների մաքսային արժեքի նկատմամբ,
- յուրահատուկ (հաստատագրված) հաշվարկման մեթոդ, որի դեպքում մաքսատուրքը հաշվարկվում է կայուն սակագնով՝ հարկման ենթակա ապրանքների չափի միավորի համար,
- խառը մեթոդ, որի դեպքում մաքսատուրքի չափը հաշվարկվում է արժեքային և հաստատագրված մեթոդների զուգակցմամբ:

Գոյություն ունեն մաքսատուրքեր, որով պաշտպանվում է երկրի տնտեսության շահերը և տնտեսական գործունեությունը խրախուսելու նպատակով կիրառվում են հետևյալ մաքսատուրքերը.

- հակազդման մաքսատուրք՝ կիրառվում է ի պատասխան ՀՀ հանդեպ առանձին անձանց, պետությունների խտրական գործողությունների նկատմամբ,
- խրախուսական մաքսատուրք, որը կիրառվում է առանձին երկրներից ներմուծվող ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերը նվազեցնելու նպատակով:

Ներմուծվող ապրանքների մաքսատուրքերի հաշվարկումը կատարվում է մաքսային արժեքի հիման վրա՝ այն գումարի չափով, որով ձեռք է բերվել ապրանքը (ըստ ինվոյսի՝ ներմուծվող ապրանքի հաշվի-ապրանքագրի):

Մաքսային արժեքը ներառում է.

- արտահանման երկրում ապրանքների ձեռքբերման գինը,
- մինչև ՀՀ մաքսային սահմանը փոխադրելու համար կատարված բեռնման-բեռնաթափման և ապահովագրական ծախսերը,
- արտահանման երկրում ապրանքներ ձեռք բերելու և մինչև ՀՀ մաքսային տարածքը տեղափոխելու համար կատարված կոմիսիոն և բրոքեր-

ային (միջնորդային) ծախսերը,

• ներմուծվող ապրանքների արտադրության և արտահանման համար ներմուծողի կողմից մատակարարողին անհատույց կամ մասնակի հատուցմամբ:

Մաքսային արժեքի մեջ չեն ներառվում.

- արտահանման երկրում վճարված և վճարման փաստաթղթերում առանձին նշված ԱԱՀ-ի, ակցիզային շրջանառության և վաճառքի հարկերը,
- ՀՀ մաքսային տարածքում կատարված փոխադրման, բեռնման-բեռնաթափման, ապահովագրական, կոմիսիոն և բրոքերային ծախսերը:

Արտահանվող ապրանքների մաքսատուրքերի հաշվարկումը կատարվում է մաքսային արժեքի հիման վրա՝ այն գումարի, որը փաստացի վճարվել է դրանք ՀՀ մաքսային տարածքում ձեռք բերելու և մինչև ՀՀ մաքսային սահմանը տեղափոխելու համար: Մաքսային արժեքը որոշվում է հայտարարատուի (ներմուծողի կամ արտահանողի) կամ մաքսային մարմինների կողմից:

Մաքսատուրքերը վճարվում են գլոբալ տարբերակով (այսինքն՝ առանձին ապրանքներից մաքսատուրք չի գանձվում), մյուսներից ներմուծման դեպքում գանձվում է մաքսային արժեքի 10 %-ի չափով, իսկ արտահանման դեպքում ազատվում են մաքսատուրքից:

Մաքսատուրքի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարողից գանձվում է տույժ՝ ժամանակին չմուծված մաքսատուրքի գումարի 0.1 տոկոսի չափով:

Հայաստանի տնտեսության 29 բնագավառներում 2004թ. գործել են 207 խոշոր հարկատուներ: Որպես խոշոր հարկատուներ պետք է են մուծել 56.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 50.5 մլրդ դրամի փոխարեն: Դա կազմում է ամբողջ հարկային մուտքերի 70 տոկոսը: Խոշոր հարկատուներից են Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ-ն, «Գրանդ սան»-ը, Արմենտեյլ, «Հայկական երկաթգիծ» ՓԲԸ-ն և այլն:

Խոշոր են կոչվում այն հարկատուները, որոնց տարեկան ապրանքաշրջանառությունը կազմում է 100 մլն դրամ և բարձր, և մուծում են 10 մլն դրամ հարկեր:

ՀՀ կառավարությունը 2005թ. մշակում է հարկային նոր օրենսդրություն, որի հիմնական մասը մշակված է և ավարտելուց հետո կներկայացվի ԱԺ-ի քննարկմանը: Մասնավորապես, պարզեցված հարկման կարգը պետք է պարզեցվի: Պարզեցված հարկը, որ ֆիզիկական անձանց հաշվով փոխարինում է ԱԱՀ-ին և եկամտահարկին, իսկ իրավաբանական

անձանց հաշվով՝ ԱԱՀ-ին և շահութահարկին, պետք է կազմի հարկային մուտքերի 60-65%-ը, մինչդեռ, մեր երկրում այն կազմում է 2.5-2.8 տոկոսը: Շատ հարկատուներ նախընտրում են պարզեցված հարկման ձևը, իրենց ցուցանիշները հարմարեցնելով պարզեցված հարկով հարկման պայմաններին: «Փոքր ձեռներեցության մասին» ՀՀ օրենքի համաձայն, ըստ էության շատ սուբյեկտներ դարձել են պարզեցված հարկ վճարողներ: Հետևապես, ինչպես հայտարարել են ՀՀ ԿԱ Հարկային պետական ծառայությունում, անհրաժեշտ է սահմանափակել պարզեցված հարկման ձևով գործունեության տեսակները այն տնտեսավարող սուբյեկտների համար, որոնք գործում են մեծ բիզնեսում: ՀՀ ԿԱ Հարկային պետական ծառայության կողմից ներկայումս տնտեսավարող սուբյեկտների համար մշակվում է պահեստներում ապրանքի մնացորդի չափանիշ (գործող կարգով նրա չափը պարզեցված հարկով հարկման դեպքում նախատեսված է մինչև 15 մլն դրամ (տարեկան ապրանքաշրջանառությունը մինչև 50 մլն դրամ) ըստ լիբերալ մեխանիզմի: Հետևապես, եթե տնտեսավարող սուբյեկտի պահեստում ապրանքի մնացորդը գերազանցում է 15 մլն դրամը և առևտրի ապրանքաշրջանառությունը՝ 50 մլն դրամից, ապա պետք է հարկվի հարկման ընդհանուր կարգով:

3.9. Արթուր Լաֆերի կորը՝ հարկադրույքների և պետբյուջեի եկամուտների փոխադարձ կապի վերաբերյալ

Տարբեր երկրներում սահմանվում են տարբեր տեսակի հարկեր, և հատկապես տարբեր չափի հարկադրույքներ: Ընդ որում, իշխանությունների կողմից պարբերաբար կատարելագործվում են հարկադրույքները, որոնք սահմանվում են տոկոսով եկամտի, կապիտալի չափից, ապրանքաշրջանառությունից կամ ուղղակի սահմանվում են դրույքաչափեր: Եթե վերջինիս մեծությունը սահմանվի բարձր, ապա նույն հարկատուների դեպքում հարկային եկամուտները, որով ձևավորվում է պետական բյուջեի եկամուտների զգալի մասը, ավելի շատ կլինեն և հակառակը: Մակայն գոյություն ունի ըստ հարկատեսակների նվազագույն և առավելագույն շեմ: Այսինքն, գոյություն ունի հարկադրույքի մի չափ, որից բարձրի դեպքում նվազում են պետբյուջեի եկամուտները, քանի որ հարկատուները խուսափում են բարձր հարկադրույքներից: Հետևապես, այդ դեպքում երկրի տնտեսության մեջ մեծանում է ստվերային տնտեսությունը: Այսպես, միջազգային չափանիշներով ԱԱՀ-ն սահմանվում է ապրանքաշրջանառության (ապրանքի վաճառքից ստացված հասույթ) գումարի նվա-

զագույնը 10%-ի և առավելագույնը՝ 20 %-ի չափով (ՀՀ-ում այն սահմանված է 20 %, իսկ ՌԴ-ում՝ 2004թ. սեպտեմբեր ամսից՝ 18%-ի չափով): Սահմանվում է եկամտահարկի չհարկվող շեմ և եկամտահարկ աշխատավարձի 10-35%-ի չափով (ՀՀ-ում չհարկվող նվազագույն շեմը կազմում է 20 հազար դրամ, իսկ եկամտահարկը՝ 10-20 %): Գոյություն ունի հարկերի և նրանց դրույքների օպտիմալ (լավագույն) չափ, որը հարմար է և պետությանը, և հարկատուներին: Այդպիսի վերլուծություն է կատարել ամերիկյան գիտնական Արթուր Լաֆերը, որը տնտեսագիտության մեջ հայտնի է Ա. Լաֆերի կոր անվամբ:

Ըստ նրա, որոշակի կախվածություն կա պետական բյուջեի եկամուտների և հարկադրույքների միջև: Որքան բարձր են հարկադրույքները, այնքան բարձր են պետական բյուջեի եկամուտները: Մակայն կա մի սահման, որի դեպքում, երբ բարձրացնում են հարկադրույքները, ապա իջնում են պետական բյուջեի եկամուտները, քանի որ հարկատուները ստիպված թաքցնում են իրենց եկամուտների մի մասը՝ բարձրացնելով ստվերային տնտեսությունը (ինչպես հիմա Հայաստանում):

Ամերիկյան հայտնի գիտնական Արթուր Լաֆերը մշակել է առաջարկի տեսություն: Ըստ նրա, առավել ցածր հարկադրույքները լրիվ համատեղելի են աճող հարկային մուտքերի հետ: Հարկերի կրճատումը չպետք է հանգեցնի ինֆլյացիոն (արժեզրկումային) դեֆիցիտի:

Լաֆերի կորը նկարագրում է կապը՝ հարկադրույքների և հարկային մուտքերի (պետբյուջեի եկամուտների) միջև: Հիմնական գաղափարը հանգում է նրան, որ հարկադրույքների բարձրացմանը զուգընթաց (0-ից 100 %), հարկային մուտքերը աճում են 0-ից մինչև առավելագույն չափի (M – մաքսիմում՝ առավելագույն), իջնում է նվազագույնի՝ մինչև 0-ի: Հարկային մուտքերը իջնում են որոշ կետից հետո, քանի որ հարկերի բարձր դրույքները՝ ըստ առաջարկի, այսինքն հարկային բազան (հենքը), (ազգային արտադրանքի թողարկումը՝ ՀՆԱ-ն) կրճատվում է: Երբ հարկադրույքը հասնում է բարձր կետի (100%), հարկային մուտքերը կրճատվում են առավելագույն չափով՝ հարկային մուտքերը կրճատվում են մինչև 0-ի, երբ հարկադրույքը հասնում է 100%), քանի որ 100 %-անոց հարկային դրույքաչափին ունեն փոխհատուցման բնույթ և կրճատում է արտադրությունը: Իր հերթին, 100 %-անոց եկամտահարկը, որը դրված է հարկային բազայում հավասար է 0-ի և բերում է գրոյական հարկային մուտքեր: Պրոֆեսոր Արթուր Լաֆերի գաղափարը կայանում է նրանում, որ հարկադրույքը գտնվելով մի կետում (N), որը խիստ բարձր է, որ արգելակել

է արտադրության զարգացումն այնքան, որ հարկային մուտքերը ցածր են լինում առավելագույնից (M):


Եթե երկրի տնտեսությունը իր զարգացման մակարդակով գտնվում է N կետում, ապա հարկադրույքի իջեցումը համատեղելի է կայուն հարկային մուտքերի հետ: Ըստ գծագրի, հարկադրույքի իջեցման դեպքում, անցում է կատարվում N կետից L-ը, իսկ կառավարությունը կհավաքի հարկային մուտքեր՝ անփոփոխ չափով: Լաֆերի տրամաբանական դատողությունը կայանում է նրանում, որ ավելի փոքր հարկադրույքները կարող են ստեղծել խթանում աշխատանքում, խնայողություններում և ներդրումներում, ինովացիայում և գործնական ռիսկի ընդունման գործում, որի դեպքում աճում է ՀՆԱ-ն և ԱԵ-ն: Այդպիսի հարկային բազան կարող է պահպանվել նախկին մակարդակի վրա՝ նույնիսկ, եթե հատկացումները ցածր են: Ապրանքի առաջարկի կողմնակիցները, ինչպես Լաֆերի տեսությունն է, գտնում են, որ պետությունը դեֆիցիտը կարող է ծածկվել նաև երկու այլ աղբյուրներով,

առաջին, հարկային վճարումները ապահովելու դեպքում, երբ ստվերային տնտեսությունից սուբյեկտներին բերում են իրավական դաշտ: Բարձր հարկադրույքները հարկատուներին ստիպում են խուսափել հարկերից: Հարկադրույքների իջեցումը կնպաստի հարկերի վճարմանը և ստվերային տնտեսության մասշտաբների փոքրացմանը,

երկրորդ, տնտեսական աճի խթանումը և զբաղվածության բարձրացումը նպաստում է պետությունից եկամուտների ավելացմանը՝ նույնիսկ ցածր հարկադրույքների դեպքում:

Արթուր Լաֆերի կորը ցույց տանք մաթեմատիկական կոորդինատների առանցքի վրա. (գծապատկեր 1):

Գծապատկեր 1 Արթուր Լաֆերի կորը



Ըստ Արթուր Լաֆերի կորի, մինչև M կետը առավելագույն չափի է լինում հարկային մուտքերը: Սակայն հարկադրույքների հետագա բարձրացումը չի խթանի տնտեսական աճին, որի հետևանքով կկրճատվի ազգային եկամուտը: Դրանից հետևում է, որ O հարկադրույքի դեպքում հարկերի իջեցումը կհանգեցնի հարկային մուտքերի աճին: Գործնականում դժվար է պատասխանել այն հարցին, թե փաստացի ինչպիսի՞ հարկադրույքի դեպքում կսկսի հարկային մուտքերի իջեցումը:

Հարկերի իջեցումը ԱՄՆ-ում տեղի է ունեցել նախագահ Ռոնալդ Ռեյգանի ժամանակ, որի մասին օրենքը ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից ընդունվել է 1981 թվականին: ԱՄՆ-ում փոխվել է «Հարկերի մասին» օրենքը՝ նպատակ ունենալով երկրի տնտեսության առողջացումը (Sonation - առողջացում): 1986թ. ընդունվել է Tax Reform Act օրենքը (TRA): Ըստ այդ օրենքի 25 տոկոսով կրճատվել է եկամտահարկը:

Ըստ Ա. Լաֆերի Առաջարկի տեսության, աշխատանքի արտադրողականության ցածր մակարդակը և արտադրանքի իրական աճը հանդիսանում է Ստագֆլյացիայի (լճացման) հիմնական պատճառ (1970թ.): Առաջարկի տեսության կողմնակիցները գտնում են, որ քեյնզյան տեսությունը՝ շուկայական տնտեսության պետական կարգավորման մասին, չի կարող պայքարել ստագֆլյացիայի դեմ, քանի որ այդ տեսության կենտրոնում է համընդհանուր առաջարկը (ԸԱ):¹

Երբ Ջոն Բեյնզը 1930-1936 թթ. գրել է «Զբաղվածության, շահույթի և փողի ընդհանուր տեսությունը» գիրքը, որում նկարագրել է «Մեծ լճացումը», նա ուշադրություն է դարձրել գործազրկության հիմնախնդիրներին և տնտեսական աճին: Ըստ նրա, գործազրկության պարբերաշրջանի տնտեսական անկումը ուղեկցվում է պետական բյուջեի դեֆիցիտով, քանի որ ծախսերն ավելանում են:

1. P. Макконелл, Л. Брю-экономика (перевод с англ.), М.

1. Վ. Ա. Վարդանյան – Ֆինանսական մեներջման, ուսումնական ձեռնարկ, Երևան, 1999 էջ 176-182:

**ՉԼՈՒԽ 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ
(ՊԼԱՆՎՈՐՈՒՄ)
ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ**

**4.1 Ֆինանսական ծրագրավորումը (պլանավորումը) և
ֆինանսավորումը շուկայական տնտեսության պայմաններում**

Ֆինանսական ծրագրավորումն , այսինքն պլանավորումը հավասարակշռվածության ապահովման գործընթաց է՝ ֆինանսական պաշարների և նրանց բաշխման (վերաբաշխման) շրջանակներում: Ընդ որում, տնտեսավարող սուբյեկտների հաշվով կատարվում է ֆինանսների՝ եկամուտների և ծախսերի բաշխում, իսկ մակրոտնտեսական , այսինքն պետական մակարդակով՝ եկամուտների և ծախսերի վերաբաշխում:

Ֆինանսների ծրագրավորումը շուկայական տնտեսության պայմաններում ունեն էական դեր: Ֆինանսները բաշխելու կամ վերաբաշխելու համար հարկ է կազմել ֆինանսական պլան, որով նախատեսվում է տարեկան եկամուտներն՝ ըստ աղբյուրների և ծախսերն՝ ըստ ուղղությունների, այսինքն կազմվում է եկամուտների և ծախսերի հաշվեկշիռ: Պլանավորումն իրականացվում է ըստ բնույթի ֆինանսների գոյացման մակարդակի՝ պետական, տեղական (ինքնակառավարման մարմինների), տնտեսավարող սուբյեկտների և տնային տնտեսությունների (բնակչության) ֆինանսների հաշվով: Ֆինանսական պլանավորումն ընդգրկում է նախատեսվող սոցիալ-տնտեսական ծրագրերի (պետական և տեղական) և բիզնես-ծրագրի՝ տնտեսավարող սուբյեկտների մակարդակով համալիր միջոցառումները և նրանց կենսագործումը կյանքում: Ֆինանսական պլանավորումն իրենից ներկայացնում է նաև ֆինանսական միջոցառումների կոնկրետ ծրագիր, որը մշակվում է կառավարման տարբեր մակարդակների տնտեսագետ-ֆինանսիստների կողմից: Որպեսզի աշխատողների այդ գործունեությունը լինի արդյունավետ, նախօրոք երկրի ֆինանսական մարմինների ու հանձնա ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվում է ֆինանսական պլանի մեթոդոլոգիան (գործողությունների ծրագիրը՝ ըստ ֆինանսական, այդ թվում հարկային, մաքսային, բյուջետային քաղաքականության) և մեթոդիկա (ֆինանսական պլանի մշակման կարգ): Սակայն, բոլոր դեպքերում, ֆինանսական պլանավորմանը (ծրագրավորմանը) պետք է նախորդի կանխատեսումը: Կանխատեսումը առավել քան կարևոր է ֆինանսների բնագավառում, ըստ որի կանխատեսվում է մակրոտնտեսական ցուցանիշները՝ երկրի

տնտեսության սոցիալ-տնտեսական ծրագիրը կամ տնտեսավարող սուբյեկտների առումով միկրոտնտեսական ցուցանիշները՝ ըստ բիզնես-ծրագրի: Կանխատեսման միջոցով ըստ մակարդակների հաշվի է առնվում ՀՆԱ-ի աճը, փողի արժեզրկման (սղածի) չափը, գնաճը, համախառն արտադրանքի, համախոն եկամտի, շահույթի, ապրանքների գների և բնակչությանը մատուցվող ծառայությունների սակագների, ինչպես նաև բնակչության եկամուտների ու ծախսերի աճը և այլ ցուցանիշները: Կանխատեսումը (հունարեն՝ prognosis) ֆինանսների առումով նշանակում է պետական կառավարման և տնտեսավարող սուբյեկտների մակարդակով մշակել ֆինանսական վիճակի փոփոխությունը տվյալ տարում և հեռանկարում: Կանխատեսումը ծրագրավորումից տարբերվում է նրանով, որ կանխատեսումով խնդիր չի դրվում ըստ կանխատեսվող ցուցանիշների նրա գործնական ներդրման ուղղությամբ, մինչդեռ ծրագրավորված ցուցանիշների առումով խնդիր է դրվում գործնականում կենսագործել այն: Ֆինանսական պլանավորումը կատարվում է որոշակի մեթոդներով: Պլանավորման մեթոդները կոնկրետ եղանակ է, ցուցանիշների հաշվարկման հմտություններ, որոնք հիմնված են մաթեմատիկական տրամաբանության վրա: Ֆինանսական ցուցանիշների պլանավորման ժամանակ կարող են օգտագործվել հետևյալ մեթոդները.

- նորմատիվային՝ հիմնված հիմնական նորմաների (չափ) վրա,
- հաշվարկա-անալիտիկ (վերլուծական),
- հաշվեկշռային մեթոդ,
- նախատեսվող որոշումների օպտիմալացում (համահարթեցում),
- տնտեսագիտական-մաթեմատիկական մոդելավորում:

Այժմ համառոտակի պարզաբանենք ֆինանսական պլանավորման նշված մեթոդների էությունը:

Ֆինանսական ցուցանիշների պլանավորման նորմատիվային մեթոդի էությունը կայանում է նրանում, որ սպառման նորմաների և տեխնիկատնտեսական նորմատիվների (չափանիշների) հիման վրա հաշվարկվում է ֆինանսական պաշարների և նրա աղբյուրների տարեկան պահանջը:

Ֆինանսական պլանավորման նորմատիվային մեթոդը կիրառվում է պետական, տեղական և տնտեսավարող սուբյեկտների ֆինանսների մակարդակով:

Ֆինանսական պլանավորման ընթացքում կիրառվում են մի շարք նորմաների և նորմատիվների, այսինքն՝ չափանիշների համակարգ: Դրանք ներառում են.

- հանրապետական չափանիշները,
- ճյուղային չափերը և չափանիշները,
- տնտեսավարող սուբյեկտների հումք և նյութերի սպառման չափերը,
- տեղական չափանիշները:

Հանրապետական չափերը և չափանիշները միասնական են և կիրառվում են երկրի ամբողջ տարածքում: Դրանց մեջ ներառվում են հարկադրությունները՝ ըստ հարկատեսակների, մաքսավճարների, մաքսատուրքերի և պետական տուրքերի չափը, սոցիալական վճարները, գործուղման ծախսերի, հիմնական միջոցների (ոչ ընթացիկ մաշվող նյութական ակտիվներ) մաշվածության չափը և այլն: Ծյուղային չափերը և չափանիշները օգուագործվում են երկրի տնտեսության տվյալ ճյուղի տնտեսավարող սուբյեկտներում (հումք և նյութերի սպառման չափերը, շահույթի բաշխման չափը՝ տոկոսով ըստ հիմնադրամների, պաշարների պահանջի չափերը և այլն):

Պետական ֆինանսների մակարդակով որպես չափանիշներ համարվում են հարկադրությունները՝ ըստ հարկատեսակների, մաքսավճարների, մաքսատուրքերի և պետական տուրքերի չափը, ոչ հարկային մուտքերի գծով չափանիշները (վարձակալական վճարի և այլ ծառայությունների հաշվով), միջազգային ֆինանսական կազմակերպությունների, դոնոր երկրների տրանսֆերտների (ֆինանսական օգնության) չափը, տեղական կապիտալի գործառնություններից եկամտի չափը: Ընդ որում, բացի դրույքաչափերից, հարկ է իմանալ տնտեսավարող սուբյեկտների թիվը՝ (առ 1-ը հոկտեմբերի 2004թ. ՀՀ-ում գործում են 51240 սուբյեկտներ), նրանց հասույթի և շահույթի չափը, հողի չափը, գույքի արժեքը և այլ ցուցանիշներ, որպեսզի հնարավոր լինի հաշվարկել հարկային մուտքերը: Մաքսավճարների և մաքսատուրքերի բացարձակ չափը որոշելու համար հաշվի է առնվում նախորդ տարվա հաշվով ապրանքների արտահանման, ներմուծման ծավալները և նախատեսված տնտեսական աճը: Պաշտոնական տրանսֆերտների չափը որոշվում է միջպետական պայմանագրերով: Պետական կապիտալի գործառնություններից եկամուտների չափը նախատեսվում է հաշվի առնելով նախորդ տարվա ցուցանիշները, տնտեսական աճը, պետական բյուջեի եկամուտների աճը, պետական վարկի տուկոսադրույքը, պետական պարտատոմսերի թողարկման ծավալները, ժամկետները և տրվող եկամտի չափը:

Պետական մակարդակով ֆինանսական պլանավորում, նշանակում է ֆինանսական գլխավոր փաստաթղթի, այսինքն ֆինանսական պլանի կազմում: Այն իր արտացոլումն է գտնում պետական բյուջեում: Պետբյու-


ջեն երկկողմանի աղյուսակ է, որի ձախ կողմում նախատեսվում են եկամուտներն՝ ըստ աղբյուրների, իսկ աջ կողմում՝ ծախսերն ըստ ուղղությունների: Պետբյուջեի ծախսերի չափը նախատեսվում են՝ հաշվի առնելով աշխատավարձի ամսեկան պաշտոնային դրույքները, գործուղման ծախսերի, կենսաթոշակների- ընտանեկան, գործազրկության նպաստների և սոցիալական վճարների չափերը, ինչպես նաև դրանց համապատասխան պետական կառավարման՝ օրենսդիր և գործադիր մարմիններում աշխատողների թիվը ըստ պաշտոնների, կենսաթոշակառուների (549 հազար մարդ), ընտանեկան նպաստ ստացողների (139 հազար ընտանիք), պաշտոնական գործազուրկների թիվը (ըստ ՀՀ ԱՎԾ-ի տվյալների 2004թ. 144 հազար մարդ) և այլ ցուցանիշներ: Նույն սկզբունքով նախատեսվում է տեղական բյուջեն՝ ըստ եկամուտների աղբյուրների և ծախսերի ուղղությունների: Ընդ որում, ամեն մի նախարարություն և պետական ծառայություն նախօրոք ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանն է ներկայացնում իր հաշվարկը, որն էլ ճշտում և ամփոփում է, ապա ներկայացնում կառավարության նիստի քննարկմանը:

Ինչ վերաբերվում է տնտեսավարող սուբյեկտներում ֆինանսական պլանավորման հարցերին, ապա նրանց բիզնես-ծրագրերի հիման վրա, և ելնելով հումք ու նյութերի սպառման չափերից, գործուղման ծախսերի չափերից, վարչակառավարչական աշխատողների՝ ըստ պաշտոնների սահմանված ամսեկան պաշտոնական դրույքների, արտադրանքի միավորի վարձաչափից, ժամավճարի վարձաչափից և այլ չափանիշների ու արտադրանքի արտադրության, նրա ինքնարժեքի, ըստ ուղղությունների ապրանքի իրացման ծավալների հիման վրա կազմվում է ֆինանսական պլանը: Այն իրենից ներկայացնում է բիզնես-ծրագրի բաժիններից մեկը:¹

Հաշվարկա-վերլուծական մեթոդի էությունը կայանում է նրանում, որ ֆինանսական ցուցանիշների վերլուծության հիման վրա, այն ընդունվում է որպես հիմք և կիրառվում ինդեքս (Indexe -համաթիվ)՝ ըստ որի հաշվարկվում է ցուցանիշի մեծության փոփոխության չափը (ավելացում կամ նվազեցում): Հաշվարկա-վերլուծական մեթոդը կիրառվում է այն դեպքերում, երբ բացակայում են տեխնիկա-տնտեսական չափանիշները, իսկ ֆինանսական ցուցանիշների միջև փոխադարձ կապը կարող է սահմանվել անուղղակի կարգով՝ դիմանիկայում՝ ըստ տարիների վերլուծության հիման վրա: Այդ մեթոդի հիմքում դրվում է փորձնական գնահատականը՝ ըստ հետևյալ ուրվագծի (Ուրվագիծ 9):

1.Վ. Ա. Վարդանյան – Ֆինանսական մեներջման, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 1999, էջ 277-290:

Հաշվարկա-վերլուծական մեթոդի փորձնական գնահատման ուրվագիծ



Հաշվարկա-վերլուծական մեթոդը կիրառվում է եկամուտների, շահույթի գումարը նախատեսելու համար, թեև շուկայական տնտեսության պայմաններում գոյություն ունի շահույթի նախատեսման նաև ավելի հիմնավոր մեթոդ, ինչպիսին է ապրանքի իրացման ծավալի որոշումը՝ ըստ անվճարաբերության, որին կանդրադառնանք «Ձեռնարկությունների տնտեսագիտություն» դասընթացում:

Ֆինանսական պլանավորման ժամանակ կիրառվում է նաև հաշվեկշռային մեթոդը: Ֆինանսական ցուցանիշների պլանավորման հաշվեկշռային մեթոդի էությունը կայանում է նրանում, որ հաշվեկշռների կազմման միջոցով հասնում են ֆինանսական պաշարների և նրանց պահանջի միջև հավասարակշռված կապի: Հաշվեկշռային մեթոդը գործնականում կիրառվում է շահույթի քաշխման և այլ ֆինանսական պաշարների պլանավորման ժամանակ, կուտակման և սպառման հիմնադրամների նախատեսման դեպքում: Ֆինանսական հավասարակշռված կապը արտահայտվում է «մնացորդ + մուտքեր = Ծախսեր + մնացորդ» ձևով:

Ֆինանսական պլանավորման մյուս մեթոդը համարվում է նախատեսվող որոշումների օպտիմալացումը, այսինքն՝ համահարթեցումը: Այդ մեթոդի դեպքում մշակվում է մի մի քանի տարբերակներ և նրանցից ընտրվում է առավել արդյունավետը: Այս դեպքում կարող է կիրառվել ընտրության տարբեր չափորոշիչներ՝ նվազագույն ծախսեր, նվազագույն շահույթ, նվազագույն կապիտալ ներդրում, նվազագույն ընթացիկ ծախսեր, առավելագույն եկամուտներ՝ մեկ միավոր արտադրանքի հաշվով, առավելագույն շահույթ՝ մեկ միավոր ներդրված կապիտալի հաշվով:

Ֆինանսական պլանավորման համահարթեցման մեթոդի ժամանակ օգտագործվում է հետևյալ բանաձևը.

$C_s + Y_0 \cdot U_q = \min$ - նվազագույն, այսինքն՝ ընթացիկ ծախսերի և կապիտալ ներդրումների ու նրա արդյունավետության գործակցի արտադրյալը պետք է լինի նվազագույնը, որպեսզի ներդրված ծախսերը փոխհատուցվեն կարճ ժամանակամիջոցում:

Ներկա պայմաններում կապիտալ ներդրումների արդյունավետության գործակիցը ընդունվում է 0.12-0.15-ի սահմաններում, այսինքն ներդրումների փոխհատուցման ժամկետը կկազմի 6.6-8.5 տարի (փոխհատուցման ժամկետը՝ 1 : 0.15 կամ 1 : 0.12): Տրամաբանական է, որ որքան կարճ ժամկետում փոխհատուցվեն կապիտալ ներդրումները, այնքան արդյունավետ կօգտագործվեն ներդրումների կողմից:


Ֆինանսական պլանավորման մյուս մեթոդը հանդիսանում է տնտեսագիտական-մաթեմատիկական մոդելավորումը: Այդ մեթոդի էությունը կայանում է նրանում, որ գտնվում է քանակական կապ՝ ֆինանսական ցուցանիշների և նրանց վրա ազդող հիմնական գործոնների միջև: Այդ կապը արտահայտվում է տնտեսագիտական-մաթեմատիկական մոդելների միջոցով: Տնտեսագիտական-մաթեմատիկական մոդելն իրենից ներկայացնում է տնտեսական գործընթացների ճշգրիտ մաթեմատիկական նկարագրումը, այսինքն՝ այն գործոնների նկարագրումը, որոնք բնութագրում են տվյալ տնտեսական երևույթի գծով օրինաչափությունները՝ մաթեմատիկական հավասարումների, անհավասարությունների, աղյուսակների, գրաֆիկների՝ ժամկետայինների և այլնի օգնությամբ: Ընդ որում, մաթեմատիկական մոդելի մեջ ներառվում են տնտեսական երևույթների վրա ազդող միայն հիմնական գործոնները:

Տնտեսագիտական-մաթեմատիկական մոդելն արտահայտվում է հետևյալ ֆունկցիոնալ հավասարումով.

- $y = f(x)$, որտեղ.
- y -ը՝ ֆինանսական ցուցանիշն է,
- x -ը՝ ազդող հիմնական գործոնը,
- f -ը՝ մաթեմատիկական ֆունկցիան՝ կախվածությունը:

Այս մեթոդի դեպքում օրինաչափությունները ձևակերպում են որպես ալգորիթմ՝ ըստ հետևյալ ուրվագծի (Ուրվագիծ 10):

Ֆինանսական ցուցանիշների նախատեսման
ալգորիթմի ուրվագիծը



Ֆինանսական պլանը (պետական բյուջե, տեղական բյուջե, տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական պլան) հանդիսանում է որպես եկամուտների և ծախսերի հաշվեկշիռ: Այն մշակվում է պետական մակարդակով որպես պետական կամ տեղական բյուջե և տնտեսավարող սուբյեկտների մակարդակով որպես եկամուտների և ծախսերի հաշվեկշիռ: Ֆինանսական պլանավորումը համարվում է ֆինանսական պաշարների ծավալների և նրանց բաշխման միջոց (պետական, տեղական բյուջեների և տնտեսավարող սուբյեկտների մակարդակով) հավասարակշռվածության ապահովումը: Որպես ֆինանսական պլանավորման օբյեկտ հանդես են գալիս ֆինանսական պաշարները և ֆինանսական գործունեության վերջնական արդյունքը՝ շահույթը: Շահույթի բաշխումը (պետական մակարդակով Ազգային եկամտի վերաբաշխումը) արտացոլվում է ֆինանսական պլանում:

Ֆինանսական պլանի մշակման հիմնական նպատակը հանդիսանում է եկամուտների փոխկապակցվածության ապահովումն անհրաժեշտ ծախսերի հետ: Ընդ որում, եկամուտները ծախսերի նկատմամբ գերազանցելու դեպքում հավելուրդային գումարը նպատակաուղղվում է որպես պահուստ, իսկ ծախսերը եկամուտների նկատմամբ գերազանցելու դեպքում որոշվում է միջոցների պակասը և նրա ծածկման աղբյուրները: Անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցները կարող են ստացվել արժեթղթերի (բաժնետոմսեր, պետական պարտատոմսեր, փոխառություններ) թողարկելուց և տեղաբաշխելուց կամ ստացվող վարկերի, փոխառությունների հաշվին: Եթե լրացուցիչ ֆինանսական միջոցների չափը նախատեսվել է, ապա այն մտցվում է ֆինանսական պլանի եկամտային, իսկ նրանց վերադարձը՝ ծախսային մասի մեջ: Ֆինանսական պլանը, սովորաբար, կազմվում է տարեկան, և ըստ եռամսյակների կտրվածքով:

Ֆինանսների պլանավորումն ապահովվում է եկամուտների և ծախսե-

րի հաշվեկշռի կազմման և նրա կառավարման միջոցով, տարբեր աղբյուրների հաշվին ֆինանսական պաշարների մուտքով, ինչպես նաև միջոցների օգտագործման կարգավորման միջոցով:

Ֆինանսական պլանի հիման վրա իրականացվում է ֆինանսավորումը: Ֆինանսավորումը իրենից ներկայացնում է ֆինանսական միջոցների հատկացում: Ֆինանսավորումը ևս կատարվում է պետական, տեղական և տնտեսավարող սուբյեկտների մակարդակով:

Պետական մակարդակով ֆինանսավորում նշանակում է միջոցների հատկացում՝ օրենսդիր, գործադիր մարմիններին, նրանց բյուջետային կազմակերպություններին և տեղական ինքնակառավարմա՞ մարմիններին (գյուղական և քաղաքային համայնքներին): Պետական մակարդակով դա կատարվում է պետբյուջեի, տեղական բյուջեի եկամուտների հաշվին՝ ծախսերի հատկացումներն ըստ ուղղությունների: Ընդ որում, պետական բյուջեի եկամուտների հաշվին ֆինանսավորումը կատարվում է ոչ միայն իշխանության և կառավարության ու նրանց ենթակա նախարարություններին և բյուջետային կազմակերպություններին, այլև երկրի պաշտպանությանը, ազգային անվտանգությունը, ոստիկանությանը և դատախիզական համակարգին: Սակայն պետբյուջեի եկամուտների հաշվին ֆինանսավորվում է նաև երկրի սոցիալական ոլորտը (պետական կրթություն և գիտություն, առողջապահություն, մշակույթ և սպորտ, սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն): Երկրի սոցիալական ոլորտի համար արմատական նշանակություն ունի պետական ֆինանսավորումը: Ընդ որում, պետության համար կարևոր է ոչ միայն երկրի սոցիալական ոլորտի ֆինանսավորումը, այլև աշխատունակ բնակչության զբաղվածության խնդրի լուծումը, նրանց կենսամակարդակի աստիճանական բարձրացումը և աղքատության դեմ պայքարը: Այդ նպատակով երկրի 2005թ. պետական բյուջեն ունի ընդգծված սոցիալական ուղղվածություն:

Տնտեսավարող սուբյեկտների մակարդակով ֆինանսավորումը և վարկավորումը ֆինանսական մեթոդների և ձևերի համընդհանրությունն է, ֆինանսական միջոցների ապահովման պայմանները և սկզբունքները: Տնտեսավարող սուբյեկտները շուկայական տնտեսության պայմաններում աշխատում են առևտրային հաշվարկով, հետևապես ինքնափոխհատուցման և ինքնաֆինանսավորման սկզբունքով, որին կանոնադրաբար «Ձեռնարկությունների ֆինանսներ» բաժնում: Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսավարող սուբյեկտների առումով չի գործում դոտացիոն համակարգը, որը գործում էր նախկին հասարակարգում, այսինքն,

երբ նրանց կրած վնասները փոխհատուցվում էին պետական բյուջեի հատկացումների հաշվին: Հետևապես, շուկայական տնտեսության պայմաններում բոլոր տնտեսավարող սուբյեկտներն իրենց ֆինանսական գործունեությունը կազմակերպում են ինքնաֆինանսավորման և ժամանակավորապես միջոցների պակասի դեպքում՝ վարկավորման սկզբունքով:

Ֆինանսական պլանավորումը՝ ֆինանսական պլանի կազմումն է երեք կտրվածքով.

առաջին, երկրի ֆինանսական պլանի կազմում, որն իր արտացոլումն է գտնում պետական բյուջեում և համարվում է երկրի ֆինանսական պլանը, այսինքն եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Այն կազմվում է երկրի սոցիալ-տնտեսական եռամյա պլանի հիման վրա՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից: Այդ նպատակով նա համագործակցում է հարկային պետական ծառայության, մաքսային պետական կոմիտեի, երկրի Կենտրոնական բանկի, գնումների պետական գործակալության և մյուս կենտրոնական ու ճյուղային նախարարությունների հետ: Սոցիալական պորտի առումով համագործակցում է այդ բնագավառի նախարարության և սոցիալական ապահովագրության հիմնադրամի հետ՝ հաշվի առնելով եկամուտների գծով ըստ հաշվարկի հարկային եկամուտները, պետուրքերը, ոչ հարկային եկամուտները, պետական կապիտալի գործառնություններից նախատեսվող եկամուտները՝ հիմք ընդունելով հարկային, մաքսային օրենքները, տնտեսավարող սուբյեկտների թիվը և հարկային ու մաքսային պետական ծառայությունների ներկայացրած հաշվարկները:

Պաշտոնային տրանսֆերտների չափը նախատեսվում է միջպետական, ինչպես նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համաձայնագրերով: Ընդ որում, հարկային և մաքսային մուտքերը, ըստ համապատասխան ծառայությունների ներկայացման, հաշվի է առնվում նաև նախորդ տարվա փաստացի ցուցանիշների մակարդակը, ՀՆԱ-ի նախատեսվող աճը (տնտեսական աճ), փողի արժեզրկումը (սղանի մակարդակը) և այլ նորմատիվներ (չափանիշներ): Պետական բյուջեի եկամուտների հաշվին նախատեսվում է պետական կառավարման ծախսերը՝ ըստ ծախսերի հողվածների և նրանց վերաբերյալ նորմաների (չափերի): Աշխատավարձի գծով ծախսը հաշվարկվում է ըստ աշխատողների թվի և պաշտոնային ամսեկան դրույքների՝ հաշվի առնելով նախատեսվող աճը (աշխատողների թիվ x դրույք x 12 ամիս): Նյութերի ծախսը

նույնպես նախատեսվում է ըստ սպառման նորմաների (չափերի): Ծախսերը նախատեսվում են ըստ ուղղությունների, հաշվի առնելով ոչ միայն օրենսդիր և գործադիր, այլև դատախիզական մարմինների ծախսերը, ինչպես նաև նախարարությունների ու նրանց ենթակա բյուջետային կազմակերպությունների ծախսերը: Եկամուտների և ծախսերի տարբերությունը նախատեսվում է որպես շահույթ (հավելուրդային բյուջե): Սակայն մեր երկրի պետական բյուջեն 1991-2004թթ. նախատեսվում է դեֆիցիտով (2005թ. 49.2 մլրդ դրամ), այնուհետև պետական բյուջեով նախատեսվում է բյուջեի դեֆիցիտի ծածկման ներքին ու արտաքին աղբյուրների չափը,

երկրորդ, ինքնակառավարման մարմինների ֆինանսական պլանավորումը նույն սկզբունքով, սակայն տարածքային մասշտաբով, նախատեսվում է համայնքի տարեկան ֆինանսական պլանը, որն իր արտացոլումն է գտնում համայնքի տարեկան բյուջեում: Ընդ որում, տեղական բյուջեները կարող են կազմվել երկրի պետական ֆինանսական պլանից առաջ կամ հետո, որն էլ հաստատվում է Ավագանիների միստում: Համայնքը պլանավորում է իր տարածքի սուբյեկտների հաշվով հողի հարկը, գույքահարկը (լրիվ մնում է իր բյուջեում 2003թ. սեպտեմբերից սկսած) և մյուս հարկերը՝ որպես հարկային եկամուտներ: Ապա նախատեսվում է պետական և տեղական տուրքերի չափը, այնուհետև ՀՀ պետական բյուջեից նախատեսվող դոտացիան, սուբսիդիաները, սուբվենցիաները և պաշտոնական տրանսֆերտները: Ծախսերի մասում նախատեսվում է գյուղապետարանի, թաղապետարանի տարեկան ընթացիկ ծախսերն՝ ըստ ծախսերի դասակարգման և գործող նորմաների (աշխատավարձի չափը ըստ դրույքների, նյութերի և գործուղման ծախսերի նորմաների և այլն):

4.2.Բյուջե հասկացությունը և նրա տեսակները՝ ըստ բնույթի և եկամտի ապահովվածության

Հարկատուներից հավաքագրված հարկերը, մաքսավճարները, մաքսատուրքերը և պետական տուրքերը, ինչպես նաև ոչ հարկային և այլ մուտքերը հավաքագրվում է մի տեղ, որը կոչվում է պետական բյուջե: Այն հանդիսանում է երկրի ֆինանսական պլանը, այսինքն՝ եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Բյուջեն երկկողմանի աղյուսակ է, որի ձախ կողմում ցույց է տրվում եկամուտները և նրա աղբյուրները, իսկ աջում՝ ծախս

սերը և նրանց ուղղությունները:

Բյուջեն անգլերեն բառ է, որը նշանակում է հաշվարկ: Այն իր անունը ստացել է 1860թ. Անգլիայում, երբ առաջին անգամ քննարկվում էր Լոնդոն քաղաքի տարեկան բյուջեն: Պատգամավորի այն հարցին, թե ո՞րն է եկամուտների և ծախսերի չափի հիմքը, զեկուցողը իր թղթապանակից հանում է կատարած հաշվարկը և ցույց տալիս: Այդ ժամանակներից օգտագործվում է բյուջե բառը որպես հաշվարկ, այսինքն՝ եկամուտների և ծախսերի հաշվեկշիռ: Ժողովրդական լեզվով և հասկացությամբ բյուջեին անվանում են քսակ, պայուսակ, այսինքն ուրտեղ հավաքվում են փողերը, ուրոնք ստացվում են պետական մակաբախակով հարկերից և ոչ հարկային մուտքերից, իսկ բնակչության հաշվով՝ եկամուտներից:

Մեկ այլ հասկացությամբ բյուջե բառը գույացել է միջնադարյան անգլերեն «budget» բառից, որով սահմանվում էր այն քսակը, որը թագավորը պահում էր հանրային և անձնական ծախսերի համար նախատեսվող փողերը: Բյուջեն որոշակի ժամանակաշրջանի համար եկամուտների և ծախսերի նախահաշիվ է: Բյուջեն ցույց է տալիս.

- թե ինչպե՞ս են կենտրոնական, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց գործունեության համար հավաքագրում անհրաժեշտ ֆինանսական միջոցները, որքա՞ն գումար է հավաքագրվելու տարբեր տեսակի հարկերից (տնտեսավարող սուբյեկտներ, այդ թվում անհատ ձեռնարկատերեր, բնակչություն),

- թե ինչպե՞ս կենտրոնական պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ծախսեն հավաքագրված ֆինանսական պաշարները և դրա հաշվին ո՞ր ուղղությունը պետք է ֆինանսավորվեն: Եվ ինչքա՞ն միջոցներ պետք է հատկացվեն երկրի պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, պետական և տեղական կառավարման, բնության պահպանության և սոցիալական ոլորտին,

- Բյուջեով վարվում է պետության կողմից ֆինանսական միջոցների ներգրավման և պետական ներքին ու արտաքին պարտքի սպասարկման քաղաքականություն:

Այժմ պարզաբանենք, թե որտեղի՞ց են գոյանում բյուջետային մուտքերը և ո՞ր են դրանք ուղղվում:

Ընտանիքում ծնունդները հաճախ են քննարկում ընտանիքի բյուջեն: Նրանք կարող են քննարկել, թե որքա՞ն է վաստակում ընտանիքը, որքա՞ն կարող են նրանք ծախսել սննդի, կոմունալ ծառայությունների,


տրանսպորտի, առողջության պահպանման, ուղևորությունների, և որքա՞ն կարող են խնայել ապագա ծախսերի համար:

Եթե ընտանիքի եկամուտները չեն բավարարում նախատեսված ծախսերը կատարելու համար, նրանք կարող են քննարկել, թե ինչպե՞ս կրճատել ծախսերը: Նրանք կարող են քննարկել մեկ այլ տարբերակ, ինչպե՞ս ավելի շատ եկամուտ ստանալ: Նրանց կարծիքով փողի պակասը ժամանակավոր է, նրանք կարող են պարտք վերցնել, բայց միաժամանակ, պետք է մտածեն, թե ինչպե՞ս են վերադարձնելու պարտքը:

Այժմ ցույց տանք ընտանիքի բյուջեի պատկերային տեսքը. Մյուս կողմից, եթե ընտանիքի եկամուտները գերազանցում են ամենօրյա պահանջները, կարելի է բարելավել բնակարանային պայմանները, վիճակը, զնել մեքենա և այլն:

Կառավարությունն իր բյուջեն պլանավորում է այնպես, ինչպես կառավարվում է ընտանիքում: Կառավարությունը և Ազգային ժողովը համա-

Ընտանիքի բյուջեն




Արդյունք՝ սեփական եկամուտներ և փոխառված միջոցներ

տեղ որոշում են, թե ինչքա՞ն եկամուտներ կայող է ակնկալել կառավարությունը, որտեղից այն կգոյանա, ինչքա՞ն կարելի է ծախսել տարբեր ծրագրերի վրա, ինչպիսի՞ք են՝ պաշտպանությունը, արտաքին գործերը, ազգային անվտանգությունը, ոստիկանությունը, պետական կառավարումը և սոցիալական ոլորտը:

Մակայն, ի տարբերություն կառավարության, ընտանիքում միշտ չէ, որ հնարավոր է պարտքով փող վերցնել, երբ լրացուցիչ ծախսերի կարիք կա: Այժմ ցույց տանք ՀՀ պետական բյուջեի ծախսերի ուղղությունների

77 պետական բյուջեի ծախսերի ուղղությունները



Աղբյուրը՝ բյուջետային եկամուտներ և փոխառություն:

Բյուջեի տեսակները .- Բյուջեները ըստ տեսակների կախված են եկամուտների բնույթից (եկամուտների ստացման աղբյուրներից) և եկամուտների ապահովվածությունից: Այսպես, ըստ բնույթի, գոյություն ունեն բյուջեի հետևյալ տեսակները.

առաջին, **անհատական բյուջե** - այն իրենից ներկայացնում է անհատի, այսինքն՝ ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ, քաղաքացու, ուսանողի բյուջե, այսինքն՝ փողի այն գումարը, որը պետք է ծախսվի որպես ֆինանսներ: Սակայն, հարկ է նկատի ունենալ, որ բնակչության եկամուտները, որը ծախսվում է ընթացիկ ապրանքների գնման համար, էությանը ֆինանսներ չեն,

երկրորդ, **ընտանեկան բյուջե**, որն իրենից ներկայացնում է ընտանիքի եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Ըստ էության, դա բնակչության, այսինքն՝ տնային տնտեսության բյուջեն է,

երրորդ, տեղական ինքնակառավարման մարմինների եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը, որը կոչվում է **տեղական բյուջե**,

չորրորդ, տնտեսավարող սուբյեկտների եկամուտների և ծախսերի հաշվեկշիռ, այսինքն՝ ֆինանսական պլան, որը կոչվում է **տնտեսավարող սուբյեկտի կամ ձեռնարկության բյուջե**: ֆինանսական պլանը հանդի-

սանում է ձեռնարկության բիզնես-ծրագրի բաժիններից մեկը,

հինգերորդ, **պետական բյուջե**, որն իրենից ներկայացնում է երկրի ֆինանսական պլանը, այսինքն՝ եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը:

Ըստ եկամուտների ապահովվածության, տարբերում են բյուջեի հետևյալ տեսակները.

առաջին, **հավելուրդային բյուջե** .- դա այն բյուջեն է, որի դեպքում եկամուտները գերազանցում են ծախսերին: Այդպիսի բյուջե ունեն տնտեսապես զարգացած երկրները (Եվրոպական երկրները, ԱՄՆ, Կանադա, Արևելքից՝ Ճապոնիա): Թեև 2004թ. ԱՄՆ-ի պետական բյուջե դարձել է դեֆիցիտային՝ իրաքյան պատերազմի պատճառով, որին հատկացրել է ավելի քան 370 մլրդ դոլար (ՀՆԱ-ն՝ 6 տրիլիոն դոլար, իսկ պետական բյուջեն՝ 3 տրիլիոն դոլար): ԱՄՆ-ի պետբյուջեի դեֆիցիտը 2004թ. կազմել է 58 մլրդ դոլար,

երկրորդ, **հավասարակշռված բյուջե** - դա այն բյուջեն է, որի դեպքում եկամուտներն ու ծախսերը հավասար են, սակայն գործնականում հնարավոր չէ նման բյուջե: Դրա համար էլ ընդունված է հավասարակշռված բյուջե անվանել, երբ եկամուտները և ծախսերը տատանվում են $\pm 1\%$ -ի սահմաններում,

երրորդ, **համախմբված բյուջե** .- դա պետական և տեղական բյուջեների ամբողջությունն է,

չորրորդ, **դեֆիցիտային բյուջե** (deficite - ճեղքվածք, նվազուրդ) .- դա այն բյուջեն է, երբ ծախսերը գերազանցում են եկամուտներին:

Ընդ որում, հավելուրդային բյուջեին անվանում են նաև պրոֆիցիտային (լատ. Proficite – շահույթ), այսինքն, երբ եկամուտները գերազանցում են ծախսերին: Հայաստանի Հանրապետության բյուջեն համարվում է դեֆիցիտային: Ընդ որում, եթե 1994թ. պետբյուջեի դեֆիցիտը կազմել է 34 մլրդ դրամ, ապա 2001թ. կազմել է 54 մլրդ դրամ: Սակայն, 2003-2005թթ. առաջին անգամ նկատվում է բյուջեի դեֆիցիտի նվազում 41-49.2 մլրդ դրամ, իսկ փաստացի կատարողականով վերջին երկու տարում համարվում է հավելուրդային: Այսպես, 2003թ. պետական բյուջեն ըստ փաստացի կատարողականի եկամուտները 1.8 մլրդ դրամով գերազանցել են ծախսերին, իսկ 2004թ. տասը ամսում՝ 4.5 մլրդ դրամով և տարեկանը՝ 4.9 մլրդ դրամով:

4.3. Պետական ֆինանսներ և պետական բյուջե

Պետական են կոչվում այն ֆինանսները, որոնք պատկանում են պետությանը և ծախսվում են պետական կառավարման ու պետության ֆունկցիաների կենսագործման համար: Որպես պետական ֆինանսներ համարվում են.

- **հարկային մուտքերը**, որոնք ստացվում են հարկերից ըստ հարկատեսակների:

Որպես հիմնական հարկատուներ համարվում են տնտեսավարող սուբյեկտները, թեև հարկեր են վճարում նաև ոչ կոմերցիոն, այսինքն՝ բյուջետային կազմակերպությունները (աշխատողների աշխատավարձից եկամտահարկ) և բնակչությունը (եկամտահարկ, հողի հարկ, գույքահարկ):

- եկամտի տեսակները, որոնք ստացվում են տարբեր աղբյուրներից՝ պետական տուրքերից, պետական սեփականության վարձակալությունից, պետական ծառայություններից ստացված եկամուտները,

- **պետական կառավարման ծախսեր** - դրանք այն ծախսերն են, որոնք ծախսվում են պետական կառավարման նպատակով (ՀՀ նախագահի աշխատակազմ, Ազգային ժողով, կառավարություն, այդ թվում կենտրոնական և ճյուղային նախարարությունների ապարատի և նրանց ենթակա բյուջետային կազմակերպությունների գործունեության ծախսերը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ծախսերը (գյուղական և քաղաքային համայնքներ),

- **պետական կապիտալի գործառնական եկամուտներ և ծախսեր** - դրանք կարճաժամկետ, միջինժամկետ և երկարաժամկետ (ՊԿՊ -պետական կարճաժամկետ պարտատոմսեր, ՊՄՊ-պետական միջինժամկետ պարտատոմսեր, ՊԵՊ- պետական երկարաժամկետ պարտատոմսեր) պարտատոմսերի թողարկումից և իրացումից ստացված եկամուտներն են և այդ նպատակով կատարված ծախսերը,

- **պետական վարկեր**- դրանք այն վարկերն են, որոնք տրվում են պետական բյուջեի միջոցների հաշվին և որի հաշվով ստացվում են եկամուտներ ու կատարվում ծախսեր,

- **համաշխարհային բանկի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների և դոնոր երկրների կողմից տրված վարկեր**, որոնք ստացվում են բյուջեի դեֆիցիտը ծածկելու համար,

- **պաշտոնական տրանսֆերտներ** (Transferte -ֆինանսական օգնություն անվերադարձ կարգով), այն տրվում է համաշխարհային բանկի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների և դոնոր երկրների կողմից:

Տրանսֆերտները, սովորաբար, տրվում են զարգացած երկրների կողմից՝ զարգացող (Հայաստանի Հանրապետությունը 1994թ. համարվում է զարգացող և ներկայումս գրավում է 87-րդ տեղը) և աղքատ երկրներին,

- **արտաբյուջեյային հիմնադրամներ**, ինչպիսիք հանդիսանում են սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը և պետական ապահովագրությունը (2003թ. ըստ էության պետական ապահովագրությունը վերացված է):

Այդ հիմնադրամը հավաքագրում է սոցիալական վճարները աշխտողներից, անհատ ձեռնարկատերերից, տնտեսավարող սուբյեկտներից և ոչ կոմերցիոն կազմակերպություններից (2005թ. հունվարից հավաքագրում են հարկային տեսչությունները): Այդ միջոցների հաշվին պահվում է սոցիալական ապահովագրության հիմնադրամի և աշխատանքի ու սոցիալական ապահովության նախարարության անձնակազմի աշխատակազմը, կատարվում նրանց գործունեության ծախսերը, ինչպես նաև վճարվում են կենսաթոշակներ , ընտանեկան և գործազրկության նպաստներ (2005թ. գործազրկության նպաստի չափը կրկնապատկվել է և կազմում է 7800 դրամ) ու կատարվում սոցիալական այլ ծախսեր: Որպես արտաբյուջետային հիմնադրամ կարելի է ներառել նաև «Հայաստան համահայկական հիմնադրամը», որի եկամուտները ստացվում են մարաթոնների միջոցով և ծախսվում են որպես կապիտալ ներդրումներ (թեև այդ կառույցը պետական չէ, բայց սոցիալական ծրագրերն ունեն պետական նշանակություն):

- **պետական ապահովագրություն**- դա պետական ապահովագրման համար ստացված ապահովագրական վճարներն են որպես եկամուտներ և կատարված փոխհատուցումները՝ որպես ծախսեր:

Մեր երկրում պետական ապահովագրությունը որպես ապահովագրական մարմին քայքայվել է 1991 թվականից: Ելնելով իրավիճակից 2000թ. բաժնետոմսերի 50 %-ը վաճառվեց ռուսական «Ռոսնո» ապահովագրական ընկերությանը, իսկ 50 %-ը մնաց Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Սակայն այդ բնագավառում էական փոփոխություններ չլինելու պատճառով բաժնետոմսերի 100 %-ը վաճառվեց ռուսական մեկ այլ ապահովագրական ընկերության: Ապահովագրությունը կատարվում է երկու խումբ ապահովագրության ձևով՝ կյանքի և այլ ապահովագրություններ, որի մեջ ներառվում են բժշկական, ունեցվածքի ապահովագրությունը և այլն: Ընդհանրապես, ապահովագրությունը Հայաստանում զարգացած չէ, թեև բացի պետական ապահովագրությունից, գոյություն ունի 22 ոչ պետական ապահովագրական ընկերություններ, ո-

րունցից 2004թ. գործում էլ շուրջ 17-ը:

Այսպիսով, պետական ֆինանսներ են համարվում ոչ միայն պետական եկամուտները, պետական կառավարման ծախսերը, տեղական ինքնակառավարման մարմինների եկամուտներն ու ծախսերը, այլև բյուջետային կազմակերպությունների նախահաշիվներով նախատեսված ծախսերը: Պետական ֆինանսների մեջ ներառվում են նաև պետական գնումների գործակալության, պետական կադաստրի վարչության (Cadastre- գնահատում) և երկրի կենտրոնական բանկի եկամուտներն ու ծախսերը:

• Պ ե տ ա կ ա ն բ յ ո ջ ե .- Պետական բյուջեն երկրի ֆինանսական պլանն է, այսինքն՝ եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Պետական ֆինանսներն իրենց արտացոլումն են գտնում պետական բյուջեում: Պետբյուջեն երկկողմանի աղյուսակ է, որի ձախ կողմում ցույց են տրվում եկամուտները ըստ աղբյուրների, իսկ աջ կողմում՝ ծախսերն ըստ ուղղությունների: Յուրաքանչյուր երկիր ֆինանսական տարվա հաշվով իշխանության (խորհրդարանի) կողմից քննարկում և քվեարկությամբ հաստատում է տարեկան պետական բյուջեն: ԱՊՀ-ի երկրներում, այդ թվում Հայաստանում ֆինանսական տարին համընկնում է օրացույցային տարվա հետ, իսկ ԱՄՆ-ում այն համարվում է տվյալ տարվա հոկտեմբերի 1-ից մինչև մյուս տարվա հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակաշրջանը: Գոյություն ունի պետական բյուջեն քննարկելու և հաստատելու դրոշակի կարգ (բյուջետային գործընթաց), որը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ (հոդված 76): Ըստ այդ հոդվածի, Ազգային ժողովը կառավարության ներկայացմամբ հաստատում է պետական բյուջեն, մինչև բյուջետային տարվա սկիզբը: Պետական բյուջեն չհաստատվելու դեպքում (ինչպես 1991-1997թթ.) ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնությամբ: Բացի այդ, անվտանգություն է հայտնվում կառավարությանը: Պետական բյուջեի քննարկման և հաստատման կարգը սահմանվում է օրենքով,

• կառավարությունը, ի դեմս ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, օրացույցային տարվանից 60 օր առաջ մշակում է երկրի հաջորդ տարվա պետական բյուջեի նախագիծը (ՀՀ Սահմանադրություն, հոդված 90):

Այսպես, ըստ այդ հոդվածի, կառավարությունը պետական բյուջեի նախագիծը Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն վաթսու օր առաջ և կարող է պահանջել, որ այն իր կողմից ընդունված ուղղումներով քվեարկության դրվի մինչև այդ ժամկետի ավարտը: Պետական բյուջեի հաստատման առնչությամբ կառավարությունը կարող է դնել իր վստահության հարցը: Եթե Ազգային ժողովը ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածով նախատեսված կարգով

կառավարությանն անվտանգություն չի հայտնում, ապա պետական բյուջեն կառավարության կողմից ընդունված ուղղումներով, համարվում է հաստատված: Պետական բյուջեի հաստատման առնչությամբ Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվտանգություն հայտնելու դեպքում նոր կառավարությունը Ազգային ժողովին բյուջեի նախագիծ է ներկայացնում 20 օրվա ընթացքում, որը քննարկվում և հաստատվում է 90-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ երեսու օրվա ընթացքում, այսինքն ԱԺ-ի քննարկմանն է ներկայացնում «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Այդ աշխատանքներին ակտիվ մասնակցում են նաև երկրի Կենտրոնական բանկը, Հարկային պետական ծառայությունը, Մաքսային պետական կոմիտեն, Պետական գնումների գործակալությունը, ինչպես նաև ճյուղային նախարարությունները: Դրա համար, հաշվի են առնվում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վիճակը և նրա զարգացման միտումները՝ կապված փողի արժեզրկման (սղած), տնտեսական աճի տեմպերի և ըստ ճյուղային նախարարությունների՝ համախառն արտադրանքի, ապրանքների ծավալների աճի, ապրանքների գների, բնակչության եկամուտների և ծախսերի մակարդակի, երկրի վճարային, այդ թվում առևտրային հաշվեկշիռի ու վճարումների հետ: Ինչպես հայտնի է, պետական բյուջեն կարող է լինել հավելուրդային, հավասարակշռված և դեֆիցիտային:

Այժմ ցույց տանք պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկման և հաստատման կարգը, այսինքն բյուջետային գործընթացը:

ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը մշակում է ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը և տարվա վերջից 60 օր առաջ՝ նոյեմբերի 1-ին այն ներկայացնում է Ազգային ժողովի համապատասխան ֆինանսավարկային և բյուջետային մշտական հանձնաժողովին: Վերջինս քննարկում է հանձնաժողովում՝ մասնակից դարձնելով նաև շահագրգիռ մյուս մշտական հանձնաժողովներին և դիտողություններ լինելու դեպքում այն վերադարձվում է կառավարությանը՝ լրամշակումներ և փոփոխություններ կատարելու համար: Դիտողությունները և առաջարկությունները հաշվի առնելուց հետո կառավարությունը բյուջեի մասին օրենքի նախագիծը կրկին ներկայացնում է Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային մշտական հանձնաժողովին: Վերջինս կրկին ուսումնասիրում և քննարկում է ու հավանության արժանանալուց հետո այն ներկայացնում է Ազգային ժողովի նստաշրջանին և մտցվում է քառօրյա նիստերի օրակարգի մեջ (մինչև 2004թ. վերջը՝ եռօրյա նիստեր): Այնուհետև, երկու ամիս տևողությամբ (նոյեմբեր-դեկտեմբեր) ԱԺ-ում

կատարվում է պետբյուջեի մասին ՀՀ օրենքի նախագծի քննարկումը (զեկուցող՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար), որի ժամանակ ԱԺ-ի պատգամավորները (131 պատգամավոր, հաջորդ ընտրությունով՝ 101 պատգամավոր) ըստ իրենց ցանկության ելույթ են ունենում և կատարում առաջարկություններ ու դիտողություններ: Դրանից հետո օրենքի նախագիծը վերադարձվում է կառավարությանը՝ առաջարկությունները և դիտողությունները հաշվի առնելու նպատակով: Կատարված լրացումներով և փոփոխություններով օրենքի նախագիծը կրկին ներկայացվում է ԱԺ նստաշրջան: Ըստ որի, ևս կատարվում է քննարկում և հավանության արժանանալուց հետո Ազգային ժողովում դրվում է քվեարկության: Օրենքի նախագիծը համարվում է ԱԺ-ի կողմից ընդունված, եթե քվեարկել են նիստին մասնակցած պատգամավորների 2/3 -ը՝ 66 տոկոսը: Քվեարկությունն ուժի մեջ է, եթե նիստին մասնակցում են 131 պատգամավորների 2/3-ը: Եթե քվեարկության նախագիծը հաստատվում է, ապա այն համարվում օրենք հաջորդ տարվա պետական բյուջեի մասին, իսկ եթե անհրաժեշտ կողմ ձայներ չի հավաքվում, ապա նախագիծը չի ընդունվում որպես օրենք: Դա նշանակում է, որ Ազգային ժողովը հավանություն չի տալիս կառավարության ծրագրին և վերջինս պետք է տա հրաժարական ամբողջ կազմով (վարչապետը՝ իր նախարարների կաբինետով):

4.4. ՀՀ օրենքը պետական բյուջեի մասին

2004թ. ՀՀ պետական բյուջեի մասին օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 25-ին և ուժի մեջ է մտել օրենքի հրապարակման պահից (ՀՀ պաշտոնային տեղեկագիր, թիվ 4, 19 հունվարի 2004թ.):

1991-2000թթ. մեր երկրում պարբերաբար խախտվում էր պետբյուջեի մասին օրենքի ընդունման կարգը: Ընդ որում, առանձին տարիների այն ձգձգվում էր մինչև հաջորդ տարվա մարտ ամիսը և դրանով խախտվում էր ՀՀ Սահմանադրության 74, 76 և 90 հոդվածների պահանջները:

Բյուջեի մասին օրենքը բաղկացած է 15 հոդվածներից (2004թ.): Համառոտ անդրադառնանք դրանց բովանդակությանը.

ՀՈԴՎԱԾ 1. Ընդունվում է ի գիտություն պետբյուջեի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի մասին: Այսպես, 2004թ. հաշվով պետբյուջեի եկամուտները նախատեսվել են 334.7 մլրդ դրամ, ծախսերը՝ 377.6, իսկ դեֆիցիտը՝ 42,9 մլրդ դրամ: Այդ նույն հոդվածով նախատեսվում է համայնքների բյուջեները (տեղական բյուջե) 2004թ. եկամուտ՝ 22.4 մլրդ դրամ, ծախսերը՝ 22.4 մլրդ դրամ, այսինքն՝ նախատեսվում է հավասարակշռված բյուջե:

ՀՈԴՎԱԾ 2. Հաստատվում է երկրի հաջորդ տարվա պետական բյուջեն՝ ըստ եկամտի, ծախսերի և դեֆիցիտի չափերի:

ՀՈԴՎԱԾ 3. Հաստատվում է երկրի հաջորդ տարվա պետբյուջեի դեֆիցիտի ծածկման աղբյուրները:

ՀՈԴՎԱԾ 4. Հաստատվում է երկրի Կենտրոնական բանկի եկամուտները և ծախսերը:

Ընդ որում, երկրի Կենտրոնական բանկը համարվում է շահույթով չաշխատող կազմակերպություն, մինչդեռ իր գործունեության ընթացքում Համաշխարհային բանկից, միջազգային ֆինանսական կազմակերպություններից, դոնոր երկրներից ստացված վարկերը մրցույթով տրամադրում է առևտրային բանկերին և վարկի տոկոսների տարբերության հաշվին ստանում է շահույթ: Բացի այդ, զբաղվում է հրատարակչական գործով և նույնպես ստացվում է շահույթ: Սակայն ստացված շահույթը բռնազանձվում է պետբյուջե, այսինքն Կենտրոնական բանկը պարտավոր է ստացված շահույթի 80 տոկոսը անմիջապես փոխանցել պետբյուջե, իսկ 20 տոկոսը մնում է իր տրամադրության ներքո: 1991-2004թթ. ըստ տարիների ավելացվել է ՀՀ Կենտրոնական բանկի եկամուտները և ծախսերը: ԿԲ-ի նախահաշվով եկամուտները նախատեսվում են ծախսերի չափով: Այսպես, եթե 1996թ. այն կազմում էր 7 մլրդ, 1998թ.՝ 8.3 մլրդ, ապա 2004թ.՝ բյուջեով նախատեսված է 13 մլրդ դրամ: Այսպիսով, ԿԲ-ի հաշվով միշտ էլ հաստատվում է հավասարակշռված բյուջե, այսինքն ծախսերի նախահաշիվ:

ՀՈԴՎԱԾ 5. Սահմանվում է երկրի Կենտրոնական բանկի և կառավարության պարտավորությունների չափը, այսինքն կառավարությանը տրվող վարկերի, ինչպես նաև փողի արժեզրկման (սղաճի) չափը տոկոսով և հանձնարարություն կառավարությանը՝ պետբյուջեի դեֆիցիտը ծածկելու նպատակով բանակցությունների անհրաժեշտությունը Համաշխարհային բանկի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների և դոնոր երկրների հետ:

ՀՈԴՎԱԾ 6. Հաստատվում է տարեկան բյուջեի եկամուտները ըստ եկամուտների աղբյուրների:

ՀՈԴՎԱԾ 7. Հաստատվում է պետբյուջեի ծախսերը (հատկացումները), ըստ բյուջետային գործառնական դասակարգման:

ՀՈԴՎԱԾ 8. Հաստատվում է պետբյուջեի հոդվածով նախատեսված ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման:

ՀՈԴՎԱԾ 9. Սահմանվում է, որ

• կառավարությունը տվյալ տարում իրավասու չէ կատարել նախորդ տարվա գործառնություններ,

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ՝**

• պետական ձեռնարկությունների, առևտրի փոքր օբյեկտների և անավարտ շինարարական օբյեկտների սեփականաշնորհումից (1999թ. հունվարից մասնավորեցում) առաջացած միջոցները պետք է փոխանցել պետական բյուջե՝ Կենտրոնական բանկում բացելով հատուկ հաշիվ:

ՀՈԴՎԱԾ 10. Հաստատվում է պետբյուջեի մասին 7-րդ հոդվածով սահմանված բյուջետային հատկացումների բաշխումը ըստ օրենսդիր, գործադիր և դատաիրավական, այսինքն՝ խշխանության մարմինների միջև, ինչպես նաև ըստ համայնքների դատադիմացության տեղական բյուջեների համահարթեցման նպատակով: Այդ հոդվածով նախատեսվում է նաև հանրապետական նշանակության կազմակերպությունների նախահաշիվները, այսինքն՝ պետական բյուջեից հատկացումները գործունեության համար: Դրանք են՝

- ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամին հատկացումները, որը եկամուտների և ծախսերի գծով ըստ 2004թ. պետական բյուջեի նախատեսված է 67.9 մլրդ դրամ,
- ՀՀ Կենտրոնական բանկի նախահաշիվը՝ 12.9 մլրդ դրամ,
- պետական կապիտալ մեդդումների չափը՝ 5.7 մլրդ դրամ:

ՀՈԴՎԱԾ 11. Թույլատրելի ՀՀ կառավարությանը անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարել ըստ ծախսերի գործառնական դասակարգման մեջ (պետական բյուջեի եկամուտների և ծախսերի չափը իրավասու է փոփոխել միայն Ազգային ժողովը, որը պետբյուջեի կատարման վիճակից ելնելով կարող է ընդունել օրենք և փոփոխել այն: Ծախսերի կրճատումը կոչվում է սեկվեստր (secvestre - կրճատում):

ՀՈԴՎԱԾ 12. Թույլատրելի Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկին՝ անհրաժեշտության դեպքում վերաբաշխել պետական բյուջեի մասին օրենքի թիվ 6 հավելվածով (ԿԲ-ի նախահաշիվ) կատարել գործառնական վարչական ծախսերում փոփոխություններ՝ կրճատում 15 %-ով կամ ավելացում 30 տոկոսով:

ՀՈԴՎԱԾ 13. Նախատեսվում է պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման կարգը և այդ նպատակով Կենտրոնական բանկի ու կառավարության համագործակցությունը:

ՀՈԴՎԱԾ 14. Պետական բյուջեով նախատեսված եկամուտները և ծախսերը (հավելված 1-9) համարվում են պետական բյուջեի մասին օրենքի անբաժանելի մասերը:

ՀՈԴՎԱԾ 15. Պետական բյուջեի մասին օրենքի ուժի մեջ մտնելը (այն ուժի մեջ է մտնում օրենքի հրապարակման պահից և մասնավորապես 2004թ. պետբյուջեի մասին օրենքը՝ 2004թ. հունվարի 19-ից, քանի որ այն առաջին անգամ հրապարակվել է թիվ 4 պաշտոնական տեղեկագրում: Այժմ կատարենք մեջբերում Հայաստանի Հանրապետության 2005թ. պետական բյուջեի մասին օրենքից:

126

- Հոդված 1.** Ընդունելի գիտություն, որ՝
1. Հայաստանի Հանրապետության 2005 թվականի համախմբված բյուջեն կկազմի՝
 - եկամուտների գծով՝ 419.8 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի),
 - ծախսերի գծով՝ 469.0 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների).
 - դեֆիցիտը (պակասուրդը)՝ 49.2 մլրդ դրամ.
 2. Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի 2005 թվականի բյուջեն կկազմի՝
 - եկամուտների գծով՝ 85.3 մլրդ դրամ (ներառյալ անմիջապես պետական բյուջեից տրանսֆերտների տեսքով, ինչպես նաև պետական բյուջեով և համայնքների բյուջեներով պահպանվող հիմնարկներից պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների տեսքով ստացվող եկամուտները),
 - ծախսերի գծով՝ 85.3 մլրդ դրամ.
 3. Հայաստանի Հանրապետության համայնքների 2005 թվականի բյուջեները կկազմեն՝
 - եկամուտների գծով՝ 28.6 մլրդ դրամ (ներառյալ պետական բյուջեներից ստացվող պաշտոնական տրանսֆերտները),
 - ծախսերի գծով՝ 28.6 մլրդ դրամ:
- Հոդված 2.** Հաստատելի Հայաստանի Հանրապետության 2005 թվականի պետական բյուջեն՝

	Գումարը (հազար դրամներով)
1. Եկամուտների գծով	345,346,183.0
2. Ծախսերի գծով	394,600,142.7
3. Դեֆիցիտը (պակասուրդը)	49,253,959.7

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության 2005 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ծածկմանն ուղղելի հետևյալ միջոցները

	Գումարը (հազար դրամներով)
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԿԿՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿՐՔՅՈՒՐՆԵՐԸ	49,253,959.7
այդ թվում	

1. Մեջբերվում է կրճատումներով (հեղինակ)

Ա. Ներքին աղբյուրներ	14,599,412.9
այդ թվում	
1. Պետական արժեթղթեր՝ ընդամենը	5,941,412.9
որից՝	
ա) զանազան պարտատոմսեր	6,000,000.0
բ) մուրհակների մարում	(18,587.1)
գ) պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերի ետգնում	(40,000.0)
2. 2005 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցներ	8,658,000.0
Բ. Արտաքին աղբյուրներ	34,654,546.8
այդ թվում՝	
1. Վարկերի տուսցում	44,222,301.5
2. Վարկերի մարում	(9,567,754.7)

Հոդված 4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի օրենքով վերապահված իրավասությունների սահմաններում ձեռնարկել միջոցներ 2005թ. դեկտեմբերի դրությամբ գնաճի չափը 2004 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ մինչև 3.0 տոկոս պահելու ուղղությամբ:

Հոդված 5. Սահմանել, որ

5.1. 2006թ-ի հունվարի մեկի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության զուտ պարտավորությունների տարեկան չափաքանակը կազմելու է մինչև 8.350.0 մլն դրամ: Այդ չափաքանակը կարող է գերազանցվել միայն եռամսյակների ընթացքում եռամսյակի վերջում պահպանելով մինչև 8.350.0 մլն դրամի մակարդակը: Ընդ որում, ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ ՀՀ կառավարության զուտ պարտավորությունների գերազանցումը եռամսյակի ընթացքում չի կարող լինել ավելի, քան նախորդ եռամսյակում հավաքագրված աճողական հարկային եկամուտների 10 տոկոսը:

5.2. ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ ՀՀ կառավարության զուտ պարտավորությունները որոշվում են ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկշռի ստորև ներկայացվող պահանջների և պարտավորությունների տարբերությամբ՝

- ՀՀ կենտրոնական բանկի պահանջները ՀՀ կառավարության նկատմամբ՝
- ՀՀ կառավարությանը տրված վարկեր,
- ՀՀ պետական արժեթղթեր.
- ՀՀ կենտրոնական բանկի պարտավորությունները ՀՀ կառավարության նկատմամբ
- ՀՀ կառավարության հաշիվներ,
- ՀՀ կառավարության մարդասիրական օգնության հաշիվներ,

- Ծրագրերի իրագործման գրասենյակների հաշիվներ,
- ՀՀ կառավարության ցախահնչ ավանդներ,
- ՀՀ կառավարության ժամկետային ավանդներ,
- ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի հաշիվ:

Հոդված 6. Հաստատել ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի եկամուտները (առանց սույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ, 13-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ և 22-րդ մասերով և 11-րդ հոդվածի 3-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ, 22-րդ և 23-րդ մասերով սահմանված դեպքերում ստացվող եկամուտների), ըստ ձևավորման աղբյուրների դասակարգման առանձին խմբերի, հետևյալ չափերով.

	ԳՈՒՄԱՐԸ (հազար դրամներով)
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՆԵՐ	345,346,183.0
այդ թվում	
Ա. ԸՆԹԱԹԻՎ ԵՎ ՍՈՒՏՆԵՐ	327,763,452.0
որից՝	
1. Գարկային եկամուտներ	292,419,032.0
2. Պետական տուրք	17,580,968.0
3. Ոչ հարկային եկամուտներ	17,763,452
Բ. ԿՎՊԻՏԱԼԻ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ՍՈՒՏՆԵՐ	5,529,586.0
այդ թվում՝ երևան քաղաքում տեղաբաշխված պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարումից	5,234,285.0
Գ. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՆԵՐ	12,053,145.0

Հոդված 7. Հաստատել ՀՀ 2005 թվականի պետական բյուջեից հատկացումներ (առանց սույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ, 13-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և 22-րդ մասերով և 11-րդ հոդվածի 3-րդ, 12-րդ, 13-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ, 22-րդ և 23-րդ մասերով սահմանված դեպքերում կատարվելիք հատկացումների), ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման, հետևյալ չափերով՝

Խմբի N	Ենթախմբի N		Գումարը (հազար դրամներով)
		ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	394,600,142.7
		այդ թվում	
01		ԸՆԴՂԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	39,306,700.5
		այդ թվում	
	01	Օրենսդիր մարմին, պետական կառավարում	7,830,099.0
	02	Պետական ֆինանսական կառավարում	8,680,774.3

	03	Արտաքին քաղաքական գործունեություն	8,408,536.6
	04	Արտաքին տնտեսական աջակցություն	11,566,491.7
	05	Ընդհանուր բնույթի իրավական գործունեություն	761,625.1
	06	Ընտրություններ և հանրաքվեներ	309,859.1
	07	Ընդհանուր բնույթի պետական այլ ծառայություններ	1,749,314.7
02		ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	61,004,602.1
		այդ թվում	
	01	Ղազմական կարիքներ	57,219,357.9
	03	Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր	3,785,244.2
03		ՀԱՍՏՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՂԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	30,983,566.9
		այդ թվում	
	01	Հաստատված կարգի պահպանություն	18,186,108.1
	02	Ազգային անվտանգություն	7,624,595.8
	03	Պատական գործունեություն	5,172,863.0
04		ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ	61,656,736.8
		այդ թվում	
	01	Կրթության և գիտության բնագավառում պետական կառավարում	194,933.5
	03	Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	44,850,585.8
	04	Հատուկ ընդհանուր կրթություն	3,481,567.6
	05	Արտադպրոցական դաստիարակություն	1,844,477.3
	06	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	669,612.3
	07	Միջին մասնագիտական կրթություն	1,454,468.4
	08	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն	4,305,532.3
	09	Լրացուցիչ կրթություն	752,937.5
	10	Գիտություն	4,102,622.1
05		ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	32,161,958.3
		այդ թվում	
	01	Առողջապահության բնագավառում պետական կառավարում	510,701.6
	02	Հիվանդանոցային բուժօգնություն	13,994,289.8
	03	Սոցիալական (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնություն	12,442,517.7
	04	Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություններ	1,440,000.0
	05	Առողջապահական այլ ծառայություններ և ծրագրեր	3,774,449.2

06		ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ	46,562,811.4
		այդ թվում	
	01	Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության բնագավառում պետական կառավարում	695,800.6
	02	Կենսաթոշակային ապահովում	15,461,024.5
	03	Պետական նպաստներ բնակչությանը	22,267,779.6
	04	Սոցիալական ապահովության միջոցառումներ	3,792,683.3
	05	Այլ սոցիալական ծրագրեր	4,345,323.4
07		ՄՇԱԿՈՒՅՑ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՄՊՈՐՏ ԵՎ ԿՐՈՆ	10,465,550.1
		այդ թվում	
	01	Մշակույթի, տեղեկատվության, սպորտի և կրոնի բնագավառում պետական կառավարում	414,045.2
	02	Գրադարաններ	601,336.9
	03	Թանգարաններ և զուգահանդեսներ	1,106,770.8
	04	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	114,401.4
	05	Այլ մշակութային հիմնարկներ	311,988.0
	06	Արվեստ	1,680,891.3
	07	Կինեմատոգրաֆիա	447,628.5
	08	Բուշարժանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	603,299.7
	09	Սպորտ	1,089,274.3
	10	Հեռուստառադիոհաղորդումներ	3,097,305.7
	11	Հրատարակչություններ, խմբագրություններ	479,967.4
	12	Տեղեկատվության ծեռքերում	50,793.0
	14	Երիտասարդական ծրագրեր	279,925.6
	15	Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ	187,922.3
08		ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՍՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	23,062,755.9
		այդ թվում	
	02	Բնակարանային տնտեսություն և բնակարանային շինարարություն	8,338,836.0
	03	Աղբահանություն, քաղաքային վերամշակում և խողովակների մաքրում	17,041.0
	04	Տրամադրված և կոյուղու համակարգերի շահագործում	10,654,158.9
	05	Այլ ծրագրեր	4,052,720.0
09		ՎԱՌՆԵԿԱՅԻՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՍԱԼԻՐ	11,213,908.6
		այդ թվում	
	01	Վառելիքային և էներգետիկ համալիրի պետական կառավարում	477,214.2
	02	Էլեկտրաէներգետիկա	9,881,894.4
	03	Ատոմային էներգետիկա	854,800.0

10	ԳՅՈՒՂԱՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԶՎՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ	15,735,228.5
	այդ թվում	
01	Պլուզատնտեսության բնագավառում պետական կառավարում	296,393.6
02	Յողերի բարելավման աշխատանքներ	3,934,872.9
03	Չկնարժուծություն, ջրային տնտեսություն	2,972,803.3
04	Դույսերի պաշտպանություն	272,714.0
05	Առուներ, խողովակներ և հակահամաճարակային միջոցառումներ	1,354,880.0
06	Անտառային տնտեսություն	400,000.0
07	Տոհմաբուծություն, սերմնաբուծություն և այլ ծրագրեր	6,503,564.7
11	ՄՈՂՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԱԾՈՒՆԵՐ (բացառությամբ վաեղիքի), ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՂԱԳՂԱՏՈՒԹՅՈՒՆ	4,177,565.8
	այդ թվում	
01	Մոլորակաբուծության, հանքային հանածոների պաշարների, շինարարության և բնապահպանության բնագավառում պետական կառավարում	1,131,259.1
02	Լեռնահանքային արդյունաբերություն և երկրաբանահետախուզություն	27,000.0
04	Նախագծահետախուզական աշխատանքներ	1,120,400.0
05	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	241,778.0
06	Բնապահպանական այլ միջոցառումներ	1,686,944.4
07	Այլ ծրագրեր	(29,815.7)
12	ՏՐԱՆՊՈՐՏ, ԾԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՂԿՐՄԱ	21,271,232.4
	այդ թվում	
01	Տրանսպորտի և կապի բնագավառում պետական կառավարում	303,491.9
02	Ավտոմոբիլային և քաղաքային էլեկտրական տրանսպորտ	842,000.0
05	Օդային տրանսպորտ	(500,050.0)
07	Ճանապարհային տնտեսություն	20,625,790.5
13	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3,024,606.9
	այդ թվում	
01	Առևտրի, սպասարկումների, մատակարարման գործունեության և ընդհանուր բնույթի տնտեսական ծառայությունների բնագավառում պետական կառավարում	273,206.9
03	Նյութական ռեսուրսների պետական պահուստների ձևավորում և պահպանում	2,218,350.0
04	Զրուսաշրջիկություն	20,000.0

	05	Ընդհանուր բնույթի տնտեսական այլ ծառայություններ	513,050.0
14		ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԻՆ ՀՂԱՍԿՈՂ ԾԱՆՍԵՐ	33,973,118.5
		այդ թվում	
	01	Պետական պարտքային պարտավորությունների հետ զործառնություններ	12,130,745.5
	02	Տրանսֆերտային վճարումներ ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներ	13,762,694.2
	06	Այլ ծրագրեր	8,079,678.8

Հոդված 8. Հաստատել սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակները, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, հետևյալ չափերով՝

	Գումարը (հազար դրամներով)
ԸՆԴԱՄՆԵՆ ԾԱՆՍԵՐ	394,600,142.7
այդ թվում	
ԸՆԹԱՑԻԿ ԾԱՆՍԵՐ	295,680,906.1
այդ թվում	
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԶ	28,963,886.5
այդ թվում	
- քաղաքացիական ծառայողների պարգևատրման ֆոնդ	440,259.6
ՏՈԿՈՍԱԿՆԱԿՆԵՐ	12,130,745.5
այդ թվում՝	
Տոկոսավճարներ ներքին պարտքի դիմաց	7,301,262.6
Տոկոսավճարներ արտաքին պարտքի դիմաց	4,829,482.9
ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	13,057,518.1
այդ թվում՝	
Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ	338,294.2
Չեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաներ	12,719,223.9
ԸՆԹԱՑԻԿ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	66,412,627.2
այդ թվում՝	
Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարեցման սկզբունքով տրվող դոտացիաներ	13,752,000.0
Թոշակներ	15,415,414.5
Կրթաթոշակներ	1,536,539.8
Նպաստներ	22,372,035.1
Այլ ընթացիկ տրանսֆերտային վճարներ	13,336,637.8
այդ թվում՝	
- պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	2,941,902.1

- ԳՀ Ազգային ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերի փոխհատուցում	23,580.0
- ընթացիկ ներքին այլ տրանսֆերտային վճարներ	9,213,381.4
- օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների	1,157,774.3
ԿՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՏԱՍՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ	175,116,128.8
այդ թվում	
Ապրանքների ձեռքբերում	8,609,360.0
այդ թվում	
Գույք, գրասենյակային ապրանքներ և նյութեր	2,288,736.4
այդ թվում	
- գրասենյակային ապրանքներ և նյութեր	739,703.1
- գույք և սարքավորումներ	495,911.0
- փափուկ գույք և հանդերձանք	1,053,122.3
Ղեղղոյք և վիճակապային նյութեր	2,375,531.4
Սննդամթերք	3,117,755.5
Այլ ծախսեր	827,336.7
Գործուղումներ և ծառայողական ուղևորություններ	1,519,426.7
Տրանսպորտային ծառայությունների վճարներ	2,678,387.4
Կապի ծառայությունների վճարներ	1,724,419.6
Կոմունալ ծառայությունների վճարներ	2,089,989.8
այդ թվում	
Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր	1,869,152.1
Տրմուղ- կոյուղուց օգտվելու վարձի վճարման ծախսեր	165,958.6
Այլ կոմունալ ծախսեր	54,079.1
Այլ ծախսեր	158,494,545.3
այդ թվում	
Գույքի վարձակալության ծախսեր	138,075.9
այդ թվում	
- շենքերի, շինությունների և բնակարանների վարձակալության ծախսեր	138,075.9
Արտագերատեսչական պահպանության ծախսեր	646,929.1
Հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների կատարման ծախսեր	39,580.0
ԳՀ Ազգային ժողովի պատգամավորների նստաշրջանային ծախսեր	39,600.0
Ներկայացուցչական ծախսեր	536,566.7
Ղեկավարի ֆոնդ	150,000.0
Այլ ծառայությունների ձեռքբերման ծախսեր	156,943,793.6
այդ թվում	
- ԳՀ ղեկավարությունների և ռազմական կցորդների պահպանման ծախսեր	4,040,718.8
ԿՄՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ	88,849,674.2
այդ թվում	
ԿՄՊԻՏԱԼ ՆԵՐՈՂՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ	56,939,066.6
այդ թվում	

ԿՄՊԻՏԱԼ ԵՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐ	19,192,907.2
ՆԱՍՆԱԳՑԱԿԵՏԱԶՈՏԱԿԱԼ ԾԱԽՍԵՐ	2,601,998.2
ԵՐԿՐԱՐԱՆԱԳԵՏԱՍԽՈՒԶԱԿԱԼ ԾԱԽՍԵՐ	20,000.0
ՆՅՈՒԹԱԿԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՈՒՄՏԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ	2,100,000.0
ԿՄՊԻՏԱԼ ԱՎՏԻՎՆԵՐԻ ԶԵՆՔԲԵՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ	30,588,331.2
այդ թվում	
Ենթարկվողների և բնակարանների ձեռքբերման ծախսեր	2,754,656.6
այդ թվում	
Սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր	12,250,273.0
Տրանսպորտային միջոցների ձեռքբերման ծախսեր	1,004,421.6
Այլ ակտիվների ձեռքբերման ծախսեր	14,578,980.0
ԳԵՈՂԵԶԻՎԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՎԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	752,800.0
ԿՄՊԻՏԱԼ ՏՐԱՆՍԶԵՐՏՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	1,683,030.0
այդ թվում	
Կապիտալ ներքին տրանսֆերտներ	1,283,030.0
Կապիտալ արտաքին տրանսֆերտներ	400,000.0
ԿՄՊԻՏԱԼ ՆՈՐՈՂՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ	31,910,607.6
ՎԱՐԿՎԱԿՈՐՈՒՄ ՀԱՆԱԾ ՄԱՐՈՒՄԸ	10,089,562.4
այդ թվում	
Ներքին վարկավորում՝ հանած մարումը	(1,496,929.3)
այդ թվում	
Վարկերի ստացում	850,070.0
Վարկերի մարում	(2,346,999.3)
Մուտաբան վարկավորում՝ հանած մարումը	11,566,491.7
այդ թվում	
Վարկերի ստացում	13,636,600.0
Վարկերի մարում	(2,070,108.3)

Հոդված 9. Սահմանել, որ՝

9.1. 2006 թվականի հունվար ամսվա ընթացքում ՀՀ կառավարությունը չի շարունակի 2005 թվականի բյուջետային տարվա պարտավորությունների գծով գործառնությունների ձևակերպումների իրականացումը:

9.2. 2005 թվականի ընթացքում առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) ստացվող միջոցները կուտակվում են ՀՀ կենտրոնական բանկում՝ սեփականաշնորհման հատուկ հաշվում,

9.3. 2005 թվականին քաղաքացիական ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը կազմում է 20.000.0 դրամ, հարկային և մաքսային ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը՝ 55.500.0 դրամ, իսկ յուրաքանչյուր պետական մարմնի քաղաքացիական ծառայողների տարեկան պարգևատրման ֆոնդի միասնական տոկոսային դրույքաչափը՝ այդ մարմնի գծով ՀՀ 2004 թվականի պետական բյուջեով նախատեսված քաղաքացիական ծառայողների աշխատավարձի տարեկան ֆոնդի 10 տոկոսի չափով:

9.4. ՀՀ կառավարությանն առընթեր Հարկային պետական ծառայու-

թյան համակարգի զարգացման և ՀՀ կառավարությանն առընթեր Մաքսային պետական կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆունդերի գումարների օգտագործման ուղղությամբ հաստատում է ՀՀ կառավարությունը՝ տարեկան ծախսերի և նախահաշվի ձևով: Ֆոնդերի միջոցները, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացվող ամենամսյա հաշվետվություն հիման վրա, ձևակերպվում են որպես պետական բյուջեի համապատասխան եկամուտ և ՀՀ կառավարությանն առընթեր Հարկային պետական ծառայություն ու ՀՀ կառավարությանն առընթեր Մաքսային պետական կոմիտեի լնթացիկ ու կապիտալ ծախսերի հովվածներում՝ որպես պետական բյուջեի համապատասխան ծախս: Ընդ որում, նշված ֆոնդեր մուտքագրված, ինչպես նաև այդ ֆոնդերից ծախսված միջոցների գումարների չափով ավելացվում են սույն օրենքի 2-րդ և 6-8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների և ծախսերի գումարները:

9.5. ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի առաջին մասի Երևան քաղաքի տարածքում գոյացող եկամտատեսակները 2005թ. (մինչև Երևան քաղաքի կարգավիճակի մասին օրենքի ընդունումը) ամբողջությամբ ուղղվում են Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորմանը:

9.6. Համայնքների բյուջեներին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով եկամտալարիկից և շահութահարկից նախատեսված մասհանումները 2005թ. բյուջետային տարում ՀՀ պետական բյուջեից չեն կատարվում,

9.7. Սույն օրենքով նախատեսված ֆինանսական համահարթեցման դրտացանների ընդհանուր գումարի՝ ըստ առանձին համայնքների բաշխման նպատակով իրականացվող հաշվարկներում (համաձայն «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի) օգտագործվում են յուրաքանչյուր համայնքի գծով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված այդ համայնքի բյուջե 2003թ. վճարման ենթակա հողի հարկի և գույքահարկի տարեկան գումարները (առանց հողի հարկի և գույքահարկի գծով 2003թ. հունվարի 1-ի դրությամբ առկա չմարված ապարքների, տույժերի և տուգանքների գումարների), ավելացված ՀՀ օրենքներով և համայնքների Ավագանիների կողմից ընդունված որոշումներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հողի հարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկերի գծով համայնքների 2003թ. բյուջեներում եկամուտների կորուստների գումարները: Սահմանել, որ 2004թ. օգոստոսի 1-ի դրությամբ ֆիզիկական անձանց գույքահարկի հաշվարկներն համայնքների գծով 2005թ. ֆինանսական համահարթեցման դրտացանների

գումարների հաշվարկներում կիրառվում են այդ համայնքների դեկավարների կողմից ՀՀ հարկային պետական մարմնին հայտնաձև հիմնավորված ելակետային տվյալները:

9.8. Սույն օրենքով համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման դրտացանների ձևով տրամադրվող հատկացումների ընդհանուր գումարը ներառում է նաև ՀՀ օրենքներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հողի հարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկերի գծով համայնքների 2003թ. բյուջեներում եկամուտների կորուստների փոխհատուցման համար ՀՀ 2005թ. պետական բյուջեից հատկացվող գումարները: Համայնքների բյուջեներին՝ սույն օրենքով նախատեսված ֆինանսական համահարթեցման դրտացանների գումարում ՀՀ օրենքներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հողի հարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկերի գծով համայնքների 2003թ. բյուջեներում առաջացած եկամուտների կորուստների փոխհատուցման համար նախատեսված ամբողջ գումարի վճարմամբ, այդ կորուստները համարվում են ամբողջությամբ փոխհատուցված: ՀՀ օրենքներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հողի հարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկերի գծով համայնքների 2004թ. բյուջեներում առաջացող եկամուտների կորուստների գումարները փոխհատուցվելու են ՀՀ 2006թ. պետական բյուջեի միջոցների հաշվին:

9.9. Դատարանի վճիռներով պետական սեփականություն ճանաչվող և Երևանի քաղաքապետարանին հանձնվող ինքնակամ շինություն ճանաչված անշարժ գույքի ուղղակի վաճառքից կամ աճուրդով օտարումից ՀՀ 2005թ. պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտներն ուղղվում են Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի, ինչպես նաև նշված գույքի պետական գրանցման և օրենսդրությամբ սահմանված դեպքերում քանդման հետ կապված ծախսերի ֆինանսավորմանը՝ ՀՀ կառավարության սահմանված կարգով:

Հոդված 10. Հաստատել՝

10.1. Սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված բյուջետային հատկացումների բաշխումը՝ ըստ ՀՀ օրենսդիր, գործալիք և դատական իշխանության մարմինների՝ սույն օրենքի N1 հավելվածի համաձայն:

10.2. ՀՀ 2005թ. պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման դրտացանների ձևով տրամադրվող հատկացումների՝

- ըստ գործոնների բաշխման ենթակա հետևյալ ընդհանուր գումարները՝
- «ա» գործոնով և 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքներին տրամադրվող դրտացանի ընդհանուր գումարը՝ 5.716.788.4 հազար

դրամ, որից 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող յուրաքանչյուր համայնքին տրամադրվող դոտացիայի տարեկան գումարը՝ 1.500.0 հազար դրամ,

• «բ» գործունավ տրամադրվող դոտացիայի ընդհանուր գումարը՝ 7.950.000.0 հազար դրամ,

• ՀՀ օրենքներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին խողի եարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկերի գծով համայնքներին 2003թ. բյուջեներում եկամուտների կայունացման փոխհատուցմանն ուղղման ենթակա տարեկան գումարը 85.211.6 հազար դրամ.

10.3. Համայնքներին բյուջեների «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով դոտացիաներ տրամադրելու համար սույն օրենքի N1 հավելվածով նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալի բաշխումն ըստ առանձին համայնքներին՝ սույն օրենքի N2 հավելվածի համաձայն.

10.4. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կալաստրի պետական կոմիտեի համակարգի 2005թ. ծախսերի նախահաշիվը՝ 1.638.820.0 հազար դրամ գումարով՝ սույն օրենքի N3 հավելվածի համաձայն.

10.5. ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի 2005թ. բյուջեն, եկամուտները և ծախսերի գծով՝ 85.296.258.5 հազար դրամ գումարով՝ սույն օրենքի N4 հավելվածի համաձայն.:

10.6. Լևանա լճի վերականգնման 2005թ. տարեկան ծրագրի շրջանակներում՝ ՀՀ 2005թ. պետական բյուջեով նախատեսված ծախսերը՝ սույն օրենքի N5 հավելվածի համաձայն.

10.7. ՀՀ կենտրոնական բանկի 2005թ.

• վարչական ծախսերի նախահաշիվը՝ 2.848.065.8 հազար դրամ գումարով՝ սույն օրենքի N6 հավելվածի համաձայն,

• կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը՝ 2.295.847.8 հազար դրամ.

10.8. Կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագրի 2005թ. տարեկան միջոցառումները՝ սույն օրենքի N7 հավելվածի համաձայն.

10.9. Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքին համապատասխան բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ 2005թ. պետական բյուջեից սուբվենցիաներ ստացող համայնքների ցանկը և այդ սուբվենցիաները տրամադրելու համար նախատեսված հատկացումների գումարները՝ սույն օրենքի N8 հավելվածի համաձայն.

10.10. Սոցիալական ապահովության բնագավառում իրականացվող որոշ ծրագրերի գծով սույն օրենքի N9 հավելվածի համաձայն:

Հոդված 11. Թույլատրելի ՀՀ կառավարությանը 2005թ. անհրաժեշտության դեպքում

11.1. վերաբաշխել սույն օրենքի N1 հավելվածում բյուջետային ծախսերի

գործառնական դատակարգման նույն ծախսային ծրագիրն իրականացնող ՀՀ պետական կառավարման մարմինների միջև՝ նրանց գծով տվյալ ծրագիրն իրականացնելու համար սույն օրենքով հաստատված հատկացումները.

11.2. «Հայաստանի Հանրապետության 2004թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական բյուջեի 2004թ. տարեկարգի ազատ մնացորդի միջոցների հաշվին ֆինանսավորվող կապիտալ շինարարության և կապիտալ նորոգման ծրագրերի գծով, հիշյալ օրենքով նախատեսված հատկացումների՝ 2005թ. հունվարի 1-ի դրությամբ շիրացված մնացորդի սահմաններում, 2005թ. բյուջետային տարում շայունակել նրանց ֆինանսավորումը պետական բյուջեի 2005թ. տարեկարգի ազատ մնացորդի միջոցների հաշվին, և նշված միջոցների հաշվին կատարված ծախսերն արտահայտել ՀՀ 2005թ. պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում (առանձին հավելվածով)՝ կատարված ծախսերի գումարի չափով ավելացնելով սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված բյուջետային հատկացումների և պետական բյուջեի դեֆիցիտի ընդհանուր գումարները, 3-րդ հոդվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների համապատասխան գումարներ.

11.3. Ի լրումն «Հայաստանի Հանրապետության 2002թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի մասին, «Հայաստանի Հանրապետության 2003թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 22-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության 2004թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 14-րդ մասի՝ 2005թ. բյուջետային տարում շնարվող նախորդ տարիների բյուջետային պարտքերի մարման գծով սահմանել նորատրոհում՝ մինչև մեկ տարի ժամկետով,

• ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխով նախատեսված՝ պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործողություններով պատճառած վնասի հատուցման պարտավորությունների, բացառությամբ գործարքով կամ իրավական ակտերով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով ներկայացված վնասի հատուցման պարտավորությունների,

• ՀՀ 2005թ. պետական բյուջեի կատարման ընթացքում ՀՀ կառավարության որոշումների հիման վրա տրվող հատկացումներով մարվող պարտավորությունների,

11.4. ՀՀ-ում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող՝ սույն օրենքի N1 հավելվածով նախատեսված վարկային ծախսային ծրագրերի կատարման ընթացքին նպատակելու նպատակով, այդ ծրագրերը ֆինանսավորելիս (նշված ծախսերի ֆինանսավորման համապատասխան վարկային աղբյուրների առկայությամբ), չգործադրելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նա-

խատեսված բյուջետային հատկացումների վերաբաշխման մեխանիզմը և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի պայման, գերազանցել պլանը գծով սույն օրենքի N1 հավելվածի N17 աղյուսակով սահմանված՝ արտաքին աղբյուրներից ստացվող վարկերի հաշվին նախատեսված հատկացումների ընդհանուր գումարը և սույն չափով նաև այդ ծրագրերի գծով սահմանված հատկացումների ընդհանուր գումարը, ինչպես նաև սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված պետական բյուջեի դեֆիցիտի գումարը.

11.5. Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի մկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման դեպքում «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան կատարվող վճարների հաշվին ՀՀ 2005թ. պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտների գումարի չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների և 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարները:

Հոդված 12. Թույլատրել ՀՀ կենտրոնական բանկին անհրաժեշտության դեպքում, վերաբաշխել սույն օրենքի N6 հավելվածով սահմանված վարչական ծախսերը (ըստ ենթահոդվածների) այն պայմանով, որ թույլ չտրվի վարչական ծախսերի սույն օրենքի N6 հավելվածով սահմանված յուրաքանչյուր ենթահոդվածի գծով նախատեսված ծախսերի կրճատում 15 տոկոսի կամ ավելացում 30 տոկոսի չափով:

Հոդված 13. ՀՀ կառավարությանը և ՀՀ կենտրոնական բանկին՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված չափաքանակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը 2005թ. բյուջետային տարվա ընթացքում կարող է իրականացվել բացառապես «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված՝ ֆինանսական շուկայում պետական արժեթղթերի ձեռքբերման և օտարման միջոցով:

Հոդված 14. Սույն օրենքի NN 1-9 հավելվածները համարվում են սույն օրենքի անբաժանելի մասերը:

Հոդված 15. Սույն օրենքը, բացառությամբ 11-րդ հոդվածի 14-րդ մասի, ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից, իսկ օրենքի 11-րդ հոդվածի 14-րդ մասը՝ հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

«Պետբյուջեի մասին» ՀՀ օրենքը հաստատվում է ՀՀ նախագահի կողմից: Ընդ որում, 2005թ. «Պետբյուջեի մասին» օրենքը ՀՀ նախագահի կողմից վավերացվել է 2004թ. դեկտեմբերի 29-ին և հրատարակվել 2005թ. հունվարին՝ թիվ 3 պաշտոնային տեղեկագրում:

4.5. Պետբյուջեի եկամուտները և նրա աղբյուրները

Պետական բյուջեի մասին օրենքի առաջին մասով նախատեսվում է պետական բյուջեի ընդհանուր եկամուտները, որի մեջ ներառվում են նաև տրանսֆերտները: Ընդհանուր եկամուտների և տրանսֆերտների տարբերությունը կազմում են ընթացիկ եկամուտները: Այն բաղկացած է հետևյալ եկամուտներից.

- հարկային եկամուտներ,
 - պետական տուրքեր,
 - ոչ հարկային եկամուտներ,
 - պետական կապիտալի գործառնություններից եկամուտներ:
- Այժմ պարզաբանենք այդ եկամուտների աղբյուրները.

Հարկային եկամուտներ - Դրանք այն եկամուտներն են, որոնք վճարում են տնտեսավարող սուբյեկտները պետական բյուջեին, քանի որ նրանք համարվում են հիմնական հարկատուներ: Հարկային եկամուտները ստացվում են զանազան հարկատեսակներից, ինչպիսիք են ուղղակի հարկերը (եկամտահարկ, շահութահարկ, հողի հարկ, գույքահարկ, պարգեցված հարկ և կաստատագրված վճարումներ):

Հարկային եկամուտները ստացվում են նաև անուղղակի հարկերից, ինչպիսիք են ԱԱՀ-ն, ակցիզային հարկը, մաքսավճարները և մաքսատուրքերը, որոնք սահմանվում են ապրանքների արտադրության, վաճառքի, ներմուծման և արտահանման համար:

Պեպական տուրքեր - Պետական տուրքեր են կոչվում այն տուրքերը, որոնք սահմանվում են բնակչությանը մատուցած ծառայությունների համար: Պետական տուրքի չափը սահմանվում է նվազագույն աշխատավարձի (1996 թվականից՝ 1000 դրամ) կամ մաքսատուրքի չափից ելնելով (մաքսատուրքի բազային չափը նախատեսված է նվազագույն աշխատավարձի 12-ապատիկի չափով՝ 12000 դրամ): Որպես պետական տուրքի համար ծառայություններ համարվում են.

- դատարան տրվող հայցադիմումների և դատաիրավական համակարգի փաստաթղթերի պատճենավորում, տեղեկանքների տրամադրում,
- ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ փոփոխելու համար,
- ՀՀ դեսպանատների ծառայության համար (ՀՀ-ն աշխարհի 32 երկրներում ունի դեսպանատներ),
- Կոմերցիոն և ոչ կոմերցիոն կազմակերպությունների գրանցման համար (բազային մաքսատուրքի 10-ապատիկի չափով՝ 12 . 1000 . 10 = 120000 դրամ),
- մշակութային արժեքների արտահանման և վկայական տալու համար,

ՀՀ պետական բյուջեի եկամուտները և նրա կառուցվածքը (2003թ.)

No	եկամուտներն ըստ աղբյուրների	Գումարը (մլրդ դրամ)	կառուցվածքը տոկոսով եկամուտների նկատմամբ
1.	Պետական բյուջեի եկամուտներ	274.1	X
2.	Պաշտոնական տրանսֆերտներ	60.9	X
	Ընդամենը եկամուտներ(տող 1+ տող 2)	335.0	X
3.	Ընթացիկ եկամուտներ, այդ թվում	225.6	100.0
3.1	Գարկային եկամուտներ	207.6	92.0
3.2	Պետական տուրքեր	12.8	5.7
3.3	Ոչ հարկային եկամուտներ	5.2	2.3
3.4	Կապիտալի գործառնությունից եկամուտներ	0.7	0.2

Ինչպես երևում է պետբյուջեի տվյալներից, ընդհանուր եկամուտների մեջ հարկային եկամուտները 2003թ. կազմել են 92.0 %, պետտուրքերը՝ 5.7, ոչ հարկային եկամուտները՝ 2.3 և կապիտալի գործառնություններից եկամուտները՝ 0.2 տոկոս: Մինչդեռ, 2004թ. հարկային եկամուտները կազմել են 88.5%, պետական տուրքերը՝ 5.4%, ոչ հարկային եկամուտները՝ 5.3%, իսկ կապիտալի գործառնությունից ստացված եկամուտները՝ 2 %, պաշտոնական տրանսֆերտները՝ 0.3 տոկոս: Ըստ 2004թ պետբյուջեի հարկային եկամուտները նախատեսվել է 242.6 մլրդ դրամի չափով, որը նախորդի նկատմամբ ավելին է 17 %-ով կամ շուրջ 35 մլրդ դրամով: Դա կազմում է ՀՆԱ-ի 14 տոկոսը: Պետական տուրքերից եկամուտները նախատեսվել է 14.6 մլրդ դրամ, որը 2003թ. նկատմամբ ավելացել է 14 %-ով կամ 1.7 մլրդ դրամով: Այն կազմում է ՀՆԱ-ի 0.86 տոկոսը:

Ոչ հարկային եկամուտները նախատեսվել է 5.4 մլրդ դրամի չափով, որը 2003թ. նկատմամբ ավելացել է 3 %-ով կամ 179 մլն դրամով: Պետական կապիտալի գործառնությունից եկամուտները նախատեսվել են 723.4 մլն դրամ, որի աճը 2003թ. նկատմամբ կազմում է 66% կամ 288 մլն դրամ:

ՀՀ պետբյուջեի 2003թ. եկամուտների կառուցվածքը ցույց տանք դիագրամայի ձևով (Դիագրամա 1):


- գյուտերի համար,
 - ֆիզիկական անձանց տրվող զանազան փաստաթղթերի համար,
 - լիցենզիայի (Liconzien - գործունեության թույլտվություն) համար,
 - այլ ծառայությունների համար:
- Ոչ հարկային եկամուտներ .** - Դրանք այն եկամուտներն են, որոնք չունեն հարկերի բնույթ, այլ համարվում են հետևյալ եկամուտները.
- Կենտրոնական բանկի եկամուտների գերազանցումը ծախսերին,
 - պետական մարմինների և նրանց ենթակա բյուջետային կազմակերպությունների հաշվեկշռում հաշվառվող գույքի վարձակալությունից ստացված եկամուտներ,
 - դիվիդենդները (շահաբաժինները), որոնք ստացվում են պետական արժեթղթերից,
 - պետական վարկերից ստացված տոկոսավճարները,
 - տիրազուրկ, բռնագրավված, նվիրատվության և պետությանը անցած ժառանգության իրավունքով գույքի իրացումից մուտքեր,
 - իրավախախտումների համար եկամուտներ (տույժ-տուգանքներ),
 - այլ ոչ հարկային մուտքեր:

Կապիտալի գործառնությունից եկամուտներ .- Դրանք այն եկամուտներն են, որոնք ստացվում են պետական կապիտալի ներդրումից: Օրինակ, պետական կարճաժամկետ, միջինժամկետ և երկարաժամկետ պարտատուներից ստացված եկամուտները:

4.6.Պետբյուջեի եկամուտների կառուցվածքը և նրա որոշման կարգը

Սովորաբար, վերլուծությամբ որոշվում է պետական բյուջեի եկամուտների, այդ թվում հարկային եկամուտների կառուցվածքը: Պետական բյուջեի եկամուտների կառուցվածք ասելով հասկացվում է առանձին տեսակների եկամուտների տեսակարար կշիռը ընթացիկ եկամուտների նկատմամբ՝ արտահայտված տոկոսով: Ըստ էության այն համարվում է նաև եկամտի առանձին տեսակների տեսակարար կշիռը տոկոսով: Նույն սկզբունքով որոշվում է նաև հարկային եկամուտների կառուցվածքը, այսինքն՝ առանձին հարկատեսակների տեսակարար կշիռը հարկային եկամուտների նկատմամբ՝ տոկոսով:

Այժմ ցույց տանք Հայաստանի հանրապետության պետական բյուջեի եկամուտները, նրանց աղբյուրները և կառուցվածքը (Աղյուսակ 1)



Հարկային եկամուտներ 207.6 մլրդ. դրամ 9.2 %
 ■ Պետական տուրք 12.8 մլրդ. դրամ 5.7 %
 ■ Ոչ հարկային եկամուտներ 5.2 մլրդ. դրամ 2.3 %

Պաշտոնական տրանսֆերտները 2004թ. ծրագրվել են 10.9 մլրդ դրամի չափով, որը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 4.9 մլրդ դրամով կամ 31 տոկոսով:

Հարկային եկամուտների կառուցվածքը ցույց տանք լստ ՀՀ 2003թ. պետական բյուջեի տվյալների (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ պետբյուջեի հարկային եկամուտները
 և նրանց կառուցվածքը (2003թ.):

No	Հարկային աղբյուրների եկամուտները	ըստ	Գումարը, մլրդ դրամ	Հարկային եկամուտների կառուցվածքը, %
1.	Հարկային եկամուտներ		220.4	100.0
1.1.	ԱԱՀ		103.2	46.8
1.2.	Շահութահարկ		21.8	9.9
1.3.	Եկամտահարկ		14.7	6.7
1.4.	Ակցիզային հարկ		39.2	17.8
1.5.	Մաքսատուրքեր		11.8	5.4
1.6.	Հաստատագրված վճարներ		7.2	3.3
1.7.	Պարզեցված հարկ		4.2	1.9
1.8.	Բնօգտագործման և բնապահպանման վճարներ		4.3	1.9
1.9.	Պետական տուրքեր		12.8	5.8
1.10	Այլ հարկային եկամուտներ		1.1	0.5

ՀՀ 2004թ. պետբյուջեի եկամուտները բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

ՀՀ 2004 պետական բյուջեի եկամուտները

(մլրդ դրամով)


Պետական բյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	274.122
որից	
ա. ցմբաջիկ եկամուտներ	282.472
որից	
1. Հարկային եկամուտներ	242.556
2. Պետական տուրք	14.569
3. Ոչ հարկային եկամուտներ	5.347
բ. կապիտալի գործառնություններից եկամուտներ	0.723
այդ բվում	
երևան քաղաքում տեղաբաշխված պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարումից	0.300
գ. պաշտոնական տրանսֆերտներ	10.927

Ինչպես երևում է հարկային եկամուտների կառուցվածքից, նրանում համեմատաբար, բարձր տեսակարար կշիռ ունի ԱԱՀ-ն (46.8 %), այնուհետև՝ ակցիզային հարկը (17.8%), ապա շահութահարկը (9.9 %): Մինչդեռ, տնտեսապես զարգացած երկրներում պետական բյուջեի հարկային եկամուտների մեջ մեծ տեսակարար կշիռ ունի շահութահարկը, քանի որ ձեռնարկություններն աշխատում են լրիվ ծանրաբեռնվածությամբ, ստանում են մեծ չափով շահույթ և հարկատուները բարեխղճորեն պետական բյուջե են մուծում շահութահարկը: Մյուս կողմից, այդ երկրներում ցածր է ստվերային տնտեսության տեսակարար կշիռը: Սակայն, Հայաստանի Հանրապետության պետական բյուջում յուրաքանչյուր տարի հարկային եկամուտների մեջ գերակշռողը հանդիսանում է ԱԱՀ-ն, որը հանդիսանում է ապրանքաշրջանառության հարկ, այսինքն անուղղակի հարկ:

Գույքահարկը և հողի հարկը 2003թ. սեպտեմբերից զանձում են համայնքները և լրիվ մնում է նրանց բյուջեում (2002թ. պետբյուջեով նախատեսվել էր գույքահարկ 14.3 մլրդ դրամ և հողի հարկ՝ 0.1 մլրդ դրամ, որոնք հարկային եկամուտների մեջ համապատասխանաբար կազմել են 7.2 և 0.1 տոկոս):

Այժմ ցույց տանք հարկային եկամուտների և պետական տուրքերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ (Դիագրամա 2):

Հարկային եկամուտները ՀՆԱ-ի Օկատմամբ (%)



4.7. Պետբյուջեի ծախսերի էությունը և նրանց ուղղությունները

Պետբյուջեի եկամուտների հաշվին, ըստ բյուջեի մասին օրենքի հաստատվում է տարբեկան ծախսերն ըստ ուղղությունների: Պետական բյուջեի ծախսերը կազմում են՝

- օլեննդիլը (իշխանություն) և գործադիր մարմինների (կառավարություն) պետական կառավարման ծախսերը,
- երկրի պաշտպանության ծախսերը,
- ոստիկանության, ազգային անվտանգության և դատախարակական մարմինների գործունեության ծախսերը,
- պետական կրթության և գիտության ծախսերը,
- առողջապահության ծախսերը,
- սոցիալական ապահովագրության և ապահովության ծախսերը,
- մշակույթի, տեղեկատվության, սպորտի և կրոնի ծախսերը,
- բնակարանային կոմունալ տնտեսության ծախսերը,
- վառելիքա-էներգետիկ համալրի գործունեության ծախսերը,

• գյուղատնտեսության, ւնտառային , ջրային տնտեսությունների համակարգի և պետական ձկնաբուծության ծախսերը,

• արդյունաբերության (բացի վառելիքաէներգետիկ համակարգից) , հանքային հանածոների, շինարարության և բնապահպանության ծախսերը,

• տրանսպորտի, ճանապարհային տնտեսության և կապի ծախսերը,

• տնտեսական այլ ծառայությունների գծով ծախսերը,

• իրմնական խմբին չդասվող ծախսերը (պետական պարտքեր, տրանսֆերտների վճարումներ, պետբյուջեից համայնքներին և այլ ծառայություններին կատարվող ծախսեր):

Այսպիսով, պետական բյուջեի եկամուտները ծախսվում են պետական կառավարման նպատակով (հանրապետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հաշվով), ինչպես նաև կառավարության, նրա նախարարությունների, վերջիններին ենթակա բյուջետային կազմակերպությունների գործունեությունը ապահովելու համար: Այդ նպատակով պետբյուջեից կատարվող հատկացումները ցույց է տրվում բյուջետային կազմակերպության ծախսերի նախահաշիվներում, ինչպես նաև գյուղական և քաղաքային համայնքների բյուջեներում (տեղական, տարածքային բյուջե):

4.8. Պետբյուջեի ծախսերի կառուցվածքը և նրա որոշման կարգը

Պետբյուջեի ծախսերի կառուցվածք ասելով իսակացվում է ծախսերի ամեն մի տեսակի տեսակարար կշիռը ընթացիկ ծախսերի համադրմանը՝ արտահայտած տոկոսով: Ըստ 2003թ. պետբյուջեի ընդհանուր ծախսերի՝ նրա չափը և կառուցվածքը կազմում է (Աղյուսակ 3).

2003թ. պետքայլի ծախսերը և նրա կառուցվածքը (%-ով)

No	Ծախսերի ուղղությունները	Ծախսերի չափը, մլրդ դրամ	Կառուցվածքը տոկոսով
	Ընդամենը ծախսեր	347.9	100.0
1.	Ընդհանուր բնույթի պետական կառավարման ծախսեր	27.1	7.8
2	Երկրի պաշտպանության ծախսեր	44.3	12.8
3	Ոստիկանություն, ՍԱ և դատաիրավական համակարգի ծախսեր	20.8	6.0
4.	Կրթություն և գիտություն	34.9	10.1
5.	Առողջապահություն	21	10
6	Սոցիալական ապահովագրություն և ապահովություն	30.8	8.9
7	Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն	15	4.3
8.	Բնակարանային կոմունալ տնտեսություն	34.4	9.9
9.	Վառելիքա-էներգետիկ համալիր	12.4	3.6
10.	Գյուղատնտեսություն, անտառային, ջրային տնտեսություն և պետական ձկնաբուծություն	19.3	5.5
11.	Արդյունաբերություն (բացի վառելիքա-էներգետիկ համակարգից), հանքային հանածոներ, շինարարություն և բնապահպանություն	6.9	2.0
12	Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ	37	10.7
13	Տնտեսական այլ ծառայություններ	1.7	0.4
14	Զիմնական խմբերին չդասվող ծախսեր	42.3	12.2

Պետքայլի ծախսերի կառուցվածքից երևում է, որ նրանում բարձր տեսակարար կշիռ է կազմում երկրի պետական կառավարման ծախսերը

(12.8%) և արտադրանությանը՝ (13.7%) : Մյուսընդ, դեռևս ցածր է պետական կրթության, գիտության, առողջապահության, մշակույթի և սոցիալական ապահովագրության ծախսերը: Հետևապես, անհրաժեշտ է կրճատել պետական կառավարման ծախսերը և ավելացնել սոցիալական ոլորտի ծախսերը: Դա հաշվի է առնվել 2005թ. պետքայլի մասին օրենքում , որն ընդունվել է 2004թ. դեկտեմբերին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից:


Պետքայլի ծախսերի փոփոխագիտական դասակարգումը. Պետքայլի մասին օրենքի 7-րդ հոդվածով նախատեսվում է ընդամենը ծախսերը և ծախսերի ուղղությունները, ըստ որի ցույց տվեցինք ծախսերի կառուցվածքը: Մասկայն, այդ մույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսվում է պետքայլի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման:

Ըստ դրա, պետքայլի ծախսերը դասակարգվում են հետևյալ երկու տեսակի ծախսերի մեջ.

առաջին, **ընթացիկ ծախսեր** .- դրանք այն ծախսերն են, որոնք նախատեսվում են ըստ ուղղությունների և ծախսվում են տվյալ տարում (աշխատավարձ, սոցիալական վճարներ, վարձակալական վճարներ, ապահովագրական վճարներ, վարչական և այլ ընդհանուր ծախսեր),

երկրորդ, **կապիտալ ծախսեր** .- դրանք այն հիմնական ծախսերն են, որոնք ներդրվում են կապիտալ շինարարության, գիտահետազոտական, երկրաբանական-հետախուզական , պետական պահուստների ձևավորման համար: Այդ ծախսերը երկարաժամկետ ծախսեր են, որոնք ներդրվում են մեկ տարուց ավելի ժամկետով: Այդ ծախսերը կոչվում են կապիտալ ներդրումներ, այսինքն հիմնական (երկարաժամկետ) ծախսեր:

Ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման, մույնպես որոշվում է ծախսերի կառուցվածքը՝ մույն սկզբունքով: Այն ցույց տանք դիագրամայի ձևով՝ ըստ 2003թ. պետքայլի գործառնական ծախսերի դասակարգման (Դիագրամա 3):



- 01 Օրոշումներ քաղաքի տնտեսական մատչելիության
- 02 Պատրաստված բյուջե
- 03 Կատարված կազմի պահպանումը բյուջե, աջակցի անվտանգություն և դաժանակն արժեքները
- 04 Կրթություն և գիտություն
- 05 Առողջապահություն
- 06 Նրբագեղական արվեստի տարածում և արդիական տարածվածություն
- 07 Մշակույթ, ստեղծագործություն, սպորտ և կրթ
- 08 Բնակարանային-կոմունալ տնտեսություն
- 09 Վաճառքի թափանցիկ և չեղարկելի համակարգ
- 10 Օրոշումներ հարկային, անտեսանելի և քրեական տնտեսության, ծննդաբանության
- 11 Անդրազգային կապերի և հարկային համակարգի (տնտեսության վաճառքի, շահագործման և բնակարանային բյուջե)
- 12 Երեսնամյա, երեսնամյա և ավելի տնտեսություն, կապ
- 13 Տնտեսական այլ տեսակետներ
- 14 Գնահատված ինտելեկտուալ ծախսեր

4.9. Պետությունից դեֆիցիտը և նրա ծածկման աղբյուրները

Եթե պետական բյուջեի ծախսերը գերազանցում են եկամուտներին, ապա ստացվում է դեֆիցիտ (ճեղքվածք): Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն 2001-2003թթ. եղել է դեֆիցիտային. ընդ որում, 1991-2000թթ. ըստ տարիների նրա չափը աճել է՝ 34 մլրդ դրամից (1993թ.) հասնելով 54 մլրդ դրամի, սակայն 2001-2002թթ. նրա չափը կազմել է 41-47.5 մլրդ դրամ, 2003թ. պետությունից դեֆիցիտը նախատեսվել էր 42 մլրդ դրամ, սակայն փաստացի կատարողականով պետությունը եղել է պրոֆիցիտային (հավելյուրդային)՝ 1.8 մլրդ դրամի չափով: Միաժամանակ, 2003թ. պետությունից ծախսային մասում տնտեսվել էր 12 մլրդ դրամ և Ազգային ժողովի որոշմամբ այն ուղղվել է 2004թ. կապիտալ ծախսերին՝ ուղղելով այն համայնքների կողմից ներդրումներին՝ ճանապարհներ և բնակարաններ կառուցելու համար: 2004թ. 10 ամսվա արդյունքներով, պետությունից կատարողականը նույնպես հավելյուրդային է, որի չափը կազմում է 4.5, իսկ տարեկան կտրվածքով՝ 4.9 մլրդ դրամ: 2005թ. պետությունից դե-

ֆիցիտը նախատեսվել 49.2 մլրդ դրամի չափով:

Գոյություն ունի պետությունից դեֆիցիտի ծածկման երկու աղբյուր. առաջին, ներքին աղբյուրներ, երկրորդ, արտաքին աղբյուրներ:

Որպես ներքին աղբյուրներ համարվում են .-

- պետական արժեթղթերը (բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլն),
- պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումից միջոցները: Ընդ դրան, ներքին աղբյուրների հաշվին մարվում է 1993թ. փոխստության պարտատոմսերը և մուրհակները (պարտավորագրերը):

Որպես արտաքին աղբյուրներ համարվում են.

- միջազգային կազմակերպությունների միջոցները, այդ թվում՝ վարկերի ստացում, վարկերի մարում,
- օտարերկրյա պետությունների միջոցները, այդ թվում վարկերի ստացում (Համաշխարհային բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է արտոնյալ վարկեր 30-40 տարվա մարման ժամկետով՝ 0.75-1% տկոսադրույքով, մարումը կատարելով 10-րդ տարվանից):

Այն ստանում է ՀՀ Կենտրոնական բանկը և մրցութային կարգով տրամադրում առևտրային բանկերին՝ 16-18% տոկոսադրույքով ու: տոկոսների տարբերության հաշվին ստանում է եկամուտ և ծախսերի փոխհատուցելուց հետո՝ շահույթ: Քանի որ Կենտրոնական բանկը իրավունք չունի աշխատել շահույթով, ապա ստացված շահույթի 80 տոկոսը բռնագանձվում է պետական բյուջե, իսկ 20 տոկոսը մնում է ԿԲ-ի տրամադրության ներքո,

• Վարկերի մարում:

Սակայն գոյություն ունեն այլ արտաքին աղբյուրներ, ըստ որի ստացվում է վարկ, որի հաշվին մարվում է բյուջեի դեֆիցիտը: Պետական բյուջեի դեֆիցիտի ծածկման աղբյուրները ըստ 2003թ. պետությունից կազմել է. դեֆիցիտը՝ 47.3 մլրդ դրամ, որը կազմում է ՀՆԱ-ի 3.3 տոկոսը (2002թ.՝ կազմել է 3.1%): 2003թ. նախատեսված էր պետությունից դեֆիցիտի 2.8 տոկոսը ծածկել ներքին և 97.2 տոկոսը՝ արտաքին աղբյուրների հաշվին: Պետությունից դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները ցույց տանք 2004թ. բյուջեով (դեֆիցիտը կազմել է 42.4 մլրդ դրամ):

Ներքին աղբյուրներ-

- պետական արժեթղթեր (5.27 մլրդ դրամ),
- մուրհակների մարում (0.6 մլրդ դրամ),
- 1993թ. պետական ներքին շահույթ փոխստության պարտատոմսերի

ետ գնում (0.1 մլրդ դրամ):

- Այլ աղբյուրներ,
- Արտաքին աղբյուրներ -
- վարկերի ստացում՝ 45.7 մլրդ դրամ,
- վարկերի մարում (8.0 մլրդ դրամ):

Բացի այդ, երկրի արտաքին պարքը ավելացել է 5,4%-ով կամ 96,1 մլն \$-ով և ընդհանուր պարտքը 2005թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 1884,8 մլն դոլար: Ըստ ԱՎԾ-ի տվյալների՝ երկրի համախառն արտաքին պարքի 49,9 %-ը կազմում է պետական կառավարման համակարգի պարտքը (1002,6 մլն \$), 19,4 %-ը՝ բաժին է ընկնում երկրի մասնավոր հատվածին (366,7 մլն \$), 12,8 %-ը՝ դրամավարկային կարգավորման օրգաններին (240,6 մլն \$), 6,9 %-ը՝ առևտրային բանկերին (129,3 մլն \$), իսկ 11%-ն՝ օտարերկրյա ուղղակի ներդրումներ են, որոնք ստացվել են ձեռնարկությունների կողմից՝ միջֆինանսյին վարկերի տեսքով: Ընդ որում, համախառն արտաքին պարտքերի մեջ գերակշռողը (70,6 %) կազմում են երկարաժամկետ պարտքերը (1333,1 մլն \$), որը 2004թ. ավելացել է 76,6 մլն դոլարով:


Բյուջետայի ծախսերը դասակարգվում են 14 խմբերի, որը երևում է դիագրամայից:

ՀՀ 2004 թ. պետական բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման


	(մլրդ դրամով) Տարեկան պլան
Ընդհաննը ծախսեր	317.039
այդ թվում	
Ընթացիկ ծախսեր	244.120
այդ թվում	
Աշխատավարձ	22.795
Տոկոսավճարներ	13.231
Սուբսիդիաներ	14.098
Ընթացիկ տրանսֆերտներ	49.826
Սուբսիդիաների, գնման և ծառայությունների վճարման ծախսեր	144.170
Կապիտալ ծախսեր	61.605
Վարկավորում հանած մարումը	11.313

Այս նույն տվյալները ընդամենը և ընթացիկ ծախսերի վերաբերյալ պատկերված են 4-4 և 4-5 դիագրամներում:


Ընամենը ծախսերի կառուցվածքը, 317.039 մլրդ. դրամ



Ընթացիկ ծախսերի կառուցվածքը, 244.12 մլրդ. դրամ



ՀՀ 2004թ. պետքուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման հետևյալ պատկեր է ներկայացնում:



- | | |
|--|---|
| 01 Ընդհանուր ընտրի պետական ծախսերուն | 08 Բնակարանային-կոնստրուկտիվ տնտեսություն |
| 02 Պաշտպանություն | 09 Վառելիքային և էներգետիկ համալիր |
| 03 Դասարանական կարգի պահպանություն, ազգային անվտանգություն և դատական գործունեություն | 10 Գյուղատնտեսություն, անտառային և զբային տնտեսություն, ձկնաբուծություն |
| 04 Կրթություն և գիտություն | 11 Արդյունաբերություն, հանքային ռեսուրսներ (քարածուխի վառելիքի), շինարարություն և բնակարանային տնտեսություն |
| 05 Առողջապահություն | 12 Ցրանաբոլոր, մանկապարտեզային տնտեսություն և կառուցվածքային |
| 06 Արդյունաբերական արտադրություն և սնունդային արտադրություն | 13 Տնտեսական այլ ծախսերուն |
| 07 Աշակերտ, տեղեկատվություն, սպորտ և կրթություն | 14 Հիմնական խմբին չբաժանվող ծախսեր |

4.10. 2004-2005թթ. ՀՀ պետական բյուջեները

2004թ. ՀՀ պետական բյուջեն ունի սոցիալական ուղղվածություն, այսինքն՝ զգալի միջոցներ են նախատեսվել երկրի սոցիալական ոլորտի (պետական կրթություն և գիտություն, առողջապահություն, մշակույթ և սպորտ) զարգացման նպատակով, ներառյալ բյուջետային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձի, կենսաթոշակների, ընտանեկան նպաստների և վերջապես բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Այսպես, 2004թ. հունվարից մվազագույն ամսեկան աշխատավարձը սահմանվել է 13 հազար դրամ, որից օգտվել են ոչ առևտրային՝ բյուջետային կազմակերպությունների ավելի քան 40 հազար աշխատողներ, քանի որ նրանց ամսեկան աշխատավարձը եղել է դրանից ցածր:

2004թ. բյուջեով աշխատավարձի բարձրացման համար նախատեսվել է 75 մլրդ դրամ: Ուսուցիչների միջին աշխատավարձը նախատեսվել է հասցնել ամսեկան 30 հազար դրամ (ավելացումը ամսեկան 12 հազար, բժիշկներինը՝ 33 հազար դրամ): Պետական կրթության ոլորտին բյուջեով հատկացվել է 39 մլրդ դրամ, այսինքն աճը՝ 23 տոկոս: Գիտության ծախսերը նախատեսվել է 3.5 մլրդ դրամ կամ ավելացել է 2.3 տոկոսով:

Ինչպես երևում է, դեռևս իրիստ ցածր է գիտության ծախսերը և լիովին չի օգտագործվում այդ բնագավառի ներուժը՝ հատկապես կապված բնական գիտությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների հետ: Մեր երկիրն ունի մտավոր, գիտական մեծ ներուժ, որն արդյունավետ օգտագործելու և այլ երկրների հետ համագործակցելու դեպքում կարող է ստանալ զգալի եկամուտներ՝ համաաշխարհային վալյուտայով՝ արտարժույթով: Դա հնարավորություն կտա մտավոր սեփականության հաշվով ստանալ մեծ չափով եկամուտներ: Հետևապես, հարկ է պետքուջեի ծախսերի կառուցվածքում ավելացնել գիտությանը հատկացվող ծախսերը:

2004թ. պետական բյուջեի եկամուտները նախատեսվել է ավելացնել 88 մլրդ դրամով և հասցնել 374 մլրդ դրամի՝ նախորդ տարվա 286 մլրդ դրամի դիմաց, այդ թվում հարկային մուտքերը՝ 257 մլրդ դրամ:

Պետքուջեի ծախսերը նախատեսվել է 417 մլրդ դրամ կամ 83 մլրդ դրամով ավելին, քան 2003 թվականին: Հետևապես, պետքուջեի դեֆիցիտը նախատեսվել է 43 մլրդ դրամ կամ 4 մլրդ դրամով պակաս, քան 2003 թվականին: Երևան քաղաքը ուղակի մարզկենտրոն և քաղաքայնաբանը ուղակի մարզպետարան, ինչպես և երկրի մնացած 10 մարզպետարանները չունեն իրենց բյուջեն և ուղղակի ֆինանսավորվում են պետքուջեի միջոցների հաշվին: Սակայն, մեր կարծիքով, նպատակահարմար է, որ մարզպետարանները ևս ունենան իրենց բյուջեն, որը կարող է ձևավորվել պետական և տեղական (գյուղական և քաղաքային համայնքների) բյուջեների հաշվին՝ ուղղակի չափով (տոկոսով) հատկացման միջոցով: Դրա համար լավ կլինի, որ Ազգային ժողովի կողմից փոփոխություններ կատարվեն «Բյուջեի մասին» ՀՀ օրենքում: 2004թ. պետքուջեից Երևան քաղաքի ֆինանսավորմանը հատկացվել է 44.5 մլրդ դրամ:

Երկրի մասշտաբով հարկային մուտքերը նախատեսվել են պետքուջեի մուտքերի 85 տոկոսի չափով: Ընդ որում, եկամտահարկը և շահութահարկը միասին կազմում է 15%, իսկ ԱԱՀ-ն և ակցիզային հարկը՝ 70 տոկոս:

Տնտեսապես զարգացած երկրների պետքուջեի եկամուտների մեջ գերակշռում են ուղղակի հարկերը (86-95 %), իսկ մեր երկրում 1991-

2005թթ. գերակշռում են անուղղակի հարկերը:

2004թ. պետական բյուջեով հարկային մուտքերի չափը նախատեսվել էր ավելացնել 36 մլրդ դրամով: Դա ապահովելու նպատակով ԱԺ-ի կողմից 2003թ. դեկտեմբերի 21-ին քննարկվեց հարկային մի փաթեթ, որը բաղկացած էր 13 օրինագծից: Եվ անհրաժեշտ լրացումներ ու փոփոխություններ կատարվեց հարկային և լատ հարկատեսակների օրենքներում: 2004թ. պետական բյուջեն Ազգային ժողովի կողմից ընդունվել է դեկտեմբերի 25-ի այտահերթ նստաշրջանում՝ 96 կողմ, առանց դեմ և ձեռնպահ կողմնորոշման: Ընդ որում, պետբյուջեն Ազգային ժողովի ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական մշտական հանձնաժողովում և ԱԺ-ի նստաշրջանում քննարկվելու ժամանակ կատարվել են մեծ թվով առաջարկություններ և դիտողություններ, որից 129 առաջարկություններ ընդունել է կառավարությունը:

Փոքր բիզնեսի աջակցման ֆինանսավորման չափը 2004թ. պետական բյուջեով նախատեսվել է այնքան, որքան նախատեսվել էր 2003թ., այսինքն 250 մլն դրամ: 2004թ. պետբյուջեն էապես տարբերվում է նախորդ տարիների բյուջեներից, քանի որ ունի սոցիալական ուղղվածություն:

Այժմ անդրադառնանք 2004թ. բյուջեի նախատեսված եկամուտների տնտեսական-համեմատական վերլուծությանը:

2004 թ. պետական բյուջեի եկամուտներն ու պաշտոնական տրանսֆերտները նախատեսված են 274.1 մլրդ դրամ, որը նախորդ տարվա 287.0 մլրդ դրամի համեմատությամբ ցածր է 4 տոկոսով կամ 12.9 մլրդ դրամով: Պաշտոնական տրանսֆերտները նվազել են 50.0 մլրդ դրամով, որի հիմնական պատճառը Լիճսի հիմնադրամի միջոցների հաշվին իրականացվող նպատակային ծրագրերի ավարտն է: 2004 թ., ինչպես նաև հետագա տարիների համար հիմնադրամի նոր նպատակային ծրագրի շարունակականության վերաբերյալ որոշակիության բացակայության պատճառով 2004 թ. պետական բյուջեում բացակայում են հիմնադրամից միջոցների հատկացումները պետբյուջեին:

Միևնույն ժամանակ, 2004 թ. ընդհանուր եկամուտները առանց պաշտոնական տրանսֆերտների 2003թ. բյուջեով նախատեսվածի համեմատությամբ սահմանվել է 36.9 մլրդ դրամ կամ շուրջ 16 տոկոսով ավելի:

Պետբյուջեի հարկային եկամուտները նախատեսվել են ՀՆԱ-ի 14 տոկոսի՝ չափով, այսինքն 242.6 մլրդ դրամ, որը նախորդ տարվա 207.6 մլրդ դրամի համեմատ ավելին է շուրջ 34.96 մլրդ դրամով կամ 17 տոկոսով:

Պետական տուրքերից եկամուտները 2004 թ. նախատեսվել են ՀՆԱ-

ի մոտ 0.9 տոկոսի չափով՝ 14.6 մլրդ դրամ, որը 14 տոկոսով կամ 1.7 մլրդ դրամով ավել է 2003 թ. բյուջեով նախատեսվածից:

Ոչ հարկային եկամուտներից 2004 թ. ծրագրավորվել է ստանալ 5.35 մլրդ դրամ, որը 179.1 մլն դրամով կամ 3 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա ծրագրային ցուցանիշը:


Պետական կապիտալի գործառնություններից եկամուտները նախատեսվել են 723.4 մլն դրամ, նախորդ տարվա ծրագրված 435.4 մլն դրամի դիմաց, աճը կազմում է շուրջ 66 տոկոս կամ 288 մլն դրամ:

Պաշտոնական տրանսֆերտները 2004 թ. համար ծրագրվել են 10.9 մլրդ դրամի, նախորդ տարվա 15.8 մլրդ դրամի դիմաց:

Այժմ ցույց տանք 2003թ. և 2004թ. պետական բյուջեների եկամուտների կառուցվածքը (Դիագրամա 4):

Դիագրամա 4

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների կառուցվածքը 2003-2004 թվականներին (տոկոս ընդհանուրի նկատմամբ)



2004 թ. պետական բյուջեի ընդամենը ծախսերը և զուտ վարկավորումը նախատեսվում են 317.0 մլրդ դրամ, ինչը 2003 թ. պետական բյուջեով նախատեսվածից ցածր են 17.2 մլրդ դրամով կամ 5 տոկոսով: Նվազման հիմնական պատճառը Լիճսի հիմնադրամի միջոցների հաշվին իրականացվող նպատակային ծրագրերի ավարտն է: 2004 թ. պետական բյուջեով նախատեսված ծախսերը 18.8 մլրդ դրամով գերազանցում են 2003 թ. համադրելի ցուցանիշները:

Ծախսերի գործառնական դասակարգումը ըստ ուղղությունների հերթյակ պարկերն է ներկայացնում:

Կրթության և գիտության բնագավառի ծախսերի ֆինանսավորման համար նախատեսվել է 42.1 մլրդ դրամ, որը շուրջ 20.5 տոկոսով կամ 7.2 մլրդ դրամով աճել է նախորդ տարվա համեմատ: Այդ բնագավառին հատկացվող ծախսերը տեսակարար կշռի մեծությամբ հանդիսանում են երկրորդ տեղը՝ ընդամենը ծախսերի մեջ՝ 13.3 տոկոս: Կրթության և գիտության բնագավառի 2004 թ. համար ծրագրված ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է շուրջ 2.5 տոկոս:

Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության գծով ծախսերը 2003 թ. համեմատ ավելանալով 18 տոկոսով, կամ 5.6 մլրդ դրամով, տարվա համար ծրագրվել են 36.5 մլրդ դրամ, որը կազմում է ՀՆԱ-ի մոտ 2.2 տոկոսը: Աճը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակային ապահովման ծախսերի գծով 2 մլրդ դրամ կամ 17 տոկոս և բնակչությանը տրամադրվող պետական նպաստների գծով 3.4 մլրդ դրամ կամ շուրջ 2.5 տոկոս ավելացմամբ: Սոցիալական ապահովության միջոցառումների գծով 2004 թ. ծրագրվել է կատարել 2.5 մլրդ դրամի ծախս, որը 16 %-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Առողջապահության ոլորտի ծախսերի ֆինանսավորման համար 2004 թ. նախատեսված 25.0 մլրդ դրամը 2003 թ. ծրագրային ցուցանիշը գերազանցում է շուրջ 19 տոկոսով կամ 4.0 մլրդ դրամով՝ կազմելով ՀՆԱ-ի 1.5 տոկոսը: Ծախսերի ծրագրված աճը հիմնականում տեղի է ունենալու ի հաշիվ առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության ծախսերի (1.7 մլրդ դրամ) և հիվանդանոցային բուժօգնության ծախսերի 1.3 մլրդ դրամ ավելացումների:

Մշակույթի, տեղեկատվության, սպորտի և կրոնի ոլորտին 2004 թ. հատկացվող ծախսերը նվազել են 6.8 մլրդ դրամով: Մակայն բացառելով Լինսի հիմնադրամից մշակութային օջախների վերականգնմանն ուղղվող գումարները, որոնք 2003 թ. համար նախատեսված էին 7.9 մլրդ դրամ՝ 2004 թ. ավելացել է շուրջ 1.1 մլրդ դրամով:


Տրանսպորտի, մանապարհային տրանսպորտի և կապի ոլորտի 2004 թ. ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերի մեջ կազմելու է 4.9%՝ 2003 թ. 11.1 տոկոսի դիմաց:

Պաշտպանության բնագավառի ծախսերն ընդհանուր ծախսերի մեջ ունի համեմատաբար բարձր տեսակարար կշիռ, որն օրինաչափ է: Ոլորտի ծախսերի ֆինանսավորման համար նախատեսվել է 49.6 մլրդ դրամ,

այսինքն ընդհանուր ծախսերի 15.7 տոկոսը: Բնագավառի ծախսերը նախորդ տարվա նկատմամբ ծրագրավորվել են 5.3 մլրդ դրամով կամ 12 տոկոսով ավելին:

Հիմնական խմբերին չդասվող ծախսերը, չնայած 29 տոկոսի կամ 12.2 մլրդ դրամի չափով նվազել են նախորդ տարվա համեմատությամբ, սակայն ինչպես նախորդ տարիներին, 2004 թ. ևս համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն ընդհանուր ծախսերի կառուցվածքում և այն կազմում է 9.5 %, իսկ ՀՆԱ-ի նկատմամբ՝ 1.8 տոկոս: Պետական պարտքային պայտավորությունների հետ գործառնությունները նախորդ տարվա համեմատ նվազելու են շուրջ 5 %-ով և 2004 թ. կկազմեն 13.2 մլրդ դրամ: ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներ ուղղվող տրանսֆերտային վճարները 17 %-ով կամ 1.5 մլրդ դրամով ավելին է և դատաքնան կազմում 10.7 մլրդ դրամ: Հատկանշական է ,որ այլ ծրագրեր ենթախմբով նախատեսված ծախսերի չափը նախորդ տարվա համեմատությամբ՝ նվազել է շուրջ 13.1 մլրդ դրամով կամ 68 տոկոսով:

Այժմ ցույց տանք 2003-2004թթ. պետբյուջեի այլ ծախսերի կառուցվածքը ՀՆԱ-ի նկատմամբ (Դիագրամա 5):



Պետբյուջեի եկամուտների և ծախսերի տնտեսագիտական դասակարգումը հետևյալ պատկերն է ներկայացնում (աղյուսակ 4):

Աղյուսակ 4.

Պետական բյուջեի եկամուտների և ծախսերի տնտեսագիտական դասակարգումը 2003-2004թթ

№	Ցուցանիշները	2003թ. տարեկան ծրագիր (մլրդ դրամ)	2004թ. տարեկան ծրագիր (մլրդ դրամ)	Աճը (կամ նվազումը) տարվա %		ՄԱԿ-ի մկատմամբ %
				մլրդ դրամ	%	
1.	Պետական բյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	288.88	274.12	-12.88	-4.0	18.18
2.	Ընդամենը եկամուտներ	226.03	263.20	37.17	16.0	15.53
3.	Ընթացիկ եկամուտներ	225.59	262.47	36.88	16.0	15.49
3.1	Քարկային եկամուտներ	207.60	242.56	34.96	17.0	14.32
3.2.	Պետական տուրք	12.83	14.30	1.47	14.0	0.86
3.3.	Ոչ հարկային եկամուտներ	5.17	5.35	0.18	3.0	0.32
3.4	Պետական կապիտալ գործառնություններից եկամուտներ	0.44	0.72	0.29	66.0	0.04
3.5	Պաշտոնական տրանսֆերտներ	60.95	10.93	-50.03	-82.0	0.64
1.	Ընդամենը ծախսեր	334.24	317.04	-17.20	-5.0	18.71
2.	Ընթացիկ ծախսեր	226.24	244.12	17.88	-8.0	14.41
2.1.	Աշխատավարձ	12.66	22.79	10.13	80.0	1.35
2.2	Տոկոսավճարներ	13.91	13.23	0.68	-5.0	0.78
2.2.1	Ներքին տոկոսավճարներ	7.69	7.60	-0.09	-1.0	0.45
2.2.2	Արտաքին տոկոսավճարներ	6.22	5.63	-0.59	-10.0	0.33
2.3.	Մուբսիդիաներ	14.29	14.10	-0.19	-1.0	0.83
2.4.	Ընթացիկ տրանսֆերտներ	44.03	49.83	5.80	13.0	2.94
2.5.	Հանձնարարների բյուջեներից տրվող դոտացիաներ	9.15	10.70	1.54	17.0	0.63
2.6.	Կենսաբոլջակներ	11.52	13.51	1.99	17.0	0.80
2.7.	Կրթաբոլջակներ	1.31	1.33	.001	1.0	0.06
2.8.	Նպաստներ	13.51	17.03	3.52	26.0	1.01
2.9.	Այլ ընթացիկ տրանսֆերտային վճարներ	8.53	7.26	-1.27	-15.0	0.43
3.	Ապրանքների զննման և ծաղայությունների վճարման ծախսեր	141.34	144.17	2.83	2.0	8.51

3.1.	Ապրանքների ծեղբերում	5.90	8.84	0.94	16.0	0.40
3.2.	Գույք. գրանցմանային ապրանքներ և նյութեր	0.86	1.77	0.88	99.0	0.10
3.3.	Պարտաք և վերականգնիչ նյութեր	3.88	1.52	-2.38	-61.0	0.09
3.4.	ՍՏՏՊԱՆՔՆԵՐԻ ԳՆՈՒՄ	0.62	7.83	2.21	357.0	0.17
3.5	Այլ ծախսեր	0.51	0.72	0.21	41.0	0.04
3.6.	Գործուղումներ և ծաղայության ուղևորություններ	0.98	1.38	0.38	39.0	0.08
3.7	Տրանսպորտային ծաղայությունների վճարներ	0.78	1.87	1.09	139.0	0.11
3.8.	Կապի ծաղայությունների վճարներ	0.71	1.33	0.62	88.0	0.08
3.9.	Կոմունալ ծաղայությունների վճարներ	0.99	1.71	0.72	0.73	0.10
3.10	Այլ ծախսեր	131.97	131.04	-0.93	-1.0	7.73
4.	Կապիտալ ծախսեր	111.50	61.61	-49.89	-45.0	3.64
4.1.	Կապիտալ ներդրումների ծախսեր	103.37	48.30	-57.07	-55.0	2.73
4.1.1	Կապիտալ շինարարության ծախսեր	81.44	11.50	-69.93	-86.0	0.68
4.1.2	Նախագահության ծախսեր	1.77	1.91	0.14	8.0	0.11
4.1.3	Երկրաբանահետախույզային ծախսեր	0.03	0.02	-0.01	-47.0	0.00
4.1.4	Նյութական հետազոտության անհատական ծախսեր	1.17	2.17	1.00	85.0	0.13
4.1.5	Կապիտալ ակտիվների ծեղբերման ծախսեր	17.47	29.79	12.31	70.0	1.76
4.1.6	Ընթացիկ շինությունների և ճակատների ծեղբերման ծախսեր	0.08	0.38	0.30	363.0	0.02
4.2.	Կապիտալ նորոգումների ծախսեր	8.13	14.90	6.77	83.0	0.88
5.	Վարկավորում հանած մարում ընդամենը	-3.50	11.31	14.82	-423.0	0.87
5.1.	Ներքին վարկավորում հանած մարում	-10.83	0.19	10.82	-102.0	0.66
5.2	Արտաքին վարկավորում հանած մարում	7.13	11.12	4.00	56.0	0.01
6.	Պետությունից դեֆիցիտ	47.26	42.92	-4.34	-9.0	2.53
6.1.	Պետության ֆինանսավորման աղբյուրներ					
6.1.1	Ներքին աղբյուրներ	1.32	5.27	3.95	300.0	0.31
6.1.1.1	Պետական պոնժաբներ	1.42	5.27	3.84	163.0	0.31
6.1.2	Գանձապետական պարտատոմսեր	2.00	5.30	3.30	165.0	0.31
6.1.3	Մուրհակների մարում	-0.88	-0.01	0.57	-89.0	0.00
6.1.4	Պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերի ետգնում		-0.03	-0.03	100.0	0.00
6.1.5	Ներքին այլ աղբյուրներ	-0.11	-	0.11	-100.0	0.00
6.2.	Արտաքին աղբյուրներ	45.94	37.65	-23.45	-34.0	2.89
6.2.1	Վարկերի մարում	-23.16	-8.00	15.15	-65.0	0.47

Այժմ ցույց տանք պետբյուջեի ծախսերի գործառնական դասակարգումը (աղյուսակ 5):

Աղյուսակ 5.

Պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգումը 2003-2004թթ.

№	Ցուցանիշները	2003թ. տարեկան ծրագիր (մլրդ դրամ)	2004թ. տարեկան ծրագիր (մլրդ դրամ)	Աճի արտոթոս (մլրդ դրամ)	տարվա %	ՀԱԱ-ի մեծությունը, %
	Ընդամենը ծախսեր	334.24	317.04	-17.20	-5	18.71
1.	Ընդհանուր բնույթի պետական ծախսեր	27.10	33.03	5.93	22.0	1.95
2.	Երկրի աշտպանության ծախսեր	44.32	49.63	5.30	12.0	2.93
3.	Ոստիկանություն, ազգային անվտանգություն և դատախազական համակարգի ծախսեր	20.84	25.07	4.23	20.0	1.48
4.	Կրթություն և գիտություն	34.91	42.06	7.15	20.5	2.48
5.	Առողջապահություն	21.01	25.01	4.00	19.0	1.5
6.	Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն	30.82	36.45	5.63	18.0	2.15
7.	Աշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն	15.04	8.19	-6.84	-46.0	0.48
8.	Բնակ կոմունալ տնտեսություն	34.38	16.23	-18.15	-53.0	0.96
9.	Վառելիքային և էներգետիկ համալիր	12.39	13.39	1.00	8.0	0.79
10.	Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն և պետական ձկնաբուծություն	19.32	14.36	-4.97	-26.0	0.85
11.	Արդյունաբերություն, հանքային հանածոներ (բացառությամբ վառելիքի), շինարարություն և բնապահպանություն	-6.88	5.14	12.01	-	0.30
12.	Տրանսպորտ, մասնագրհային տնտեսություն, կապ	36.96	15.48	-21.48	-58.0	0.91
13.	Տնտեսական ծախսեր այլ	1.69	2.88	1.19	71.0	0.17
14.	Ֆինանսական չդասվող ծախսեր	42.31	30.12	-12.20	-29.0	1.78

Այժմ անդրադառնանք 2005թ. ՀՀ պետական բյուջեի էություն պայքարներին.

2005թ. պետական բյուջեն ունի ընդգծված սոցիալական ուղղվածություն: 2005թ. պետբյուջեի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից: ՀՆԱ-ի աճը նախատեսվում է երկու տրիլիոն 28 մլրդ դրամ: 2005թ. պետբյուջեի եկամուտները նախատեսված է 345.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 280 մլրդ դրամի դիմաց, ծախսերը՝ 394.6 մլրդ դրամ, պետբյուջեի դեֆիցիտը՝ 49.2 մլրդ դրամ: 2005թ. պետական բյուջեով երկրի սոցիալական ոլորտին նախատեսվել է հատկացնել 46 մլրդ դրամ, այսինքն՝ 10 մլրդ դրամ ավելի, քան նախատեսված է եղել նախորդ տարվա հաշվով: Ընտանեկան նպաստների հաշվով նախատեսվել է 20 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 16.4 մլրդ դրամի դիմաց, որի շնորհիվ ընտանեկան նպաստը ամսեկան 9500 դրամից կհասցվի 12500 դրամի: Կենսաթոշակներին հատկացվող ծախսերը կավելանան 1.5 մլրդ դրամով և սոցիալական (բազային) կենսաթոշակը 2005թ. ապրիլի 1-ից կավելանա մեկ հազար դրամով և կկազմի ամսեկան 4 հազար դրամ: Կավելանա մեկ աշխատանքային ստաժի համար կենսաթոշակի չափը՝ ամսեկան մեկ հազար դրամ և միջին կենսաթոշակը կկազմի 9700 դրամ: Նախկին 8600 դրամ միջին կենսաթոշակի փոխարեն: Ջգալիորեն կավելանա պետական կրթության ծախսերը և դրա հաշվին կրթության բնագավառի աշխատողների միջին աշխատավարձը կբարձրանա 2.6 տոկոսով, ուսուցիչների միջին աշխատավարձը կավելանա 20 հազար դրամով և կկազմի 50551 դրամ (աճը՝ 65 %), բժիշկների միջին աշխատավարձը կհասցվի ամսեկան 37 հազար դրամի, մշակույթի բնագավառի աշխատողների միջին աշխատավարձը՝ 16100 դրամից կհասցվի 23500 դրամի, այսինքն կբարձրանա 15 տոկոսով: Ջգալիորեն բարձրացել է մեկ երկրի պաշտպանության ծախսերը՝ 37 մլրդ դրամից հասնելով 46.4 մլրդ դրամ:

2005թ. պետական բյուջեի հարկային եկամուտների աճը տեղի է ունենալու հիմնականում հարկային վարչարարության և ինտելեկտ, մեկ տնտեսական աճի հաշվին: Նախատեսված է ՀՆԱ-ի աճ՝ 10 տոկոսի չափով: Հարկային մուտքերը կավելանան 48.7 մլրդ, իսկ պետբյուջեի ծախսերը՝ 58.4 մլրդ դրամով: Ընդ որում, ծախսերի ավելացում կկատարվի հիմնականում սոցիալական ոլորտում: Այսպես, եթե պետբյուջեի սոցիալական ոլորտի ծախսերը նախատեսվել է ավելացնել 19%-ով, ապա պետական կրթության, գիտության և առողջապահության ոլորտում կավելանա 30 տոկոսով:

2005թ. պետբյուջեով նախատեսված է դեֆիցիտ 49.2 մլրդ դրամի չա-

փով, այսինքն ընդհանուր եկամուտները նախատեսված է 345.3 մլրդ դրամ, այդ թվում ընթացիկ եկամուտները՝ 327.8 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 15.1 տոկոսը: Ոչ հարկային եկամուտները նախատեսվել են 5.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 5.3 մլրդ դրամի դիմաց, որը պայմանավորված է կենտրոնական բանկի շահույթի իջեցումով: Պաշտոնական տրանսֆերտները կկազմեն 10.7 մլրդ դրամ: 2005թ. պետբյուջեի ծախսերը նախատեսվել են 394.6 մլրդ դրամ: Երկրի Ազգային անվտանգության և ոստիկանության ծախսերը նախատեսվել է նախորդ տարվա չափով: ՀՀ սոցիալական ասպահովագրության հիմնադրամի եկամուտները և ծախսերը կկազմեն 85.1 մլրդ դրամ:

2005թ. պետբյուջեն հաշվարկվել է 589 դրամը հավասար ամերիկյան մեկ դոլարի համարժեքով, սղաճը՝ 3%, տնտեսական աճը՝ 10 տոկոս: ՀՆԱ-ի նկատմամբ պետբյուջեի ծախսերը 2004թ. 18.2 %-ի փոխարեն 2005թ. կկազմի 18.5%, իսկ դեֆիցիտը՝ 2004թ. 2.8 %-ի փոխարեն՝ 2005թ. կկազմի 2.3 տոկոս: Առողջապահության բնագավառում մեկ հիվանդի օրական բուժման միջին ծախսը 8300 դրամից կհասնի 8700 դրամ: 2005թ. պետբյուջեի 49.2 մլրդ դրամի ծածկման աղբյուրներ են ծառայելու ներքին և արտաքին աղբյուրները: Համաշխարհային բանկից (ՀԲ) և միջազգային ֆինանսական կազմակերպություններից ու Կոնոյ երկրներից ստացվելու է 50 մլրդ դրամ վարկեր, որից 39.5 մլրդ դրամը նպատակային վարկեր են, որոնք ուղղվելու են կրթության, առողջապահության, գյուղատնտեսության ծրագրերի կատարմանը, 10.7 մլրդ դրամն ուղղվելու է աղբատության նվազեցման աջակցմանը և պետական արտաքին պարտքից (առ 1-ը հոկտեմբերի 2004թ. երկրի արտաքին պարտքը կազմում է 1.1 մլրդ \$)՝ 2005թ. մարվելու է 8.5 մլրդ դրամ:

2005թ. պետական բյուջեն կազմելիս, նկատի է առնվել, որ երկրի տնտեսության մասնավոր հատվածը տալիս է ՀՆԱ-ի 80 տոկոսը: Ըստ էության, 2005թ. պետբյուջեն ունենալով ընդգծված սոցիալական ուղղվածություն, միաժամանակ, որպես գերակայություն, առաջին խնդիրը պետբյուջեում ենթակառուցվածքների զարգացումն է: Տրանսպորտի և կապի ոլորտին հատկացվող միջոցներն 2004թ. համեմատ գրեթե կրկնապատկվել են և կազմելու են 12 մլրդ դրամ: Եթե 2004թ. ճանապարհների պահպանմանը հատկացվել է 5.3 մլրդ դրամ, ապա 2005թ. կհատկացվի 11.4 մլրդ դրամ: ՀՆԱ-ի անվանական արժեքը 2005թ. կկազմի 2.58 տրիլիոն դրամ (3.847 մլրդ \$), որը 1989թ. մակարդակը կգերազանցի 7 տոկոսով: Ընդ որում, 2000թ. ՀՆԱ-ի մակարդակը 1989թ. մակարդակից ցածր է եղել 36 տոկոսով:

սով: 2000-2004թ.թ. ՀՀ-ում կրկնապատկվել է ՀՆԱ-ի չափը: Բնակչության կենսամակարդակը՝ ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2005թ. կկազմի 1186 \$, որը 2000թ. ցուցանիշի նկատմամբ բարձր է 2.4 անգամ: ՀՆԱ-ի կառուցվածքում, կապիտալ շինարարության ներդրումները կկազմեն 15.7 տոկոս:

2005թ. պետբյուջեով հարկային մուտքերը նախատեսված են 2004թ.՝ 92.2% և 2003թ. նկատմամբ 91 տոկոսի չափով: Այսպես, հարկերը և պետական տուրքերը նախատեսված է 310.0 մլրդ դրամ, որը կազմում է ՀՆԱ-ի անվանական արժեքի 15.1 տոկոսը, նախորդ տարվա 327.9 մլրդ դրամի փոխարեն:

4.11. Պետբյուջեի կատարման վիճակը ՀՀ-ում (2002-2004թթ.)

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն 1991-2000թթ. ըստ տարիների եղել է դեֆիցիտային և նրա չափը ըստ տարիների աճել է՝ 34 մլրդ դրամից հասնելով 54 մլրդ դրամի: Սակայն, 2001-2005թթ. ըստ տարիների նվազել և կազմել է 49.2 մլրդ դրամ:

Սակայն պետբյուջեի կատարման վիճակով առաջընթաց է նկատվում 2003-2004թթ.: Այսպես, 2003թ. փաստացի բյուջեն առաջին անգամ դարձել է հավելուրդային, այսինքն եկամուտները գերազանցել են ծախսերին 1.8 մլրդ դրամով, իսկ 2004թ. 10 ամսում՝ 4.5 մլրդ և տարեկան կտրվածքով՝ 4.9 մլրդ դրամով: 2002-2004 թթ. պետական բյուջեի կատարման վիճակը ըստ տարիների բարելավվել է: Այսպես, 2002թ. հունվար-օգոստոս ամիսներին պետբյուջեի եկամուտները կազմել են 137.4 մլրդ դրամ, որը 2001թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ավելացել է 12 տոկոսով: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎՇ) տվյալների, այդ նույն ժամանակաշրջանում պետբյուջեի ծախսերը կազմել են 142.5 մլրդ դրամ, իսկ բյուջեի դեֆիցիտը՝ 5.1 մլրդ դրամ: Մինչդեռ, 2001թ. նույն ժամանակաշրջանում բյուջեի ծախսերը կազմել են 150.3 մլրդ դրամ: Ընդ որում, 2002թ. ընթացիկ ծախսերը նույն ժամանակաշրջանում կազմել են 121.4 մլրդ դրամ: 2002թ. տնտեսավարող սուբյեկտների, այսինքն՝ հարկատուների թիվը կազմել է 117158 սուբյեկտներ և այդ տարում զգալիորեն ավելացել են հարկային մուտքերը՝ ի հաշիվ որոշ սուբյեկտների իրավական դաշտ փոխադրելու: 2002թ. հարկային մուտքերն 8 ամսում աճել են 26 տոկոսով, իսկ մաքսային մուտքերը՝ կրճատվել են 4 մլրդ դրամով: Հարկային մուտքերի 26 տոկոս աճը տեղի է ունեցել 8 մլրդ դրամով՝ ստվերային տնտեսության կրճատման և մնացածը տնտեսական աճի հաշվին:

Հարկ է նշել, որ ստվերային համակարգում մայր սուբյեկտները (առևտրային հաշվարկով աշխատող բոլոր կայքի կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, առևտրային բանկերը, վարկային, ներդրումային, ապահովագրական և շահույթ հետապնդող այլ առևտրային կազմակերպությունները), որոնք թեև ունեն լիցենզիա, հաշվառման մեջ են հարկային տեսչությունում, գրանցված են պետական ռեգիստրի կազմակերպությունում, սակայն մասնակի չափով թաքցնում են լիցենզ եկամուտները և խուսափում հարկերից, ինչպես նաև այն սուբյեկտները, որոնք գործում են ստվերում, գրանցված չեն պետական ռեգիստրի կազմակերպությունում և լրիվ խուսափում են հարկերից: Ստվերային տնտեսության մեջ են գտնվում նաև մաքսամեղմությանը զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք հայտարարագրով մաքսային կետերում լրիվ չեն հայտարարում արտահանվող կամ ներմուծվող ապրանքի մասին՝ խուսափելով մաքսավճարներից և մաքսատուրքերից: Անկախության տարիներին մեր երկրի պետությունը 2002թ. առաջին անգամ եկամտային մասով կատարվել է գրեթե բոլոր հույվածներով, մարվել է 7.9 մլրդ դրամ արտաքին պարտք, ՀՆԱ-ի աճը կազմել է 12.9 տոկոս, ոլոր աճն ախտահեղ աճ է:

Երկրում նկատվել է պետական կարճաժամկետ պարտատուների (ՊԿՊ) աճ՝ 16.3 տոկոսով՝ 90.4 մլրդ դրամի փոխարեն հավաքվել է 94.3 մլրդ դրամ մաքսավճարներ և մաքսատուրքեր: Տնտեսական աճի հաշվին հարկային մուտքերը 2002թ. ավելացել են 14 մլրդ դրամով: Ընդհանուր առմամբ 2002թ. բյուջեով նախատեսված 193.4 մլրդ դրամի դիմաց ընդհանուր եկամուտները կազմել են 198.6 մլրդ դրամ:

2003թ. պետությունից եկամուտները նախատեսված է եղել 286.9 մլրդ դրամ և փաստացի կազմել է 292. մլրդ դրամ, այսինքն ապահովել է 1.8% աճ: Ծախսերի մասով արձանագրվել է 93.5 % կատարողական: Բացարձակ արտահայտությամբ պետությունից ծախսերը 2003թ. կազմել են 313 մլրդ դրամ: Ծախսերի թերակատարումները հիմնականում պայմանավորվում են նյանց տնտեսումով: Պետությունից դեֆիցիտը կազմել է 24 մլրդ դրամ և այն ֆինանսավորվել է, այսինքն դեֆիցիտը ծածկվել է 43.4 տոկոսով կամ 20.7 մլրդ դրամի չափով՝ նախատեսված 47.5 մլրդ դրամի դիմաց: 2001-2002թթ. պետությունից եկամուտների և ծախսերի կատարման առանձնահատկությունն այն է, որ այն կատարվել է՝ առանց պետական կառավարման ծախսերի գծով պարտքերի կուտակման: 2003թ. հունվարի 1-ի դրությամբ պետական մարմինների հաշվետվություններով ներկայացրած պարտքերը 2003թ. ֆինանսավորվել են ամբողջությամբ: Այսինքն, 2003թ. հաջողվել է լուծել նախորդ բյուջետային տարիների կա-

տարումների արդյունքում արձանագրված պարտքերի հիմնախնդիրը և 2004 թվականը սկսվել է առանց նախկին բյուջետային պարտքերի: Բյուջեի կատարման արդյունքում 2003թ. ստացվել է շուրջ 12 մլրդ դրամի տնտեսում, որն էլ 2004թ. ըստ Ազգային ժողովի որոշման, այդ գումարը հատկացվել է համայնքներին՝ ճանապարհաշինարարության և բնակարանային շինարարության նպատակներով ծախսելու համար: 2004թ. հունվարի 1-ի դրությամբ երկրի արտաքին պարտքը կազմել է մեկ մլրդ 97.7 մլն \$, ոլոր կազմում է ՀՆԱ-ի 39.4 տոկոսը: Ընդ որում, նախորդ տարիների համեմատ ՀՆԱ-ի մեջ պետական արտաքին պարտքի տեսակարար կշռի նվազման միտում է նկատվում: 2003թ. պետական արժեթղթերի տեղաբաշխման շնորհիվ հնարավոր է եղել բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորել (պետությունից դեֆիցիտի մարման ներքին աղբյուր) 2.3 մլրդ դրամի չափով: Կառավարության պահուստային ֆոնդը գերաժախտ չի տվել, այլ տնտեսել է 1.2 մլրդ դրամ:

2004 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 178 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ շուրջ 173.6 մլրդ դրամ, որոնք ապահովել են ՀՀ կառավարության կողմից հաստատված իննամսյա ծրագրի համապատասխանաբար 89.5 և 82.1 տոկոսը: 2004 թվականի պետական բյուջեի մասին օրենքով սահմանված տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների մասով՝ 64.2 տոկոսով, ծախսերի մասով՝ 61.3 տոկոսով:

Նախորդ տարվա մայր ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն ավելացել են 19.2 %-ով կամ 28.7 մլրդ դրամով: Ընդ որում, մոտ 23.9 մլրդ դրամով ավելացել են հարկային եկամուտները, 1.2 մլրդ դրամով՝ պետական տուրքի գծով մուտքերը և 3.6 մլրդ դրամով՝ ոչ հարկային եկամուտները, իսկ կապիտալի գործառնություններից եկամուտների գծով արձանագրվել է անկում՝ 923.5 մլն դրամով:

2004 թվականի առաջին ութ ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները հիմնականում ձևավորվել են հարկային մուտքերի հաշվին, որոնք ապահովել են եկամուտների 85.6 տոկոսը: Պետական տուրքերը կազմել է բյուջեի եկամուտների 6.3 %-ը, կապիտալի գործառնություններից եկամուտները՝ 0.7%-ը, պաշտոնական տրանսֆերտները՝ 2.6 տոկոսը:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են 152.3 մլրդ դրամ և 87.4 տոկոսով ապահովել իննամսյա ծրագիրը: 2003 թվականի մայր ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտներն 2004թ. ինն ամսում աճել են 18.6 տոկոսով: Հատկանշական է, որ գրեթե բոլոր հարկատեսակների գծով արձանագրվել են

աճի բարձր տեմպեր: Հարկային եկամուտների նման բարձր ցուցանիշներն ապահովվել են այսօրվային շուկայում ամերիկյան դոլարի վաճառքների գոյության անկման պայմաններում, որի ազդեցությունը բյուջեի վրա մեծ է՝ կապված ներմուծման գծով ստացվող եկամուտների բարձր տեսակարար կշռի հետ: Ընթացիկ տարում դրական միտումներ են արձանագրվել ուղղակի հարկերի, հատկապես շահութահարկի հսկայական գծով, ինչի արդյունքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բարելավվել է հարկային եկամուտների կառուցվածքը, դրանում աճել է ուղղակի հարկերի և կրճատվել անուղղակի հարկերի տեսակարար կշռը:

Շուրջ 17.6 մլրդ դրամ են կազմել շահութահարկի մուտքերը, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 74.0 %-ով կամ 7.5 մլրդ դրամով:

Հարկային եկամուտների 47.3 տոկոսն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին՝ կազմելով 72.1 մլրդ դրամ: Նշված գումարից ավելի քան 49.3 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, իսկ 22.8 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին ապրանքաշրջանառությունից: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ն աճել է 8.9 %-ով կամ 5.9 մլրդ դրամով:

Անցած ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 20.6 տոկոսը՝ 31.9 մլրդ դրամ կազմել են տրանսֆերտները: Կառավարության կողմից սահմանված իննամսյա ծրագրի կատարվել է 86.0 տոկոսով: Տրանսֆերտային հատկացումների իրենական մասը կատարվել է հետևյալ երեք ուղղություններով՝ 10.8 մլրդ դրամ ուղղվել է նպաստների, 8.9 մլրդ դրամը՝ քաղաքների, 6.6 մլրդ դրամը՝ համայնքներին՝ ֆինանսական համահարթեցման նպատակով հատկացվող դոտացիաների ֆինանսավորմանը: 2004 թվականի պետական բյուջեի սոցիալական ուղղվածության մասին է խոսում այն փաստը, որ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 14.9 % աճի պայմաններում տրանսֆերտների ֆինանսավորումն աճել է 22.7 տոկոսով: Ընդ որում, գրեթե բոլոր տրանսֆերտային վճարների գծով արձանագրվել են աճի բարձր ցուցանիշներ, բացառությամբ կրթաթոշակների, որոնց ուղղված գումարը նվազել է՝ պայմանավորված 2003 թվականին նախորդ տարիների պարտքերի մարման նպատակով կատարված հատկացումներով:

Ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը պետական բյուջեից հատկացվել է 89.6 մլրդ դրամ՝ կազմելով ընթացիկ ծախսերի 57.7 տոկոսը և 85.4 տոկոսով ապահովելով ՀՀ կառավարության կողմից հաստատված

իննամսյա ծրագիրը: 2003 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այս ծախսերն ընդհանուր առմամբ մեծ փոփոխություն չեն կրել:

2004 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում կապիտալ ծախսերի գծով պետական բյուջեից հատկացվել է շուրջ 11.5 մլրդ դրամ՝ իննամսյա ծրագրային ցուցանիշն ապահովելով 51.7 տոկոսով: Ընդ որում, 2004թ. հունիսի 15-ին հաստատված յուրաքանչյուր բյուջեի գծով կատարողականը կազմել է 36.6 %, իսկ բյուջեի գծով՝ 60.6 տոկոս: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածից համեմատ պետական բյուջեի կապիտալ ծախսերը ավելացել են 25.9 %-ով կամ շուրջ 2.4 մլրդ դրամով:

Անցած ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեից կատարվել է շուրջ 7.5 մլրդ դրամի վարկավորում, որի իրենական մասը տրամադրվել է ԼՂՀ-ին: 26.0 մլն դրամ արտոնյալ պայմաններով վարկ է տրամադրվել բռնադատված քաղաքացիներին՝ բնակարանային շինարարության համար: Տրամադրված վարկերից պետական բյուջե է վերադարձվել 727.2 մլն դրամ: Արդյունքում գույք վարկավորումը կազմել է 6.8 մլրդ դրամ՝ ապահովելով իննամսյա ծրագրված ցուցանիշի 81.6 տոկոսը: 2003 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ պետական բյուջեի գույք վարկավորման ծավալներն ավելացել են 24.9 %-ով՝ ի հաշիվ 2004 թվականի պետական բյուջեով ԼՂՀ-ին տրամադրվող վարկի ավելացման:

2004 թվականի հունվար-օգոստոս ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեն կատարվել է 4.5 մլրդ դրամ հավելուրդով՝ իննամսյա ծրագրով նախատեսված 12.4 մլրդ դրամ պակասությի դիմաց: Ընդ որում, պակասության ներքին ֆինանսավորումը կազմել է 3.9 մլրդ դրամ, արտաքին ֆինանսավորումը՝ 8.4 մլրդ դրամ: Գանձապետական պարտատոմսերի միջոցով պետական բյուջեն ֆինանսավորվել է շուրջ 4.4 մլրդ դրամի չափով, 6.1 մլն դրամ ուղղվել է մարիակների մարմանը, 8.0 մլն դրամ կազմել են պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերի ետգնման ծախսերը: Անցած ժամանակահատվածում 8.4 մլրդ դրամի հատկացումներ են կատարվել արտաքին պետական պարտքի մարման նպատակով, որն ուղղվել է Եվրամիության նկատմամբ 28 մլն էքյու վարկի գծով նախորդ տարի նախատեսված և փոխադարձ համաձայնությամբ 2004 թվականի տեղափոխված պարտավորությունների մարմանը:

2004թ. 10 ամսում ՀՀ պետական բյուջեն եղել է հավելուրդային՝ 5960.2 մլն դրամի չափով (12 մլն \$), որը 2003թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի նկատմամբ կազմում է 81.5 տոկոսը: 2004թ. տասն ամսում պետբյուջեի եկամուտները և պաշտոնային տրանսֆերտները կազմել են 238.2 մլրդ դրամ (441 մլն \$) կամ ՀՆԱ-ի 16 տոկոսը: Նախորդ տարվա նույն

ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է 24.1 տոկոսով: Միայն հարկային եկամուտները կազմել են 198.4 մլրդ դրամ (366 մլն \$), կամ ավելացել է 9.4 %-ով և կազմել է ՀՆԱ-ի 13.4 տոկոսը: Այդ նույն ժամանակաշրջանում պետական բյուջեի ծախսերը կազմել են 232.2 մլրդ դրամ (429 մլն \$), կամ ՀՆԱ-ի 15.6 տոկոսը: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ծախսերն ավելացել են 19 տոկոսով: Ընդ որում, կապիտալ ծախսերը կազմել են 22.2 մլրդ դրամ, իսկ պետական վարկերը՝ 8.9 մլրդ դրամ: Մայսավում էր 2004թ. ՀՆԱ-ի աճ 10 տոկոսի չափով (փաստացի կազմել է 10.1 տոկոս):

2004թ. ՀՆԱ-ն բացարձակ մեծությամբ կազմել է 1893.6 մլրդ դրամ (3549.8 մլն \$)՝ ապահովելով 10.1% տնտեսական աճ: 2004թ. պետբյուջեի ընդհանուր մուտքերը կազմել են 297.9 մլրդ դրամ, այսինքն կատարվել է 103%-ով, փաստացի կատարողականով բյուջեն եղել է հավելյալային՝ 5.9 մլրդ դրամի չափով կամ գերակատարվել է 3 տոկոսով:

Նախորդ տարվա համեմատությամբ պետբյուջեի եկամուտներն ավելացել են 19.1 %-ով կամ 47.8 մլրդ դրամով: Պետբյուջեի ընդհանուր մուտքերի մեջ 84 տոկոսը կազմել են հարկային մուտքերը՝ 250.1 մլրդ դրամ (424 մլն \$): Ըստ ՀՀ ԱՎԾ-ի տվյալների, պետբյուջեի եկամուտների 5.7 %-ը կազմել են պետտուրքերը, 4 %-ը՝ ոչ հարկային մուտքերը, 3%-ը՝ պետական կապիտալի գործառնություններից եկամուտները և 3.3%-ը՝ պաշտոնական տրանսֆերտները: Պետբյուջեի հարկային եկամուտները՝ ներառյալ պետտուրքերը կազմել են ՀՆԱ-ի 14.1 տոկոսը: Հարկային եկամուտները՝ 3.1 %-ով կամ 7.6 մլրդ դրամով գերազանցել են նախատեսված չափը և նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 17.9 տոկոսով: Բացարձակ մեծությամբ ԱԱՀ-ն 2004թ. ավելացել է 10.1 մլրդ դրամով կամ 9.4 %-ով և ապրանք արտահանողներին նրա վերադարձման չափը կազմել է 10.55 մլրդ դրամ, որը երեք անգամ ավելին է, քան 2003թ. վախճանի:

Պետբյուջեի ընդհանուր եկամուտների մեջ ԱԱՀ-ի տեսակարար կշիռը 50.8 %-ից (2003թ.) իջել է 47.1 տոկոսի: Ակցիզային հարկի չափը կազմել է 40.7 մլրդ դրամ կամ 16.3 %, նախորդ տարվա 18.4 %-ի փոխարեն:

Ենթակցիզային ապրանքների վաճառքից ստացված ակցիզային հարկի չափը կազմել է 26.5 մլրդ դրամ, այդ թվում 14.5 մլրդ բենզինի ներմուծումից, 9.8 մլրդ՝ ծխախոտի սիգարետից և 14.1 մլրդ դրամ՝ այլտարրանքի արտադրությունից և նրա վաճառքից:

2004թ. ակցիզային հարկի չափն ավելացել է 4 %-ով կամ 1.6 մլրդ դրամով:

Այսպիսով, 2004թ. պետբյուջեի փաստացի կատարողականով զգալիորեն իջել է անուղղակի հարկերի տեսակարար կշիռը և բարձրացել ուղ-

ղակի հարկերին: Եկամտահարկի գծով մուտքերը կազմել են 20.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ ավելացել է 21.6 տոկոսով:

Շահութահարկի գծով մուտքերը կազմել են 32 մլրդ դրամ կամ պետբյուջեի հարկային եկամուտների 12.8 %-ը՝ նախորդ տարվա 8.3 %-ի փոխարեն: Նախորդ տարվա համեմատությամբ շահութահարկն ավելացել է 81.6 տոկոսով:

Մաքսավճարի չափը 2004թ. կազմել է 12.5 մլրդ դրամ, որը 16.4 %-ով ավելին է, քան եղել է նախորդ տարում:

Հաստատագրված վճարները կազմել են 11.7 մլրդ դրամ կամ հարկային եկամուտների 4.7 %-ը և նախորդ տարվա նկատմամբ աճը կազմել է 46.6 տոկոս:

Պարզեցված հարկի մուտքերը կազմել են 7.2 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 44.9 տոկոսով:

Պետական տուրքերը կազմել են 16.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ ավելացել է 11.2 տոկոսով:

Ոչ հարկային մուտքերը 2004թ. կազմել են 12 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 30 տոկոսով: Պետական կապիտալի գործառնություններից եկամուտները կազմել են 9.1 մլրդ դրամ, որից 8.0 մլրդ դրամը ստացվել է պետական հույատեսքերի օտարումից, իսկ պաշտոնական տրանսֆերտները կազմել են 9.7 մլրդ դրամ: Ընդ որում, Կոյ գումարից 5.5 մլն Եվրո տրամադրել է Եվրոհանձնաժողովը և 9.5 մլն Եվրո՝ Եվրամիությունը:

Պետբյուջեի փաստացի ծախսերը 2004թ. կազմել են 295.9 մլրդ դրամ, որը 0.7 %-ով ցածր է նախատեսվածից: Ընդհանուր ծախսերի մեջ 86.4 %-ը կամ 256.6 մլրդ դրամը կազմել են ընթացիկ ծախսերը, 10.1 %-ը՝ կամ 29.8 մլրդ դրամը՝ կապիտալ ծախսերը, 3.5 %-ը կամ 11.3 մլրդ դրամը՝ պետական վարկերը:

Նախորդ տարվա համեմատությամբ պետբյուջեի ծախսերն ավելացել են 22.3 %-ով կամ 53.9 մլրդ դրամով: Ընդ որում, սուբսիդիաները կազմել են 18.1 մլրդ դրամ, որը կազմում է ընթացիկ ծախսերի 5.7 տոկոսը:

Պետական պարտքի սպասարկման ծախսերը կազմել են 9.8 մլրդ դրամ, այսինքն՝ նախատեսվածի 89.7 տոկոսի չափով:

Տրանսֆերտային ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 16.9 %-ը կամ 50.9 մլրդ դրամ, որից 16.6 մլրդ դրամն ուղղվել է նպաստների վճարմանը, 14.0 մլրդ՝ կենսաթոշակներին, 10.7 մլրդ դրամ՝ դրոշմային համայնքային բյուջեների համահարթեցման նպատակով: Ապրանքների գնման և ծառայությունների մատուցման գծով ծախսերը կազմել են 152.6

մլրդ դրամ, որը կազմել է ընթացիկ ծախսերի 59.7 տոկոսը և նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 12.5 տոկոսով:

Կապիտալի ծախսերի ֆինանսավորումը կազմել է 29.8 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ ավելացել է 55.6 %-ով կամ 10.7 մլրդ դրամով:

Այսպիսով, 2004թ. պետբյուջեի ծախսերն ավելացել են 22.3 %-ով կամ 53.9 մլրդ դրամով: Պետբյուջեի ծախսային մասը կատարվել է 99.3 %-ով և տնտեսվել է 24.3 մլրդ դրամ կամ ընթացիկ ծախսերի 9.5 տոկոսը:

2004թ. պետական բյուջեի կատարմանը նպաստել է տնտեսական աճը (10.1%), տնտեսավարող սուբյեկտների ավելացումն՝ 4.8 %-ով, երկրի տնտեսության ճյուղերում համախառն արտադրանքի աճն (արդյունաբերության մեջ՝ 7 %, գյուղատնտեսությունում՝ 14.5, կապիտալ շինարարությունում՝ 17.7), ապրանքների արտահանման աճը՝ 3.2%, արտաքին ապրանքաշրջանառության աճը՝ 4.5 %, ինչպես նաև բնակչության գործազուկության մակարդակի 0.3 տոկոսով իջեցումը:

2004թ. պետբյուջեի կատարմանը նպաստել է նաև ՀՀ կառավարությանն առընթեր Հարկային պետական ծառայության վարչախորհրդունը, որի շնորհիվ որոշ տնտեսավարող սուբյեկտներ ստվերային տնտեսությունից բերվել են իրավական դաշտ, ինչպես նաև 2003թ. դեկտեմբերին ԱԺ-ի կողմից ընդունված հարկային փաթեթը:

2005թ. հունվար ամսվա ընթացքում հավաքագրվել է 11 մլրդ 269 մլն դրամի հարկ, նախատեսված 10 մլրդ 760 դրամի փոխարեն: Համեմատության համար նշենք, որ 2004թ. նույն ժամանակահատվածում հավաքագրվել է 9.1 մլրդ դրամի հարկեր:

2005թ. հունվարին հարկային մուտքերի աճը կազմել է 34 տոկոս:

Հարկային պետական ծառայության կողմից 2005թ. հունվարին հավաքագրվել է նաև 3.3 մլրդ դրամի սոցիալական վճարներ, իսկ 2004թ. նույն ժամանակամիջոցում սոց.վճարները կազմել են 2.1 մլրդ դրամ:


2005թ. պետբյուջեն հունվար-փետրվար ամիսներին եղել է հավելուրդային և հավելուրդը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է ավելի քան երեք անգամ և կազմել է 13,7 մլրդ դրամ, այսինքն ՀՆԱ-ի 8,8 տոկոսը: Պետբյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները 2005թ. հունվար-փետրվարին կազմել է 51,765 մլրդ դրամ, այսինքն նախատեսվածի նկատմամբ աճել է 33,3 տոկոսով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ՝ 42,5 տոկոսով: Ընդ որում, հարկային մուտքերը կազմել են 41,3 մլրդ դրամ և ավելացել է 25,8 տոկոսով: Պետբյուջեի ծախսերը կազմել է 38,1 մլրդ դրամ, այսինքն ՀՆԱ-ի 24,5 տոկոսը: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի

համեմատությամբ այն ավելացել է 19,2 տոկոսով: Երկրի պաշտպանության վրա պետբյուջեի ծախսերը կազմել է ՀՆԱ-ի 4,7 %-ը, սոցիալական ապահովագրությունը և սոցիալական ապահովությունը՝ 4,2, կրթության և գիտության ծախսերը՝ 3,0 և արդյունաբերությանը՝ 0,3 տոկոս:

2005թ. առաջին եռամսյակում հավաքագրվել է 35 մլրդ դրամ հարկեր՝ նախատեսված 34 մլրդ դրամի փոխարեն:

4.12. Արտաբյուջետային սոցիալական հիմնադրամ և պետական ապահովագրություն

Արտաբյուջետային ֆոնդերը համարվում են ֆինանսական պաշարների նպատակային հիմնադրամներ, որոնք նշանակված են պետական տարածքային մակարդակով բուժելու կենտրոնացված խնդիրներ: Դրանց միջոցով ստեղծվում են ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Արտաբյուջետային հիմնադրամների ուղվագիծը կարելի է պատկերել հետևյալ կերպ (Ուղվագիծ 11):



Պետական արտաբյուջետային հիմնադրամներն իրենցից ներկայացնում են ֆինանսական պաշարների կենտրոնացված նպատակային հիմնադրամներ, որոնք ձևավորվում են ֆիզիկական ու իրավաբանական անձանց պարտադիր վճարումների հաշվին և որոնք նշանակված են քաղաքացիների սահմանադրական իրավունքների (կենսաբուշակային ապահովում, սոցիալական ապահովագրություն, առողջության պահպանում և

սոցիալական ապահովության, բժշկական օգնություն) ապահովման նպատակով:

Պետական սոցիալական արտաբյուջետային հիմնադրամների ֆինանսավորման աղբյուրները համարվում են.

- գործատուների ապահովագրական վճարները,
- քաղաքացիների (աշխատող և անհատական գործունեությամբ զբաղվող) ապահովագրական վճարները,
- այլ մուտքերը:

Սակայն ԱՊՀ-ի առանձին երկրներում, օրինակ՝ ՌԴ-ում գոյություն ունի նաև պարտադիր բժշկական ապահովագրության և բնակչության զբաղվածության պետական դաշնային հիմնադրամը: Մինչդեռ, մեր երկրում բժշկական ապահովագրությունը գործում է միայն բժշկական մեկ կազմակերպության առումով, այն էլ ոչ պետական մակարդակով:

Մեր երկրում պետական մակարդակով գործում է սոցիալական ապահովագրության հիմնադրամ, որի հաշվին կազմակերպվում է կենսաթոշակային ապահովումը, ինչպես նաև աշխատանքի և սոցիալական ապահովությունը: Մինչև 2004թ. սոցիալական ապահովագրության հիմնադրամը զբաղվում էր և պարտադիր սոցիալական վճարների հավաքագրումով և կենսաթոշակային ապահովման խնդիրներով: Սակայն, ըստ կառավարության որոշման (2004թ. նոյեմբեր), պարտադիր սոցիալական վճարները 2005թ. հունվարից հավաքագրում են հարկային տեսչությունները: Այդ նպատակով սոցիալական ապահովագրության հիմնադրամի 400 աշխատակիցներ առանց քաղաքացիական ծառայության կողմից անցկացվող մրցույթի փոխադրվել են համապատասխան աշխատանքի հարկային տեսչություններում և զբաղվում են սոցիալական վճարների հավաքագրումով, համապատասխան հաշվետվությունների ընդունումով և սոցվճարների գանձման վերահսկողական աշխատանքով: Կառավարության որոշման նպատակն է վարչարարության միջոցով հավաքագրել սոցվճարները (2004թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ տնտեսավարող սուբյեկտները սոցիալական ապահովագրության հիմնադրամին պարտք են եղել 37.0 մլրդ դրամ) և նպաստել կենսաթոշակների, ընտանեկան նպաստների համար անհրաժեշտ միջոցների ապահովմանը: 2005թ. առաջին եռամսյակում ՀՀ ԿԱ Հարկային պետական ծառայության կողմից հավաքագրվել են 12.9 մլրդ դրամ սոցվճարներ՝ մախատեսված 9.5 մլրդ դրամի փոխարեն: Սոցիալական վճարները պարտադիր վճարումներ են, սակայն ի տարբերություն հարկերի, ունեն նպատակային նշանակություն: Սոցիա-

լական վճարները հարկատեսակ չեն, սակայն պարտադիր վճարումներ են, ունեն նպատակային նշանակություն և վճարում են բոլոր տնտեսավարող սուբյեկտները, ինչպես նաև բոլոր աշխատողները՝ անկախ սեփականության ձևից և կարգավիճակից: Ընդ որում, այդ նպատակով բոլոր տնտեսավարող սուբյեկտները նախքան գործունեություն սկսելը պարտավոր են ոչ միայն հաշվառման կանգնել հարկային տեսչությունում՝ ստանալով հարկ վճարովի հաշվային համար (ՀՎՀՀ), այլև գրանցվել սոցիալական ապահովագրության հիմնադրամում, պետական ռեգիստրի կազմակերպությունում, Ազգային վիճակագրական ծառայությունում (ԱՎԾ): Տնտեսավարող սուբյեկտները սոցիալական վճարներ են մուծում ըստ ՀՀ «Պարտադիր սոցիալական վճարների մասին» ՀՀ օրենքի, որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 26-ին, որում լրացումներ և փոփոխություններ է կատարվել 2003թ. դեկտեմբերի 28-ին: Ըստ այդ օրենքի 3-րդ հոդվածի, գործատուները (առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները) յուրաքանչյուր վարձու սախատողի համար սոցիալական վճարները կատարում են հետևյալ չափերով.

Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափը	Սոցիալական վճարի չափը
մինչև 20000 դրամ	5000 դրամ
20000-100000 դրամ	5000 դրամ գումարած 20000-ը գերազանցող մասի 15 տոկոսը
100000 դրամից ավելի	17000 դրամ գումարած 100000 դրամը գերազանցող գումարի 5 տոկոսը

Ընդ որում, սոցիալական վճարները հաշվարկվում են յուրաքանչյուր գործատուի կողմից, առանց հաշվի առնելու այլ գործատուի կողմից վարձու աշխատողի համար կատարված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները: Ոչ առևտրային կազմակերպությունների վարձու աշխատողների սոցիալական վճարների նվազագույն չափը կիրառվում է հաստիքային յուրաքանչյուր մեկ լրիվ դրույթի նկատմամբ: Հոնարարների հաշվով, այսինքն հեղինակային վարձատրության նկատմամբ սահմանված սոցիալական վճարի նվազագույն չափի փոխարեն սոցվճարը հաշվարկվում է հոնարարի 15 %-ի դրույքաչափով: Գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատերերը, այսինքն գյուղացիական տնտեսությունները և մյուս հաղօգտագործողները՝ գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները որպես իրավաբանական անձինք սոցիալական

վճարումներ են կատարում սեփականություն համարվող (օգտագործվող) հողատեսքերի կադաստրային գուտ եկամտի 5%-ի չափով, բայց ոչ ավելի տարեկան 60 հազար դրամից: Վարձու աշխատանք օգտագործող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի սեփականատերերը սոցիալական վճարումներ են կատարում նաև գործատուների և վարձու աշխատողների համար սահմանված դրույքաչափերով: Ընդհանրապես, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում ամսեկան անվանական, այսինքն հաշվարկված աշխատավարձից հաշվարկվում և գործատուների կողմից փոխանցվում է սոցապ հիմնադրամին 3%-ի չափով: Այդ գումարը էությանը ևս ֆինանսներ են, սակայն ձեռնարկության ծախսերի մեջ չեն ներառվում:

Անհատ ձեռնարկատերերը սոցիալական վճարումներ են կատարում հետևյալ դրույքաչափերով.

Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի տարեկան չափը	Սոցիալական վճարի չափը
մինչև 1200000 դրամ	15 տոկոս
1200000 դրամից ավելի	180000 դրամ գումարած 1200000 դրամը գերազանցող մասի 5 տոկոսը

Անկախ հարկադրույքի առաջին տողով հաշվարկվող սոցվճարի չափից, վճարվում է տարեկան 60 հազար դրամ, եթե այն չի գերազանցում այդ չափից:

Քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից եկամուտներ ստացած ֆիզիկական անձինք սոցվճարները վճարում են վերը նշված դրույքաչափերից ելնելով:

Պարզեցված հարկով աշխատող գործատուները մեկ աշխատողի հաշվով վճարում են սոցիալական վճար՝ 6 հազար դրամի չափով, որից 580 դրամը վարձու աշխատողի և մնացածը՝ առևտրային կազմակերպության ծախսերի հաշվին:

Գործատուները սոցիալական վճարները հաշվարկում և սոցիալական ապահովագրության հիմնադրամին են փոխանցում աշխատանքային երկու օրվա ընթացքում: Սոցիալական վճարների վճարումը 183 օր ուշացնելու դեպքում սոցապ հիմնադրամը ապահովագրին ֆինանսապես անվճարունակ ճանաչելու հայցով դիմում է տնտեսական դատարան: Վարձու աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահման-

ված կարգով չձևակերպելու դեպքում գործատուն վճարում է սոցիալական վճար՝ միջին աշխատավարձի 12-ապատիկի չափով:

Բացի պետական արտաբյուջետային հիմնադրամների սոցիալական ուղղվածությունից, կարող են գոյություն ունենալ նաև համանման հիմնադրամներ, որոնք ունեն տնտեսական, բարեգործական և այլ ուղղվածություն (ճանապարհային, էկոլոգիական, հանցագործության դեմ պայքարի և այլ ֆոնդեր): Առաջիկայում մեր երկրում կկազմակերպվի նաև մասնավոր կենսաթոշակային հիմնադրամ, որի եկամուտների աղբյուրները կկազմեն ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կամավոր մուծումները, իսկ ծախսերը կօգտագործվեն կենսաթոշակային ապահովման համար: Այսպես, ԱԺ-ի պատգամավոր Տիգրան Արզումյանը 2005թ. հունվարից ստեղծել է համանուն հիմնադրամ, որի հաշվին նախատեսվել է Գավառ քաղաքի կենսաթոշակատուների կենսաթոշակն ավելացնել ամսեկան 5.0 հազար դրամ (2005թ. հունվարին Գավառի 450 կենսաթոշակատուներին փաստացի վճարվել է): Մյուսմասնակ նախատեսվել է հիմնադրամի միջոցների մի մասն օգտագործել քաղաքի փողոցների բարեկարգման համար:

Մեր երկրում գործազրկության նպաստները վճարում են սոցապ հիմնադրամի միջոցների հաշվին, մինչդեռ ՌԳ-ում առանձին կազմակերպված է գործազրկության հիմնադրամ:

Ըստ էության, պետական արտաբյուջետային հիմնադրամների միջոցով վերաբաշխվում է ազգային եկամտի մի մասը՝ բնակչության առանձին խմբերի օգտին (կենսաթոշակատուներ, հաշմանդամներ, գործազուրկներ, սոցիալապես անապահով ընտանիքներ, որոնք ստանում են ընտանեկան նպաստ):

Պետական արտաբյուջետային հիմնադրամում կուտակված միջոցները հնարավորություն են տալիս կուտակել ֆինանսավորման աղբյուրներ՝ կենսաթոշակների, նպաստների վճարման համար: Պետական արտաբյուջետային հիմնադրամի եկամուտները և ծախսերը կազմում են նրա բյուջեն, որոնք նշանակված են սոցիալական խնդիրների ֆինանսավորման համար:

Պետական արտաբյուջետային հիմնադրամի բյուջեի նախագիծը մշակվում է հիմնադրամի կառավարման մարմնի կողմից և ներկայացվում է կառավարությանը՝ ի դեմս ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության: Վերջինս պետբյուջեի նախագծի հետ ներկայացվում է խորհրդարանի քննարկմանը: Պետական արտաբյուջետային հիմնադրամի

«Պետապ-Հայաստան» ապահովագրական ՓԲԸ հաշվապահական հաշվեկշիռ, առ 01.01.2004թ., հազ դրամ

բյուջեի եկամուտների աղբյուրները համարվում են.

- պարտադիր սոցիալական վճարները, որը նախատեսված է համապատասխան օրենքով.
- ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կամավոր վճարումները.
- այլ մուտքերը:

Սոցիալական վճարների հաշվարկման և փոխանցման վերաբերյալ յուրաքանչյուր եռամսյակ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները կազմում և սոցապ հիմնադրամին են ներկայացնում համապատասխան հաշվետվություն, իսկ սոցապ հիմնադրամը՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը: Պետական արտաբյուջետային հիմնադրամի միջոցների օգտագործման ուղղությամբ վերահսկողություն է իրականացնում սոցապ հիմնադրամը: Ֆինանսներ են համարվում ոչ միայն պետական արտաբյուջետային հիմնադրամի միջոցները՝ որպես սոցիալական վճարներ, այլև պետական ապահովագրության միջոցները (եկամուտները և ծախսերը): 1999-2003թթ. գործել է «Պետապ-Հայաստան» ապահովագրական ընկերությունը և ոչ պետական 22 ընկերություններ, թեև լիցենզիա են ստացել 44-ը, որից 2003թ. գործել են 18-ը, իսկ 2004թվականին՝ 17-ը: Հայաստանում պետական ապահովագրությունը 1991-1998թթ. քայքայվել է, այսինքն՝ նախկին «Պետապ»-ի գործունեությունը դադարեցվել է և 1999 թվականից ստեղծվել է «Պետապ-Հայաստան» ՓԲ ընկերությունը, որն, լիստ էություն, չի համարվում նախկին հասարակարգի «Պետապ»-ի ժառանգորդը: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը դարձել է այդ ՓԲԸ-ի 50 %-ի բաժնետերը որպես հիմնադիր, իսկ 50 տոկոսը գնել է ռուսական «Ռոսնո» ապահովագրական ընկերությունը: Այնուհետև, 2003թ. վերջին ամբողջ բաժնետոմսերը (100%) գնել է ռուսական «Չեստոր» ապահովագրական ընկերությունը:

Հետևապես, մեր երկրում այլևս պետական ապահովագրություն գոյություն չունի: «Պետապ- Հայաստան» ՓԲԸ-ի բոլոր բաժնետոմսերի սեփականատերը համարվում է ռուսական «Չեստոր» ապահովագրական ընկերությունը:

Այժմ ցույց տանք «Պետապ-Հայաստան» ՓԲԸ-ի 2003թ. հաշվապահական հաշվեկշիռը (առ 01.01.2004թ.).

No	ԱԿՏԻՎՆԵՐ	01.01.03	01.01.04
	I. Ոչ ընթացիկ ակտիվներ		
1.	Նյութական ակտիվներ	35263.5	12726.9
2.	Ոչ նյութական ակտիվներ	590.0	530.0
3.	Երկարաժամկետ արժեթղթեր	4427.4	4427.4
	II. Ընթացիկ ակտիվներ		
1.	Պաշարներ- հեռաձգված ծախսեր	2110.3	1344.5
2.	Վերապահովագրողների բաժինը ապահովագրական պահուստներում	531.8	1261.1
3.	Կարճաժամկետ ռեզիտորական պարտքեր	7078.4	5875.7
4.	Կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ	51924.8	63784.0
5.	Դրամական միջոցներ	2249.7	2364.9
	ՀԱՇՎԵԿՇԻՐ	104175.0	92314.5
	ՊԱՍԻՎՆԵՐ	01.01.03	
	I. Սեփական կապիտալ	60964.6	56935.5
	II. Կարճաժամկետ պարտավորություններ		
1.	Ապահովագրական պահուստներ	23838.2	34396.0
2.	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր	29373.1	983.0
	ՀԱՇՎԵԿՇԻՐ	104175.9	92314.5
	Ֆինանսական պոտուցների մասին հաշվետվություն		
No	Ցուցանիշի անվանումը	01.01.03	01.01.04
1.	Ոչ կյանքի ապահովագրություն		
2.	Ապահովագրավճարներ, ընդամենը	60378.3	84950.2
3.	Վերապահովագրության փոխանցված ռիսկերի գծով	2070.9	5731.2
4.	Ապահովագրավճարներ-վերապահովագրություն գուտ	58307.4	79219.0
5.	Չվատասկած ապահովագրավճարների պահուստի փոփոխությունը	(8794)	(9032.2)
6.	Հատուցված վնասներ	(3934.5)	(11344.5)
7.	Վնասների պահուստի փոփոխությունը	(2614.04)	(798.3)
8.	Գործառնական ծախսեր	(41160.4)	(54625.2)
9.	Ոչ կյանքի ապահովագրության գծով շահույթ	1804.1	3420.8
10.	Գործառնական այլ գործունեությունից շահույթ	743.4	641.1
11.	Գործառնական գործունեության արդյունքները շահույթ	2547.5	4081.9
12.	Ներդրումային գործունեության արդյունքները շահույթ	3000.6	2119.8
13.	Ֆինանսական գործունեության արդյունքները շահույթ	977.2	(210.8)

«Պետապ-Հայաստան» ՓԲԸ-ի 2003թ. ֆինանսական հաշվետվությունները ըստ առողջտրական կազմակերպության, արժանահավատ են և բոլոր էական առումներով ու դրույթներով ճիշտ են ներկայացնում ընկերության ֆինանսական վիճակը առ 1-ը հունվարի 2004թ. դրությամբ:

Ինչպես երևում է հաշվապահական հաշվեկշիռից, ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվները կազմում են 92.3 մլն դրամ, սեփական կապիտալը՝ 56.9 մլն, ընթացիկ պարտավորությունները՝ 35.4 մլն դրամ: Ըստ 2003թ. տնտեսական ֆինանսական գործունեության արդյունքների, շահույթի չափը կազմել է շուրջ 6 մլն դրամ, նսխորդ տարվա 6.5 մլն դրամի փոխարեն:

Ընդհանրապես, ներկա պայմաններում գոյություն չունի պետական ապահովագրություն և Հայաստանում թույլ է զարգացած ոչ պետական ապահովագրությունը: Այսպես, ապահովագրական վճարները և ապահովագրական պարզևստությունները կազմում են ՀՆԱ-ի 0.2 %-ը, այն դեպքում, երբ ՌԴ-ում կազմում են 3.5 տոկոսը:

Ըստ էության «Պետապ-Հայաստան» ՓԲԸ ապահովագրական ընկերությունը 2004թ. նույնպես դարձել է ոչ պետական, հետևապես մեր երկրի ապահովագրական գործակալությունների ֆինանսներն ընդգրկվում են ոչ թե պետական արտաբյուջետային հիմնադրամի, այլ տնտեսավարող սուբյեկտների ֆինանսների կազմում, քանի որ նրանք նույնպես իրենց տնտեսաֆինանսական գործունեությունը իրականացնում են կոմերցիոն (առևտրային) հաշվարկի հիման վրա, որի ֆինանսական արդյունքի նպատակը շահույթի ապահովումն է:

Ապահովագրական ընկերությունները ըստ «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, պարտավոր են յուրաքանչյուր վեց ամիս հետո վերագրանցվել պետոեզիատրի կազմակերպությունում: Օրենքի այդ պահանջը խախտելու համար 2005 մարտ ամսին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ապահովագրական տեսչությունը «Ասկո-պրո» և «Ավիրալ» ապահովագրական ընկերություններին զրկել է լիցենզիայից, այսինքն գործունեության իրավասությունից: 2004թ. մեր երկրի ապահովագրական ընկերությունները հավաքագրել են 3,6 մլրդ դրամ ապահովագրական վճար (7,5 մլն դոլար), ապահովելով 75,9 տոկոս աճ: Այդ ցուցանիշը տեսակարար կշիռը կազմել է երկրի ՀՆԱ-ի 0,2 %-ը, այսինքն նախորդ տարվա նկատմամբ ավելացել է կրկնակի անգամ:¹ Ընդ որում, համաձայն առաջատար ապահովագրական 11 ընկերությունների ռենկինգի

(Rencinge -գործունեության ֆինանսական վերլուծություն) տվյալների, ապահովագրական շուկայում 2004թ. ամենաշատ ապահովագրական վճարը հավաքագրել է «Ինգո-Արմենիա» ընկերությունը (շուրջ 2 մլրդ դրամ), «Լոնդոն-Երևան» ընկերությունը (612 մլն դրամ), «Սիլ-Ինչուրանս»-ը՝ (234 մլն դրամ), որոնք էլ համապատասխանորեն գրավել են առաջին երեք տեղերը: Այդ ցուցանիշով չորրորդ տեղը զբաղում է «Գրանդ» ապահովագրական ընկերությունը (231 մլն դրամ) և հինգերորդ տեղը՝ «Պետապ-Հայաստան»-ը (170 մլն դրամ), թեև այն, ինչպես նշել ենք, այլևս պետական չէ: Ապահովագրական առաջատար 11 ընկերությունների կողմից 2005թ. հունվարի 1-ի դրությամբ փոխհատուցել են շուրջ 410 մլն դրամ (843 հազ. \$), որը 3,9 %-ով ցածր է նախորդ տարվա ցուցանիշից: Ըստ սուբյեկտների կրած կորուստների, ամենաշատ փոխհատուցում վճարել է «Լոնդոն-Երևան» ընկերությունը (198,5 մլն դրամ), ապա «Նաիրի-Ինչուրանս»-ը (61,4 մլն), «Ինգո-Արմենիա»-ն (42,7 մլն), «Սիլ-Ինչուրանս»-ը՝ (32,7 մլն) և «Պետապ-Հայաստան»-ը՝ (27,8 մլն դրամ): Իրենց ֆինանսական ցուցանիշները «Ռեյտինգային, մարքեթինգային տեղեկությունների գործակալությանը» (Հայինֆո) տրամադրել են ապահովագրական 11 ընկերություններ՝ բացի նշվածներից նաև «Այլանց-Ֆելշ», «Աուջին ապահովագրական», «Փրայվիթ-Ինչուրանս», «Էրմեդ» և «Ֆինտրաստ» ընկերությունները:

Ռենկինգի մեջ չեն ներառվել ապահովագրական ութ ընկերություններ, որոնք պետոեզիատրի կազմակերպությունում գրանցվել են 2004թ. կեսերին և 2005թ. մարտի վերջի դրությամբ, իբր, դեռևս չեն ամփոփել իրենց գործունեության ֆինանսական ցուցանիշները: 2005թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում գրանցված են ապահովագրական 44 ընկերություններ, որից գործում են 26-ը՝ նախորդ տարվա 17-ի փոխարեն: 2004թ. երկրի ապահովագրական ընկերությունների զուտ շահույթը (համախառն շահույթի և շահութահարկի տարբերությունը) ավելացել է 82 %-ով և կազմել 99,1 մլն դրամ: Այդ ցուցանիշով առաջին տեղը զբաղեցնում է «Ինգո-Հայաստան»-ը՝ (30,4 մլն դրամ), «Այլանց-Ֆելշ»-ը՝ (21,2 մլն դրամ), «Առաջին ապահովագրական»-ը՝ (20,3 մլն), «Սիլ-Ինչուրանս»-ը՝ (15,3 մլն) և «Գրանդ»-ը՝ (7,9 մլն դրամ): Ընդհանուր հաշվով, շահութաբեր են եղել ապահովագրական ութ ընկերություններ, որոնք ստացել են 108,7 մլն դրամի շահույթ: Ռենկինգի մեջ ընդգրկված մյուս երեք ընկերությունները ստացել են 9,6 մլն դրամի վնաս:

1. Деловой экспресс - Еженедельник, N11, апрель, 2005

Սեփական կապիտալի հաշվով շահույթի ցուցանիշով (ROE)¹ առաջին տեղում է «Առաջին ապահովագրական»-ը (20,6 %), «Սիլ-Ինճուրանսը»-ը (17,8 %), «Այանց-Ֆլեշ»-ը (17,5 %), «Ինգո-Հայաստան»-ը (10,8 %) և «Գլանը»-ը (6,4 տոկոս): Ընդհանուր ակտիվների հաշվով շահույթի (ROA)², այսինքն գուտ շահույթի և ընդհանուր ակտիվների հարաբերության մակարդակով առաջին տեղը զբաղեցնում է «Առաջին ապահովագրական»-ը (12 %), երկրորդ տեղում է «Այանց-Ֆլեշ»-ը՝ (8,2 %), երրորդում՝ «Սիլ-Ինճուրանս»-ը՝ (5,1 %), սպա «Պետապ-Հայաստան»-ը՝ (2,8 %) և «Ինգո-Հայաստան»-ը՝ (2 %): Նշված առաջատար 11 ընկերությունների համախառն շահույթը 2004թ. կազմել է 200,5 մլն դրամ, որը նախորդ տարվա մակարդակին գերազանցել է 43,9 տոկոսով: Նույն ժամանակաշրջանում նրանց սեփական կապիտալը հասել է 1,3 մլրդ դրամի, որն ավելացել է 17,3 տոկոսով: Դրանից կանոնադրված (բաժնետիրական կապիտալը՝ հաշվառման ստանդարտով բաժնեհավաք կապիտալը) կազմել է 94 տոկոս:

2005թվականից մեր երկրում ուժեղացվում է պահանջը ապահովագրական ընկերությունների նկատմամբ: Դրա նպատակն է երկրում ստեղծել կայուն և գործող ընկերություններ: Այսպես, 2005թ. հունվարից՝ ըստ «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, կանոնադրված կապիտալի նվազագույն չափը նախատեսվել է 100 մլն դրամ, 2006թ.՝ 200 մլն, իսկ 2008թ.՝ 500 մլն դրամ: Այն ապահովագրական ընկերությունները, այդպիսով լիցենզիա են ստացել ավելի շուտ, այդ պահանջը մոխի մեջ է մտել 2005թ. ապրիլի 1-ից: 2005թ. գործող 26 ապահովագրական ընկերություններից փետրվարի ամսին երկուսը զրկվել են լիցենզիայից («Ասկո-Պրո» և «Ավիրալ»): 2004թ. Հայաստանի ապահովագրական ընկերությունների կանոնադրված կապիտալն ավելացել է 33 %-ով՝ հասնելով 2,4 մլրդ դրամի: Դրա հետ մեկտեղ, 34,5 %-ով ավելացել է նաև նրանց սեփական կապիտալը՝ հասնելով 2,7 մլրդ դրամի: Ավելացել է նաև ընդհանուր ակտիվները, ինչպես նաև ապահովագրական ռիսկերը: 2004թ. հավաքագրած ապահովագրական պարզատրությունների ծավալը աճել է 47,1 %-ով՝ հասնելով 3,9 մլրդ դրամի: Ավելացել է նաև ապահովագրական պահուստների ծավալը (48,9 %)՝ հասնելով 1,89 մլրդ դրամի: Հայաստանի ապահովագրական ընկերությունների գործունեության ընդհանրացված ցուցանիշները

1, Վազգոն Վարդանյան - «Բանկային գործ. բանկային մեներջմեր. փող. վարկեր. բանկեր», Երևան, 2004

2, Նույն տեղում, էջ 561-567

2005թ. հունվարի 1-ի դրությամբ բնութագրվում է հետևյալ կերպ:¹

	2003թ.	2004թ.
• Ընկերությունների թիվը	22	26
• այդ թվում գործող ընկերություններ	19	20
• Կանոնադրված կապիտալ (մլն դրամ)	1798,5	2398,8
• Ապահովագրական պարզատրություն	2657,5	3908,2
• Ապահովագրական գումարներ	661,0	1184,7
• այդ թվում վերաապահովագրում	641,4	1150,8
• Ապահովագրական փոխհատուցումներ	454,7	444,6
• Ապահովագրական պահուստներ	1270,4	1892,1
• Շահույթ	119,3	178,5
• Գործող պայմանագրերի քանակը (հատ)	16760	29439
• Սեփական կապիտալ	2058,4	2768,7
• Ակտիվներ	4238,2	6304,8

Ապահովագրական ընկերություններից 11 ընկերություններ համարվում են առաջատար և դրանցից է «Սիլ-Ինճուրանս»-ը, որի կանոնադրված կապիտալը 2005թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմում է 231.5 մլն դրամ, այսինքն նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է չորս անգամ: Ապահովագրական հավաքագրած պարզատրությունները (պրեմիա) 2004թ. ավելացել է 35 %-ով և հասել է 234 մլն դրամի: Ապահովագրական փոխհատուցումներն այդ նույն ժամանակաշրջանում կազմել են 32.6 մլն դրամ, որը 2003թ. նկատմամբ կրկնապատկվել է: 2004թ. «Սիլ-Ինճուրանս» ապահովագրական ընկերությունը կնքել է 1099 պայմանագիր ապահովագրական գումարով՝ 57 մլրդ դրամ; Ընկերության շահույթը 2003թ. համեմատությամբ նվազել է 12 %-ով և կազմել է 15.3 մլն դրամ, քանի որ 2004թ. ավելի շատ փոխհատուցում է վճարել: Ընկերությունը 2003թ. ապահովագրել է 2960 ավտոմեքենա, իսկ 2004թ. կնքված պայմանագրերի մեծ մասը վերաբերվում է անշարժ գույքին: Ապահովագրում են նաև բեռնափոխադրումները: Ընդ որում, 2004թ. այդ բնագավառի պայմանագրերի քանակն ավելացել է 2.5 անգամ:

Ընդհանրապես, Հայաստանի ապահովագրական ընկերությունները 2004թ. հավաքագրել են 3.6 մլրդ դրամ (7.5 մլն \$) ապահովագրական պրեմիաներ, որը նախորդ տարվա նկատմամբ ապահովել է 75.9 % աճ և կազմել է երկրի ՀՆԱ-ի 0.2 տոկոսը: Առաջատար ապահովագրական 11

1. Деловой экспресс - Еженедельник, N13, апрель, 2005

ընկերությունների գույտ շահույթը 2004թ. ավելացել է 82 %-ով և կազմել է 99.1 մլն դրամ: Դեռևս 1996թ. ընդունված «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքով և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերով, կարծես, թե երկյուր կարգավորվեց ապահովագրական ոլորտի իրավակասն դաշտը: Սակայն իննը տարի անց ոլորտի վերահսկման և նոր մեխանիզմների կարգավորման ու մասնավորապես, միջազգային չափանիշների համապատասխանեցման անհյուսիսընդհատ առաջացավ: 2001թ. նախաձեռնված օրենսդրական գործընթացի արդյունքում 2004թ. ՀՀ ԱԺ-ն լուրջորեն է նոր օրենք «Ապահովագրության մասին»: Այդ օրենքով սահմանվել է ապահովագրական գործունեության երկու դասակարգում՝ կյանքի և ոչ կյանքին վերաբերվող: Դա կիրառվում է նաև եվրամիության օրենսդրությամբ: Դաշտի կարգավորման սկզբնական փուլի կալուստի խնդիրներից մեկը ապահովագրական վճարների սակագների նկատմամբ ուղղակի վերահսկողությունն է: Օրենքի պահանջներից ելնելով 2005թ. հունվարից փութվել է ապահովագրական ընկերությունների կանոնադրության կապիտալի նվազագույն չափը, որի մասին նշել ենք տվյալ հարցում:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՎԻՃԻԿԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Պետական և տեղական բյուջեների վիճակարարությունները

Երկրի պետական բյուջեի և համայնքների բյուջեների հանրագումարի արդյունքում ձևավորվում է մի ամբողջական բյուջե, որը կոչվում է կոնսոլիդացված (consolidation- ամբողջական, համախմբված), այսինքն համախմբված բյուջե: Դա սահմանված է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի երրորդ հոդվածով (1997թ.) որպես պետական և տեղական բյուջեների բոլոր տեսակի եկամուտների և ծախսերի ամփոփ ֆինանսական պլան:¹ Պետական և տեղական, այսինքն համայնքների բյուջեները համալրում են բյուջետային համակարգի բաղադրամասերը և այդ համակարգի արդյունավետ կառավարման հիմքերից մեկը, որն ապահովում է բյուջետային հարաբերությունների արդյունավետ կարգավորումը: Սյն իրականացվում է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան: Նշված օրենքով համայնքներին տրված է պարտադիր և կամավոր իրավասություններ: Պետության կողմից ՏԻՄ-երին տրված պարտադիր իրավասությունները ենթակա են պարտադիր ֆինանսավորման և ամբողջ կատարման (հոդված 10), իսկ կամավոր իրավասությունները իրականացվում են ըստ ինարավորությունների՝ համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսավորմանը համապատասխան՝ ի հաշիվ ոչ թե պետական բյուջեից այդ նպատակի համար հատկացվող ուղղակի և անուղղակի ձևերով տրվող միջոցների, այլ համայնքների բյուջեներին ամբողջովում ոչ հարկային եկամուտների առանձին տեսակների՝ տեղական տուրքերի և այլ վճարների, պետական կապիտալի գործառնություններից եկամուտների հաշվին: Դրա չափը որոշվում է Ավագանու որոշմամբ սահմանված կարգով (հոդված 16): Ընդ որում, ՏԻՄ-երի համայնքային, այսինքն տեղական բյուջեի եկամուտների և ծախսերի միջև կատարվում է համահարթեցում (հավասարեցում) պետական բյուջեից տրվող պաշտոնական տրանսֆերտների, դոտացիաների ձևով: Պետության և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային հարաբերությունների մեջ վճարական նշանակություն ունի համայնքներին պաշտոնական տրանսֆերտներ հատկացնելու խնդիրը: Բավական է նշել, որ մեր երկրի որոշ համայնքների բյուջեներում պաշտոնական տրանսֆերտների տեսակարար կշիռը կազմում է բյուջետային եկամուտների 50-60 %-ը, իսկ միջին հաշվով՝ 23-30 տոկոսը: Պետական ինքնակառավարման մարմինների ուսուցման մեթոդական ձեռնարկ, Երևան, 2003, էջ 175:

տական բյուջեում «առանձին տրանսֆերտային փոխանցումներ պետական բյուջեից ՏԻՄ-երի բյուջեներին» հողվածով պլանավորվում և համայնքի բյուջեներին ամեն տարի տրամադրվում են պաշտոնական տրանսֆերտների երկու՝ ընթացիկ պաշտոնական տրանսֆերտների (դոտացիաների) և կապիտալ պաշտոնական տրանսֆերտների (սուբվենցիաների) ձևով: Դրանցից առաջինը՝ դոտացիան որպես անհատույց հատկացում «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի համաձայն, տրվում է համայնքներին՝ նպատակ ունենալով կանխել դրանց զարգացման աստիճանների բևեռացումը, ապահովել ներաշնչակ զարգացումը, իսկ երկրորդը՝ սուբվենցիան, որպես պետական նպաստի տարատեսակ, իրենից ներկայացնում է պետական բյուջեից ՏԻՄ-երին կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային անհատույց հատկացումներ, որոնք ըստ նպատակի շրջաններու դեպքում ենթակա են վերադարձման: Համայնքներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները հատկացվում են օրենքով սահմանված պարտադիր իրավասությունների իրականացման շրջանակներում ՏԻՄ-երի ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցման մեխանիզմով: Դոտացիաները ՏԻՄ-երին հատկացվում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համապատասխան տեղական գանձապետական բաժանմունքների ամեն մի համայնքի համար բացված գանձապետական հաշիվների միջոցով՝ ըստ եռամսյակների հատկացման գրաֆիկի (ժամկետացույցի): Ինչ վերաբերում է սուբվենցիաներին, ապա դրանց ֆինանսավորումը նախատեսվում է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից և յուրաքանչյուր տարի Ազգային ժողովի համաձայնությամբ կառավարություն է հաստատում սուբվենցիաների տրամադրման չափերը և դրանց համար նախատեսված հատկացումների բաշխումը՝ քննության առնելով ՏԻՄ-երի կողմից սուբվենցիա ստանալու նպատակով ներկայացված կապիտալ ներդրումների ծրագրերը՝ նրանց կից նախահաշիվներով: Դոտացիաների և սուբվենցիաների սահմաններում պետական բյուջեի միջոցով համահարթեցվում է համայնքային բյուջեները: Համայնքներին տրվող դոտացիաները, ի տարբերություն սուբվենցիաների, սվյալ տարվա պետական բյուջեի կատարման ընթացքում պաշտպանվում են, այսինքն՝ ենթակա են ֆինանսավորման պետական բյուջեի կատարմանը համամասնաբար: Պետական բյուջեից ՏԻՄ-երը կարող են ստանալ նաև բյուջետային վարկեր (պետական վարկ) և երաշխավորագրեր՝ ըստ կառավարության որոշումով սահմանված կարգի:

Բյուջետային հարաբերությունների կարգավորման գործընթացը սերտորեն առնչվում է նաև բյուջեների հավասարակշռվածության խնդրին:

Եթե պետական բյուջեի հաշվով հաշվեկշռվածությունը ենթադրում է դեֆիցիտի առկայություն, որը ֆինանսավորվում է ներքին և արտաքին աղբյուրների և ներգրավված փոխառու միջոցների հաշվին «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, ապա համայնքների բյուջեների առումով օրենքը սահմանում է, որ այն դեֆիցիտ չպետք է ունենա և որ բյուջեով նախատեսված ծախսերի հանրագումարը չպետք է գերազանցի տվյալ տարվա բյուջեով նախատեսված եկամուտների հանրագումարին: Ելք պետական և համայնքային բյուջեների եկամուտները գերազանցում են ծախսերին, այս տարբերությունը կազմում է բյուջեների հավելուրդը: Տվյալ տարվա բյուջեների միջոցների տարեսկզբի մնացորդը նախորդ տարվա բյուջեների կատարման ընթացքում իրականացրած ծախսերի նկատմամբ մուտքերի գերազանցումն է, որն էլ համարվում է տվյալ տարվա համապատասխան բյուջեի մուտք (հողված 63):

ՀՀ բյուջետային հարաբերությունների կարգավորումը պահանջում է ունենալ միասնական բյուջետային դասակարգում՝ պետական և համայնքային բյուջեների եկամուտների և ծախսերի խմբավորում՝ ըստ դրանց տեսակների և ուղղությունների: Բյուջետային դասակարգման տեսակները և կառուցվածքը սահմանված են «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով և դրանց կիրառումը բյուջետային գործառույթների պլանավորման և կատարման բնագավառում պարտադիր է պետական և տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների համար:

Բյուջետային դասակարգմամբ եկամուտները համակարգվում են ըստ ձևավորման աղբյուրների և վճարողների, որը հնարավորություն է տալիս որոշել այդ եկամուտների տնտեսագիտական էությունը: Բյուջետային ծախսերի դասակարգումը թույլ է տալիս, դրանք միավորելով ըստ ուղղությունների, իրականացնել բյուջետային ծախսերի տնտեսագիտական վերլուծություն և ապահովել ֆինանսական վերահսկողություն բյուջետային միջոցների ծախսման նկատմամբ: Բյուջետային դասակարգումն ունի նաև կազմակերպական մեծ նշանակություն, քանի որ հնարավոր է դարձնում յուրաքանչյուր բյուջե ներկայացնել հասկանալի և տեսանելի ձևով, պայմաններ է ստեղծում ինչպես բյուջետային տարբեր կազմակերպությունների ծրագրերի նախահաշիվների, այնպես էլ բյուջեների համախմբման համար, դյուրին է դարձնում դրանց քննարկումն ու տնտեսագիտական վերլուծությունը, պարզեցնում հսկողության իրականացումը բյուջեների կատարման, միջոցների կուտակման և խնայողաբար օգտագործման ուղղությամբ:

Բյուջետային դասակարգումը հնարավորություն է տալիս եկամուտների և ծախսերի հաշվապահական (ֆինանսական) սինթետիկ և անալի-

տիկ (վերլուծական) հաշվառման համար: Բյուջետային դասակարգմանը կազմվում են բյուջեների կատարման մասին հաշվետվություններ:

Պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջև տեղի են ունենում հետևյալ փոխհարաբերությունները.

- Պետական բյուջեն և համայնքների բյուջեները համարվում են որպես բյուջետային համակարգի բաղադրամասեր,

- Պետական բյուջեի և համայնքների բյուջեների պատասխանատվությունը,

- Բյուջետային համակարգի, այսինքն պետական բյուջեի և համայնքների բյուջեների միասնականությունը,

- Պետական բյուջեից համայնքների վարչական բյուջեին հատկացվող դոտացիաները,

- Պետական բյուջեից համայնքների ֆոնդային բյուջեին հատկացվող սուբվենցիաները,

- Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող վարկերը,

- Բյուջետային երաշխավորագրերի տրամադրում:

ՏԻՄ-երի խնդիրն է սահմանափակ ֆինանսական միջոցները բաշխել այնպես, որ ֆինանսավորվեն օրենքով նրանց վերապահված իրավասությունների սահմաններում մի շարք գործառնություններ: Ցանկացած համայնքի ամենաառաջնական փաստաթուղթը, որտեղ ներկայացված են համայնքի քաղաքականությունը, գործունեության պլանավորումը և հսկողությունը, բյուջեն է: Համայնքի բյուջեին անվանում են նաև գործառնական պլան: Այն օգտագործվում է պլանավորելու և ուղղորդելու քաղաքային (գյուղական) կյանքը գալիք ֆինանսական տարվա ընթացքում և հիմք է ծառայում քաղաքապետի (գյուղապետի) և Ավագանու, ինչպես նաև համայնքի կառուցվածքային ստորաբաժանումների համար՝ իրականացնելու համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման եռամյա ծրագրերը: Բյուջետային ամբողջ գործընթացի ընթացքում համայնքները պարտավոր են հավաքագրելու հարկային եկամուտները (հողի հարկ, գույքահարկ), տեղական տուրքերը, ոչ հարկային եկամուտները, պետական կապիտալի գործառնություններից եկամուտները, բաշխել այդ միջոցները և հսկողություն իրականացնել կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ու տեղական բյուջեի միջոցների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործման նկատմամբ: Համայնքի բյուջեն ներառում է.

- նախատեսվող միջոցառումները, այսինքն համայնքի սոցիալ-տնտեսական եռամյա ծրագիրը,

- եկամուտների զնահատականը՝ ըստ արդյունքների և ծախսերի նախահաշիվը, այսինքն ծախսերի ուղղությունները, որոնք անհրաժեշտ են

նախատեսված միջոցառումները ֆինանսավորելու համար:

Որպես կանոն, բյուջեները ստեղծվում են միջոցների սակավության պայմաններում, քանի որ ըստ ժամանակակից տնտեսագիտության մեջ հայտնի Սակավության օրենքի, բուրյ տեսակի պաշարները խիստ սահմանափակ են, իսկ պահանջումները՝ անսահմանափակ: Դրա համար էլ, բյուջեն մի շարք այլընտրանքների միջև ընտրություն կատարել է և վերջին հաշվով արդյունավետ բյուջե ընդունելը, որն ունենա ընդգծված սոցիալական ուղղվածություն, ինչպիսինը 2005թ. ՀՀ պետական և համայնքային բյուջեներն են:

Այն նպատակները, որոնց կարող է ծառայել համայնքային բյուջեն, պետք է ուղղված լինի ՏԻՄ-երին օրենքով սահմանված տարաբնույթ իրավասությունների կատարմանը: Այդ նպատակներն են՝

Բյուջեն որպես պայմանագիր - այսինքն քաղաքապետը (գյուղապետը) և Ավագանին խոստանում են միջոցներ տրամադրել տվյալ համայնքին՝ համաձայնեցված ուղղություններով ծախսելու համար:

Այս առումով բյուջեն մի պայմանագիր է, որը կնքվում է քաղաքականությունը մշակողների և համայնքի գործադիր մարմնի միջև: Բյուջեն դիտվում է նաև որպես համայնքի բնակչության և իշխանության միջև կնքվող պայմանագիր: Հետևապես, բնակչությունը համաձայնվում է վճարել հարկեր, որպեսզի համայնքի իշխանության կողմից նրան մատուցվի անհրաժեշտ ծառայություններ:

Բյուջեն որպես կառավարման միջոց.- Բյուջեն որոշումների և պարտավորությունների մասին մի հայտարարագիր է, ըստ որի պետք է իրականացվի որոշակի սոցիալ-տնտեսական ծրագրեր: Որպես կառավարման միջոց՝ հիմնավոր նախատեսված բյուջեն կարող է օգնել քաղաքապետին (գյուղապետին) և նրանց Ավագանուն՝ արդյունավետ կառավարել համայնքի գործունեությունը: Այն ավելացնում է նաև կառավարման արդյունավետության նկատմամբ պատասխանատվությունը:

Բյուջեն որպես փնտրման խթան.- Բյուջեն հանդես է գալիս նաև գործադիր մարմնի խթան, այսինքն նա խթանում է համայնքի սոցիալ-տնտեսական ծրագրի կենսագործումը:

Բյուջեն որպես ֆինանսական հսկողության մեխանիզմ.- Բյուջեն դիտվում է որպես ֆինանսական հսկողության մեխանիզմ, որով սահմանվում է կոնկրետ կատարողի պատասխանատվության չափը: Բյուջեն ապահովում է գործադիր մարմնի ծախսերի նկատմամբ գործնական հսկողություն:

Բյուջեն որպես ֆինանսական պլան.- Բյուջեն համայնքի ներդրումների ֆինանսական պլանն է՝ սոցիալ-տնտեսական ծրագիրը գործնականորեն կենսագործելու համար: Այն բովանդակում է մանրամասն բա-

ցատություն, թե ի՞նչ նպատակներ կիրականացվեն առաջարկվող ծախսերը կատարելու դեպքում: Նախատեսվող կողմնորոշումը կարող է ի հայտ բերել նպատակների իրականացման այլընտրանքային տարբերակներ, որոնց կնտրոլի առավել արդյունավետ տարբերակի բյուջեն:

Բյուջեն որպես բյուջեդարային քաղաքականության կարևորագույն գործընթաց .- Խամայնքի բյուջեն իրենից ներկայացնում է բյուջետային քաղաքականության կարևոր գործընթաց: Թե ինչպե՞ս է Խամայնքը որոշում ծախսել իր սակավ միջոցները, դա տնտեսական և քաղաքական կարևոր որոշում է, որը Խամայնքն ընդունում է կարկաբույժետային տարվա ընթացքում: ՏԻՄ-երի տրամադրության ներքո գտնվող միջոցները միշտ էլ պակաս են այն ծավալից, որն անհրաժեշտ է Խամայնքի սոցիալ-տնտեսական բոլոր խնդիրները լուծելու համար: Դրա համար էլ անհրաժեշտ է ընդունել առավել արդյունավետ տարբերակի բյուջե: Հետևապես, բյուջեն կարելի է դիտել որպես մի բյուջետային գործընթաց, որով սահմանվում է ՏԻՄ-երի կառավարման քաղաքականությունը:

Բյուջեն որպես հաղորդակցման մեխանիզմ .- Բյուջեի մասին օրենքի նախագիծը քաղաքացիներին, Խամայնքների իշխանություններին հնարավորություն է տալիս ըմբռնել բյուջետային հիմնախնդիրները, միտումները և առկա այլընտրանքները, որոնք ներկայացվում են բյուջեով: Այն ապահովում է ֆինանսական և վիճակագրական մատչելի տվյալներ: Բացի այդ, բյուջեի տեքստային մասում նկարագրվում է եկամուտների, ծախսերի և սոցիալ-տնտեսական ծրագրերի հարաբերակցությունը: Փաստաթուղթը բովանդակում է նաև Խամայնքի մասին ժողովրդագրական և ենթակառուցների մասին տվյալներ:

Բյուջեն որպես գործունեության ուղենիշ .- Ծախսողներից ստացվող բյուջետային հայտերում նկարագրվում են իրագործման համար առաջարկվող միջոցառումները, ծառայությունները և գործառույթները: Սահմանվում են որակական և քանակական ցուցանիշները, հետևապես բյուջեն հանդիսանում է որպես տեղական գործադիր մարմնի գործունեության ուղենիշ:

Բյուջեն որպես ժողովրդավարության գործիք .- Բյուջետային գործընթացի վճռական նպատակը դեմոկրատիան է (դեմոս- ժողովուրդ, կրատյե - կառավարել), այսինքն՝ ժողովրդավարությունը: Հանրությունը պետք է իրավասություն ունենա արտահայտելու իր կամքը, իսկ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները՝ բաց լինեն հանրության կողմից քննադատության և ինքնաքննադատության համար: Դա պետության ֆինանսների և ՏԻՄ-երի ֆինանսների նկատմամբ հանրային եսկողություն իրականացնելու միջոց է:

Գոյություն ունի Խամայնքային բյուջեի հետևյալ տեսակները.

Ծախսային բյուջե .- Որպես կարգ, ՏԻՄ-երի բյուջեն ըստ դասակարգման կոչվում է ծախսային բյուջե: Բյուջեի ծախսերի տեսակները կոչվում են ծախսերի հոդվածներ: Ծախսային բյուջեն բյուջեի ամենապարզ ձևն է: Ծախսային բյուջեն ֆինանսական փաստաթուղթ է, որտեղ ներկայացվում են Խամայնքային բյուջետային կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքների հոդվածներն ըստ կատարվելիք ծախսերի: Բյուջեի ծախսերն ըստ հոդվածների ունեն ուղղակի և անուղղակի, այսինքն՝ վարչական ծախսերի տնտեսագիտական բնույթ, ինչպիսիք են՝ նյութեր և գույք՝ կառույց, մեքանաարքավորումներ ձեռք բերելու, աշխատավարձ , գործուղման ծախսեր վճարելու և այլ ծառայություններ մատուցելու համար: Նրա միջոցով վերահսկողություն է սահմանվում , թե ինչպե՞ս է ծախսվել և ինչի՞ համար: Ծախսերը վերադասակարգվում են նաև ըստ սոցիալ-տնտեսական ծրագրերի կամ միջոցառումների:

Ըստ աշխատանքների կատարման բյուջե .- Կատարողական բյուջեով միջոցները բաշխվում են տվյալ կազմակերպության տարբեր ծրագրերով, միջոցառումներով, միաժամանակ նկարագրելով աշխատանքային գործառնությունները և ալյունքները, որոնք գոյանալու են տվյալ գումարը ծախսելու դեպքում: Օրինակ, որտեղի միջոցներ են պահանջվում Խամայնքային ճանապարհների նորոգման համար: Ըստ աշխատանքների կատարման բյուջեն՝ դա ՏԻՄ-երի գործունեությունն է և նրա կողմից մատուցվող ծառայությունների ծավալը: Ըստ աշխատանքների կատարման բյուջեն հստակ կանխորոշում է գերակայությունները, ըստ որի, գործնականում կենսագործվում է Խամայնքի եռամյա սոցիալ-տնտեսական ծրագիրը:

Ծրագրային բյուջե .- Ծրագրային բյուջեն տարբերվում է բյուջե կազմելու, լրացումներ և փոփոխություններ կատարելու և ներկայացնելու ավանդական մոտեցումից: Այն ոչ թե ուշադրության կենտրոնում է պահում, թե ի՞նչ է գնում Խամայնքը, այլ մատուցված ծառայություններից և անցկացված միջոցառումներից ակնկալվող ալյունքները: Այս դեպքում հիմնական խնդիրը որոշակի ծրագրերի իրականացումն է: Եկամուտները և ծախսերը փոխկապակցված են այն ծրագրերի հետ, որոնք համապատասխանում են Խամայնքի խնդիրներին, նպատակներին, այսինքն՝ ռազմավարությանը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի¹ համաձայն՝ Խամայնքի ղեկավարը մշակում է եռամյա զարգացման ծրագիր, որը ներկայացնում է նորընտիր Ավագանու հաստատմանը՝ վերջինիս իրավասությունների ստանձնման օրվանից եռամյա ժամկետում: Եռամյա ծրագիրն իրենից ներկայացնում է Խամայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, տնտեսական,

1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, Երևան, 2001:

ֆինանսական հնարավորությունների զննահատման արդյունքում նպատակային գարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք իրատեսական քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ, որը ռազմավարական կարգով նախատեսում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջեաուվարման գործընթացի իրականացումը:

5.2.Տեղական բյուջե: Նրա քննարկման և հաստատման կարգը

Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսներն իրենց արտացոլում են գտնում տեղական բյուջեում: Որպես տեղական բյուջե համարվում են գյուղական և քաղաքային համայնքների (Երևան քաղաքը բաղկացած է քաղաքային 12 համայնքներից՝ թաղապետարաններից) բյուջեները: Ընդ որում, Հայաստանի Հանրապետությունն ըստ վարչատարածքային բաժանման ունի 10 մարզ, որտեղ ունեն իրենց մարզպետարանները: Երևան քաղաքը ևս ունի մարզի կարգավիճակ: Մարզպետարանները մինչև այժմ չունեն իրենց բյուջեները, այլ ըստ նախահաշվի ուղղակի ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Մինչդեռ, նպատակահարմար կլիներ, եթե նրանք ևս ունենային բյուջե՝ համայնքների բյուջետային եկամուտների որոշակի տոկոսի, ինչպես նաև պետբյուջեի հատկացումների հաշվին:

Տեղական բյուջեի նախագիծը կազմվում է գյուղապետարանի կողմից, քննարկվում և հաստատվում է Ավագանիների կողմից: Ընդ որում, այն կարող է կազմվել, քննարկվել, ընդունվել մինչև երկրի պետական բյուջեի հաստատումը կամ նրանից հետո: Բյուջեի եկամուտների և ծախսերի կառուցվածքը որոշվում է նույն սկզբունքով, ինչպես պետական բյուջեինը:

Մեր երկրում գոյություն ունի 932 համայնքներ, այդ թվում, 48 քաղաքային համայնքներ: Երևան քաղաքը բաժանված է քաղաքային 12 համայնքների (թաղապետարանների): Եթե 2003թ. ՀՀ պետական բյուջեից համայնքներին հատկացվել է 22 մլրդ դրամ դրոշմից և 7.8 մլրդ դրամ պաշտոնական տրանսֆերտ, ապա 2004թ. բյուջեով հատկացվել է 26 մլրդ դրամ դրոշմից: Սկսած 2001 թվականից, համայնքներին հատկացվելիք դրոշմից տրվում է ժամանակին: 2003թ. համայնքներին հատկացվելիք դրոշմից տրվում է 2 մլրդ դրամով և կազմել է 22 մլրդ դրամ:

Գյուղական համայնքներում հարկերի հավաքագրումը որպես տեղական բյուջեի եկամուտներ, ավելի դժվար է, քան քաղաքներում: Դրա համար էլ գյուղական համայնքներին հատկացվող դրոշմից ըստ տարիների ավելացվում է:

Գյուղական և քաղաքային բյուջեները քննարկվում և հաստատվում են Ավագանիների նիստում:

5.3. Տեղական բյուջեի եկամուտների աղբյուրները և ծախսերի ուղղությունները

Տեղական բյուջեի եկամուտները և ծախսերը ձևավորվում են նույն սկզբունքով, ինչպես պետական բյուջեինը: Ըստ բյուջեի եկամուտների ապահովվածության, բյուջեի տեսակները վերաբերվում են նաև համայնքներին, սակայն որպես կարգ համայնքային բյուջեները առայժմ դիֆիցիտային են, սակայն պետական բյուջեից դրոշմից հաշվին նախատեսվում է հավասարակշռված բյուջե՝ համահարթեցման միջոցով: Դեֆիցիտը մարվում է ՀՀ պետբյուջեից տրվող պաշտոնական տրանսֆերտների, դրոշմից, այլ թվում սուբսիդիաների և սուբվենցիաների (պետական նպաստների) ձևով: Մուբսիդիաները պետական նպաստի ձև են, որը տրվում է դրամական ձևով, անհատույց կարգով և որոշակի նպատակով (ծրագրով): Մուբվենցիաները նույնպես պետական նպաստի ձև են, որոնք տրվում են խառը ձևով (դրամով և ապրանքի տեսքով): Այն նույնպես տրվում է անհատույց՝ ընդհանուր նշանակության օբյեկտների կառուցման և սուբսիդիաների նպատակով: Ըստ բյուջեի մասին օրենքի, տեղական համայնքներին երկրի պետբյուջեի միջոցների հաշվին տրվում է նաև դրոշմից (գյուղական փոքր համայնքներին, որոնց ծխերի թիվը չի անցնում 100-ից): ՀՀ Ազգային ժողովի կողմից և կառավարության որոշմամբ համայնքների բյուջեների եկամուտների հիմնական աղբյուրը համարվում է գույքահարկը և հողի հարկը, որը 100 %-ով մնում է նրանց բյուջեում, իսկ մինչ 2001թ. սեպտեմբեր ամիսը բոլոր հարկերի 80 %-ը մնում էր համայնքի բյուջեում, իսկ 20 %-ը հատկացվում էր երկրի պետբյուջեին: Այսպիսով, համայնքների բյուջեի եկամուտների աղբյուրները համարվում են՝ գույքահարկը, հողի հարկը, տեղական տնօրենքերը, պահուստային ֆոնդի հողերի վարձակալական վճարները (երբ 1992թ. փետրվարից սեփականաշնորհվել է հողը, ապա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի 20 %-ը մնացել է որպես պետական սեփականություն և անցել է համայնքների տնօրինության ներքո): Որպես եկամտի աղբյուրներ համարվում են նաև ոչ հարկային մուտքերը, տարածքի վարձակալումից ստացված եկամուտները, տրանսֆերտները և դրոշմից հանրապետական բյուջեի ծախսերն ուղղվում են գյուղապետարանի (քաղաքապետարանի, թաղապետարանի) և նրանց ենթակայության օբյեկտների գործունեության ֆինանսավորման համար:

Այժմ ցույց տանք տեղական (համայնքային) բյուջեն՝ Արարատի մարզի Ջրահովիտի գյուղական համայնքի, Կոտայքի մարզի Եղվաբույի և Երևան քաղաքի (Ավանի թաղապետարանի) քաղաքային համայնքի օրինակով:

ԱՐԱՐԱՏԻ ՍԱՐՁԻ ՋՐԱԴՈՎԻՏ ՀԱՍԱՅՆՔԻ 2004Թ. ԲՅՈՒԳԵՆ

Ծախսային մաս

(հազ.դրամ)

Ոլորտներ	0010 աշխ	0020 պարզ	1600 տոյ.	1850 այլ	2100 տնտ	2200- 2300 գույք	2400 2500 դեղ սնունդ	2600 այլ ծախս	2650 գործ	2800 2900 տր-սպ	3000 3100 կապ	3500 վստ	3550 էլ.էն	3600 ջրմուղ	3700 այլ կ.	5500 այլ ծախս	Ընդամենը
Կառավ. ապարատ	3050.0	252.0	785.0	-	160.0	160.0	-	-	70.0	250.0	120.0	80.0	150.0	-	-	-	5077.0
Մանկապարտեզ	837.5	-	390.0	-	80.0	50.0	250.0	-	-	-	-	-	50.0	-	-	-	1657.5
Կուլտուրայի տուն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
գրադարան	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
երաժշտական դպրոց	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
մարզադպրոց	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
այլ մշակ. հիմնարկ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
բարեկարգում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	346.5	-	346.5
այլ ծախսեր	-	-	-	1347.0	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	792.3	2139.3
Նախ. տարվա պարտք	78.5	-	46.0	-	-	-	-	-	-	-	71.0	-	320.5	-	-	-	516.0
պահուստային ֆոնդ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	2430.0	2430.0
Ընդամենը	3966.0	252.0	1221.0	1347.0	240.0	210.0	250.0	-	70.0	250.0	191.0	80.0	520.5	-	346.5	3222.3	12166.3

Համայնքի ղեկավար
 Գլխավոր հաշվապահ

Հիմնական միջոցների մաշվածության տարեկան գումարների հաշվարկումը շուկայական տնտեսությանը բնորոշ մեթոդներով (սկզբնական պատմական արժեքը՝ 800հազար դրամ, ծառայության ժամկետը՝ 10 տարի, մաշվածության չափը՝ 10%, գործակիցը՝ 2)

Տարիները	Հավասարաչափ բաշխման մեթոդ		Նվազող մնացորդի մեթոդ		Նվազող մնացորդի մեթոդ հավասարաչափի անցումով		Թվերի (ռեզերսիայի) գումարման մեթոդ	
	Տարեկան մաշվածության գումարը	Կուտակված մաշվածության գումարը՝ աճողական կարգով	Տարեկան մաշվածության գումարը	Կուտակված մաշվածության գումարը՝ աճողական կարգով	Տարեկան մաշվածության գումարը	Կուտակված մաշվածության գումարը՝ աճողական կարգով	Տարեկան մաշվածության գումարը	Կուտակված մաշվածության գումարը՝ աճողական կարգով
1	80000	80000	160000	160000	160000	160000	145456	145456
2	80000	160000	128000	288000	128000	288000	130896	276352
3	80000	240000	102400	390400	102400	390400	116326	392678
4	80000	320000	81920	472320	81920	47320	101776	494454
5	80000	400000	65536	537856	65535	537855	87296	581750
6	80000	480000	52429	590285	52429	590284	72736	654486
7	80000	560000	41943	632228	52429	642713	58176	712662
8	80000	640000	33554	665782	52429	695142	43616	756278
9	80000	720000	26844	692626	52429	747571	29136	785414
10	80000	800000	21474	714100	52429	800000	14586	800000
Ընդամենը	800000	800000	714100	714100	800000	800000	800000	

ԱՐԿՐԱՏԻ ՄԵՐՈՑԻ ԶՐԱՅՈՒՎԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ 2004Թ. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՑԵ

ԵԿԱՄԱՅԻՆ ՄԱՍ

1. վարչական բյուջեից (պահուստային ֆոնդից) կատարվող հատկացումներ 2000.0 հազար դրամ
2. Համայնքի սեփականություն համարվող գույքի օտարությունից սուտքեր
3. Պետբյուջեից հատկացվող սուբվենցիաները
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 2000.0 ՀԱՅԱՐ ԴՐԱՄ

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

ՀՀ.	Հատված	Հոդված						ԸՆդամներ
		6300 կապ.չին	6400 նախագծ.ին տազ.ծախս	6600 սարք. և սարքավ.	6650 տրանսպ. ծնոթերուն	6800 այլ ակտիվներ	7700 կապ.նորոգ. ծախսեր	
1.	Կառավ. ապարատ	-	-	300.0	1000.0	-	-	1300.0
2.	Գազաֆիկ. հանար	500.0	-	-	-	-	-	500.0
3.	Ջրագծի նախագիծ	-	200.0	-	-	-	-	200.0
	ԸՆԴԱՄԵՆԸ							2000.0

Համայնքի ղեկավար
Գլխավոր հաշվապահ

Եղվարդի քաղաքային համայնքի
2001թ. բյուջեն հաստատելու մասին

Լսելով և քննարկելով Եղվարդի համայնքի 2001թ. բյուջեն (գեկ. քաղաքապետ)

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի համայնքի 2001թ. բյուջեն Եկամուտների գծով 64.500 հազար դրամ, ծախսերի գծով՝ 64500.0 հազար դրամ:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՐՑՈՐՈՒՄԵՐԸ	Գումարը (հազ դրամ)
1.Չողի հարկ	11500.0
2.Գույքահարկ	13000.0
3.Չողի վարձակալական վճար	4000.0
4.Գույքի վարձակալությունից վճար (տարածքի վարձակալում)	2000.0
5.Տնդական տուրք	945.9
6.Պետական տուրք	6000.0
7.Պոտացիա (ՅՅ պետությունից)	11514.1
8.Բյուջեի տարեկանի մնացորդ	2745.5
9.Այլ մուտքեր	12794.5
այդ թվում	
ա)2000թ. չվճարած դրուացիա	2494.5
բ) փոխառվածքի վարկ	300.0
գ)մուտք-մանկապարտեզների վարձ	2800.0
դ)արվեստի դպրոցի ուսման վարձ	6000.0
ե) այլ մուտքեր	1200.0
ԸՆդամները եկամուտներ	64500.0
ԾԱԽՍԵՐԻ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	Գումարը (հազ դրամ)
1.Քուղաքապետարանի պահուստային ծախսեր	13200.0
2.Պահուստային (կապիտալ)	9020.0
3Բարեկարգում և բնակարանային ֆոնդ	11520.0
4.Կենտրոնական, մանկական, թիվ 1, 2 քաղաքային գրադարաններ	3550.0
5.Սշակույթի տուն	1120.0
6.Արվեստի դպրոց	10840.0
7.Թիվ 1,2,3 մսուր-մանկապարտեզներ	15250.0
ԸՆդամները ծախսեր	64500

2. Պահանջել համայնքի ղեկավարից անհրաժեշտ հսկողություն սահմանել բյուջեի մուտքերի ապահովման և նպատակային ծախսումներ կատարելու նկատմամբ:

Կցվում են 2001թ. բյուջեի եկամուտների և ծախսերի 1-6 հավելվածները:

Հավելված 1

Եղվարդի քաղաքային համայնքի 2001թ. բյուջեի եկամտային մասի վերաբերյալ
 Հաստատված է Եղվարդի քաղաքային համայնքի Ավագանու նիստի որոշմամբ

05.02.01թ. թիվ 1 արձանագրության թիվ 1 կետ

N	Եկամուտների աղբյուրները	Գումարը (հազ. դրամ)
1	Հողի հարկ	11500.0
2	Գույքահարկ	13000.0
3	Հողի վարձակալական վճար	4000.0
4	Գույքի վարձակալությունից վճար	2000.0
5	Տեղական տուրք	945.9
6	Պետական տուրք	6000.0
7	Ղոտացիա	11514.1
8	Բյուջեի տարեսկզբի մնացորդ	2745.5
9	Այլ մուտքեր	12794.5
	այդ թվում՝	
	ա) 2000թ. չվճարած ղոտացիա	2494.5
	բ) փոխատվություն (վարկեր)	300.0
	գ) մուտք-մանկապարտեզների ծնող վարձ	2800.0
	դ) արվեստի դպրոցի ուսման վարձ	6000.0
	ե) այլ մուտքեր	1200.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	64500.0

Հավելված 2

Եղվարդի քաղաքային համայնքի 2001թ. բյուջեի ծախսային մասի վերաբերյալ

Հաստատված է Եղվարդի քաղաքային համայնքի Ավագանու նիստի որոշմամբ 05.02.01թ. թիվ 1 արձանագրության թիվ 1 կետ

N	Եկամուտների աղբյուրները	Գումարը (հազ. դրամ)
Հ Հ.	Ծախսերի անվանումը	Գումարը
1	Եղվարդի քաղաքապետարան	13200.0
2	Պահուստային կապիտալ	9020.0
3	Բարեկարգում և բնակ. ֆոնդ	11520.0
4	Կենտրոնական, մանկական թիվ 1, 2 քաղաքային գրադարաններ	3550.0
5	Մշակույթի տուն	1120.0
6	Արվեստի դպրոց	10840.0
7	Թիվ 1,2,3 մուտք-մանկապարտեզներ	15250.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	64500.0

Հավելված 3
 Եղվարդի քաղաքապետարանի համայնքի Ավագանու նիստի ուղղ-
 մամբ

Հաստատված է Եղվարդի քաղաքային պահպանման ծախսերը
 05.02.01թ. թիվ 1 արձանագրության
 թիվ 1 կետ

N	Եկամուտների աղբյուրները	Գումարը (հազ. դրամ)
Հ	Ծախսերի անվանումը	Գումարը
1	Աշխատավարձ	7310.0
2	Աշխատավարձի վրա եկ (սոցվճարներ)	1480.0
3	Գրասենյակային և տնտեսական ծախսեր	700.0
4	Գործուղման ծախսեր	150.0
5	Կապի ծախսեր	450.0
6	Էլ. էներգիա	1990.0
7	Վառելիքանյութեր	100.0
8	Զրնուղ-կոյուղու պահպանման ծախսեր	20.0
9	Տրանսպորտային ծախսեր	1000.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	13200.0

Հավելված 4
 Եղվարդի քաղաքապետարանի թիվ 1,2,3 մուտք-մանկապատեղների
 պահպանման ծախսերը

Հաստատված է Եղվարդի քաղաքային համայնքի Ավագանու նիստի ու-
 ղղմամբ

05.02.01թ. թիվ 1 արձանագրության թիվ 1 կետ

Հավելված 5

N	Եկամուտների աղբյուրները	Գումարը (հազ. դրամ)
Հ	Ծախսերի անվանումը	Գումարը
1	Աշխատավարձ	6110.0
2	Աշխատավարձի վրա եկ (սոցվճարներ)	3075.0
3	Գրասենյակային և տնտեսական ծախսեր	80.0
4	Կապի ծախս	60.0
5	Էլ. էներգիա	2110.0
6	Վառելիքանյութեր	100.0
7	Սննդամթերք	2800.0
8	Զրնուղ-կոյուղու պահպանման ծախսեր	310.0
9	Փայուկ գույք	300.0
10	Այլ ծախսեր	305.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	15250.0

Եղվարդի քաղաքային համայնքի արվեստի դպրոցի պահպանման ծախսերը

Հաստատված է Եղվարդի քաղաքային համայնքի Ավագանու նիստի որոշմամբ 05.02.01թ. թիվ 1 արձանագրության թիվ 1 կետ

№.	Եկամտների աղբյուրները	Գումարը (հազ. դրամ)
ՀՀ.	Ծախսերի անվանումը	Գումարը
1	Աշխատավարձ	7340.0
2	Աշխատավարձի վրանկ (սոցվճարներ)	2600.0
3	Գրասենյակային և տնտեսական ծախսեր	120.0
4	Կապի ծախս	50.0
5	Էլ.էներգիա	150.0
6	Վառելիքանյութեր	200.0
7	Ջրնուղ-կոյուղու պահպանման ծախսեր	50.0
8	Գույք	100.0
9	Այլ ծախսեր	230.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	10840.0

Հավելված 3

Եղվարդի քաղաքային համայնքի մշակութային հիմնարկներ (կենտրոնական, մանկական թիվ 1,2 քաղաքային գրադարաններ, մշակույթի տուն

Հաստատված է Եղվարդի քաղաքային համայնքի Ավագանու նիստի որոշմամբ 05.02.01թ. թիվ 1 արձանագրության

թիվ 1 կետ

N	Ծախսերի անվանումը	Գումարը
1	Աշխատավարձ	2890.0
2	Աշխատավարձի վրանկ (սոցվճարներ)	1220.0
3	Գրասենյակային և տնտեսական ծախսեր	70.0
4	Կապի ծախս	130.0
5	Էլ.էներգիա	150.0
6	Այլ ծախսեր	110.0
7	Գրքային ֆոնդ	100.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	13200.0

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԱՆՍ»

Նախատեսված Հրահանգային և Իրականացման Կարգի համաձայն Հրահանգային և Իրականացման Կարգի
հարցազույգ հիշում դրամ

Խազար դրամ գումարով:

4.Տ.

ԿԱՊԱՅԱԿՆԻԿ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՆԱՆԱՐԿԻ ԴԱԳՊԱՆԱՍՆ ԾԱՌԱՅԵՐ

Ձև N 01 - 2004թ. - 30. 12. 2004թ ժամանակահատվածի համար

- 1. Հիմնարկի անվանումը Ավանի քաղաքատարան
- 2. Ծրագրային հասցեն Ավան, Իրականացման Կարգի
- 3. Հիմնարկի տեղակայվածության օրինակ և համայնքի կոդը 200
- 4. Կազմակերպչի անվանումը Հրահանգային և Իրականացման Կարգի
- 5. Հիմնարկի տարածքային ՏԳԲ-ի անվանումը ՔՐԻՍՏՈՒՄ 3 ԳՆԱՆ ԳՐԱԾ
- 6. Հիմնարկի ՏԳԲ-ում բացված գանձարկուսական հաշվի համարը 0000849307
- 7. Զինանշանը ՔՐԻՍՏՈՒՄ 3 ԳՆԱՆ ԳՐԱԾ
- 8. Բյուջեային ծախսերի դրոշմադրամ դասակարգման ընտրված N Ինժեներական N
- 9. Ծրագրի անվանումը
- 10. Օրագրի կոդը
- 11. Կազմակերպչի անվանումը
- 12. Ժամի ժամանակահատվածը

Տարի MM	Բյուջեային ծախսերի տեղակայվածության դասակարգման հոդվածներ		Սույն ժամանակահատվածի համար նախկինում հատկացված գումար		Սույն ժամանակահատվածի ընդամենը	այդ բյուջե ըստ նախատեսված (նախատեսված) ամսերի			
	անվանումները	MM	Լախարային գումարներ	Ծրագրային կատարման ցուցանիշները (այդ թվում՝ անվանումները)		I	II	III	IV
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7
110000	ԱՆՍՏԱՏՈՒՄ ԾՐԱԳՆԵՐ ԸՆԴՆԱԾՆԵՐ, այդ թվում	X	72,071,090		72,071,090	18017773	18017773	18017773	18017773

Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7
1110000	1. ԴԵՏԱԿԱՆ, ՏԵՐՄԻՆԱՆ ԻՄՔԼԱՏԱՄԱԿԱՄՍԱՆ ԱՍՈՐՈՒՆԵՐԻ, ԴՐԱՄԵ ԱՆՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՆԱՆԱՐԿԱՆԵՐ ԱՎԱՆՏՈՒՄՆԵՐ ԱՎԱՆՏԱԿԱՐԸ ԸՆԴՆԱԾՆԵՐ, այդ թվում	X	46,175,000	0	46,175,000	11,543,750	11,543,750	11,543,750	11,543,750
1111000	աշխատավարձ և աշխատավարձի հավասարեցված այլ վճարումներ	0010	46,175,000		46,175,000	11,543,750	11,543,750	11,543,750	11,543,750
1112000	հսկողական նպատակային ծրագրերի տրամադրված գումարներ	0020			0				
1140000	4. ԸՆԴՆԱԾՆԵՐ ՏՐԱՍՊՈՐՏՆԵՐ, այդ թվում	X	9,030,150	0	9,030,150	2,257,538	2,257,538	2,257,538	2,257,538
1142000	4.1 Թողարկումներ	1300			0				
1143000	4.2 Կրթաթղթեր	1400			0				
1144000	4.3 Լախարներ	1500			0				
1145000	4.4 Այլ ընթացիկ տրամադրված գումարներ ընդամենը, դրի՞	X	9,030,150	0	9,030,150	2,257,538	2,257,538	2,257,538	2,257,538
1145100	- սարքավորումների և սարքավորումների վճարումներ	1600	9,030,150		9,030,150	2,257,538	2,257,538	2,257,538	2,257,538
1145200	- ոչ ստանդարտիզացիոն արտադրանքներ	1700			0				
1145300	ԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԿԱՏԱՐԱԿԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԿԱՆՈՒՄՆԵՐ ԳՐԱԿԱՆ ԻՍԽԱՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎՈՒՄՆԱՆՈՒՄ	1800			0				
1150000	5. ԱՐԿԱՆՈՒՄՆԵՐ ԳՆԱՆՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՎԱՐՔՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ԾԱԽՍԵՐԸ ԸՆԴՆԱԾՆԵՐ, այդ թվում	X	16,865,940	0	16,865,940	4,216,485	4,216,485	4,216,485	4,216,485
1151000	5.1 Արհեստագործական ընդամենը, այդ թվում	X	8,500,000	0	8,500,000	2,125,000	2,125,000	2,125,000	2,125,000
1151100	5.1.1 Գույքի արտադրանքային ապրանքներ և նյութեր, ընդամենը, դրի՞	X	7,000,000	0	7,000,000	1,750,000	1,750,000	1,750,000	1,750,000
1151110	արտադրանքային ապրանքներ և նյութեր	2100	4,000,000		4,000,000	1,000,000	1,000,000	1,000,000	1,000,000
1151120	գույք և սարքավորումներ	2200	3,000,000		3,000,000	750,000	750,000	750,000	750,000
1151130	վախճանի գույք և հանդիմանք	2300			0				
1151200	5.1.2 Անտրապոլի և վերականգնման նյութեր	2400			0				
1151300	5.1.3 Անտրապոլի	2500			0				
1151400	5.1.4 Այլ ծախսեր	2600	1,500,000		1,500,000	375,000	375,000	375,000	375,000
1152000	5.2 Գործուղումներ և ծախսարկղային հարկումներ	2650 2700							
1153000	5.3 Տրանսպորտային ծախսերի վճար	2800 2900	3,300,000		3,300,000	825,000	825,000	825,000	825,000
1154000	5.4 Կապի ծախսերի վճար	3000 3100 3200 3300 3400	1,615,440		1,615,440	403,860	403,860	403,860	403,860

1155000	ԻՆՎ Կոմունալ ծախսերի ցուցանիշի վերաբերյալ այլ բնույթով	X	3,450,500	0	3,450,500	862,625	862,625	862,625	862,625
1155100	5.5.1 Կենտրոնացված ծախսեր	3500	3,050,500		3,050,500	762,625	762,625	762,625	762,625
1155200	5.5.2 Ջրամուկայրուց օգտվելու վարձի վճարման ծախսեր	3800	400,000		400,000	100,000	100,000	100,000	100,000
1155300	5.5.3 Այլ կոմունալ ծախսեր	3700			0				
1156000	5.6 Այլ ծախսեր ընդամենը այլ բնույթով	X	0	0	0	0	0	0	0
1156100	5.6.1 Գույքի վարձակալության ծախսեր, որից շենքերի, շինությունների և բնակարանների վարձակալության ծախսեր	3800			0				
1156120	Սարքերի և սարքավորումների վարձակալության ծախսեր	3900			0				
1156130	Իրի վարձակալության ծախսեր	4000			0				
1156140	Այլ գույքի վարձակալության ծախսեր	4100			0				
1156200	5.6.2 Արտագնադատական պահպանության ծախսեր	4200			0				
1156300	5.6.3 Չարժեքի, սուղորդի և այլ օբյեկտայր վճարների կատարման ծախսեր	4300			0				
1568400	5.6.4 Գույքի պահպանության և աշխատողների առողջության (կյանքի) ապահովագրության ծախսեր	X	0	0	0	0	0	0	0
1156410	- գույքի ապահովագրության ծախսեր	4500			0				
1156420	- աշխատողների առողջության (կյանքի) ապահովագրության ծախսեր	4600			0				
1156500	5.6.5 Գլխավոր մուղի պատգամավորների նստաշրջանային ծախսեր	4800			0				
1156600	5.6.6 Երկրաբանական ծախսեր	4900			0				
		4940			0				
		4970			0				
1156700	5.6.7 Դեկլարիի խնդ	5000			0				
1156800	5.6.8 Այլ ծախսերի ցուցանիշի ձեռքբերման ծախսեր	5600			0				
1200000	Բ. ԿՐԻՏԻՍԱԼ ԾԱԽՍԵՐ այլ բնույթով	X	0	0	0	0	0	0	0
1210000	1.ԿՐԻՏԻՍԱԼ ԵՐԿՐԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ, ԸՆԴՈՒՄԵՆԸ այլ բնույթով	X	0	0	0	0	0	0	0
1211000	1.1 ԿՐԻՏԻՍԱԼ ԸՆԴՈՒՄՈՒՄՆԵՐՆԵՐ ԾԱԽՍԵՐ	6300			0				
1212000	1.2 ԼԱԿԱԳՅԱԼՆԵՐՆԵՐՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ	6400			0				
1213000	1.3 ԵՐԿՐԱՆՈՒՄՆԵՐՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ	6450			0				
1214000	1.4 ԵՐԿՐԱՆՈՒՄՆԵՐՆԵՐԻ ՊԵՏԱԿԱԼ (ՔԱՆԱԿՆԵՐ) ՊԱՐԻՍՏԻ ԾԵՆՈՒՄՆԵՐ ԾԱԽՍԵՐ	6500			0				
1215000	1.5 ԿՐԻՏԻՍԱԼ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԾԵՆՈՒՄՆԵՐ ԾԱԽՍԵՐ, ԸՆԴՈՒՄԵՆԸ այլ բնույթով	X	0	0	0	0	0	0	0
1215100	1.5.1 Շենքերի, շինությունների և բնակարանների ձեռքբերման ծախսեր	6550			0				

1215200	1.5.2 Առողջի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր	6600			0				
1215300	1.5.3 Տրանսպորտային միջոցների ձեռքբերման ծախսեր	6650			0				
1215400	1.5.4 Դողի ձեռքբերման ծախսեր	6700			0				
1215500	1.5.5 Գողի բարելավման ծախսեր	6750			0				
1215600	1.5.6 Այլ ակտիվների ձեռքբերման ծախսեր	X			0				
1216000	1.6 ԸՆԴՈՒՄՆԵՐՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԾԵՆՈՒՄՆԵՐ ԾԱԽՍԵՐ, ԸՆԴՈՒՄԵՆԸ այլ բնույթով	6850	0	0	0	0	0	0	0
1216100	1.6.1 Բնական ռեսուրսների օգտ. իրավունքների ձեռքբերման ծախսեր	6900			0				
1216200	1.6.2 Գեոինժեաների իրավունքների, արտոնագրերի, առևտրային նշանների օգտագործման իրավունքների ձեռքբերման ծախսեր	6950			0				
1216300	1.6.3 Բլ նյութական այլ-ակտիվների ձեռքբերման ծախսեր	X			0				
1217000	1.7 ԳԵՐԵՇԻՎՈՒՄ - ԶՄՆՏԵՑԱԳՐԱԿԱԼ ԾԱԽՍԵՐ	7000			0				
1220000	2.ԿՐԻՏԻՍԱԼ ԼՈՐՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ	7700			0				
1000000	ԸՆԴՈՒՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	X	72,071,090	0	72,071,090	18,017,773	18,017,773	18,017,773	18,017,773

» 200 ք.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԱԿԵՆՏՐԱԿԱԼ ԿԵՆՏՐՈՆ

ՎԼՈՒԽ 6. ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ

6.1. Տնային տնտեսությունների՝ բնակչության ֆինանսների էությունը

Ըուկայական տնտեսության պայմաններում անձնական, ընտանեկան տնտեսությունը գրադոլորների տնտեսությանը անվանում են տնային տնտեսություն: Հետևապես, նրանց ֆինանսներին անվանում են տնային տնտեսության ֆինանսներ: **Տնային տնտեսությունը՝** դա մարդկանց խումբ է, որոնք ապրում են միևնույն բնակարանում (սեփական տանը) և որոնք միավորում է ունեցվածքը, եկամուտը և համատեղ սպառումը: Տնային տնտեսությունները համարվում են պետության մեջ ֆինանսական հարաբերությունների մասնակից և նպաստում են երկրի ֆինանսական համակարգի ձևավորմանն ու զարգացմանը: Հետևապես, տնային տնտեսությունների, այսինքն՝ բնակչության ֆինանսները համարվում են ֆինանսական համակարգի տարրերից մեկը: Այն իրենից ներկայացնում է դրամական հարաբերությունների համընդհանրություն, որոնք տեղի են ունենում ընտանեկան բյուջեի ձևավորման և օգտագործման ժամանակ:

Ընդհանրական բյուջեն դրամական միջոցների ֆոնդ է, որի եկամուտները ձևավորվում են ընտանիքի անդամների դրամական միջոցների մուտքերից, իսկ ծախսերն իրենցից ներկայացնում են օգտագործված ընթացիկ և կուտակված պաշարները: Պետության հարստությունը ստացվում է բնակչության հիմնական զանգվածի կենսամակարդակով և այն և՛նում է ամենից առաջ տնային տնտեսությունների խնայողությունների հաշվին:

Այդպիսի աճը հանդիսանում է պետության իրավական հատվածի կայունության և աճի վկայություն: Եկամուտների, որոնք ստանում են տնային տնտեսությունները, կոչվում են սկզբնական եկամուտներ: Նրանք վճարվում են նոր ստեղծված արժեքից, այսինքն արտադրության մեջ ստեղծված ավելացված արժեքից: Սակայն, գոյություն ունի նաև տնային տնտեսությունների **տնօրինվող եկամուտ** հասկացությունը: Դա այն եկամուտն է, որ ստանում է տնային տնտեսությունը տնտեսական գործունեությունից (որպես աշխատանքի գլխի կամ ձեռնարկատիրական եկամուտ) կամ սեփականությունից, ինչպես նաև պետության կողմից Ազգային եկամտի վերաբաշխման շնորհիվ (սոցիալական՝ ընտանեկան, գործազուրկի նպաստներ): Տնօրինվող եկամուտը հանդիսանում է ապրանքների (ծառայությունների) վերջնական սպառման և խնայողությունների աղբյուր:

Տնօրինվող եկամուտը կարող է որոշվել ինչպես առավելագույն գումարով,

որը տնային տնտեսությունը կարող է օգտագործել ընտանեկան սպառման համար, ունեցվածքի լուծարման (ակտիվների նվազեցում կամ պասիվների (պարտքերի) ավելացման միջոցով):

Տնային տնտեսությունները ևս վճարում են հարկեր (հողի հարկ, գույքահարկ, աշխատող ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերերը՝ եկամտահարկ), ինչպես նաև, բացի հիմնական եկամուտներից, ստանում են տրանսֆերտներ (ընտանեկան և գործազուրկի նպաստներ, ընտանիքի որևէ անդամի, այլ հարազատի, բարեկամի արտերկրում աշխատանքի մեկնելու դեպքում տրանսֆերտի ուղարկում՝ որպես ֆինանսական օգնություն): Տնային տնտեսությունները ստանում են նաև սոցիալական տրանսֆերտ բնեղեն ձևով, եթե պատկանում են սոցիալական անապահով խմբերին:

Բացի այդ, տնային տնտեսությունների եկամտի տարատեսակ է համարվում նաև ճշգրտված տնօրինման եկամուտը: Դա այն եկամուտն է, որի մեջ ներառվում է տնօրինման եկամուտը և բնեղեն ձևով ստացված սոցիալական տրանսֆերտը (օգնությունը)՝ համաձայն նրանց կողմից բնեղեն ձևով ուրիշներին տրված օգնությունը: Այսպիսով, տնային տնտեսությունների փաստացի վերջնական սպառումը բաղկացած է սպառողական ապրանքներից, բնակչությանը մատուցված ծառայություններից և ձեռք բերված կենցաղային իրերից: Ընտանեկան բյուջեի վիճակի վերլուծության համար օգտագործվում են բնակչության եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը:

Այն բնութագրում է բնակչության դրամական եկամուտների, ծախսերի և խնայողությունների ծավալները և կառուցվածքը: Բնակչության եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը արտացոլում է համախառն Ազգային եկամտի այն մասը, որը մուտք է լինում բնակչությանը որպես դրամական եկամուտներ: Բնակչության եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը հանդիսանում է սոցիալ-տնտեսական վերլուծության գործիքներից մեկը, որը բնութագրում է բնակչության կենսամակարդակը: Բնակչության եկամուտները և ծախսերի հաշվեկշիռը միջոցով որոշվում է.

- բնակչության եկամուտների և ծախսերի ընդհանուր ծավալները և կառուցվածքը,
- բնակչության իրական և անվանական եկամուտները և սպառողական ունակությունը,
- բնակչության բաշխումը՝ ըստ եկամուտների և ծախսերի մակարդակի, որոնք ապրում են աղքատության մակարդակից ցածր (օրական մինչև 1.5\$, ամսական մեկ շնչի հաշվով՝ 45\$),
- տնտեսական այլ հաշվարկներ՝ բնակչության մեկ շնչի հաշվով:

Բնակչության եկամուտների և ծախսերի հաշվեկշռում արտացոլվում են եկամուտները և ծախսերը՝ ըստ ստացվող միջոցների աղբյուրների և ծախսերի ուղղությունների խմբավորման:

Հաշվեկշռի եկամտային մասը բաղկացած է եկամուտների զանազան աղբյուրներից, որոնք կարող են բացահայտվել վիճակագրական և ֆինանսական հաշվետվությունների օգնությամբ, ընտրովի սոցիալական հետազոտությամբ և այլ մեթոդներով: Հաշվեկշռի ծախսային մասը բաղկացած է տրանսֆերտներից, որոնք վճարվում են բնակչությանը, ինչպես նաև ապրանքների, ծառայությունների համար ծախսերը և խնայողությունները, որոնք ներդրվել են առևտրային բանկերում՝ որպես ավանդներ կամ արժեթղթերում (բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլն):

Պարզաբանենք բնակչության եկամուտների և ծախսերի հաշվեկշռի, այսինքն ընտանեկան բյուջեի բովանդակությունը: Այն բաղկացած է եկամուտներից, որի հաշվին կատարվում են ծախսեր:

Որպես եկամուտներ համարվում են.

- սեփականության տարբեր ձևերի հիման վրա կազմակերպված ձեռնարկությունների աշխատողների աշխատանքի վարձատրությունը և նրան հավասարեցված վճարումները,

- ձեռնարկատիրական գործունեությունից և սեփականությունից ստացված եկամուտները,

- ֆինանսական համակարգից մուտքեր,
- սոցիալական տրանսֆերտներ,
- այլ մուտքեր:

Որպես տնային տնտեսությունների, այսինքն՝ բնակչության ծախսեր և խնայողություններ համարվում են՝

- ապրանքների ձեռքբերում և ծառայությունների վճարում,
- պայտադիր և կամավոր վճարումներ,
- խնայողությունների աճ՝ ավանդներում և արժեթղթերում կատարված ներդրումների շնորհիվ,
- արտարժույթի գնում,
- այլ ծախսեր:

Այժմ համառոտակի անդրադառնանք բնակչության նշված եկամուտների և ծախսերի էության պարզաբանմանը:

Ընտանեկան բյուջեի եկամուտների հիմքը հանդիսանում է աշխատավարձը: Այն ներառում է.

- առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից աշ-

խատողներին կատարված աշխատանքի դիմաց տրված աշխատավարձը, աշխատավարձի վրսեկները (վնասակար և բարձրորակ աշխատանքի և այլ պայմանների համար), խրախուսանքը՝ բիզնես-ծրագրի առաջադրանքը կատարելու և գերակատարելու համար, փոխհատուցման վճարումները՝ կապված աշխատանքի կարգավիճակի և պայմանների հետ, պարզևատրությունները և միանվագ խրախուսման վճարները, ինչպես նաև վճարումները՝ կապված անվճար սննդի, բնակության, վառելիքի հետ, որոնք կլուծվեն մշտական բնույթ: Ընդ որում, կարևոր նշանակություն ունի աշխատավարձի նվազագույն չափը: 2004թ. հունվարից մեր երկրում այն սահմանված է ամսեկան 13 հազար դրամ, որից օգտվում են ոչ առևտրային (բյուջետային) կազմակերպություններում աշխատող 40 հազար աշխատակիցներ: Աշխատավարձի այդ չափը նախատեսված է 2004թ. պետբյուջեով: Մինչդեռ, վարչական իրավախախտումների, այդ թվում հարկային օրենքների խախտման դեպքում, երբ նախատեսվում է տույժ, տուգանք, ապա այն հաշվարկվում է 1996թ. սահմանած ամսեկան նվազագույն աշխատավարձի չափով՝ 1000 դրամ (5.95 դրամ x 173.1 դրամ), այսինքն մեկ ժամյա վարձատրության չափը բազմապատկված մեկ ամսվա աշխատածամանակով: Փոխհատուցվող վճարումների չափերը կախված է աշխատանքի պայմաններից: 2005թ. հուլիսի 1-ից գործողության մեջ կդրվի 2004թ. նոյեմբերի 9-ին ԱՄ-ի կողմից ընդունված ՀՀ աշխատանքային նոր օրենսդրությունը¹: Ըստ աշխատանքային նոր օրենսդրության, հնգօրյա աշխատանքային շաբաթի պայմաններում աշխատածամի շաբաթական տևողությունը սահմանված է 40 ժամ (նախկինում 41 ժամ), իսկ օրեկանը՝ 8 ժամ: Գործատուն իրավասու է վարձու աշխատողի աշխատանքային օրվա տևողությունն ավելացնել 50 տոկոսով ու սահմանել օրական 12 ժամ և դրան համապատասխան բարձրացնելով աշխատանքի վարձատրության չափը: Ըստ աշխատանքային օրենսդրության, գործատուն պարտավոր է աշխատավարձը վճարել մինչև հաջորդ ամսվա 15-ը՝ ուշացնելու դեպքում գործատուն պետք է վճարի տույժ: Տնտեսապես զարգացած երկրներում տույժի փոխարեն գնաճը ընդունված է որպես մակրոտնտեսական ցուցանիշ: Բացի այդ, աշխատողը իրավասու է օգտվել 24 աշխատանքային (28 օրացուցային) օրվա հիմնական արձակուրդից և ուսման նպատակով տրվող լրացուցիչ արձակուրդից (Ըստ աշխատանքային օրենսգրքի 174-րդ հոդվածի, Բուհ ընդունվելու հա-

1. ՀՀ աշխատանքային օրենսդրություն, Երևան, 2005, էջ 80-81:

մար աշխատող դիմորդներին յուրաքանչյուր քննության հաշվով տրամադրվում է եռօրյա արձակուրդ: Բուհերում սովորող աշխատողներին Բուհ-ի միջնորդությանը տրամադրվում է ուսումնական արձակուրդ՝ ընթացիկ ամեն քննության համար 3 օր, ստուգաթղթի հաշվով՝ 2 օր, պետական քննությանը՝ 6 օր, դիպլոմային աշխատանքի համար՝ 30 օր: Աշխատավարձի վրահեցումը, այսինքն՝ հավելում որոշակի տուկոսի չափով, արհեստավարժ մասնագետներին տրվում է որակավ աշխատանքի, վնասակար և ծովի մակերևույթից 2000 մետրից բարձր պայմաններում աշխատանքի համար: Ուսանողների կրթաթոշակները ևս ներառվում են բնակչության եկամուտների մեջ: Բնակչության նվազագույն եկամուտների չափը չպետք է պակաս լինի նվազագույն գամբյուղից: Դա եկամտի այն չափն է, որն անհրաժեշտ է մեկ շնչի գոյատևման համար: Ըստ աշխատանքային օրենսդրության, դեռևս 1996 թվականից ՀՀ նախագահի հրամանագրով սահմանվել է աշխատանքի վարձատրության չափ՝ նորմալ աշխատանքային պայմանների դեպքում՝ մեկ ժամվա վարձատրությունը՝ 5.95 դրամ: Այդ չափը 1999թ. հունվարից ՀՀ նախագահի հրամանագրով բարձրացվել է 10 անգամ՝ սահմանվելով 59.5 դրամ, իսկ ամսական նվազագույն աշխատավարձի չափը՝ 5 հազար դրամ, որը, գրեթե, գործնականում չի կիրառվել, որովհետև ոչ մի կարգի կազմակերպությունում աշխատավարձի չափը տվյալ ժամանակում դրանից պակաս չի եղել, թեև տնտեսազրկական հիմնավորվածությամբ այն պետք է սահմանվեր 10 հազար դրամ (59.5դրամ x 173.1 ժամ):

Բացի կազմակերպություններում կատարած աշխատանքի համար հասանելիք անվանական աշխատավարձից, աշխատողներին վճարվում է նաև այլ վճարումներ, որոնք ունեն սոցիալական բնույթ: Դրանց վերաբերում են կյանքի ապահովագրության համար վճարումները, աշխատանքային պայմանագրի դադարեցման համար տրվող նպաստը (երկու շաբաթվա միջին աշխատավարձի չափով, իսկ տնօրինության նախաձեռնությամբ աշխատանքից ազատելու կամ կազմակերպության լուծարման դեպքում՝ երկու ամսվա միջին աշխատավարձի չափով), ուղեվարձը՝ նոր աշխատանքային վայր հասնելու և տնային գույքը փոխադրելու համար, նյութական օգնությունը, որը տրվում է սոցիալապես անապահով աշխատողներին և այլ սոցիալական վճարումները: Այլ վճարումները, որոնք չեն վերաբերվում աշխատանքի վարձատրությանն և ունեն սոցիալական բնույթ, համարվում են գործուղման ծախսերի հատուցումը, հոնարարները, աշխատանքի շարժուղական բնույթի համար աշխատավարձի վրահեցում և այլն: Ձեռնարկատիրական, այդ թվում առևտրային գործու-

նությունից (բիզնեսից) ստացվող եկամուտները համարվում են.

- ունեցվածքի վաճառքից (սեփականությունից) ստացված եկամուտները,
- ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները,
- ապրանքների վերավաճառքից (բիզնեսից) ստացված գուտ եկամուտը (համախառն եկամտից հանած ապրանքի ձեռքբերման ծախսերը),
- անհուտ ձեռնարկատերերի եկամուտները:

Սեփականությունից ստացված եկամուտների մեջ ներառվում են ոչ միայն ունեցվածքի վաճառքից ստացված եկամուտները, այլև բաժնետոմսերից ստացված շահաբաժինները, պարտատոմսերից ստացված եկամուտները և այլն: Բնակչության եկամուտներին մեջ ներառվում են նաև սոցիալական տրանսֆերտները, որոնք որպես նպաստ տրվում է պետության կողմից (սոցիալական օգնություն, ընտանեկան և գործազրկության նպաստներ, կենսաթոշակներ, կրթաթոշակներ, նյութական օգնություն՝ պրամական ձևով կամ ապրանքային տեսքով): Ընդ որում, գոյություն ունի թոշակների հետևյալ տեսակները.

- **սոցիալական թոշակ** .- դա այն թոշակն է, որը տրվում է պետության կողմից այն քաղաքացուն, որի տարիքը հասել է կենսաթոշակային տարիքին (63 տարեկան), սակայն չունի աշխատանքային ստաժ: Այդ թոշակի չափը 2005թ. ապրիլի 1-ից սահմանվել է ամսական 4 հազար դրամ՝ նախորդ տարիների 3 հազար դրամի դիմաց, որը համար միջոցներ են նախատեսվել 2005թ. պետական բյուջեով,
- **կենսաթոշակ** .- Դա այն տարիքային թոշակն է, որը տրվում է 63 տարին լրացած քաղաքացիներին (2003թ. ապրիլի 1-ից տղամարդկանց թոշակի տարիքը ևս 63 տարին է) և ոյունք ունեն 15 տարվա և բարձր աշխատանքային ստաժ: Կենսաթոշակի չափը սահմանվում է ստաժի համար վճարը, որը տարբերակված է ըստ տարիների՝ 160-200 դրամ, գումարած սոցիալական թոշակի չափը,
- **կերակրողին կորցնելու թոշակ** .- ոչս այն թոշակն է, որ տրվում է ընտանիքի անչափահաս երեխաներին՝ կերակրողին կորցնելու դեպքում: Ուղեվա ընտանիքի կերակրող համարվում է հայրը, նրա մահվանից հետո՝ մայրը,
- **հաշմանդամության թոշակ** .- դա այն թոշակն է, որը տրվում է ֆիզիկապես հաշմանդամներին, ընդհանուր հիվանդություն ունեցող և անաշխատունակ դարձած կամ աշխատունակ քաղաքացիներին և ի ծնե հաշմանդամներին (ֆիզիկական և մտավոր),
- **ծառայական թոշակ** .- դա այն թոշակն է, որ տրվում է կենսաթոշակառուին՝ անձնական ներդրումների, այսինքն պաշտոնական ծառայու-

թյան համար, որպես խրախուսում:

Բնակչության եկամուտների մեջ է ներառվում նաև տարբեր տեսակի նպաստները, ինչպիսիք հանդիսանում են.

• **նպաստների ժամանակավոր անաշխատունակության համար**.- դա այն նպաստն է, որ տրվում է կազմակերպության կողմից՝ իր աշխատողի ժամանակավոր անաշխատունակության, այսինքն հիվանդության համար

• **ֆիզիոլոգիական արշակուրդի, այսինքն մայրության համար արժող նպաստ**.- դա այն նպաստն է, որ տրվում է աշխատող կանանց, որոնք պատրաստվում են մայր դառնալ և նրա չափը նախատեսված է աշխատանքային օրենսդրությամբ,

• **կանանց փոհատուցման վճարում**.- դա այն վճարի չափն է, որ տրվում է մինչև երեք տարեկան երեխա ունեցող և աշխատող կանանց, երբ լուծարվում է կազմակերպությունը,

• **Զեռնորիյան ԱԷԿ-ի** ճառագայթում ստացած քաղաքացիների նպաստ,

• **հաշմանդամների խնամքի նպաստ**.- դա այն նպաստ է, որ տրվում է նրա խնամակալին,

• **գործազրկության նպաստ**.- դա այն նպաստն է, որ տրվում է գործազուրկի կարգավիճակ ստացած անձանց՝ մեկ տարի ժամանակով, (2005թ. հունվարից՝ ամսեկան 7800 դրամ),

• **ընդհանրական նպաստ**.- դա նպաստի տեսակ է, որ տրվում է նյութապես անապահով ընտանիքներին (2005թ. հունվարից՝ ամսեկան 12500 դրամ),

• **նյութական օգնություն**.- տրվում է փախստականներին և նյութապես անապահով բնակչության մյուս խմբերին,

• **կրթաթոշակները**.- այն թոշակներն են, որոնք տրվում են պետական ուսումնարաններում, քոլեջներում, բուհերում սովորելու համար:

Բնակչության եկամուտների մեջ ներառվում են նաև երկրի ֆինանսական համակարգից տրվող վճարումները, որոնց մեջ ներառվում են.

- ապահովագրական փոխհատուցումները,
- բնակչինարարության և այլ նպատակով տրվող սպառողական վարկերը,
- ավանդների տոկոսավճարները,
- փոխառությունների շահումները և նրանց մարումը,
- վիճակախաղերի շահումները,
- ապառիկ գնված ապրանքների և վարկերի պարտքերի փոփոխու-

թյունը:

Որպես բնակչության ծախսելի համարվում են.

• **ապրանքների գնումը**, այսինքն սննդի, հագուստի, կոշիկի, դեղորայքի, կենցաղային իրերի գնում՝ անձնական և ընտանեկան կարիքները բավարարելու համար,

• **ծառայությունների համար վճարումները և այլ ծախսերը**.- դրանք այն ծախսերն են, որ կատարվում են կոմունալ-բնակարանային և կենցաղային ծառայությունների համար (էլ.էներգիայի, գազի, ջրի վարձ, բնակավարձ, ուսուցման, հանգստի, զբոսաշրջիկության, առողջության պահպանման, հոգևոր պահանջմունքների բավարարման ծախսեր, տրանսպորտի՝ փոխադրական, կապի և այլ ծախսեր),

• **պարտադիր և կամավոր վճարներ**.- որպես պարտադիր վճարներ համարվում են բնակչության կողմից վճարվող հարկերը, աշխատողներին կողմից վճարվող սոցիալական վճարները, գույքի և կյանքի ապահովագրական վճարները, վարկի մայր գումարի և տուկոսի վճարը, վիճակախաղի տոմսերի, ապառիկ կարգով ապրանքների ձեռքբերումը:

Որպես հարկ համարվում է սեփականության համար վճարվելիք հարկերը (հողի հարկ, գույքահարկ), աշխատավարձից պահվող եկամտակերպ, ծառայությունների մատուցման համար վճարվող պետությունները, վարձակալական վճարը (հողի, շենքերի, մեքենաների վարձակալման համար) և այլ վճարումները:

Մեր երկրում տնային տնտեսությունների, այսինքն բնակչության եկամուտները ըստ հաշվեկշռի ունենում են դրական կամ բացասական սալդո (saldo- մնացորդ). Ընդ որում, եթե բնակչության եկամուտները գերազանցում են ծախսերին, ապա ստացվում է դրական սալդո: Դա հնարավորություն է տալիս խնայել եկամուտների մի մասը որպես խնայողություն և կուտակված միջոցները, որպեսզի չսառեցնել տանը, հարկ է ներդրում և կուտակված միջոցները, որպեսզի ապահովի ստանալ տուկոսավճար. որպես եկամուտ կամ ներդրել առաջատար բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերում և ստանալ շահաբաժին կամ գնել պետական պարտատոմսեր և ստանալ եկամուտ, որը չի հարկվում պետության կողմից:

Բնակչության եկամուտների, հետևապես կենսամակարդակի վրա իրենց ազդեցությունն են ունենում սոցիալական և ֆինանսական ինդիկատորները (Indekatore- 1. տեխն. ինդիկատոր, արագություն, ծանրություն չափելու գործիք, 2. քիմ.ինդիկատոր – քիմիական ռեակտիվ, ֆին.- ֆինանսական գործիք):

Սոցիալական և ֆինանսական ինդիկատորները հանդիսանում են սոցիալական և ֆինանսական ծրագրերի տարրեր և օգտագործվում են որպես տնտեսական բարեփոխումների ազդեցության գործիք՝ բնակչության կենսամակարդակի առումով: Բնակչության կենսամակարդակը հաշվարկվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական արժեքի և բնակչության թվի հարաբերությամբ, որը 2003թ. կազմել է 1186\$ և 2000թ. համեմատությամբ բարձրացել է 2.4 անգամ: Սակայն մեր երկրում բնակչության կենսամակարդակը դեռևս ցածր է և այդ ցուցանիշով Հայաստանը 1994թ. համարվում է զարգացող երկիր: Ըստ արևմտյան փորձագետների հաշվարկի, մինչև 2020թ. Հայաստանը՝ կհաղթահարի աղքատությունը՝ (ներկայումս բնակչության 49.2% աղքատ է, նախորդ տարում՝ 55%-ը և 2003-2015թթ. աղքատության դեմ պայքարի ծրագրով նախատեսվում է աղքատության մակարդակը իջեցնել 19.5 %-ի) և բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշը 2020թ. հասցնել 13 հազար դոլարի:

Եթե նկատի ունենանք, որ 1998-2004թթ. այդ ցուցանիշը միայն կրկնապատկվել է, ապա մինչև 2020թ. այն կավելանա շուրջ 6 անգամ և կկազմի 7-8 հազ. \$, այսինքն 13 հազ. \$ ցուցանիշը ուժեղացված, չիմնականված ցուցանիշ է:

Սոցիալական և ֆինանսական ինդիկատորները ձևավորվում են այնպիսի տվյալների հիման վրա, որոնք բնութագրում են բնակչության առանձին խավերի ընտանեկան բյուջեները և կրթության մակարդակը:

Որպես սոցիալական և ֆինանսական ինդիկատորներ համարվում են.

• **դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով.** - Այն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում բնակչության եկամուտների հարաբերությունը բնակչության թվաքանակին: Բնակչության իրական եկամուտները միջին հաշվով հաշվարկվում է նույն կարգով՝ հանելով պարտադիր վճարումները՝ ճշգրտված ըստ սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ):

Գնաճի լայնորեն օգտագործվող չափանիշը սպառողական գների ինդեքսն է (համաթիվը): Այդ գների միջոցով որոշվում է ապրանքների սպառողական գամբյուղի արժեքը՝ մեկ շնչի հաշվով սննդամթերքի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների սպառման նորման (չափը) բազմապատկելով տվյալ ժամանակաշրջանում և տվյալ երկրում գործող շուկայական գներով (ըստ 40 տեսակի ապրանքների):

Այժմ ցույց տանք սպառողական գների ինդեքսի հաշվարկման կարգը.

ԽՆԳԻԻ-1. Ենթադրենք սպառողը ընտանեկան բյուջեի 50 %-ը (գործակցով 0.5) ծախսել է սննդամթերքի, 30 %-ը՝ բնակարանի վարձի և 20 %-ը՝ բժշկական և այլ ծառայությունների վրա:

Պահանջվում է որոշել սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ):

Լուծում

$$ՍԳԻ = (0.5 \times 100\%) + (0.3 \times 100\%) + (0.2 \times 100\%) = 1$$
, այսինքն՝ ՍԳԻ-ն տոկոսով կկազմի 100%, իսկ գործակցով՝ մեկ:

ԽՆԳԻԻ-2. Ենթադրենք, սննդամթերքի գներն աճել են 20 %-ով, բնակավարձի գները՝ 6 %-ով, բժշկական և այլ ծառայությունների գները՝ 10%-ով:

Նախորդ խնդրի հիման վրա պահանջվում է որոշել սպառողական գների ինդեքսը:

Լ ու ծ ու մ

$$ՍԳԻ = (0.5 \times 120\%) + (0.3 \times 106\%) + (0.2 \times 110\%) = 113,8\%$$
, այսինքն՝ սպառողական ապրանքների գները տվյալ ժամանակաշրջանում աճել են 13.8%-ով (գործակցով կկազմի 1.14):

• **աշխատավարձի միջին չափը.** - հաշվարկված անվանական աշխատավարձի հարաբերությունը աշխատողների թվին: Մեկ աշխատողի միջին ամսեկան աշխատավարձը որոշելու համար տարվա ընթացքում ստացած աշխատավարձի հանրագումարը (ներառյալ աշխատավարձին հավասարեցված վճարումները) բաժանվում է տարվա ամիսների թվի վրա: Ըստ ՀՀ աշխատանքային նոր օրենսդրության 195-րդ հոդվածի, միջին աշխատավարձը հաշվարկվում է.

• միջին օրեկան աշխատավարձի չափը որոշվում է միջին ամսեկան աշխատավարձը բաժանելով 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի թիվը),

• հնգօրյա աշխատանքային շաբաթի դեպքում միջին օրեկան աշխատավարձը որոշվում է՝ միջին ամսեկան՝ աշխատավարձը բաժանելով 21.7-ի, իսկ վեցօրյա աշխատանքային շաբաթի դեպքում՝ բաժանելով 26.1-ի:

Մեր երկրում ամսեկան միջին աշխատավարձը ըստ ԱՎԾ-ի տվյալների 2004թվականին կազմել է 40961 դրամ (76 \$), բյուջետային կազմակերպություններում՝ 26136 դրամ (49\$), իսկ արտաբյուջետային ոլորտի աշխատողներինը՝ 53063 դրամ (99\$):

• **դրամական եկամուտների գնողունակությունը.** - Այն իրենից ներկայացնում է բնակչության կողմից աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման ունակությունը և արտահայտվում է բնակչության մեկ շնչին ընկնող համարժեք ապրանքի ծավալով (արժեքային ձևով)՝ հաշվի առնելով մվազագույն գամբյուղի չափը.

• **բնակչության խմբավորումը՝ ըստ բնակչության մեկ շնչին ընկնող եկամտի** .- Դա այն ցուցանիշն է, ըստ որի խմբավորում են բնակչության խավերը՝ կախված եկամուտների միջին չափից,

• **եկամուտների պարբերական գործակից** .- Այն իրենից ներկայացնում է բնակչության եկամուտների հարաբերությունը բնակչության թվին: Բանի որ բնակչության տարբեր խմբերի եկամուտները տարբեր են, ապա ըստ բնակչության խավերի տարբեր են եկամուտների միջին մակարդակը: Ըստ եկամուտների գործակցի, կատարվում է բնակչության խմբավորում՝ կախված մեկ շնչին ընկնող եկամտի միջին չափից,

• **նվազագույն զամբյուղ** .- Դա մեկ շնչի հաշվով նվազագույն եկամտի չափն է (ՀՀ-ում մեկ շնչի հաշվով ամսեկան 14 հազար դրամ),

• **ապրելակերպի նվազագույն չափ** .- դա սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների (լստ ՄԱԿ-ի սոցիալական հանձնաժողովի մեթոդիկայի 40 տեսակ ապրանքներ) չափն է՝ մեկ շնչի հաշվով որոշակի ժամանակաշրջանում (տարեկան, ամսեկան),

• **բնակչության կյանքի պայմանների ինդեքսը (միացյալ) ցուցանիշ** .- Դա ամսեկան նվազագույն սպառողական բյուջեն է մեկ շնչի հաշվով,

• **ցածր եկամուտների դեֆիցիտի ցուցանիշ** .- Այն վերաբերվում է բնակչության աղքատությունը բնութագրող ցուցանիշին: Դրանով որոշվում է բնակչության թիվը, որոնց գոյատևման համար եկամուտները ցածր են նվազագույն զամբյուղից,

• **եկամտի դեֆիցիտ** .- որոշվում է բնակչության ծախսերի և եկամուտների տարբերությամբ: Եկամուտների դեֆիցիտի (նվազուրդ) հարաբերությունը բնակչության թվին, որոշվում է նրա միջին չափը և այն համեմատելով ամսեկան նվազագույն զամբյուղի հետ, որոշվում է աղքատության չափը,

• **աղքատության խորացման ինդեքս** .- բնութագրում է աղքատ ընտանիքների եկամուտների միջին շեղումը՝ ապրելակերպի նվազագույն չափից և արտահայտվում է եկամտի արժեքային դեֆիցիտով, որը պակաս է նվազագույն զամբյուղից:

Բնակչության աղքատության հաշվով գոյություն ունի ֆոստեր-Գրիեր-Տորբելի աղքատության չափիչները, որոնք կոչվում են **ժայռահեղ աղքատության ինդեքս** .- Այն բնութագրում է ժայռահեղ աղքատ բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտների միջին կշռված մեծության շեղումը ապրելակերպի նվազագույն չափից և արտահայտվում է եկամտի քառակուսու գումարի մեծությամբ՝ ընդհանուր ընտանիքների նկատ-

մամբ: Այդ ցուցանիշը հաշվարկվում է ծայրահեղ աղքատ ընտանիքների հաշվով, ում եկամտի չափը մեկ շնչի հաշվով առավել ցածր է ամսեկան նվազագույն զամբյուղից:

Հատուկ դեր ունի բնակչության եկամուտների դիֆերենցման ցուցանիշը (diferentiation-տարբերակում), որը ժամանակակից տնտեսագիտության, այդ թվում ֆինանսների ընդհանուր տեսությամբ հայտնի է **Լորենցի կոր** անվանումով:

Լորենցի կորը իրենից ներկայացնում է բնակչության կոմույալտիվ (comoljative -կուտակային) բաշխումը և դրան համապատասխան եկամուտների բաշխումը: Այն ցույց է տալիս բոլոր տեսակի եկամուտների և նրանց ստացողների հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ: Եթե բնակչության եկամուտները բաշխվեն հավասարաչափ, այսինքն՝ ստացողների 10%-ը ունենային եկամուտների 1/10 մասը, 50%-ը՝ կեսը և այլն, ապա այդպիսի բաժանումը կունենար բառակուսու կողմեր՝ 0%-100%: Անհավասարաչափ բաշխումը բնութագրում է կորով, որը հայտնի է Լորենցի կոր անվանումով: Ընդհանրապես, շուկայական տնտեսության մեջ Ազգային եկամուտը անհավասարաչափ է բաշխվում, առավել ևս Հայաստանում, որի պատճառով հասարակության մեջ առաջացել են հակադիր բևեռներ՝ մեծահարուստներ և հարուստներ (բնակչության 20%-ը) և աղքատներ (աղքատներ՝ 49.2%, այդ թվում ծայրահեղ աղքատներ՝ 20%) , իսկ միջին խավ դեռևս չի ձևավորվել,

• **համակենտրոնացման գործակից կամ Չինի ինդեքս** .- Այն սահմանում է բնակչության եկամուտների փաստացի ծավալի շեղման աստիճանը՝ հավասարաչափ բաշխումից: Այդ ցուցանիշը հնարավորություն է տալիս թվային մեծությամբ գնահատել անհավասարության աստիճանը: Ընդ որում, որքան մեծ լինի տարբերակված բաշխման չափը, այնքան կորը հեռու կլինի քառակուսուց և մեծ կլինի համակենտրոնացման գործակիցը,

• **ցածր եկամուտների մակարդակ** .- Այն իրենից ներկայացնում է նվազագույն շեղը կամ սահմանափակման չափը: Դրանից ցածր եկամուտներ ունեցող տնային տնտեսությունները համարվում են ծայրահեղ աղքատներ և գտնվում են աղքատության շեմին: Դա որոշվում է հետևյալ երեք եղանակով.

• **եկամուտների բացարձակ մեծությամբ** .- ապրելակերպի նվազագույն չափով՝ կախված սննդի, հագուստի, կրշիկի և առաջին անհրաժեշտության մյուս տեսակի ապրանքների պահանջարկի գնահատմամբ, այսինքն՝ փաստացի սպառման չափը համեմատվում է սպառման նորմաների հետ,

• **եկամուտների հարաբերական մեծությամբ** .- այն իրենից ներկայացնում է եկամուտների բաշխումը մեկ շնչի հաշվով՝ ըստ բնակչության խմբերի և այդ ցուցանիշի հիման վրա որոշվում է ցածր եկամտի մակարդակ ունեցող խմբերը,

• **եկամուտների սուբյեկտիվ մեծությամբ** .- որոշվում է ըստ հասարակական կարծիքի՝ մեկ շնչի կամ ընտանիքի հաշվով եկամտի ցածր մակարդակից ելնելով:

6.2. Բնակչության եկամուտներն ու ծախսերը և նրանց կառուցվածքը

Բնակչությունը, որպես տնային տնտեսություններ, շուկայական տնտեսության պայմաններում եկամուտներ են ստանում առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում՝ աշխատավարձի ձևով և որպես ձեռնարկատիրական ու սեփականության եկամուտ, ինչպես նաև երկրի ֆինանսական համակարգից որպես մուտքեր և սոցիալական տրանսֆերտներ: Նկատի ունենալով, որ նախորդ հարցում տեսականորեն պարզաբանել ենք բնակչության եկամուտների և ծախսերի աղբյուրները, այժմ գործնականորեն անդրադառնանք ՀՀ բնակչության եկամուտներին ու ծախսերին: Բնակչության եկամուտները, ըստ ԱՎԾ-ի տվյալների 2002-2004թթ. հետևյալ պատկերն է ներկայացնում (աղյուսակ 7):

Աղյուսակ 7

ՀՀ բնակչության եկամուտների դինամիկան 2002-2004թթ.

Տարիները	եկամուտներ, մլրդ դրամ	Մեղ տոկոսով	
		նախորդ տարվա նկատմամբ	2001թ. նկատմամբ
2001թ.	775.5	x	100.0
2002թ.	844.5	8.9	108.9
2003թ.	967.0	14.5	124.7
2004թ.	1040.5	7.6	134.1

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, մեր երկրում բնակչության եկամուտները 2001-2004թ.թ. ավելացել են 34.1 %-ով և կազմել 1040.5 մլրդ

դրամ: Ընդ որում, նախորդ տարիների համեմատությամբ տայեկան աճը կազմել է՝ 2002թ.՝ 8.9 %, 2003թ.՝ 14.5 և 2004թ.՝ 7.6 տոկոս: Այդ նույն ժամանակաշրջանում բնակչության աղքատության մակարդակը 55%-ից իջել է 42.9 տոկոսի:

Հարկ է նկատի ունենալ, որ ըստ ԱՎԾ-ի տվյալների 2004թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ երկրի բնակչության թվը կազմել 3213.6 հազ. մարդ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է 3 հազ.մարդով: 2004թ. բնակչության բնական աճը կազմել է 7885 մարդ կամ ավելացել է 24.5 %-ով, այսինքն ծնունդը կազմել է 27576 հազ. և մահացությունը՝ 19691 մարդ: 2004թ. 12495 երիտասարդներ ամուսնացել են, որի աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 13.1 տոկոս: Բնակչության եկամուտների մակարդակով Հայաստանը ԱՊՀ երկրների մեջ գրավում է վեցերորդ տեղը, այն դեպքում, երբ 2004թ. առաջին կիսամյակում ՀՀ-ում այն ավելացել է 17.6%-ով, Բելոռուսում՝ 37.8, ՌԴ-ում՝ 21.7, Տաջիկստանում՝ 32.3 և Ուկրաինայում՝ 18.9 տոկոսով:

ՀՀ բնակչության եկամուտների կառուցվածքում գերակշռում է աշխատավարձը և ձեռնարկատիրական եկամուտները: 2004թ. առաջին կիսամյակում մասնավոր տրանսֆերտները կազմել են 94.4 մլրդ դրամ, որից 82.1 տոկոսը ստացվել է ՌԴ-ից ուղարկած մեր հայրենակիցների միջոցները, որոնք ուղարկվել են իրենց հարազատներին:

Բնակչության եկամուտները ծախսվում են ընթացիկ և երկարաժամկետ ապրանքների ձեռքբերման, ծառայությունների վճարման, հարկերի, կամավոր վճարումների հաշվով և մի մասն էլ խնայում են:

ՀՀ բնակչության ծախսերը 2004թ. (հունվար-նոյեմբեր) կազմել է 1120.2 մլրդ դրամ (2083 մլն \$), որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է 15.5 տոկոսով:

Ծախսերի տարեկան աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 15.5-16.6%, իսկ ըստ տարիների՝ 2002-2003թթ.՝ 15.7-34.9 % և 2004 թվականին՝ ավելի քան 1.5 անգամ: Ընդ որում, եթե 2001-2002թթ. բնակչության եկամուտները գերազանցել են ծախսերին համապատասխանաբար 56.3 և 12.8 մլրդ դրամով, ապա 2003-2004թթ.՝ ընդհակառակը՝ ծախսերն են գերազանցել եկամուտներին համապատասխանաբար 2.8 և 79.7 մլրդ դրամով, որի պատճառով նվազել են խնայողությունները և արտարժույթի գնման ծավալները

ՀՀ բնակչության ծախսերը 2001-2004թթ.(մլրդ դրամ)

Տարիները	Ծախսեր, դրամ	Աճը տոկոսով	
		նախորդ տարվա նկատմամբ	2001թ. նկատմամբ
2001թ.	718.8	X	100.0
2002թ.	831.7	15.7	115.7
2003թ.	969.8	16.6	134.9
2004թ.	1120.2	15.5	155.8

Այժմ ցույց տանք բնակչության ծախսերը և նրանց կառուցվածքը ըստ 2003-2004թթ. տվյալների: Ընդ որում, բնակչության եկամուտների և ծախսերի կառուցվածքը որոշվում է նույն սկզբունքով, ինչպես որոշվում է պետբյուջեի եկամուտների, այդ թվում՝ հարկային եկամուտների և ծախսերի, կառուցվածքը (աղյուսակ 9):

ՀՀ բնակչության ծախսերի կառուցվածքը 2003-2004թթ.

№	Ծախսերի ուղղությունները	Ընդամենը ծախսեր, մլրդ դրամ		Աճը, %	Ծախսերի տեսակարար կշիռը %-ով, ըստ նվժ-ի	
		2003թ.	2004թ.		2003թ.	2004թ.
1	Բնակչության ծախսեր	969.8	1120.2	15.5	100.0	100.0
1.1.	Ապրանքների գնում և ծառայությունների վճարում	739.1	867.0	11.7	76.2	77.4
1.2.	Արտարժույթի գնում	132.9	133.3	2.8	13.7	11.9
1.3.	Կայուն և կամավոր վճարումներ	44.8	54.8	2.3	4.6	4.9
1.4.	Այլ ծախսեր	53.2	65.1	14.9	5.5	5.8

Աղյուսակի տվյալներից երևում է, որ ծախսերի կառուցվածքում գն-րակշիռն են ապրանքների գնման և ծառայությունների մատուցման ծախսերը, որոնք կազմում են 76.2-77.4%, ապա արտարժույթի գնման ծախսերը՝ 11.9-13.7 տոկոս: Ընդ որում, եթե ապրանքների գնման և ծա-

ռայությունների ծախսերը 2004թ. նախորդ տարվա համեմատությամբ ա-ճել են 1.2%-ով, կամ 127.9 մլրդ դրամով, ապա արտարժույթի գնման ծախսերը նվազել են 1.8%-ով կամ 0.4 մլրդ դրամի չափով: Այդ նույն ժա-մանակաշրջանում կայուն և կամավոր վճարումները կազմել են 4.6-4.9%, իսկ այլ ծախսերը՝ 5.5-5.8 տոկոս: 2004թ. նախորդ տարվա նույն ժամա-նակաշրջանի համեմատությամբ կայուն ու կամավոր վճարումներն և այլ ծախսերն աճելացել են 0.3-ական տոկոսով կամ համապատասխանա-բար՝ 10.2 և 11.9 մլրդ դրամի չափով:

Ըստ ՀԲ-ի 1999-2001թթ. տվյալների, Հայաստանը և Գլոբալտանը բնակչության աղքատության մակարդակով աշխարհի երկրների կազ-մում զբաղեցնում են 23-րդ տեղը և ՀՀ բնակչության 49.2 %-ը համարվում է աղքատ: Վրաստանը զբաղեցնում է 24-րդ տեղը: Աղքատության դեմ պայքարի համար ՀՀ կառավարությունը և Համաշխարհային բանկը մշա-կել են համատեղ ծրագիր, որը պետք է կենսագործվի 2004-2015թթ.: 2004թ. ՀՀ պետբյուջեով աղքատության դեմ պայքարի համար նախա-տեսվել է 16.9 մլրդ դրամ: Բարձրացել է ընտանեկան նպաստների չափը և 2005թ. հունվարից կազմում է 12500 դրամ, այդ թվում անչափահաս երե-խաների նպաստը սահմանվել է ամսական 2500 դրամ: Ընտանեկան նպաստ տրամադրում համար գնահատման նվազագույն շենը սահմանվել է 34 միավոր՝ նախկինում 36 միավորի փոխարեն: Դա հնարավորություն է տվել, որ 15 հազար կենսաբուժակառուներ և 8500 անչափահասներ ևս ստանան բնտանեկան նպաստ: Հայաստանում արդեն նկատվում է հա-սարակության սոցիալական ապաբեռացում, որի մասին վկայում է 1996-2003թթ. «Հայաստանի սոցիալական նկարագիրը և աղքատություն-ը» զեկուցագիրը: Ըստ դրա, 2003թ. մեր երկրում աղքատության մակար-դակը կրճատվել է 6.8 %-ով և կազմել 42.9 %, որից ծայրահեղ աղքատնե-րը՝ 7.4%-ով, նախորդ տարվա 13.1 %-ի փոխարեն:

Աղքատության մակարդակի որոշման չափանիշներ է ընդունվել պա-րենային ապահովումը և աղքատության բնորոշ այլ հատկանիշներ: Աղ-քատության կրճատմանը նպաստում է երկրում ձեռներեցության զարգա-ցումը, տնտեսական աճը, պետբյուջեի եկամուտների աճելացումը: 2003-2004թթ. պետբյուջեն փաստացի կատարվել է հավելուրդով, իսկ ապ-րանքների արտահանման ծավալներն՝ առանց ադամանդի հումքի վե-րանշակման, 2004թ. աճելացել է 25 տոկոսով:

Աղքատության նվազեցմանը կնպաստի նաև 2005թ. հունվարի վերջե-րին ՀՀ կառավարության կողմից ընդունված Պարենային ապահովու-թյան ծրագրի կենսագործումը:

**ՎԼՈՒԽ 7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

7.1. Ֆինանսական մարմինները

Որպես մեր երկրի պետական ֆինանսական մարմիններ հանդես են գալիս.

- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ու նրա պետական գանձապետարանը,
- Երկրի Կենտրոնական բանկը,
- Հարկային պետական ծառայությունը,
- Մաքսային պետական կոմիտեն,
- Գնումների պետական գործակալությունը,
- Արտաբյուջետային հիմնադրամը և պետական ապահովագրությունը:

Ընդ որում, ֆինանսական աշխատանքները կազմակերպողն ու գլխավորողը համարվում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, դրամական հոսքերը՝ պետական գանձապետարանը, դրամաշրջանառության կարգավորողը՝ երկրի Կենտրոնական բանկը, հարկեր հավաքագրողը՝ հարկային պետական ծառայությունը, մաքսատուրք գանձողները՝ մաքսային պետական կոմիտեն, ծախսերի նախահաշիվների սահմաններում ապրանքների ձեռքբերումները՝ նախատեսված գներով և չափաքանակներով՝ գնումների պետական գործակալությունը: Պետական ֆինանսների ձևավորման, վերաբաշխման, օգտագործման և վերահսկողության գործում հատուկ դեր ունի ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը: Նա հանդիսանում է գործադիր իշխանություն, այսինքն կառավարության կենտրոնական մարմինը, որն ապահովում է ֆինանսական, բյուջետային, հարկային և մաքսային միասնական քաղաքականություն: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հիմնական խնդիրները հանդիսանում են.

- եռամյա սոցիալ-տնտեսական ծրագրի մշակումն ու հետևողական կենսագործումը,
- ըստ սոցիալ-տնտեսական ծրագրի երկրի տնտեսական քաղաքականության մշակումը,
- ըստ տնտեսական քաղաքականության՝ երկրի ֆինանսական, այդ

թվում՝ հարկային, մաքսային և բյուջետային քաղաքականության մշակումը՝ նպատակ ունենալով իրագործել տնտեսական նպատակները,

- բյուջետային համակարգի կատարելագործումը,
- ֆինանսական պաշարների համակենտրոնացումը սոցիալ-տնտեսական զարգացման գերակայող ուղղություններում,
- ՀՀ պետբյուջեի մասին օրենքի նախագծի մշակումը և Ազգային ժողովի կողմից ընդունված համապատասխան օրենքի կենսագործումը և միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության ապահովումը,
- պետական ֆինանսական վերահսկողության ապահովումը,
- հաշվապահական (ֆինանսական) հաշվառման և աուդիտի մեթոդաբանական ղեկավարման ապահովումը,
- ֆինանսական հաշվետվությունների մեթոդաբանական ղեկավարման ապահովումը:

Նշված հիմնական խնդիրները ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը կատարում է իր գործառույթների և իրավասությունների շրջանակում:

Ընդ որում, նա կատարում է հետևյալ գործառույթները.

- մշակում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղություններն՝ ըստ կանխատեսումների և վերլուծությունների արդյունքների,
- մշակում է տնտեսական, ֆինանսական, այդ թվում՝ հարկային, մաքսային և պետական գնումների միասնական քաղաքականություն,
- մշակում է երկրի ֆինանսական տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը և ներկայացնում Ազգային ժողովի քննարկմանը,
- ապահովում է վերահսկողություն պետբյուջեի մասին օրենքի պահանջները հիմնականում կատարելու գործընթացի վրա,
- իրականացնում է միջոցառումներ երկրի բյուջետային համակարգի կատարելագործման ուղղությամբ,
- մասնակցում է իրավական ակտերի նախագծերի մշակմանը,
- մշակում և ընդունում է նորմատիվային-իրավական ակտեր, որոնք վերաբերում են իր իրավասությանը,
- մշակում է երկրի համախմբված բյուջեի նախագիծը և ներկայացնում Ազգային ժողովի հաստատմանը,
- ապահովում է երկրի պետական բյուջեի կատարումն,
- կազմում է հաշվետվություն երկրի պետբյուջեի և համախմբված բյուջեի կատարման ընթացքի և տարեկան կատարման մասին,
- իրականացնում է վերահսկողություն պետական ունեցվածքի հա-

մար գույքահարկի միջոցների մուտքի հաշվով,

- Երկրի Կենտրոնական բանկի հետ իրականացնում է պետական քաղաքականություն՝ պետական արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ուղղությամբ, հանդես է գալիս որպես պետական արժեթղթեր թողարկող (էմիտենտ), մշակում է նրանց թողարկման և տեղաբաշխման պայմանները, չափերն ու ժամկետները,

- գրանցում է արժեթղթերի թույլարկումն՝ իր իրավասության սահմաններում,

- Երկրի ԿԲ-ի հետ համատեղ անցկացնում է գործառնություններ, որոնք սպասարկում են երկրի ներքին և արտաքին պայտքերը, կառավարում է այն, և իրականացնում անհրաժեշտ միջոցառումներ՝ նրա կառուցվածքի կատարելագործման և սպասարկման ծախսերի օպտիմալացման ուղղությամբ,

- ՀՀ կառավարության հանձնարարությամբ իրականացնում է համագործակցություն միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ՝ անցկացնելով բանակցություններ և խորհրդատվություններ՝ ֆինանսական քաղաքականության և վարկային համաձայնագրերի կնքման հարցերով,

- կազմակերպում է աշխատանք՝ երկրի տնտեսության զարգացման նպատակով ներգրավելու օտարերկրյա ներդրումներ, վարկեր,

- մասնակցում է թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի գծով պետական ֆունդի ձևավորմանը և իրականացնում փորձնական վերահսկողություն,

- գրանցում է երկրի ընդերքը օգտագործողների և այլ շուկաները տնօրինողների գույքերը, սյուվ նախատեսվում է թանկարժեք մետաղների օտարումը,

- սահմանում է հաշվապահական (ֆինանսական) հաշվառման կարգը և հաշվետվությունների ձևերն ու ցանկը, ինչպես նաև բյուջետային կազմակերպությունների ծախսերի նախահաշվի, պետբյուջեի կատարման գծով դրամարկղային գործառնությունների հաշվառման և հաշվետվությունները ձևերը՝ գանձապետարանի հաշվետվությունը, տարածքային տեղական բյուջեների մասին հաշվետվությունները,

- իր իրավասության սահմանում անցկացնում է համալիր վերահսկողություն և ստուգումներ՝ երկրի ներքին տնտեսության և ծախսերի ուղղությամբ,

- վերահսկում է պետական արտաբյուջետային ֆոնդերի և պետական

պահուստների միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործման վիճակը,

- անցկացնում է կազմակերպությունների տնտեսաֆինանսական գործունեության փաստաթղթային վերահսկողություն և ստուգումներ,

- իրականացնում է նաև այլ գործառնություններ, որոնք նախատեսված են օրենսդրությամբ:

Նշված գործառնությունները կատարելու համար ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն ունի նաև որոշակի իրավասություններ:

Այսպես, նա իրավասու է.

- անցկացնել նախագծերի տեխնիկա-տնտեսական հիմնավորումների փորձաքննություն, որոնք ներկայացվում են նախարարությանը՝ միջոցներ հատկացնելու, այսինքն՝ ֆինանսավորելու համար,

- կազմակերպությունների կողմից միջոցների ոչ նպատակային և ոչ արդյունավետ օգտագործման նպատակով փաստեր բացահայտելու դեպքում սահմանափակել և դադարեցնել երկրի պետական բյուջեի հաշվին միջոցների ֆինանսավորումը, ինչպես նաև կազմակերպություններից բռնագանձել ոչ նպատակային միջոցների ծախսված գումարները, որոնց մասին սահմանված ժամկետում չի ներկայացվել համապատասխան հաշվետվություն,

- պետբյուջեի եկամուտների ձևավորման հաշվին կազմակերպել տեղական բյուջեների համալրման պաշտպանություն,

- երկրի պետբյուջեի հաշվին նախատեսված սահմաններում տրամադրելու պետական վարկեր՝ ժամանակավոր ծախսերի ճեղքվածքը մարելու համար,

- տրամադրել հարկերի ժամկետի հետաձգում, վճարման հետաձգում՝ տեղյակ պահելով Հարկային պետական ծառայությանը և վարելով համապատասխան ռեեստրը (նաշվածման ձևը),

- ՀՀ կառավարության հանձնարարությամբ պաշտոնապես հանդես գալ միջազգային ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև ֆինանսական գործառնությունների գծով այլ օտարերկրյա կազմակերպությունների հետ:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը որպես կենտրոնական ֆինանսական մարմին, իր գործառնությունները կատարելու և իրավասությունը սահմանված շրջանակներում իրականացնելու համար ՀՀ կառավարության առջև կրում է նաև պատասխանատվություն.

- երկրի պետբյուջեի նախագիծը ժամանակին չկազմելու, կառավար-

լության հավանությանը և ԱԺ-ի քննարկմանը ժամանակին չներկայացնելու համար,

- բյուջետային ֆինանսավորումը և պետական վարկերի, պետական երաշխիքների տրամադրման կարգը չպահպանելու համար:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը և նրա կառուցվածքային ստորաբաժանումները համարվում են գործադիր իշխանության հիմնական ֆինանսական մարմիններ, որոնք կառավարում, կազմակերպում և վերահսկում են ֆինանսական հոսքերը պետական և տարածքային, այսինքն՝ տեղական ֆինանսների առումով:

Մեր երկրում 1999 թվականից գործում է պետական գանձապետարանը, որն ունի կենտրոնական գանձապետարան, Երևան քաղաքի տարածքային (թիվ 1-3) և մարզային գանձապետական բաժանմունքները: Պետական գանձապետարանը որպես պետական կազմակերպություն, գտնվում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ներքո: Կենտրոնական գանձապետարանը ղեկավարում է գլխավոր գանձապետը, որը համարվում է նաև ֆինանսների փոխնախարարը:

Ըստ էության, երկրի պետական բյուջեի կատարումն իրականացվում է պետական գանձապետարանի և նրա տարածքային, մարզային գանձապետական բաժանմունքների միջոցով:

Պետական գանձապետարանի հիմնական խնդիրները հանդիսանում են՝

- ՀՀ պետբյուջեի կատարման կազմակերպումը, կենսագործումն և վերահսկողության ապահովումը,

- պետբյուջեի եկամուտների և ծախսերի կառավարումը՝ գանձապետարանի հաշիվների միջոցով՝ ելնելով միասնական դրամարկղի սկզբունքներից,

- ֆինանսական հարաբերությունների կարգավորումը՝ պետբյուջեի և պետական արտաբյուջետային հիմնադրամների միջև, այդ հիմնադրամների ֆինանսական առաջադրանքի կատարման ապահովումը և վերահսկողությունը՝ միջոցների մուտքի և ծախսերի նկատմամբ,

- պետական ֆինանսական պաշարների ծավալների կարճաժամկետ կանխատեսումը և նրանց օպերատիվ կառավարումը,

- պետական ֆինանսական վիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքումը, մշակումն ու վերլուծությունը և ֆինանսական գործառնությունների մասին հաշվետվությունների ներկայացում օրենսդիր և գործադիր մարմիններին,

- ՀՀ Կենտրոնական բանկի հետ համատեղ պետական ներքին և ար-

տաքին պարտքերի կառավարում և գանձապետական սպասարկում իրավասու՝ լիազորված բանկի միջոցով,

- մեթոդական և կրահանգչական նյութերի մշակում՝ հաշվային գործառնությունների վարման կարգի վերաբերյալ, ծախսերի բյուջետային դասակարգման նախագծի պատրաստում, պետական գանձարանի գործառնությունների հաշվառում:

Պետական գանձապետարանը նշված խնդիրները կատարելու համար ունի որոշակի գումարային, որոնք հիմնականում հանգում են նետևյալին.

- պետական բյուջեի և արտաբյուջետային հիմնադրամի կատարման կազմակերպում, ելնելով միասնական դրամարկղի սկզբունքներից,

- տարածքային մարմինների (համայնքների) աշխատանքի կազմակերպում՝ ըստ տարածքային գանձապետարանի խնդիրների,

- պետական բյուջեի և արտաբյուջետային հիմնադրամի միջոցների վերաբաշխման ամփոփ ռեեստրի վարում,

- պետբյուջեի եկամուտների վերաբաշխման կազմակերպում՝ ըստ բյուջետային սուբյեկտների,

- պետբյուջեի եկամուտների և ծախսերի, ինչպես նաև այլ կենտրոնացված ֆինանսական պաշարների կառավարում, որոնք գտնվում են ՀՀ կառավարության տրամադրության ներքո,

- միջոցների տնօրինում բանկի համապատասխան հաշիվներում և այդ միջոցներով գործառնությունների իրականացում,

- փոխադարձ հաշվարկների կազմակերպում՝ պետբյուջեի և ՀՀ բյուջետային սուբյեկտների միջև,

- պետական գանձապետարանի գործառնությունների հաշվառման կազմակերպում,

- այլ գործառնություններ, որոնք սահմանված են պետական գանձապետարանի խնդիրներով և գործառնությամբով:

Երկրում ազգային արժույթի թողարկողը, շրջանառության մեջ դնողը և դրամաշրջանառությունը կարգավորողը հանդիսանում է Կենտրոնական բանկը: Նա իր գործունեությունը կարգավորում է «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով, որը հաստատվել է Ազգային ժողովի կողմից 1996թ. հունիսի 30-ին և որում լրացումներ ու փոփոխություններ են կատարվել 2001-2003 թթ.: Նրա միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է և գործում է ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Ընդ որում, Կենտրոնական բանկն իր խնդիրներն իրականացնում է:

նացնելիս անկախ է ՀՀ պետական մարմիններից և համագործակցում է ֆինանսական բոլոր մարմինների հետ: Կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված են նրա հիմնական խնդիրները, որոնք հանդիսանում են¹.

• ՀՀ բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը,

- գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը,
- կարգավորում է դրամաշրջանառությունը երկրում,
- իրականացնում է կառավարության բանկային սպասարկումը,
- հանդիսանում է կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն,

• լիցենզավորում է առևտրային բանկերը, կյուրավորում և վերահսկում է դրանց գործունեությունը,

- որպես վերջին ատյանի վարկատու վարկեր է տրամադրում բանկերին,
- կարգավորում և վերահսկում է վճարահաշվարկային համակարգի գործունեությունը,

• տիրապետում, օգտագործում և տնօրինում է ՀՀ միջազգային պահուստները:

ՀՀ Կենտրոնական բանկը յուրաքանչյուր տարի, պետական բյուջեն հաստատվելուց հետո 10 օրվա ընթացքում Ազգային ժողով է ներկայացնում ֆինանսավարկային քաղաքականության ծրագիրը: Այն իր մեջ ներառում է.

• երկրի տնտեսական լրավիճակի վերլուծությունը և կանխատեսումները, որոնք կապված են սոցիալ-տնտեսական զարգացման և պետբյուջեի ցուցանիշների հետ,

• շրջանառության մեջ գտնվող փողի զանգվածի և վարկային ներդրումների առավելագույն չափը,

• վարկի տոկոսադրույքի և ազգային արժույթի փոխարժեքի մակարդակը.

- դրամավարկային կարգավորման մեթոդները,
- ԿԲ-ի խորհրդի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթները:

Կենտրոնական բանկը ՀՀ կառավարության լիազորված մարմնի հետ համատեղ սահմանված կարգով և պայմաններով կառավարության ֆի-

1. ՀՀ օրենքը Կենտրոնական բանկի մասին, Երևան, 1999:

նանսական գործակալն է՝

• կառավարության լիազորված մարմնի կողմից թողարկված պարտատոմսերի և այլ արժեթղթերի բաշխման, գյուցման և փոխանցման, ինչպես նաև արժեթղթերի հիմնական գումարի, տոկոսների վճարման գծով,

• պետական բյուջեի և ներքին ու արտաքին պետական պարտքի սպասարկման հետ կապված, ինչպես նաև վճարային այլ գործառնությունների իրականացման գծով,

• ԿԲ-ի խնդիրներին չհակասող այլ գործառնությունների գծով:

Կենտրոնական բանկը վարկավորում, ֆինանսավորում է կառավարությանը: Այդ նպատակով բուցում է վարկային գիծ¹, պետական բյուջեի դեֆիցիտը ծածկելու համար: ԿԲ-ի կողմից կառավարությանը տրամադրվող բոլոր վարկերի և երաշխիքների հանրագումարը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա պետբյուջեի տարեկան եկամտի 15 տոկոսը: Կենտրոնական բանկից ստացված յուրաքանչյուր անգամ վարկի դիմաց կառավարությունը կամ պետական կառավարման լիազորված մարմինը ազգային արժույթով պետական պարտատոմսեր է թողարկում և տրամադրում ԿԲ-ին վարկի տրամադրման պայմաններով: Կենտրոնական բանկը այդ պարտատոմսերն իրացնում է *երկրորդային շուկայում*² կառավարության կողմից լիզորված մարմնի հետ փոխհամաձայնեցված կարգով:

Ֆինանսական մյուս մարմինների՝ հարկային պետական ծառայության, մաքսային պետական կոմիտեի, զննմանի պետական գործակալության և արտաբյուջետային հիմնադրամի ու պետական ապահովագրության խնդիրների մասին անդրադարձել ենք ձեռնարկի 3-4-րդ գլուխներում, հետևապես կրկնությունից խուսափելու նպատակով չենք անդրադառնում նրանց խնդիրներին:

7.2. Ֆինանսական աշխատանքների կազմակերպումը

Ֆինանսական մարմինների խնդիրն է ապահովել ֆինանսների ձևավորումը, բաշխումը, վերաբաշխումը, օգտագործումը և վերահսկողությունը: Դրա համար, ըստ բյուջետային մակարդակների կատարվում է աշ-

1. Վազգեն Վարդանյան - «Բանկային գործ, բանկային մենեջմենթ, Փող, վարկեր, բանկեր», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2004, էջ 391-526:
2. Վ.Ա. Վարդանյան – Ֆինանսական մենեջմենթ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 1999, էջ 172-189:

խատանքի բաժանում: Ընդ որում, ֆինանսական աշխատանքը տնտեսագիտական աշխատանք է և այն կատարվում է ըստ հետևյալ մակարդակների.

- պետական ֆինանսների մակարդակով, ըստ որի ֆինանսական աշխատանք է կազմակերպվում պետական ֆինանսական մարմիններում,
- տարածքային, այսինքն տեղական ֆինանսների մակարդակով, ըստ որի ֆինանսական աշխատանք է կազմակերպվում տեղական ինքնակառավարման մարմիններում,

• տնտեսավարող սուբյեկտների ֆինանսներ, ըստ որի ֆինանսական աշխատանք է կազմակերպվում տնտեսավարող սուբյեկտներում:

Այժմ համառոտակի անդրադառնանք ֆինանսական աշխատանքների կազմակերպման էությանը, որը կատարվում է ըստ ֆինանսների կառավարման մակարդակների:

Երկրի մասշտաբով, այսինքն՝ պետական ֆինանսների կազմակերպման մակարդակով, ֆինանսական աշխատանքներ են կազմակերպվում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, երկրի Կենտրոնական բանկի, հարկային պետական ծառայության, մաքսային պետական կոմիտեի, գնումների պետական գործակալության, արտաբյուջետային հիմնադրամի և պետական ապահովագրական մարմինների կողմից:

Ընդ որում, ֆինանսական աշխատանքների կազմակերպումն իր մեջ ընդգրկում է.

- ֆինանսական ծրագրավորումը (պլանավորումը),
- ֆինանսական աշխատանքների բաժանումը ըստ պաշտոնների (պաշտոնային հրահանգներով և հաստիքային ցուցակին համապատասխան),
- ֆինանսական աշխատանքների կատարում,
- ֆինանսական աշխատանքների և ֆինանսների օգտագործման նկատմամբ վերահսկողության ապահովում:

Ֆինանսական ծրագրավորմանը, այսինքն պլանավորմանը անդրադարձել ենք սույն ձեռնարկի 4-րդ գլխի սկզբում: Հետևապես, համառոտակի անդրադառնանք պետական ֆինանսական մարմիններում ֆինանսական աշխատանքների կազմակերպման կարգին: Ֆինանսական մարմինների տնտեսագիտական աշխատանքը տարվում է աշխատանքի գլխավոր կազմակերպման (ԱԳԿ) սկզբունքով:

Շուկայական տնտեսության պայմաններում աշխատանքի կազմակերպման հիմնական սկզբունքն է՝ նվազագույն ծախսումներով առավելագույն արդյունքի հասնելը, ինչպես տնտեսավարող սուբյեկտների մակարդակով՝ արտադրանքի արտադրության կազմակերպում նվազագույն ծախսումներով, որն էլ համապատասխանում է ձեռնարկությունների տն-

տեսագիտության հիմնական խնդրին՝ այն է արտադրել առավելագույն արտադրանք՝ նվազագույն ծախսումներով (ինքնարժեքով), որպեսզի ապահովել շահույթ:

Պետական ֆինանսական մարմինները հարկատուներից հավաքագրում են հարկային, մաքսային մուտքերը, պետական տուրքերը ոչ հարկային մուտքերը, ինչպես նաև պետական կապիտալի գործառնություններից եկամուտները և ձևավորում երկրի պետական բյուջեի, իսկ տեղական ինքնակառավարման մարմինները՝ տեղական բյուջեի եկամուտները:

Ֆինանսական աշխատանքներից է նաև պետական բյուջեի եկամուտների վերաբաշխումը ըստ ծախսերի ուղղությունների: Ֆինանսական մարմինները վերաբաշխում են պետական, ոչ պետական և խառը սեփականության վրա հիմնված առևտրային կազմակերպությունների եկամուտները և նրանց հաշվին որպես հիմնական հարկատուներ, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի ու բնակչության հարկերի հաշվին ձևավորում են պետական ու տեղական բյուջեների եկամուտները, որի հաշվին էլ կանխորոշում են ծախսերի ուղղությունները՝ ըստ ոչ առևտրային, այսինքն՝ բյուջետային կազմակերպությունների: Հետևապես, ֆինանսական մարմինները, համագործակցելով իրար հետ՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության գլխավորությամբ մշակում են պետբյուջեի նախագիծը, որն էլ կառավարության հավանությանը արժանանալուց հետո ներկայացվում է Ազգային ժողովի քննարկմանը և որի արդյունքում ընդունվում է պետական բյուջեի մասին օրենքը: Ընդ որում, նախքան նշված բնույթի ֆինանսական աշխատանքների կատարումը, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, կենտրոնական մյուս ֆինանսական մարմինների և ճյուղային նախարարությունների հետ համատեղ մշակում է երկրի եռամյա սոցիալ-տնտեսական ծրագիր (2004-2007 թթ.): Դրա համար, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը տնտեսական և ֆինանսական ծրագրավորման (պլանավորման) և նրանց կատարման գործընթացում վերլուծության են ենթարկում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վիճակը, բացահայտում տնտեսական օրինաչափությունները, զարգացման միտումները, ազգային արժույթի փոխարժեքի փոփոխությունը, սղաճը, գնաճը և այլ կանխատեսումները: Այդ նպատակով օգտագործվում է ԱՎԾ-ի վերլուծությունները: Այսպիսով, ֆինանսական աշխատանքների կատարման ընթացքում, ֆինանսական մարմինները հավաքագրում են համապատասխան տեղեկատվությունը, դասակարգում և կատարում վերլուծություն՝ լայնորեն օգտագործելով համակարգչային տեխնիկան:

Պետական ֆինանսական մարմինների հիմնական գործունեությունը

համարվում է ֆինանսական աշխատանքների կատարումը, որն ունի տնտեսագիտական աշխատանքի բնույթ: Ֆինանսական մարմինները կատարում են նաև իրենց առջև դրված մյուս խնդիրները՝ կապված ներդրումների, ի այդ թվում վարկերի առումով, կապված պետական սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության, պետական ապահովագրության և միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունների հետ: Հետևապես, պետական ֆինանսական մարմինների ֆինանսական աշխատանքը բազմառեսակ է և բազմաբնույթ: Բացի այդ, պետական ֆինանսական մարմիններն ուսումնասիրում են բնակչության եկամուտներն ու ծախսերը և փոխհարաբերությունները ֆինանսավարկային համակարգի հետ: Համապատասխան տվյալների ուսումնասիրման և ընդհանրացման հիման վրա մշակվում են առաջարկություններ, որոնք ուղղվում են երկրի տնտեսության ճյուղերի զարգացմանը և սոցիալական ոլորտի բարելավմանը:

Հատկապես, խիստ կարևոր և պատասխանատու է պետական ֆինանսական մարմինների կողմից տնտեսագիտական աշխատանքների կազմակերպումը պետական և տեղական բյուջեների գծով: Պետական բյուջեն կազմելու գործընթացում ֆինանսական մարմինները ստուգման են ենթարկում նախարարությունների կողմից ներկայացված ծախսերի նախահաշիվների ճշտությունը, հաստիքային ցուցակները և պաշտոնային դրույքները, ըստ նախահաշիվների յուրաքանչյուր հոդվածի գծով կատարված հաշվարկների ճշտությունը: Պետական բյուջեի ծախսային մասի ճշտության ստուգման ժամանակ ֆինանսական մարմինները վերլուծման են ենթարկում ոչ միայն նյութական արտադրության ճյուղերի նախարարությունների, նրանց բյուջետային կազմակերպությունների, այլև երկրի սոցիալական ոլորտի հաշվով ծախսերի հաշվարկների ճշտությունը՝ ըստ ներկայացված հաշվետվությունների և ծախսերի նորմաների: Այդ ցուցանիշների վերլուծությունը կատարվում է տարեկան հաշվապահական հաշվետվությունների և վերստուգումների նյութիլի հիման վրա: Ֆինանսական աշխատանքների կազմակերպման գործընթացի մյուս տարրը հանդիսանում է ֆինանսավորման կազմակերպումը: Ֆինանսավորել, նշանակում է բյուջեից կատարել հատկացումներ բյուջետային կազմակերպությունների գործունեության համար: Այսպիսով, ֆինանսավորման ժամանակին ու ճիշտ կազմակերպումը և միջոցների նպատակային, խնայողաբար ու արդյունավետ օգտագործումը նպաստում են բյուջետային կազմակերպությունների համաչափ ու կանոնակարգված աշխատանքին: Բյուջեի եկամուտների ապահովմանը վերա-

բերող տնտեսագիտական աշխատանքը հիմնականում բյուջեին կատարվելիք վճարումներն են՝ հարկերի, պետուրքերի, ոչ հարկային եկամուտների ու պետական կապիտալի գործառնություններից ստացվելիք եկամտի ձևով: Հետևապես, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ստուգում է հարկային պետական ծառայության կողմից ըստ հարկատուների հարկային մուտքերի հաշվարկի ճշտությունը: Բյուջեի եկամտային մասի կատարման գործընթացում ֆինանսական մարմինները վերլուծության են ենթարկում արտադրության, աուսքման ու իրացման ծավալները: Նրանք ստուգում են իրացված ապրանքների, մատուցված ծառայությունների հաշվարկային ու վճարային փաստաթղթերի ժամանակին և ճիշտ ձևակերպումն ու փաստաթղթավորումը: Բացի այդ, ֆինանսական մարմինները հաշվապահական հաշվեկշիռների և մյուս ֆինանսական հաշվետվությունների միջոցով տնտեսավարող սուբյեկտներում կատարած ստուգումների միջոցով վերահսկում են բյուջեին կատարվելիք վճարումների լրիվ և ժամանակին կատարումը: Ֆինանսական աշխատանքի արդյունքների հիման վրա համապատասխան մարմինները կազմում են եզրակացություններ, որտեղ վերլուծությամբ բնութագրվում են առևտրային կազմակերպությունների տնտեսաֆինանսական գործունեության հիմնական կողմերը՝ գործառնական եկամուտները և ծախսերը, ֆինանսական արդյունքը՝ շահույթը կամ վնասը) և նրանց ֆինանսական դրությունը: Դրանց հիման վրա կատարում են առաջարկություններ և ներկայացնում գործադիր մարմին (կառավարությանը): Նման բնույթի, սակայն համայնքի առումով, ֆինանսական աշխատանքներ են կատարում նաև գյուղատնտեսության, քաղաքատնտեսության և երևան քաղաքի 12 թաղապետարանների ֆինանսական ծառայությունները: Ֆինանսական աշխատանքներ են կատարում ոչ միայն պետական ֆինանսական և տեղական ինքնակառավարման մարմինները, այլև առևտրային ու ոչ առևտրային կազմակերպությունները: Ընդ որում, առևտրային կազմակերպություններում՝ որպես տնտեսավարող սուբյեկտների, ֆինանսական աշխատանքները կատարում է ֆինանսական ծառայությունը, իսկ նրա բացակայության դեպքում՝ տնտեսագիտական ծառայությունը: Փոքր ձեռնարկություններում՝ առևտրային փոքր կազմակերպություններում ֆինանսական աշխատանքով զբաղվում է հաշվապահը և սեփականատերը՝ որպես ղեկավար: Առևտրային խոշոր կազմակերպություններում ֆինանսական աշխատանքները գլխավորում են ֆինանսների գծով փոխնախագահը (փոխտնօրենը), ֆինանսիստ-մենեջերը: Առևտրային կազմակերպությունները, այսինքն՝ ձեռնարկություն-

ների տնտեսագիտական, այդ թվում՝ ֆինանսական աշխատանքն ընդգրկում է հարցերի լայն շրջանակ, բազմատեսակ է և ներառում է տնտեսաֆինանսական գործունեության բոլոր կողմերը: Ֆինանսական ծառայությունների տնտեսագիտական աշխատանքը կապված է դրամական հոսքերի հետ, քանի որ ֆինանսական ցուցանիշներում են արտահայտվում ձեռնարկության գործունեության հիմնական տնտեսաֆինանսական արդյունքները: Ընդ որում, տնտեսագիտական, այդ թվում ֆինանսական աշխատանքի խնդիրները բազմաբնույթ են: Հիմնական խնդիրներից մեկը աշխատանքի վարձատրության աճի համեմատությամբ աշխատանքի արտադրողականության գերազանցող աճի վերլուծությունն է և նվազագույն ծախսումներով ավելի շատ ու որակով արտադրանքի արտադրության ապահովումը: Ձեռնարկությունների ֆինանսական ծառայությունները զբաղվում են գործունեության ֆինանսական վիճակի, ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների արդյունավետ օգտագործման, համախառն եկամտի ու շահույթի՝ բաշխման, սեփական ֆինանսական պաշարների ձևավորման, օգտագործման վերլուծությամբ և վերահսկողությամբ:

Խոշոր և միջին չափի ձեռնարկությունները (որոնք ունեն 200 և ավելի աշխատողներ), ֆինանսական աշխատանքները կազմակերպելու մպատակով ստեղծում են մասնագիտացված ֆինանսական ծառայություն: Այդ ծառայության գործունեության հիմնական-մպատակն է ապահովել ֆինանսական էլայունություն, տնտեսական մախադրյալներ արտադրության զարգացման համար, խնայողաբար և արդյունավետ օգտագործել աշխատանքային, նյութական ու ֆինանսական պաշարները և ստանալ առավելագույն չափով շահույթ:

Ձեռնարկություններում ֆինանսական աշխատանքների հիմնական բովանդակությունը հանդիսանում է.

- տնտեսական գործունեության համար ֆինանսական պաշարների ապահովումը,
- ֆինանսավարկային համակարգի և այլ տնտեսավարող սուբյեկտների հետ փոխհարաբերությունների կազմակերպումը,
- հիմնական և շրջանառու կապիտալի պահպանումը և արդյունավետ օգտագործումը,
- պետբյուջեի, առևտրային բանկերի, մատակարարների, անձնակազմի և այլ կրեդիտորների պարտքային պարտավորությունների ժամանակին վճարումների ապահովումը:

Այլ կերպ, ֆինանսական աշխատանքների էությունը համարվում է հիմնական և շրջանառու կապիտալի շրջապտույտի, ինչպես նաև ապ-

րանքափողային, ֆինանսական և դրամական հարաբերությունների ապահովումը, որը զուգակցվում է առևտրային գործունեության հետ:

Ձեռնարկության ֆինանսական ծառայությունը շուկայական տնտեսության պայմաններում իրականացնում է հետևյալ աշխատանքները.

- ֆինանսական փաստաթղթերի մշակում, որն անհրաժեշտ է կառավարչական որոշում կայացնելու համար,
- կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների (արտադրական, սպասարկող, օժանդակ) գործունեության կողողինացումը և մպատակաուղղումը ձեռնարկության առջև դրված խնդիրները կատարելու համար,
- ձեռնարկության բիզնես-ծրագրի ֆինանսական պլանի մշակում և պատասխանատվություն՝ նրա որակով կազմման ու կենսագործման համար,
- շուկայական տնտեսության ժամանակ տնտեսավարման համաչափ պայմանների ստեղծում ձեռնարկության գործունեության համար:

Առևտրային կազմակերպության ֆինանսական աշխատանքները կարևոր ուղղությունները հանդիսանում են.

- ֆինանսական ծրագրավորումը (պլանավորումը),
- օպերատիվ (ամենօրյա, ընթացիկ) ֆինանսական աշխատանքը,
- վերահսկիչ, վերստուգիչ վերլուծական աշխատանքը:

Ֆինանսական պլանավորումը զբաղեցնում է կարևոր տեղ՝ տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական գործունեության կազմակերպման գործում: Ֆինանսական պլանավորման ընթացքում ամեն մի ձեռնարկություն բազմակողմանիորեն գնահատում է իր ֆինանսական վիճակը, կանխորոշում է հնարավորությունները՝ ֆինանսական պաշարների ավելացման գործում և բացահայտում նրանց խնայողաբար ու առավել արդյունավետ օգտագործման ուղղությունները:

«Ֆինանսական պլանավորումը տնտեսավարող սուբյեկտներում» հարցին կանդիդատնաճ ձեռնարկի 8-րդ գլխում:

Օպերատիվ աշխատանքների բնագավառում ֆինանսական ծառայությունը լուծում է բազմաթիվ խնդիրներ, որոնցից հիմնականները հանդիսանում են.

- պետբյուջե ժամանակին հարկային վճարումների ապահովումը,
- առևտրային բանկերի կարճաժամկետ, միջինժամկետ և երկարաժամկետ վարկերի տոկոսների վճարումը,
- աշխատավարձի վճարումը անձնակազմին և այլ դրամարկղային գործառնությունների կատարում,
- մատակարարների հաշիվների վճարումը՝ առաքված ապրանքանյութական արժեքների համար (կարճաժամկետ կրեդիտորական

պարտքեր գնումների գծով),

• ըստ բիզնես-ծրագրի ծախսերի ֆինանսավորման ապահովումը, պայմանագրի համաձայն, վարկերի ձևակերպումը ձեռնարկության ժամանակավոր, սեզոնային ծախսեր, վարկային ներդրումներ կատարելու համար,

• ամենօրյա օպերատիվ հաշվառման վայրում, այսինքն՝ արտադրանքի իրացման, իրացումից ստացված հասույթի, ֆինանսական արդյունքի, շահույթի և բիզնես-ծրագրի ֆինանսական պլանի այլ ցուցանիշների հաշվով,

• դրամական միջոցների մուտքի մասին տեղեկությունների հավաքում և տեղեկանքի կազմում՝ ձեռնարկության բիզնես-ծրագրով ֆինանսական պլանի կատարման ընթացքի և ֆինանսական դրության վերաբերյալ:

Ձեռնարկություններում մեծ ուշադրություն պետք է դարձվի վերահսկիչ-վերստուգիչ և վերլուծական աշխատանքներին, քանի որ նրա արդյունավետությամբ է որոշվում ֆինանսական գործունեության արդյունքը: Ձեռնարկության ֆինանսական ծառայությունը մշտական վերահսկողություն է իրականացնում ֆինանսական, դրամարկային, վարկային պլաններին, ինչպես նաև շահույթի պլանի կատարման ընթացքի, սեփական և փոխառու կապիտալի նպատակային ու արդյունավետ օգտագործման նկատմամբ: Այդ գործում ֆինանսական ծառայությանը մեծ օգնություն է ցույց տալիս ձեռնարկության հաշվապահությունը, որի հետ համատեղ ստուգվում է նախահաշիվների ճշտությունը, կապիտալ ներդրումների փոխհատուցման հաշվարկները, վերլուծվում են բոլոր տեսակի և հատկապես ֆինանսական հաշվետվությունները, վերահսկվում է ֆինանսական կարգապահությունը: Ֆինանսական ծառայությունը հանդիսանում է տնտեսական գործունեության կառավարման միասնական մեխանիզմի մի մասը և դրա համար էլ այն սերտորեն կապված է ձեռնարկության մյուս ծառայությունների հետ: Այսպես, ձեռնարկության հաշվապահությունը ֆինանսական ծառայությանն է տրամադրում հաշվառման տվյալներ՝ պեբիտորների ու կրեդիտորների վերաբերյալ, որով բացահայտվում է համապատասխանաբար ձեռնարկության ստանալիք միջոցների չափը և ընթացիկ պարտքերը: Ըստ դրա, համատեղ օպերատիվ վերահսկողություն է իրականացվում, որպեսզի նվազագույնի հասցվի ռեբիտորական և կրեդիտորական պարտքերը: Հաշվապահությունը ֆինանսական ծառայությանը տվյալներ է տրամադրում նաև վճարած հարկերի, հետաձգված հարկերի, տույժ և տուգանքների, պարտադիր սոցիալական վճարների վճարման ընթացքի, ինչպես նաև արտադրանքի մուտքի, ինքնարժեքի հաշվարկի, ծախսերի և տնտեսաֆինանսական գործունեության ֆինանսական արդյունքի վերաբերյալ: Ընդ որում, այդ ուղղու-

թյամբ նախատեսված ցուցանիշները ըստ ձեռնարկության բիզնես-ծրագրի տրամադրում է տնտեսագիտական ծառայությունը: Հետևապես, նախատեսված և փաստացի տվյալներն հիման վրա ֆինանսական ծառայությունը իրականացնում է օպերատիվ, այսինքն ըստ եռամսյակների տնտեսա-ֆինանսական գործունեության վերլուծություն, բացահայտում հնարավորությունները և ձեռնարկում միջոցառումներ՝ աշխատանքային, մյուսական և ֆինանսական պաշարները խնայողաբար ու արդյունավետ օգտագործելու ուղղությամբ: Հատկապես կարևոր է արտադրանքի ինքնարժեքի վերլուծությունը՝ նրա տարրերի կառուցվածքի վերլուծության հիման վրա, ըստ որի որոշվում է արտադրանքի միավորի ինքնարժեքի իջեցման ուղիները: Կարևոր է նաև շահույթի օպերատիվ վերլուծությունը, ըստ որի բացահայտվում է գործառնական եկամուտները ըստ աղբյուրների, գործառնական ծախսերն ըստ ուղղությունների և ֆինանսական արդյունքը: Այդ վերլուծության հիման վրա որոշվում է շահույթի ավելացման և շահութաբերության բարձրացման ուղիները, որին կանդիդատները ձեռնարկի 14-րդ գլխում:

Ձեռնարկության մարքեթինգի բաժինը ֆինանսական ծառայությանն է տրամադրում ապրանքի իրացման նախատեսվող ծավալներն՝ ըստ բիզնես-ծրագրի և եկամուտների ու ծախսերի չափը, ինչպես նաև օպերատիվ ֆինանսական պլանը (տարեկան պլանը՝ ըստ եռամսյակների կտրվածքի) և ծախսերի նախահաշիվը՝ ֆոստիս համակարգով, այսինքն՝ պահանջումները ձևավորման ու իրացման խթանման ծախսերը: Ըստ էության, ձեռնարկության ֆինանսական ծառայությունը զբաղվում է նաև ֆինանսական մենեջմենթով, այսինքն՝ ֆինանսների կառավարմամբ¹:

Ֆինանսների կառավարման գործում հիմնականը համարվում է դրամական հոսքերի կառավարումը և ձեռնարկության ֆինանսական դրության գնահատումը²:

Պարզ պատկերացում կազմելու համար ցույց տանք առևտրային կազմակերպության, այսինքն՝ ձեռնարկության դրամական հոսքերի ուղղվածքը (Ուրվագիծ 12):

Ֆինանսական ծառայությունը, ինչպես նաև ամեն մի ձեռնարկություն ունի կազմակերպական կառուցվածք: Ֆինանսական ծառայության կառուցվածքը կախված է տվյալ ձեռնարկության կազմակերպական- իրավական ձևից, արտադրության չափերից, գործունեության բնույթից և խնդիրներից³:

1. Վ.Ա. Վարդանյան – Ֆինանսական մենեջմենթ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 1999, :
2. Վ.Ա. Վարդանյան – Ֆինանսական մենեջմենթ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 1999, :
3. Նույն տեղում՝ էջ 110-114:

թյուն), ինչպես նաև տեղական մարմիններից ստանալ անհրաժեշտ նյութեր, երբ հաստատվում է բյուջեն,

- բյուջեները կատարող գործադիր մարմիններից ստանալ օպերատիվ տեղեկատվություն՝ նրա կատարման վերաբերյալ,

- բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության հաստատում,

- սեփական վերահսկիչ մարմնի ստեղծում (օրինակ՝ Ազգային ժողովի վերահսկիչ պալատը, համայնքի վերստուգիչ հանձնաժողովը, բաժնետիրական ընկերության վերստուգիչ հանձնաժողովը և այլն),

- բյուջեի կատարման գործադիր մարմնի գործունեության գնահատում,

- Գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆինանսական վերահսկողությունը իրականացնում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության վերահսկողության ծառայությունը, պետական գանձապետարանը, մարզպետարանների ֆինանսական բաժինները, ԱԺ-ի վերահսկիչ պալատը, ՀՀ նախագահի վերահսկողական ծառայությունը:

Պետական գանձապետարանը իրականացնում է նախնական և ընթացիկ վերահսկողություն՝ բյուջետային միջոցներով գործառնությունների նկատմամբ: Բյուջեի կատարման մասին հաշվետվությունը պատրաստում է գործադիր մարմինը՝ բյուջետային միջոցները ստացող կազմակերպությունների հաշվետվությունների հիման վրա: Հնարավոր և նպատակահարմար է ֆինանսական վերահսկողություն սահմանել բյուջետային հատկացումների վրա և ծախսերի նախահաշիվների շրջանակներում բացահայտել միջոցների նպատակային, խնայողաբար և արյունավետ օգտագործման վիճակը ոչ առևտրային, այսինքն՝ բյուջետային կազմակերպություններում: Այն իրականացվում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից: Բյուջեի կատարման մասին հաշվետվությունը պետբյուջեի առումով քննարկվում է՝ Ազգային ժողովի նստաշրջանում և տեղական ֆինանսների առումով՝ տեղական ինքնակառավարման մարմնի՝ համայնքի Ավագանիների նխատու: Քննարկումից հետո հաստատվում է բյուջեի կատարողականը և պետբյուջեի հաշվով ընդունվում է օրենք, իսկ համայնքի առումով՝ որոշում, կցելով անհրաժեշտ ֆինանսական փաստաթղթերը:

Այսպիսով, պետական ֆինանսական վերահսկողությունն ընդգրկում է պետական բյուջեի, արտաբյուջետային հիմնադրամի, պահուստների, պետական ապահովագրության, ինչպես նաև տեղական բյուջեի միջոց-

ների հավաքագրման և ծախսման վիճակը: Պետական ֆինանսական վերահսկողությունը իրականացվում է Ազգային ժողովի վերահսկիչ պալատի, ՀՀ նախագահի վերահսկողության ծառայության, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության վերահսկողության ծառայության, երկրի Կենտրոնական բանկի, հարկային պետական ծառայության, մաքսային պետական կոմիտեի, իսկ նախահաշիվների սահմանում ապրանքների գնման նկատմամբ՝ պետական գնումների գործակալության կողմից:

ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատը հանդիսանում է պետական ֆինանսական վերահսկողության օրգան, որն ընտրվում է ԱԺ-ի կողմից և հաշվետու է նրան:

Ազգային ժողովի վերահսկիչ պալատի հիմնական խնդիրները հանդիսանում են՝

- պետական բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման վերաբերյալ վերահսկողության կազմակերպումը և անցկացումը,

- պետական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման նկատմամբ ֆինանսական վերահսկողությունը,

- ԱԺ-ի կողմից ընդունված օրենքների նախագծերի ֆինանսական փորձաքննությունը,

- պետական նորմատիվային ակտերի ֆինանսական փորձաքննությունը,

- պետական բյուջեի և արտաբյուջետային հիմնադրամի մուտքերի և ծախսերի կատարման նկատմամբ վերահսկողությունը,

- պետական բյուջեի և արտաբյուջետային հիմնադրամի միջոցների ծախսերի օրինականության նկատմամբ վերահսկողությունը,

- ԱԺ-ին պարբերաբար տեղեկատվության տրամադրումը՝ պետական բյուջեի և արտաբյուջետային հիմնադրամի կատարան ընթացքի վերաբերյալ:

Այսպիսով, ԱԺ-ի վերահսկիչ պալատը իրականացնում է վերստուգիչ-վերահսկողական, փորձաքննության և վերլուծական, տեղեկատվական և այլ գործառնություններ, որի նպատակն է նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործել պետական և տեղական ֆինանսները, ինչպես նաև պետական վարկային միջոցները:

Ֆինանսական վերահսկողություն է իրականացվում նաև տնտեսավարող սուբյեկտների ֆինանսների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Այն իրականացվում է տվյալ ձեռնարկության ֆինանսական, տնտեսագիտական ծառայությունների

կողմից, որպես ներքին վերահսկողություն:

Այն ձեռնարկությունները, որոնք ունեն բաժնետիրական ընկերության կարգավիճակ (ՓԲԸ, ԲԲԸ), բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընտրվում է վերստուգիչ հանձնաժողով, որոնք պարբերաբար իրականացնում են ֆինանսական վերահսկողություն: Սակայն այն ձեռնարկությունները, որի սեփականության բաժնեմաս ունի պետությունը, ֆինանսական վերահսկողություն է սահմանում մյուս ճյուղային նախարարության (առևտրի և տնտեսական զարգացման, գյուղատնտեսության, տրանսպորտի և կապի նախարարություններ) վերահսկողական ծառայության կողմից (արտաքին վերահսկողություն):

Ձեռնարկություններում ստուգումներ են անցկացնում մյուս հարկային պետական ծառայությունը, որն ըստ էության, ֆինանսական վերահսկողության մի տարատեսակ է՝ կապված հարկային և սոցիալական վճարումների հետ:

2-րդ բաժին -ՁեռնարկութՅունների Ֆինանսներ Չինւնսներ ԳԼՈՒԽ 8. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ (ՁեռնարկութՅունների) Ֆինւնսներ

8.1. «Ձեռնարկությունների ֆինանսներ» դասընթացի էությունը, խնդիրները և մեթոդները

Ձեռնարկությունների ֆինանսները առաջատար տեղ են զբաղեցնում շուկայական տնտեսության պայմաններում և հատկապես կենտրոնացված ու սեփական ֆինանսական պաշարների ձևավորման գործում: Ձեռնարկությունները համարվում են հիմնական հարկատուներ, քանի որ տնտեսավարող սուբյեկտներ են:

«Ձեռնարկությունների ֆինանսներ» դասընթացը համարվում է «Ֆինանսների ընդհանուր տեսություն», այսինքն «Ֆինանսներ» դասընթացի բաղկացուցիչ մասը: Ընդ որում, եթե «Ֆինանսների ընդհանուր տեսություն» դասընթացն ուսումնասիրում է կենտրոնացված ֆինանսական պաշարների ձևավորման, վերաբաշխման, օգտագործման և վերահսկողության գործառույթները՝ պետական և տեղական ֆինանսների մակարդակով, ապա «Ձեռնարկությունների ֆինանսներ» դասընթացն ուսումնասիրում է ապակենտրոնացված ֆինանսական պաշարների ձևավորման, բաշխման, օգտագործման և վերահսկողության ֆունկցիաները տնտեսավարող սուբյեկտների, այսինքն սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված և առևտրային հաշվարկով աշխատող ձեռնարկությունների մակարդակով:

«Ձեռնարկությունների ֆինանսներ» դասընթացը համարվում է տնտեսագիտական, ճյուղային գիտություն, որն ուսումնասիրում է ձեռնարկությունների ֆինանսները: Այդ գիտության ուսումնասիրման հիմնական խնդիրները հանդիսանում են.

- ձեռնարկությունների ֆինանսների էությունը, ձևավորումը, բաշխումը, օգտագործումն և ֆինանսական աշխատանքների ու վերահսկողության կազմակերպումը,
- ձեռնարկությունների սեփական ֆինանսական պաշարները և նրանց ձևավորման աղբյուրները,
- ձեռնարկությունների ներդրումները հիմնական կապիտալում և նրա հաշվին կատարվող ծախսերը,
- ձեռնարկությունների ներդրումները շրջանառու կապիտալում և նրա

հաշվին կատարվող ծախսերը,

• շուկայական տնտեսության պայմաններում ֆինանսական ծրագրավորումը (պլանավորումը) ձեռնարկություններում,

• ձեռնարկությունների ֆինանսական պլանը՝ եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը,

• ձեռնարկությունների ֆինանսական ներդրումները,

• ձեռնարկությունների եկամուտները և նրանց աղբյուրները,

• ձեռնարկությունների ծախսերը և նրանց տեսակները ըստ բնույթի,

• ձեռնարկությունների ֆինանսական արդյունքը (շահույթը),

• ձեռնարկությունների շահույթի համակարգը և շահույթի բաշխման կարգը,

• անվնասաբերության ապահովումը գործառնական լծակի արդյունավետության միջոցով,

• տնտեսավարող սուբյեկտների ինքնափոխհատուցումը, ինքնաֆինանսավորումը, սեփական ֆինանսական պաշարների ձևավորման աղբյուրները և նրանց օգտագործումը,

• ձեռնարկությունների կապիտալ ներդրումները և ներդրումների տեսակներն ըստ ուղղությունների,

• ձեռնարկությունների սեփական և փոխառու միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ ֆինանսական լեերիդջ:

«Ձեռնարկությունների ֆինանսներ» դասընթացի թեմաները շաղկապված են «Ֆինանսների ընդհանուր տեսություն» և «Ձեռնարկությունների տնտեսագիտություն» դասընթացների հետ: Դրա համար էլ նշված հարցերն ուսումնասիրել ենք մի ամբողջական ձեռնարկով: Ձեռնարկի 8-րդ գլխով ուսումնասիրվում են ձեռնարկությունների ֆինանսները, որը կազմում է երկրի ֆինանսական համակարգի հիմքը:

Այս գլխում բացահայտվում է ձեռնարկությունների ֆինանսների էությունը, նրանց ֆունկցիաները (գործառնությունները) և կազմակերպման սկզբունքները: Ֆինանսների ձևավորման հիմքը հանդիսանում է ֆինանսական մեխանիզմը, հետևապես, դասընթացը ուսումնասիրում է ֆինանսական մեխանիզմը, ֆինանսական մեթոդներ, ֆինանսական գործիքներ հասկացությունները: Դասընթացն ուսումնասիրում է արտադրանքի (ծառայությունների) իրացումից հասույթի ձևավորման մեխանիզմը և նրա օգտագործումը, այսինքն եկամուտներն ըստ աղբյուրների, արտադրական ծախսերի բնույթը, տեսակները, վարչական և այլ ընդհանուր ծախսերի բաշխման կարգը՝ ըստ ուղղակի ծախսերի, որն անհրաժեշտ է արտադրանքի

ինքնարժեքի հաշվարկի կատարման համար: «Ձեռնարկությունների ֆինանսներ» դասընթացն ուսումնասիրում է նաև տնտեսավարող սուբյեկտների շահույթը, նրա տնտեսական էությունը, համակարգը, շահույթի աղբյուրները և բաշխման կարգը՝ ըստ հարկվող և չհարկվող շահույթի, ինչպես նաև նրա օգտագործման ուղղությունները:

Դասընթացն ուսումնասիրում է նաև ձեռնարկությունների հիմնական և շրջանառու կապիտալի ձևավորման հարցերը և ներդրումային քաղաքականությունը: Հետևապես, այն ուսումնասիրում է կապիտալ ներդրումները, նրա տեսակները, ուղղությունները և արդյունավետությունը: Այս դասընթացն ուսումնասիրում է նաև հարկումը և հարկատեսակները ձեռնարկություններում, որին անդրադարձել ենք ձեռնարկի 3-րդ գլխում և կրկնությունից իրուսափելու նպատակով «Ձեռնարկությունների ֆինանսներ» դասընթացով չենք անդրադառնա այդ հարցերին:

Այս դասընթացն ուսումնասիրում է նաև ֆինանսական պլանավորման հարցերը, որին անդրադարձել ենք ձեռնարկի 4-րդ գլխում, հետևապես այս դասընթացով համառոտակի կանդրադառնանք «Ֆինանսական ծրագրավորումը (պլանավորումը) հարցին»՝ պարզաբանելով ձեռնարկությունների ֆինանսական պլանը, որը համարվում է բիզնես-ծրագրի բաժիններից մեկը: Դասընթացն ուսումնասիրում է նաև ձեռնարկությունների սեփական ֆինանսական պաշարների ձևավորման աղբյուրները, փոխառու միջոցները, գործառնական լծակի էությունը և անվնասաբերության ապահովումը գործառնական լծակի ուժի արդյունավետության միջոցով, ինչպես նաև սեփական ու փոխառու կապիտալի օգտագործման արդյունավետությունը, այսինքն ֆինանսական լեերիդջի էությունը:

Ինչպես ամեն մի գիտություն, նույնպես և «Ձեռնարկությունների ֆինանսներ» դասընթացն ունի իր ուսումնասիրման մեթոդները: Որպես տնտեսագիտական գիտություն, նրան բնորոշ է ժամանակակից տնտեսագիտության մեթոդները, ինչպիսիք են վիճակագրական, տնտեսական համեմատական վերլուծության մեթոդները, կառուցվածքային վերլուծությունը, մոնոգրաֆիկ վերլուծության մեթոդը և տնտեսագիտական-մաթեմատիկական մեթոդները: Սակայն «Ձեռնարկությունների ֆինանսներ» դասընթացն ունի նաև ուսումնասիրման իր յուրահատուկ մեթոդները, ինչպիսիք են ֆինանսական վերլուծության մեթոդը, ֆինանսական գործակիցների հաշվարկման մեթոդը, ըստ որի հաշվարկվում է ձեռնարկության ֆինանսական դրության, վճարումակության, իրացվելիության, սեփական և փոխառու կապիտալի արդյունավետության՝ ֆինանսական

լեքիդջի, գործառնական լծակի ուժի և այլ գործակիցներ, ոլտնք հաճեմատվում են սսհմանված նորմատիվների (չափանիշներ) հետ և կատարվում եզրակացություն, ոլի շնորհիվ կանխատեսվում է ձեռնարկության ֆինանսական վիճակի բարելավման ուղիները: Այս դասընթացը լայնորեն օգտագործում է ձեռնարկության ֆինանսական վիճակի վերլուծության մեթոդներ և տալիս նրա գնահատականը:¹ Այսպես, ֆինանսական վիճակի գնահատմամբ, ցույց է տրվում ձեռնարկությունների ֆինանսական վիճակի ընդհանուր գնահատականը, վճարունակությունը և ֆինանսական կայունությունը, վարկունակությունը և լրացվելիությունը, շրջանառու ակտիվների օգտագործման ալյունավետությունը, ֆինանսական արյունքների վերլուծությունը, ձեռնարկությունների հնարավոր ֆինանսական սնանկացման գնահատականը:²

8.2. Ֆինանսական ծրագրավորումը (պլանավորումը) ձեռնարկություններում շուկայական տնտեսության պայմաններում

Ձեռնարկությունների ֆինանսների արդյունավետ կառավարումը հնարավոր է ֆինանսական բոլոր պաշարների ծրագրավորման, այսինքն պլանավորման միջոցով: Ընդհանուր ֆինանսների առումով ֆինանսական պլանավորման հարցերին անդրադարձել են ձեռնարկի 4-րդ գլխի սկզբում: Սակայն, առավել համառոտակի անդրադառնալով տնտեսավարող սուբյեկտների մակարդակով ֆինանսական պլանավորման հարցերին, նկատի ունենալով, որ երկայնաժամկետ, ընթացիկ և օպերատիվ պլանավորման էությանն արդեն անդրադարձել ենք: Ֆինանսական պլանավորումը ներկա պայմաններում ձեռնարկություններում ունի մի շարք թելություններ, որոնք հանդիսանում են.

- պլանավորման գործընթացը ավանդույթի համաձայն սկսվում է բիզնես-ծրագրի արտադրության և ոչ թե իրացման պլանից,
- պլանավորումը դեռևս աշխատատար գործընթաց է, քանի որ տնտեսագիտական և ֆինանսական բաժինը նախապատրաստում են մի շարք փաստաթղթեր, որոնք լրիվ չեն օգտագործվում համապատասխան ծա-

ռայության կողմից՝ ֆինանսական վերլուծություն կատարելու և հիմնավորված ֆինանսական պլան կազմելու համար,

- ֆինանսական պլանավորման գործընթացը ձգձգվում է ժամանակի առումով, որը հնարավորություն չի տալիս նախատեսված ցուցանիշներն օգտագործելու կառավարչական օպերատիվ որոշում կայացնելու համար,
- պլանավորման ժամանակ գերակշռում է գնագոյացման ծախսային մեխանիզմը, այսինքն՝ ձեռնարկության մեծածախ գինը ձևավորվում է առանց հաշվի առնելու շուկայի իրավիճակը և պահանջարկի ու առաջարկի հարաբերակցությունը,
- ձեռնարկություններում, որպես կանոն, բացակայում է ծախսերի բաժանումը հաստատուն և փոփոխուն ծախսերի, սահմանային ծախսերի, չի օգտագործվում «մարժինալ շահույթ», «գործառնական լծակ», «ֆինանսական լեքիդջ» հասկացությունները և չի կիրառվում «Իրացման ծավալի որոշումն ըստ անվասաբերության», այսինքն՝ «Անվասաբերության ապահովումը գործառնական լծակի արդյունավետության միջոցով» ֆինանսական պլանավորման կարգը, որը բնորոշ է շուկայական տնտեսությանը:

Այսպիսով, Հայաստանի տնտեսավարող սուբյեկտներում և մասնավորապես, ձեռնարկություններում ֆինանսական պլանավորումը դեռևս կատարվում է նախկին հասարակարգին բնորոշ մեթոդներով:

- պլանավորման գործող համակարգը հնարավորություն չի տալիս անցկացնել ձեռնարկության ֆինանսական վիճակի վերլուծություն և տալ ֆինանսական դրության հիմնավորված գնահատական:

Դրա հետ մեկտեղ, գործում են մի շարք պայմաններ, որոնք սահմանափակում են նրանց օգտագործումը ձեռնարկություններում: Այդ գործոններից հիմնականները հանդիսանում են.

- Հայաստանի և ԱՊՀ երկրների շուկաներում անորոշության բարձր աստիճանը, որոնք կապված են տնտեսական բարեփոխումների և հասարակական կյանքի փոփոխությունների հետ: Այդ անորոշությունները դժվարացնում են տնտեսագիտորեն հիմնավորված ձևով իրականացնելու ֆինանսական պլանավորումը,
- լուրջ ֆինանսական ծրագրերի իրականացման համար ձեռնարկությունների ֆինանսական մեծ պաշարներով ապահովվածության ցածր մակարդակը, այսինքն առաջատար ձեռնարկությունների ցածր տեսակարար կշիռը: Այսպես, Հայաստանում 51240 իրավաբանական անձ տնտեսավարող սուբյեկտներից մի քանի տասնյակ ձեռնարկություններ են համարվում առաջատար, որոնք տնօրինում են, համեմատաբար, մեծ չա-

1. Վ. Ա. Վարդանյան- ֆինանսական մեթոդներ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 1999, էջ 413-414, 415-41, 431-436:

2. Աշոտ Բայադյան – Ձեռնարկությունների ֆինանսական դրության գնահատումը Երևան, 2002:

փուլ ֆինանսական պաշարների,

• հայրենական մեծ և փոքր բիզնեսի համար արդյունավետ նորմատիվա-իրավական որոշակի հիմքի բացակայությունը և անկատարելությունը:

Այսպիսով, ֆինանսական արդյունավետ պլանավորման համար մեծ հնարավորություններ ունեն խոշոր ձեռնարկությունները և մասնավորապես, բաժնետիրական ընկերությունները: Նրանք տնօրինում են բավարար չափի ֆինանսական միջոցների՝ արհեստավարժ մասնագետներ ներգրավելու համար, որոնք ապահովեն լայնամասշտաբ բիզնես-ծրագրի աշխատանքների ֆինանսների բնագավառում: Ոչ մեծ ձեռնարկություններում (աշխատողների թիվը՝ մինչև 200 մարդ), որպես կանոն, դրա համար չկան անհրաժեշտ դրամական միջոցներ, թեև ֆինանսական պլանավորման անհրաժեշտություն ունեն: Փոքր ձեռնարկությունները հաճախ զգում են փոխառու միջոցների կարիք, որի ներգրավման պայմանները անհասանելի են նրանց համար: Մինչդեռ, ֆինանսական պլանավորումը տնտեսավարող սուբյեկտների համար ունի վճռական նշանակություն:

Այն կայանում է հետևյալում.

• մշակված ռազմավարական նպատակները վերափոխում է ֆինանսական ցուցանիշների կոնկրետ ձևերի,

• ապահովում է ֆինանսական պաշարներ, որոնց ձևավորումը դրված է բիզնես-ծրագրում,

• հնարավորություն է տալիս կենսագործել ձեռնարկության բիզնես-ծրագիրը՝ շուկայական տնտեսության մրցակցային պայքարի պայմաններում,

• ծառայում է որպես գործիք՝ տեղական և օտարերկրյա ներդրողների կողմից ստանալու ֆինանսական պաշտպանություն:

Ֆինանսական պլանավորումը կապված է մի կողմից ֆինանսների բնագավառում կանխելու սխալները, մյուս կողմից կրճատելու չօգտագործված հնարավորությունները: Տնտեսավարման պրակտիկան շուկայական տնտեսության պայմաններում նպաստել է ֆինանսական պլանավորման որոշակի մոտեցումների մշակմանը, որոնք կապված են այդ բնագավառում ձեռնարկությունների խնդիրների հետ:

Դրանք են.

• տնտեսական, ֆինանսական և ներդրումային գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական պաշարներով ապահովվածությունը,

• կապիտալի արդյունավետ ներդրման ուղիների որոշումը և նրանց խնայողաբար ու արդյունավետ օգտագործման գնահատականը,

• ֆինանսական պաշարների խնայողաբար, արդյունավետ օգտագործման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման, արտադրանքի որակի բարելավման և իրացման ծավալի մեծացման միջոցով շահույթի ավելացման ներտնտեսային ուղիների բացահայտումը,

• արդյունավետ ֆինանսական հարաբերությունների սահմանումը պետական և տեղական բյուջեների, առևտրային բանկերի և մյուս կրեդիտորների հետ,

• բաժնետերերի և մյուս ներդրողների շահերի պաշտպանումը,

• ձեռնարկության ֆինանսական դրության, վճարունակության, վարկունակության և իրացվելիության նկատմամբ վերահսկողությունը:

Ֆինանսական պլանը տնտեսավարող սուբյեկտի բիզնես-ծրագրով ապահովում է ֆինանսական պաշարներ, հետևապես, այն մեծ ազդեցություն ունի ձեռնարկության տնտեսական գործունեության վրա: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

առաջին, ֆինանսական պլանով կատարվում է նախատեսված ծախսերի համաչափում, որն անհրաժեշտ է տնտեսաֆինանսական գործունեության համար՝ նյութական և ֆինանսական սրաշարների հավասարակշռվածության ապահովման հիման վրա,

երկրորդ, ֆինանսական պլանի հողվածները (եկամուտների և ծախսերի տեսակները) կապված են ձեռնարկության տնտեսական բոլոր ցուցանիշների և բիզնես-ծրագրի մյուս բաժինների հետ:¹

Ֆինանսական պլանավորման ժամանակ կիրառվում է հետևյալ մեթոդները.

• տնտեսական վերլուծության մեթոդ,

• նորմատիվային,

• հաշվեկշռային,

• դրամական հոսքերի,

• բազմատարբերակության,

• տնտեսագիտական-մաթեմատիկական մեթոդներ:

Այդ մեթոդների էությանը անդրադարձել ենք ընդհանուր ֆինանսական պլանավորման հարցերի պարզաբանման ժամանակ՝ ձեռնարկի 4-րդ գլխի սկզբում և կրկնությունից խուսափելու նպատակով չենք անդրադառնում դրանց էության պարզաբանմանը:

Ֆինանսական պլանավորումը կատարվում է մի քանի փուլերով.

Առաջին փուլում վերլուծվում է ձեռնարկության ֆինանսական վիճա-

1.Վ.Ա. Վարդանյան- ֆինանսական մեթոդներ, ռուսումնական ձեռնարկ, Երևան, 1999, էջ 277-290:

կը՝ նախորդ ժամանակաշրջանի հաշվով: Դրա համար օգտագործվում է ձեռնարկության հիմնական ֆինանսական փաստաթուղթը՝ հաշվապահական հաշվեկշիռը, հաշվետվություն՝ շահույթի և վնասի, դրամական հոսքերի շարժի մասին և մյուս ֆինանսական հաշվետվությունները: Ֆինանսական պլանավորման համար ձեռնարկության ֆինանսական հաշվետվություններն ունեն մեծ նշանակություն, քանի որ նրանք բովանդակում են տվյալների ֆինանսական դրության վերլուծության և գործունեության ֆինանսական ցուցանիշների հաշվարկման համար: Դրանք նաև հիմք են ծառայում կանխատեսումների համար: Ընդ որում, ֆինանսական վերլուծությունը դյուրին է կատարվում, քանի որ բոլոր կարգի ձեռնարկությունների համար ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 26-ի թիվ 740 «Հաշվապահական հաշվառման բարեփոխումների մասին» որոշմամբ սահմանվել է մաթ. ֆինանսական հիմք հաշվետվությունների ցանկը և միասնական ձևերը: Ձեռնարկության հաշվապահական հաշվեկշիռը հանդիսանալով հիմնական ֆինանսական փաստաթուղթ, համարվում է ֆինանսական պլանավորման ելակետային հենքը:

Ֆինանսական պլանավորման երկրորդ փուլը նախատեսում է հիմնական կանխատեսումների փաստաթղթերի կազմումը, ինչպիսիք են՝ հաշվեկշիռի, շահույթի և վնասի, դրամական հոսքերի կանխատեսումը, որոնք վերաբերում են երկարաժամկետ (հեռանկարային) ֆինանսական պլանավորմանը:

Ֆինանսական պլանավորման երրորդ փուլում կատարվում է կանխատեսված ֆինանսական ցուցանիշների ճշգրտում՝ ընթացիկ ֆինանսական պլան կազմելու միջոցով:

Չորրորդ փուլում իրականացվում է օպերատիվ ֆինանսական պլանավորում: Ֆինանսական պլանավորման գործընթացն ավարտվում է նրա գործնական կիրառմամբ, որի ընթացքում վերահսկողություն է իրականացվում նրա կատարման վրա:

8.3. Ձեռնարկությունների ֆինանսական պլանը՝ եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը

Ձեռնարկությունների ֆինանսական պլանը համարվում է քիզենս-ծրագրի բաժիններից մեկը: Ըստ էության, ձեռնարկությունների ֆինանսական պլանը համարվում է եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Ձեռնարկության քիզենս-ծրագրի ֆինանսական պլանը հանդիսանում է նախագծի ֆինանսական գնահատականը:

Ձեռնարկության ֆինանսական պլանը հստակապես է ընթացիկ ֆինանսական պլանավորման աղյուսակ: Ձեռնարկության տնտեսական գործունեության ընթացիկ ֆինանսական պլանավորումը ընդգրկում է դրամական միջոցների շարժի պլանը՝ եկամուտները ըստ աղբյուրների և ծախսերն ըստ ուղղությունների: Դրա ուղղման վրա հաշվարկվում է ֆինանսական աղյուսակը, այսինքն՝ կազմվում է «Շահույթի և վնասի մասին» հաշվարկը: Այսպիսով, ձեռնարկության ֆինանսական պլանը որպես տնտեսավարող սուբյեկտի բյուջե, իրենից ներկայացնում է երկկողմանի աղյուսակ, որի ծախս կողմում ցույց են տրվում եկամուտներն ըստ աղբյուրների, իսկ աջ կողմում՝ ծախսերն ըստ ուղղությունների: Համախառն եկամտի (որպես բոլոր տեսակի եկամուտների հանրագումար) և ընթացիկ ծախսերի տարբերությունը կազմում է շահույթը, որը ցույց է տրվում եկամուտների և ծախսերի հաշվեկշռի աջ մասում: Եվ հակառակը, ընթացիկ ծախսերի և համախառն եկամտի տարբերությունը կազմում է վնասը (համարվում է բյուջեի դեֆիցիտը) և ցույց է տրվում հաշվեկշռի ծախս մասում: Սակայն, քանի որ շուկայական տնտեսության պայմաններում վնասով ապրանքարտադրողները լինել չեն կարող, ուստի տնտեսավարող բոլոր սուբյեկտները՝ անկախ սեփականության ձևից և կարգավիճակից, ֆինանսական պլանավորմամբ նախատեսում են շահույթ: Դրա համար նրանք աշխատում են կոմերցիոն հաշվարկով, որին կանդիդատներն ձեռնարկի 14-րդ գլխում:

Այժմ ցույց տալիս ձեռնարկության եկամուտների աղբյուրները: Որպես եկամտի աղբյուրներ հանդիսանում են.

• **գործառնական գործունեությունից եկամուտներ** .- Գործառնական է համարվում ձեռնարկության հիմնական գործունեությունը, որի համար ստացել է լիցենզիա, այսինքն՝ գործունեության թույլտվություն: Գործառնական գործունեության եկամուտները ստացվում են. արտադրանքի, ապրանքների, ծառայությունների իրացումից (որպես հասույթ),

• **գործառնական այլ եկամուտներ** .- որոնք ստացվում են ընթացիկ ակտիվների վաճառքից, գործառնական վարձակալությունից- տույժերից և տուգանքներից , որոյս գրված դեբիտորական պարտքերի մարումից, կրեդիտորական պարտքերի որոյս գրումից, նյութական վնասի փոխհատուցումից, պաշարների արժեքի փոփոխությունից, ընթացիկ ֆինանսական ներդրումների վերազնախառնից և գործառնական այլ եկամուտներից:

• **Ոչ գործառնական եկամուտներ** .- Դրանք այն եկամուտներն են, որոնք ստացվում են ոչ հիմնական գործունեությունից: Որպես ոչ գործառնական եկամուտներ համարվում են ֆինանսական ընթացիկ ներդրումներ-

րի (արժեքըների) վաճառքից եկամուտները, փոխարժեքային տարբերություններից եկամուտները, շահութաժինները, ֆինանսական վարձակալությունից եկամուտները,

• **արդատավոր եկամուտներ** .- Արտասովոր են կոչվում այն եկամուտները, որոնք ստացվում են արտասովոր գործարքներից, չնախատեսված գործունեությունից:

• **Նախարող արտիների եկամուտներ** .- Դրանք այն եկամուտներն են, որոնք ստացվել են նախարող տարվա գործունեությունից, սակայն բացակայել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական հաշվետվորմանը համարվող տեսչության կողմից:

Նշված բոլոր տեսակի եկամուտների համարումարը համարվում է համախառն եկամուտը, այսինքն ֆինանսական հասկացությամբ՝ հասույթը:

Սակայն տնտեսագիտական հասկացությամբ համախառն եկամուտն իրենից ներկայացնում է համախառն արտադրանքի արժեքի (հաշվարկված իրացման գներով), և նյութական ծախսերի տարբերությունը, որին կանդիդատները «Ձեռնարկությունների տնտեսագիտություն» դասընթացով:

Այժմ ցույց տանք ձեռնարկությունների ծախսերի ուղղությունները: Որպես ձեռնարկության ընթացիկ ծախսեր համարվում են՝

• **Գործառնական գործունեության ծախսեր** .- Դրանք այն ծախսերն են, որոնք կապված են հիմնական գործունեության հետ: Որպես գործառնական գործունեության ծախսեր համարվում են՝ իրացված արտադրանքի, ապրանքների, ծառայությունների ինքնարժեքը, իրացման (առևտրային) ծախսերը՝ ըստ ուղղակի և անուղղակի ծախսերի (վարչական և այլ ընդհանուր ծախսեր),

• **Գործառնական այլ ծախսեր** .- Որպես գործառնական այլ ծախսեր համարվում են ընթացիկ ակտիվների (պաշարների) վաճառքի հետ կապված ծախսերը, գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցների մաշվածությունը, տույժերը և տուգանքները՝ որպես ծախսեր, նյութական արժեքների բնական պակասորդները և կորուստները, խոտանված արտադրանքի հետ կապված ծախսերը, և այլ ծախսերը,

• **Ոչ գործառնական ծախսեր** .- Այն ծախսերն են, որոնք կապված չեն հիմնական գործունեության հետ: Որպես ոչ գործառնական ծախսեր համարվում են՝ արժեքըների և պաշարների վաճառքի ծախսերը, արժեքային տարբերություններից ծախսերը, վարկերի հետ կապված ծախսերը, ֆինանսական վարձակալության և այլ ոչ գործառնական ծախսերը,

• **Արդատավոր ծախսեր** .- Արտասովոր են կոչվում այն ծախսերը, որոնք կատարվում են արտասովոր գործարքների, չնախատեսված գործունեության հաշվով:

• **Նախարող արտիների ծախսեր** .- Դրանք այն ծախսերն են, որոնք կատարվել են նախարող տարվա ընթացքում, սակայն բացահայտվել են տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց հետո:

• **Շահութահարկի գծով ծախս** .- Դրանք այն ծախսերն են, որոնք կատարվում են շահութահարկի գծով: Որպես շահութահարկի գծով ծախս արտացոլվում է ընթացիկ հարկի մասով, շահութահարկի գծով ծախսի և ընթացիկ հարկի դրական տարբերության մասով, երբ մարվում է հետաձգված հարկը և երբ առաջանում է հետաձգված հարկային պարտավորություն:

Ըստ ձեռնարկության ֆինանսական պլանի՝ համախառն եկամտի և ընթացիկ ծախսերի տարբերությամբ նախատեսվում է շահույթի չափը: Ձեռնարկության ֆինանսական պլանը կազմվում է բիզնես-պլանի մարքեթինգի ծրագրի, արտադրանքի իրացման պլանի հիման վրա՝ հաշվի առնելով ապրանքների (ծառայությունների) իրացման շուկայական գները և նրանց միավորի հաշվով նախատեսված ինքնարժեքը:

Ձեռնարկության ֆինանսական պլանը կազմվում է հետևյալ կազմողականությամբ.

• որոշվում է սեփական եկամուտները, որոնք նախատեսվում է գործառնական և ոչ գործառնական գործունեությունից,

Ըստ ապրանքի տեսակների իրացումից հասույթը որոշելու համար իրացման ծավալը բազմապատկվում է նրանց վաճառքի գնով: Ըստ ապրանքի տեսակների որոշվում է իրացման ինքնարժեքը, որի համար իրացման ծավալը բազմապատկվում է նրանց միավորի բնդիանուր ինքնարժեքով և հաշվարկվում իրացման ծախսերը.

• հաշվարկվում է ծառայություններից ստացվելիք եկամուտները և նրանց ինքնարժեքը,

• հաշվարկվում է ֆինանսական ընթացիկ ներդրումներից ստացվելիք եկամուտները և նրանց ընթացիկ ծախսերը,

• հաշվարկվում է ոչ գործառնական եկամուտները և ծախսերը,

• լրացվում է ձեռնարկության ամփոփ ֆինանսական պլանը:

Ֆինանսական պլանի առանձին աղյուսակների կազմում ժամանակ պետք է ապահովել համամասնական փոխադարձ կապ նախատեսվող եկամուտների և ծախսերի գծով: Հաշվարկվում է համախառն շահույթը՝ որպես համախառն եկամտի և համախառն ընթացիկ ծախսերի տարբերություն:

Ձեռնարկության ֆինանսական պլանը կազմվում է տարվա հաշվով և ըստ եռամսյակների կտրվածքի:

Ֆինանսական պլանը, այսինքն ձեռնարկության եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը ցույց տանք «Աթենք» մասնաբերքի կոմբինատ

**«Աբենք» մսամթերքի կոմբինատ ՄՊԸ-ի ֆինանսական պլանը
(եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը)**

No	Եկամուտներն ըստ աղբյուրների	Գումարը հազ.դրամ	N o	Ծախսերն ուղղությունների ըստ	Գումարը հազ.դրամ
	1. Գործառնական գործունեության եկամուտներ	63169.0		1. Գործառնական գործունեության ծախսեր	78217.0
1.	Ապրանքի իրացումից հասույթ	62169.0	1.	Հումք և նյութեր	44339.0
1.1.	Երած երշիկեղենի իրացում (բժշկական, սիրողական և այլն 36000կգ X 1015-80)	36568.0	2.	Աշխատանքի վարձատրության ծախսեր	5681.0
1.2.	Ապխտած երշիկեղենի իրացում (ստոնական և այլն 18000կգ X 1004-00)	18072.0	3.	Պարտադիր սոցիալական վճարներ	1822.0
1.3.	մսամթերքի իրացում (6000կգx1421-50)	8529.0	4.	Հիմնական միջոցների մաշվածություն	3136.0
2.	Կործանական այլ եկամուտներ	38333.0	5.	Փոխադրական ծախսեր	2000.0
3.	Ոչ գործառնական եկամուտներ	13896.0	6.	Հիմնական միջոցների վարձակալական վճար	-
4.	Արտատվոր եկամուտներ	3559.0	7.	Ապահովագրական ծախսեր	-
5.	Լախորդ տարիների եկամուտներ	-	8	Այլ ուղղակի ծախսեր	-
			9.	Մարքեթինգային իրացման ծախսեր (վարչական և այլ ընդհանուր ծախսեր)	21189.0
			II	Գործառնականայլ ծախսեր	19188.0
			III	Ոչ գործառնական ծախսեր	13896.0
			IV	Արտատվոր ծախսեր	-
			V	Լախորդ տարիների ծախսեր	-
			VI	Շահութահարկի գծով ծախսեր	-
	Ընդամենը եկամուտներ	118957.0		Ընդամենը ծախսեր	111301.0
				Համախառն շահույթ	7656.0
				Ամբողջը	118957.0

Ինչպես հաշվապահական հաշվեկշիռը, նույնպես և ֆինանսական պլանը, որպես եկամուտների և ծախսերի հաշվեկշիռ, կարելի է կազմել հորիզոնական (ինչպես բերված պլանը) և ուղղահայաց կարգով: Վերջինիս դեպքում միակողմանի կարգով, նախ ցույց են տրվում եկամուտները ըստ աղբյուրների, ապա ծախսերն՝ ըստ ուղղությունների, որոնք էլ կազմում են հաշվեկշիռ (ֆրանս.- balanse կշեռք):

Ինչպես երևում է «Աբենք» մսամթերքի կոմբինատ՝ ՄՊԸ-ի տարեկան ֆինանսական պլանից, եկամուտները կազմել են 118 մլն 957 հազար դրամ, ծախսերը՝ 111 մլն 301 հազար դրամ և համախառն շահույթը՝ 7 մլն 656 հազար դրամ: Ընդ որում, երշիկեղենի արտադրության համար պահանջվող հումք և նյութերի տարեկան պահանջի որոշումը կարգը կպարզաբանենք «Ձեռնարկությունների տնտեսագիտություն» դասընթացի 11-րդ գլխի 6-րդ հայրցով:

8.4. Ձեռնարկությունների ներդրումները հիմնական կապիտալում և նրա հաշվին կատարվող ծախսերը

Ձեռնարկությունների դրամական ֆոնդերի ձևավորումը սկսվում է նրա հիմնադրման պահից և համարվում է նրա գործունեության հիմքը: Ձեռնարկությունն իր կանոնադրությանը համապատասխան ստեղծում է **կանոնադիր կապիտալ:**

Կանոնադիր է կոչվում, քանի որ սահմանվում է կանոնադրությամբ և նրա չափը հաշվապահական (ֆինանսական) հաշվառման մեջ չի փոխվում այնքան ժամանակ, քանի դեռ չի ձևավորվել **լրացուցիչ կապիտալ** և նրա հաշվին չի ավելացել կանոնադիր կապիտալը: Բաժնետիրական ընկերություններում այն կոչվում է բաժնետիրական կապիտալ, իսկ ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտով (ՀՀՀՀՄ) **բաժնեհավաք կապիտալ:**

Կանոնադիր կապիտալի ձևավորման և ավելացման համար քուլայվում են սեփական արժեթղթեր՝ բաժնետոմսեր (լատ. actio): Բաժնետիրական ընկերություններն իրենց բաժնետերերի սուղև կրում են գույքային պատասխանատվություն և բաժնետոմսերի արժեքը համարվում է երկարաժամկետ պարտավորություն:

Կանոնադիր կապիտալը հանդիսանում պաշարների ձևավորման հիմնական աղբյուր և ապահովում է պարտավորությունների կատարումը:

Կանոնադիր կապիտալի նվազագույն չափը սահմանված է օրենսդրությամբ՝ կախված սեփականության ձևից և այն հանդիսանում է ձեռ-

նարկության ունեցվածքի (գույքի) նվազագույն չափը:¹

Կանոնադիր կապիտալը հանդիսանում է ձեռնարկության սեփական միջոցների սկզբնական աղբյուրը: Այն հանդիսանում է հիմնական և շրջանառու կապիտալի ձևավորման աղբյուրը, որոնք իրենց հերթին ուղղվում են ոչ ընթացիկ մաշվող նյութական ակտիվների և հանձնիս՝ հիմնական արտադրական ֆունդերի, ոչ նյութական ակտիվների և ընթացիկ ակտիվների, այսինքն՝ պաշարների (հունք՝ և նյութերի) ձեռքբերմանը: Ընդ որում, ձեռնարկության համընդհանուր ակտիվների (ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների հանրագումարը) և նրա պարտավորությունների (երկարաժամկետ և ընթացիկ պարտքեր) տարբերությունը կազմում է **սեփական կապիտալը**: Ձեռնարկության սեփական կապիտալն իր հերթին բաժանվում է **հասարակուն և փոփոխական** կապիտալի: **Հասարակուն** կապիտալը համարվում է կանոնադիր կապիտալը: **Փոփոխուն** է կոչվում , քանի որ նրա չափը փոփոխվում է՝ կախված ձեռնարկության տնտեսաֆինանսական գործունեության արդյունքներից:

Փոփոխուն կապիտալի մեջ ներառվում են.

- լրացուցիչ կապիտալը,
- պահուստային կապիտալը,
- չբաշխված շահույթը (նախորդ և հաշվետու տարվա),
- հատուկ ֆոնդերը (հիմնադրամները):

Այժմ համատեսակի բնութագրենք փոփոխուն կապիտալի նշված բաղադրամասերի էությունը: **Լրացուցիչ կապիտալը** այն կապիտալն է, որը ձևավորվում է.

- ձեռնարկության ունեցվածքի (գույքի) արժեքի աճի հաշվին, երբ կատարվում է հիմնական միջոցների վերագնահատում,
- էմիսիոն (Emissione -թողարկում) եկամտի, այսինքն բաժնետոմսի վաճառքի և անվանական արժեքների տարբերության հաշվին,
- արտադրական նպատակով անհատույց ստացված դրամական և նյութական արժեքների հաշվին,
- շահույթի բաշխման հաշվին:

Ձեռնարկության տնտեսաֆինանսական գործունեության վերջնական ֆինանսական արդյունքը համարվում է շահույթը: Համախառն շահույթից շահութահարկը հաշվարկելուց հետո, ձեռնարկության տրամադրության

ներքո մնացած շահույթի բաշխման հաշվին (համախառն շահույթի բաշխմանը կանդրադատնանք 8.7 հարցում) ձևավորվում են.

- **պահուստային կապիտալը,**
- **կուտակման ֆոնդը,**
- **սպառման ֆոնդը:**

Պահուստային կապիտալը ձեռնարկության դրամական ֆոնդ է, որը ձևավորվում է մնացորդային շահույթի հաշվին և օգտագործվում է որևէ հաշվետու ժամանակաշրջանում ձեռնարկության ստացած վնասը ծածկելու, կորուստները փոխհատուցելու համար: Ըուկայական տնտեսության պայմաններում մնացորդային շահույթը հատուկ նշանակության և տնտեսական խթանման ֆոնդերին է բաշխվում տնտեսավարող սուբյեկտների կողմից (նախկին հասարակարգում՝ պետության կողմից): Ընդհանրապես, պահուստային կապիտալի չափը պետք է լինի կանոնադիր կապիտալի՝ նվազագույնը 15%-ի, առավելագույնը 25 %-ի չափով: Ընդ որում, պահուստային կապիտալին հատկացում է կատարվում ոչ ավել հարկվող շահույթի, այսինքն՝ շահութահարկի 50 տոկոսից: Պահուստային կապիտալի հաշվին (նախկինում՝ անվանվում էր պահուստային ֆոնդ), վճարվում է նաև շահաբաժիններ, եթե համապատասխան ֆոնդի միջոցները չեն բավարարում: Եթե պահուստային կապիտալը չի օգտագործվում և ըստ տարիների կուտակվում է, ապա բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է ընդունել որոշում և նրա հաշվին ավելացնել կանոնադիր կապիտալը , իսկ պահուստային կապիտալը հետագայում ձևավորել ընդհանուր հիմունքներով:

Չբաշխված շահույթը ուղղվում է հատուկ ֆոնդերի ձևավորմանը, ինչպիսիք են՝

- կուտակման ֆոնդ,
- սպառման ֆոնդ,
- այլ նպատակային ֆոնդեր:

Կուտակման ֆոնդը՝ դրամական միջոցներ են, որոնք օգտագործվում են արտադրության զարգացման և տեխնիկական վերագինման համար: Այդ ֆոնդի միջոցներն օգտագործվում են ոչ միայն ձեռնարկության ունեցվածքն ավելացնելու, այլև ֆինանսական ներդրումների համար:

Սպառման ֆոնդերը նույնպես դրամական միջոցներ են, որոնք օգտագործվում են սոցիալական կարիքների, ոչ արտադրական նշանակության օբյեկտների շինարարության ֆինանսավորման, միանվագ նյութական օգնության, փոխհատուցման նպատակով վճարումներ կատարելու համար:

1.Վազգեն Վարդանյան- «Բանկային գործ. Բանկային մեմբերներ. Փող. վարկեր. բանկեր. Ոստմնական ձեռնարկ, էջ 344-357:

Ձեռնարկություններում ստեղծվում է նաև **վայրուքային (արդար-
ժույթային) ֆոնդ**, որոնք զբաղվում են նաև ապրանքների արտահան-
մամբ և ստանում են արտարժույթով իրացումից հասույթ:

Սեփական կապիտալի փոփոխուն մասն օգտագործվում է տարբեր
մակարդակների բյուջեների և առևտրային բանկերի առջև պարտավո-
րությունների վճարման համար, որը կրում է ոչ ֆունդային ձև:

Ձեռնարկության կանոնադիր կապիտալը բաժանվում է հիմնական և
շրջանառու կապիտալի: Հիմնական կապիտալը բնութագրում է արտադ-
րության տեխնիկական մակարդակը և նյութական բազան (հենքը): Ֆի-
նանսական հաշվետվություններում հիմնական կապիտալն արտացոլ-
վում է որպես հիմնական միջոցներ, որոնք արժեքային ձևով կոչվում են
հիմնական ֆոնդեր: Դրանց էությանը և դասակարգմանը կանոնադա-
նանք «Ձեռնարկությունների տնտեսագիտություն» դասընթացով, որը նե-
րառված է սույն ամբողջական ձեռնարկի մեջ: Հիմնական միջոցներին
վերաբերում են մաշվող և չմաշվող նյութական ակտիվները: Հիմնական
կապիտալի հաշվին ձեռք են բերվում հիմնական ֆոնդեր, որոնք ունեն
արժեքային հետևյալ ձևերը.

• **սկզբնական արժեք** - այն արժեքն է, որով մուտքագրվում են հիմ-
նական միջոցները և հաշվառվում ըստ հաշվապահական (ֆինանսա-
կան) հաշվառման:

Հիմնական ֆոնդերի սկզբնական արժեքը, որը ներառվում է ձեռնար-
կության կանոնադիր կապիտալի մեջ, հաշվարկվում է նրա դրամական
արժեքը՝ ձեռքբերման, կառուցման փաստաթղթերով և հիմնադիրների հետ
համաձայնեցնելով: Այն հիմնական միջոցները, որոնք ձեռնարկությունը
ստանում է բարեգործական նպատակով որպես նվիրատվություն (անհա-
տույց կարգով) մուտքագրվում է տվյալ պահի շուկայական գներով:

• **վերականգնման արժեք** - այն արժեքն է, որն ունեն արտադրության
մեջ հաշվի առնելով նրանց վերագնահատումը և մաշվածքը,

• **մնացորդային արժեք** - սկզբնական արժեքի (հաշվեկշռային, հաշ-
վառման ՀՀՀՀՍ-16 ստանդարտով՝ պատմական արժեք) և մաշվածքի
տարբերությունն է:

Ընդ որում, ձեռք բերված հիմնական միջոցները մուտքագրվում են հա-
շիվ-ֆակտուրայով (ապրանքագիր) ձեռք բերված գնով՝ ներառյալ ԱԱՀ-ն
և փոխադրման ծախսերը:

Սեփական արտադրության հիմնական միջոցները (տնտեսավարա-
կան և կապալառու եղանակով կառուցված շենքերը) մուտքագրվում են

ըստ ընդունման-հանձնման ակտի (ձև՝ ՀՄ-3, հաստատված ՀՀ ֆինանս-
ների և էկոնոմիկայի նախարարի թիվ 104 հրամանով՝ 12-ը հունիսի
2000թ.) նրանց կցված փաստացի նախահաշվային արժեքով՝ ներառյալ
վարչական և այլ ընդհանուր ծախսերը:

Հիմնական ֆոնդերի արժեքը, որով մուտքագրվել են հաշվապահա-
կան հաշվառման մեջ, փոփոխման ենթակա չեն: Նրանց արժեքի փոփո-
խությունը թույլատրվում է միայն վերակառուցման կամ օբյեկտի մի մա-
սի լուծարման դեպքում: Ձեռնարկության հիմնական միջոցները վերագ-
նահատվում են կառավարության որոշման հիման վրա: Վերագնահա-
տումը կատարվում է երկրի տնտեսության մեջ միասնական կարգով՝ 8-10
տարին մեկ անգամ: Սակայն, քանի որ մեր երկրում փոխվել է հասարա-
կարգը, թողարկվել և շրջանառության մեջ է դրվել ազգային դրամը (ար-
ժույթը), ապա ՀՀ կառավարության որոշումով մեր երկրի տնտեսության
մեջ, նրա կազմակերպություններում 1994-1996 թթ. երեք անգամ կատար-
վել է հիմնական միջոցների վերագնահատում, որի կարգին կանոնադա-
նանք սույն ձեռնարկի «Ձեռնարկությունների տնտեսագիտություն» դա-
սընթացի 11-րդ գլխում:

Հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման արդյունավետու-
թյան ցուցանիշներին և նրանց հաշվարկման կարգին (գործնական խն-
դիրներով) կանոնադառնանք 11-րդ գլխի առաջին, լակ շուկայական տն-
տեսության պայմաններում հիմնական միջոցների ամորտիզացիայի
(մաշվածության) հաշվարկման մեթոդներին (գործնական խնդիրներով)
11-րդ գլխի երկրորդ հարցով:

Ձեռնարկություններում հիմնական կապիտալի վերարտադրությունը
կարող է իրականացվել կամ հիմնական կապիտալի ուղղակի ներդրման
կամ հիմնական օբյեկտները հիմնադիրներին որպես բաժնեվճար կանո-
նադիր կապիտալին ավելացնելու միջոցով կամ ֆիզիկական և իրավա-
բանական անձանց կողմից անհատույց (որպես բարեգործություն, նվի-
րատություն, ժառանգություն) հանձնելու ճանապարհով: Կապիտալ
ներդրումների ձևերին (ուղղակի, փաթեթային, ռիսկային) կանոնադառ-
նանք 8-րդ գլխի վերջին հարցում: Ընդ որում, բացի հիմնական միջոցնե-
րի ձեռքբերումից, ձեռնարկությունները իրականացնում են նաև կապի-
տալ շինարարություն երկու եղանակից որևէ մեկով.

- **պնդեռավարական եղանակ** - այսինքն՝ ձեռնարկության աշխա-
տուծի, նյութական և ֆինանսական միջոցների հաշվին,
- **կապալառու եղանակ** - այսինքն՝ ըստ օբյեկտի նախագծի և տիտղո-

սային թերթի շինարարությունն իրականացնում է շինարարական-մոն-տաժային վարչությունը:

Այս դեպքում ձեռնարկությունը հանդես է գալիս որպես պատվիրա-տու, հիմնական շինարարությունն իրականացնողը՝ գլխավոր կապալա-ռու, իսկ շենքի ներսի աշխատանքներ կատարողները (սարքավորումնե-րի տեղադրում, լուսավորություն, պատուհանի շրջանակների տեղադ-րում, մանրահատակ և այլն)՝ ենթակապալառուներ: Ձեռնարկությունները կատարում են նաև հիմնական միջոցների ներքին-տեղափոխման աշխա-տանքներ և ձեռքբերված մեքենասարքավորումները , «որպես շահա-գործման մեջ չգտնվող ոչ ընթացիկ ակտիվներ» փոխադրում են «շահա-գործման մեջ գտնվող ոչ ընթացիկ ակտիվներ» խումբը, որի համար կազ-մում են ՀՄ-1 հաշվառման ձևի ակտը (հիմնական միջոցների և տեղակայ-ման ենթակա սարքավորումների ընդունման ակտ) և ՀՄ-3 հաշվառման ձևի ակտը (հիմնական միջոցների շահագործման հանձնման-ընդունման ակտ): Ձեռնարկությունները կատարում են նաև շենքերի վերակառուց-ման և մեքենասարքավորումների տեխնիկական վերազինման աշխա-տանքներ, որի համար նա հիմնական կապիտալի հաշվին կատարում են ներդրումներ:

Հիմնական միջոցները, որոնք մասնակցում են արտադրության գոր-ծընթացին, մաշվում են ֆիզիկապես և նրանց ֆիզիկական մաշվածքը , որպես արտադրության ուղղակի ծախս ամեն տարի հաշվարկվում և նե-րառվում է արտադրանքի (ծառայությունների) ինքնարժեքի մեջ: Ձեռ-նարկությունները ծախսեր են կատարում նաև ոչ նյութական ակտիվների ձեռքբերման համար:

Ոչ նյութական են կոչվում այն **ակտիվները**, որոնք չունեն նյութական արժեք, այսինքն՝ չեն չափվում բնական չափիչներով, այլ չափվում են միայն արժեքային չափիչով: Ոչ նյութական ակտիվները ներառվում են ոչ ընթացիկ ակտիվների կազմում: Որպես ոչ ընթացիկ ոչ նյութական ակ-տիվներ համարվում են.

• **ձեռնարկության կազմակերպչական ծախսերը**- որոնք կատարվում են ժողովների, գործարար հանդիպումների, առևտրական ցուցահանդես-ների կազմակերպման և այլ նպատակներով,

- **լիցենզիան** - այսինքն գործունեության թույլտվությունը,
- **ֆիրմայի գինը (Good-Will** - ֆիրմայի գին և հեղինակություն),
- **արդուևագիրը**,
- **ապրանքային նշանը**,

• **համակարգչային-ծրագրային ապահովում** – (հաշվապահական ծրագրեր, կառավարչական հաշվառման ծրագիր, տնտեսական տեղե-կատվության ծրագրեր և այլն),

- **հողի և բնական պաշարների օգտագործման իրավունք**,
- **այլ ոչ նյութական ակտիվներ:**

Ոչ նյութական ակտիվներ ձեռք բերելու համար ձեռնարկությունները ևս կատարում են ներդրումներ, այսինքն՝ ծախսեր: Ոչ նյութական ակ-տիվները լինում են երկու տեսակի.

- **հողատեսքերի և բնական պաշարների (անտառներ, օգտակար հա-նածոներ) օգտագործման իրավունք**,
- **արտադրական օբյեկտների օգտագործման և ինտելեկտուալ (մտա-վոր) սեփականության իրավունք:**

Որպես արտադրական օբյեկտների օգտագործման և մտավոր սեփա-կանության իրավունք տվող ոչ նյութական ակտիվներ համարվում են ար-տոնագրերը, գիտատեխնիկական առաջընթացի (նաու-հաու) ներդրման ի-րավունքը, ֆիրմայի գինը, կազմակերպչական ծախսերը, արդյունաբերա-կան ապրանքների նշանները, հեղինակային իրավունքը , համակարգչային ծրագրային ապահովումը, լիցենզիան և այլ ոչ նյութական ակտիվները:

Արտոնագրերը նրանց տերերին տալիս են բացառիկ օգտագործման իրավունք, արտադրանքի արտադրության ու վաճառքի իրավունք և որը սահմանված է օրենսդրությամբ:՝ Արտոնագրային իրավունքի տերերը կարող են որպես բաժնետեր ներդնել կանոնադիր կապիտալում կամ վա-ճառել, որը համարվում է իրավական խորհրդատվական ծառայություն:

Ապրանքային նշանը և առևտրական մակնիշը իրենցից ներկայաց-նում են ֆիրմայի, որպես իրավաբանական անձի, անվանման բացառիկ օգտագործման իրավունք, ինչպես նաև հատուկ նշաններ, որով ձեռնար-կության ապրանքը (ծառայությունը) բացառիկ կարգով տարբերվում է այլ ձեռնարկությունների համանման ապրանքներից (ծառայություննե-րից): Ապրանքային նշանի օգտագործման իրավունքը պատկանում է միայն սեփականատիրոջը: Ըուկայական տնտեսության պայմաններում ապրանքային նշանը ձեռնարկության քանկարժեք ակտիվներից է, քանի որ այն կարող է վաճառվել կամ օգտագործման իրավունքը տալ որպես ներդրում կանոնադիր կապիտալում:

Մեծ արժեք է ներկայացնում նաև նու-հաուի իրավունքը: Նրա ձեռք-

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, Երևան, 1999:

բերման արժեքը (օրինակ, բարձր, առաջադիմական նոր տեխնոլոգիայի օգտագործման իրավունքի ձեռքբերումը) համարվում է ձեռնարկության ակտիվ, որը կարող է որոշվել հիմնադիրների կողմից:

Ֆիրմայի գինը ծագում է ուրիշ ձեռնարկության ակտիվները գնելիս, երբ նկատի է առնվում գնող ձեռնարկության հեղինակությունը շուկայում:

Ոչ նյութական ակտիվները գնահատվում են արժեքային ձևով: Հաշվառման մեջ մուտքագրելու համար անհրաժեշտ է կատարել արժեքային գնահատում: Արժեքի գնահատումը կախված է ոչ նյութական ակտիվի ձեռքբերման կարգից: Ոչ նյութական ակտիվների ձեռքբերման ծախսերը կատարվում են օբյեկտի վաճառքի գույմարի, ինչպես նաև մատուցված տեղեկատվական, խորհրդատվական ծառայության հաշվով, տուրքերի, մաքսային ծախսերի, չփոխհատուցվող հարկերի չափով:

Ոչ նյութական օբյեկտների ստեղծման, ձեռքբերման ծախսերն իրենց մեջ ընդգրկում են նախագծողների աշխատավարձը, նրանից հաշվարկված պարտադիր սոցիալական վճարները, նյութերի ծախսերն ու վարչական և այլ ընդհանուր ծախսերը: Ոչ նյութական ակտիվները կարող են մուտք լինել նաև անվճար՝ բարեգործական, նվիրատվության, ժառանգության կարգով: Այս դեպքում նրանց արժեքի գնահատումը կատարվում է տվյալ պահին՝ հիմնադիրների համաձայնությամբ՝ շուկայական գներով:

Ընդ որում, ոչ նյութական ակտիվները ևս մաշվում են: Սակայն, ի տարբերություն հիմնական միջոցների՝ որպես ոչ ընթացիկ նյութական ակտիվներ, ոչ նյութական ակտիվների մաշվածք, նշանակում է, նրանց արժեքի դուրս գրումը ծախսերով՝ ժամկետը լրանալու կապակցությամբ: Այսպես, եթե ձեռնարկությունը երեք տարի ժամկետով ձեռք է բերել լիցենզիա և ծախսել է 120 հազար դրամ (մաքսատուրքի բազայի 10-ապատիկի չափով, որպես մաքսատուրքի բազա ընդունված է 1996թ. սահմանված ամսեկան նվազագույն աշխատավարձի 12-ապատիկը), ապա ժամկետը լրանալու կապակցությամբ «վարչական և այլ ընդհանուր» ծախսերով դուրս է գրվում այն, որն էլ համարվում է ոչ նյութական ակտիվների մաշվածություն:

Ձեռնարկատիրական գործունեությամբ առաջատար ձեռնարկության կողմից ետ մնացող, ֆինանսական սնանկացման շեմին գտնվող ձեռնարկության ակտիվների գնումը կոչվում է **գուղվիլ**: Ըստ էության, գուղվիլը հանդիսանում է տնտեսապես ետ մնացող, ֆինանսական սնանկացման շեմին գտնվող ձեռնարկության (ֆիրմայի) գինը: Գնող ձեռնարկությունն իր վրա է վերցնում նաև նրա պարտավորությունները: Ընդ որում, եթե ա-

ռաջատար ձեռնարկությունը գնում է մեկ ուրիշ ձեռնարկության ակտիվները նախատեսված ֆիրմայի գնից բարձր արժեքով, ապա այն կոչվում է դրական գուղվիլ: Այսպիսով, դրական գուղվիլն իրենից ներկայացնում է շուկայական գնի և ֆիրմայի գնի տարբերությունը: Սակայն, առաջատար ձեռնարկությունը կարող է գնել մեկ ուրիշ ձեռնարկության ակտիվները՝ նրա գնից ցածր արժեքով: Այս դեպքում կստացվի բացասական գուղվիլ: Այսպիսով, բացասական գուղվիլն իրենից ներկայացնում է ֆիրմայի գնի և փաստացի ձեռքբերման գնի տարբերությունը:

Գուղվիլը որպես ձեռնարկատիրական, այսինքն՝ ազատ տնտեսական և շահավետ գործունեություն¹, ենթակա է հաշվառման²: Ընդ որում, գուղվիլը ևս ենթարկվում է մաշվածության և որը նույնպես հաշվառվում է: Գուղվիլը մաշվածության է ենթարկվում իր ծառայության ընթացքում: Սովորաբար, գուղվիլի ճանաչման պահից հետո, օգտակար ծառայության ժամկետը չի գերազանցում 20 տարին, ինչպես արտադրական շենքերի համար ՀՀ կոստավարության 1997թ. հունիսի 3-ի թիվ 187 որոշմամբ սահմանված է ծառայության ժամկետը: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար գուղվիլի հաշվարկված մաշվածությունը ճանաչվում է որպես ծախս:

8.5. Ձեռնարկությունների ներդրումները շրջանառու կապիտալում և նրա հաշվին կատարվող ծախսերը

Յանկացած առևտրային կազմակերպություն, որն զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ, պետք է տնօրինի որոշակի չափի ակտիվների, որոնք ձեռք են բերվում հիմնական և շրջանառու կապիտալի հաշվին: Վերջինիս հաշվին ձեռք են բերվում ընթացիկ ակտիվներ: Դրանք այն ակտիվներն են, որոնք օգտագործվում են մինչև մեկ տարի ժամկետով:

Ընթացիկ ակտիվները դասակարգվում են.

- *պաշարներ,*
- *գործառնական և այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր,*
- *ընթացիկ ֆինանսական ներդրումներ,*
- *դրամական միջոցներ,*

1. Վ.Ա. Վարդանյան- Ֆինանսական մեքեզմենք, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 1999, էջ 192-222, ձեռնդրեցություն ձևերը:

2. Թ. Մովսիսյան – Հաշվապահական հաշվառման դասընթաց, Երևան, 2003, էջ 112-117:

• այլ ընթացիկ ակտիվներ:

Այժմ անդրադառնանք ընթացիկ ակտիվների բաղադրամասերի էության համառոտ բնութագրմանը:

Որպես պաշարներ համարվում են պահեստներում և արտադրական սպառման մեջ գտնվող ապրանքանյութական պաշարները: Ըստ էության, դրանք կոչվում են շրջանառու միջոցներ, որոնք ձեռք են բերվում շրջանառու կապիտալի հաշվին: Շրջանառու միջոցների էությանը, դասակարգմանը, օգտագործման արդյունավետության ցուցանիշներին, նրանց հաշվարկման կարգին (գործնական խնդիրներով) ու բարելավման ուղիներին կանոնադառնանք «Ձեռնարկությունների տնտեսագիտություն» դասընթացի 11-րդ գլխի 4-6-րդ հարցերում, որը կազմում է սույն ամբողջական ձեռնարկի երկրորդ բաժինը:

Որպես **պաշարներ** համարվում են հումք և նյութեր, որոնք էլ իրենց հերթին դասակարգվում են.

- հումք և նյութեր,
- կիսապատրաստուկներ,
- վառելանյութեր,
- տարա և տարալին նյութեր,
- պահեստամասեր,
- շինանյութեր,
- գյուղատնտեսական նշանակության նյութեր (թունաքիմիկատներ, հերբիցիդներ, պարարտանյութեր և այլն),

- վերամշակման հանձնված նյութեր,
- այլ նյութեր:

Որպես պաշարներ համարվում են նաև.

- աճեցվող և բուսող կենդանիները,
- արագամաշ առարկաները,
- անավարտ արտադրությունը,
- արտադրանքը,
- ապրանքները:

Ընդ որում, փոքրարժեք և արագամաշ առարկաները (ՓԱԱ) նախկին հասարակարգում և անկախ Հայաստանում մինչև 1999թ. սկիզբը պլանավորման և հաշվառման մեջ հաշվառվել են հիմնական միջոցների կազմում, սակայն առանձին խմբով: Արտադրական կարիքների նպատակով, երբ դուրս են գրվել պահեստից, նրանց արժեքի 50 %-ը ձևակերպվել է որպես արտադրական ծախս, իսկ մյուս 50 %-ը՝ որպես մաշվածություն:

Ծախսերի վրա դուրս է գրվել նրանց օգտագործման ժամկետը լրանալուց հետո: Մինչդեռ, 1999թ. հունվարից, ըստ ՀՀ կառավարության «Հաշվապահական հաշվառման բարեփոխումների մասին» 1998թ. նոյեմբերի 26-ի թիվ 740 որոշմամբ ընդունված նոր հաշվալին պլանի¹, ըստ ՀՀ հաշվառման ստանդարտի (ՀՀՀՀՄ-2), կոչվում է արագամաշ առարկաներ և հաշվառվում է պաշարներ խմբում:² Հետևապես, արագամաշ առարկաները, որոնք արտադրական կարիքների համար դուրս են գրվում պահեստից, ձևակերպվում են արտադրության ծախսերով:

Ըստ նոր հաշվալին պլանի, պաշարների խմբի մեջ են հաշվառվում նաև անավարտ արտադրությունը, այսինքն, երբ ձեռնարկությունը կատարել է արտադրության ծախսեր, սակայն ավարտին փոխվել է դեռևս արտադրանք չի ստացել (կոշիկը, հագուստը ձևել են, բայց դեռ չեն կարել):

Ընթացիկ ակտիվների մյուս խումբն է կազմում գործառնական և այլ ընթացիկ դեբիտորական պարտքերը, այսինքն որ, այլ իրավաբանական անձինք պարտք են տվյալ առևտրային կազմակերպությանը: Դրանց մեջ ներառվում են.

- չկապակցված կողմերի գծով առևտրական դեբիտորական պարտքեր,
- երկրի ներսից ստացվելիք առևտրական դեբիտորական պարտքը,
- արտերկրից ստացվելիք առևտրական դեբիտորական պարտքը,
- առևտրական դեբիտորական պարտքեր կապակցված կողմերի գծով,
- ընթացիկ դեբիտորական պարտք դուստր ձեռնարկությունների գծով,
- ընթացիկ դեբիտորական պարտք ասոցիացված (assotiatione – միավորված) կազմակերպությունների գծով,
- ընթացիկ դեբիտորական պարտք համատեղ ձեռնարկումների գծով,
- առևտրական դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ,

- տրված ընթացիկ կանխավճարներ,
- ընթացիկ դեբիտորական պարտք բյուջեի գծով,
- հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր,
- ընթացիկ դեբիտորական պարտք պարտադիր սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության գծով,
- ընթացիկ դեբիտորական պարտք անձնակազմի գծով,

1. Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման պլան, Երևան, 1999:

2. ՀՀ ստանդարտների ժողովածու, Երևան, 2001:

- ընթացիկ դեբիտորական պայտք հաշվեգրված եկամուտների գծով,
- այլ ընթացիկ դեբիտորական պայտքեր:

Որպես ընթացիկ ակտիվներ համարվում են նաև ընթացիկ ֆինանսական ներդրումները, որոնք կատարվում են արժեթղթերում:

Ընթացիկ ակտիվներն մեջ ներառվում են նաև ձեռնարկության դրամական միջոցները, որոնք գտնվում են դրամարկում, հաշվարկային, արտարժույթային և այլ հաշվներում (ազգային արժույթով, այտարժույթով, և սառեցված միջոցներ, այսինքն, երբ դրված է տնտեսական արգելք գործարքներ կատարելու համար: Դրամական միջոցներն մեջ ներառվում են նաև «դրամական միջոցները ճանապարհին», այսինքն այն միջոցները, որոնք փոխանցվել են կրեդիտորներին, սակայն դեռ հասցեատիրոջը (մատակարար) չի հասել և գտնվում է ճանապարհին, բայց լրացել է հաշվետու ժամանակաշրջանը (եռամսյակ, տարի):

Ընթացիկ ակտիվներն մեջ ներառվում են նաև դրամական փաստաթղթերը, այլ ընթացիկ ակտիվները, ինչպիսիք են՝ ընթացիկ ակտիվներ՝ հետաձգված ծախսումների և ընթացիկ ակտիվներ՝ հետաձգված հարկերի գծով:

Այսպիսով, շրջանառու կապիտալի հաշվին ձեռք են բերվում ընթացիկ ակտիվներ, որոնք օգտագործվում են արտադրության մեջ և կազմում են արտադրության ուղղակի և անուղղակի՝ (վարչական և այլ ընդհանուր) ծախսերը, որոնց էությանը և տեսակներին կանոնադաշտանք «Ձեռնարկությունների տնտեսագիտություն» դասընթացի 12-րդ գլխով, որը կազմում է ամբողջական ձեռնարկի երկրորդ բաժինը:

Այսպիսով, շրջանառու կապիտալն այն միջոցներն են, որոնք սպասարկում են ձեռնարկության տնտեսաֆինանսական գործունեությունը, այսինքն անմիջականորեն մասնակցում են և արտադրության, և իրացման գործընթացին:

Ձեռնարկության շրջանառու կապիտալի հաշվին ձեռքբերված շրջանառու միջոցներն ապահովում են արտադրության գործընթացի անընդհատությունը, համաշափությունը և շրջանառությունը: Շրջանառու միջոցներն լստ արտադրության և շրջանառության մեջ ունեցած դերի, ստորաբաժանվում են շրջանառու արտադրական ֆոնդերի և շրջանառության ֆոնդերի, որոնք կանոնադաշտանք ձեռնարկի 11-րդ գլխի 4-րդ հարցում: Հիմնական և շրջանառու կապիտալը գործի մեջ դրված փողն է, որն ունի ինքնաձ հատկություն և կատարում է կապիտալի շրջապտույտ երեք փուլերով, որին անդրադարձել ենք ձեռնարկի առաջին բաժնում՝ 1-ին գլ-

խի 4-րդ հարցում:

Քանի որ շրջանառու միջոցները ներառում են ինչպես նյութական, այնպես էլ դրամական պաշարները, ապա նրանց կազմակերպումը և արդյունավետ օգտագործումը կախված է նյութական արտադրության գործընթացից և ձեռնարկության ֆինանսական կայունությունից: Շրջանառու միջոցների կազմակերպումն ընդգրկում է.

- շրջանառու միջոցների կազմի և կառուցվածքի որոշումը,
- շրջանառու միջոցների տարեկան պահանջի որոշումը,
- շրջանառու միջոցների ձևավորման աղբյուրների բացահայտումը,
- շրջանառու միջոցներով ապահովվածությունը և նրանց արդյունավետ օգտագործումը:

Քանի որ, այդ հարցերը վերաբերվում են նաև «Ձեռնարկությունների տնտեսագիտություն» դասընթացին, ապա դրանց կանոնադաշտանք սույն ձեռնարկի 11-րդ գլխի 5-6-րդ հարցերում:

8.6. Կապիտալի ներդրումը և նրա տեսակները

Ֆինանսական պաշարներն օգտագործվում են ձեռնարկության ընթացիկ ծախսերի ֆինանսավորման և ներդրումների համար: Ներդրումները (լատ. Invest ներդրում) բոլոր տեսակի ունեցվածքային (գույքային) և ինտելեկտուալ (մտավոր) արժեքներն են, որոնք ներդրողների կողմից ներդրվում են ձեռնարկատիրական գործունեության մեջ՝ շահույթ ստանալու նպատակով: Ներդրումներն իրականացնում են ֆիզիկական և իրավաբանական անձինք: Նրանք կապիտալի ներդրման ժամանակ ամենից առաջ մտածում են ֆինանսական ռիսկի մեղմացման մասին: Կապիտալ ներդրումների ֆինանսավորման գործում ներդրողը (ինվեստոր) հանդիսանում է որպես միջնորդ: Մինչդեռ, անհատ ձեռնարկատերը այն անձն է, որն իր սեփական կապիտալը ներդնում է գործի մեջ՝ որոշակի ռիսկի պայմաններում, զուտ եկամուտ ստանալու նպատակով: Իրավաբանական անձի դեպքում ինվեստիցիաները (ներդրումները) փողի երկարաժամկետ ներդրումներ են, որ կատարվում են շահույթ ստանալու նպատակով:

Ներդրողները ըստ ֆինանսական ռիսկի (ռիսկը արաբերեն բառ է, որ նշանակում է ունեցվածք, եկամուտ, աշխատավարձ) բաժանվում են

1.Վ.Ա. Վարդանյան - Ֆինանսական մեթոդներ, Ռուսմանական ձեռնարկ, Երևան, 1999, էջ 265-271:

հետևյալ տեսակների.

- ֆինանսական ներդրողներ,
- ձեռներեցներ,
- վերավաճառողներ,
- խաղացողներ:


Ներդրողները, որպես ֆիզիկական կամ իրավաբանական անձ, մտածում են ռիսկի մեղմացման համար: Նրանք ներդրում են կատարում որոշակի սոցիալ-տնտեսական ծրագրերում, հետևապես նախօրոք հայտնի է ռիսկի որոշակի աստիճան: Ձեռներեց իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը կատարում է ներդրում՝ ըստ բիզնես-ծրագրի՝ որոշակի ռիսկի պայմաններում: Վերավաճառողը պատրաստ է գնալ որոշակի, նախօրոք հաշվարկված ռիսկի, մինչդեռ խաղացողը՝ պատրաստ է ցանկացած ռիսկի:

Ներդրողները կարող են հանդես գալ ավանդատուի, պատվիրատուի, վարկատուի, գնորդի դերում, ինչպես նաև կատարել ներդրումային գործընթացի ցանկացած գործառույթ:

Պատվիրատուն կարող է լինել ֆիզիկական և իրավաբանական անձ, որը վստահված է ներդրողի կողմից իրականացնելու ներդրումային նախագծի իրացումը: Եթե պատվիրատուն չի հանդիսանում որպես ներդրող, ապա նա ունենում է ներդրումների տնօրինման, օգտագործման, տրամադրման իրավունք՝ իրեն վերապահված իրավասության սահմաններում, որը նախատեսվում է ներդրողի և պատվիրատուի միջև կնքված պայմանագրով: Այդպես է կատարվում կապիտալ շինարարության ժամանակ, երբ առանձնացվում է պատվիրատու և կապալառու կողմեր: Կապալառուն այն իրավաբանական անձն է, որ պատվիրատուին տրամադրված կապիտալ ներդրումների հաշվին կատարում է աշխատանքներ՝ ըստ կապալային պայմանագրի, որն ունի համապատասխան գործունեության քույլտվություն:

Ներդրումները կատարվում են ոչ միայն ձեռնարկատիրական գործունեության մեջ, այլև ոչ կոմերցիոն (comertone- առևտրային) գործունեության օբյեկտներում, որի շնորհիվ ձեռք են բերում սոցիալական արդյունք: Գործնականում, ինվեստիցիա ասելով հասկացվում է կապիտալի երկարատև ներդրում: Մինչդեռ, ինվեստիցիան որպես ներդրում լայն հասկացություն է, որը երևում է նրա դասակարգումից (Ուրվագիծ 13):

Ինվեստիցիաների ներդրումների դասակարգումը



Կախված առարկայական (բնատուր) բովանդակությունից, տարբերում են հետևյալ տեսակի արժեքներ.

իրական միջոցներ, բանկային նպատակային ավանդներ, բաժնետոմսեր և այլ արժեթղթեր, անշարժ գույք (շենքեր, շինություններ, հող, բազմամյա տնկարքներ և այլ նյութական արժեքներ) և շարժական (գանազան մեքենասարքավորումներ, տեխնիկա, ուժային մեքենաներ, հուս-

քաղճեր և այլն), ունեցվածքի սեփականության իրավունք (նոու-հաուից բխող հեղինակային իրավունք, արտոնագրեր և այլ մտավոր սեփականություն, ինչպես նաև նյութական սեփականության իրավունք), հողի և բնական պաշարների սեփականության օգտագործման իրավունք:

Կախված տարբեր արժեքների իրացումից, տարբերում են հետևյալ տեսակի ներդրումները՝ իրական, ֆինանսական և ինտելեկտուալ (մտավոր):

Իրական ներդրումները հանդիսանում են նյութական արտադրության (գյուղատնտեսություն, արդյունաբերություն, տրանսպորտ, կապ, առևտուր) ճյուղերում միջոցների երկարաժամկետ ներդրումները:

Ֆինանսական ներդրումները արժեթղթերի թողարկումն է, որոնք ներդրվում են ձեռնարկատիրական գործունեության մեջ, տեղաբաշխվում է, կատարվում առք ու վաճառք՝ շահույթ ստանալու նպատակով:

Ինտելեկտուալ (մտավոր) ներդրումները հանդիսանում են մասնագետների պատրաստումը, վերապատրաստումը և որակավորման բարձրացումը բուհերում, քոլեջներում, ուսումնարաններում, ուսումնամեթոդական կենտրոններում, լիցենզիաները, արտոնագրերը, մտավոր սեփականության հեղինակային իրավունքը, «Նոու-հաուս» և այլն:

Կախված ներդրումային գործունեության սուբյեկտներից, տարբերում են ներդրումների հետևյալ տեսակները. քաղաքացիների, ոչ պետական և պետական ձեռնարկությունների ներդրումներ, պետական ներդրումներ, տեղական, օտարերկրյա և համատեղ ներդրումներ:

Ներդրումային գործունեության օբյեկտները հանդիսանում են հիմնական կապիտալը (նոր ձեռքբերված, կառուցված, վերանորոգված հիմնական միջոցները, որպես հիմնական ֆոնդեր), շրջանառու կապիտալը, արժեթղթերը, նպատակային դրամական ավանդները, գիտատեխնիկական ներդրումները («նոու-հաուս»), մտավոր աշխատանքի արժեքները:

Աշխարհի մասշտաբով տարեցտարի ավելանում են կապիտալ ներդրումները: Այսպես, 1991թ. կապիտալ ներդրումների ծավալը կազմել է 35 մլրդ \$, 1996թ.՝ 131 մլրդ, իսկ 1999թ.՝ 192 մլրդ \$, այսինքն ինն տարվա ընթացքում նրա չափն ավելացել է շուրջ 5.5 անգամ: Օտարերկրյա ներդրումներ են կատարում տնտեսապես զարգացած երկրները՝ զարգացող և աղքատ երկրներում (Հայաստանը 1994թ. համարվում է զարգացող երկիր): ԱՊՀ-ի և նախկին սոց.երկրների (եվրոպական 6 երկրներ) մեջ Հայաստանը կապիտալ ներդրումների առումով վերջին տեղում է: Բնակչության մեկ շնչի հաշվով ներդրումների առումով մոտ ենք հարևան երկրներին (մեկ շնչի հաշվով 190 \$):

Մեր երկրում ներդրումների ավելացման գործում մեծ նշանակություն ունեցավ ՀՀ Գերագույն խորհրդի՝ ներկայումս՝ Ազգային ժողովի կողմից «Ներդրումների խրախուսման մասին» օրենքի ընդունումը (1994թ.) և հետագա կատարելագործումը (1998թ.): Հայաստանում կապիտալ ներդրումների ծավալը 1999թ. կազմել է՝ 180 մլն \$, 2000թ.՝ 200 մլն և 2001թ.՝ 220 մլն \$: 2004թ. օտարերկրյա ներդրումների ծավալը կազմել է 490 մլն \$, որը 2001թ. նկատմամբ աճել է 77 տոկոսով: Լինսի հիմնադրամի միջոցներով 2004թ. ներդրվել է 165 մլն \$, (ամերիկահայ ձեռներեց Քլըր-Քլյուբոբյանի միջոցներով):

Ներդրումներ են կատարվում նաև համաշխարհային բանկի (ՀԲ) կողմից տրված արտոնյալ վարկերի ձևով: Այսպես, 1993-2003թթ.՝ ՀԲ-ի կողմից Հայաստանին է տրամադրվել 815 մլն \$՝ 35 ծրագրերի հաշվով: 2003թ. Համաշխարհային բանկը Հայաստանին տրամադրել է 250 մլն \$՝ չորս վարկային ծրագրով: Այդ վարկային միջոցներից 220 մլն \$ ուղղվել է «Հայաստան՝ նոր երկիր. օժանդակության ռազմավարություն» 2005-2008 թթ. իրականացվելիք ծրագրին, իսկ մնացածը կհատկացվի սոցիալական ոլորտին: Բացի այդ, 2003թ. արդյունքներով Հայաստանը միջազգային զարգացման ընկերակցության կողմից, որը ներառում է տասնյակ երկրներ, ճանաչվել է ներդրումների կատարողականով լավագույն երկրներից մեկը: Ըստ ՀԲ-ի, որը Հայաստանում ունի գրասենյակ, չնայած տնտեսական աճը 2000-2004թթ. բարձր է եղել, սակայն բնակչության 49.2 %-ը դեռևս աղքատ է: Այդ նպատակով, ՀԲ-ն ՀՀ գյուղական համայնքների օժանդակության մի շարք ծրագրեր է քննարկում, որպեսզի կատարի համապատասխան ներդրումներ: ՀԲ-ի տնօրենների խորհրդի կողմից հաստատված մյուս ծրագրերն առողջապահության համակարգի արդիականացման յոթնամյա ծրագիրն է՝ 19 մլն \$ արժեքով: Առողջապահության վարկային ՀԲ-ի ծրագրին օժանդակում է նաև ճապոնական 1.2 մլն \$ համաֆինանսավորման գրանտը (դրամաշնորհը): ՀԲ-ի կողմից հաստատված 5.1 մլն \$ արժեքով հաջորդ վարկային ծրագիրը միտված է ՀՀ սոցիալական ոլորտին: ՀԲ-ն 2004թ. Հայաստանին տրամադրել է արտոնյալ վարկ՝ վարկային երեք ծրագրերով՝ 10.1 մլն \$ պետական կառավարման բարեփոխումների (քաղաքացիական ծառայություն, գնումների պետական գործակալություն), 23 մլն \$ վարկ՝ ոռոգման ցանցի ընդլայնման ու խմելու ջրի ջրամատակարարման և 1.7 մլն \$՝ ցրտահարված խաղողի այգիները (370 հա) և պտղատու այգիները (1340հա) վերականգնելու համար:

Օտարերկրյա ներդրումների ծավալը ՀՀ տնտեսության մեջ՝ առանց

պետական և առևտրային բանկերի վարկի, 2004թ. առաջին կիսամյակում կազմել է 106.3 մլն \$, որից ուղղակի ներդրումները կազմել են 64.7 մլն \$: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ այն ավելացել է 41.2%-ով, իսկ ուղղակի ներդրումները՝ 79.1 տոկոսով: Ըստ ՀՀ ԱՎԾ-ի տվյալների, օտարերկրյա ներդրումների ծավալը երկրի տնտեսության իրական հատվածում (առանց սեփականաշնորհման միջոցների), նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է 43.7 %-ով, իսկ ուղղակի ներդրումները՝ 85.6 տոկոսով:¹

• 2004թ. առաջին եռամսյակում օտարերկրյա ներդրումների 39.1 և ուղղակի ներդրումների 32.7 տոկոսն ուղղվել է կապի ոլորտին: Բացի այդ, ուղղակի ներդրումների 26.9 %-ը կատարվել է սննդի արդյունաբերության (ներառյալ խմիչքների արտադրությունը) և 15.6 %-ը՝ տրանսպորտի և մասնավորապես, օդային տրանսպորտի բնագավառում: Տարեկան կտրվածքով օտարերկրյա ներդրումները ավելացել են՝ Ֆրանսիայից՝ 587.1 ամլազամ (2004թ. հունիսի վերջին կազմելով 13.7 մլն \$), Հունաստանից՝ 2.55 ամլազամ (41.5 մլն \$), ԱՄՆ-ից՝ 101.03 (15.2 մլն \$), Արգենտինայից՝ 80.3% (16.1 մլն \$), Լիբանանից՝ 60.4% (1.6 մլն \$), Լյուքսեմբուրգից՝ 69.1 % (763հազ. \$) և Կանադայից՝ 34.6 % (1.3 մլն \$): Դրա հետ մեկտեղ, օտարերկրյա ներդրումները նույն ժամանակաշրջանում կրճատվել են՝ Պանամայից՝ 98.8 (90.5 հազ \$), ՌԴ-ից՝ 70.9 % (5.7 մլն \$), Իրանից՝ 80.4 % (39.2հազ. \$), Անգոլայից՝ 3.5% (26.1 հազ \$), Կիպրոսից՝ 50% (24 մլն \$), Նիդեռլանդներից՝ 1.2% (859.6 հազ.\$):

Ըստ գոյծունեության բնույթի գոյություն ունի ներդրումների հետևյալ տեսակները.

• **ուղղակի ներդրումներ** .- Այն ներդրումներն են, որոնք կատարվում են ձեռնարկատիրական գործունեության մեջ, այսինքն՝ նյութական արտադրության ճյուղերում՝ լիստ բիզնես-ծրագրի, շահույթ ստանալու նպատակով,

• **փաթեթային ներդրում** .- Դրանք ֆինանսական ներդրումներ են փաթեթային ձևով՝ պրոֆիթային (ֆրանս. profit- շահույթ, տնտեսական արդյունք): Ըստ էության, դրանք ֆինանսական ներդրումներն են արժեթղթերում,

• **վեճուրային (ոխակային) ներդրումներ** .- Այն ներդրումներն են, որ կատարվում են սոցիալ-տնտեսական ծրագրերում, չակցկալելով կայուն

եկամուտ և կարճ ժամկետում շահույթի, սոցիալական արդյունքի ապահովում (անգլ. venture - խիզախել, ռիսկի դիմել): Այլ կերպ, դա կապիտալի ռիսկային ներդրում է , որն որոշակի ժամանակից հետո կարող է ապահովել կայուն եկամուտ, շահույթ կամ որևէ սոցիալական արդյունք:

Այժմ անդրադառնանք ներդրումների նշված տեսակների էությանը և բնութագրին:

Ուղղակի ներդրումներն իրենցից ներկայացնում են տնտեսավարող սուբյեկտների կողմից ներդրումները կանոնադիր կապիտալում՝ նպատակ ունենալով ստանալ շահույթ: Ուղղակի ներդրումները կատարվում են ոչ ընթացիկ մաշվող նյութական ակտիվների (հիմնական միջոցների), անշարժ գույք ձեռք բերելու, կապիտալ շինարարություն իրականացնելու, այսինքն՝ հիմնական միջոցների վերարտադրման համար: Ընդ որում, ձեռնարկություններում հիմնական կապիտալի վերարտադրությունը կարող է իրականացվել կամ ուղղակի ներդրումների, կամ հիմնական կապիտալի օբյեկտը հիմնադիրներին որպես բաժնեվճար ներդնելու կանոնադիր կապիտալում կամ ֆիզիկական և իրավաբանական անձանց անհատույց տրամադրելու ձևով: Սակայն, հիմնական կապիտալի վերարտադրության հիմնական մեթոդը հանդիսանում է ուղղակի ներդրումները: Ուղղակի ներդրումներն իրենցից ներկայացնում են կապիտալի երկարաժամկետ ներդրումներ, ըստ որի կատարվում են կապիտալ (հիմնական) ծախսեր հիմնական կապիտալի մոր օբյեկտների ձեռքբերման, կառուցման, վերակառուցման, և տեխնիկական վերազինման ձևով: Կապիտալ շինարարությանը վերաբերում են մոր օբյեկտների կառուցումը՝ լիստ նախագծերի և տիտղոսային թերթերի՝ որոշակի տարածքի վրա: Արտադրական կարողությունների ընդլայնումն իրենց ներկայացնում է մոր արտադրամասերի կառուցում, մոր հաստոցների և բարձր, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրում: Ձեռնարկություններն իրենց արտադրական հզորությունը մեծացնելու նպատակով կատարում են նաև վերակառուցում և տեխնիկական վերազինում: Վերակառուցումն իրենց ներկայացնում է մոր մեքենասարքավորումներով հների լրիվ կամ մասնակի փոխարինում՝ առանց գործող արտադրամասերի ընդլայնման և մորի կառուցման: Տեխնիկական վերազինումը իր մեջ ներառում է ժամանակակից տեխնիկական մակարդակի ապահովում՝ համալիր միջոցառումների միջոցով, այսինքն՝ առանց արտադրական տարածքների ընդլայնման: Այսպիսով, ուղղակի ներդրումների միջոցով իրականացվում է կապիտալ շինարարություն, արտադրական տարածքների ընդլայնում, վերակառու-

1. "Деловой экспресс" շաբաթաթերթ, №34 , сентябрь, 2004.

ցում, տեխնիկական վերազինում և մեքենասայրավորումների ձեռքբերում ու հների հիմնական նորոգում:

Դրանք կատարվում են կապիտալ ներդրումների հաշվին: Շուկայական տնտեսության պայմաններում կապիտալ ներդրումների ֆինանսավորման գործում մեծ է լիզինգի (լատ.՝ Lisinge- երկարաժամկետ վարձակալություն) և հատկապես ֆինանսական լիզինգի դերը:¹

Ոչ ընթացիկ մաշվող նյութական ակտիվները, այսինքն հիմնական միջոցները արտադրության մեջ շահագործման ընթացքում մաշվում են ֆիզիկապես և բարոյապես: Բարոյական մաշվածքի հետևանքով կատարվում է տեխնիկական վերազինում, իսկ ֆիզիկական մաշվածքը վերականգնելու համար կատարվում է հիմնական միջոցների ընթացիկ և կապիտալ նորոգում, որոնց կազմակերպման աշխատանքների պարզաբանմանը կանդիդատուհանք ձեռնարկի 11-րդ գլխի երրորդ հարցում:

Հիմնական միջոցների նորոգման կազմակերպումը նույնպես ֆինանսավորվում է ուղղակի ներդրումների հաշվին: Ընդ որում, ուղղակի ներդրումները կատարվում են սեփական կապիտալի կամ փոխառու կապիտալի, այսինքն առևտրային բանկերից վերցրած կարճաժամկետ, միջին-ժամկետ և երկարաժամկետ վարկերի հաշվին:²

Ներդրումները դասակարգվում են նաև ըստ ֆինանսավորման աղբյուրների: Ըստ այդ հատկանիշի, ներդրումները լինում են հետևյալ տեսակների.

• **մասնավոր ներդրումներ** .- Այն ներդրումներն են , որոնք կատարվում են սեփական՝ մասնավոր կապիտալի, ինչպես նաև ներգրավված՝ վարկային կապիտալի, փոխառությունների, այսինքն փոխառու միջոցների հաշվին: Այդպիսի ներդրումներ հիմնականում կատարվում են անհատ ձեռնարկատերերի և այլ ֆիզիկական անձանց, ինչպես նաև ոչ պետական կազմակերպությունների կողմից: Դրանք երկրի տնտեսության մասնավոր հատվածում կատարվող ներդրումներն են:

• **պետական ներդրումներ** .- Այն ներդրումներն են, որոնք կատարվում են բյուջետային հատկացումների և պետական վարկերի հաշվին: Պետական ձեռնարկությունների դրամական միջոցները, որոնք գտնվում են շրջանառության մեջ, նույնպես համարվում են պետական սեփականություն և անմիջականորեն կապված են բյուջեի հետ:

Ձեռնարկությունների կողմից ներդրումը արժեթղթերում և այլ ձեռնար-

կությունների կանոնադիր կապիտալում, ինչպես նաև փոխառությունների տրամադրումը կոչվում է ֆինանսական ներդրումներ: Ֆինանսական ներդրումները ներդրողի համար հաշվառման մեջ արտացոլվում են փաստացի ծախսերով:

Ֆինանսական ներդրումներ կատարվում են պետական արժեթղթերում և ձեռնարկությունների (անկախ սեփականության ձևից) արժեթղթերում: Որպես պետական արժեթղթեր մեր երկրում 1999թվականից հանդես են գալիս կարճաժամկետ պարտատոմսերը (ՊԿՊ), 1994թ.՝ միջին-ժամկետ (ՊՄՊ) և 2005թ.՝ երկարաժամկետ պարտատոմսերը (ՊԵՊ): Պետական արժեթղթերի հաշվով փաստացի ծախսերի և անվանական արժեքի միջև եղած տարբերությունը նրանց ժամկետի և շրջանառության հաշվով հավասարապես վերաբերում են ֆինանսական արդյունքին:

Ձեռնարկությունների համագործակցությունը մրցակիցների, ներդրողների, առևտրային բանկերի և ֆոնդային բորսաների կապված ներդրումների հետ համարվում են երկարաժամկետ ֆինանսական ներդրումներ:

Երկարաժամկետ ֆինանսական ներդրումներ են կատարվում նաև դուստր ձեռնարկությունների, բաժանմունքների, մասնաճյուղերի հիմնադրման ժամանակ՝ օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ: Վերջինիս դեպքում կազմակերպվում են համատեղ ձեռնարկություններ (ՀՉ): Նրանք նպաստում են առևտրային հարցերի լուծմանը և ձեռնարկատիրական գործունեության ոլորտի ընդլայնմանը:

Ֆինանսական ներդրումները արժեթղթերում կոչվում են **փաթեթային ներդրումներ**։ Քանի որ արժեթղթերը միատեսակ չեն և ունեն տարբեր իրացվելիություն¹, եկամտաբերություն և ռիսկի աստիճան, ձեռնարկությունները ներդրումներ են կատարում կապիտալի շուկայի տարբեր հատվածներում: Ընդ որում, կապիտալին և ֆինանսական շուկային անդրադարձել ենք սույն ձեռնարկի 2-րդ գլխի երկրորդ հարցում:

Ձեռնարկության նպատակի ընտրությունից կախված, կարող են ձևավորվել արժեթղթերի տարբեր տեսակի փաթեթներ: Ընդ որում, արժեթղթերի փաթեթի տեսակը որոշվում է նրա բնույթով.

• **արժեթղթերի փաթեթ՝ կողմնորոշված եկամտի սպասման ուղղությամբ**.- Դա արժեթղթերի այն փաթեթն է, որն ապահովում է համեմատաբար բարձր եկամուտ և կոչվում է նաև **եկամտային փաթեթ**: Այդպիսի

1. Վազգեն Վարդանյան - «Բանկային գործ. Բանկային մեքենաներ. Փող. վարկեր. բանկեր», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2004, էջ 166-179:

2. Նույն տեղում - էջ 391-526:

1. Վ.Ա. Վարդանյան - Ֆինանսական մեքենաներ, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 1999 էջ 415-418:

փաթեթի նպատակն է՝ ստանալ առավել մեծ չափով ընթացիկ եկամուտ: Այն ձեռնարկությունները, որոնք ձևավորում են արժեթղթերի եկամտային փաթեթ, իրականացնում են միջոցների ներդրում արժեթղթերի շուկայի ֆինանսական գործիքներում, որը բերում է տոկոսավճար և շահաբաժին՝ միջին մակարդակից բարձր չափով: Օրինակ, առաջատար բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերում և պետական պարտատոմսերում ներդրումները, քանի որ մեր երկրում ներկայումս առավել մեծ չափով շահաբաժին, եկամուտներ ստացվում են այդ արժեթղթերի ձեռքբերումից,

• **անի փաթեթ**.- Արժեթղթերի այն փաթեթն է, որը կողմնորոշված է փոխարժեքային մեծ տարբերությամբ: Այդպիսի փաթեթի նպատակն է ապահովել կապիտալի աճ, հետևապես, ներդրողը չի կողմնորոշվում դեպի շահաբաժինների ընթացիկ վճարումները, այլ նախատեսում է շահույթի աճ,

• **ոխակային ներդրումների փաթեթ**.- Արժեթղթերի այն փաթեթն է, որ կատարվում է ոխակային ներդրում: Այդպիսի փաթեթ ունեն մեր հիմնադրված բաժնետիրական ընկերությունները, ինչպես նաև այն ձեռնարկությունները, որոնք ցանկանում են մեր տեխնոլոգիաների և մեր ապրանքի նախագծման հիման վրա ապահովել գործունեության բալձր շահութաբերություն,

• **հավասարակշռված փաթեթ**.- Արժեթղթերի այն փաթեթն է, որն ապահովում է փոխարժեքային դրական մեծ տարբերություն և բարձր իրացվելիություն: Այսպիսով, կապիտալի աճը, եկամուտների աճը և ընդհանուր ոխակերը հավասարակշռված են,

• **մասնագիտացված փաթեթ**.- Արժեթղթերի այն փաթեթն է, որը մասնագիտացված է, այսինքն արժեթղթերը միավորվում են ոչ թե ընդհանուր հատկանիշով, այլ այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են.

- **արժեթղթերի փարածքային և ճյուղային փաթեթները,**
- **արտերկրների արժեթղթերի փաթեթը:**

Ձեռնարկությունների ֆինանսական ներդրումային գործունեությունը կապված է արժեթղթային գործառնությունների ոխակերի հետ: Արժեթղթերի փաթեթի ոխակը՝ հավանականությունն է, որ կստեղծվի պայմաններ ներդրողի կորուստների համար, որը կապված է արժեթղթերում ներդրումների հետ:

Արժեթղթերն իրենցից ներկայացնում են դրամական փաստաթղթեր, որոնք հավաստում են սեփականության իրավունքը կամ փաստաթղթերի տիրոջ հարաբերությունները էմիտենտի (փոխառությունը թողարկողի)

նկատմամբ: Այլ կերպ, արժեթղթերն իրենցից ներկայացնում են ունեցվածքային բովանդակության փաստաթղթեր, երբ դրա իրավունքը չի կարող իրացվել առանց նրա տիրոջ: Արժեթղթերը կարող են գոյություն ունենալ փաստաթղթերի ձևով կամ հաշիվներում՝ գրանցման կարգով: Տնտեսապես զարգացած երկրներում նրանք հանդես են գալիս նաև հաշվառման գրքերում, հաշիվներում գրանցման կամ տեղեկատվության այլ կրողների (սկավառակ և այլն) ձևով: Այսպիսով, արժեթղթերը կարող են հանդես գալ նաև ոչ թղթային ձևով: Դրա համար էլ արժեթղթերի շուկայում թողարկվում, շրջանառվում և մարվում են ինչպես սեփական արժեթղթեր, այնպես էլ նրանց փոխարինողներ (հավաստագրեր, փաթեթներ և այլն): Արժեթղթերի հետ գործառնություններում մասնակցում են էմիտենտը (արժեթուղթ թողարկողը) և ներդրողը: Նրանցից յուրաքանչյուրը հետապնդում է միևնույն նպատակը՝ իր գործունեությունից ստանալ շահույթ: Արժեթղթերի թողարկողը, նրա վաճառքից ստանալով միջոցներ, ձգտում է այդ փողը ներդնել ձեռնարկատիրական գործունեության առավել շահութաբեր ոլորտներում, որոնք նրան հնարավորություն կտան արժեթղթերի գնորդների առջև կատարելու իր պարտավորությունները: Ներդրողն էլ հույսով է լինում, որ նրա փողի ներդրումը արժեթղթերի ձեռքբերման գործում, ապագայում կբերի մեծ շահաբաժին: Արժեթղթերն, ըստ բովանդակության, ստորաբաժանվում են.

• արժեթղթեր, որոնք ապահովում են բաժնետիրական ընկերության փայամասնակցության իրավունքը (բաժնետոմսեր, բաժնետոմսերի հավաստագրեր),

• թղթադրամներ (փոխառություններ, պետական պարտատոմսեր, մուրհակներ, կտրոններ, ապահովագրական վկայականներ և այլն),

• ապրանքաթղթեր, որն ամրապնդվում է առարկայական և հաճախ, սեփականության իրավունքով (սեփականության վկայական, ունեցվածքային թերթ և այլն), կամ ոսկու իրավունք՝ այլ ապրանքներ գնելու համար (գրավադրային վկայական և այլն):

Արժեթղթերը դասակարգվում են երկու խմբի մեջ.

- արժեթղթերը որպես սպառողական ապրանք,
- արժեթղթերը որպես շուկայական ապրանք:

Արժեթղթերը որպես սպառողական ապրանք՝ իրենցից ներկայացնում են թղթեր, որոնք չեն կարող ազատ շրջանառություն կատարել (մեկ ձեռքից մյուսն անցնել): Դրանց վերաբերում են անվանական արժեթղթերը (բաժնետոմսեր, հավաստագրեր և այլն):

Արժեթղթերը, որպես շուկայական ապրանք, իրենցից ներկայացնում են թղթեր, որնք կարող են ինքնուրույն կարգով շրջանառություն կատարել արժեթղթերի շուկայում և լինել առք ու վաճառքի կամ այլ գործարքների օբյեկտ (օրինակ, գրավադրման օբյեկտ), ինչպես նաև ծառայել պարբերաբար ստացվող եկամտի (շահաբաժին) կամ տարբեր ծախսերի աղբյուր: Հայաստանի տարածքում արժեթղթերի քողարկման, տեղաբաշխման, շրջանառության և արժեթղթերի շուկայի մասնակիցների գործունեության կարգավորման և վերահսկողության հիմնական դրույթներն ամփոփված են «Արժեթղթերի շրջանառության մասին» ՀՀ օրենքում:¹

Արժեթղթերի շուկան իրենից ներկայացնում է տնտեսական հաշվառությունների ոլորտ, որը կապված է նրանց առք ու վաճառքի հետ:

Գործնականում ոչ բոլոր արժեթղթերն են շրջանառություն կատարում արժեթղթերի շուկայում: Այսպես, այն արժեթղթերը, որոնք արտահայտվում են վալյուտայով, շրջանառություն են կատարում վալյուտային շուկայում: Այն արժեթղթերը, որոնք գնանշվում են ոսկով, շրջանառություն են կատարում քանկարժեք քարերի շուկայում: Աստիճակագրական վկայականները, կենսաբույսակային և բժշկական ապահովագիտությունը և համանման արժեթղթերը հանդիսանում են ապահովագրական շուկայի ապրանք:

Շուկաները ստորաբաժանվում են առաջնային և երկրորդային, բորսայական և արտաբորսայական շուկաների: Արժեթղթերի առաջնային շուկան իրենից ներկայացնում է այնպիսի շուկա, որը սպասարկում է արժեթղթերի քողարկումը և նրանց առաջնային տեղաբաշխումը: Արժեթղթերի երկրորդային շուկան իրենից ներկայացնում է այնպիսի շուկա, որտեղ կատարվում է նախկինում քողարկված արժեթղթերի առք ու վաճառք: Ըստ կազմակերպական ձևերի, տարբերում են բորսայական շուկա (ֆոնդային և վալյուտային բորսաներ) և արտաբորսայական շուկա: Արտաբորսայական շուկան հանդիսանում է արժեթղթերի շրջանառության այնպիսի ոլորտ, որոնք ֆոնդային բորսաներում չեն քուլտուրվում գնանշում կատարել: Արտաբորսայական շուկան կազմակերպվում է դիլերների (միջնորդների) կողմից, որոնք կարող են լինել կամ չլինել ֆոնդային բորսայի անդամներ: Արժեթղթերի արտաբորսայական շուկան անցկացվում է հեռախոսով, տելեֆաքսով, համակարգչային ցանցով: Այն, գլխավորապես, զբաղվում է բաժնետիրական այնպիսի արժեթղթերով, որոնք չունեն բաժնետոմսերի բավարար քանակ կամ եկամուտ, որպեսզի որևէ բորսա-

1. ՀՀ օրենքը արժեթղթերի շրջանառության մասին, Երևան, 1993:

յում գրանցեն (լիստինգ) իրենց բաժնետոմսերը: Արժեթղթերի հետ գործարքներն անցկացվում են ֆոնդային և վալյուտային բորսաներում, ինչպես նաև ներդրումային հիմնարկներում: Նկատի ունենալով ձեռնարկի ծավալը, սահմանափակվենք բաժնետոմսերի էության, թողարկման, ներդրման և շահաբաժնի հարցերի պարզաբանմամբ:

Բաժնետոմսեր .- Բաժնետոմսերը արժեթղթեր են, որոնք թողարկվում են բաժնետիրական ընկերությունների կողմից: Բաժնետոմսերը թողարկվում են բաժնետիրական ընկերությունների կապիտալի արժեքի հաշվով:

Հայաստանի Հանրապետությունում բաժնետիրական ընկերություններն են կազմակերպվում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2001թ. սեպտեմբերի 25-ին:¹

Բաժնետիրական ընկերություն է համարվում կոլեկտիվ կամ խառը սեփականության ձևի վրա հիմնված, իրավաբանական անձ հանդիսացող, սեփականատերերի պարտադիր գույքային մասնակցությամբ ձևավորված ընկերությունը: Բաժնետիրական ընկերության կանոնադրական հիմնադրամը բաժանված է նախօրոք սահմանված քանակով և անվանական արժեքով բաժնետոմսերից: Բաժնետիրական ընկերությունը կարող է լինել երկու տեսակի՝ բաց (ԲԲԸ) և փակ (ՓԲԸ):

Բաժնետիրական ընկերությունը կոչվում է բաց, եթե բաժնետոմսերի տարածումը իրականացվում է ազատ բաժանորդագրության ձևով և փակ, եթե բաժնետոմսերը բաշխվում են միայն հիմնադիրների միջև:

Բաժնետերերը պատասխանատու են ընկերության և իրենց բաժնետերերի առջև՝ պարտավորությունների համար: Երբ բաժնետիրական ընկերությունը ենթարկվում է ֆինանսական սնանկացման նաև գույքային պատասխանատվության է կրում բաժնետերերի առջև: Բաժնետոմսերը և ընդհանրապես արժեթղթերը՝ դրանք փաստաթղթեր են, որոնք հավաստում են ունեցվածքի իրավունքը:

Արժեթղթերին վերաբերում են բաժնետոմսերը, մորիակները, պետական պարտատոմսերը, կտրոնները, սեփականաշնորհման սերտիֆիկատները և այլ արժեթղթերը: Հուսալիության տեսանկյունից առաջին խմբի մեջ ընդգրկվում են պետական, միջազգային ֆինանսական կազմակերպությունների փոխառությունները, առաջատար կամ զարգացող բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերը: Սակայն, որքան

1. ՀՀ օրենքը «Բաժնետիրական ընկերությունների մասին», Երևան, 2001:

բարձր է արժեքների հուսալիությունը, այնքան ցածր է նրա շահութաբե-
րությունը:

Բաժնետոմսի գնման դեպքում նրա սեփականատերը դառնում է ընկե-
րության համատեր:

Եթե բաժնետերը գույն չէ ստացված շահաբաժնից, ապա կարող է ետ
վերադարձնել բաժնետոմսը: Բաժնետոմսի գինը կախող է լինել.

- **անվանական**, որը ցույց է տրվում բաժնետոմսի վրա՝ նրա թողարկ-
ման ժամանակ: Այն ցույց է տալիս սեփական կապիտալի փայաբաժինը,

- **էմիսիոն (թողարկման) գին**, որով բաժնետոմսը վաճառվում է առաջ-
նային շուկայում (ֆոնդային բորսայում): Բաժնետոմսերը, սովորաբար,
տարածում, վաճառում են միջոցառական ֆիրմաները: Բաժնետոմսի թո-
ղարկման և անվանական գնելի միջև տարբերությունը կազմում է դիվերի
եկամուտը: Միջոցառները արժեքըները գնում են թողարկողից անվանա-
կան արժեքով և վաճառում են ներդրողներին՝ բարձր գնով, որի հաշվին
ստանում են եկամուտ,

- **կուրսային (փոխարժեքային) գին**, ըստ որի բաժնետոմսը գնանշվում
է արժեքների երկրորդային շուկայում,

- **շուկայական (սլայմանագրային) գին**, ըստ որի բաժնետոմսը գնանշ-
վում է վաճառողի կողմից՝ արժեքների երկրորդային շուկայում,

- **հաշվեկշռային գին**, որը որոշվում է փաստաթղթային՝ ֆինանսական
հաշվետվությանը,

- **լուծարային գին**, որը որոշվում է իրական ունեցվածքի արժեքի մի
մասի՝ փաստացի վաճառքի ձևով:

Ունեցվածքի (բաժնետոմսերի) արժեքի 51 տոկոսը կոչվում է բաժնե-
տոմսերի ծրար, որն էլ բաժնետերին տալիս է կառավարման իրավունք:
Բաժնետերերն ունեն ձայնի իրավունք՝ կախված բաժնետոմսերի քանա-
կից, այսինքն՝ սեփական կապիտալից: Գոյություն ունի բաժնետոմսերի
եկամուտ, որը հանդիսանում է նրա ներդրման շնորհիվ ստացված դիվի-
դենդը (շահաբաժինը):

Սովորական բաժնետոմսերի շահաբաժինը վճարվում է հաշվետու
ժամանակաշրջանի վերջում՝ ելնելով ԲԸ-ի գործունեության շահութաբե-
րությունից:

Վերջինս իրենից ներկայացնում է գուտ շահույթի (համախառն շա-
հույթի և շահութահարկի տարբերությունը) հարաբերությունը կապիտա-
լին և հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$C_p = \frac{C_q \cdot 100}{Y}, \text{ որտեղ՝}$$

C_p -ն՝ շահաբաժնի գումարն է,

C_q -ն՝ գուտ շահույթը,

Y -ն՝ կապիտալը:

Այսպես, եթե կապիտալի շահութաբերությունը կազմել է 30% և բաժ-
նետերն ունի 200 հազար դրամի բաժնետոմսեր (20 բաժնետոմս՝ յուրա-
քանչյուրը 10 հազար դրամ անվանական արժեքով), ապա շահաբաժնի տա-
րեկան գումարը կկազմի՝

$$200 \text{ հազ. դրամ} \times 30 \% : 100 \% = 60 \text{ հազար դրամ:}$$

Արտոնյալ բանետոմսերի տերերը շահաբաժինը օտանում են նախօ-
րոք ֆիքսված չափով (%-ով բաժնետոմսի անվանական արժեքի նկատ-
մամբ), որի հաշվարկման կարգը կլինի նույնը:

Թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում ստանա-
լով դրամական միջոցներ՝ թողարկողը հնարավորություն է ունենում օգ-
տագործելու այն՝ ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ընթացիկ նյու-
թական ակտիվների (սլայմանագրային) ձևավորման համար:

Բաժնետոմսն անբաժանելի է, այսինքն՝ բաժնետոմսի համատեղ տի-
րապետում չի նշանակում սեփականության իրավունքի բաժանում,
նրանք բոլորը միասին ներկայացնում են որպես մեկ անձ:

Մեկ բաժնետոմսը տալիս է մեկ ձայնի իրավունք:

Բաժնետոմսերը կարող են միաձուլվել (կոնսոլիդացվել, համախմբվել)
և տրոհվել (բաժանվել):

Տրոհման դեպքում մեկ բաժնետոմսը բաժանվում է մի քանի բաժնե-
տոմսերի: Թողարկողի կողմից բաժնետոմսի այդ հատկությունը կարող է
կիրառվել տվյալ տեսակի բանետոմսի նկատմամբ՝ առաջարկի նվազեց-
ման համար: Տրոհման ժամանակ կանոնադրական կապիտալի մեծու-
թյունը չի փոխվում: Հազար դրամ անվանական արժեքով բաժնետոմսի
դեպքում թողարկվում է չորս հատ նորը՝ 250 դրամ անվանական արժեքով
բաժնետոմս: Բաժնետերերից ետ են վերցվում հին հավաստագրերը և
բաժանվում են նորերը, որոնցում նշվում է, որ նրանք տիրապետում են
թվով ավելի շատ բաժնետոմսերի:

Միաձուլման դեպքում բաժնետոմսերի թիվը նվազում է, սակայն կա-
րող է բարձրանալ շուկայական գինը: Այսպիսով, անվանական արժեքը
մեծանում է, իսկ կանոնադրական կապիտալը մնում է անփոփոխ: Բաժ-

նետերերին տրվում են նոր հավաստագրեր՝ հենրի փոխարեն, որտեղ նշված են թվով ավելի քիչ բաժնետոմսեր:

Բաժնետոմսը՝ ֆորմալ փաստաթուղթ է, այդ պատճառով, համաձայն արժեթուղթ հասկացության սահմանման, այն պետք է բովանդակի պարտադիր վավերապայմաններ: Տպագրական եղանակով պատրաստված բաժնետոմսը կամ նոր հավաստագիրը պետք է համապատասխանի ՀՀ իրավական ակտերով սահմանված արժեթուղթերի պաշտպանվածության պահանջներին:

Բաժնետոմսը կարող է թողարկվել լինչպես փաստաթղթային, այնպես էլ ոչ փաստաթղթային ձևով՝ որոշակի հաշիվների վրա գրանցումներ կատարելով: Փաստաթղթային ձևով թողարկման ժամանակ հնարավոր է բաժնետոմսի փոխարինումը հավաստագրով, որով հաստատվում է նրանում նշված անձի կողմից ընկերության որոշակի թվով բաժնետոմսերի տնօրինումը: Բաժնետոմսերի արժեքը վճարելուց հետո բաժնետերը՝ իր կողմից ձեռք բերած բոլոր բաժնետոմսերի դիմաց ստանում է մեկ հավաստագիր:

Գործող օրենսդրության համաձայն, բաժնետոմսերի հավաստագիրը հանդիսանում է արժեթուղթ և պետք է համապատասխանի ՀՀ իրավական ակտերով սահմանված արժեթուղթերի պաշտպանվածության կարգին:

Սովորական բաժնետոմսի սեփականատերն ունի այն բոլոր իրավունքները, որոնք հավաստված են բաժնետոմսով (մասնակցել ընկերության ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ստանալ շահաբաժին ընկերության գործունեությունից առաջացած շահույթից, իսկ ընկերության լուծարման դեպքում՝ ստանալ ընկերության գույքի իրեն հասանելի մասը և այլն):

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում արտոնյալ բաժնետոմսի սեփականատերը չի ստանում ձայնի իրավունք: Նրա արտոնյալները կայանում են նրանում, որ ընկերության կանոնադրությամբ և թողարկման պայմաններով սահմանվում է արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահաբաժինը և լուծարային արժեքը, որը վճարվում է ընկերության լուծարան ժամանակ: Արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահաբաժնի չափը և լուծարային արժեքը սահմանվում են դրամական ձևով:

Արժեթղթերի և այլ պարտատոմսերի թողարկումն ու տեղաբաշխումն իրականացվում է «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով, իսկ առևտրային բանկերի համար՝ նաև Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված կանոնակարգերով: Բաժնետիրական

ընկերության թողարկած բաժնետոմսերի անվանական արժեքի գումարը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալին:

Բաժնետոմսերի թողարկման մասին որոշումը կայացնում է բաժնետիրական ընկերության խորհուրդը և հաստատում է բաժնետերերի ընդհանուր ժողովը: Որպեսզի ձեռնարկությունն իրավասու լինի թողարկել բաժնետոմսեր, նա պետք է լինի շահութաբեր (հիմնադրման ժամանակ թողարկվում է միայն սովորական բաժնետոմսեր)՝ վերջին երեք տարում կամ հիմնադրման ժամանակից երեք տարի անց պետական մարմինների կողմից չպետք է ենթարկված լինի տնտեսական սանկցիայի (տույժի և տուգանքի) ու չպետք է ունենա հետաձգված կրեդիտորական ընթացիք պայտքեր, պայտք՝ պետբյուջեին և արտաբյուջետային հիմնադրամին: Բաժնետոմսերի թողարկումը գրանցելու համար, ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

- դիմում գրանցման մասին,
- բաժնետոմսերի թողարկման մասին որոշման քաղվածք,
- թողարկման թույլտվություն,
- տեղեկանք՝ տնտեսական մրցակցության հանձնաժողովից, որ համաձայն են թողարկել բաժնետոմսեր:

Բաժնետոմսերի թողարկման թույլտվությունը պատրաստում է բաժնետիրական ընկերության խորհուրդը ու ստորագրվում նախագահի և գլխավոր հաշվապահի կողմից: Թույլտվությունը պետք է բովանդակի տեղեկություններ ձեռնարկության անվանման, ֆինանսական վիճակի, արժեթղթերի թողարկման մասին: Եթե թողարկումը երկյուրդ անգամ է կազմակերպվում, ապա այն պետք է հաստատվի անկախ անուղիտորական կազմակերպության կողմից: Այդ նպատակով տրվում է պետական գրանցման համար (No): Գրանցման ներկայացվող փաստաթղթերը և գրանցման մասին նամակ-գրությունը պետք է ստորագրվի իրավասու անձի և հաստատվի գրանցման մարմնի կողմից՝ կլոր կնիքով և ներկայացվի թողարկողին: Եթե բաժնետոմսերի թողարկման մասին գրանցումը ուղեկցվում է թողարկման թույլատրելիության գրանցմամբ, ապա բաժնետոմսեր թողարկողը տեղեկություն է հրապարակում մամուլում: Թողարկողը կարող է զբաղվել արժեթղթերի վաճառքով միայն նրա թողարկումը գրանցվելուց հետո: Մինչև պետական գրանցումը ձեռնարկությունը իրավասու չէ գովազդել արժեթղթերի վաճառքի մասին: Բաժնետոմսերի տեղաբաշխումը կարող է կատարվել մի քանի եղանակով.

առաջին, բաժնեկրթերից ընդունվում է բաժնեկրթական անդա-

մալճար՝ ձեռնարկության կանոնադրական կապիտալը նյութական ակտիվների ձևով լրացնելու համար (միայն այնպիսի ակտիվներ, որոնք կարող են օգտագործվել գործունեության ժամանակ): Ձեռնարկության հիմնադրման ժամանակ այդ չափը չի կարող անցնել կանոնադրական կապիտալի 20 %-ը, հետագա լրացման դեպքում ոչ ավել 10 տոկոսը: Հաշվեկշռով շենքն ընդունվում է, եթե այն ունի պետական գրանցում: Բաժնետերերի կողմից տրված նյութական արժեք ունեցող ակտիվները համարվում են ձեռնարկության սեփականությունը,

երկրորդ, **բաժնեկրոնների վաճառքի կազմակերպում արգարժություն** առք ու վաճառքի պայմանագրի հիան վրա: Այս դեպքում ձեռնարկությունը կարող է օգտվել միջնորդների (ֆինանսական բյուրոյի) ծառայությունից, որի հետ կնքում է հատուկ պայմանագիր:

Եթե բաժնետոմսի արժեքի վճարումը կատարվում է արժույթով, ապա հնարավոր է վճարման հետաձգում, պայմանով, որ մեկ տարվա ընթացքում վճարվի բաժնետոմսի արժեքը:

երրորդ, **բաժնեկրոնների կոնսոլիդացումը (համախմբումը)**, այսինքն՝ փոխարինումը նոր անվանական բաժնետոմսերով,

չորրորդ, **բաժնեկրոնների անվանական արժեքի նվազեցումը**, այսինքն, մի բաժնետոմսի տրոհումը մի քանի բաժնետոմսերի (նվազ անվանական արժեքով): Ձեռնարկության կողմից բաժնետոմսերի իրացման գործընթացն ավարտելուց հետո վերլուծում են նրա արդյունքները և թողարկման հանրագումարի առումով կազմում են հաշվետվություն:

Հաշվետվությունը ստորագրում են բաժնետիրական ընկերության նախագահը և գլխավոր հաշվապահը և հաստատվում է կլոր կնիքով: Առաջին թողարկման հաշվետվությունը ներկայացվում է լիցենզիայի հետ միասին: Գրանցող մարմինը երկու շաբաթվա ընթացքում ստուգում է հաշվետվությունը և դիտողություններ չլինելու դեպքում, գրանցում է: Դրանից հետո, գրանցող մարմինը, էմիտենտ ձեռնարկությանը տալիս է նամակ՝ գրանցման մասին: Այդ նամակի առաջին օրինակը ներկայացվում է հրատարակչություն՝ բաժնետոմսերը հրատարակելու համար:

Արժեթղթերի թողարկման հանրագումարը էմիտենտ ընկերությունը հրապարակում է նույն մամուլում, որտեղ հրապարակվել է նրանց թողարկման մասին: Բոլոր բաժանորդագրված բաժնետոմսերի արժեքը բաժնետերերի կողմից պետք է վճարվի մեկ տարվա ընթացքում:

Բաժնետոմսերն ունեն կուրս,, այսինքն՝ փոքարժեքային գին, ըստ որի բաժնետոմսը գնանշվում է (կատիրովկա) արժեթղթերի շուկայում և որով

զնվում ու վաճառվում է բաժնետոմսը:

Բաժնետոմսի կուրսը կախված է առաջին, դիվիդենտի (շահաբաժին) մեծությունից, երկրորդ, փոխառվական տոկոսի չափից:

Բաժնետոմսերի կուրսը, այսինքն փոխարժեքային գինը որաշվում է հետևյալ կարգով.

$F = T : F_{տ} \times 100 \%$, որտեղ՝
Դ-ն՝ դիվիդենտն է (շահաբաժինը),
Բտ-ն՝ բանկային վարկի տոկոսը:

Գործնական խնդիր 3

13 հազար դրամ անվանական արժեքով բաժնետոմսը բաժնետիրույցը տարեկան բերում է 6 հազար դրամ շահաբաժին, բանկային կարճաժամկետ վարկի տոկոսը՝ 3 տոկոս: Պահանջվում է որոշել բաժնետոմսի փոխարժեքային գինը:

Լուծում

$F_{կ} = T : F_{տ} \times 100 \% = 6000 \text{ դրամ} : 4\% \times 100\% = 15$ հազար դրամ:

Բաժնետոմսերը վաճառվում են շուկայական գնով: Բաժնետոմսերը ներդնելով արտադրության մեջ, ստանում են հիմնադիր շահույթ: Այն իրենից ներկայացնում է շուկայական գնով վաճառված բաժնետոմսերի արժեքի և արտադրության մեջ ներդրված իրական կապիտալի արժեքի միջև եղած տարբերությունը:

Խնդիր 4 -Բաժնետիրական ընկերությանը անհրաժեշտ է 56.0 մլն դրամ կապիտալ, բաժնետոմսերի շահաբաժին է նախատեսվում 28 մլն դրամ, բանկի վարկի տոկոս՝ 4 տոկոս: Յուրաքանչյուր բաժնետոմսի շահաբաժինը նախատեսվում է 280.0 դրամ:

Որոշել բաժնետոմսերի փոխարժեքը և անհրաժեշտ կապիտալի չափով բաժնետոմսերի քանակը:

Լ ո ծ ո մ

Բաժնետոմսերի փոխարժեքը կկազմվի՝

- 1) $F_{կ} = T : F_{տ} \times 100 \% = 280 \text{ դրամ} : 4\% \times 100\% = 7000$ դրամ,
- 2) Քանի որ ԲԲԸ-ն ունի 56 մլն դրամի կապիտալի ներդրման կարիք, իսկ բաժնետոմսերի փոխարժեքը 7 հազար դրամ է, ապա թվում է, թե պետք է թողարկել 56 մլն դրամ : 7 հազար դրամ 8000 բաժնետոմս,
- 3) Քանի որ բաշխման ենթակա շահույթի չափը նախատեսվում է 28 մլն դրամ, իսկ ամեն մի բաժնետոմսի հաշվով շահաբաժինը՝ 280 դրամ, ապա կթողարկվի 28 մլն դրամ : 280 դրամ = 10000 բաժնետոմս,

սավարող սուբյեկտների (առ 01.01.05թ.՝51393 սուբյեկտ) 9.8 տոկոսը: Չեռնարկությունների տնտեսաֆինանսական գործունեության վերջնական ֆինանսական հետևանքը համարվում է շահույթը կամ վնասը: Սակայն, շուկայական տնտեսության պայմաններում մրցակցային պայմաններին դիմանալու համար ձեռնարկությունները որպես սպարանքարտադրողներ, պատահադի պետք է սշխատեն շահույթով: Տնտեսական շահույթը համարվում է ժամանակակից տնտեսագիտության տեսության բարդ և բանավեճային հիմնախնդիրներից մեկը: Տնտեսագիտական տեսանկյունից շահույթը դրամական միջոցների մուտքի և վճարումների տարբերությունն է: Տնտեսական տեսակետից ձեռնարկության գոյքային ունեցվածքի հաշվետու ժամանակաշրջանի վերջի և սկզբի դրությամբ տարբերությունն է: Մինչդեռ, շահույթը հաշվարկվում է որպես ձեռնարկության տնտեսաֆինանսական գործունեության ֆինանսական արդյունք: Ընդ որում, այն հաշվարկվում է իրացված ապրանքի (ծառայությունների) և ոչ թե արտադրված արտադրանքի հաշվով: Հետևապես, շահույթն իրենից ներկայացնում է ապրանքների իրացումից (ծառայությունների մատուցումից) ստացված դրամական միջոցների մուտքի և ընթացիկ ծախսերի տարբերությունը: Եվ ընդհակառակը՝ կտացվի վնաս: Այլ կերպ, շահույթը ապրանքի իրացումից ստացված հասույթի և ինքնարժեքի տարբերությունն է: Ապրանքի միավորի իրացումից շահույթն իրենից ներկայացնում է իրացման գնի և ինքնարժեքի տարբերությունը, այսինքն՝ $C = Q - I$, որտեղ՝

C -ն շահույթն է,

Q -ն՝ ապրանքի իրացման գինը,

I -ն՝ ապրանքի միավորի ընդհանուր ինքնարժեքը:

Չեռնարկության տնտեսաֆինանսական գործունեության հաշվով ապրանքի իրացումից համախառն շահույթի ծավալը որոշելու համար, այս պայմանում ապրանքի մեկ միավորի հաշվով շահույթը հարկ է բազմապատկել իրացված ապրանքի ծավալով: Ինչ վերաբերում է համախառն արտադրանքի հաշվով տնտեսական արդյունավետության հաշվարկմանը, այս հարկ է նկատի ունենալ, որ համախառն արտադրանքի հաշվով տնտեսական արդյունքը կոչվում է գուտ եկամուտ և ոչ թե շահույթ: Ընդ որում, գուտ եկամուտը իր բացարձակ մեծությամբ ավելին է, քան շահույթը: Այսպես, ձեռնարկություններն իրենց արտադրած արտադրանքի մի մասն օգտագործում են արտադրական կարիքների համար: Օրինակ, գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները արտադրական կարիքների համար սեփական արտադրությունից առանձնաց-

նում են սերմեր, կերել և այլն: Արտադրական կարիքների համար իրենց սեփական արտադրանքից օգտագործում են նաև արդյունաբերական ուղղ ձեռնարկություններ: Համախառն արտադրանքը հաշվով գուտ եկամտի ծավալը հաշվարկելու համար անհրաժեշտ իրացման գներով հաշվարկված համախառն արտադրանքի արժեքից հանել նրա ինքնարժեքը: Տնտեսագիտական հասկացությամբ համախառն արտադրանքի արժեքի (իրացման գներով) և ինքնարժեքի տարբերությունը կոչվում է գուտ եկամուտ (Եգ), իսկ համախառն արտադրանքի արժեքի (ΣU) և նյութական ծախսերի (ΣG) տարբերությունը՝ համախառն եկամուտ (ΣE):

Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$\Sigma E = \Sigma U - \Sigma G$ և $\Sigma E = \Sigma U - \Sigma I$, որտեղ՝

ΣI -ն համախառն արտադրանքի ինքնարժեքն է:

Հարկ է նկատի ունենալ, որ վերը նշված ցուցանիշները կոչվում են միկրոտնտեսական ցուցանիշներ, որպեսզի տարբերվեն կանոնադրական «Չեռնարկությունների տնտեսագիտություն» դասընթացի 14-րդ գլխի 3-րդ հարցում:

Շահույթի տնտեսական էությունը պատկերացնելու համար պարզաբանենք եկամուտների աղբյուրները և շահույթի ձևավորման մեխանիզմը: Եկամուտ անվան ենթոց հասկացվում է տնտեսապես ձեռնառու արդյունքի ավելացումը դրամական մուտքերի ձևով, այլ ունեցվածք, որն ավելացնում է կապիտալը:

Չեռնարկության եկամուտները ձևավորվում են ապրանքների իրացումից, ծառայությունների մատուցումից և ոչ գործառնական գործունեությունից, որին անդրադարձել ենք 8-րդ գլխի երրորդ հարցում:

Այժմ ցույց տանք ձեռնարկության եկամուտների և շահույթի ձևավորումը (Ուրվագիծ 14):

Սակայն ձեռնարկությունները շահույթ են ստանում ոչ միայն ապրանքի իրացումից, ծառայությունների մատուցումից, այսինքն՝ գործառնական գործունեություններից, այլև գործառնական այլ և ոչ գործառնական գործունեություններից, որոնց մի մասը (նախորդ և հաշվետու տարվա եկամուտ) բացահայտվել են տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց հետո: Նշված բոլոր ուղղություններից ստացված շահույթը կոչվում է համախառն շահույթ: Այդ շահույթը հաշվարկվում է հաշվապահական հաշվառման հիման վրա, դրա համար էլ նրան անվանում են նաև հաշվեկշռային՝ հաշվապահական շահույթ: Մինչդեռ, այն չի արտացոլում տնտեսական գործունեության իրական արդյունքը: Հետևապես, տնտեսագիտական հասկացությամբ առանձնացվում է հաշվապահական և

տնտեսական շահույթ հասկացությունները: Ընդ որում, հաշվապահական, այսինքն հաշվեկշռային շահույթը ստացվում է տնտեսաֆինանսական (գործառնական և ոչ գործառնական գործունեությունից), իսկ տնտեսական շահույթը՝ կապիտալի գործառնությունից:


Շահույթի անվանման այդ զաղափարը (հաշվապահական և տնտեսական շահույթ) առաջին անգամ ցույց է տվել ամերիկացի տնտեսագետ-գիտնական Դեվիդ Սոլոմոնը: Նա հաշվի է առել այն տնտեսական նախադրյալները, որ շահույթի հայեցակետը անհրաժեշտ է նետել այլ երեք նպատակների համար.

- հարկերի հաշվարկումը,
- կրեդիտորների պաշտպանությունը,
- ներդրումային խելամիտ քաղաքականության մշակումը:

Հետևապես, հաշվապահական շահույթը անընդունելի է ներդրումների համար:

Դ. Սոլոմոնը մշակել է մի բանաձև, որը որոշում է հաշվապահական և տնտեսական շահույթի միջև կապը.

Ապրանքի իրացումից հասույթի օգտագործումը



1. Я.В. Соколов - Бухгалтерский учет от истоков до наших дней, М. 1996.

Հաշվապահական շահույթ

+

Հաշվեկրու ժամանակաշրջանում ակտիվների արժեքի ավելացման փոփոխություն

-

Նախորդ ժամանակաշրջանում ակտիվների արժեքի նվազեցման փոփոխություն

+

Ապագա ժամանակաշրջանում ակտիվների արժեքի ավելացման փոփոխություն

=

Տնօրենական շահույթ:

Տնտեսագիտական այս մուտեցումը ենթադրում է գուղվիլի հաշվարկումը: Ձեռնարկությունը որպես մի ամբողջություն, ունի գնահատական, (ֆիրմային գին). որը տարբերվում է նրա համընդհանուր ակտիվների արժեքից: Այդ մեծությունների տարբերությունը կոչվում է գուղվիլ, այսինքն՝ ֆիրմայի գին (ոչ նյութական ակտիվների տեսակ, որն արտացոլում է ֆիրմայի հեղինակությունը): Գուղվիլին մամուլամասն անդրադարձել ենք 8-րդ գլխի չորրորդ հարցում:

Ժամանակակից հաշվապահական հաշվառման տեսության մեջ և ամենից առաջ անգլիալեզու երկրներում, տարբերում են շահույթի հարկային և տնտեսական հայեցակետ: Ելնելով այդ տեսակետից, շահույթի ծավալը հնարավոր է հաշվարկել երկու տարբերակով: Առաջին տարբերակի դեպքում հաշվապահական շահույթը հավասար է շահութահարկին, երկրորդ դեպքում՝ նրանց գումարները չեն համընկնում: Այլ կերպ. առաջին տարբերակի դեպքում հաշվապահական (ֆինանսական) տեղեկատվությունն օգտագործողների հայացքն ուղղված է դեպի անցյալը, երկրորդ տարբերակի դեպքում՝ դեպի ապագան: Երկրորդ տարբերակի դեպքում հաշվի է առնվում այն փաստը, որ ֆինանսական հաշվետվությունների տվյալներն ազդում են ձեռնարկության բաժնետոմսերի փոխարժեքի վրա: Դրա համար էլ շահույթի ծավալը, ոչ ոչ ցույց է տրվում հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական հետևանքներին, այսինքն՝ շահույթի և վնասի մասին հաշվատվությունում, տարբեր է, որից էլ հաշվարկվում է շահութահարկը: Հետևապես, որպես շահույթ կարելի է հաշվել ավելացված արժեքի այն մասը, որը ստեղծվել է ապրանքի իրացման, ծառայությունների մատուցման արդյունքում: Այլ ակտիվների իրացումը, ոչ իրացման գոր-

ծառնություններից մուտքերը և այլ մուտքերը ձևավորում են եկամուտ: Այնուամենայնիվ, հարկային համակարգով շահույթի և եկամտի այդպիսի բաժանումն անխատեսված չէ: Ըստ էության, եկամուտների բոլոր տեսակի մուտքերը՝ համաժ ընթացիկ ծախսերը, ճանաչվում է որպես շահույթ:

Շահույթը, որպես ֆինանսներ, կատարում է մի շարք գործառույթներ:

- առաջին, շահույթը հանդիսանում է ձեռնարկության տնտեսաֆինանսական գործունեության արդյունավետության չափանիշը և ցուցանիշը: Այլ կերպ, շահութաբերությունը (շահույթի հարաբերությունը իրացված արտադրանքի ինքնարժեքին կամ կապիտալին) վկայում է ձեռնարկության գործունեության արդյունավետության մասին,

- երկրորդ, շահույթը կատարում է խթանման գործառույթ: Շահույթը հանդիսանալով ձեռնարկության տնտեսական գործունեության վերջնական ֆինանսական հետևանքը, շուկայական տնտեսության պայմաններում ձեռք է բերում վճռական դեր: Այն հանդիսանում է տնտեսավարող սուբյեկտների գործունեության վերջնական նպատակը, սեփական կապիտալի աճի հիմնական աղբյուրը: Շուկայական տնտեսության պայմաններում սեփականատերերը և մենեջերները կողմնորոշվելով դեպի շահույթը, որը մնում է ձեռնարկության տրամադրության ներքո (համախառն շահույթի և շահութահարկի տարբերությունը) ընդունում են որոշում՝ շահաբաժնային և ներդրումային քաղաքականության մասին, որն անցկացվում է ձեռնարկությունում, հաշվի առնելով նրա զարգացման հեռանկարը: Շահույթը շուկայական տնտեսության մեջ հանդիսանում է շարժիչ ուժ և արտադրության միջոցների ու արտադրանքի թողարկման աղբյուր: Եվ վերջապես, շահույթը հանդիսանում է ձեռնարկության աշխատանքային կողեկտիվի համար որպես սոցիալական բարիք: Շահույթի հաշվին, որը մնում է ձեռնարկության տրամադրության ներքո (շահութահարկը, շահաբաժինների վճարումը և պահուստային կապիտալին հատկացում կատարելուց հետո), օգտագործվում է աշխատողների նյութական խրախուսման համար,

- երրորդ, շահույթը հանդիսանում է տարբեր մակարդակների բյուջեների եկամուտների ձևավորման աղբյուր, քանի որ տնտեսավարող սուբյեկտները մուծում են շահութահարկ, որին անդրադարձել ենք սույն ձեռնարկի 3-րդ գլխի ութերորդ հարցում:

Շահույթի մի մասը մուտք է լինում պետական բյուջե և նաև տույժ և տուգանքների ձևով ու օգտագործվում է տարբեր նպատակով, որը կազմում է բյուջեների ծախսային մասը: Այսպիսով, ձեռնարկության շահույթը

հանդիսանում է նրա սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական գործոնը: Դա բխում է ձեռնարկատիրական գործունեության մպատակից: Ժամանակակից արևմտյան տնտեսագետ- գիտնականները այդպես են ձևակերպում բաժնետիրական ընկերության մպատակը, որը համարվում է տնտեսապես զարգացած երկրների ձեռնարկատիրական գործունեության առավել տարածված ձևը: Ընկերության մպատակները համարվում են¹.

- բաժնետիրական սեփականության արդյունավետ օգտագործումը,
- կառավարչական արդյունավետ խրախուսումը,
- առավելագույն շահույթի ապահովումը,
- կորպորատիվ վերաբերմունքը,
- սոցիալական պատասխանատվությունը:


Գոյություն ունի շահույթի համակարգ հասկացությունը, որն իրենից ներկայացնում է համախառն շահույթի կազմը: Համախառն շահույթը բաղադրվում է տեսակի գործունեությունից ստացված շահույթի հանրագումարն է: Ըստ ՀՀ «Շահութահարկի մասին» օրենքի, շահույթը դիտվում է որպես համախառն եկամտի և ընթացիկ ծախսերի տարբերությունը: Որպես համախառն եկամուտ նկատի է առնվում բոլոր տեսակի եկամուտների հանրագումարը, այն դեպքում, երբ տնտեսագիտական հասկացությամբ համախառն եկամուտը համախառն արտադրանքի այժեքի (իրացման գներով) և նյութական ծախսերի տարբերությունն է: Ձեռնարկություններում համախառն շահույթը ստացվում է գործառնական և ոչ գործառնական գործունեություններից, արտասովոր դեպքերից և նախորդ տարիների բացահայտված եկամուտներից: Ըստ էության, համախառն շահույթը համարվում է նաև հաշվեկշռային, այսինքն՝ հաշվապահական շահույթ: Համախառն շահույթից ձեռնարկությունները մոծում են շահութահարկ, հետևապես, ըստ Դևիդ Սոլոմոնի, բաժանվում է հարկվող և չհարկվող շահույթի: Հարկվող շահույթը շահութահարկն է: Չհարկվող շահույթը մնում է ձեռնարկության տրամադրության ներքո, հետևապես կոչվում է մնացորդային շահույթ: Այն բաշխվում է կուտակման (արտադրության և տեխնիկայի զարգացման) ֆոնդի և սպառման ֆոնդի (տնտեսական խթանման ֆոնդերի): Այսպիսով, շահույթի համակարգը իրենից ներկայացնում է տարբեր տեսակի շահույթի ամբողջությունը: Շահույթի համակարգի տարրերն են՝ համախառն շահույթը, հաշվեկշռային շահույթը, հաշվապահական շահույթը, հարկվող և չհարկվող շահույթը, մնացորդա-

յին շահույթը և բաշխման ենթակա շահույթը՝ որպես զուտ շահույթ:

Շահույթի նշված ձևերը համարվում են համախառն շահույթի տարրերը, որով որոշվում է նրա կազմը: Շահույթի համակարգի մեջ ներառվում է նաև տնտեսական շահույթը: Այժմ ցույց տանք համախառն շահույթի բաշխման կարգը (Ուրվագիծ 15):

Ուրվագիծ 15

Համախառն շահույթի բաշխման կարգը ձեռնարկություններում



1. Д.х. Шум , Д.х. Сиге - Финансовый менеджмент , М.1996.

Ձեռնարկության տրամադրության ներքո մնացած շահույթը բաշխվում է նրա հայեցողությամբ (տուկուսով՝ մնացորդային շահույթի նկատմամբ), որի մասին նշվում է կանոնադրության մեջ: Կուտակման և սպառման ֆունդերի միջոցները օգտագործելու նպատակով նախօրոք կազմվում է նախահաշիվներ:

Ձեռնարկության շահույթի ծավալն ըստ գույացման աղբյուրների, ցույց տանք «Աթենք» մասնաբերքի կոմբինատ ՍՊԸ-ի հաշվետվական նյութերով (Այլուսակ 10):

**Համախառն շահույթի ձևավորման աղբյուրները և չափը
«Աթենք» մասնաբերքի կոմբինատ ՍՊԸ-ում, հազ.դրամ**

No	Ցուցանիշները	Հասույթը (եկամուտը)	Ընթացիկ ծախսերը (ինքնարժեքը)	Շահույթը
1.	Ապրանքների իրացումից հասույթ	63169.0	61513.0	1656.0
2.	Այլ ապրանքների իրացումից հասույթ	13896.0	13896.0	-
	Ապրանքի իրացման ֆինանսական արդյունք	77065.0	75409.0	1656.0
3.	Գործառնական այլ եկամուտներ	6000.0	1650.0	4350.0
	Գործառնական ֆինանսական արդյունք	83065.0	77059.0	6006.0
4.	Ներդրումային արդյունքը	-	-	-
5.	Ֆինանսական արդյունքը	-	-	-
	Տնտեսաֆինանսական գործու ներդրանքի ֆինանսական արդյունքը	83065.0	77059.0	6006.0
6.	Արտասովոր դեպքերի ֆինանսական արդյունքը	-	-	-
	Հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքը	83065.0	77059.0	6006.0
7.	Նախորդ տարվա բացահայտված արդյունքը	-	-	-
	Ամբողջ ֆինանսական արդյունքը	83065.0	77059.0	6006.0
8.	Շահութահարկ	X	X	1201.0
9.	Զուտ շահույթ	X	X	4804.8

Ինչպես երևում է, «Աթենք» մասնաբերքի կոմբինատ ՍՊԸ-ն գործառնական գործունեությունից ստացել է շուրջ 6 մլն դրամի շահույթ, որը կազմում է 83 մլն դրամ հասույթի և 77 մլն դրամ ընդհանուր ինքնարժեքի տարբերությունը: Ընդ որում, տարբեր տեսակի (եփած և ապխտած) երշիկեղենի լրացումից հասույթը կազմել է 77 մլն դրամ, ինքնարժեքը՝ 75.4 մլն դրամ և լրացումից հասույթը՝ մոտ 1.7 մլն դրամ: Բացի այդ, գործառնական այլ եկամուտներից հասույթը կազմել է 6 մլն , ինքնարժեքը՝ մոտ 1.7 մլն և շահույթը՝ 4.3 մլն դրամ:

Ձեռնարկությունը այլ գործունեություն չի ծավալել, հետևապես ֆինանսական որևէ արդյունք չի ստացել:

Այսպիսով, ձեռնարկության համախառն շահույթը կազմել է 6 մլն դրամ, որից շահութահարկ է մուծել 1.2 մլն և զուտ շահույթը, «Խյսիմքն» մնացորդային (բաշխման ենթակա) շահույթը կազմել 4.8 մլն դրամ: Ընդ որում, մնացորդային շահույթը բաշխվել է կուտակման և սպառման ֆունդերի միջև, որի միջոցների օգտագործման համար կազմել է նախահաշիվներ:

8.8.Անվճարաբերության ապահովումը գործառնական լծակի արդյունավետության միջոցով

«Ձեռնարկությունների տնտեսագիտություն» և «Ձեռներեցության հիմունքներ» դասընթացներով որոշվում է ապրանքի լրացման ծավալն, որն ապահովվի անվճարաբերություն, այսինքն հասույթի հաշվին փոխհատուցվի սահմանային ծախսերը և լրացուցիչ ապրանքի (ծառայության) իրացման հաշվին ապահովվի շահույթ:

«Ֆինանսների ընդհանուր տեսություն» և «Ձեռնարկությունների ֆինանսներ» դասընթացներով դա հայտնի է «Գործառնական լծակի արդյունավետություն» գաղափարով: Ընդ որում, գործառնական լծակի ներգործությունը շահույթի վրա և նրա արդյունավետությունը պարզելու համար նախ, պարզաբանենք համախառն շահույթի ձևավորման և նրա հաշվարկման կարգը: Շահույթի աղբյուրները համարվում են.

առաջին, **գործառնական գործունեությունից ստացված շահույթը:** Գործառնական է համարվում տնտեսավարող սուբյեկտների հիմնական գործունեությունը, ըստ որի ապրանքի (ծառայության) իրացումից ստացված դրամական միջոցների մուտքի (հասույթի) հաշվին փոխհատուցվում է ընթացիկ ծախսերը (ինքնարժեքը), անուղղակի հարկերը (ավելացված արժեքի հարկ և ակցիզային հարկ) և տարբերությունը կազմում է շահույթը,

երկրորդ, **ոչ գործառնական գործունեությունից ստացված շահույթը՝** ուրպես եկամուտների և ծախսերի տարբերություն: Ոչ գործառնական է

կոչվում ոչ հիմնական գործունեությունից, այսինքն այլ ապրանքի (ծառայության) իրացումից ստացված շահույթը՝ որպես եկամուտների ու ծախսերի տարբերություն,

երրորդ, **արտասովոր դեպքերից ստացված շահույթը**՝ որպես եկամուտների և ծախսերի տարբերություն: Արտասովոր դեպքերը, միանվագ, հազվագյուտ, բիզնես-ծրագրով չնախատեսված դեպքեր են, որի շնորհիվ ստացվում են եկամուտներ, կատարվում հազվագյուտ միանվագ ծախսեր և դրանց տարբերությունը ևս համարվում է շահույթ:

Նշված երեք ուղղություններից ստացված շահույթը համարվում է տնտեսավարող սուբյեկտի **համախառն շահույթը**: Ինչպես նշել ենք, այն բաժանվում է հարկվող և չհարկվող շահույթի: Ընդ որում, ապրանքի (ծառայության) իրացումից ստացված համախառն հասույթի և փոփոխում ծախսերի տարբերությունը ֆինանսական հասկացությամբ կոչվում է մարժինալ շահույթ (անգլերեն՝ *Marge* – մարժա բառից, որ նշանակում է տարբերություն): Մարժինալ շահույթի և հաստատուն ծախսերի տարբերությունը կոչվում է ֆինանսական արդյունք: Ընդ որում, կոմերցիոն կազմակերպությունների գործունեության հաշվապահական (ֆինանսական) հաշվառման նոր հաշվային պլանով արալյանքի (ծառայությունների) իրացումից հասույթը, նախ, ձևակերպվում է որպես ֆինանսական արդյունք, ապա շահույթ կամ վնաս:

Այժմ ցույց տանք մարժինալ շահույթի և ֆինանսական արդյունքի հաշվարկման կարգը (Աղյուսակ 11):

Աղյուսակ 11

Տնտեսավարող սուբյեկտի մարժինալ շահույթի և ֆինանսական արդյունքի հաշվարկը

No	Ցուցանիշները	Գումարը, դրամ	մլն	Տեսակարար կշիռը, %
1	Իրացումից հասույթը	500.0		100.0
2	Փոփոխում ծախսեր	250.0		50.0
3	Մարժինալ շահույթ (տող1-տող 2)	250.0		50.0
4	Հաստատուն ծախսեր	100.0		20.0
5.	Ֆինանսական արդյունք (շահույթ, տող3-տող 4)	150.0		30.0

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, մարժինալ շահույթը կազմում է 250.0 մլն դրամ, այսինքն իրացումից հասույթի կեսը (50%): Անվանատարբերության շեղը (գրուֆիկով կետը) այս դեպքում որոշվում է որպես հաստատուն ծախսերի և մարժինալ շահույթի հարաբերություն՝ իրացումից ստացված ամբողջ հասույթի նկատմամբ՝ $100 : 50\% \times 100 = 200$ մլն դրամ: Մարժինալ շահույթի և շահույթի հարաբերությունը ֆինանսական հասկացությամբ կոչվում է գործառնական լծակի արդյունավետություն: Այն որոշվում է հետևյալ կարգով.

$$\text{Գործառնական լծակի նեյում} = \frac{\text{Մարժինալ շահույթ}}{\text{Համախառն շահույթ}}, \text{ այսինքն՝}$$

$$Գ.Լ.Ռ = \frac{C_{մ}}{C_{հ}} \quad \epsilon$$

Ըստ աղյուսակի տվյալների, այն կկազմի՝ $250 : 150$ մլն դրամ = 1.67, այսինքն հասույթի ցանկացած փոփոխության դեպքում շահույթը կփոխվի 1 : 1.67 հարաբերությամբ:

Այսպես, ենթադրենք տնտեսավարող սուբյեկտը բիզնես-ծրագրով նախատեսում է հասույթը ավելացնել 10 տոկոսով: Այս դեպքում շահույթը կավելանա՝ $10 \times 1.67 = 16.7$ տոկոսով: Դա հիմնավորենք վերը նշված աղյուսակի տվյալներով:

Հ ա շ վ ա յ կ

Իրացումից հասույթը՝ $500.0 \times 1.10 = 550$ մլն.դրամ,
 Փոփոխում ծախսեր՝ $250.0 \times 1.10 = 275$ մլն.դրամ,
 Իրացումից շահույթը՝ $550.0 - 275.0 = 275$ մլն.դրամ,
 Շահույթի ավելացում՝ $175.0 - 150.0 = 25$ մլն.դրամ:
 Հետևապես, համախառն շահույթի ավելացումը կկազմի՝

$$16.7\% \left(\frac{175.0 - 150.0}{150.0} \right) \cdot 100:$$

Այսպիսով, ֆինանսական հասկացությամբ ապրանքի (ծառայության) իրացման ծավալի շեղը որոշվում է հետևյալ կարգով՝

$$\text{Իրացման ծավալի շեղը} = \frac{\text{Հաստատուն ծախսեր}}{\text{Իրացման միավորի գին} - \text{միավորի հաշվով փոփոխում ծախսեր}}$$

կամ բանաձևով՝

$$BE = \frac{Fc}{S - Vc} \text{ կամ հայերեն՝}$$

$$F_{\delta} = \frac{\sum \delta}{F_q - \Phi_{\delta}}, \text{ որտեղ,}$$

F_{δ} -ն՝ ապրանքի իրացման ծավալն է,

$\sum \delta$ -ն՝ հաստատուն ծախսերը,

F_q -ն՝ ապրանքի միավորի իրացման գինը,

Φ_{δ} -ն՝ փոփոխուն ծախսերը՝ ապրանքի միավորի հաշվով,

այսինքն ինչպես հաշվարկվում է «Ձեռնարկությունների տնտեսագիտություն» «Ձեռներեցության հիմունքներ» դասընթացներով, այսինքն տնտեսագիտությամբ:

Այժմ գործնական մեկ այլ խնդրով հաշվարկենք ապրանքի իրացման ծավալի շահութաբերության (անվնասաբերության) շենը:

Խնդիր 5. Տրված է անվնասաբերության (շահութաբերության) շենի հաշվարկման ելակետային տվյալները (աղյուսակ 12):

Աղյուսակ 12

Անվնասաբերության (շահութաբերության) շենի հաշվարկման ելակետային տվյալները

No	Ցուցանիշները	Գումարը, մլն դրամ	Տեսակարար կշիռը, %	
			%-ով	գործակցով
1	Իրացումից հասույթը	6000	100	1
2	Փոփոխուն ծախսեր	4800	80	0.8
3	Մարժինալ շահույթ (տող 1-տող 2)	1200	20	0.2
4	Հաստատուն ծախսեր	800		
5.	Ֆինանսական արդյունք (շահույթ, տող 3-տող 4)	400		

Ըստ աղյուսակի տվյալների, անվնասաբերության շենը կկազմի՝

$$U_2 = \frac{\sum \delta}{U_2} = \frac{800}{0.2} = 4000 \text{ հազար դրամ:}$$

Հետևապես, ապրանքի (ծառայության) իրացումից հասույթի չափը 4 մլն դրամի հասնելու պահից տնտեսավարող սուբյեկտը հասնում է սահմանային ծախսերի (հաստատուն և փոփոխուն ծախսեր) փոխհատուցման մակարդակին:

8.9. Տնտեսավարող սուբյեկտների ինքնաֆինանսավորումը և սեփական ֆինանսական պաշարների աղբյուրները

Շուկայական տնտեսության պայմաններում բոլոր կարգի ձեռնարկություններն՝ որպես տնտեսավարող սուբյեկտներ աշխատում են առևտրային հաշվարկի սկզբունքով, որին կանոնադաշտանք «Ձեռնարկությունների տնտեսագիտություն» յառընթացով՝ 14-րդ գլխի առաջին հարցով: Հետևապես, համառոտակի անդրադառնանք առևտրային հաշվարկի երկու սկզբունքներին՝ յնքնափոխհատուցմանը և ինքնաֆինանսավորմանը:

Ինքնափոխհատուցումը առևտրային հաշվարկի նվազագույն, իսկ ինքնաֆինանսավորումը՝ առավելագույն պահանջն է: Ինքնափոխհատուցման դեպքում իրացումից հասույթի հաշվին փոխհատուցվում են ընթացիկ ծախսերը (ինքնաթեքը) և շահույթը հավասար է լինում զրոյի, այսինքն՝ իրացումից հասույթը և ընթացիկ ծախսերը լինում են իրար հավասար: Մակայն, շուկայական տնտեսության պայմաններում ապրանքարտադրող տնտեսավարող սուբյեկտները պետք է ըստ բիզնես-ծրագրի աշխատեն շահույթով, որպեսզի տնտեսաֆինանսական հետագա գործունեությունը կարողանան իրականացնել ինքնաֆինանսավորման սկզբունքով, այսինքն՝ սեփական ֆինանսական պաշարների հաշվին: Ձեռնարկությունների ֆինանսական պաշարները դրամական միջոցներ են, որոնք գտնվում են նրա տրամադրության ներքո: Ձեռնարկության ֆինանսական պաշարներն ուղղվում են սոցիալ-տնտեսական զարգացմանը և պալուստների ձևավորմանը: Ֆինանսական պաշարները, որոնք օգտագործվում են արտադրական-առևտրային գործընթացի զարգացման համար (պաշարների՝ հումք և նյութերի և այլ ընթացիկ ու երկարաժամկետ ակտիվների, աշխատանքի, առարկաների ձեռքբերում, աշխատուժի վարձում) արժեքային ձևով իրենից ներկայացնում է ձեռնարկության ֆի-

գիկական կապիտալը: Այսպիսով, ֆիզիկական կապիտալը ձեռնարկության ունեցվածքն է. ուր չափվում է բնեղեն և արժեքային չափվածքներով: Հետևապես, այն փող է. ուր դրվել է գուրծի մեջ և կատարում է շրջապատույտ, սեփականությունը, բերելով եկամուտ: Կապիտալը՝ դա փող է շահույթի ստացման համար: Կապիտալը մի մասը համարվում է ֆինանսական պաշար և նրա էությունն ու շրջապատույտն անդրադարձել ենք ձեռնարկի 1-ին գլխում: Ըստ էության, ձեռնարկության ֆինանսական պաշարները, որպես փող, հստակ են գալիս ձեռնարկատիրական և վարկային կապիտալի ձևով, որի հաշվին ձեռք են բերվում ոչ ընթացիկ, մաշվող և չմաշվող նյութական ակտիվներ, ոչ նյութական և ընթացիկ ակտիվներ: Այսինքն, նյութական արտադրություն կազմակերպելու համար ձեռնարկությունները կապիտալի՝ ֆինանսական պաշարների հաշվին ձեռք են բերում նյութական և աշխատանքային պաշարներ: Ձեռնարկության ֆինանսական պաշարները սեփական դրամական եկամուտների և դրսից մուտքերի համընդհանրությունն է, որն օգտագործվում է ֆինանսական ոչ ընթացիկ և ընթացիկ պարտավորությունների՝ ընթացիկ ծախսերի և արտադրության գարգսցման նպատակով ծախսերի կատարման համար: Կապիտալը այն մասը, որը դրվում է արտադրության մեջ շրջանառության ավարտով բերում է եկամուտ, որը համարվում է ապրանքի իրացումից (ծառայությունների մատուցումից) և ոչ գործառնական գործունեությունից ստացված եկամուտ: Հետևապես, կապիտալը համոզե է գալիս որպես ֆինանսական պաշարների փոխակերպված ձև: Ըստ ձևավորման աղբյուրների, ձեռնարկության ֆինանսական պաշարները ստորաբաժանվում են սեփական (ներքին) և տարբեր պայմաններով դրսից ներգրավված (արտաքին), այսինքն՝ **սեփական և փոխառու պաշարների:**

Սեփական ֆինանսական պաշարներ են համարվում .

- գործառնական գործունեությունից ստացված շահույթը,
- ոչ գործառնական գործունեությունից ստացված շահույթը,
- ունեցվածքի օտարումից (վաճառքից) և ոչ ընթացիկ նյութական ակտիվների յուժարման հետևանքով դուրս գրումից ստացված պլուսանի մասերի վաճառքից ստացված եկամուտը՝ հանած նրա իրացման հաշվով կատարված ծախսերը,
- ոչ ընթացիկ մաշվող նյութական ակտիվների, այսինքն՝ հիմնական միջոցների տարեկան մաշվածության ծախսերը:

Հարկ է նկատի ունենալ, որ ամբողջ համախառն շահույթը չի մնում ձեռնարկության տրամադրության ներքո, այլ մի մասը՝ շահութահարկի և այլ հարկերի ձևով հատկացվում է պետությունին: Ձեռնարկությունում մնացած՝ բաշխման ենթակա շահույթի հաշվին (գուտ շահույթ) հատկա-

ցում է կատարվում կուտակման ֆունդին, որն օգտագործվում է արտադրության և տեխնիկական վերագինման համար: Հետևապես, մնացորդային շահույթի հաշվին ավելանում է ձեռնարկության ակտիվներն, այսինքն՝ ունեցվածքը, իսկ սպառմանն ուղղվող շահույթն օգտագործվում է սոցիալական խնդիրների լուծման նպատակով: Մաշվածության հատկացումներն իրենցից ներկայացնում են ոչ ընթացիկ մաշվող նյութական ակտիվների, այսինքն՝ հիմնական միջոցների, ինչպես նաև ոչ նյութական ակտիվների մաշվածության ծախսերը: Նրանք իրական ծախսերի բնույթ ունեն, քանի որ ներստով են արտադրանքի ինքնարժեքի մեջ և իրացումից հասույթի կազմում մուտք են լինում ձեռնարկության հաշվարկային հաշվի՝ դառնալով սեփական ֆինանսական պաշարների ֆինանսավորման աղբյուր:

Ֆինանսական պաշարների ձևավորման աղբյուր են ծառայում նաև ներգրավված միջոցները, որոնք ստորաբաժանվում են.

- **սեփական միջոցներ**, որոնք ստացվում են բարեգործության, նվիրատվության, և ժառանգության միջոցով, այսինքն՝ անհատույց կարգով, ինչպես նաև այն ներդրողների միջոցները, որ ներգրավվում են տվյալ ձեռնարկությունում՝ ձեռնարկատիրական գործունեության նպատակով,
- **փոխառու միջոցներ**, որը ստացվում է վարկերի, փոխառությունների ձևով,

• **բյուջեդային հատկացումներ**, որը ստացվում է պետությունից, հատկացումների ձևով՝ համապետական և ճյուղային նշանակության խնդիրներ լուծելու նպատակով,

Ըստ էության, ձեռնարկության սեփական ֆինանսական պաշարների ձևավորման համար օգտագործվում է ձեռնարկատիրական, իսկ փոխառու միջոցների համար՝ վարկային կապիտալը: Այն միջոցները, որոնք ստացվում են ֆինանսական շուկայում, հանդիսանում են սեփական բաժնետոմսերի և այլ արժեթղթերի վաճառքից ստացված միջոցները:

Այն դրամական միջոցները, որոնք ստացվում են վերաբաշխման ձևով, բաղկացած են.

- ըստ ռիսկերի ապահովագրական փոխհատուցումից,
- ֆինանսական պաշարներից, որն ստացվում է գլխամասային կան դուստր ձեռնարկություններից,
- շահաբաժիններ, որ ստացվում է այլ բաժնետիրական ընկերություններում ներդրած (տեղաբաշխված) բաժնետոմսերից,
- եկամուտներ, որ ստացվում են պետական պարտատոմսերի գնման շնորհիվ:

Բյուջետային հատկացումներն օգտագործվում են և ւնենալույց, և վերադարձման հիմունքներով (պետական նպաստի՝ սուբվենցիայի կարգով): Չեռնարկությունները ֆինանսական պաշարներն օգտագործում են տնտեսաֆինանսական և ներդրումային գործընթացում: Նյունք մշտապես գտնվում են շարժման մեջ և փոխարինվում են դրսևական ձևի միայն դրամական միջոցների մնացորդի ձևով՝ առևտրային բանկում ունեցած հաշվարկային հաշվում և ձեռնարկության դրամարկում:

Շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկությունը հոգ տանելով ֆինանսական կայունության և շուկայում կայուն դիրք ունենալու մասին, իր ֆինանսական պաշարները ժամանակի ընթացքում բաշխում է ըստ գործունեության տեսակների:

Ձեռնարկությունն իր ֆինանսական պաշարներն օգտագործելիս ֆինանսները կազմակերպում է ոլորտակի սկզբունքներով, ինչպիսիք հանդիսանում են.

- տնտեսական ինքնուրույնությունը և տնտեսական ազատությունը, որն ամրագրվում է ձեռնարկության կանոնադրությամբ,
- ինքնափոխատուցումը և ինքնաֆինանսավորումը,
- նյութական պատասխանատվությունը,
- նյութական շահագրգռվածությունը,
- ֆինանսական պաշարների ապահովումը,
- ֆինանսական պաշարների խնայողաբար և արդյունավետ օգտագործումը:

Ֆինանսական պաշարների կազմակերպումը, նրանց կառավարումն իրականացվում է ֆինանսական մեխանիզմի միջոցով:¹

Ֆինանսական մեխանիզմի հանդիսանում է տնտեսավարման տնտեսական մեխանիզմի մի մասը և իրենից ներկայացնում է ձեռնարկությունների ֆինանսների կառավարման մեթոդները և ձևերը՝ առավելագույն չափով շահույթ ստանալու նպատակով:

8.10. Ֆինանսական լեբրիդջ

Ֆինանսական պաշարները խնայողաբար և արդյունավետ օգտագործելու խնդիրն ելնում է տնտեսավարող սուբյեկտների կոմերցիան հաշվարկի պահանջներից: Ըստ էության, ֆինանսական սեփական և փոխառու պաշարների խնայողաբար և արդյունավետ օգտագործումն ենթադրում է

1.Վ.Ա. Վարդանյան - Ֆինանսական մեթոդներ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 1999, էջ136-146:

սահմանային ծախսերի փոխհատուցումը (իրացման ծավալի որոշումը՝ ըստ ւնվմասսերություն), գործառնական լծակի արդյունավետությունը, ինչպես նաև ֆինանսական լեբրիդջի՝ սեփական և փոխառու միջոցների արդյունավետությունը: Այլ ցուցանիշները կանխորոշում են ֆինանսական սեփական և փոխառու պաշարների արդյունավետությունը, որը կոմերցիան հաշվարկի պահանջն է:

Ֆինանսական լեբրիդջն ունի երկիմաստ նշանակություն (անգլերեն Leverage - լեբրիդջ, նշանակում է՝ առաջին, ֆինանսական լծակ, որն ապահովում է ֆինանսական պաշարների արդյունավետությունը, երկրորդ՝ ֆինանսական միջոցների նպատակին հասնելու համար, այսինքն փոխառու միջոցների՝ վարկերի, փոխառությունների, այլ արժեթղթերի արդյունավետության ապահովում):

Ֆինանսական լեբրիդջի նպատակն է՝ ապահովել ոչ միայն տնտեսավարող սուբյեկտների կողմից ներդրված (ուղղակի և փաթեթային ներդրում) շահույթ ստանալու նպատակով սեփական, և այլ փոխառու միջոցների (վարկերի) արդյունավետ օգտագործումը: Ֆինանսական լեբրիդջն իրենից ներկայացնում է փոխառու միջոցների (Փմ) և արտոնյալ բաժնետոմսերի արժեքի (Բա) գումարի հարաբերությունը սովորական (հասարակ) բաժնետոմսերի արժեքին:

Ֆինանսական լեբրիդջը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\mathfrak{L} = \frac{\Phi\text{մ} + \text{Բա}}{\text{Բս}} :$$

Ֆինանսական լեբրիդջը հաշվարկենք գործնական խնդրի ելակետային տվյալների հիման վրա:

Խնդիր 6- տնտեսավարող սուբյեկտը որպես բաժնետիրական ընկերություն առևտրային բանկից վերցրել է 10 մլն դրամ վարկ՝ 18% տոկոսադրույքով: Բաժնետիրական ընկերությունը թողարկել է արտոնյալ բաժնետոմսեր՝ 2 մլն դրամի՝ 40% ֆիքսված կայուն շահաբաժնով (դիվիդենտ) և 20 մլն դրամի սովորական բաժնետոմսեր՝ 20 % սպասվելիք շահաբաժնով:

Պահանջվում է որոշել ֆինանսական լեբրիդջը:

Լուծում

$$\mathfrak{L} = \frac{\Phi\text{մ} + \text{Բա}}{\text{Բս}} = \frac{10 \text{ մլն դրամ} \times 18\% + 2 \text{ մլն դրամ} \times 40\%}{20 \text{ մլն դրամ} \times 20\%} =$$

$$= \frac{1.8 + 0.8}{4} \text{ մլն դրամ} = \frac{2.6}{4} \text{ մլն դրամ} = 0.65:$$

Դա նշանակում է, որ փոխառու և սեփական միջոցների հարաբերակցության գործակիցը կազմել է 0.65, այսինքն հարաբերակցությունը՝ 1: 0.65: Այլ կերպ, տնտեսավարող սուբյեկտն օգտագործել է 65% փոխառու և 35% սեփական միջոցներ: Սակայն, ֆինանսական պաշարների արդյունավետ օգտագործման նպատակով, ըստ միջազգային չափանիշների, այդ հարաբերակցությունը պետք է լինի 40 : 60: Դա համարվում է օպտիմալ (լավագույն) տարբերակ, այսինքն ներդրումների (ընթացիկ կամ կապիտալ ծախսեր) 40 տոկոսը պետք է լինի փոխառու (վարկեր և այլն) և 60 տոկոսը՝ սեփական միջոցներ: Այդ դեպքում կապահովվի ներդրումների տնտեսական արդյունավետությունը: Ընդ որում, ֆինանսական լեւերիդջի արդյունավետությունը հաշվարկվում է հետևյալ անձեռնարկով.

$$\Phi_{\text{լա}} = (1 - \lambda_{\text{ը}}) \times (G_{\text{հշ}} - S_{\text{վ}}) \times \frac{C_{\text{փ}}}{C_{\text{ս}}},$$

$$(\text{ուսերեն՝ } \Xi\Phi\lambda \times (1 - \text{CH}\Delta) \times (K_{\text{Յբ}} - \text{ՈՒԿ}) \cdot \frac{K3}{Kc}, \text{ որտեղ՝}$$

$\Phi_{\text{լա}}$ -ն՝ ֆինանսական լեւերիդջի արդյունավետությունն է՝ գործակցով, $\lambda_{\text{ը}}$ -ն՝ շահութահարկի դուրյն է՝ գործակցով (ըստ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (30.09. 1997, հետագա լրացումներով և փոփոխություններով), կազմում է 20% = 0.2,

$G_{\text{հշ}}$ -ն՝ համախառն շահույթի շահութաբերության գործակիցն է,

$S_{\text{վ}}$ -ն՝ վարկի տոկոսադրույքը,

$C_{\text{փ}}$ -ն՝ փոխառու կապիտալն է (վարկը),

$C_{\text{ս}}$ -ն՝ սեփական կապիտալն է:

Այժմ գործնական խնդրով՝ ըստ տնտեսավարող երեք սուբյեկտների գործունեության ելակետային տվյալների, հաշվարկենք ֆինանսական լեւերիդջի արդյունավետությունը:

Խնդիր-7 Տնտեսավարող երեք սուբյեկտներ իրենց գործունեության ընթացքում օգտագործել են միջոցներ՝ տարբեր հարաբերակցությամբ:

Ա սուբյեկտը օգտագործել է միայն իր սեփական միջոցները,

Բ սուբյեկտը օգտագործել է 80 % սեփական և 20 % փոխառու միջոցներ,

Գ սուբյեկտը օգտագործել է միջոցներ՝ հավասար չափերով:

Պահանջվում է հաշվարկել ֆինանսական լեւերիդջի արդյունավետությունը, այսինքն օգտագործված սեփական և փոխառու միջոցների հաշվով

տնտեսական արդյունավետությունը՝ շահութաբերությունը գործակցով:

Տրված են ելակետային հետևյալ տվյալները (աղյուսակ 13):

Աղյուսակ 13

Ֆինանսական լեւերիդջի արդյունավետության չեափորումը

No	Ցուցանիշները	Սուբյեկտներ		
		Ա	Բ	Գ
1.	Ներդրված միջոցների գումարը (հազ.դրամ), այդ բվում	1000	1000	1000
2	Սեփական կապիտալ	1000	800	500
3	Փոխառու կապիտալ	-	200	500
4	Համախառն շահույթը (առանց կարճաժամկետ վարկի տոկոսավճարի)	200	200	200
5	Ավտիվների համախառն շահութաբերությունը (առանց վարկի տոկոսի), %	20	20	20
6	Վարկի միջին տոկոսադրույքը, %	10	10	10
7	Վարկի տոկոսավճարի գումարը՝ փոխառու կապիտալի օգտագործման համար (տող 3 x տող 6 : 100)	-	20	50
8	Սուբյեկտի համախառն շահույթի գումարը՝ հաշվի առնելով վարկի տոկոսավճարը (տող 4-տող 7)	200	180	50
9	Շահութահարկի դուրյնը՝ գործակցով	0.2	0.2	0.2
10	Շահութահարկի գումարը (տող 8-տող 9 : 100)	40	36	30
11	Զուտ շահույթի գումարը, որը մնում է սուբյեկտում շահութահարկը վճարելուց հետո (տող 8 - տող 10)	160	144	120
12	Սեփական կապիտալի շահութաբերությունը (Տող 11 x 100 : տող 2), %	16.0	18.0	24.0
13	Սեփական կապիտալի շահութաբերության աճը՝ փոխառու կապիտալի օգտագործման կապակցությամբ տոկոսով Ա սուբյեկտի նկատմամբ	-	2.0	8.0

Ըստ ելակետային տվյալների, անհրաժեշտ է հաշվարկել հետևյալ տողերի ցուցանիշները (տող 7, 8, 10, 11, 12, 13): Այդ հաշվարկը հարկ է կատարել առանձին-առանձին և ցուցանիշների մեծությունը տեղադրել աղյուսակի համապատասխան սյունակում: Այսպես՝

• տող 7, վարկի տոկոսավճարի գումարը փոխառու կապիտալի (վարկի) օգտագործման համար կկազմի (տող 3 x տող 6 : 100),

Ա սուբյեկտի համար», 0(-), քանի որ փոխառու կապիտալ (վարկ) չի օգտագործել,

Բ սուբյեկտինը կկազմի՝ $200 \text{ հազար դրամ} \times 10\% : 100 = 20 \text{ հազար դրամ}$ (հաշվարկը կատարվում է վարկի տոկոսի պարզ հաշվարկի մեթոդով¹, քանի որ կարճաժամկետ վարկ է),

Գ սուբյեկտինը կկազմի՝ $500 \times 10\% : 100 = 50 \text{ հազար դրամ}$:

Այդ պատասխանները հարկ է տեղադրել աղյուսակում:

• տող 8, ըստ սուբյեկտների համախառն շահույթը՝ հանած վարկի տոկոսավճարը՝ կկազմի (տող 4 – տող 7),

Ա սուբյեկտի հաշվով՝ $200 - 0 = 200 \text{ հազար դրամ}$,

Բ սուբյեկտի հաշվով՝ $200 - 20 = 180 \text{ հազար դրամ}$,

Գ սուբյեկտի հաշվով՝ $200 - 50 = 150 \text{ հազար դրամ}$:

• տող 10, շահութահարկի գումարը ըստ սուբյեկտների կկազմի (տող 8 x տող 9 : 100),

Ա սուբյեկտի հաշվով՝ $200 \times 0.2 = 40 \text{ հազար դրամ}$,

Բ սուբյեկտի հաշվով՝ $180 \times 0.2 = 36 \text{ հազար դրամ}$,

Գ սուբյեկտի հաշվով՝ $150 \times 0.2 = 30 \text{ հազար դրամ}$:

• տող 11, զուտ շահույթը ըստ սուբյեկտների կկազմի (տող 8 – տող 9),

Ա սուբյեկտի հաշվով՝ $200 - 40 = 160 \text{ հազար դրամ}$,

Բ սուբյեկտի հաշվով՝ $180 - 36 = 144 \text{ հազար դրամ}$,

Գ սուբյեկտի հաշվով՝ $150 - 30 = 120 \text{ հազար դրամ}$:

• տող 12, սեփական կապիտալի շահութաբերությունը ըստ սուբյեկտների կկազմի (տող 11 x 100 : տող 2),

Ա սուբյեկտի հաշվով՝ $160 \times 100 : 1000 = 16\%$,

Բ սուբյեկտի հաշվով՝ $144 \times 100 : 800 = 18\%$,

Գ սուբյեկտի հաշվով՝ $120 \times 100 : 500 = 24\%$ տոկոս:

• տող 13, սեփական կապիտալի շահութաբերության աճը՝ փոխառու կապիտալի օգտագործման կապակցությամբ, ըստ սուբյեկտների,

1. Վազգեն Վարդանյան - «Բանկային գործ. բանկային մենեջմենթ. փող. վարկեր, բանկեր» ուսումնական ձեռնարկ, Երևան, 2004, էջ 489-493

Ա սուբյեկտի նկատմամբ կկազմի՝

Ա սուբյեկտի հաշվով՝ $16\% - 16\% = 0$,

Բ սուբյեկտի հաշվով՝ $18\% - 16\% = 2\%$,

Գ սուբյեկտի հաշվով՝ $24\% - 16\% = 8 \text{ տոկոս}$:

Այժմ ֆինանսական լեբիդջի արդյունավետությունը, ըստ սուբյեկտների, հաշվարկենք բանաձևով, այսինքն հաշվարկենք տող 13-ի ցուցանիշը՝ սեփական կապիտալի շահութաբերության աճը՝ փոխառու կապիտալի օգտագործման կապակցությամբ՝ Ա սուբյեկտի նկատմամբ. Բ սուբյեկտի հաշվով՝

$$\text{Ֆլա} = (1 - \lambda_{\eta 2}) \times (\text{Գ}_{\text{հշ}} - \text{Տվ}) \times \frac{\text{Կվի}}{\text{Կս}} = (1.0 - 0.2) \times (20 - 10) \cdot \frac{200}{800} = 2\%,$$

Գ սուբյեկտի հաշվով՝

$$\text{Ֆլ} = (1 - \lambda_{\eta 2}) \times (\text{Գ}_{\text{հշ}} - \text{Տվ}) \times \frac{\text{Կվի}}{\text{Կս}} = (1.0 - 0.2) \times (20 - 10) \cdot \frac{500}{500} = 8 \text{ տոկոս}:$$

Այսպիսով, ֆինանսական լեբիդջի արդյունավետության հաշվարկի մաթեմատիկական բանաձևի և տնտեսագիտական հաշվարկի ցուցանիշները համընկնում են, որը վկայում է ֆինանսական լեբիդջի արդյունավետության մաթեմատիկական բանաձևի հիմնավորված լինելու մասին:

**3-ԻԳ ԲԱԺԻՆ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**ԳԼՈՒԽ 9. – ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԻ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕՂԱԿՆԵՐ**

**9. 1. «ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
դասընթացի եւությունը, խնդիրները և մեթոդները**

Տնտեսագիտությունը անգլերեն economics , ռուսերեն՝ ЭКОНОМИКА բառերից է: Առաջին տնտեսագիտական գիրքը գրել է ֆրանսիացի գիտնական Անտուան Մոնկրետենը 1615թ.՝ «Քաղաքատնտեսության հիմունքներ» վերնագրով: Քաղաքատնտեսությունը բաղկացած է լատիներեն հետևյալ երեք բառերից՝

- politische - քաղաքական, հասարակական կառուցվածք,
- aycos- տուն, տնտեսություն,
- nomos - օրենք:

Այսինքն՝ քաղաքատնտեսությունը գլխաւորում է հասարակության և երկրի տնտեսության զարգացման մասին: Սակայն Արևմուտքում «քաղաքատնտեսություն» տերմինը օգտագործվել է մինչև 1898թ., երբ Ա. Մալլալլը գրեց «Տնտեսագիտության հիմունքներ» գիրքը: Մինչդեռ, քաղաքատնտեսությունը որպես գիտություն օգտագործվել է սոցիալիզմի ժամանակ, մինչև նախկին ԽՍՀՄ-ի փլուզումը (1992թ.): ԱՊՀ-ի որոշ երկրների բուհերում դեռևս ուսուցանվում է այդ դասընթացը: Մինչդեռ, Հայաստանի պետական և ոչ պետական բուհերում 1991թ. ուսուցանվում է շուկայական տնտեսագիտություն՝ տնտեսագիտության տեսություն դասընթացով:

Ժամանակակից տնտեսագիտությունը ձևավորվել է 1776թ., որի հիմնադիրն է անգլիացի տնտեսագետ-գիտնական Ադամ Սմիթը: Նա մշակել է մի քանի ուսմունք.

- **աշխատանքը հարստության աղբյուրն է,**
- **աշխատանքի արժեքային փետությունը**- ըստ որի ապրանքի արժեքը որոշվում է նրա վրա ծախսված աշխատանքային ծախսերով: Ընդ որում, ապրանքափոխանակության ժամանակ օգտագործվում էր համարժեքային սկզբունքը ($W = V$),
- **ապրանքի սահմանային օգտակարության փետություն** - ըստ որի, ապրանքների արտահանման և ներմուծման ժամանակ հաշվի է առնվում

բացարձակ և հարաբերական առավելությունների տեսությունը,
• **շուկայական փետությունն զաղափարը** - ըստ որի երկրներն իրենց տնտեսությունը պետք է զարգացնեն շուկայական տնտեսության ուղիով: Ներկայումս աշխալի 209 երկրներից 204-ը փոխադրվել են շուկայական տնտեսության: Ընդ որում, նախկին սոցիալիզմի երկրներից՝ նախկին Արևելյան Եվրոպայի երկրները 1989թ. և ԱՊՀ-ի երկրները՝ 1992թ., այդ թվում Հայաստանը՝ 1991 թվականից:

Շուկայական տնտեսությունը հիմնված է շուկայի վրա, որտեղ վաճառվում է ապրանքներ՝ ելնելով ապրանքի պահանջարկի և առաջարկի հարաբերակցությունից:

1949թ. շուկայական տնտեսության վերաբերյալ դասագիրք են հրատարակել ամերիկյան տնտեսագետ-գիտնականների Փոլ Սալմյուելսոնը և Ուիլյամ Նորդհաուսը, որն էլ համարվում է տնտեսագիտության տեսության հիմնական դասագիրքը:

Այդ տնտեսագիտությունը բաղկացած է երկու մասից՝

- մակրոէկոնոմիկա (մեծ, ընդհանուր), որն էլ ուսումնասիրում է երկրի տնտեսությունն ընդհանրապես,
- միկրոէկոնոմիկա (միկրո՝ հունարեն բառ է, որ նշանակում է փոքր): Այն ճյուղային գիտություն է և ուսումնասիրում է երկրի տնտեսության առանձին ճյուղերի տնտեսագիտությունը:

Տնտեսագիտության տեսությունը, մակրո և միկրոէկոնոմիկան տեսական հիմք են հանդիսանում «Ձեռնարկությունների տնտեսագիտություն» գիտության համար: Ընդհանրապես, տնտեսագիտությունը մեր բոլորի բարեկեցության բանալին է: Տնտեսագիտությունը մարդկային գործունեության տեսակ է, որի նպատակն է բավարարել մարդկանց պահանջ-մունքները և ապահովել շահույթ: Այդ նպատակն է հետապնդում նաև ձեռներեցությունը, այսինքն ազատ տնտեսական շահավետ գործունեությունը և շարունակությունը կազմող բիզնեսը (Business -գործարարություն)՝ որպես կոմերցիոն (առևտրային) գործունեություն: Բիզնեսով զբաղվում են ոչ միայն իրավաբանական, այլև ֆիզիկական անձինք՝ անհատ ձեռնարկատերերը (Businessman- 1. Business -գործարարություն , 2.-man- մարդ, այսինքն՝ գործարար մարդ):

Ձեռնարկությունների տնտեսագիտությունն ուսումնասիրում է ձեռնարկության գործունեության բոլոր կողմերի տնտեսագիտական հարցերը: Ձեռնարկությունների տնտեսագիտության հիմնական խնդիրն է տնտեսության կազմակերպման երեք հիմնահարցերը՝ ի՞նչ արտադրել, ինչ-

պե՞ս արտադրել, ու՞մ համար արտադրել, այսինքն՝ ինչպես օգտագործել սահմանափակ պաշարները և նվազագույն ծախսումներով արտադրել ավելի մեծ չափով արտադրանք: Այս դասընթացի հիմնական օբյեկտները ձեռնարկություններն են, որոնք շուկայական տնտեսության պայմաններում գործում են սեփականության բազմազան ձևերի հիման վրա:

Դասընթացի ուսումնասիրման օբյեկտները, այսինքն խնդիրները հանդիսանում են.

- բոլոր տեսակի պաշարների (նյութական, աշխատանքային, ֆինանսական) խնայողաբար և այդյունավետ օգտագործումը, որից կախված է արտադրանքի արտադրության (ծառայությունների մատուցման) ծավալները,

- արտադրության էությունը և տեսակները,
- արտադրության մասնագիտացման և կոոպերացման ձևերը,
- արտադրության կենտրոնացում և համակենտրոնացում,
- արտադրության մասնագիտացում և տեղաբաշխում,
- հիմնական արտադրական ֆոնդերի (ոչ ընթացիկ մաշվող նյութական ակտիվներ) այդյունավետ օգտագործումը (էությունը, դասակարգումը, այդյունավետ օգտագործման ցուցանիշները, նրանց հաշվարկման կարգը և արդյունավետության բարձրացման ուղիները),
- հիմնական միջոցների առանձնահատկությունները,
- հիմնական միջոցների ամորտիզացիան (մաշվածությունը) և նրա հաշվարկման մեթոդները շուկայական տնտեսության պայմաններում,
- մաշվող և չմաշվող ոչ ընթացիկ նյութական ակտիվների այդյունավետ օգտագործումը,
- ձեռնարկությունների բիզնես-ծրագիրը, նրա բաժինների բովանդակությունը և մշակման կարգը,
- ապրանքարտադրողների մրցունակությունը և ապրանքների մրցակցությունը,
- շրջանառու արտադրական ֆոնդերի (պաշարների) օգտագործումը (էությունը, դասակարգումը, օգտագործման ցուցանիշները, նրանց հաշվարկման կարգը և բարելավման ուղիները),
- ձեռնարկությունները որպես շուկայական տնտեսության հիմնական օղակներ, շուկան, ապրանքը և նրա հատկանիշները: Ապրանքի թվային ծածկագիրը,
- սեփականության ձևերը և ձեռնարկությունների տեսակները,
- արտադրության ծախսեր, նրանց տեսակներն ու դասակարգումը, ուղղակի և անուղղակի ծախսեր, սահմանային ծախսեր, հաստատուն և

փոփոխում ծախսեր,

- արտադրանքի ինքնարժեքը, ինքնարժեքի տեսակներն ու հաշվարկման կարգը (կալկուլյացիան),
 - շահույթի տնտեսական էությունը, նրա ձևերը, շահույթի համակարգը, նրա բաշխումն ու օգտագործումը,
 - շահութաբերություն, նրա ցուցանիշները և հաշվարկման կարգը,
 - ինքնարժեքի իջեցման , շահույթի ավելացման և շահութաբերության բարձրացման ուղիները,
 - տնտեսական խթանման և հատուկ նշանակության ֆոնդերը, նրանց ձևավորումը և օգտագործումը,
 - լաբորատորի շուկա, աշխատանքի էությունը, աշխատանքի արտադրողականության ցուցանիշները ու նրանց հաշվարկման կարգը և աշխատանքի արտադրողականության բարձրացման ուղիները,
 - գին և գնագույացում, ձեռնարկությունների մեծածախ գին ու նրա ձևավորումը, գների տեսակները և գների սահմանման մեթոդները շուկայական տնտեսության պայմաններում:
- Գիտության մեթոդը համարվում է ժամանակակից տնտեսագիտությունը, այսինքն՝ տնտեսագիտության տեսությանը բնորոշ մեթոդները, ինչպիսիք են՝
- մոնոգրաֆիկ մեթոդ (մոնո- նշանակում է մեկ), այսինքն, երբ փոփոխությունների մեջ ուսումնասիրվում է մեկ գործոն, իսկ դրանից կախված մյուս գործոնները դիտարկվում է անփոփոխ՝ հաստատուն վիճակում,
 - տնտեսական և վիճակագրական վերլուծության մեթոդ, որի ժամանակ օգտագործվում է վիճակագրական և համեմատական վերլուծության մեթոդները՝ ուսումնասիրվում է տնտեսական ցուցանիշների փոփոխությունները նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ,
 - ֆինանսական վերլուծության մեթոդ, որի ժամանակ վերլուծվում է ձեռնարկությունների ֆինանսական դրությունը,
 - տնտեսագիտական-մաթեմատիկական մեթոդներ, որի ժամանակ օգտագործվում են ուղիղ գծային և հակադարձ կախվածության հավասարումներ և կատարվում է տնտեսական, ֆինանսական գործունեության կամ կոռելյացիոն ու կառուցվածքային վերլուծություններ:
- «Ձեռնարկությունների տնտեսագիտություն» դասընթացը ընտրության գիտություն է: Դա նշանակում է, որ ձեռնարկություններն ինքնուրույն են որոշում, թե ի՞նչ արտադրել, ինչպե՞ս արտադրել և ո՞ւմ համար արտադրել, այսինքն իրենք են լուծում տնտեսության զարգացման երեք հիմնական խնդիրները:

**9.2. Ձեռնարկությունները որպես շուկայական տնտեսության հիմնական օղակներ:
Ապրանքը և նրա հատկանիշները**

Ձեռնարկությունները հանդիսանում են երկրի տնտեսության հիմնական օղակները և շուկայական տնտեսության սուբյեկտները:

Շուկայական տնտեսությունը հիմնված է շուկայի վրա: Յուրաքանչյուր ձեռնարկություն պետք է ունենա իր շուկան՝ ապրանքը վաճառելու համար: Շուկան սուղիալ-տնտեսական միջավայր է, ապրանքափոխանակության սրբաբանություն, որտեղ կատարվում է ապրանքների ստեղծում և վաճառք և որտեղ ապրանքների գները որոշվում են պահանջարկի և առաջարկի հիմունք վրա:

Պահանջարկը պահանջումների այն մասն է, որն ապահովված է գնողունակությամբ: Այլ կերպ. պահանջարկը՝ դա շուկայի ապրանքների այն մասն է, որը կայտղ են գնել գնորդները՝ որպես սպառողներ: Ընդ որում, թեք բնակչությունը համարվում է վերջնական սպառող, Եսպա ձեռնարկությունները համարվում են միջանկյալ սպառողներ: Նրանք գնում են հումք և նյութեր, կազմակերպում արտադրություն և արտադրում որոշակի պատրաստի արտադրանք, ապա զբաղվում շուկայում ապրանքի իրացմամբ (բիզնեսով):

Առաջարկը դա ապրանքների այն ծավալն է, որն ապրանքարտադրողի կողմից փոխադրվում է շուկա վաճառքի համար: Ձեռնարկությունները համարվում են ապրանքարտադրողներ, հարկատուներ և գործատուներ: Նրանք, միաժամանակ հանդիսանում են տնտեսավարող սուբյեկտներ: Ընդհանրապես յուրաքանչյուր երկրի տնտեսությունը շուկայական տնտեսության պայմաններում բաղկացած է արտադրության երկու ձևից՝

- առաջին, նյութական արտադրություն,
- երկրորդ, ոչ նյութական արտադրություն:

Նյութական է կոչվում այն արտադրությունը, որի դեպքում երկրի տնտեսության կազմակերպական-արտադրական միավորները (ձեռնարկությունները) զբաղվում են նյութական բարիքների՝ պատրաստի արտադրանքի արտադրությամբ՝ արտադրում են որոշակի տեսակի արտադրանք կամ մատուցում են ծառայություններ:

Ոչ նյութական արտադրություն է կոչվում երկրի սոցիալական ոլորտը, այսինքն բյուջետային կազմակերպությունները՝ որպես ոչ առևտրային կազմակերպություններ, որոնք իրենց գործունեությունը կազմակերպում են պետական բյուջեի ֆինանսավորման հաշվին: Նյութական արտադ-

րությունն իր հերթին բաժանվում է երկու հատվածի՝

• առաջին, իրական հատված, որն ընդգրկում է պետական, կոլեկտիվ և խառը սեփականության վրա հիմնված երկրի տնտեսության ճյուղերի և նրանց ձեռնարկությունների արտադրանքը,

• երկրորդ, մասնավոր հատված, որի մեջ ընդգրկվում են քաղաքացիների (մասնավոր) սեփականության ձեռնարկությունները (սննդամթերքի և ընտանեկան ձեռնարկությունները, անհատ ձեռնարկատերերը, գյուղացիական տնտեսությունները):

Արևմուտքի երկրներում չի օգտագործվում «ձեռնարկություն» տերմինը, այլ նյութական արտադրությամբ զբաղվող ձեռնարկություններին անվանում են կոմերցիոն (առևտրային) կազմակերպություններ, իսկ բյուջետային կազմակերպություններին՝ ոչ կոմերցիոն (ոչ առևտրային) կազմակերպություններ:

ՀՀ կառավարության որոշումով սկսած 2000 թվականից այդպես է նաև մեր երկրում: Ձեռնարկությունները համարվում են երկրի տնտեսության կազմակերպական-իրավական միավորներ, լինչպես ընտանիքը, ուրպես բջիջ հասարակության մեջ: Երկրի տնտեսությունն ունի իր նյութական արտադրության ճյուղերը: Դրանք են.

• գյուղատնտեսություն, որ կենսականորեն անհրաժեշտ ճյուղ է և բնակչությանն ապահովում է սննդամթերքով, իսկ սննդի ու թեթև արդյունաբերությանը՝ հումքով,

• արդյունաբերություն, որն իր հերթին բաղկացած է մի շարք ենթաճյուղերից (լեռնահանքային, հաստոցաշինական, մեքենաշինական, էներգետիկ, էլեկտրատեխնիկական, թեթև, սննդի արդյունաբերություն):

Արդյունաբերությունը բաղկացած է երկու խոշոր ստորաբաժանումից՝ «Ա» խումբ, որի մեջ ընդգրկվում է ծանր ինդուստրիան և «Բ» խումբ, որի մեջ ընդգրկվում են սննդի և թեթև արդյունաբերության ճյուղերը և նրանց ձեռնարկությունները,

- տրանսպորտ,
- կապ (ռադիո, հեռուստատեսային, հեռախոսային, ինտերնետ),
- առևտուր - չնայած առևտուրը շրջանառության ոլորտ է, սակայն այն ընդունվում է նաև որպես նյութական արտադրության ճյուղ, քանի որ բոլոր ապրանքարտադրողներն իրենց ապրանքը վաճառում են առևտրի ցանցի միջոցով (մեծածախ և մանրածախ առևտուր):

Երկրի տնտեսության ոչ նյութական արտադրությունն ընդգրկում է սոցիալական ոլորտը, որի մեջ ընդգրկվում են ոչ առևտրային կազմակեր-

պությունները: Սակայն ՀՀ կառավարության որոշումով առողջապահության կազմակերպություններին 1999 թվականից բույատրվում է զբաղվել նաև վճարովի ծառայություններով, պետական բյուջեից նրանք ֆինանսավորվում են միայն պետական պատվերի շրջանակներում: Նրանք իրավունք ունեն զբաղվել բիզնեսով և ըստ էության, համարվում են կիսաբյուջետային կազմակերպություններ:

9.3. Սեփականության ձևերը և ձեռնարկությունների տեսակները շուկայական տնտեսության պայմաններում

Հայաստանը 1991 թվականի օգոստոսի 23-ի հռչակագրով և սեպտեմբերի 21-ի ժողովրդական հանրաքվեով ձեռք բերելով անկախություն, անցել է շուկայական տնտեսության: 1992-2004թթ. երկրի տնտեսության մեջ կատարվել են տնտեսական վերափոխումներ, որոնք կապված են պետական սեփականության ապապետականացման հետ: 1992թ. մարտի 14-ին ընդունվեց օրենք «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին», որն իր արտացոլումն է գտել Զաղաքացիական օրենսգրքում: (Այն կիրառվում է 1999թ. հունվարից):

Գոյություն ունի սեփականության հետևյալ հիմնական ձևերը.

- քաղաքացիների (մասնավոր) սեփականություն,
- կոլեկտիվ սեփականություն,
- պետական սեփականություն:

Սակայն սեփականության այդ հիմնական ձևերից բացի, շուկայական տնտեսության պայմաններում գոյություն ունի նաև սեփականության հետևյալ ածանցյալ ձևերը.

- բաժնետիրական, երբ ձեռնարկությունները կազմակերպվում են բաժնետիրական ընկերությունների ձևով,
- ընկերակցական, երբ ձեռնարկությունները կազմակերպվում են զանազան տնտեսական ընկերակցությունների ձևով,
- վարձակալական, երբ մի ձեռնարկություն մյուսից վարձակալում է հիմնական միջոցներ (մեքենաներ, սարքավորումներ),
- խառը սեփականության ձև:

Մինչև 2001թ. որոշ ձեռնարկություններ (անհատական, ընտանեկան) ունեին ֆիզիկական անձի կարգավիճակ: Սակայն ՀՀ կառավարության որոշմամբ բոլոր ձեռնարկությունները մինչև 2000թ. տարեվերջ պարտավոր էին վերագրանցվել պետական ռեգիստրի կազմակերպությունում, որը ձգձգվեց մինչև 2001թվականը: Այնուհետև, 2001թվականին. բոլոր կարգի ձեռնարկությունները, անկախ սեփականության ձևից, ստացան

իրավաբանական անձի կարգավիճակ: Դա նշանակում է, որ ձեռնարկություններն ունեն հաշվապահական հաշվեկշիռ և հաշվետվություններ, տնտեսական ինքնուրույնություն ու տնտեսական ազատություն և իրենց գործունեությունը կազմակերպում են կանոնադրության հիման վրա, դրամական միջոցները պահում են առևտրային բանկերում՝ բացելով իրենց հաշվարկային հաշիվը, ունեն կտր կնիք և դրոշմակնիք:

Ձեռնարկությունները համարվում են որպես կոմերցիոն (առևտրային) կազմակերպություններ և տնտեսավարող սուբյեկտներ:

Տնտեսավարող են համարվում այն սուբյեկտները, որոնք զբաղվում են ձեռներեցությամբ, այսինքն ազատ տնտեսական շահավետ գործունեությամբ, որոնց նպատակն է բավարարել սպառողների պահանջ-մուտքները և ապահովել շահույթ: Տնտեսավարող սուբյեկտները, մյաժամանակ, զբաղվում են բիզնեսով, այսինքն՝ կոմերցիոն գործունեությամբ: Շուկայական տնտեսության պայմաններում գոյություն ունեն սեփականության բազմազան ձևեր և 1992-2004թթ. երկրի տնտեսությունում կատարված տնտեսական վերափոխումների շնորհիվ կազմակերպվել են ձեռնարկությունների տարբեր տեսակներ: Դրանք են՝

• **Մայր ձեռնարկություններ** - որոնք կազմակերպվում են պետական, կոլեկտիվ և խառը սեփականության ձևերի հիմուն վրա: Նրանք համարվում են իրավաբանական անձ , գլխամասային ձեռնարկություն և ունեն իրենց ենթակա Կուստոր ձեռնարկությունները (կազմում են կոնսոլիդացված՝ հավաքական, ամբողջական հաշվեկշիռ),

• **դուստր ձեռնարկություններ**, որոնք նույնպես կազմակերպվում են սեփականության տարբեր ձևերի վրա և ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, օգտագործում են մայր ձեռնարկությունների աշխատանքի միջոցները (որոնց տնտեսական ձևը կոչվում է հիմնական միջոցներ) և ենթակա են մայր ձեռնարկությանը,

• **հոլդինգային կազմակերպություններ (holding - անգլերեն բառ է, որը նշանակում է 1. միավորում, 2. ֆինանսների կառավարման իրավասություն):**

Այս դեպքում ֆինանսները կենտրոնանում են հոլդինգի տրամադրության ներքո՝ որպես գլխամասային ձեռնարկություն: Այսինքն հոլդինգը միաժամանակ նշանակում է ֆինանսների կառավարման իրավասություն: Օրինակ, մեր երկրում ստեղծված է «Ազոտսպասարկում» հոլդինգային կազմակերպությունը, որի մարզային ենթակայության ազոտսպասարկման ձեռնարկությունների ֆինանսները կենտրոնացված են հոլդինգում: Գոյություն ունի նաև «Գրանդ հոլդինգ» առևտրային կազմակերպությունը, որը միավորում է «Գրանդ Տոբակո» հայ-կանադական համա-

տեղ ձեռնարկությունը, «Գրանդ քենդլ», «Ինտերնեյշնլ Մասիս տոբակո» և «Գրանդ սան» (Մեծ արև) ձեռնարկությունները:

• **Համապեղ ջեռնարկություններ**- իս ձեռնարկության այն տեսակն է, որը հիմնադրվում է օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ և ըստ մեր երկրում գործող «Կապիտալ ներդրումների խրախուսման մասին» օրենքի՝ օտարերկրյա ներդրումների չափը չպետք է ցածր լինի 250 մլն դրամից (մինչև 1999թ. եղել է 500մլն դրամ): Այդ ձեռնարկությունները օգտվում են հարկային արտոնությունից (առաջին երկու տարին լրիվ չսփռվով ազատվում են շահութահարկից, իսկ հետագայում ութ տարին վճարում են շահութահարկ 50%-ի չափով): Սակայն եթե լուծարվեն ժամկետից շուտ, ապա շահութահարկը պետք է մուծեն լրիվ չափով),

• **Ընկերակցություններ**- որոնք ստեղծվում են հիմնադիրների միջոցներով՝ որպես կարգ քաղաքացիների (մասնավոր) կամ խառը սեփականության հիման վրա: Մինչև 2001թ., որպես հիմնադիրների նվազագույն քանակ սահմանված էր երկու անձ, իսկ ներկայումս կարող է կազմակերպվել մեկ անձով: Ընկերակցությունները լինում են երկու տեսակի:

• **Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերակցություն (ՄՊԸ)**- Սահմանափակ է կոչվում այն պատճառով, որ լիցենզիայով (գործունեության թույլտվությամբ) սահմանափակվում է գոյծունեության տեսակները, ինչպես նաև հիմնադիրների պատասխանատվությունը: Հիմնադիրները կոչվում են գործընկերներ: ՄՊԸ-ի դեպքում յուրաքանչյուր գործընկեր պատասխանատու է իր ներդրածի համար: Դրա համար էլ մեր երկրում առավել մեծ տարածում են ստացել ՄՊԸ-ները, որը համապատասխանում է հայի հոգեբանությանը՝ պատասխան տալ միայն իր ներդրածի համար:

• **Սահմանափակ կամ լիակատար փոփոխական ընկերակցություններ**: Լիակատար է կոչվում այն պատճառով, որ լիցենզիայով չի սահմանափակվում գործունեության տեսակները, իսկ հիմնադիրներն ունեն հավասար իրավունք՝ և չի սահմանափակվում նրանց պատասխանատվությունը, քանի որ կրում են գույքային պատասխանատվություն: Նրանք հանդես են գալիս LSԸ-ի տեսքով: Օրինակ, մեր երկրում առևտրի բնագավառում գոյծում էր «Հայրապետյան եղբայրներ» LSԸ-ն, որը այժմ դարձել է ՓԲԸ:

• **Բաժնեպիրական ընկերություն (ԲԸ)**. Կազմակերպվում է պետական, կոլեկտիվ կամ խառը սեփականության հիման վրա: Բաժնետիրական ընկերության հայրենիքը ԱՄՆ-ն է, որտեղ այն կազմավորվում է մեկ անձով, ինչպես հիմա մեր երկրում: Բաժնետիրական ընկերությունները լայն տարածում են ստացել աշխարհում և հատկապես ԱՄՆ-ում, որոնց

1950թ. անվանում էին ժողովրդական ձեռնարկություններ, նկատի ունենալով, որ սեփականության բաժնեմասնակցությամբ մասնակցում են նաև վարձու աշխատողները: Բաժնետիրական ընկերությունը կազմակերպվում է հիմնադիրների սեփական միջոցներով, ինչպես նաև բաժնետերերի ներդրումով, որի չափը արտացոլվում է ձեռնարկության կանոնադրի կապիտալում: Այն միաժամանակ կոչվում է բաժնետիրական կապիտալ (հաշվառման ատանդարտով՝ բաժնեհավաք կապիտալ): Այդ միջոցների հաշվով թողարկվում են բաժնետոմսեր, որոնք ունեն անվանական արժեք (մեր երկրում 1-20 հազ. դրամ անվանական արժեքով):

Կանոնադիր կապիտալ է կոչվում, քանի որ նրա չափն արձանագրվում է ձեռնարկության կանոնադրությամբ: Ընդ որում, նրա չափը հաշվապահական (ֆինանսական) հաշվառման մեջ չի փոխվում այնքան ժամանակ, մինչև որ չի ձևավորվում լրացուցիչ կապիտալ և նրա հաշվին նոր բաժնետոմսեր՝ նախկին անվանական արժեքով, որի արժեքի չափով էլ ավելանում է կանոնադիր կապիտալը:

Գոյություն ունի բաժնետոմսերի երեք տեսակ՝ սովորական, արտոնյալ և ներկայացուցչական:

Սովորական են կոչվում այն բաժնետոմսերը, որոնց հաշվով յուրաքանչյուր ստանում է դիվիդենդ (շահաբաժին)՝ ըստ ԲԲԸ-ի տնտեսաֆինանսական գործունեության արդյունքների (ըստ շահութաբերության): Երբ հիմնադրվում է բաժնետիրական ընկերություն, թողարկվում է սովորական բաժնետոմսեր և մինչև բյուջե արժեքի վճարումը բաժնետերերի կողմից արգելվում է թողարկել այլ տեսակի բաժնետոմսեր:

Արտոնյալ են կոչվում այն բաժնետոմսերը, որոնց բաժնետերերը ստանում են շահաբաժին՝ նախօրոք ֆիքսված՝ կայուն չափով: Նախկին օրենքով (1993թ.) բաժնետիրական ընկերությունները մեր երկրում երեք տեսակի էին՝

- **ՊՓԲԸ**, որի դեպքում բաժնեմասի 51 %-ը պատկանում էր պետությանը,
- **ՓԲԸ**, որը կազմակերպվում էր պետական, կոլեկտիվ և խառը սեփականության հիման վրա,
- **ԲԲԸ**:

Սակայն ԲԸ-ի մասին նոր օրենքով (2001թ. սեպտեմբերի 25), ԲԸ-երը լինում են երկու տեսակի՝ ՓԲԸ և ԲԲԸ:

Եթե սեփականության 51 %-ը ըստ բաժնետոմսի գտնվում է որևէ անձի մոտ, ապա այն կոչվում է «սպունդիչ ծրար» և իրավունք է տալիս կառավարելու այդ ձեռնարկությունը:

ՓԲԸ. - կոչվում է այն ընկերությունը, որի դեպքում բաժնետոմսերի

բաժանողազրույթությունը կատարվում է փակ ձևով՝ միայն հիմնադիրների միջև: ԲԲԸ- բաց է կոչվում այն բաժնետիրական ընկերությունը, որի էկզ-քում բաժնետոմսերի բաժանողազրույթությունը կատարվում է բաց ձևով: Այս դեպքում բաժնետոմսերի 25 %-ը բաժանողազրույթում է փակ ձևով, միայն հիմնադիրների միջև. իսկ 75 տոկոսը՝ ազատ բաժանողազրու-թյան ձևով: ԲԲ-ում նույնիսկ ԲԲԸ-ի դեպքում բաժանողազրույթությունը կատարվում է փակ ձևով: Ըստ նոր օրենքի, Հայաստանում նախկինի հա-մեմատությամբ գոյություն ունի ոլորտային առանձնահատկություններ: Դրանք են՝

- եթե նախկինում բաժնետիրական ընկերությունը կարող էր հիմնադր-վել առնվազն երկու անձի դեպքում, ապա 2001թ. սեպտեմբերի 25-ի նոր օրենքով այն կարող է կազմակերպվել մեկ անձի միջոցով,

- եթե մինչև 2001թ. գոյություն ուներ բաժնետիրական ընկերության ե-րեք տեսակ, ապա ներկայումս գոյություն ունի երկու տեսակ, ՓԲԸ և ԲԲԸ,

- եթե նախկին օրենքով ՓԲԸ-ի բաժնետերերի թիվը սահմանափակվում էր 25-ով և ավելանալու դեպքում մինչև 6 ամիսը պետք է վերակազմավոր-վեր ԲԲԸ-ի, ապա նոր օրենքով ՓԲԸ-ի բաժնետերերի թիվը սահմանա-փակվում է 49-ով և մինչև մեկ տարին պետք է վերակազմավորել ԲԲԸ-ի:

ՓԲԸ կազմակերպելու համար հիմնադիր կապիտալի նվազագույն չա-փը պետք է կազմի նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը (100x 1000 = 100000) չափով՝ ԲԲԸ-ի դեպքում՝ հազարապատիկի չափով (1000 x 1000 = 1 մլն դրամ):

- **Անհատական ձեռնարկություններ**- որոնք կազմակերպվում են քա-ղաքացու (մասնավոր) սեփականության հիման վրա: Այս դեպքում ձեռ-նարկությունը ղեկավարում է ինքը՝ սեփականատերը: Ընդ որում, մինչև 2001թ. անհատական և ընտանեկան ձեռնարկություններն ունեցել են ֆի-զիկական անձի իրավունք, իսկ ներկայումս բոլոր կարգի ձեռնարկու-թյունները (անկախ սեփականության ձևից), ունեն իրավաբանական ան-ձի կարգավիճակ:

- **Ընդհանրական ձեռնարկություններ**- կազմակերպվում է քաղաքացի-ների (մասնավոր) սեփականության հիման վրա: Ձեռնարկությունների աշխատողները համարվում են ընտանիքի չափահաս անդամները, որից մեկը համարվում է ղեկավար:

- **Գյուղացիական տնտեսություններ**- որոնք կազմակերպվել են 1992թ. փետրվարից հողի մասնավոր սեփականության հիման վրա:

- **Գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ**- որոնք նույնպես կազմակերպվել են նույն ժամանակաշրջանում՝ հողի և մյուս հիմնական

միջոցների կոլեկտիվ սեփականության հիման վրա,

- **Կորպորացիաներ (յարհներեն – corpus բառից, որը նշանակում է մեկ մարմին, միավորում):** Լինում են տարբեր տեսակի կորպորացիաներ (սովորական և S-տիպի): Դրանք իրարից տարբերվում են բաժնետոմսե-րի շահաբաժնի չափով: Ըստ էության, կորպորացիան գլխամասային ձեռնարկություն է. ինչպես իրավունքը և նրան ենթակա են համանման գոր-ծունեությամբ զբաղվող ձեռնարկություններ: Կորպորացիան կարող է կազմակերպել ուրպես ինքնուրույն ձեռնարկություն:

2004թ. հոկտեմբերի 1-ի պայմաններում մեր երկրում գրանցված են եղել 51240 առևտրային կազմակերպություններ, որոնք ուրպես ձեռնարկություն-ներ համարվում են տնտեսավարող սուբյեկտներ: Դրանց մեջ գերակշռողը հանդիսանում են ՍՊԸ-ները (27085 հատ): Ընդ որում, ըստ ԱՎԾ-ի տվյալ-ների, ուրանց թիվը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 7.4 տո-կոսով: Մասնավոր, այսինքն անուատակա և ընտանեկան ձեռնարկու-թյունների թիվը կազմում է 7705, արտադրական կուպերատիվներինը՝ 5493, ՓԲԸ՝ 3116: Գրանցված ձեռնարկությունների մեծամասնությունը՝ 23589 զբաղվում են մեծածախ և մանրածախ առևտրով: Մեծածախ է կոչ-վում այն առևտուրը, որի դեպքում ապրանքները վաճառվում են խոշոր խմ-բաբանակով, ինչպես տոնավաճառները (երկրում կա 60-ից ավելի տոնա-վաճառներ): Մանրածախ է կոչվում այն առևտուրը, որը ապրանքներ է վաճառում բնակչությանը հատերով, այսինքն՝ փոքր խմբաբանակով:

Ձեռնարկություններից 9062-ը համարվում են հունք վերանշակող, 2925-ը՝ զբաղվում են վարձակալությամբ և անշարժ գույքի վաճառքով, 2763-ը՝ գործում են շինարարության բնագավառում: 51240 ձեռնարկու-թյուններից 40654-ը համարվում են իրավաբանական անձի կարգավիճակ ունեցողներ, 8450-ը՝ հիմնադրել են ֆիզիկական անձինք (ընտանեկան և անհատական ձեռնարկություններ): Սակայն հարկ է նկատի ունենալ, որ ըստ ՀՀ կառավարության որոշման, 2001թ. բոլոր կարգի ձեռնարկություն-ներն ունեն իրավաբանական անձի կարգավիճակ և վերագրանցվել են պետոնգիստրի կազմակերպությունում: 1419 ձեռնարկությունների հիմ-նադիրը համարվում է պետությունը, քանի որ նրանց ամբողջ բաժնետոմ-սերը (100%) պատկանում է պետությանը: Գոյություն ունի 2075 համատեղ ձեռնարկություն, որոնց ներդրումների չափը 2004թ. տասն ամսում կազմել է 21 մլրդ դրամ, որից 1.2 մլրդ դրամը՝ օտարերկրյա ներդրումներ:

Այդ նույն ժամանակաշրջանում ֆինանսական սնանկացման են են-թարկվել և դադարեցրել գործունեությունը 4907-ը: Բացի այդ, կան 66339 անհատ ձեռնարկատերեր: Այդ նույն ժամանակաշրջանում լուծարվել են,

այսինքն իրենց գործունեությունը դադարեցրել են 213 ձեռնարկություններ, 159-ը գտնվում են լուծարման փուլում: Տնտեսավարող սուբյեկտներ են մտնում առևտրային բուհերը (21), վարկային (8), ապահովագրական (17), ներդրումային և այլ կազմակերպություններ (Աղյուսակ 14):

Աղյուսակ 14

Ձեռնարկությունների թիվը Հայաստանում (1998-2004թ.) ըստ ԱՎԾ-ի

№	Ձեռնարկությունների տեսակները	1998թ.	1999թ.	2004թ.	Փոփոխությունը	
					ավելացում	նվազում
1	Անհատական ձեռնարկություններ	5132	10558	6405	-	-
2	Ընտանեկան ձեռնարկությ.	676	766	1300	624	-
3	LSE	2135	2138	2140	5	-
4	Ձեռնարկությունների առանձին ստորաբաժանումներ	344	505	420	76	-
5	Դուստր ձեռնարկություններ	2004	1778	1450	-	554
6	Արտադրական կոոպերատիվներ	5967	8007	5493	-	474
7	Սպառողական կոոպերատիվներ	65	71	71	6	-
8	ՍՊԸ	13281	14956	27985	14707	-
9	ՓԲԸ	1137	2500	3116	1979	-
10	ԲԲԸ	910	1137	1590	2500	-
11	Պետական ձեռնարկություններ	1710	484	360	-	1350
12	Ընդամենը ձեռնարկություններ	37361	10900	51240	13879	-
13	Անհատ ձեռնարկատերեր	39952	47223	66339	26387	-
	Ընդամենը տնտեսավարող սուբյեկտներ	77313	88123	117579	59250	5105
14	Գյուղացիական տնտեսություններ	321000	335000	336000	15000	-
15	Գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ	296	322	322	26	-

2001-2004թթ. ավելացել են բոլոր կարգի ձեռնարկությունների թիվը, սակայն դրա հետ մեկտեղ տարեկան լուծարվում են հազարից ավելի ձեռնարկություններ: Մեր երկրում նոր կազմակերպվող ձեռնարկությունների թիվը տարեկան կազմում է 7 հազար, իսկ ԱՄՆ-ում՝ 700 հազար ձեռնարկություններ: ԱՄՆ-ում ձեռնարկությունների թիվը 1996թ. կազմել է 22.8 մլն հատ: Մեր երկրում 2001թ. գրանցվել են նոր անհատական ձեռնարկություններ 3500 և լուծարվել 776-ը: 2002թ. ստեղծվել է 3600, իսկ իրավաբանական անձի կարգավիճակով՝ 1500 ձեռնարկություն: 2001թ. գրանցվել է 46268 ձեռնարկություններ:

Ըստ մարզերի ձեռնարկությունների թիվը ամենաշատը Երևանում է՝ 24504 և ամենաքիչը՝ Վայոց-Ձորում՝ 602: 2003թ. հունվարի 1-ի դրությամբ մեր երկրում կա 119153 տնտեսավարող սուբյեկտներ:

Ձեռնարկությունների թիվը ՌԴ-ում կազմում է (1997թ.)

Ընդամենը ձեռնարկություններ 2249319	100%
Առևտրային կազմակերպություններ	82%
Պետական ձեռնարկություններ	10.7
Սունիցիպալ (տարածքային) ձեռնարկություններ	3.9
բաժնետիրական և տնտեսական ընկերակցություններ	39.8
ԲԲԸ	2.3
ՓԲԸ	29.4
ՍՊԸ	29.4
Գյուղացիական տնտեսություններ (ընտանեկան, կոլեկտիվ)	11%

Ապրանքը և նրա հատկանիշները.

Ձեռնարկությունների համար կարևորը ապրանքի իրացման շուկա ունենալն է:

Ձեռնարկությունների պատրաստի արտադրանքի այն մասը, որը վաճառվում է կոչվում է ապրանք: Ընդհանրապես, ապրանքը մի իր է, որը ենթակա է վաճառքի և որը քավարարում է սպառողի պահանջմունքները: Ձեռնարկությունների հիմնական խնդիրն է որոնել շուկաներ (տեղական, համաշխարհային) իր ապրանքը վաճառելու համար: Ձեռնարկությունները որպես տնտեսավարող սուբյեկտներ, համարվում են ապրանքար-

տաղադրողներ: Միատեսակ ապրանքարտադրողները կոչվում են մրցակիցներ: Նրանց միջև տեղի է ունենում մրցակցային պայքար՝ շուկաների համար և ապրանքի գնի ու իրացման հարցում: Բնական պաշարները (անտառները, հողը և ջրային պաշարները, ընդերքի հարստությունները) ապրանք չեն: Իրը, որպեսզի կոչվի ապրանք, նրա վրա պետք է կատարվի աշխատանքային ծախսեր, այսինքն նա լինի աշխատանքի արդյունք: Աշխատանքը մարդու նպատակահարմար գործունեությունն է, ըստ որի աշխատանքի միջոցների օգնությամբ ներագրում է աշխատանքի առարկայի վրա, ձևափոխում այն և պատրաստում արտադրանք: Հետևապես, անտառի վայրի ծառի պտուղներն ապրանք չեն: Որպեսզի այն դառնան ապրանք, պետք է կատարվի աշխատանք՝ հավաքելու, փոխադրելու, տեսակավորելու, փաթեթավորելու առումով և փոխադրվի շուկա՝ վաճառքի համար:

Անձնական, ընտանեկան, ինչպես նաև ձեռնարկությունների կողմից տնտեսական (արտադրական) կարիքների համար ծախսված հումք և նյութերն ապրանք չեն: Ապրանքի բնութագրի, ապրանքային արտադրության, նրա հատկանիշների, արժեքի որոշման վերաբերյալ առաջին անգամ ուսմունք է մշակել գերմանացի տնտեսագետ-գիտնական, փլիլիսոփա Կարլ Մարքսը՝ իր «Կապիտալ» աշխատության մեջ (1-ին հատույ, 1867թ.), որի համար համարվում է ժամանակակից տնտեսագիտության երկրորդ համճարը (Ադամ Սմիթից հետո): Ապրանքն ունի երկու հատկանիշ՝

- սպառողական արժեք,
- արժեք:

Ապրանքի սպառողական արժեքը՝ իրի օգտակարությունն է, պիտանիությունը, որակը, երաշխիքային ժամկետը, ծառայության ժամկետը, ըստ որի ապրանքը բավարարում է որոշակի պահանջմունքներ: Սպառողական արժեքը արժեքային ձևով չի գնահատվում: Ապրանքն ունի ծառայության որոշակի ժամկետ, որի ժամանակ այն օգտագործվում է (շահագործվում է) ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից, որի ընթացքում հաշվարկվում է հիմնական միջոցների ամորտիզացիան (amortizatione – մաշվածություն): Ապրանքի երաշխիքային ժամկետ, այն ժամկետն է, որի ընթացքում ոչ գնորդի մեղքով փչանալու դեպքում ապրանքարտադրողը կատարում է անվճար նորոգում: Տարբեր մեքենասարքավորումներ ունեն տարբեր երաշխիքային ժամկետներ՝ 6 ամսից մինչև երեք տարի, օրինակ՝ ճապոնական «ՍՈՆԻ» ֆիրմայի գունավոր հեռուստա-

ցույցի երաշխիքային ժամկետը երկու տարի է, իսկ նույն տեխնոլոգիայով հայկական «Արայ» ֆիրմայի հեռուստացույցինը՝ երեք տարի: Ապրանքը խանութից գնելու դեպքում գնորդը վաճառողից պետք է պահանջի տեխնիկական անձնագիր, որում նշվում է ապրանքի երաշխիքային ժամկետը և գնելու օրը, հաստատվում է խանութի դրոշմակնիքով:

Հիմնական միջոցները համարվում են ձեռնարկության ոչ ընթացիկ նյութական ակտիվներ, որոնք բաժանվում են երկու խմբի՝ մաշվող և չմաշվող ոչ ընթացիկ նյութական ակտիվների: Որպես մաշվող նյութական ակտիվներ համարվում են հիմնական միջոցները: Որպես չմաշվող հիմնական միջոցներ համարվում են հողատեսքերը, բնական պաշարները և նրանց սպառումը (օգտագործումը):

Ապրանքի միավորի գինը կոչվում է արժեք:

Խումբ ապրանքների արժեքը որոշելու համար անհրաժեշտ է նրանց բանակը բազմապատկել գնով և ստացված արժեքները գումարել: Ապրանքի արժեքը տնտեսագիտորեն հիմնավորված կարգով առաջին անգամ (1867թ.) որաշել է Կարլ Մարքսը, որը կլրատվել և կիրառվում է կապիտալիզմի՝ շուկայական տնտեսության և սոցիալիզմի՝ պլանային տնտեսության պայմաններում: Ըստ Մարքսի, ապրանքի արժեքը որոշվում է հտեկյալ բանաձևով.

$$W = C + V + M, \text{ որտեղ՝}$$

W- ն՝ ապրանքի արժեքն է,

C- ն՝ նյութական ծախսերն են (օգտագործված հիմնական միջոցների մաշվածությունը և շրջանառու միջոցների ծախսը),

V- ն՝ կենդանի աշխատանքային ծախսերը, այսինքն աշխատանքի վարձատրության ծախսերը,

M- ը՝ շահույթը:

Սակայն տարբեր գիտնականներ, տարբեր ժամկետներում այլ կերպ են որոշել ապրանքի արժեքը:

Ժամանակակից տնտեսագիտության հիմնադիր Ադամ Սմիթը ապրանքի արժեքը որոշել է իր տեսությամբ, այլ կերպ ապրանքի արժեքը որոշվում էր նրա վրա ծախսված աշխատանքային ծախսերով: Որպես համարժեքության սկզբունք ընդունվել է ծախսված աշխատանքային ժամկետը՝ (մարդ-ժամ), այսինքն՝ $W = V$:

Ըստ Դավիթ Ռիկարդոյի ռենտային տեսության, ապրանքի արժեքը որոշվում էր $W = V + R$, որտեղ՝

R-ը՝ ռենտան է, այսինքն՝ շահույթը գյուղատնտեսության մեջ: Ֆի-

նանսական հասկացությամբ ռենտա է կոչվում նաև պարբերաբար հասարակ վճարումները:

Ըստ ֆրանսիացի Սեյի, ապրանքի արժեքը որոշվում է երեք գործոնների տեսությամբ՝ (հող, սշխատուժ, կապիտալ, 1848թ.), այսինքն այն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$W = V + R + M, \text{ որտեղ՝}$$

M – ը՝ ներդրողի շահույթն է,

R – սեփականատիրոջ շահույթը:

Ինչպես երևում է, Ադամ Սմիթից մինչև Մարքսը, բոլորն էլ անտեսել են C-ի գոյությունը, որպես նյութական միջոցների ծախսի (C-ն կոչվում է նաև հաստատուն կապիտալ):

Ապրանքարտադրողները պարտավոր են ցույց տալ ապրանքի կողը, այսինքն թվային ծածկագիրը, որտեղ նշվում է ապրանքի ծագման վայրը (արտադրող երկիրը՝ Made in Armenian), ապրանքի անվանումը, սպառողական հատկանիշները, ստուգիչ թվանշանը և արտոնագրով պատրաստված ապրանքի նշանը: Դրանք ցույց են տրվում վաճառվող ապրանքի պիտակի վրա:

Վերջին տարիներին արտերկրներից հետ առևտրատնտեսական կապերի աշխուժացման արդյունքում մեր գործարարները և սպառողները շատ են առնչվում ապրանքների փաթեթներին, տուփերին, պիտակներին գծանշվող ծածկագրերին: Եթե դրանք մեզ համար նորույթ են, ապա աշխարհի բոլոր զարգացած երկրներում ծածկագրերի կիրառումը պարտադիր է սպառողական շուկա մտնող բոլոր ապրանքների համար:

Գծիկավոր ծածկագրերի և ավտոմատացված (ինքնաշխատ) համակարգերի կիրառումը 10-15 %-ով պակասեցնում է ապրանքի ինքնարժեքը՝ արդյունաբերողին հնարավորություն ընձեռելով հրաժարվելու մեծածավալ թղթարարությունից, միաժամանակ, արագորեն հետևելու ապրանքի տեղաշարժերին, շուկայի պահանջարկին, ինչպես նաև դյուրին դարձնում մաքսային և հարկային ծառայությունների գործը:

Միջազգային առևտրական շրջանակներում մեծ տարածում ունեն EAN - ԵԱՆ-13 ծածկագրման չափանիշները: Այդ աշխատանքները համակարգում է Բրյուսելում տեղակայված միջազգային կազմակերպությունը: ԵԱՆ-13 համակագին անդամակցում է 74 երկիր: ԵԱՆ-13 ծածկագիրը բաղկացած է տարբեր հաստության գծիկներից, ազատ տարածքները հաջորդությամբ թվագրված 8 կամ 13 նիշից:

Ծածկագրի կառուցվածքը ներառում է արտադրող երկրի, ձեռնարկու-

թյան և ապրանքի ծածկագրերը, վերջում տպագրվում է ստուգիչ թիվը: Երկիրը մատնանշող ծածկագրի համար նախատեսվում է երկու կամ երեք թիվ: Ձեռնարկությանը հատկացվում է չորս կամ հինգ նիշ, իսկ վերջում էլ՝ հինգ նիշ ապրանքի ծածկագրին: Երկրի ծածկագիրը միակն է, որ աչքի համար տեսանելի է: Ձեռնարկության ծածկագիրը կենտրոնացված ձևով տալիս է ազգային մարմինը, իսկ ապրանքի ծածկագիրը՝ արտադրողը: Սկզբի և վերջի գույգ երկարացման գծիկները նախատեսված են լուսային մատիտի կողմից ծածկագրի ճիշտ ընթերցման համար: Փոքրածավալ ապրանքների համար կիրառվում է ԵԱՆ-8 ծածկագրի կարճ տարբերակը, որտեղ նշվում է միայն երկրի և ձեռնարկության ծածկագիրը: Այլ համակարգ է գործում ԱՄՆ-ում և Կանադայում: Ներկայումս մշակվում են միացյալ համակարգեր: Այժմ ներկայացնում ենք մի շարք երկրների ապրանքի ծածկագրերը, որոնք հնարավորություն են տալիս որոշելու ապրանքն արտադրող երկիրը.

1.	ԱՄՆ	00-09
2.	Կանադա	00-09
3.	Ֆրանսիա	30-37
4.	Բուլղարիա	380
5.	Խորվաթիկ	380
6.	Գերմանիա	400-440
7.	Ռուսաստան	460-469
8.	Թայվան	471
9.	Էստոնիա	474
10.	Լատվիա	475
11.	Լիտվա	477
12.	Ֆիլիպիններ	480
13.	Ուկրաինա	482
14.	Հայաստան	485
15.	Հոնկոնգ	489
16.	Ճապոնիա	45-49
17.	Անգլիա	50
18.	Հունաստան	520
19.	Կիպրոս	529
20.	Մակեդոնիա	531
21.	Մալթա	535
22.	Իռլանդիա	539

23.	Բելգիա	54
24.	Պորտուգալիա	560
25.	Իսլանդիա	569
26.	Դանիա	57
27.	Լեհաստան	590
28.	Ռումինիա	594
29.	Հունգարիա	599
30.	ՀԱՀ	600-601
31.	Մարոկկո	611
32.	Թունիս	619
33.	Ֆինլանդիա	64
34.	Չինաստան	690-691
35.	Նորվեգիա	70
36.	Իսրայել	729
37.	Շվեդիա	73
38.	Գվատեմալա	740-745
39.	Մեքսիկա	750
40.	Վենեսուելա	759
41.	Շվեյցարիա	76
42.	Կոլումբիա	770
43.	Ուրուգվայ	773
44.	Պերու	775
45.	Բոլիվիա	777
46.	Արգենտինա	779
47.	Չիլի	780
48.	Պարագվայ	784
49.	Էկվադոր	786
50.	Բրազիլիա	789
51.	Իտալիա	80-83
52.	Իսպանիա	84
53.	Կուբա	850
54.	Սլովակիա	858
55.	Չեխիա	859
56.	Հարավսլավիա	860
57.	Թուրքիա	869
58.	Հոլանդիա	87

59.	Հր.Կորեա	880
60.	Թաիլանդ	885
61.	Սինգապուր	888
62.	Ինդոնեզիա	899
63.	Ավստրիա	90-91
64.	Ավստրալիա	93
65.	Նոր-Ջելանդիա	94
66.	Մալազիա	955
67.	Հնդկաստան	890
68.	Վիետնամ	893

Այժմ ցույց տանք, թե ինչպես «կարդալ» ապրանքի գծիկային ծածկագիրը.

Գծիկային ծածկագրման միջոցով գաղտնագրվում են ապրանքի որոշ կարևոր հատկանիշներ: Ըստ ԵԱՆ համակարգի, յուրաքանչյուր ապրանքատեսակին շնորհվում է համար, որը հիմնականում բաղկացած է 13 քվանտանից (ԵԱՆ-13):

Ծածկագրի ստուգիչ քվանշանը հաշվարկվում է հետևյալ կերպ.

- գումարել գույգ տեղերում գտնվող թվերը (9-2-1 –2-3-0.17)
- ստացված գումարը բազմապատկել 3-ով (17.3.51)
- գումարել կեն.ո տեղերում գտնվող թվերը (4.0.2.0.0.7.13),
- գումարել առաջին և երկրորդ կետերում ստացված թվերը (51-13-64)
- տասնյակները հսկելիս ստացվում է 4
- 10-ից հանել հինգերորդ կետի արայունքը (10- 4.6):

Եթե հաշվարկից հետո ստացված թիվը չի համապատասխանում ստուգիչ քվանշանին, նշանակում է ապրանքը կեղծ է (անբարեխիղճ մրցակցություն, որը դատապարտվում է Փարիզյան համաձայնագրով (1970թ., հոդ.10):

Հնարավոր է նաև այնպիսի տարբերակ, երբ արտադրող երկրի ծածկագրին հատկացվում է երեք քվանշան, իսկ ձեռնարկության ծածկագրին՝ չորսը: Մեծածավալ ապրանքները կարող են ունենալ 8 քվանոց ծածկագիր:

Սովորաբար, դա շնորհում է ԵԱՆ միջազգային ընկերությունը և երբեք միանիշ չի լինում: Երբեմն ապրանքի վրա հանդիպում է այսպիսի գրություն. «Պատրաստված է Հայաստանում՝ Made in Armenian», մինչդեռ նշված ծածկագիրը տվյալ երկրին չի համապատասխանում: Դա կարող է մի քանի պատճառ ունենալ.

- արտադրող ձեռնարկությունը (ընկերությունը) գրանցվել և ծածկա-

գիր է ստացել ոչ իր երկրում, այլ այնտեղ, ուր արտահանում է հիմնական արտադրանքը,

- ապրանքն արտադրվել է դուստր ձեռնարկությունում,
- հնարավոր է, որ այդ ապրանքն արտադրվել է մի երկրում, բայց մեկ այլ երկրի ընկերության արտոնագրով,
- ելք ձեռնարկության հիմնադիրներ են դառնում տարբեր երկրների մի քանի ընկերություններ:

Հարկ է նկատի ունենալ, որ, հատկապես, տնտեսապես զարգացող երկրների (ինչպիսին ԱՊՀ երկրներն են, այդ թվում՝ Հայաստանը), և աղքատ երկրների (աֆրիկյան երկրներ- քացի ՀԱՀ-ից, Ասիայի հարավային երկրներ՝ Հնդկաստան, Աֆղանստան, Պակիստան և այլն) շուկաներում տարածված է անորակ և օգտագործման համար ժամկետն անցած ապրանքներ (հատկապես՝ դեղորայք, կաթի փոշի, ձավարեղեն և այլն): Հետևապես, հարկ է գգուշանալ այդ ապրանքները գնելուց: Գրանք վտանգավոր են մարդու առողջության համար: Ընդ որում, ՄԱԿ-ի հանձնաժողովը հայտնում է, որ Գերմանիայում, Ֆիլիպիններում, Մալթայում և հատկապես Թուրքիայում լայն ծավալ է ստացել կեղծ մթերքների արտադրությունը: Այդ կասկածելի որակի մթերքները մեծ ծավալով իրացվում են ԱՊՀ երկրներում և հատկապես Վրաստանում, քանի որ վերջինս մոտ հարաբերություններ ունի Թուրքիայի հետ: Այդ մասին են ծանուցում Վրաստանի ԳԱ «Ագրոէկոլոգիա» կենտրոնը և մամուլը:

Այդ մթերքներում օգտագործվող էմուլգատորներն առաջացնում են ժռանգական քաղցկեղածին, սահմնաթունավոր և այլ հիվանդություններ: Ներմուծվող ապրանքի պիտակին կան թվային այլևայլ նշումներ, որոնք գնորդին ոչինչ չեն հուշում: Այդ է պատճառը, որ դժվար է ինչ-որ բան կռահելը: Հիմնականում այդպիսի պարենն ունի «E» նշանը, որը ցույց է տալիս տվյալ էմուլգատորի առկայությունը:

Հետաքրքրական է, որ տվյալ երկրներում կտրականապես արգելվում է ներմուծել այդպիսի մթերքները:

Ձեզ ենք ներկայացնում հիվանդություններ հարուցող և վստահություն չներշնչող էմուլգատորները.

- վտանգավոր են՝ E-102, E-110,-120, E-124, E-127,
- խիստ վտանգավոր է՝ E-23,
- արգելված է են՝ E-103, E-105, E-111, E-121 , E-125, E-126, E-130, E-152,
- կասկածելի է՝ E-104, E-171, E-122, E-141 , E-150իս E-173, E-180,

E-241, E-467,

- քաղցկեղածին՝ E-131, E-142, E-210, E-211 , E-213, E-215, E-217, E-330,
- խոլեստերին պարունակող մթերքներ՝ E-320, E-321, E-322,
- ցանային՝ E-311, E-312, E-313,
- աղետաճողաբան խախտումներ՝ E-221, E-222, E-223, E-224 , E-230, E-238, E-339, E-340, E-341, E-407 , E-450, E-461, E-463,
- ճնշում առաջացնող E-250 , E-251:

9.4.Ձեռնարկությունների ձևերը և արտադրության չափերը բնութագրող ցուցանիշները

Եթե ձեռնարկությունների տեսակները կախված են սեփականության ձևից, ապա ձեռնարկությունների ձևերը կախված են արտադրության չափերը բնութագրող ցուցանիշներից: Որպես այդպիսի ցուցանիշներ համարվում են.

- աշխատողների թվաքանակը,
- արտադրանքի իրացման տարեկան ծավալը:

Այս երկու ցուցանիշներն օգտագործվում են Արևմուտքի երկրներում: Մակայն շուկայական անտեսության անցման փուլում ԱՊՀ-ի երկրներում, այդ թվում և Հայաստանում, օգտագործվում է միայն առաջին ցուցանիշը, այսինքն աշխատողների թվաքանակը: Ընդհանրապես, ձեռնարկությունների չափերը բնութագրող ցուցանիշներով նրան լինում են երեք տեսակի.

- փոքր,
- միջին.
- խոշոր ձեռնարկություններ:

Ըստ «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» ՀՀ օրենքով (14.03.1992թ.), որն իր արտացոլումն է գտել քաղաքացիական օրենսգրքում (նոր օրենսգրքի ուժի մեջ է մտել 1999թ. հունվարից), ՀՀ-ում որպես փոքր ձեռնարկություններ, համարվում են.

- արդյունաբերության և շինարարության մեջ՝ մինչև 200 աշխատող,
- առևտրում և տրանսպորտում մինչև 50 մարդ,
- գյուղատնտեսության մեջ՝ մինչև 50 մարդ,
- գիտության ոլորտում՝ մինչև 25 մարդ,
- մանրածախ առևտրում և սպալսարկման ոլորտում՝ մինչև 25,

• այլ ճյուղերում՝ մինչև 15 մարդ:

Ընդ որում, ԱՊՀ-ի մյուս երկրներում այդ չափերը սալքեր են: Օրինակ, ՌԴ-ում այն կազմում է արդյունաբերության և շինարարության մեջ՝ մինչև 100 մարդ, առևտրում և տրանսպորտում՝ մինչև 100, գյուղատնտեսության մեջ և գիտության ոլորտում՝ մինչև 60, մանրածախ առևտրում և սպասարկման ոլորտում՝ մինչև 5,0 այլ ճյուղերում՝ մինչև 30 մարդ:

Մակայն Արևմուտքի երկրներում, որպես կարևոր ցուցանիշ ընդունում են արտադրանքի իրացման ծավալը: Օրինակ, ԱՄՆ-ում այն կազմում է.

• փոքրագույն ձեռնարկություններ, տարեկան մինչև 100 հազար \$ իրացման ծավալ,

• փոքր ձեռնարկություններ՝ մինչև 300 հազ. \$,

• միջին չափի ձեռնարկություններ՝ 300-500 հազ. \$,

• խոշոր՝ 500 հազ. - 1 մլն \$,

• խոշորագույն – մեկ մլն \$ և բարձր:

ԱՄՆ-ում գոյություն ունի (1996թ.) 22.8 մլն ձեռնարկություն, որից 200 հազարը համարվում են խոշոր, մյուսները՝ փոքր և միջին ձեռնարկություններ: Գոյություն ունեն մեծ ձեռնարկությունների այնպիսի տեսակներ, որոնք համարվում են միավորումներ, դրանց մեջ կան մենաշնորհային ձեռնարկություններ: Մենաշնորհային են կոչվում այն ձեռնարկությունները, որոնք իրենց ապրանքի վաճառքով կամ ծառայությունների մատուցումով շուկայում կազմում է 60%-ից բարձր դիմաց, Օրինակ՝ «Արմենթեր», «Գրանդ տորակո», «Ինտերնեյշնլ Մասիս տորակ», «Նախիլտ» ՓԲԸ և այլն: Ըստ ՀՀ ԱՎԾ-ի տվյալների, մեր երկրում 2003թ. մասնավորեցվել են 117 փոքր և խոշոր ձեռնարկություններ, որից 96-ը՝ ուղղակի վաճառքի ձևով, 13-ը՝ մրցույթով, 7-ը՝ աճուրդային, այսինքն ազատ վաճառքի կարգով և մեկը՝ ֆինդային բորսայում բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով: Այդ ձեռնարկությունների մասնավորեցումից պետբյուջե է մուտքագրվել 2.9 մլրդ դրամ: Ըստ ՀՀ կառավարության 2004-2007 թթ. մասնավորեցման եռամյա ծրագրի, պետբյուջե կմուտքագրվի ևս 1.7 մլրդ դրամ և կստեղծվի ևս 1670 աշխատատեղ:

18-19-րդ դարերում Արևմուտքի երկրներում լայն տարածում են ստացել մեծ միավորումների հետևյալ ձևերը՝ տրեստներ՝ շինարարության մեջ, կոնցեռններ՝ միավորում են մեծ ֆինանսական կազմակերպություններ և առևտրային բանկեր, սինդիկատներ, կարտելներ և այլն: Ներկայումս մեր երկրի էներգահամակարգում ստեղծված է եռաստիճան համակարգով ձեռնարկություններ (արտադրող, փոխադրող և իրացնող): Դա էլ նպաս-

տեց էլեկտրատներգիայի մեկ կվտ/ժ-ի սակագնի բարձրացմանը, որը կազմում է 25 դրամ, այսինքն հինգ անգամ բարձր քան ՌԴ-ում և ԱՊՀ-ի այլ երկրներում: 2004թ. սեպտեմբերից մեր երկրում վերացվեց միջնորդ օղակը՝ փոխադրողը, սակայն սակագնի մեջ փոփոխություն չկատարվեց:

1980-ական թվականներին միջազգային առևտրի ոլորտում կազմակերպվել են մեծ բեռնափոխադրումների գծով կազմակերպություններ, որոնք կոչվում են տրանսազգային միավորումներ (ՏԱԿ): Դա աշխատանքի միջազգային բաժանման արդյունք է:

1992թ. փետրվարից գյուղատնտեսության մեջ և 1993թ. արդյունաբերության մեջ, առևտրի փոքր օբյեկտներում և անավարտ շինարարության մեջ կատարվում է սեփականաշնորհում (1999 թվականից՝ մասնավորեցում), որի հիման վրա կազմակերպվել են ոչ պետական առևտրային կազմակերպություններ, այսինքն՝ ձեռնարկություններ:

Սեփականաշնորհում նշանակում է պետական սեփականության ապապետականացում, այսինքն՝ սեփականության ձևի փոփոխություն:

1992-2004թթ. մեր երկրի տնտեսության մեջ կատարվել է տնտեսական վերափոխումներ և սեփականաշնորհման հիման վրա ապապետականացվել են պետական ձեռնարկությունները: Ստեղծվել են սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված ձեռնարկություններ: Ընդ որում, 1992 թ. փետրվարից սեփականաշնորհումը սկսվել է գյուղատնտեսության մեջ՝ սեփականաշնորհվել է կողը, կենդաններն ու տեխնիկան: Գյուղատնտեսության մեջ սեփականաշնորհումն իրականացվել է «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքով: 1993թ. ընդունվել է օրենք՝ «Սեփականաշնորհման մասին», որով նախատեսվել էր ձեռնարկությունների ունեցվածքի արժեքի 30%-ը իրականացնել սեփականաշնորհման սերտիֆիկատներով (հավաստագրերով) և 70 %-ը՝ կանխիկ փողով: Ընդ որում, 20 %-ը պետք է սեփականաշնորհվեր կոլեկտիվին՝ անվճար կարգով: Սեփականաշնորհումը պետք է ավարտվեր 2006թ., սակայն նախկին իշխանությունը կոպիտ կերպով խախտեց այդ օրենքի պահանջները և նոր իշխանությունը 1999թ. հունվարից ստիպված եղավ սեփականաշնորհումը փոխարինել մասնավորեցումով, այսինքն՝ միայն փողով և տեղական կամ միջազգային մրցույթով: 1992-1998 թթ. պետական ձեռնարկությունների 96.4 տոկոսը սեփականաշնորհվել էր սերտիֆիկատով և միայն 3.6 տոկոսը՝ փողով:

Ըստ ԱՎԾ-ի տվյալների՝ 2003թ. օգոստոսի 1-ի դրությամբ, մեր երկրում սեփականաշնորհված է 9047 առևտրի փոքր օբյեկտներ, որից պետ-

բյուջե է մուտքագրվել 138 մլրդ դրամ: Այդ նույն ժամանակաշրջանում սեփականաշնորհով է 1804 պետական ձեռնարկություն և անսովորտ շինարարության 61 օբյեկտ: Ձեռնարկությունների սեփականաշնորհումից ստացվել է 108.7 մլրդ դրամ, անսովորտ շինարարության օբյեկտներից՝ 78.1 մլրդ դրամ: Մինչև 2005թ. դեռևս պետք է մասնավորեցնել 360 պետական ձեռնարկություն: Պետական ձեռնարկությունները մասնավորեցման նպատակով երկրում կազմակերպված է պետական գույքի կառավարման վարչություն: Ներկայումս մեր երկրում հազարից ավելի ձեռնարկություններ թեև սեփականաշնորհված են, սակայն չեն գործում: ԱՊՀ-ի որոշ երկրներում այդպիսի ձեռնարկությունների համար ընդունել են օրենք ազգայնագման մասին, սակայն մեր երկրում այդպիսի օրենք դեռևս ընդունված չէ:

9.5. Ձեռնարկությունների տնտեսական պաշարները, ունեցվածքը և կապիտալը

Ձեռնարկությունները զբաղվում են նյութական բաղադրանքի՝ պատրաստի արտադրանքի արտադրությամբ և ծառայությունների մատուցմամբ: Դրա համար նրանք պետք է՝

- ունենան լիցենզիա, այսինքն՝ գործունեության թույլտվություն,
- զբաղվեն պետական ռեզիստիվ կազմակերպությունում, որպես իրավաբանական անձ և տնտեսավարող սուբյեկտ,
- հաշվառման կանոններ հարկային տեսչությունում՝ ուտանալով կողմ հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ),
- զբաղվեն սոցիալական արհեստագործության հիմնադրամում (կենսաթոշակային հիմնադրամ) որպես սոցիալական վճարներ վճարող,
- զբաղվեն սզգային վիճակագրական ծառայությունում որպես իրավաբանական անձ, որը պետք է ներկայացնի վիճակագրական հաշվետվություններ:

Ձեռնարկություններն իրենց գործունեությունը համաչափ կազմակերպելու նպատակով, պետք է ապահովված լինեն տնտեսական պաշարներով: Դրանց մեջ ներառվում են աշխատանքի միջոցները (շենքեր, մեքենասարքավորումներ և այլն), որոնց տնտեսական ձևը կոչվում է ոչ ընթացիկ մաշվող նյութական ակտիվներ, այսինքն՝ հիմնական միջոցներ, աշխատանքի առարկաներ (ուսմք և նյութեր, այլ պաշարներ), որոնց տնտեսական ձևը կոչվում է ընթացիկ ակտիվներ (պաշարներ), այսինքն շրջանառու միջոցներ և դրամական միջոցներ (որպես ֆինանսական պաշարներ), ինչպես նաև աշխատուժ, որպես աշխատանքային պաշարներ:

Գոյություն ունի միջոցների հոսք և պաշար հասկացությունը.

Հոսք միջոցների շարժն է ժամանակի ընթացքում, իսկ **պաշարը**՝ դրամական և նյութական միջոցներն են, որոնք անհրաժեշտ են արտադրանքի արտադրության համար:

Այսպես, ենթադրենք ջրի ծորակից ջուրը հոսում է և թափվում վաննայի մեջ: Ծորակից հոսող ջուրը կոչվում է հոսք, իսկ վաննայի մեջ թափված ջուրը՝ պաշար: Բոլոր տեսակի տնտեսական պաշարները դասակարգվում են ըստ հետևյալ խմբերի.

• **Նյութական պաշարներ** - Դրանք այն պաշարներն են, որոնք հանդես են գալիս նյութական արժեքի ձևով, այսինքն հաշվառման մեջ չափվում են բնեղեն և արժեքային չափիչներով:

Որպես նյութական պաշարներ համարվում են աշխատանքի միջոցները և աշխատանքի առարկաները, այսինքն՝ հիմնական և շրջանառու միջոցները: Դրանք միասին կոչվում են նաև արտադրության միջոցներ՝ աշխատուժը ներառյալ, կազմում են ձեռնարկության արտադրողական ուժը: Որքան զարգացած լինի երկրի, նրա ճյուղերի և ձեռնարկությունների արտադրողական ուժը, այնքան ավելի շատ արտադրանք կարելի է արտադրել:

• **Աշխատանքային պաշարներ** .- Որպես ձեռնարկության աշխատանքային պաշարներ համարվում է փաստացի աշխատուժը, այսինքն մտավոր և ֆիզիկական աշխատունակ մարդիկ: Երկրի մասշտաբով, որպես աշխատանքային պաշարներ համարվում են 16-63 տարեկան աշխատունակ տղամարդիկ և աշխատունակ կանայք:

• **Ֆինանսական պաշարներ**- Դրանք այն դրամական միջոցներն են, որոնք ներդրվում են գործի մեջ, փոխարկվում կապիտալի (ընթացիկ և երկարաժամկետ), որը ձեռնարկությանը շահույթ է բերում: Այսպես, արտադրություն կազմակերպելու նպատակով ձեռնարկությունը կատարում է դրամական՝ ընթացիկ ծախսեր (զազի, ջրի, էներգիայի համար և այլ վճարումներ), ստանում է պատրաստի արտադրանք, որի իրացումից վճարում է հարկերը և հասույթից փոխհատուցելով ընթացիկ ծախսերը, ստանում է շահույթ: Բացի այդ, ձեռնարկություններն ունեն սեփական և ներգրավված միջոցներ, որոնք կազմում են, համապատասխանաբար, սեփական և փոխառու կապիտալը:

Համախառն շահույթից ձեռնարկությունը վճարում է շահութահարկ և մնացածը, որպես զուտ շահույթ և բաշխման ենթակա շահույթ, բաշխում է արտադրության զարգացման և տնտեսական խթանման ֆոնդերին: Դրանք որպես դրամական միջոցներ հանդես են գալիս ֆինանսական պաշարների ձևով:

**Գ Լ ՈՒ Խ 10 . – ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ,
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՄԱՍՆԱԳԻՏԱՅՈՒՄԸ
ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ**

10.1.Արտադրության էությունը և նրա տեսակները

Արտադրություն ասելով հասկացվում է նյութական բարիքի, այսինքն՝ պատրաստի արտադրանքի արտադրության կազմակերպում կամ ծառայությունների մատուցում: Արտադրությամբ զբաղվող տնտեսական կազմակերպական-իրավական միավորները կոչվում են առևտրային կազմակերպություններ: Երկրի տնտեսությունը բաղկացած է նյութական արտադրության ճյուղերից (գյուղատնտեսություն, արդյունաբերություն, տրանսպորտ, կապ) և ոչ նյութական արտադրության ոլորտից: Պատմականորեն ձևավորվել են արտադրության հետևյալ ձևերը.

• **համքարային**, դա արտադրության այն ձևն է, որի ժամանակ շի եղել համակարգված տեխնոլոգիա, այսինքն արտադրանքի պատրաստման եղանակ և արտադրված նյութական քիմիկատները սպառվել են համայնքի ներսում,

• **անհատական** – կազմակերպվում է այն ապրանքների արտադրությունը, որնք կրում են անհատական բնույթ՝ որպես անհատական պատվերի վրա հիմնված արտադրություն (կոշիկի, հագուստի և այլն),

• **սերիական** – որը կազմակերպվում է սերիական ձևով և մեծ խմբերով: Արտադրության այս ձևն իր հերթին բաժանվում է փոքր և խոշոր սերիական արտադրության: Ընդ որում, փոքր սերիականը մոտ է անհատականին, խոշորը՝ զանգվածային արտադրությանը:

• **զանգվածային արտադրություն** - կատարվում է որոշակի տեխնոլոգիայով և զանգվածային կարգով: Առաջին զանգվածային արտադրությունը կազմակերպվել է Անգլիայում 1830 թ., երբ առաջին ջրաղացի միջոցով հացահատիկից արտադրվել է տարբեր տեսակի ալյուր:

Ներկայումս արտադրության անհատական, փոքր և մեծ սերիական և զանգվածային ձևերով արտադրանքի արտադրություն է կազմակերպվում արդյունաբերության ճյուղերում: Ինչ վերաբերվում է գյուղատնտեսության ճյուղին և գյուղատնտեսական հումք վերամշակող սննդի արդյունաբերությանը, ապա արտադրությունը կազմակերպվում է զանգվածային ձևով:

Մասնագիտացման և կոոպերացման ձևերը

Մասնագիտացումը և կոոպերացումը աշխատանքի կազմակերպման

ձևերից են: Թե մասնագիտացումը, և թե կոոպերացումը մաև աշխատանքի բաժանման արդյունք են: Ընդ որում, գոյություն ունի աշխատանքի բաժանման հրկու ձև՝ տեղական և միջազգային:

Մասնագիտացում նշանակում է համասեռ տեխնոլոգիայով արտադրանքի արտադրության կազմակերպում: Այս դեպքում արտադրությունը մասնատվում է ճյուղերի և կազմակերպվում է արհեստավարժ բանվորների կազմով արտադրանքի արտադրության կազմակերպում: Մասնագիտացման նպատակն է արտադրել ավելի շատ արտադրանք՝ նվազագույն ծախսումներով: Պատճառակապակցում է ձևավորվել է մասնագիտացման հետևյալ ձևերը.

• **առարկայական** .- այսինքն, երբ կազմակերպվում է այս կամ այն առարկայի (արտադրանքի տեսակամու) արտադրություն,

• **ըստ պատրաստի արտադրանքի** .- այսինքն, էրբ հիմնադրվում է գործարան, որը զբաղվում է արտադրանքի արտադրությամբ,

• **դեպոսիտային** - այսինքն, երբ դուստր ձեռնարկություններն արտադրում են այս կամ այն դեռալները, իսկ գլխաձասային, մայր ձեռնարկությունում կատարվում է արտադրանքի պատրաստում (օրինակ, հաստոցների, ավտոմեքենաների, զանազան տեխնիկայի և սարքավորումների հավաքում),

• **փուլային մասնագիտացում** .- այսինքն, երբ արտադրանքի արտադրությունը կազմակերպվում է ըստ փուլերի (օրինակ՝ ձուլման, կոման, դրոշմման արտադրամասեր),

• **ավարտուն փուլով տեխնոլոգիա** - մասնագիտացում է, որի դեպքում արտադրանքը արտադրվում է լրիվ փուլով: Այս դեպքում անցկացվում են տեխնոլոգիական հոսքագծեր, օգտագործվում են ավտոմատ (ինքնաշխատ) սարքեր, կիրառվում է ութոտոտեխնիկա: Աշխատատար գործընթացները լրիվ մեքենայացվում են և կիրառվում է առաջադիմական բարձր տեխնոլոգիա՝ ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիան, այսինքն արտադրության կառավարումը համակարգչային տեխնիկայով:

• **Կոոպերացում** - նշանակում է միավորում: Եթե մասնագիտացումը արտադրությունը մասնատում է առանձին ճյուղերի, ապա կոոպերացումը միավորում է մի քանի ճյուղեր և կազմակերպում խոշոր արտադրություն:

Կոոպերացիան տեղի է ունենում նյութական արտադրության բոլոր ճյուղերում, այդ թվում՝ առևտրի ոլորտում, ուր կազմակերպվում է սպառողական կոոպերացիաներ: Արտադրության մեջ այն կոչվում է արտադրական կոոպերացիա, ըստ որի կազմակերպվում են արտադրական կոոպե-

քատիվներ: Գյուղատնտեսության մեջ դրանք կոչվում են գյուղատնտեսական կոոպերատիվներ: Ընդ որում, հողի սեփականաշնորհման հետևանքով գյուղատնտեսության մեջ ստեղծվել են 336 հազար գյուղացիական փոքր տնտեսություններ, որոնց հողատեսքերի չափը չի գերազանցում 0.5 հեկտարից: Առաջիկայում խնդիր կդրվի կամավոր հիմունքներով միավորել գյուղացիական տնտեսությունները և ստեղծել գյուղատնտեսական կոոպերատիվներ և ֆերմերային (ազարակային) տնտեսություններ, որը բնականոն գործընթաց է շուկայական տնտեսության անցման փուլում:

Կոոպերացման ձևերից է ինտեգրացիան՝ (Integration – միավորում) , այսինքն ճյուղերի միավորումը և համատեղ ձեռնարկությունների կազմակերպումը՝ օտարերկրյա կապիտալի ներդրումով: Հարկ է նկատի ունենալ, որ մասնագիտացման ձևերը վերաբերվում են նաև կոոպերացմանը:

10.2. Արտադրության կազմակերպման սկզբունքները: Արտադրության կենտրոնացում և համակենտրոնացում

Արտադրությունը կազմակերպվում է որոշակի սկզբունքներով: Այսպես, պատրաստի արտադրանք արտադրելու (ծառայություն մատուցելու) համար անհրաժեշտ են աշխատանքային, նյութական և ֆինանսական պաշարներ, այսինքն՝ ըստ ֆրանսիացի Սեյի՝ երեք գործոններ (հող, աշխատուժ, կապիտալ) , որի մասին նշել է իր հրատարակած գրքում (1848թ.): Հետևապես, անհրաժեշտ է արտադրության կազմակերպում ըստ հետևյալ սկզբունքների.

- բոլոր տեսակի պաշարների միջև հավասարակշռվածության պահպանման սկզբունք,
- աշխատանքի բաժանում,
- արտադրության համաչափ կազմակերպում,
- բոլոր տեսակի պաշարների պահանջի միջև համամասնության ապահովում,
- արտադրության մասնագիտացման և տեղաբաշխման սկզբունք,
- արտադրության ծրագրավորման (պլանավորման) սկզբունք, ըստ որի կազմվում է քիզենս-ծրագիր և վերահսկողություն ապահովվում նրա գործնական կենսագործման ուղղությամբ,
- բոլոր տեսակի պաշարների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործման սկզբունք:

Արտադրության կազմակերպման սկզբունքներից է նաև կենտրոնա-

ցումը և համակենտրոնացումը:

Կենտրոնացում նշանակում է պաշարների կենտրոնացում այս կամ այն արտադրանքի արտադրության համար:

Համակենտրոնացում նշանակում է պաշարների կենտրոնացում ձեռնարկությունում, այսինքն՝ որքան բարձր է համակենտրոնացման մակարդակը, այնքան մեծ է ձեռնարկության չափերը: Խոշոր մեքենայական արտադրությունն ունի մեծ առավելություն փոքրի նկատմամբ: Մովորաբար, համակենտրոնացման և մասնագիտացման բարձր մակարդակ ունեցող ձեռնարկություններում միավոր ժամանակում արտադրվում է ավելի շատ և որակյալ արտադրանք՝ նվազագույն ծախսումներով: Այսու կողմից, խոշոր ձեռնարկություններում հնարավոր է լինում մեքենայացնել աշխատատար գործընթացները, ներդնել բարձր և առաջուղիմական տեխնոլոգիա, կիրառել ավտոմատացում և ռոբոտոտեխնիկա: Սովորաբար, խոշոր ձեռնարկություններում լայն չափով կիրառվում է համակարգչային տեխնիկա, որն էլ ապահովում է մեծ չափով տեղեկատվություն և հնարավոր է լինում մեքենայացնել նաև հաշվապահական ու կառավարչական հաշվառման աշխատանքը:

Արտադրության համակենտրոնացումը բնութագրող չափերը հանդիսանում են՝ աշխատողների թիվը, համախառն և ապրանքային արտադրանքի ծավալները, ոչ ընթացիկ նյութական և ընթացիկ ակտիվների, այսինքն՝ հիմնական և շրջանառու ֆոնդերի չափը և այլն:

Ըստ արտադրության կենտրոնացման և համակենտրոնացման, այսինքն՝ արտադրության չափերը բնութագրող ցուցանիշների, ձեռնարկությունները լինում են երեք ձևի՝ փոքր, միջին և խոշոր:

Բացի այդ, գոյություն ունեն մեծաշնորհային ձեռնարկություններ և գանազան միավորումներ, որտեղ բարձր է արտադրության համակենտրոնացման մակարդակը:

10.3. Արտադրության մասնագիտացում և տեղաբաշխում

Արտադրության մասնագիտացումը և տեղաբաշխումը հանդիսանում են աշխատանքի բաժանման և կազմակերպման ձևերից մեկը: Ընդ որում, եթե տեղաբաշխումը ցույց է տալիս աշխատանքի բաժանման քանակական կողմը, այսինքն թե ինչ՞ ճյուղեր և որտե՞ղ տեղաբաշխել, ի՞նչ արտադրանք արտադրել, ապա մասնագիտացումը ցույց է տալիս աշխատանքի կազմակերպման որակական կողմը: Արտադրությունը տեղաբաշ-

խել՝ նշանակում է որոշել, թե որտե՞ղ հիմնադրել ձեռնարկությունը և ի՞նչ արտադրանքի արտադրությամբ զբաղվել: Արտադրության մեջ հաշվի է առնվում հումքի բազան, որպեսզի գոյծարանը կառուցվի հումքի բազայի (հենքի) մոտ՝ փոխադրական ծախսերը կրճատելու նպատակով: Արտադրությունը մասնագիտացնել նշանակում է կազմակերպել համասեռ տեխնոլոգիայով արտադրանքի արտադրություն: Այս դեպքում բանվորական կազմը հմտանում է և դառնում արհեստավարժ աշխատուժ, որոնք ընդունակ են միավոր ժամանակում արտադրել ավելի շատ և որակյալ արտադրանք: Մասնագիտացման նպատակն է արտադրել ավելի շատ արտադրանք՝ նվազագույն ծախսումներով:

Արտադրության մասնագիտացման և տեղաբաշխման վրա ազդում են մի շարք գործոններ.

- բնակչության առկայությունները և հմտությունները,
 - աշխատուժի որակական կազմը,
 - աշխատուժով ու հիմնական և շրջանառու ֆոնդերով (ոչ բնթացիկ և բնթացիկ ակտիվներով) ապահովվածությունը,
 - հաղորդակցության պայմանները՝ կապված բալենպաստ ճանապարհների և կառավարման տեխնիկական միջոցներով ապահովվածության հետ,
 - հումքի մոտիկությունը:
- Արդյունաբերության մեջ, որպես կանոն, ձեռնարկությունները կազմակերպվում են մասնագիտացված ձևով, օրինակ՝ «ԵՐԱՁ» ավտոգործարան, հաստոցաշինական գործարան, էլեկտրատեխնիկական գործարան, «Նախիտ» ՓԲԸ, Կոտայքի գարեջրի գործարան, «Աշտարակ կաթ» ԲԲԸ և այլն:

Գյուղատնտեսական արտադրության մասնագիտացում և տեղաբաշխում

Եթե արդյունաբերության մեջ հաշվի է առնվում հումքի մոտիկությունը և ձեռնարկությունները կազմակերպվում են մասնագիտացված ձևով, այդ թվում՝ լեռնահանքային արդյունաբերության մեջ, ապա գյուղատնտեսությունում այն կախված է բնական և կլիմայական պայմաններից: Ըստ բնակլիմայական պայմանների Հայաստանի տարածքը բաժանված է գյուղատնտեսական իննը գոտիների՝ Արարատյան հարթավայր, Վայքի գոտի, Չանգեգուր, Սևանի ավազան, Հյուսիս-Արևելյան գոտի, Լոռի, Շիրակ, Նախալեռնային գոտի, Լեռնային գոտի:

Գյուղատնտեսության մեջ արտադրությունը մասնագիտացնել՝ նշա-

նակում է առանձնացնել 2-3 գլխավոր ճյուղեր և լրացուցիչ ու օժանդակ ճյուղերի զարգացումը նպատակաուղղել գլխավոր ճյուղերի զարգացմանը: **Գլխավոր** է կոչվում այն ճյուղը, որի ապրանքային արտադանքի արժեքը (իրացման ծավալի արժեքը) ձեռնարկության ամբողջ ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքում ունի համեմատաբար բարձր տեսակարար կշիռ: **Լրացուցիչ** է կոչվում այն ճյուղերը, որոնք գլխավոր ճյուղերից հետո ունեն համեմատաբար բարձր տեսակարար կշիռ: **Օժանդակ** են կոչվում այն ճյուղերը, որոնք ունեն խիստ ցածր տեսակարար կշիռ:

Նախկին հասարակարգում մեր երկրում կազմակերպված էին գյուղատնտեսական կոլեկտիվ և պետական խոշոր ձեռնարկություններ (870 հատ), որոնցում բարձր էր արտադրության մասնագիտացման մակարդակը: Մասնագիտացման մակարդակ ասելով հասկացվում է հիմնական ճյուղերի (արտադրանքի տեսակների) տեսակարար կշիռը ձեռնարկության ամբողջ ապրանքային արտադրանքի արժեքի մեջ:

Մասնագիտացման մակարդակը որոշվում է նաև գործակցով: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$K_C = \frac{100}{\sum YB (2i - 1)}, \text{ այսինքն՝}$$

$$U_q = \frac{100}{\sum S_4 (2i - 1)}, \text{ որտեղ՝}$$

$K_C (U_q)$ – մասնագիտացման մակարդակն է, $\sum YB (S_4)$ -ն՝ արտադրանքի հիմնական տեսակների տեսակարար կշիռն է՝ ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքում՝ տոկոսով, i –ն՝ ճյուղերի (արտադրանքի տեսակների) թիվն է:

Մակայն, 1992-1993թթ. գյուղատնտեսության մեջ սեփականաշնորհվեց հողը, գյուղատնտեսական կենդանները, տեխնիկական, արտադրական շենքերը (ֆերմաները), որի շնորհիվ լուծարվեցին նախկին խոշոր և մասնագիտացված ձեռնարկությունները և երկրում կազմակերպվեցին 336 հազար գյուղացիական և 322 գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Կազմակերպվել են նաև շուրջ 250-ից ավելի ֆերմերային (ազարակային) տնտեսություններ, որտեղ մասնագիտացման մակարդակը համեմատաբար բարձր է: Այսպիսով, գյուղատնտեսության մեջ նախկին մասնագիտացված խոշոր տնտեսությունների փոխարեն կազմակերպվեցին փոքր, ոչ մասնագիտացված տնտեսություններ:

Ինչ վերաբերվում է կապի և տրանսպորտի ճյուղերին, ապա նրանցում ձեռնարկությունները, ինչպես և արդյունաբերության մեջ, կազմակերպվում են մասնագիտացված ձևով: Առևտրի բնագավառում մասնագիտացված կազմակերպություններ են համարվում առևտրական ֆիրմաները: Առևտրական ֆիրման, որպես ձեռնարկության տեսակ, ստեղծվել է ԱՄՆ-ում՝ Թովմաս Ուոթսոն ավագի կողմից 1908 թվականին:

Արտադրության մասնագիտացման ցուցանիշները և դրանց հաշվարկման կարգը

Արտադրության մասնագիտացման մակարդակը երկրի տնտեսության ճյուղերում որոշվում է հիմնական և լրացուցիչ ցուցանիշներով: Ուրպես հիմնական ցուցանիշ հանդիսանում է ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքը՝ տեսակարար կշիռը տոկոսով:

Ապրանքը մի իր է, որը ենթակա է վաճառքի: Այլ կերպ՝ պատրաստի արտադրանքի այն մասը, որը վաճառվում է, կոչվում է **ապրանք, այսինքն՝ ապրանքային արվարդանք**:

Այն չափվում է բնեղեն և արժեքային արտահայտությամբ: Ըստ եսթիման, ապրանքային արտադրանքի արժեքը ապրանքի իրացումից ստացված դրամական միջոցների մուտքն է, որը ֆինանսական հասկացությամբ կոչվում է հասույթ: Սակայն գոյություն ունի նաև ապրանքայնություն և ապրանքային մակարդակ հասկացությունները:

Ապրանքայնությունը կամ ապրանքայնության մակարդակը ապրանքի ծավալի հարաբերությունն է համախառն արտադրանքի ծավալին՝ արտահայտած տոկոսով:

Այսպես, ենթադրենք գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունն արտադրել է 4000 տոննա հացահատիկ և իրացրել է 3200 տոննա: Վերջինս կկազմի ապրանքային արտադրանքի ծավալը՝ բնեղենով, իսկ հացահատիկի ապրանքայնության մակարդակը կկազմի՝

$$Ամ = \frac{Ած \cdot 100}{ՀԱ} = \frac{3200 \text{ տ} \times 100\%}{4000 \text{ տ}} = 80 \text{ տոկոս, որտեղ՝}$$

Ամ-ն- ապրանքայնության մակարդակն է՝ տոկոսով,

Ած-ն- ապրանքային արտադրանքի ծավալը, տոննա

ՀԱ-ն- համախառն արտադրանքը (որոշակի ժամանակաշրջանում, սովորաբար, մեկ տարում արտադրված արտադրանքի ծավալը)

Այն նույնպես չափվում է բնեղենով և արժեքային ձևով:

Ըստ վերը-նշված օրինակի, հացահատիկի ապրանքայնության մա-

կարդակը կազմել է 80տոկոս: Անձնական, ընտանեկան կարիքների համար ծախսված արտադրանքը ապրանք չի համարվում: Ապրանք չեն նաև ձեռնարկության կողմից արտադրական կարիքների համար ծախսված հումք ու նյութերը և այլն (գյուղատնտեսության մեջ սերմերը, կերերը):

Կան ապրանքներ, որոնք ունեն 100 % ապրանքայնություն, քանի որ նրա ծավալը լրիվ իրացվում է (կաուչուկ, մեքենա, հաստոց, ծխախոտ): Արտադրության մասնագիտացման մակարդակը որոշվում է հիմնական ցուցանիշով, այսինքն՝ ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքով: Այն որոշելու համար արտադրանքի ամեն մի տեսակի ապրանքային արտադրանքի արժեքը (իրացումից հասույթը) բազմապատկվում է 100-ով և բաժանվում ամբողջ ապրանքային արտադրանքի արժեքի վրա:

Ընդ որում, մասնագիտացման ուղղությունը որոշվում է մեկ ճյուղի անունով, եթե ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքում նրա տեսակարար կշիռը 70 տոկոսից ավելի է, երկու ճյուղի անվամբ, եթե 60 % է և երեք ճյուղի անունով, եթե կազմում է 50 տոկոս:

Բացի հիմնական ցուցանիշից, որպես մասնագիտացման մակարդակը բնութագրող լրացուցիչ ցուցանիշ, հանդիսանում է.

- համախառն արտադրանքի (ՀԱ) արժեքի կառուցվածքը,
- ոչ ընթացիկ մաշվող նյութական ակտիվների՝ հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքը,
- ընթացիկ ակտիվների, այսինքն՝ պաշարների՝ շրջանառու արտադրական ֆոնդերի կառուցվածքը:

ԽՆԴԻՐ 7.

Ձեռնարկությունը արտադրում է մի քանի տեսակի արտադրանք, որից երեքի տեսակարար կշիռը ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքում կազմում է 70 տոկոս:

Որոշել արտադրության մասնագիտացման մակարդակը:

Լուծում

$$Ազ = \frac{100}{\sum S_i (2i - 1)} = \frac{100}{70\% (52 \cdot 3 - 1)} = \frac{100}{350} = 0,35, \text{ որը}$$

տոկոսով կկազմի՝ 35 տոկոս:

Այսինքն, արտադրության մասնագիտացման մակարդակը կազմում է 35տոկոս:

ԽՆԴԻՐ 8.

Ըստ «Աշտարակ կաթ» ԲԲԸ-ի տվյալների, որոշել ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքը.

ԲԲԸ-ն արտադրել և իրացրել է.

- թթվասեր - 168.5 մլն դրամ,
- կաթնաշոռ - 54.5 մլն դրամ,
- մածուց - 80.5 մլն դրամ,
- պաղպաղակ - 150.5 մլն դրամ,
- կաթ - 61 մլն դրամ,

ընդամենը ապրանքային արտադրանք՝ 515 մլն դրամ:

Լուծում

Ամբողջ ապրանքային արտադրանքի արժեքը (հասույթը) ընդունվում է 100% և որոշվում է առանձին ապրանքների արժեքի տեսակարար կշիռը՝ ամբողջ ապրանքային արտադրանքի արժեքի նկատմամբ.

$$\text{թթվասեր} - \frac{168.5 \text{ մլն դր} \times 100}{515 \text{ մլն դր}} = 32.8 \%$$

$$\text{կաթնաշոռ} - \frac{54.5 \text{ մլն դր} \times 100}{515 \text{ մլն դր}} = 10.6 \%$$

$$\text{մածուց} - \frac{80.5 \text{ մլն դր} \times 100}{515 \text{ մլն դր}} = 15.6 \%$$

$$\text{պաղպաղակ} - \frac{150.5 \text{ մլն դր} \times 100}{515 \text{ մլն դր}} = 29.2 \%$$

$$\text{կաթ} - \frac{61.0 \text{ մլն դր} \times 100}{515 \text{ մլն դր}} = 11.8 \text{ տոկոս:}$$

Ամբողջը = 100.0 տոկոս:

Ինչպես երևում է «Աշտարակ կաթ» ԲԲԸ-ի ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքից, (թեև այն համարվում է կաթնամթերքի արտադրության գծով մասնագիտացված ձեռնարկություն), ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքում համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունի թթվասերը (32.8%), ապա պաղպաղակը (29.2%), մածուցը՝ 15.6% և երեքը միասին՝ 77.6 տոկոս: Հետևապես ձեռնարկությունը

մասնագիտացված և այդ երեք տեսակի ապրանքի արտադրությամբ և իրացմամբ:

Խնդիր 9.

Գյուլագիական կոլեկտիվ տնտեսությունը 2004թ. իրացրել է հետևյալ տեսակի անապրանքները՝ ըստ շուկայական գների (Աղյուսակ 15):

Աղյուսակ 15

N 0	Անվանումը	Չափի միավոր	Քանակը	Իրացման գինը, դրամ	Արժեքը, մլն դր	Տեսակարար կշիռը, %
1	Հացահատիկ	ցենտ	1500	12000.00	18.0	1.7
2	Կարտոֆիլ	..	1200	15000.00	18.0	1.7
3	Բանջարեղեն	..	800	1400.00	11.2	1.1
4	Խաղող	..	50000	10500.00	52.5	49.1
5	Պտուղ	..	60000	8000.00	480.0	45.2
6	Տավարի միս	..	900	12000.00	10.8	1.0
	Ընդամենը	x	x	x	1063.0	100.0

Պահանջվում է որոշել արտադրանքի տեսակների և ամբողջ ապրանքային արտադրանքի արժեքը, նրա կառուցվածքը, արտադրության մասնագիտացման ուղղությունը և արդյունքները լրացնել աղյուսակում:

Լուծում

1. Որոշվում է յուրաքանչյուր ապրանքատեսակի ապրանքային արտադրանքի արժեքը՝ համապատասխանաբար, քանակը բազմապատկելով իրացման գնով:

Հարկ է նկատի ունենալ, որ ապրանքների իրացման ծավալը որոշվում է յուրաքանչյուր ապրանքատեսակի քանակի և գնի արտադրյալով, իսկ տեսակարար կշիռը ամբողջ ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքի նկատմամբ որոշելու համար ամեն մի ապրանքատեսակի արժեքը բազմապատկվում է 100-ով և բաժանվում ամբողջ ապրանքային

արտադրանքի արժեքի վրա:

Ինչպես երևում է, տնտեսության ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքից, նրանում, համեմատաբար, բարձր տեսակարար կշիռ ունեն խաղողը (49.4%) , պտուղը՝ 45.2%), այսինքն՝ միասին 94.6 տոկոս: Հետևապես, տնտեսության արտադրական մասնագիտացման ուղղությունը կլինի խաղողագործական-պտղաբուծական, այսինքն՝ այգեգործական:

2. Այժմ հաշվարկենք մասնագիտացման գործակիցը.

$$Uq = \frac{100}{\sum S_i (2i - 1)} = \frac{100}{94,6 (2 \cdot 2 - 1)} = \frac{100}{94,6 \cdot 3} = \frac{100}{2838} = 0,35$$

կամ տոկոսով՝ $100 \cdot 0,35 = 35$ տոկոս:

Եթե մասնագիտացման գործակիցը բարձր է 0.5-ից, ապա համարվում է նեղ մասնագիտացված ձեռնարկություն: Արդյունաբերության մեջ , որպես կանոն, ձեռնարկությունը համարվում է նեղ մասնագիտացված, քանի որ զբաղվում են 1-2 տեսակի արտադրանքի արտադրությամբ և իրացմամբ:

Գ Լ ՈՒ Խ-11 . – ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՅՆԵՐԸ

11.1. Չեռնարկությունների ոչ ընթացիկ նյութական ակտիվները և նրանց դասակարգումը: Հիմնական միջոցները, նրանց դասակարգումը, կառուցվածքը, օգտագործման արդյունավետության ցուցանիշները և հաշվարկման կարգը

Հիմնական միջոցները աշխատանքի այն միջոցներն են, որոնք ունեն 50 հազար դրամից ավելի արժեք և ծառայության մեկ տարուց ավելի ժամկետ: Նրանք համարվում են ոչ ընթացիկ մաշվող նյութական ակտիվներ, քանի որ ունեն նյութական արժեք, այսինքն չափվում են բնեղեն և արժեքային ձևով: Բացի այդ, նրանք մասնակցելով արտադրության գործընթացին, մաշվում են ֆիզիկապես և դրա համար էլ կոչվում են մաշվող: Սակայն կան նաև մաշվող ոչ ընթացիկ ակտիվներ (տող, բնական պաշարներ և նրանց սպառումը): Ըստ կազմակերպությունների նոր հաշվային սլանդի, գոյություն ունեն նաև ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվներ (կազմակերպչական ծախսեր, լիցենզիա, արտոնագիր, ֆիրմայի գին, կամակարգչային ծրագրային ապահովում հաշվապահական ծրագրեր և այլն):

Այսպիսով, ոչ ընթացիկ ակտիվները դասակարգվում են հետևյալ խմբերի մեջ՝

• ոչ ընթացիկ մաշվող նյութական ակտիվներ (նյութական միջոցներ), որոնք գտնվում են շահագործման մեջ, նրանից դուրս և ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցներ,

• ոչ ընթացիկ չմաշվող նյութական ակտիվներ,

• սչ ընթացիկ ոչ նյութական ակտիվներ:

Հիմնական միջոցները, ի տարբերություն շրջանառու միջոցների, ունեն հետևյալ առանձնահատկությունները.

• մասնակցելով արտադրության գործընթացին՝ չեն փոխում իրենց բնահրային ձևը, մինչդեռ շրջանառու միջոցները լրիվ փոխում են իրենց բնահրային ձևը,

• հիմնական միջոցները մասնակցելով արտադրության գործընթացին, մաշվում են ֆիզիկապես և բարոյապես: Ֆիզիկական մաշվածքն արտացոլվում է ամորտիզացիայի (մաշվածության) ձևով:

Այն հանդիսանում է որպես ուղղակի ծախս և ներառվում է արտադրանքի ինքնարժեքի մեջ: Բարոյական մաշվածքը կապված է գիտատեխ-

նիկական առաջընթացի (now how)՝ նոր մեքենասարքավորումների ձեռք-
բերման հետ, որոնք ավելի արտադրողական են:

Հիմնական միջոցները, մասնակցելով արտադրության գործընթացին,
իրենց արժեքը արտադրվող պատրաստի արտադրանքին են վերագրվում
մաս-մաս (մաշվածքի ձևով), իսկ շրջանառու միջոցները իրենց արժեքը
միանգամից են փոխանցում արտադրվող արտադրանքի ինքնարժեքին:

Հիմնական միջոցները մաշվում են և ֆիզիկապես, և բարոյապես, որի
կապակցությամբ նորոգման միջոցով նրանք վերականգնվում են, իսկ շր-
ջանառու միջոցները չեն նորոգվում, այլ կարող են փչանալ կամ կորստի
մատնվել՝ տեղից տեղ փոխադրելու ժամանակ:

Մակայն կան հիմնական միջոցների նման աշխատանքային միջոց-
ներ, որոնք ունեն 50 հազար դրամից ավելի արժեք և մեկ տարուց պակաս
ծառայության ժամկետ կամ մինչև 50 հազար դրամի արժեք և ծառայու-
թյան մեկ տարուց ավելի ժամկետ: Այդպիսի աշխատանքային միջոցնե-
րը մինչև 1999թ. հաշվառվում էին առանձին՝ որպես փոքրարժեք և արա-
զամաշ առարկաներ (ՓԱԱ):

Մակայն, սկսած 1999թվականից ըստ հաշվառման ստանդարտների
(ՀՀՀՀՄ-2)՝ դրանց անվանում են արագամաշ առարկաներ և հաշվառվում
են ընթացիկ ակտիվներ դասի պաշարներ խմբում: Ի տարբերություն հիմ-
նական միջոցների, երբ դրանք պահեստից դուրս էին գրվում արտադրու-
թյան վրա, ապա հաշվառման մեջ ձևակերպվում էր որպես արտադրա-
կան ծախսեր նրա արժեքի 50 %-ը, իսկ մյուս կեսը ձևակերպվում էր որ-
պես արագամաշ առարկաների մաշվածք և արտադրության ծախսերին
էր վերագրվում ծառայության ժամկետը լրանալուց հետո:

Մակայն հաշվապահական հաշվառման նոր հաշվային սլանով, որը
ՀՀ-ում կիրառվում է 1999 թվականից, արագամաշ առարկաներն
ընդգրկված են ընթացիկ ակտիվներ դասի պաշարների խմբի մեջ և պա-
հեստից արտադրության վրա դուրս են գրվում ու նրանց արժեքը միան-
գամից վերագրվում է արտադրանքի վրա, իսկ եթե ձեռնարկությունն օգ-
տագործում է նաև կառավարչական հաշվառման 8-րդ դասի հաշիվները,
ապա նաև հիմնական արտադրության, օժանդակ արտադրության ինչ-
պես նաև վարչական ծախսերի վրա:

Հիմնական միջոցների տեսակները.-

Երկրի տնտեսության մեջ հիմնական միջոցները դասակարգվում են
հետևյալ խմբերի.

- առաջին, գյուղատնտեսական նշանակության հիմնական միջոց-

ներ- դրանք այն միջոցներն են որոնք օգտագործվում են տվյալ ճյուղում,
• երկրորդ, ոչ գյուղատնտեսական նշանակության հիմնական մի-
ջոցներ- դրանք այն միջոցներն են , որոնք օգտագործվում են երկրի տն-
տեսության նյութական արտադրության մյուս ճյուղերում (արդյունաբե-
ություն, տրանսպորտ, կապ, առևտուր),

• երրորդ, ոչ արտադրական նշանակության հիմնական միջոցներ-
որոնք օգտագործվում են ոչ նյութական արտադրության մեջ, այսինքն՝
սոցիալական ոլորտում (պետական կրթություն, գիտություն, առողջա-
պահություն, մշակույթ, սպորտ, սոցիալական ապահովագրություն և սո-
ցիալական ապահովություն):

Հիմնական միջոցները, ըստ նշանակության և բնույթի դասակարգվում
են հետևյալ երկու ձևերի.


- առաջին, հիմնական արտադրական միջոցներ, որոնց արժեքային
ձևը կոչվում է հիմնական արտադրական ֆոնդեր,
- երկրորդ, ոչ արտադրական հիմնական միջոցներ, որոնց արժեքային
ձևը կոչվում է հիմնական ոչ արտադրական ֆոնդեր:

Արտադրական են կոչվում այն հիմնական միջոցները (արտադրա-
կան ֆոնդերը), որոնք անմիջականորեն մասնակցում են նյութական ար-
տադրությանը և կոչվում են շահագործման մեջ գտնվող կամ չգտնվող ոչ
ընթացիկ նյութական ակտիվներ:

Ոչ արտադրական հիմնական միջոցները անմիջականորեն չեն մաս-
նակցում արտադրության գործընթացին, այլ համարվում են սոցիալա-
կան ոլորտի (վարչական շենք՝ գրասենյակ - office), կենցաղի տուն, մշա-
կույթի տուն, ճաշարան, գերատեսչական բնակելի ֆոնդ (բնակարան,
հանրակացարան), որը ըստ ՀՀ կառավարության որոշման, հիմնակա-
նում սեփականաշնորհվել է և հիմա միայն որոշ խոշոր ձեռնարկություն-
ներ (Նաիրիտ ՓԲԸ և այլն) ունեն հանրակացարան:

Այժմ, ըստ տեսակների ցույց տանք հիմնական միջոցների դասա-
կարգման ուրվագիծը (Ուրվագիծ 16):

Հիմնական միջոցների դասակարգումը



Հիմնական արտադրական միջոցների դասակարգումը -

Օրագրավորման (պլանավորման) և հաշվառման մեջ հիմնական միջոցները, կառավարության որոշումով դասակարգվում են միասնական կարգով: Հիմնական արտադրական միջոցները դասակարգվում են.

- շենքեր, կառուցվածքներ,
- փոխադրող հարմարանքներ,
- մեքենաներ և սարքավորումներ,
- տրանսպորտային (փոխադրական) միջոցներ,
- գործիքներ,
- տնտեսական գույք,

Բացի նշվածներից, գյուղատնտեսության մեջ որպես հիմնական միջոցներ հանդիսանում են նաև.

- բանոց և մթերատու անասունները,
- բազմամյա տնկալքները (խաղողի և պտղատու այգիները, հատապտղանոցները),
- հողերի մելիորացիայի (Melioration - բարելավում) նպատակով կատարված կապիտալ ներդրումները:

Հողերի բարելավման նպատակով կատարված կապիտալ (երկարա-

ժամկետ) ներդրումները համարվում են արտադրական հիմնական ֆոնդեր: Սակայն նյութական արտադրության ճյուղերում գոյություն ունեն նաև ոչ արտադրական հիմնական միջոցներ. որոնք կոչվում են ոչ արտադրական հիմնական ֆոնդեր (սոցիալական ուղորտի օբյեկտները):

Հիմնական միջոցների կազմը և կառուցվածքը -

Հիմնական միջոցների կազմ ասելով հասկացվում է հիմնական միջոցների տեսակները ըստ դասակարգման, այսինքն դրանց անվանացանկը: Հիմնական միջոցների կառուցվածքն իրենից ներկայացնում է նրա առանձին տեսակների տեսակարար կշիռն ամբողջ հիմնական միջոցների նկատմամբ՝ արտահայտված տոկոսով: Հիմնական միջոցների կառուցվածքը որոշելու համար նրա ամեն մի տեսակի արժեքը բազմապատկվում է 100-ով և բաժանվում հիմնական միջոցների արժեքի հանրագումարի վրա: Նույն սկզբունքով որոշվում է հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքը: Այն հանդիսանում է արտադրության մասնագիտացման մակարդակը բնութագրող լրացուցիչ ցուցանիշ: Օրինակ, եթե գյուղատնտեսության մեջ հիմնական միջոցների կազմում գերակշռում են բազմամյա տնկալքները, ապա գյուղատնտեսական կոլեկտիվ տնտեսությունը կունենա այգեգործական ուղղություն: Եթե գերակշռեն շենքերն ու շինությունները և մթերատու անասունները, ապա կունենա անասնաբուծական ուղղություն:

Արդյունաբերական ձեռնարկությունների հիմնական արտադրական ֆոնդերի կազմում գերակշռում են շենքերը (արտադրամասերը) և մեքենաարքավորումները:

Գործնական - հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքի որոշման վերաբերյալ (Երևանի թիվ 1 հացի գործարան ԲԲԸ-ի տվյալներով).

Խնդիր 10.

Տրված է հիմնական արտադրական ֆոնդերի չափը (սկզբնական հաշվեկշռային, այսինքն՝ պատմական արժեքը).

Շենքեր	19166.0 հազ. դրամ,
Մեքենաարքավորումներ	36500.0
Տրանսպորտային (փոխադրական) միջոցներ	6370.0,
Գործիքներ	3200.0,
Տնտեսական գույք	9470.0 հազ. դրամ:
Պահանջվում որոշել հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքը (%-ով).	

Լ ու ծ ո ս մ

1. Որոշենք հիմնական արտադրական ֆոնդերի հանրագումարը: Դրա համար գումարվում է բոլոր տեսակի հիմնական արտադրական ֆոնդերի արժեքը:

2. Որոշվում է կառուցվածքը՝ տոկոսով: Դրա համար ամեն մի տեսակի արժեքը բազմապատկվում է 100-ով և բաժանվում հանրագումարի վրա:

Այսպես,

$$\text{շենքեր} \quad \frac{19.166000 \times 100}{7470600} = 25.6 \%,$$

$$\text{մեքենասարքա-վարումներ} \quad \frac{36.500000 \times 100}{74706000} = 48.9 \%,$$

$$\text{տրանսպորտային միջոցներ} \quad \frac{6370000 \times 100}{74706000} = 8.5 \%,$$

$$\text{գործիքներ} \quad \frac{3200000 \times 100}{74706000} = 4.3 \%,$$

$$\text{սնտեսական գույք} \quad \frac{9470000 \times 100}{74706000} = 12.7 \text{ տոկոս:}$$

Ընդամենը հիմնական արտադրական ֆոնդեր՝ 7470600 (ընդունվում է 100.0 տոկոս):

Խ ն ո ի ի 11.

Երևանի Կոշիկի ֆաբրիկա ԲԲԸ-ի տվյալներով հիմնական արտադրական միջոցների արժեքը կազմում է (հազ.դրամ).

Շենքեր՝ 19166 հազ դրամ,

Մեքենասարքավորումներ՝ 36500,

Տրանսպորտային միջոցներ՝ 6370,

Գործիքներ՝ 3200,

Տնտեսական գույք՝ 9470 հազ.դրամ:

Պահանջվում է որոշել հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքը (տոկոսով):

Լ ու ծ ո ս մ

1. Որոշվում է հիմնական արտադրական ֆոնդերի հանրագումարը: Դրա համար գումարվում է բոլոր տեսակի հիմնական արտադրական ֆոնդերի գումարը,

2. Որոշվում է կառուցվածքը՝ տոկոսով: Դրա համար ամեն մի տեսակի արժեքը բազմապատկվում է 100-ով և բաժանվում հանրագումարի վրա:

$$\text{Արտադրական շենքեր} \quad \frac{600000 \times 100}{10730000} = 5.6 \%,$$

$$\text{վարչական շենքեր} \quad \frac{200000 \times 100}{7300000} = 1.9 \%,$$

$$\text{մեքենա սարքավորումներ} \quad \frac{800000 \times 100}{10730000} = 7.5 \%,$$

$$\text{գործիքներ} \quad \frac{1600000 \times 100}{10730000} = 1.5 \%,$$

$$\text{սնտեսական գույք} \quad \frac{200000 \times 100}{10730000} = 1.9 \%,$$

$$\text{տրանսպորտային միջոցներ} \quad \frac{6370000 \times 100}{10730000} = 59.4 \%,$$

$$\text{Այլ արտադրական հիմնական ֆոնդեր} \quad \frac{200000 \times 100}{10730000} = 22.4 \text{ տոկոս:}$$

Ամբողջը՝ 10730 հազար դրամ = 100 տոկոս:

Հետևապես, հիմնական արտադրական ֆոնդերի արժեքը կկազմի՝

$$\text{հիմնական արտադրական ֆոնդեր} \quad \frac{10530000 \times 100}{10730000} = 98.1 \%,$$

հիմնական ոչ $\frac{200000 \times 100}{10730000} = 1.9$ տոկոս:
արտադրական ֆոնդեր 10730000

Խնդիր 12.

Ըստ խնդրի տվյալների հաշվարկել ձեռնարկության հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքը:

Շենքեր արտադրական`	600 հազ դրամ,
Շենքեր վարչական`	200, 0
Մեքենասարքավորումներ`	800,0
Փոխադրական միջոցներ`	6370,0
Գործիքներ`	160,0
Տնտեսական գույք`	200 .0

Այլ հիմնական արտադրական ֆոնդեր` 2400 հազ.դրամ:

Պահանջվում է որոշել հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքը:

Լուծում

Հաշվարկը կատարվում է նույն սկզբունքով.

1. Որոշվում է հիմնական արտադրական ֆոնդերի հանրագումարը:

2. Որոշվում է կառուցվածքը` տոկոսով: Դրա համար ամեն մի տեսակի արժեքը բազմապատկվում է 100-ով և բաժանվում հանրագումարի վրա:

Լուծում

Արտադրական շենքերի կառուցվածքը կկազմի` $\frac{600000 \times 100}{10530000} = 5.7 \%$

Վարչական շենքերինը` $\frac{200000 \times 100}{10530000} = 1.9 \%$

Մեքենա սարքավորումներինը` $\frac{800000 \times 100}{10530000} = 7.6 \%$

Գործիքներինը` $\frac{1600000 \times 100}{10530000} = 1.5 \%$

Տնտեսական գույքինը` $\frac{200000 \times 100}{10530000} = 1.9 \%$

Փոխադրական միջոցներինը` $\frac{6370000 \times 100}{10530000} = 60.5 \%$

Այլ արտադրական հիմնական ֆոնդերինը` $\frac{2400000 \times 100}{10530000} = 22.8 \%$
Ամբողջը` 10530 հազար դրամ = 100 տոկոս:

Խնդիր 13.

Գյուղացիական կոլեկտիվ տնտեսության հիմնական արտադրական ֆոնդերը կազմում են`

Շենքեր`	12460 հազ դրամ,
Մեքենասարքավորումներ`	18540,0 ,
Բազմամյա տնկարքեր`	25360, 0 ,
Տնտեսական գույք`	2540.0
Հողերի բարելավման կապ. ներդրումներ`	3630 հազ.դրամ:
Ընդամենը հիմնական արտադրական ֆոնդեր`	62530 հազ. դրամ:

Պահանջվում է որոշել .

1. հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքը` տոկոսով,
2. տնտեսության մասնագիտացման ուղղությունը:

Լուծում

1. Հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքը որոշվում է նույն սկզբունքով, ինչպես նախորդ խնդրում, որը կկազմի`

Շենքեր` $\frac{2460000 \times 100}{62530000} = 19,9 \%$

Մեքենա- սարքավորումներ` $\frac{18540000 \times 100}{62530000} = 29,6 \%$

Բազմամյա տնկարքեր` $\frac{25360000 \times 100}{62530000} = 40.6 \%$

$$\text{Տնտեսական գույք} = \frac{2540000 \times 100}{62530000} = 4.1\%$$

$$\text{Հողերի բարելավման կապիտալ ներդրումներ} = \frac{3630000 \times 100}{62530000} = 5.8\%$$

Ընդամենը հիմնական արտադրական ֆոնդերը՝ 62530 հազար դրամ = 100 տոկոս:

2. Արտադրության մասնագիտացման ուղղությունը՝ ըստ հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքի որոշվում է՝ նրա կառուցվածքում առավել բարձր տեսակարար կշիռ ունեցող ֆոնդերի կառուցվածքով (%-ով):

Քանի որ հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ է կազմում բազմամյա տնկարքները (40.6%), ապա տնտեսության մասնագիտացման ուղղությունը կլինի այգեգործական:

Հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման արդյունավետության ցուցանիշները և նրանց հաշվարկման կարգը

Ձեռնարկությունների հիմնական միջոցները, և, հատկապես, հիմնական արտադրական ֆոնդերը արդյունավետ օգտագործելու նպատակով օգտագործվում են հետևյալ ցուցանիշները.

• **առաջին, կապիտալահատուցում** (նախկին հասարակարգում՝ ֆոնդահատուցում), որն իրենից ներկայացնում է համախառն արտադրանքի (ՀԱ) արժեքի և հիմնական արտադրական ֆոնդերի (հիմնական կապիտալի) հարաբերությունը, այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U_h = \frac{Z_A}{Z_{\text{աֆ}}} = \frac{Z_A}{U}, \text{ որտեղ՝}$$

U_h -ն՝ կապիտալահատուցումն է՝ դրամով,

Z_A -ն՝ համախառն արտադրանքի արժեքն է՝ դրամով,

$Z_{\text{աֆ}}$ -ն՝ հիմնական արտադրական ֆոնդերն են, որը շուկայական տնտեսության պայմաններում ներառվում է հիմնական կապիտալի մեջ, որի հաշվին ձեռք են բերվում հիմնական միջոցներ:

Խնդիր 14.

Եթե ձեռնարկության տարեկան համախառն արտադրանքի արժեքը

կազմել 1.3 մլն դրամ, իսկ հիմնական արտադրական ֆոնդերը՝ 9 մլն դրամ, ապա կապիտալահատուցումը կկազմի՝

$$U_h = \frac{Z_A}{Z_{\text{աֆ}}} = \frac{3}{9} \text{ մլն դրամ} = 0.33 \text{ դրամ:}$$

Դա նշանակում է, որ ներդրված մեկ միավոր հիմնական արտադրական ֆոնդերի դիմաց ստացվել է 0.33 դրամի (կամ 33 լումա) համախառն արտադրանք: Որքան բարձր լինի այդ ցուցանիշը, այնքան արդյունավետ կօգտագործվեն հիմնական արտադրական ֆոնդերը:

• երկրորդ, **կապիտալազինվածություն** (նախկին հասարակարգում՝ ֆոնդազինվածություն): Այն իրենից ներկայացնում է հիմնական արտադրական ֆոնդերի հարաբերությունը արտադրության մեջ աշխատողների թվին: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U_q = \frac{Z_{\text{աֆ}}}{U_2}, \text{ որտեղ՝}$$

U_q -ն՝ կապիտալազինվածությունն է, որը ցույց է տալիս մեկ աշխատողի հաշվով հիմնական արտադրական ֆոնդերի չափը, U_2 -ն՝ արտադրության մեջ աշխատողների թիվն է:

Խնդիր 15.

Եթե ձեռնարկությունում աշխատում են 300 բանվորներ և օգտագործվում են 9 մլն դրամի հիմնական արտադրական ֆոնդեր, ապա կապիտալազինվածությունը կկազմի՝

$$U_q = \frac{Z_{\text{աֆ}}}{U_2} = \frac{9 \text{ մլն}}{300} = 300 \text{ հազ. դրամ:}$$

Որքան բարձր լինի կապիտալազինվածության ցուցանիշը, այնքան մեկ բանվորի հաշվով հնարավոր է արտադրել ավելի շատ արտադրանք, այնքան բարձր կլինի նաև աշխատանքի արտադրողականությունը:

• երրորդ, **կապիտալարդարություն** (նախկին հասարակարգում՝ ֆոնդատարդություն): Այն իրենից ներկայացնում է կապիտալահատուցման (U_h) հակադարձ ցուցանիշը և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U_h = \frac{Z_{\text{աֆ}}}{Z_A}$$

Այն ցույց է տալիս, թե մեկ միավոր արտադրանք արտադրելու համար

որքան հիմնական արտադրական ֆոնդեր (ՀաՖ) են օգտագործվել: Այդ ցուցանիշը որքան ցածր լինի, այնքան արդյունավետ կօգտագործվեն հիմնական արտադրական ֆոնդերը:

Խնդիր 16.

Նախույր խնդրի տվյալներով կապիտալատարությունը (Կտ) կկազմի՝

$$Կտ = \frac{ՀաՖ}{ՀԱ} = \frac{9 \text{ մլն}}{3 \text{ մլն դր}} = 3 \text{ դրամ:}$$

Դա նշանակում է, որ ներդրվել է 3 միավոր հիմնական արտադրական ֆոնդեր և ստացվել է մեկ միավոր համախառն՝ արտադրանք: Որքան ցածր լինի այդ ցուցանիշը, այնքան արդյունավետ կօգտագործվեն հիմնական արտադրական ֆոնդերը:

• չորրորդ, **կապիտալապահովվածություն** (նախկին հասարակարգում՝ ֆոնդապահովվածություն): Այն իրենից ներկայացնում է հիմնական արտադրական ֆոնդերի հարաբերությունը գյուղատնտեսական հողատեսքերին և հաշվարկվում է 100 հա կամ մեկ հա-ի հաշվով: Ընդ որում, այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Կապ = \frac{ՀաՖ}{S} = \text{որտեղ՝}$$

Կապ-ն՝ կապիտալապահովվածությունն է,
S-ն՝ հողատեսքերի մակերեսը:

Այդ ցուցանիշը հիմնականում օգտագործվում է գյուղատնտեսության մեջ: Սակայն, եթե արդյունաբերական ձեռնարկությունը ևս ունի հողատեսքեր ու զբաղվում է գյուղատնտեսական օժանդակ տնտեսությամբ, ապա ևս հաշվարկվում է այդ ցուցանիշը: Այն ցույց է տալիս, թե մեկ հա-ի, կամ 100 հա-ի հաշվով որքան հիմնական արտադրական ֆոնդեր են օգտագործվում: Որքան բարձր լինի այդ ցուցանիշը, այնքան լավ պայմաններ կլինեն աշխատատար գործընթացները մեքենայացնելու և նվազագույն ծախսերով ավելի շատ արտադրանք արտադրելու համար:

Խնդիր 17.

Եթե ձեռնարկությունն ունի 300 հա հողատեսքեր, ապա կապիտալապահովվածության ցուցանիշը նախորդ խնդրի մյուս տվյալներով կկազմի՝ 300000 դրամ: Այսպես,

$$Կապ = \frac{ՀաՖ}{S} = \frac{9 \text{ մլն դրամ}}{300 \text{ հա}} = 300 \text{ հազ. դրամ:}$$

Դա նշանակում է, որ մեկ հեկտարին ընկնում է 300 հազ. դրամի հիմնական արտադրական ֆոնդեր: Որքան բարձր լինի այդ ցուցանիշը, այնքան հնարավոր է արդյունավետ օգտագործել հիմնական արտադրական ֆոնդերը և ընդհակառակը:

Խնդիր 18.

Ձեռնարկության համախառն արտադրանքի արժեքը (ՀԱ) կազմել է 6 մլն դրամ, հիմնական արտադրական ֆոնդերը՝ 18 մլն դրամ, աշխատողների թիվը՝ 600 մարդ, գյուղատնտեսական կադատեսքերի քանակը՝ 300 հեկտար: Պահանջվում է հաշվարկել հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման արդյունավետության ցուցանիշները.

Լուծում

1) Կհ = $\frac{ՀԱ}{ՀաՖ} = \frac{6000000}{18000000} = 0.33$ դրամ,

2) Կգ = $\frac{ՀաՖ}{Հշ} = \frac{18000000}{600} = 300 \text{ 000}$ դրամ,

3) Կտ = $\frac{ՀաՖ}{ՀԱ} = \frac{18000000}{6000000} = 3$ դրամ,

4) Կապ = $\frac{ՀաՖ}{S} = \frac{18000000}{300} = 60$ հազ. դրամ:

Ինչպես երևում է, տվյալ ձեռնարկության հիմնական արտադրական ֆոնդերն օգտագործվում են արդյունավետ կարգով, քանի որ մեկ միավոր հիմնական արտադրական ֆոնդերի հաշվով ձեռնարկությունում ստացվել է 0.33 միավոր համախառն արտադրանք, մեկ բանվորի հաշվով կապիտալազինվածությունը՝ 30 հազ. դրամ, որն էլ նպաստել է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, այսինքն մեկ բանվորի հաշվով համախառն արտադրանքի ավելացմանը և կապիտալատարության նվազեցմանը: Վերջինս ձեռնարկությունում կազմել է գործակիցը՝ 3, այսինքն մեկ միավոր արտադրանքի արտադրության համար ծախսվել է երեք միավոր հիմնական արտադրական ֆոնդեր: Կապիտալազինվածու-

թյունը կազմել է 60 հազար դրամ և մեկ հեկտարի հաշվով օգտագործվել է նույնչափ հիմնական արտադրական ֆունդեր:

11.2. Հիմնական միջոցների մաշվածությունը և նրա հաշվարկման մեթոդները

Հիմնական միջոցները մասնակցելով արտադրության գործընթացին, մաշվում են ֆիզիկապես: Նրանց ֆիզիկական մաշվածքը վերականգնելու նպատակով, ծառայության ամբողջ ժամանակաշրջանում, ըստ տեսակների, հաշվարկվում է ամուրտիզացիան (մաշվածությունը): Այդ նպատակով տվյալ երկրի կառավարության կողմից սահմանվում է հիմնական միջոցների մաշվածության ծառայության ժամկետը (տարով) և չափը տուկոսով, սկզբնական հաշվեկշռային, այսինքն՝ պատմական արժեքի նկատմամբ: Նախկին հասարակարգում մաշվածության չափը տուկոսով սահմանվում էր երկու մասով.

- հիմնական միջոցների լրիվ վերականգնման համար (2/3 չափով) և մաշվածքի հաշվարկած գումարը կենտրոնացված կարգով հատկացվում էր պետական բյուջեին և բյուջեից կրկին, կենտրոնացված կարգով նախատեսվում էր այն կապիտալ ներդրումների չափը, որի հաշվին ձեռնարկությունը պետք է ձեռք բերեր հիմնական միջոցներ կամ իրականացնել շենքերի կապիտալ շինարարություն,

- հիմնական միջոցների նորոգման համար (1/3 -ի չափով), որի գումարը մնում էր ձեռնարկությունում՝ ընթացիկ և հիմնական նորոգում կատարելու համար:

Շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկություններին աշխատում են կոնցերններ (առևտրային) հաշվարկով, որի հիմնական սկզբունքներն են ինքնափոխհատուցումը և ինքնաֆինանսավորումը: Մակայն շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկությունների հիմնական միջոցների մաշվածության ամբողջ գումարը մնում է իր տնօրինության ներքո և հիմնական կապիտալի հաշվին ձեռք է բերվում նոր հիմնական միջոցներ, կատարվում շենքերի շինարարություն և նորոգման աշխատանքներ: Հիմնական միջոցների ծառայության ժամկետը և մաշվածության չափը տուկոսով, ըստ տեսակների, կառավարության կողմից սահմանվում է միասնական կարգով՝ երկրի տնտեսության բոլոր ճյուղերի համար: Ներկայումս գործող ծառայության ժամկետը և մաշվածության չափը սահմանվել է 1997թ. հունիսի 3-ի թիվ 187 որոշմամբ, որն իր արտացոլումն

է գտնել «Շահութապարկի մասին» ՀՀ օրենքում (Ազգային ժողովի կողմից լինումով է 1997թ. սեպտեմբերի 30-ին):

Հիմնական միջոցների մաշվածության համար նախատեսված են հետևյալ նորմաները (չափերը):

Հիմնական միջոցների ծառայության ժամկետը և մաշվածության չափը

No	Հիմնական միջոցի անվանումը	Ծառայության ժամկետը (տարի)	Մաշվածության չափը, %
1	Արտադրական շենքեր և շինություններ	20	5
2	Փոխանցվող հարմարանքներ	20	5
3	Յուրանոցներ և ոչ արտադրական շենքեր	10	10
4	Հաշվողական և համակարգչային տեխնիկա	3	30
5	Հոսքագծեր և ռորտատեխնիկա	3	33.3
6	Այլ հիմնական միջոցներ	5	20
7.	բանող կենդանիներ	5	20
8	թազմամյա տնկարքներ	5	20
9	Հողերի բաելավման ուղղված կապիտալ ներդրումներ	5	20
10	Ոչ նյութական ակտիվներ	10	10

Կառավարության որոշմամբ սահմանված է միայն հիմնական միջոցների ծառայության ժամկետը ըստ տեսակների: Մաշվածության չափը տուկոսով որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U_2 = \frac{100}{\sigma_f}, \text{ որտեղ՝}$$

U_2 - ն՝ մաշվածության չափն է, %

Ծժ-ն՝ ծառայության ժամկետը, տարի:

Այսպես, եթե արտադրական շենքի ծառայության ժամկետը 20 տարի է, ապա մաշվածության չափը տուկոսով կկազմի՝

$$U_2 = \frac{100}{20} = 5 \text{ տուկոս:}$$

Մաշվածության տարեկան գումարը հաշվարկելու համար հիմնական միջոցների սկզբնական (հաշվեկշռային)՝ հաշվառման ստանդարտով պատմական արժեքը բազմապատկվում է մաշվածության չափով (%) և բաժանվում է 100-ի: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$U_q = \frac{Z_w \cdot U_2}{100}, \text{ որտեղ՝}$$

U_q -ն՝ մաշվածության գումարն է, որը որպես ուղղակի ծախս ներառվում է արտադրվող արտադրանքի ինքնարժեքի մեջ,

Z_w -ն՝ օբյեկտի հաշվեկշռային (պատմական) արժեքն է:

Խնդիր 19.

Եթե արտադրական շենքի սկզբնական (պատմական) արժեքը կազմում է 900000 դրամ, ապա տարեկան մաշվածքի գումարը կկազմի՝

$$U_q = \frac{900000 \cdot 5\%}{100} = 45 \text{ հազ. դրամ:}$$

Դա նշանակում է, որ ծառայության ամբողջ ժամանակաշրջանում պետք է հաշվարկվի մաշվածություն 45 հազար դրամի չափով, որպեսզի 20 տարվա ընթացքում լրիվ չափով փոխհատուցվի նրա սկզբնական արժեքը ($20 \text{ տ} \times 45000 = 900000$ դրամ): Սակայն, եթե ծառայության ժամկետի ընթացքում, ձեռնարկությունը կատարում է հիմնական նորոգում, ապա նրա արժեքը ավելացվում է սկզբնական արժեքին և հետագայում հաշվարկվում մաշվածություն, իսկ ընթացիկ նորոգման ծախսերը ներառվում են արտադրվող արտադրանքի ինքնարժեքի մեջ: Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկը կատարում են.

- բիզնես ծրագրով նախատեսվածը՝ տնտեսագետները,
- փաստացի հաշվարկը կատարում է հաշվապահությունը՝ հաշվառման տվյալների հիման վրա:

Մաշվածության գումարը մտցվում է արտադրանքի ինքնարժեքի կալ-

կուլյացիայի (հաշվարկի) մեջ: Մաշվածության հաշվարկման համար հաշվապահությունը կազմում է տեղեկագիր:

Այժմ ցույց տանք տեղեկագրի ձևը և հաշվարկման կարգը (Աղյուսակ 17):
Աղյուսակ 17

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման տեղեկագիր

№	Հիմնական միջոցների անվանումը	Չեղբերման տարեթիվ	Սկզբնական, հաշվեկշռային պատմական արժեքը, դրամ	Մաշվածության չափը, %	Տարեկան մաշվածության գումարը, դրամ	այդ թվում՝	
						ամսվա հաշվով	ետանյակի հաշվով
1	Արտադրական շենքեր (արտադրանա 1)	1998	1500000	5	750000	62500	187500
2	Ավտոմեքենա	1999	4000000	15	600000	50000	150000
	Ընդամենը	x	x	x	1350000	112500	237500

Այս տեղեկագիրը լրացվում է ըստ հիմնական միջոցների տեսակի և հաշվարկվում է մաշվածության հանրագումարը:

Շահութահարկի մասին ՀՀ օրենքով նախատեսված է հին հիմնական միջոցների (մինչև 1997թ. վերջը) ձեռքբերված և կառուցված և նոր հիմնական միջոցների (1998թ. հունվարի 1-ից հետո) մաշվածության հաշվարկման կարգը: Նոր հիմնական միջոցների մաշվածության տարեկան գումարը հաշվարկվում է վերը նշված բանաձևով, այսինքն՝

$$U_q = \frac{Z_w \cdot U_2}{100},$$

ինչպես ցույց է տրված հաշվարկի ձևը՝ մաշվածության հաշվարկման տեղեկագրում:

Մինչև 1998թ. ձեռքբերված կամ կառուցված հիմնական միջոցները համարվում են հին և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով նրանց մաշվածությունը հաշվարկելու համար մաշվածության չափի (%-ով սկզբնական արժեքի նկատմամբ) որոշման իրավունքը տրված է տնտեսավարող սուբյեկտներին:

Այն որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U_2 = \frac{(\text{Հա} - Uq) \cdot \text{ԾԺ}}{\text{Հա}}, \text{ որտեղ}$$

U₂-ն՝ մաշվածության չափն է, %

Հա-ն՝ օբյեկտի հաշվեկշռային արժեքը,

Uq-ն՝ ծառայության ժամկետի հաշվով հաշվարկված մաշվածության տարեկան գումարն է,

ԾԺ-ն՝ ծառայության ժամկետն է ըստ կառավարության որոշման:

Խնդիր 20.

Այտարարամասի շենքը կառուցվել է 1990թ., հաշվեկշռային (պատմական) արժեքը կազմում է 900000 դրամ և 1990-1997 թթ.՝ հաշվարկված մաշվածության գումարը կազմում է 400000 դրամ, շենքի ծառայության նոր ժամկետը նախատեսված է 20 տարի:

Պահանջվում է հաշվարկել մաշվածության չափը:

Լուծում

$$U_2 = \frac{(900000 - 400000) \cdot 20}{900000} = \frac{500000 \cdot 20}{900000} = \frac{10000000}{900000} = 11,1 \text{ տոկոս:}$$

Դա նշանակում է, որ այդ շենքի մաշվածությունը 1998թ. հունվարից հաշվարկելու համար մաշվածության չափը պետք է սահմանել ոչ քե 5% (ինչպես նոր շենքի համար), այլ 11.1 տոկոս:

Խնդիր 21.

Ճեռնարկության արտադրական շենքի հաշվեկշռային (պատմական) արժեքը կազմել է 10 մլն դրամ (կառուցվել է 1990թ), մաշվածության գումար է հաշվարկվել (1990-1997 թթ.) 800000 դրամ: Պահանջվում է որոշել մաշվածության չափը տոկոսով և հաշվարկել 1998թ. հաշվով մաշվածության տարեկան գումարը:

$$1) U_2 = \frac{(10000000 - 800000) \cdot 20}{1000000} = \frac{9200000 \cdot 20}{1000000} = \frac{18400000}{1000000}$$

= 18.4 տոկոս,

2) 1998թ. հաշվով մաշվածության տարեկան գումարը կկազմի՝

$$Uq = \frac{\text{Հա} \cdot U_2}{100} = \frac{1000000 \times 18,4}{100} = 184000 \text{ դրամ:}$$

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով ձեռնարկեց իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պետք է հաշվարկեն իրենց բոլոր տեսակի եկամուտները, որի հանրագումարը կազմում է համախառն եկամուտը և բոլոր տեսակի ծախսերը, այդ թվում՝ հիմնական միջոցների մաշվածության տարեկան գումարը, ապա հաշվարկեն դրանց տարբերությունը, որպես համախառն շահույթ: Համախառն շահույթից հաշվարկվում է 20 % շահութահարկ: Բացի այդ, եթե համախառն շահույթը կազմում է հասույթի մինչև 5 տոկոսը, ապա նաև հասույթի մեկ տոկոսը և մնացածը որպես չհարկվող շահույթ, մնում է ձեռնարկության տրամադրության ներքո:

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման մեթոդները շուկայական տնտեսության պայմաններում:

Շուկայական տնտեսության պայմաններում գոյություն ունի հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման սովորական (ավանդական) և արագացված հաշվարկման մեթոդներ:

Սովորական մեթոդը կիրառվել է նախկին հասարակարգում և մինչև այժմ Հայաստանում ու ԱՊՀ-ի մյուս երկրներում: Այդ ձևը կոչվում է ուղիղ գծային կամ հավասարաչափ բաշխման մեթոդ: Այս դեպքում մաշվածության տարեկան գումարը հաշվարկվում է հավասարաչափ կարգով նրա ծառայության ժամկետի ընթացքում: Այսպես, եթե արտադրական շենքի սկզբնական արժեքը 2 մլն դրամ է, ծառայության ժամկետը՝ 20 տարի, մաշվածության չափը՝ 5 %, ապա մաշվածության տարեկան գումարը կկազմի՝

$$Uq = \frac{\text{Հա} \cdot U_2}{100} = \frac{2000000 \times 5}{100} = 100000 \text{ դրամ:}$$

Այսինքն, ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում տարեկան մաշվածության գումարը հավասարաչափ կբաշխվի և կկազմի 100000 դրամ (ստուգում՝ 20 տարի x 100000 = 2 մլն դրամ):

Սակայն շուկայական տնտեսության պայմաններում օգտագործվում է մաշվածության հաշվարկման արագացված մեթոդներ: Այդ նպատակով տվյալ երկրի կառավարության որոշմամբ մաշվածության չափի (%) նկատմամբ կիրառվում է գործակից (գործակից 2-3): ԱՄՆ-ում գործակիցն ընդունված է 2, Գերմանիայում՝ 3, ԱՊՀ երկրներից միայն ՌԴ-ն է ընդունել նման որոշում և 1999թ. հունվարից ընդունված է Գ=2:

Արագացված մեթոդներով հաշվարկի նպատակն է ավելի կայուն ժամկետում փոխհատուցել օբյեկտի սկզբնական արժեքը, որպեսզի ձեռնարկեց իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը ի վիճակի լինեն կարճ ժամկետում ձեռք բերելու, կառուցելու ավելի շատ նոր հիմնա-

կան միջոցներ:

Այսպես, եթե ավտոմեքենայի սկզբնական արժեքը կազմում է 2 մլն դրամ, մաշվածության չափը՝ 15%, ապա մաշվածության սովորական հաշվարկման դեպքում նրա արժեքը կփոխհատուցվի 6.6 տարում, մինչդեռ, եթե հաշվարկվի արագացված մեթոդով, ընդունելով գործակիցը՝ 2, ապա մաշվածությունը կկազմի՝ $2 \cdot 15\% = 30\%$ և կփոխհատուցվի 3.3 տարում: Այս դեպքում ծառայության մնացած տարիների հաշվով մաշվածությունը չի հաշվարկվի, սակայն կօգտագործվի (կշահագործվի), քանի դեռ պետքն է: Ըուկայական տնտեսության պայմաններում գոյություն ունի հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման հետևյալ չորս մեթոդները.

- հավասարաչափ բաշխման (ուղիղ գծային) մեթոդ,
- մնացորդի նվազեցման մեթոդ,
- մնացորդի նվազեցման մեթոդ՝ հավասարաչափի անցումով,
- քվերի գումարման մեթոդ (ռեգրեսիայի մեթոդ):

Վերջին երեք մեթոդները համարվում են մաշվածության հաշվարկման արագացված մեթոդներ: Այժմ պարզաբանենք նրանց հաշվարկման կարգը:

Մնացորդի հաշվարկման մեթոդ. Այս դեպքում ծառայության առաջին տարվա հաշվով մաշվածության գումարը հաշվարկվում է ինչպես հավասարաչափ մեթոդի ժամանակ: Ծառայության երկրորդ տարվա հաշվով հաշվեկշռային (պատմական) արժեքից հանվում է մաշվածության առաջին տարվա գումարը, ապա հաշվարկվում մաշվածության տարեկան գումարը: Ընդ որում, մաշվածության չափի նկատմամբ բոլոր տարիների հաշվով կիրառվում է գործակիցը: Երրորդ տարվա հաշվով մաշվածության տարեկան գումարը հաշվարկելու համար հաշվեկշռային արժեքից հանվում է նախորդ երկու տարվա հաշվարկած տարեկան մաշվածության գումարները, ապա հաշվարկվում է չորրորդ տարվա մաշվածության գումարը: Հետագա տարիների հաշվով կատարվում է հաշվարկ նույն սկզբունքով՝ մինչև ծառայության ժամկետի սովախոլ:

Մնացորդի նվազեցման մեթոդ հավասարաչափի անցումով . Այս դեպքում ծառայության ժամկետի առաջին կեսի ընթացքում հաշվարկը կատարվում է նվազող մնացորդի, այսինքն՝ նախորդ մեթոդով, իսկ ծառայության երկրորդ կեսի հաշվով մաշվածության գումարը հաշվարկվում է ինչպես հավասարաչափ բաշխման մեթոդի դեպքում, միայն թե ոչ թե սկզբնական արժեքից, այլ ծառայության ժամկետի երկրորդ կեսի մնացորդային արժեքից ելնելով:

Թվերի գումարման մեթոդ . - ուրն անվանում են նաև ռեգրեսիայի մեթոդ:

Նախօրոք հաշվարկվում է ծառայության ժամկետի հաշվով ըստ տարիների մաշվածության չափը գործակցով, ապա ըստ տարիների ստաց-

ված գործակիցները բազմապատկվում է օբյեկտի հաշվեկշռային (պատմական) արժեքով և որոշվում է մաշվածության տարեկան գումարը: Մաշվածության չափը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$H t = \frac{2 (T - t + 1)}{T (T + 1)}, \text{ կամ հայերեն } U_z = \frac{2 (D\delta - D\delta t + 1)}{D\delta (D\delta + 1)}, \text{ որտեղ՝}$$

$H t (U_z)$ -ն՝ մաշվածության չափն է գործակցով,
 $T (D\delta)$ -ն՝ օբյեկտի ծառայության ժամկետն է,
 $t (D\delta t)$ -ն՝ ծառայության տվյալ տարվա ժամկետն է:

Այժմ ըստ տարիների հաշվարկենք մաշվածության գործակիցները (ընդունելով ծառայության ժամկետը 10 տարի): Այսպես, ծառայության առաջին տարվա հաշվով մաշվածության գործակիցը կկազմի՝

$$H t_1 = \frac{2 (10 - 1 + 1)}{10 (10 + 1)} = \frac{20}{110} = 0,1818,$$

$$H t_2 = \frac{2 (10 - 2 + 1)}{10 (10 + 1)} = \frac{18}{110} = 0,1636,$$

$$H t_3 = \frac{2 (10 - 3 + 1)}{10 (10 + 1)} = \frac{16}{110} = 0,1454,$$

$$H t_4 = \frac{2 (10 - 4 + 1)}{10 (10 + 1)} = \frac{14}{110} = 0,1272,$$

$$H t_5 = \frac{2 (10 - 5 + 1)}{10 (10 + 1)} = \frac{12}{110} = 0,1091,$$

$$H t_6 = \frac{2 (10 - 6 + 1)}{10 (10 + 1)} = \frac{10}{110} = 0,0909,$$

$$H t_7 = \frac{2 (10 - 7 + 1)}{10 (10 + 1)} = \frac{8}{110} = 0,0727,$$

$$H t_8 = \frac{2 (10 - 8 + 1)}{10 (10 + 1)} = \frac{6}{110} = 0,0545,$$

$$H t_9 = \frac{2 (10 - 9 + 1)}{10 (10 + 1)} = \frac{4}{110} = 0,0364,$$

$$H_{t_{10}} = \frac{2(10 - 10 + 1)}{10(10 + 1)} \cdot \frac{2}{110} = 0,0182:$$

Եթե օբյեկտի հաշվեկշռային արժեքը կազմում է 400 հազար դրամ, ապա մաշվածության տարեկան գումարը առաջին տարում կկազմի՝
 $800000 \times 0.1818 = 145440$ դրամ,
 երկրորդ տարում՝ $800000 \times 0.1636 = 130880$ դրամ և այլն:

Խնդիր 22.

Ձեռնարկության ոչ ընթացիկ մաշվող նյութական ակտիվի (հիմնական միջոցի) սկզբնական՝ հաշվեկշռային (պատմական) արժեքը կազմում է 800 հազար դրամ, ծառայության ժամկետը՝ 10 տարի, մաշվածության չափը՝ 10 %, արագացված մեթոդով մաշվածության գործակիցը՝ 2:

Պահանջվում է հաշվարկել տվյալ հիմնական միջոցի մաշվածությունը հաշվարկման բոլոր մեթոդներով, որոնք բնութոշ են շուկայական տնտեսությանը: Հաշվարկի արդյունքները յրացնել ալյուսակում (ալյուսակ 18):

Լուծում

1. հավասարաչափ բաշխման (ուղիղ գծային) մեթոդ.-

$$U_q = \frac{\text{Հա} \cdot U_2}{100} = \frac{800000 \times 10 \%}{100} = 80 \text{ հազ. դրամ:}$$

Այսինքն, 10 տարի շարունակ հավասարաչափ կհաշվարկվի տարեկան մաշվածության գումար՝ 80 հազար դրամի չափով (80 հազ X 10 տարի = 800 հազ. դրամ), որպեսզի փոխհատուցվի պատմական արժեքը:

2. Նվազող մնացորդի մեթոդ.-

- 1-ին տարվա համար $800 \text{ հազ. դրամ} \times 10 : 100 = 160 \text{ հազ. դրամ}$
- 2-րդ տարի $(800 - 160000) \cdot 20 \% : 100 = 128000$ դրամ,
- 3-րդ տարի $(800 - 288000) \cdot 20 \% : 100 = 102400$ դրամ,
- 4-րդ տարի $(800 - 390400) \cdot 20 \% : 100 = 81920$ դրամ,
- 5-րդ տարի $(800 - 472320) \cdot 20 \% : 100 = 65536$ դրամ,
- 6-րդ տարի $(800 - 537856) \cdot 20 \% : 100 = 52429$ դրամ,
- 7-րդ տարի $(800 - 590285) \cdot 20 \% : 100 = 41943$ դրամ,
- 8-րդ տարի $(800 - 632228) \cdot 20 \% : 100 = 33554$ դրամ,
- 9-րդ տարի $(800 - 665782) \cdot 20 \% : 100 = 26844$ դրամ,
- 10-րդ տարի $(800 - 692626) \cdot 20 \% : 100 = 21474$ դրամ:

Ստուգում՝ $16000 + 128000 + 102400 + 81920 + 65536 + 52429 + 41943 + 33554 + 26844 + 21474 = 714100$ դրամ:

Ինչպես երևում է հաշվարկից, այս մեթոդով սկզբնական (պատմական) արժեքը 10 տարում լրիվ չի փոխհատուցվում:

3. Նվազող մնացորդի մեթոդ՝ հավասարաչափի անցումով.

- 1-ին տարի $800 \text{ հազ. դրամ} \times 20 \% : 100 = 160000$ դրամ,
 - 2-րդ տարի $(800000 - 160000) \cdot 20 \% : 100 = 128000$ դրամ,
 - 3-րդ տարի $(800000 - 288000) \cdot 20 \% : 100 = 102400$ դրամ,
 - 4-րդ տարի $(800000 - 390400) \cdot 20 \% : 100 = 81920$ դրամ,
 - 5-րդ տարի $(800000 - 472320) \cdot 20 \% : 100 = 65535$ դրամ,
 - 6-րդ տարի $(800000 - 53780) \cdot 262144 \times 20 \% : 100 = 52429$ դրամ,
 - 7-րդ տարի $262144 \times 20 \% : 100 = 52429$ դրամ
 - 8-րդ տարի $262144 \times 20 \% : 100 = 52429$ դրամ,
 - 9-րդ տարի $262144 \times 20 \% : 100 = 52429$ դրամ,
 - 10-րդ տարի $262144 \times 20 \% : 100 = 52429$ դրամ,
- Ստուգում՝ $160000 + 128000 + 102400 + 81920 + 65536 + 52429 + 52429 + 52429 + 52429 + 52429 = 800000$ դրամ:

Ինչպես երևում է, այս մեթոդով հաշվարկելու դեպքում հիմնական միջոցի սկզբնական (պատմական) արժեքը 10 տարում լրիվ փոխհատուցվում է:

4. Թվերի գումարման (ոեգրեսիայի) մեթոդ.-

- $H_{t1} = 0,1818 \times 800000 = 145456$ դրամ,
- $H_{t2} = 0,1636 \times 800000 = 130896$ դրամ,
- $H_{t3} = 0,1454 \times 800000 = 11633$ դրամ,
- $H_{t4} = 0,1272 \times 800000 = 101776$ դրամ,
- $H_{t5} = 0,1091 \times 800000 = 87296$ դրամ,
- $H_{t6} = 0,0909 \times 800000 = 72736$ դրամ,
- $H_{t7} = 0,0727 \times 800000 = 58176$ դրամ,
- $H_{t8} = 0,0545 \times 800000 = 43616$ դրամ,
- $H_{t9} = 0,0364 \times 800000 = 29136$ դրամ,
- $H_{t10} = 0,0182 \times 800000 = 14576$ դրամ:

Ստուգում՝ $145456 + 130896 + 116336 + 101776 + 87296 + 72736 + 58176 + 43616 + 29136 + 14576 = 800$ հազար դրամ:

Այսպիսով, թվերի գումարման մեթոդի դեպքում տվյալ հիմնական միջոցի մաշվածության գումարը շահագործման ժամանակաշրջանում (10 տարի) ևս փոխհատուցում է սկզբնական (պատմական) արժեքը:

Այժմ տվյալ հիմնական միջոցի տարեկան մաշվածության գումարի հաշվարկը ըստ շահագործման տարիների ցույց տանք ալյուսակով (Ալյուսակ 18):

Ֆինանսական միջոցների մաշվածության տարեկան գումարների հաշվարկումը շուկայական տնտեսությանը բնորոշ մեթոդներով (սկզբնական պատմական արժեքը 800հազար դրամ, ծառայության ժամկետը՝ 10 տարի, մաշվածության չափը՝ 10%, գործակիցը՝ 2)

Տարիները	Հավասարաչափ բաշխման մեթոդ		Նվազող մնացորդի մեթոդ		Նվազող մնացորդի հավասարաչափի անցումով		Թվերի (նեգրեիայի) մեթոդ	գումարման մեթոդ
	Տարեկան մաշվածության գումարը	Կուտակված մաշվածության գումարը կարգով	Տարեկան մաշվածության գումարը	Կուտակված մաշվածության գումարը կարգով	Տարեկան մաշվածության գումարը	Կուտակված մաշվածության գումարը կարգով		
1	80000	80000	160000	160000	160000	160000	145456	145456
2	80000	160000	128000	288000	128000	288000	130896	276352
3	80000	240000	102400	390400	102400	390400	116326	392678
4	80000	320000	81920	472320	81920	47320	101776	494454
5	80000	400000	65536	537856	65535	537855	87296	581750
6	80000	480000	52429	590285	52429	590284	72736	654486
7	80000	560000	41943	632228	52429	642713	58176	712662
8	80000	640000	33554	665782	52429	695142	43616	756278
9	80000	720000	26844	692636	52425	747571	29136	785414
10	80000	800000	21474	714100	52429	800000	14586	800000
Ընդամենը	800000	800000	714100	714100	800000	800000	800000	800000

Ինչպես երևում է հաշվարկի տվյալներից, միայն նվազող մնացորդի մեթոդը դեպքում է, որ լրիվ չի փոխհատուցվում հիմնական միջոցի սկզբնական՝ պատմական արժեքը: Դրա համար էլ օգտագործվում է նվազող մնացորդի մեթոդը՝ հավասարաչափի անցումով: Նշված մեթոդներից ներկայումս մեր երկրում կիրառվում է հավասարաչափ բաշխման մեթոդը, ուր կիրառվել է նաև նախկին հաշարակարգում: Մինչդեռ, շուկայական տնտեսության պայմաններում հարկ է կիրառել արագացված մեթոդներից որևէ մեկը:

11.3. Ոչ ընթացիկ՝ մաշվող նյութական ակտիվների՝ հիմնական միջոցների նորոգման կազմակերպումը և օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիները

Հիմնական միջոցները, մասնակցելով արտադրության գործիքացին, մտնում են ֆիզիկապես և բարոյապես: Ֆիզիկական մաշվածքը վերականգնելու նպատակով ձեռնարկությունները կառարում են նրանց նորոգում: Բարոյական մաշվածքի դեպքում ձեռք են բերվում ժամանակակից մեքենասարքավորումներ և բարձր արտադրողական տեխնիկա, որոնք ավելի արտադրողական են: Գոյություն ունի նորոգման երկու տեսակ՝ ընթացիկ և կապիտալ (հիմնական) նորոգում:

Ընթացիկ է կոչվում այն նորոգումը, որի դեպքում փոխվում են մեքենասարքավորումների առանձին դետալները (մասերը) կամ նորոգվում է շենքի որևէ մասը: Ընթացիկ նորոգման ծախսերը ներառվում են արտադրվող արտադրանքի ինքնարժեքի մեջ: Նրա չափը՝ բիզնես-ծրագրով նախատեսվում է տվյալ օբյեկտի արժեքի 1-2 %-ի չափով:

Կապիտալ է կոչվում այն հիմնական նորոգումը, որի դեպքում լրիվ վերականգնվում է ֆիզիկական մաշվածքը: Այս դեպքում փոխվում են մեքենասարքավորումների զգալի մասը, նորոգվում է ավտոմեքենայի շարժիչը, փոխվում են անվարողները և այլն: Շենքերի հաշվով կատարվում են էական փոփոխություններ: Ֆիզիկական մաշվածքը վերականգնելու համար, հիմնական նորոգում կատարելու նպատակով ձեռնարկության մեխանիկ-ճարտարագետը կամ շինարար-ճարտարագետը, համապատասխանաբար, մեքենաների և շենքերի հաշվով տարվա սկզբին կազմում են հիմնական նորոգման դեֆեկտային (թերությունների) ակտ: Այն կազմվում է ըստ հիմնական միջոցների տեսակների: Նրանում նշվում է կատարվող աշխատանքների ծավալները՝ բնեղեն արտահայտությամբ:

Դրա հիման վրա, հաշվի առնելով շինանյութերի, պահեստամասերի և նորոգման այլ նյութերի պահանջվող քանակը (ըստ սպառման նորմաների՝ չափերի) և նրանց ձեռքբերման շուկայական գների, կազմվում է ծախսերի նախահաշիվ: Դրա հիման վրա կազմակերպվում է օբյեկտների հիմնական նորոգումը: Ընդ որում, հիմնական նորոգման փաստացի արշտեքն ավելացվում է տվյալ օբյեկտի սկզբնական (հաշվեկշռային)՝ հաշվառման ստանդարտով՝ պատմական արժեքին և հաշվարկվում է մաշվածություն՝ ընդհանուր հիմունքներով:

Բացի ընթացիկ և հիմնական նորոգումից, մեքենասրաքավորումների հաշվով կազմակերպվում է նաև տեխնիկական սպասարկում (SU-1 և SU-2): Դրա համար գոյություն ունեն սահմանված նորմաներ: Ավտոմեքենաների համար, կախված վազքից (կմ) կամ շարժիչի աշխատանքից (շարժիչ-ժամ): Գործնականում, բացի ձեռնարկությունում կազմակերպվող մեքենասրաքավորումների տեխնիկական սպասարկումից, ավտոտեսչության կողմից կազմակերպվում է նաև տարեկան տեխնիկական ստուգատես՝ ավտոմեքենաների և անիվավոր տրակտորների համար: Դրա նպատակը մեքենաների, տրակտորների անվտանգ շահագործումն է: Ի տարբերություն նախորդ հասարակարգի, ավտոմեքենաները, անիվավոր տրակտորները կարող են օգտագործվել նրանց ծառայության ժամկետը լրանալուց հետո ևս, եթե այն շահագործվում է անվտանգ ձևով:

11.4. Զեռնարկության ընթացիկ ակտիվները: Շրջանառու միջոցների էությունը, դասակարգումը և կառուցվածքը

Ընթացիկ են կոչվում այն ակտիվները, որոնք ունեն ծառայության մինչև մեկ տարվա ժամկետ: Որպես ընթացիկ ակտիվներ համարվում են պաշարները (հումք և նյութերը, արտադրանքը, ապրանքները, արագաձառնառարկաները և անավարտ արտադրությունը), ընթացիկ դեբիտորական պարտքերը (լատիներեն՝ debete - մուտք, այսինքն, ելք ուրիշները պարտք են տվյալ ձեռնարկությանը), ընթացիկ ֆինանսական ակտիվները (այսինքն մինչև մեկ տարվա մարման ժամկետ ունեցող արժեթղթերը) դրամական միջոցները և այլ ընթացիկ ակտիվները: Այսպիսով, ըստ էության, ընթացիկ ակտիվները համարվում են շրջանառու միջոցները:

Շրջանառու միջոցներ են կոչվում աշխատանքի այն առարկաները, որոնք ունեն մինչև 50000 դրամ արժեք և մինչև մեկ տարվա ծառայության ժամկետ: Շրջանառու միջոցները, ի տարբերություն հիմնական միջոցների,

ունեն որոշակի առանձնահատկություններ: Դրանք են՝

- շրջանառու միջոցները մասնակցելով արտադրության գործընթացին, միանգամից փոխում են իրենց բնափրային ձևը (օրինակ՝ էլեկտրաէներգիայի կժտ/ժամր փոխարկվում է արժեքային ձևի՝ որպես արտադրության ծախս, նույնը և հումք ու նյութերը),

- շրջանառու միջոցները մասնակցելով արտադրության գործընթացին, իրենց արժեքը միանգամից փոխանցում են արտադրվող արտադրանքի վրա,

- շրջանառու միջոցները չեն մաշվում, այլ վատ պահպանման պատճառով պահեստում կարող են փչանալ և մատնվել կորստի: Նրանք կարող են կորստի մատնվել նաև մատակարարներից ձեռնարկություն փոխադրելու ժամանակ,

- շրջանառու միջոցները պահեստում պահպանելու ժամանակ փչանում են ու մատնվում կորստի և առաջանում է բնական պակասորդ:

Դրա համար գոյություն ունեն որոշակի նորմաներ (չափեր)՝ բնական պակասորդի և սպառման հաշվով:

Շրջանառու միջոցների արժեքը կոչվում են ֆոնդեր:

Արտադրության ծրագրավորման (պլանավորման) և հաշվառման մեջ շրջանառու միջոցները դասակարգվում են.

- առաջին, **արդարական շրջանառու ֆոնդեր** - դրանք այն շրջանառու միջոցներն են, որոնք օգտագործվում են արտադրության մեջ և ունեն նյութական արժեք, այսինքն չափվում են բնեղեն և արժեքային ձևով: Նրանք էլ իրենց հերթին դասակարգվում են.

- **սպրանքանյութական արժեքներ**, որոնք գտնվում են պահեստում (հումք և նյութեր),

- **պաշարներ**, որոնք գտնվում են սպառման ոլորտում՝ պահեստից դուրս են գրվել արտադրության վրա և գտնվում են արտադրության մեջ, այսինքն՝ սպառման փուլում:

Արտադրության ծրագրավորման և հաշվառման մեջ շրջանառու արտադրական ֆոնդերը, ըստ կառավարության որոշման դասակարգվում են՝

- **հումք և նյութեր**, այդ թվում՝ նավթամթերք (վառելանյութեր), ընթացիկ նորոգման համար շինանյութեր, որոնք իրենց հերթին դասակարգվում են հումքի և նյութերի տեսակի: Գոյություն ունի հումքի հետևյալ տեսակները.

- **գյուղատնտեսական հումք**, որը մշակում են սննդի և թեթև արդյունաբերության ձեռնարկությունները,,

- **արդյունաբերական հումք**, որոնք օգտագործվում են լեռնահանքային ընդունաբերական ձեռնարկությունները:

Այսպես շեռնահանքային արդյունաբերությունը արդյունահանում և վե-
րանշակում է բնական պաշարներ (օգտակար հանածոներ), որոնք հունք են
հանդիսանում արդյունաբերական մյուս ձեռնարկությունների համար,

- **շինարարական հունք** (քար, շինափայտ և այլն), որոնք հունք են
հանդիսանում շինարարական կազմակերպությունների համար, որով
կառուցում են շինարարական օբյեկտներ,

- **կիսապարասպրուկներ**, աշխատանքի այն առարկաներն են, որոնք
դեռևս ավարտում փուլով մշակված չեն,

- **մաքողաչ և բարձր անասուններ**, որոնց աճեցնում և բտում են գյու-
ղատնտեսության մեջ:

- **երկրորդ, շրջանառության ֆոնդեր** .- Դրանք այն ֆոնդերն են, որոնք
հանդես են գալիս դրամական ձևով (բոլոր տեսակի դրամական միջոց-
ները), որոնք գտնվում են դրամարկում, հաշվարկային հաշվում, հատուկ
հաշիվներում (արժույթով և արտարժույթով), դրամական միջոցներ ճա-
նապարհին, ինչպես նաև դեբիտորական պարտքերը, այսինքն, երբ ու-
րիշները պարտք են տվյալ ձեռնարկությանը:

Շրջանառության ֆոնդերի մեջ ներառվում են նաև կայուն պահվնե-
րը: Դրանք այն ընթացիկ միջոցներն են, որոնք գտնվում են տվյալ ձեռ-
նարկության տրամադրության ներքո և մինչև պարտքի վճարումը այդ մի-
ջոցներն օգտագործում են իրենց ժամանակավոր և սեզոնային կարիքնե-
րը բավարարելու համար (անձնակազմին չվճարած աշխատավարձը,
նյութային հավասարեցված վճարումները, գործուղման ծախսերը և այլ կրե-
դիտորական պարտքերը):

**11.5. Շրջանառու միջոցների արդյունավետ օգտագործման
ցուցանիշները, նրանց հաշվարկման կարգը և
բարելավման ուղիները**

Ձեռնարկությունների տնտեսագիտության հիմնկան խնդիրն է խնա-
յողաբար և արդյունավետ օգտագործել շրջանառու միջոցները: Գոյու-
թյուն ունի շրջանառու միջոցների արդյունավետ օգտագործման հետևյալ
ցուցանիշները.

- առաջին, շրջանառու միջոցների պտույտների թիվը տարվա ընթաց-
քում, այսինքն՝ շրջանառելիության գործակիցը: Այն հաշվարկվում է
ապրանքի իրացումից ստացված դրամական միջոցների մուտքի (հասույ-
թի) և առկա շրջանառու միջոցների հարաբերությամբ:

Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Q_2 = \frac{Հի}{Շաֆ} \quad \text{կամ} \quad \eta_p = \frac{Հի}{Շաֆ}, \text{ որտեղ՝}$$

Q₂-ն՝ շրջանառելիության գործակիցն է, այսինքն պտույտների թիվը
հաշվետու ժամանակաշրջանի (ետամսյակ, տարի) ընթացքում,
Հի-ն՝ իրացումից հասույթը՝ հազար դրամ,
Շաֆ-ն՝ շրջանառու արտադրական ֆոնդերն են (հազ. դրամ):

Խնդիր 23

Ձեռնարկության հասույթը կազմել է 1.5 մլն դրամ և օգտագործվել է
500 հազար դրամի շրջանառու արտադրական ֆոնդեր:

Պահանջվում է հաշվարկել շրջանառու արտադրական ֆոնդերի շր-
ջանառելիության գործակիցը, այսինքն պտույտների թիվը:

Լուծում

$$Q_2 = \frac{Հի}{Շաֆ} = \frac{1500000}{500000} = 3 \text{ պտույտ:}$$

Դա նշանակում է, որ տարվա ընթացքում շրջանառու արտադրական
միջոցներն անցել են բնեղեն ձևից արժեքային ձևի և հակառակը՝ տարվա
մեջ երեք անգամ: Այսինքն, որքան մեծ լինի պտույտների թիվը, այնքան
արդյունավետ կօգտագործվեն շրջանառու միջոցները և ընդհակառակը:

- երկրորդ, **պտույտի տևողությունը տարվա ընթացքում**, որն իրենից
ներկայացնում է տարվա օրերի թվի հարաբերությունը պտույտների
թվին՝ շրջանառելիության գործակցին:

Ընդ որում, տնտեսագիտական, այդ թվում ֆինանսական հաշվարկնե-
րում, տարվա օրերի թիվն ընդունվում է կլոր թվով՝ 360 օր, բացառությամբ
Անգլիայում, որը պահպանողական երկիր է: Այն հաշվարկվում է
հետևյալ բանաձևով՝

$$\eta_{տ} = \frac{360 \text{ օր}}{Q_2} \quad \text{կամ} \quad \eta_{տ} = \frac{360 \text{ օր}}{\eta_p}, \text{ որտեղ՝}$$

η_տ-ն՝ պտույտների տևողությունն է, օր,
Q₂-ն՝ շրջանառելիության գործակիցն է, այսինքն՝ պտույտների թիվը:
Ըստ առաջին ցուցանիշի արդյունքի, պտույտների տևողությունը կկազմի՝

$$n = \frac{360 \text{ օր}}{4.2} = \frac{360}{3} = 120 \text{ օր:}$$

Դա նշանակում է, որ շրջանառու միջոցների մեկ պտույտի տևողությունը կազմում է 120 օր: Որքան կարճ լինի պտույտների տևողությունը, այնքան արդյունավետ կօգտագործվեն շրջանառու միջոցները,

• երրորդ, **ապրանքի իրացումից ստացված դրամական միջոցների մուտքի (հասույթի) հարաբերությունը շրջանառու միջոցների միջին (եռամսյակային, տարեկան ծավալը) մեծությանը:**

Այն ցույց է տալիս, թե միջին հաշվով որքա՞ն հասույթ է ստացվել մեկ միավոր շրջանառու միջոցների հաշվով: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$q_3 = \frac{\xi_3}{\Sigma \Phi} = \frac{1.5 \text{ մլն դրամ}}{60000} = 2.5,$$

այսինքն՝ միջին հաշվով օգտագործված մեկ միավոր շրջանառու արտադրական միջոցների հաշվով ստացվել է 2.5 միավոր հասույթ,

• չորրորդ, **օգտագործված շրջանառու արտադրական միջոցների միջին մեծության հարաբերությունը իրացումից հասույթին:**

Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$q_4 = \frac{\Sigma \Phi}{\xi_4} = \frac{600000}{1500000} = 0.4:$$

Դա նշանակում է, որ ապրանքի իրացումից հասույթի ամեն մի միավորի հաշվով օգտագործվել է 0.4 միավոր շրջանառու արտադրական ֆոնդեր: Որքան ցածր լինի այդ ցուցանիշը, այնքան արդյունավետ կօգտագործվեն շրջանառու արտադրական ֆոնդերը:

Շրջանառու միջոցների խնայողաբար օգտագործումը

Ձեռնարկության տնտեսագիտության հիմնական խնդիրն է խնայողաբար և արդյունավետ օգտագործել բոլոր տեսակի պաշարները, այդ թվում շրջանառու միջոցները: Թեստավորման միջոցով բացահայտենք, թե դուք խնայող ե՞ք, թե՞ շոռայող:

Թեստը անցվերեն test բառից է, որը նշանակում է ստուգում, փորձարկում: Գոյություն ունեն հոգեբանական, կառավարության հոգեբանական թեստեր, որով ստուգվում է մարդկանց գիտելիքները, տեսողական հիշողությունը, կազմակերպչական ունակությունները, կամային հատկանիշ-

ները, խառնվածքը, բնավորությունը , գիտելիքները և այլն: Սակայն գոյություն ունեն նաև տնտեսական թեստեր, որով ստուգվում է թեստավորողի (ուսանողների) գիտելիքները, նրանց վերաբերմունքը, մտածելակերպը և այլն:

Ճարտարագիտական առաջին թեստի հեղինակը հանդիսանում է ամերիկյան վտարանդի Մյուստենբերգը (1916թ.): Տնտեսական թեստերը բաղկացած են հարցաշարից և այլընտրանքային մի քանի պատասխաններից: Թեստավորվողը, ըստ իր մտածելակերպի և վերաբերմունքի, ընտրում է պատասխաններից մեկը և վերջում, ըստ թեստի բանալու, հաշվարկվում են միավորները և որովում գնահատական: Եվ այսպես՝

Թ Ե Ս Տ 1

Խնայող ե՞ք ,արդյոք, թե՞ շոռայող:

1.Պատահում է արդյո՞ք, որ դուք միաժամանակ կատարեք 2-3 ւշխատանքային գործողություններ (խոհանոցում և այլ տեղ):

ա)հազվադեպ, բ)հաճախ, գ) մեկ անգամ

2.Կրթաթոշակ, աշխատավարձ ստանալուց հետո, արդյո՞ք, դուք գնում ե՞ք որևէ թանկարժեք իր՝ հասկանալով, որ հետագայում կհայտնվեք նյութական ծանր վիճակում:

ա) երբեք , բ) միշտ, գ) երբեմն

3.Ձեզ դուր է եկել գեղեցիկ հագուստ, սակայն թանկության պատճառով դուք վախենում եք գնել այն.

ա) երբեմն, բ) երբեք, գ) միշտ

4.Ձեր տանը փչացել է որևէ էլեկտրական սարքավորում: Դուք նախընտրում ե՞ք վերանորոգել այն, թե գնել նորը:

ա) գնում ենք նորը, բ)կախված է վերանորոգման գնից, գ) ինքներս ենք զբաղվում վերանորոգմամբ

5.Ինչպե՞ս եք վարվում , երբ պատռվում է Ձեր զուգազուլպան, մսակին... ա)կարկատում եմ, բ) դեն եմ գցում,

գ) պահում եմ հետագայում պետք գալու նպատակով

6.Որևէ աշխատանք կատարելուց հետո անջատում եք գազը, էլեկտրական սարքավորումը Ձեր բնակարանում

ա)ոչ միշտ, բ) երբեք, գ) միշտ

7.Դուք զանգահարում եք գործի կապակցությամբ՞, թե առանց որևէ առիթի:

ա)որպես կանոն գործի կապակցությամբ, բ)ուղղակի սիրում եմ զանգել, գ)ինչպես պատահի

8. Հաջողվում է արդյո՞ք Ձեզ, համատեղել աշխատանքն ուսման հետ.
ա) այո, բ) ոչ, գ) կախված գործից

9. Եթե Ձեր բնակարանում կուտակվել են հին թերթեր, ամսագրեր, ինչ-պե՞ս եք վարվում նրանց հետ.

ա) դեն են գցում, բ) հանձնում են որպես թղթի թափոն,
գ) յոչինչ չեն անում, մինչև որ դա չանհանգստացնի ինձ:

10. Ընտանիքի համար դուք գնում եք արդյո՞ք ավելի շատ հաց, քան պահանջվում է.

ա) այո, բ) ոչ, գ) երբեմն.

11. Ուտում ե՞ք այն ամենը, ինչ կա Ձեր ափսեում, թե՞ մնացորդ եք թողնում.

ա) երբեմն, բ) երբեք, գ) միշտ

12. Դուք խնամքով ե՞ք օգտագործում Ձեր հագուստը, կոշիկը.

ա) այո, բ) ոչ, գ) երբեմն.

13. Դուք խնամքով ե՞ք վերաբերվում օտար մարդկանց իրերին.

ա) ոչ, բ) այո, գ) ավելի խնամքով, քան իմ անձնական իրերին:

Միավորների հաշվարկման կայգը (թեստի բանալին)

ՀԱՐՑՆ	Ա	Բ	Գ
1	1	0	2
2	2	0	1
3	1	0	2
4	0	2	1
5	2	0	1
6	0	1	2
7	2	0	1
8	2	0	1
9	0	2	1
10	0	2	1
11	1	2	0
12	2	0	1
13	0	1	2

0- 5 միավոր - Գնահատականը՝ անբավարար: Դուք հոգսեր չունեք, թեթևամիտ եք վերաբերվում ոչ միայն փողին, այլև այն ամենին, որն ունի նյութական արժեք:

6-12 միավոր - Գնահատականը՝ բավարար: Դուք սիրում եք ճոխ ապրել: Ճիշտ է, դուք երբեմն փորձում եք խնայողաբար վարվել ունեցվածքին և երբեմն հրաժարվում եք անհրաժեշտ իրերից, այնուամենայնիվ, թույլ եք տալիս շոայլում:

13-19 միավոր - Գնահատականը՝ լավ: Դուք չեք սիրում միջոցները ծախսել անտեղի, սակայն ժամանակ առ ժամանակ թույլ եք տալիս որոշակի չափով շոայլումներ:

20-26 միավոր - Գնահատականը՝ գերազանց: Դուք չափազանց տնտեսող եք, խնայող մարդ և միշտ էլ պատկերացնում եք Ձեր անելիքները, մանրամասն կշռադատում եք և ընդունում ճիշտ որոշում:

Շրջանառու միջոցների բարելավման ուղիները

Շրջանառու միջոցներն արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ է՝

- Բարձրացնել շրջանառու արտադրական ֆոնդերի պտույտների թիվը՝ շրջանառելիության գործակիցը: Դրա համար անհրաժեշտ է ավելացնել ապրանքային արտադրանքը և իրացումից՝ միջոցների մուտքը (հասույթը):

- Կրճատել շրջանառու արտադրական ֆոնդերի պտույտների տևողությունը, որը կնպաստի ավելի կարճ ժամկետում բնեղեն ձևից փոխադրվել արժեքայինի և հակառակը:

- Իրացումից ստացված հասույթի մեկ միավորի հաշվով կրճատել շրջանառու արտադրական ֆոնդերի չափը, այսինքն՝ իջեցնել նյութատարությունը:

- Շրջանառու արտադրական ֆոնդերի մեկ միավորի հաշվով ավելացնել իրացումից ստացված միջոցների մուտքը, այսինքն՝ հասույթը:

- Արտադրանքի իրացման ծավալն ավելացնելու նպատակով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, որը կնպաստի համախառն արտադրանքի արժեքի ավելացմանը:

- Արդյունաբերության մեջ համախառն արտադրանքն ավելացնելու նպատակով անհրաժեշտ է ավելացնել արտադրության աշխատողների և մեքենասարքավորումների (հաստոցների) թիվը:

- Գյուղատնտեսության մեջ համախառն արտադրանքն ավելացնելու նպատակով անհրաժեշտ է.

- բարձրացնել մշակաբույսերի բերքատվությունը,

- բարձրացնել կենդանիների մթերատվությունը,
- կանխել շրջանառու արտադրական միջոցների փչացումները, կո-րուստները,
- շրջանառու արտադրական ֆոնդերն օգտագործել խնայողաբար և արդյունավետ կարգով:

11.6. Շրջանառու միջոցների ծրագրավորում:

Հումք և նյութերի տարեկան պահանջի պլանավորումը:

Շրջանառու միջոցների պահանջի որոշման կարգը

ըստ բիզնես-ծրագրի

Շրջանառու միջոցների տարեկան պահանջը որոշելու՝ ծրագրավոր-ման (պլանավորման) համար հիմք են հանդիսանում ձեռնարկություննե-րի բիզնես-ծրագրի արտադրական ծրագիրը (արտադրական պլան) և հումք ու նյութերի սպառման նորմաները (չափերը): Գոյություն ունեն հումք և նյութերի, այդ թվում՝ վառելանյութերի, շինանյութերի և հումքի, նյութերի սպառման նորմաներ: Շրջանառու միջոցների տարեկան պա-հանջը որոշելու համար անհրաժեշտ է բիզնես-ծրագրի արտադրական պլանով, ըստ արտադրանքի տեսակների, համախառն արտադրանքի ծավալները բազմապատկել հումքի սպառման նորմայով Տարեկան պա-հանջը բնեղենով հարկ է բազմապատկել հումքի (նյութերի) շուկայական գնով և որոշել նրա արժեքը (խնդիր 24):

Խնդիր 24.

«Աշտարակ կաթ» ԲԲԸ-ի բիզնես-ծրագրով նախատեսվել է արտադ-րել 50000 տոննա պանիր: Հումքի նորման սահմանված է 1 կգ հաշվով 4.7 կաթ (3.6 % յուղայնությամբ):

Պահանջվում է որոշել հումքի տարեկան պահանջը՝ բնեղենով և ար-ժեքային ձևով, եթե 1 կգ կաթը գնվում է 130 դրամով:

Լուծում

- 1) Հումքի պահանջը բնեղենով կկազմի՝
 $1 : 4.7 = 50000 : X$, որտեղից՝
 $X = 50000000 \text{ կգ} \times 4.7 \text{ կգ} = 23.5 \text{ մլն կգ կաթ}$
- 2) Հումքի արժեքը կկազմի՝
 $23.5 \text{ մլն կգ} \times 130 \text{ դրամ} = 3.45 \text{ մլն դրամ}$

Խնդիր 25.

Արարատի գինու գործարանի բիզնես-ծրագրով նախատեսված է ար-տադրել 40000 դլ գինի:

Մեկ լիտր գինի ստանալու համար հումքի նորման նախատեսված է 0.7կգ խաղող (խաղողի հումքի շաքարայնությունը 21%), իսկ հումքի ձեռքբերման գինը՝ 135 դրամ:

Պահանջվում է որոշել հումքի պահանջվող ծավալը բնեղենով և արժե-քային ձևով:

Լուծում

- 1) Հումքի տարեկան պահանջը կկազմի՝
 $1 : 0.7 = 400000 : X$, որտեղից՝
 $400000 \text{ կգ} \times 0.7 = 280 \text{ հազար կգ} = 2800 \text{ ցենտներ}$
- 2) Հումքի տարեկան պահանջը արժեքային ձևով կկազմի՝
 $280000 \text{ կգ} \times 135 \text{ դրամ} = 37.8 \text{ մլն դրամ}$

Խնդիր 26.

«Գագ-53» ավտոմեքենան (բեռնատարողությունը 3.5 տ) տարեկան պետք է կատարի 400000 կմ վազք և 70000 տկմ աշխատանք: 100կմ վազ-քի համար բենզինի սպառման նորման սահմանված է 16 լիտր, իսկ յու-րաքանչյուր տկմ-ի համար՝ 2 լիտր:

Պահանջվում է հաշվարկել վառելանյութի պահանջը բնեղենով և ար-ժեքային ձևով:

Լուծում

- 1) վառելանյութի պահանջը կատարած վազքի (կմ) համար կկազմի՝
 $\frac{400000 \text{ կմ} \times 16 \text{ լ}}{100} = 64000 \text{ կգ}$
- 2) կատարած աշխատանքի (տկմ) համար վառելանյութի պահանջը կկազմի՝
 $\frac{700000 \text{ կմ} \times 2 \text{ լ}}{100} = 14000 \text{ կգ}$

Վառելանյութի ընդհանուր պահանջը կկազմի՝
 $64000 \text{ կգ} + 14000 \text{ կգ} = 78000 \text{ կգ}$
 Վառելանյութի (բենզինի) արժեքը կկազմի՝ (1 լիտրը՝ 280 դրամ)
 $7800 \text{ կգ} \times 280 \text{ դրամ} = 21.8 \text{ մլն դրամ}$

Խնդիր 27.

«Աթենք» մսամթերքի կոմբինատ ՍՊԸ-ն ըստ բիզնես-ծրագրի պետք է

արտադրի 30 տոննա բժշկական երշիկ: Հումքի նորման 100 կգ երշիկի հաշվով կազմում է (Աղյուսակ 19):

Աղյուսակ 19

No	Հումքի անվանումը	Չափի միավոր	Սկառման նորման (չափը)	Գինը, դրամ
1	Տավարի միս	կգ	25	950-00
2	խոզի միս	կգ	75	800-00
3	կաթ	լ	2	150-00
4	Չու	հատ	3	50-00
5	Աղ	գ	2090	0.0072
6	Նիտրիտ	գ	7.1	1800-00
7	Ընկույզի մուսկատ	գ	50	700-00
8	Շաքարավազ	գ	200	250-00

Հումքի սպառման չափերը՝ «Աթենք» մսամթերքի կոմբինատ ՍՊԸ-ու Պահանջվում է հաշվարկել հումքի տարեկան պահանջը ըստ հումք տեսակների՝ բնեղենով և արժեքային ձևով: Որոշել ամբողջ հումքի պահանջը՝

1) տավարի մսի պահանջը կկազմի՝

$$\frac{30 \times 1000 \text{ կգ} \times 25 \text{ կգ}}{100} = 750000 \text{ կգ} = 750 \text{ տոննա,}$$

հումքի արժեքը կկազմի՝ $750000 \text{ կգ} \times 950 \text{ դրամ} = 712.5 \text{ մլն դրամ,}$

2) խոզի մսի պահանջը կկազմի՝

$$\frac{30000 \times 75 \text{ կգ}}{100} = 22500000 \text{ կգ} = 2250 \text{ տոննա,}$$

խոզի մսի արժեքը կկազմի՝ $2250000 \text{ կգ} \times 800 \text{ դրամ} = 1800.0 \text{ մլն դրամ:}$

3) կաթի պահանջը կկազմի՝

$$\frac{30000 \times 2 \text{ լիտր}}{100} = 600 \text{ լիտր,}$$

կաթի արժեքը կկազմի $600 \text{ լիտր} \times 150 \text{ դրամ} = 90 \text{ հազ. դրամ,}$
4) ձվի պահանջը կկազմի՝

$$\frac{30000 \times 3 \text{ հատ}}{100} = 900 \text{ ձու,}$$

ձվի արժեքը կկազմի՝ $900 \times 50 \text{ դրամ} = 45000 \text{ դրամ:}$

5) աղի պահանջը կկազմի՝

$$\frac{30000 \times 2090 \text{ գ}}{100} = 627 \text{ կգ,}$$

աղի արժեքը կկազմի՝ $627 \text{ կգ} \times 72,0 = 45144 \text{ դրամ,}$

6) նիտրիտի տարեկան պահանջը կկազմի՝

$$\frac{30000 \times 0.0071}{100} = 2.13 \text{ կգ,}$$

նիտրիտի արժեքը կկազմի՝ $2.13 \text{ կգ} \times 1800.0 = 3834 \text{ դրամ,}$

7) մուսկատի և ընկույզի պահանջը կկազմի՝

$$\frac{30000 \times 0.05}{100} = 15 \text{ կգ,}$$

մուսկատի և ընկույզի արժեքը կկազմի՝ $15 \text{ կգ} \times 700.0 = 10500 \text{ դրամ,}$

8) շաքարավազի պահանջը կկազմի՝

$$\frac{30000 \times 0.20}{100} = 60 \text{ կգ,}$$

շաքարավազի արժեքը կկազմի՝ $60 \text{ կգ} \times 250.0 = 15000 \text{ դրամ:}$

Ամբողջ հումքի արժեքը կկազմի՝

$$712.5 \text{ մլն դրամ} + 1800 \text{ մլն դրամ} + 0.09 \text{ մլն դրամ} + 45000 \text{ դրամ} + 45144 \text{ դրամ} + 3834 \text{ դրամ} + 10500 \text{ դրամ} + 15000 \text{ դրամ} = 2512.7 \text{ մլն դրամ:}$$

Երջանառու միջոցների նորմավորումը (չափավորումը)

Երջանառու միջոցները նորմավորում (չափավորում) նշանակում է նվազագույն պահանջի ոռոշում, ըստ որի այն կուտակվում է ձեռնարկության պահեստում, որպեսզի արտադրությունը կազմակերպել համաչափ ձևով: Դրա համար գոյություն ունեն նյութական միջոցների չափավորման նորմատիվ-

ներ՝ տոկոսով նյութական միջոցների տարեկան պահանջի նկատմամբ:

Հայաստանը 1991 թվականից անցնելով շուկայական տնտեսության, ձեռնարկությունները հրաժարվեցին շրջանառու միջոցների չափավորման մեթոդներից: Սակայն դրա անհրաժեշտությունը զգացվում է նաև շուկայական տնտեսության պայմաններում: Այդ մասին կառավարության նիստերից մեկի ժամանակ՝ 2000 թվականին ընդգծել է նաև վարչապետը: Այդ մեթոդը կիրառվում է ամերիկյան և եվրոպական երկրներում, ըստ որի պլանավորում (ծրագրավորում) են շրջանառու միջոցների տարեկան պահանջը և կատարում չափավորում: Մինչդեռ, Ճապոնիայում կիրառվում է շրջանառու միջոցների օգուտգործման «պիսեից բերան» մեթոդը: Դրա էությունը կայանում է նրանում, որ տվյալ ապրանքի արտադրության գծով որքան պատվելու ունի տվյալ ամսում, այնքան էլ ձեռք է բերում հումք և նյութեր, պահեստամասեր: Օրինակ, Տոյոտա ավտոմեքենաշինական գործարանում, որն առաջինն է կիրառել այդ մեթոդը:

Շրջանառու միջոցների կուտակումը պահեստում, նշանակում է նրանց սառեցում և դրամական միջոցները շրջանառությունից հանել: Այդ գործընթացը կոչվում է շրջանառու միջոցների ինոբիլիգացիա (փոշիացում):

Շրջանառու միջոցների չափավորման համար մախկին հասարակարգում սահմանված էր չափ՝ %-ով շրջանառու միջոցների տարեկան պահանջի նկատմամբ: Մեկ ամսվա նվազագույն պահանջի դեպքում չափանիշը կկազմի՝

$$\frac{100\%}{12 \text{ ամիս}} \times 1 \text{ ամիս} = 8.3 \text{ տոկոս:}$$

Երկու ամսվա դեպքում չափը կկազմի 16.6 % (8.3 % x 2) և այլն:

Խնդիր 28.

Ձեռնարկությունում հումքի արժեքի տարեկան պահանջը բիզնես-ծրագրով նախատեսված է 500 հազար դրամ (նորմատիվը՝ 8.3 %), վառելանյութերինը՝ 300 հազ.դրամ (նորմատիվը՝ 8.3%), կարծր վառելիքինը՝ 120 հազ. դրամ (նորմատիվը՝ 16.6 %), պարարտանյութերի և այլ նյութերինը՝ 200 հազար դրամ (նորմատիվը՝ 8.3 %), արագամաշ առարկաներինը՝ 220 հազ. դրամ (նորմատիվը՝ 2.5 %), օժանդակ նյութերը՝ 80 հազ. դրամ (նորմատիվը՝ 0.6 %), պահեստամասեր՝ 150 հազ. դրամ (նորմատիվը՝ 9.4 %), դրամական միջոցներ՝ 1.5 մլն դրամ (նորմատիվը՝ 0.2%):

Պահանջվում է հաշվարկել տարվա հաշվով շրջանառու միջոցների նորմատիվը (նվազագույն պահանջի չափը):

Լուծում

1) հումքի տարեկան պահանջի նվազագույն չափը կկազմի՝

$$\frac{50000 \times 8.3\%}{100\%} = 41500 \text{ դրամ,}$$

2)վառելանյութի տարեկան պահանջի նվազագույն չափը կկազմի՝

$$\frac{30000 \times 8.3\%}{100\%} = 24900 \text{ դրամ,}$$

3)կարծր վառելիքի տարեկան պահանջի նվազագույն չափը կկազմի՝

$$\frac{120000 \times 16.6\%}{100\%} = 19920 \text{ դրամ,}$$

4) պարարտանյութերի տարեկան պահանջի նվազագույն չափը կկազմի՝

$$\frac{200000 \times 8.3\%}{100\%} = 16600 \text{ դրամ,}$$

5) արագամաշ առարկաների տարեկան պահանջի նվազագույն չափը կկազմի՝

$$\frac{220000 \times 2.5\%}{100\%} = 550 \text{ դրամ,}$$

6) օժանդակ նյութերի տարեկան պահանջի նվազագույն չափը կկազմի՝

$$\frac{80000 \times 0.6\%}{100\%} = 480 \text{ դրամ,}$$

7) պահեստամասերի տարեկան պահանջի նվազագույն չափը կկազմի՝

$$\frac{150000 \times 9.4\%}{100\%} = 14100 \text{ դրամ,}$$

8) դրամական միջոցների տարեկան պահանջի նվազագույն չափը կկազմի՝

$$\frac{1.5 \text{ մլն դրամ} \times 0.2\%}{100\%} = 3000 \text{ դրամ,}$$

Ամբողջը՝ 121050 դրամ :

Դա նշանակում է,- որ ձեռնարկությանը յուրաքանչյուր ամիս անհրաժեշտ շրջանառու միջոցների նվազագույն պահանջը կազմում է 121050 դրամ, որպեսզի արտադրության գործընթացը կազմակերպել համաչափ ձևով:

1991-2004թ.թ. շրջանառու միջոցների չափավորման նպատակով կառավարության կողմից նոր տնտեսական նորմատիվներ չեն մշակվել, բացառությամբ դրամական միջոցների հաշվով միանվագ կանխիկ ձևով ապրանքների գնում 2005 թվականին 300 հազար դրամ և տարեկան 3 մլն դրամ: Սակայն կառավարության նիստերից մեկում վարչապետն ընդգծել է նորմավորման անհրաժեշտության մասին: Նախկին հասարակարգում դրամարկղում կանխիկ փողի չափը սահմանված էր 200 ուրլի և կանխիկ փողով թույլատրվում էր ապրանքներ գնել միանվագ կարգով ոչ ավել 5 ուրլու չափով:

ՀՀ Ազգային ժողովը 2004թ. դեկտեմբերի վերջին դրամական միջոցներով կանխիկ գնումների չափը 2005թ. հաշվով թողել է անփոփոխ, ինչպես սահմանել էր 2004 թվականին:

ՂԱՌԻՆ 12. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐ ԵՎ

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ

12.1. Զեռնարկությունների արտադրական ծախսերը և նրանց դասակարգումը

Նյութական բարիք՝ պատրաստի արտադրանք արտադրելու համար ձեռնարկությունները կատարում են ներդրումներ, ըստ որի հիմնական կապիտալի հաշվին ձեռք են բերվում աշխատանքի միջոցներ (հիմնական միջոցներ) և շրջանառու կապիտալի հաշվին՝ աշխատանքի առարկաներ (շրջանառու միջոցներ): Դրանց ձեռքբերման ծախսերին անվանում են ծախսեր: Մյուս կողմից, արտադրության գործընթացում ձեռնարկությունները կատարում են ծախսեր, որին անվանում են արտադրական ծախսեր: Այդ ծախսերը խմբավորվում են երկու խմբի մեջ՝ ուղղակի և անուղղակի ծախսեր: Այժմ անդրադառնանք ուղղակի ծախսերի բնութագրմանը:

Ուղղակի են կոչվում այն ծախսերը, որոնք անմիջականորեն կատարվում են արտադրության մեջ՝ այս կամ այն արտադրանքն արտադրելու համար: Ծրագրավորման (պլանավորման) և հաշվապահական (ֆինանսական) հաշվառման մեջ կառավարության որոշումով, միասնական կարգով, ուղղակի ծախսերը դասակարգվում են.

- հումք և նյութեր,
- արտադրության անձնակազմի (բանվորների) աշխատանքի վարձատրության ծախսեր և նրանց հավասարեցված վճարումներ,,
- սոցիալական վճարներ, որը հաշվարկվում է աշխատավարձից,
- հիմնական միջոցների ամորտիզացիա (մաշվածության ծախսեր),
- վարձակալական վճարներ,
- փոխադրական ծախսեր,
- ապահովագրական վճարներ,
- այլ ուղղակի ծախսեր:

Ծախսերի նման դասակարգումն արտացոլված է նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Շահութահարկի մասին» օրենքով (30.09.1997թ.): Ընդ որում, այդ օրենքով բոլոր տեսակի արտադրական ծախսերը համարվում են նվազեցումներ: Զեռնարկությունների համախառն շահույթը հաշվարկելու համար համախառն եկամտից (որպես բոլոր տեսակի եկամուտների հանրագումար) հանվում են նվազեցումները, այսինքն՝ ընթացիկ ծախսերը: Սակայն «Շահութահարկի մասին» օրեն-

քով, որպես համախառն եկամուտ, բնորոշվում է բոլոր տեսակի եկամտի համարագումարը, մինչդեռ տնտեսագիտական գիտությամբ, որպես համախառն եկամուտ համարվում է համախառն արտադրանքի արժեքի և նյութական ծախսերի տարբերությունը, այսինքն՝ $ՀԵ = ՀԱ - ԾՆ$, որտեղ՝

ՀԵ-ն համախառն եկամուտն է,

ՀԱ-ն՝ համախառն արտադրանքի արժեքը,

ԾՆ – ն՝ նյութական ծախսերի չափը:

Եթե նկատի ունենանք, որ համախառն արտադրանքի արժեքն իրենց ներկայացնում է արտադրված արտադրանքի արժեքը, իրացման գներով, ապա համախառն եկամուտը ($W = C + V + M$), կկազմի՝ $ՀԵ = Հ + V + M - C = V + M$: Այսպիսով, համախառն եկամուտը նոր ստեղծված արժեքն է: Արտադրության ծախսերը ($C + V$) կազմում են հիմնական միջոցների մաշվածության տարեկան գումարը և ծախսված հումք ու նյութերի արժեքը: Դրանք կոչվում են նյութական ծախսեր,

V-ն կատարված աշխատանքի վարձատրության ծախսը որպես կենդանի աշխատանքային ծախսեր, այսինքն՝ աշխատանքի վարձատրության և նրան հավասարեցված ծախսերը:

M-ը՝ համախառն շահույթն է:

Այժմ համառոտակի անդրադառնանք ուղղակի ծախսերի էության բնութագրմանը:

Հիմնական միջոցների, որպես ոչ ընթացիկ մաշվող նյութական ակտիվների մաշվածություն համարվում է մաշվածության տարեկան գումարը սրի հաշվարկման մեթոդներին սնույադարձել ենք ձեռնարկի նախորդ գլխում: Արտադրանք արտադրելու համար անհրաժեշտ են հումք և նյութեր

Հումքն, այն պաշարն է, որն անհրաժեշտ է վերամշակման միջոցով ստանալ պատրաստի արտադրանք: Գոյություն ունի հումքի երեք տեսակ

- գյուղատնտեսական հումք, որն օգտագործվում է սննդի և թեթև արդյունաբերության ձեռնարկություններում,

- արդյունաբերական հումք, որն օգտագործվում է լեշունահանքային արդյունաբերության ձեռնարկությունների կողմից՝ բնական պաշարները վերամշակելու շնորհիվ: Նրանց ստացած արտադրանքը (երկաթ, պղինձ արյունին և այլն) օգտագործվում է որպես հումք արդյունաբերական մյուս ձեռնարկությունների համար,

- շինարարական հումք, այսինքն՝ շինանյութերի տարբեր տեսակներ, իսկ նրանք ծոցագործվում են կապիտալ շինարարության մեջ և արտադրական ու ոչ արտադրական շենքերի ընթացիկ և հիմնական նորոգման ժամանակ

Նյութերն իրենց հերթին, որպես ընթացիկ ակտիվներ և հանձնես պաշարներ, դասակարգվում են մի շարք խմբերի՝ վառելանյութեր, շինանյութեր, պահեստամասեր, նորոգման նյութեր, գյուղատնտեսության մեջ՝ սերմեր, կերեր, պարարտանյութեր, թունաքիմիկատներ, հերթիցյալներ և այլն: Հիմնական միջոցների մաշվածության և հումք ու նյութերի ծախսերը կոչվում են անցյալ առարկայացված նյութական ծախսեր ($C - M$), իսկ աշխատանքի վարձատրության ծախսերը և նրան հավասարեցված վճարումները կենդանի աշխատանքային ծախսեր ($V - M$): Որպես նյութեր համարվում են ապրանքանյութական պաշարները:

- **Աշխատանքի վարձատրության** ծախսեր. - Դրանք այն ծախսերն են, որոնք կատարվում են արտադրանքի արտադրության համար՝ վճարելով կատարված աշխատանքի գինը՝ անվանական աշխատավարձի ձևով: Դրա մեջ ներառվում են նաև աշխատավարձին հավասարեցված վճարումները (պարգևատրություն, նյութական օգնություն և այլն):

- **Սոցիալական վճարներ**. - որոնք հաշվարկվում են տվյալ ամսում հաշվարկված՝ անվանական աշխատավարձից: Ձեռնարկություններում հաշվարկված աշխատավարձից, ըստ «Պարտադիր սոցիալական վճարումների մասին» ՀՀ օրենքի, հաշվարկվում են սոցիալական վճարումները: Ընդ որում, աշխատողների աշխատավարձից հաշվարկված 3 % սոցիալական վճարները (առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում), ձեռնարկության ուղղակի կամ անուղղակի ծախսերի մեջ չեն ներառվում:

Սոցիալական վճարների հաշվարկման կարգին անդրադարձել ենք ձեռնարկի 3-րդ գլխի 8-րդ կարգում:

- **Փոխադրական ծախսեր**. - որով հաշվարկվում է անմիջականորեն արտադրության մեջ տրանսպորտային ծախսերը: Այսինքն հումք և նյութերի, պատրաստի արտադրանքի և ապրանքների փոխադրման համար կատարված ծախսերը:

- **Վարչակալական վճարներ**. - ուր վերաբերում է վարձակալված հիմնական միջոցների վարձակալական վճարին՝ ըստ վարձակալման պայմանագրի: Ընդ որում, եթե տվյալ ձեռնարկությունը վարձակալում է ուրիշի հիմնական միջոցները, ապա վարձակալական վճարը համարվում է ծախս, իսկ եթե իր հիմնական միջոցներն է վարձակալության հանձնում մեկ ուրիշի, ապա վարձավճարը համարվում է եկամուտ:

- **Ապահովագրական վճարներ**. - Այն իրենից ներկայացնում է ձեռնարկության ունեցվածքի, այդ թվում անշարժ և շարժական գույքի, պատրաստի արտադրանքի, ապրանքների, պաշարների ապահովագ-

րական ծախսերը: Մակայն, երբ բնական պետության, արտակարգ իրավիճակի հետևանքով տվյալ ձեռնարկությանը հասցվում է վնաս, ապա ապահովագրական ընկերությունը, կոյուստները փոխհատուցում է, որը համարվում է եկամուտ:

• **Այլ ծախսեր.** - Այս հոդվածով նախատեսվում են այն ծախսերը, որոնք թվարկված չեն նախորդ ծախսերի անվանացանկում:

12.2 Վարչական և այլ ընդհանուր ծախսեր ու դրանց դասակարգումը:
Վարչական ծախսեր և նրանց բաշխման մեթոդները

Անուղղակի ծախսեր. - Անուղղակի են կոչվում այն ծախսերը, որոնք անմիջականորեն չեն կարող վերագրվել այս կամ այն արտադրանքին: Որպես անուղղակի ծախսեր համարվում են արտադրության կազմակերպման՝ արտադրամասային ծախսերը (որպես ընդհանուր արտադրական ծախսեր) և վարչակառավարչական, տնտեսական ծախսերը: Վերջինս համարվում է արտադրության կառավարման ծախսեր: Անուղղակի ծախսերը, ըստ ծախսերի դասակարգման, բաժանվում են երկու խմբի.

• առաջին, ընդհանուր-արտադրական ծախսեր (արտադրամասային ծախսեր),

• ընդհանուր տնտեսական ծախսեր, որոնք համարվում են վարչակառավարչական ծախսերը (ընդհանուր-տնտեսական ծախսեր):

Ընդհանուր արտադրական ծախսերը համարվում են արտադրամասային ծախսերը, որոնք կախված են արտադրության կազմակերպման հետ: Այդ ծախսերը համարվում են արտադրամասի, բրիգադայի, աշխույժության, տեղամասի ծախսեր: Ընդհանուր արտադրական ծախսերն իրենց հերթին դասակարգվում են ծախսերի տեսակների, որոնք անվանումով նույնն են, ինչպես ուղղակի ծախսերը, բացառությամբ «հումք» հոդվածի, որոնք ունեն ընդհանուր-արտադրական նշանակություն:

Ընդհանուր արտադրական ծախսերի մեջ ներառվում են արտադրամասի, բրիգադայի, անձնակազմի աշխատանքի վարձատրության ծախսերը, նյութերի ծախսը, հեռախոսային, հեռագրական, փոխադրական, ծառայական ավտոմեքենաների պահպանության ծախսերը, ընդհանուր արտադրական նշանակության հիմնական միջոցների (արտադրամասի) մշակման ծախսերը, վարձակալական, ապահովագրական վճարները և այլ անուղղակի ծախսերը:

• երկրորդ, ընդհանուր-տնտեսական ծախսեր, որոնց վերագրվում են

վարչակառավարչական և տնտեսական ծախսերը:

Այդ ծախսերն իրենց հերթին բաժանվում են որոշակի տեսակների, որոնք նույնպես նման են արտադրության ծախսերի ցանկին, բացառությամբ հումքի հոդվածի: Ընդհանուր տնտեսական ծախսերին վերաբերում են՝

• ղեկավար անձնակազմի աշխատանքի վարձատրության ծախսերը՝ նախագահ, փոխնախագահ (տնօրեն, փոխտնօրեն), հաշվապահության աշխատողներ, տնտեսագիտական, ֆինանսական ծառայությունների աշխատողները, օւյերատորները, ծրագրավորողները, վիճակագիրները, մալդատար ավտոմեքենայի վարորդը, պահեստապետերը):

Այդ ծախսերի մեջ ներառվում են նաև գրասենյակի, հեռուստաֆաքսի և այլ ծախսերը, համակարգչային ապահովման, ինչպես նաև վարչական շենքի և այլ սոցիալական ոլորտի հիմնական միջոցների մշակման ծախսերը: Դրա մեջ ներառվում են նաև վարչակառավարչական անձնակազմի գործուղման ծախսերը և կարճաժամկետ վարկի տոկոսավճարը:

Որպես տնտեսական ծախսեր համարվում են կրտսեր սպասարկող անձնակազմի (հավաքարարներ, հրշեջներ, պահակներ) աշխատանքի վարձատրության ու այլ տնտեսական ծախսերը:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում անուղղակի ծախսերն հաշվառվում են որպես ընդհանուր-արտադրական և ընդհանուր տնտեսական ծախսեր հաշիվներում (ըստ հաշվապահական հաշիվների, առանձին-առանձին): Արտադրության ուղղակի ծախսերը հաշվառվում են արտադրության հաշիվներով: Հաշվետու ժամանակաշրջանի (եռամսյակ, տարի) վերջում անուղղակի ծախսերը բաշխվում են ըստ արտադրանքի տեսակների վրա կատարված ուղղակի ծախսերին համամասնորեն, հետևյալ երկու մեթոդներից որևէ մեկով.

առաջին, ծախսված արտադրության ուղղակի ծախսերին համամասնորեն,

երկրորդ, ծախսված արտադրության աշխատողների աշխատավարձին համամասնորեն:

Ընդ որում, ըստ առևտրային կազմակերպությունների նոր հաշվային պլանի (հաստատված ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 26-ի թիվ 740 որոշմամբ), անուղղակի ծախսերը հաշվառվում են որպես «վարչական և այլ ընդհանուր ծախսեր» հաշիվով: Ըստ դրա, անուղղակի ծախսերը կարող են բաշխվել ըստ արտադրանքի և ըստ արտադրության հաշիվների (հիմնական և օժանդակ արտադրություն): Ինչ վերաբերվում է անավարտ արտադրությանը (երբ ձեռնարկությունը կատարել է ծախսեր, սակայն դեռ ավար-

տուն փառով արտադրանք չի ստացել), ապա այն հաշվառվում է (ինչպես նաև արագամաշ առարկաները), ընթացիկ ակտիվների պաշարներ խմբով:

Այս երկու տեսակի ծախսերը (ուղղակի և անուղղակի) կիրառվում են բիզնես-ծրագրի մշակման և արտադրանքի փաստացի ինքնարժեքը հաշվարկելու ժամանակ: Ընդ որում, անուղղակի ծախսերի բաշխման այս կամ այն մեթոդի կիրառումը կամավոր է, որը որոշում են տնտեսագետները և հաշվապահները:

Խնդիր 29.

Ենթադրենք ձեռնարկությունում որևէ հաշվետու ժամանակաշրջանում արտադրության ուղղակի ծախսերը կազմել են 4.5 մլն դրամ, որից՝ աշխատավարձ՝ 2 մլն դրամ, ընդհանուր-արտադրական ծախսեր՝ 300 հազար դրամ, ընդհանուր-տնտեսական ծախսեր՝ 600 հազար դրամ, այսինքն՝ ընդամենը անուղղակի ծախսերը, որպես «վարչական և այլ ընդհանուր ծախսեր»՝ 900 հազար դրամ: Պահանջվում է կատարել վարչական և այլ ընդհանուր ծախսերի բաշխում:

Լուծում

Անուղղակի ծախսերը առաջին մեթոդով, այսինքն՝ ուղղակի ծախսերին համամասնորեն կբաշխվի հետևյալ կերպ՝

$$\frac{900000 \times 100}{4,5 \text{ մլն դրամ}} = 20 \text{ տոկոս:}$$

Եթե ուղղակի ծախսերից «Ա» արտադրանքի վրա կատարվել է 2 մլն դրամ, ապա նրան կվերագրվի անուղղակի ծախս՝

$$\frac{2 \text{ մլն դրամ} \times 20 \%}{100} = 1400 \text{ հազ դրամ,}$$

«Բ» արտադրանքի վրա՝ 1.5 մլն դրամ,

$$\frac{1.5 \text{ մլն դրամ} \times 20 \%}{100} = 300 \text{ հազ դրամ,}$$

«Գ» արտադրանքի վրա՝ 1 մլն դրամ,

$$\frac{1 \text{ մլն դրամ} \times 20 \%}{100} = 200 \text{ հազ դրամ:}$$

Ընդամենը՝ 4.5 մլն դրամ
2) Նույն սկզբունքով անուղղակի ծախսերը կարող են վերաբաշխվել արտադրության մեջ ծախսված աշխատավարձին համամասնորեն.

$$\frac{900000 \times 100 \%}{2 \text{ մլն դրամ}} = 45\% \text{ այսինքն՝}$$

վարչական ծախսերն արտադրության մեջ ծախսված աշխատավարձի 45 %-ն են կազմում: Հետևապես, ըստ արտադրանքի տեսակների այն կբաշխվի՝

«Ա» արտադրանքի վրա՝

$$\frac{1000000 \times 45 \%}{100} = 450 \text{ հազ դրամ,}$$

«Բ» արտադրանքի վրա՝

$$\frac{1600000 \times 45 \%}{100} = 270 \text{ հազ դրամ,}$$

«Գ» արտադրանքի վրա՝

$$\frac{400000 \times 45 \%}{100} = 180 \text{ հազ դրամ}$$

**12.3. Արտադրության սահմանային ծախսեր:
Հաստատուն և փոփոխուն ծախսեր**

Շուկայական տնտեսության պայմաններում, բացի ուղղակի և անուղղակի ծախսերից, ըստ նշանակության, գոյություն ունեն նաև ծախսերի հետևյալ տեսակները

- առաջին, սահմանային ծախսեր,
- երկրորդ, հաստատուն ծախսեր,
- երրորդ, փոփոխուն ծախսեր:

Այժմ բնութագրենք այդ ծախսերի էությունը:

Սահմանային են կոչվում այն ծախսերը, որոնք իրենց մեծությամբ հավասար են ապրանքների իրացումից ստացված դրամակն միջոցների մուտքին (հասույթին): Շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկություններն աշխատում են կոմերցիոն հաշվարկով Այն կոչվում է առևտրային հաշվենկատություն, որի էությանը և կազմակերպման սկզբունքներին կանոնադառնաճ ձեռնարկի 14-րդ գլխում: Իրացումից

ստացված միջոցների և աշխատելու պետք է փոխուստուցել կատարված ընթացիկ ծախսերն և աշխատելու շահույթով: Կոմերցիոն հաշվարկի նվազագույն պահանջն ինքնափոխհասուցումն է, այսինքն՝ երբ իրացումից միջոցների մուտքը և կատարված ծախսերը հավասար են: Այդ ծախսերը կոչվում են սահմանային ծախսեր: Այս դեպքում շահույթը հավասար է գրոյի, սակայն կոմերցիոն հաշվարկի առավելագույն պահանջը հանդիսանում է ինքնաֆինանսավորման սկզբունքը, այսինքն՝ առավելագույն շահույթի ապահովումը:

Հասարակություն են կոչվում այն ծախսերը, որոնց չափը կախված չէ թողարկվող արտադրանքի ծավալից: Այդպիսի ծախսեր են համարվում անուղղակի ծախսերը (վարչական և այլ ընդհանուր ծախսերը), ինչպես նաև ուղղակի ծախսերից կիսմասնական միջոցների մաշվածության ծախսերը, վարձակալական և ապահովագրական վճարները:

Փոփոխուն են կոչվում այն ծախսերը, որոնց չափն անմիջականո՞ն կախված է արտադրանքի արտադրության ծավալներից: Այդպիսի ծախսերին վերաբերում են հումք և նյութերի, փոխադրական և այլ ուղղակի ծախսերը, ինչպես նաև աշխատանքի վարձատրության ծախսերը և սոցիալական վճարումները: Որքան շատ արտադրանք արտադրվի, այնքան շատ կլինեն հումք և նյութերի, փոխադրական և այլ ուղղակի ծախսերն և ընդհանրապես:

12.4. Արտադրանքի ինքնարժեքը, նրա տեսակները և հաշվարկման կարգը

Ձեռնարկությունները հաշվետու ժամանակաշրջանի վերջում (եռամսյակ) կատարում են արտադրանքի ինքնարժեքի փաստացի կալկուլյացիա: Արտադրանքի ինքնարժեքի հաշվարկման եղանակը կոչվում է կալկուլյացիա (լատ. calculaton - բառից, որ նշանակում է հաշվարկ): Արդյունաբերական ձեռնարկությունները արտադրանքի փաստացի ինքնարժեքը հաշվարկում են յուրաքանչյուր եռամսյակ, իսկ գյուղատնտեսության մեջ՝ միայն տարեվերջին (բերքահավաքից հետո): Արտադրանքի միավորի վրա կատարված նյութադրամական ծախսումները կոչվում է **ինքնարժեք**:

Այսպես, արտադրանքի ինքնարժեքը հաշվարկելու համար անհրաժեշտ է իմանալ տվյալ արտադրանքի վրա կատարված ուղղակի ծախսերը: Դրանք կոչվում են ինքնարժեքի ծախսեր (**ինքնարժեքի տարրեր, հոդվածներ**):

Ըստ ժամկետի գոյություն ունի երկու տեսակի ինքնարժեք.

- առաջին, **բիզնես-ծրագրով նախատեսված ինքնարժեք**, որը հաշվարկում են տնտեսագետները՝ բիզնես-ծրագրի կազմման ժամանակ: Այն հաշվարկվում է արտադրական ծրագրի և ծախսերի ծրագրավորման հիման վրա,

- երկրորդ, **փաստացի ինքնարժեք**, որը հաշվարկում է հաշվապահությունը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ ըստ հաշվառման փաստացի տվյալների:

Ըստ ծախսերի բնույթի, գոյություն ունի նույնպես ինքնարժեքի երկու տեսակ՝

- առաջին, **արտադրանքի միավորի արտադրական ինքնարժեք**, որն իրենից ներկայացնում է ուղղակի ծախսերի հարաբերությունը համախառն արտադրանքի ծավալին: Դա կոչվում է նաև **արտադրական ինքնարժեք**,

- երկրորդ, **ընդհանուր ինքնարժեք**, որն իրենից ներկայացնում է ընդհանուր ծախսերի հարաբերությունը (ուղղակի և անուղղակի) տվյալ արտադրանքի համախառն ծավալին: Այն կոչվում է **ընդհանուր ինքնարժեք**:

Գոյություն ունի արտադրանքի ինքնարժեքի կազմ և կառուցվածք հասկացությունը:

Կազմ ասելով հասկացվում է ինքնարժեքի տարրերը՝ ծախսերի անվանացանկը, այսինքն՝ ծախսերի տեսակները:

Ինքնարժեքի կառուցվածք ասելով հասկացվում է առանձին ծախսերի տեսակարար կշիռը տուկոսով ընդհանուր ծախսերի նկատմամբ: Ինքնարժեքը կառուցվածքը ցույց է տալիս, թե նրա կազմի մեջ մտնող ամեն մի ծախսի տեսակի ի՞նչ տեսակարար կշիռ ունի ինքնարժեքի մեջ: Դա օգտագործվում է ինքնարժեքի վերլուծության ժամանակ: Այսպես, եթե ինքնարժեքի կառուցվածքում բարձր տեսակարար կշիռ են կազմում աշխատանքի վարձատրության ծախսերը, ապա նշանակում է, որ անհրաժեշտ է բարձրացնել արտադրության մեքենայացման մակարդակը, այսինքն՝ կրճատել ձեռքի աշխատանքի ծախսերը: Եթե ինքնարժեքի կառուցվածքում բարձր տեսակարար կշիռ են կազմում հումքի և նյութերի ծախսերը, ապա անհրաժեշտ է կրճատել գնովի հումք և նյութերի ծախսերը կամ այլ մատակարար-ձեռք է կրճատել գնովի հումք և նյութեր: Եթե ինքնարժեքի կառուցվածքում բարձր են անուղղակի (վերադիր) ծախսերը, ապա անհրաժեշտ է կրճատել վարչական և սոցիալական ծախսերը, այդ թվում կրճատել հաստիքների թիվը և էժանացնել վարչական և սոցիալական անձնակազմը:

Արտադրանքի ինքնարժեքի կալկուլյացիան (հաշվարկման կարգը), ըստ արտադրանքի առանձին տեսակների ցույց տանք «Աթենք» մասն-թերթի կոմբինատ ՄՊԸ-ի նյութերով:

Ընդ որում, այն հիմնադրվել է 1993 թվականին, երբ սկսել էր արտադրել երեք տեսակի երշիկեղեն, իսկ ներկայումս արտադրում է 38 տեսակի երշիկեղեն, որից 15-ը՝ վակուումային փաթեթներով: «Աթենք» ՄՊԸ-ի արտադրական շուրջօրյա հզորությունը կազմում է 8 տոննա երշիկեղեն: Տեխնոլոգիական գործընթացները կազմակերպվում են ռուսական և գեր-

մանակն սարքավորումներով: Սպառողների շրջանում մեծ համբավ է վայելում նոր նախագծված ապրանքները, ինչպիսիք են «Էրեբունի», «Սալյամի» երշիկները, բաստուրման և սուջուխները: Վերջին տարիներին բարձրացել է այդ ապրանքների նկատմամբ սպառողների պահանջ-մունքները: 2001 թվականին «Աթենք» ՍՊԸ-ն թողարկել է 60տ երշիկ, ուրից եփած երշիկեղենի՝ 36 տոննա, ապխտած՝ 18տ, մսամթերք՝ 6 տոննա: Եփած 36 տոննա երշիկեղենի շուրջ 40 %-ը կազմում է բժշկական երշիկը: Այժմ ցույց տանք «Բժշկական» երշիկի ինքնարժեքի կալկուլյացիան (Աղյուսակ 20):

Արտադրանքի ինքնարժեքի կալկուլյացիան

No	Ինքնարժեքի ծախսերի տարրերը (հոդվածները)	Ընթացիկ ծախսեր հազ.դրամ
1	Յունք և նյութեր	736.0
2	Արտադրության անձնակազմի աշխատանքի վարձատրության ծախսեր	116.0
3	Սոցիալական վճարներ	25.0
4	Ֆինանսական միջոցների մաշվածություն	62.6
5	Էլեկտրաէներգիա	11.6
6.	Փոխադրական ծախսեր	23.6
7	Վարձակալական ծախսեր	-
8	Ապահովագրական ծախսեր	-
9	Այլ ուղղակի ծախսեր	27.2
	Ընդամենը արտադրական ծախսեր	1052.0
	Արտադրանքի միավորի արտադրական ինքնարժեքը	1052.0
10	Անուղղակի (վարչական և այլ ընդհանուր ծախսեր)	116.0
	Ընդամենը ուղղակի և անուղղակի ծախսեր	1168.0
	Ընդհանուր ինքնարժեքը	1168.0

Ինչպես երևում է ինքնարժեքի ծախսերի կանխագումարից, հաշվետու ժամանակաշրջանում այն կազմել է 1052 հազ.դրամ: Արտադրանքի միավորի արտադրական ինքնարժեքը հաշվարկելու համար արտադրական ուղղակի ծախսերի կանխագումարը պետք է բաժանել համախառն արտադրանքի ծավալի վրա (1052 հազ դրամ : 10000 կգ երշիկ = 1052-00):

Արտադրանքի միավորի ընդհանուր ինքնարժեքը որոշելու համար ուղղակի և անուղղակի ծախսերի կանխագումարը պետք է բաժանել համախառն արտադրանքի ծավալի վրա (1168 հազ. դրամ : 10000 կգ = 1168-00): Ձեռնարկությունների խնդիրն է նվազագույն ծախսումներով ապահովել արտադրանքի ավելի մեծ ծավալ, այսինքն՝ իջեցնել արտադրանքի միավորի հաշվով արտադրական և ընդհանուր ինքնարժեքը, որը շահույթի ավելացման և շահութաբերության բարձրացման հիմնական ուղին է: Արտադրանքի ինքնարժեքի իջեցման ուղիները կանխորոշելու համար, կատարվում է ինքնարժեքի կառուցվածքի վերլուծություն, որին կանոնադրված ձևերի 14-րդ գլխի 7-րդ հարցում:

**Գ Լ ՈՒ Խ-13 ԳԻՆ ԵՎ ԳՆԱԳՈՅԱՑՈՒՄ:
ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԻ
ԳՆԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ**

13.1. Ապրանքի գին և գնագոյացում

Ապրանքի միավորի արժեքը կոչվում է գին:

Խուճբ ապրանքների արժեքը որոշելու համար նրանց քանակը բազմապատկվում է գներով և ստացված արժեքը գումարվում է:

Ինչպես ցույց ենք տվել, ապրանքի արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W = C + V + M$$

որի մասին նշել ենք ձեռնարկի 9-րդ գլխում:

Գինը սահմանվում է որոշակի մեխանիզմով, որը կոչվում է գնագոյացում: Ապրանքների գների վրա ազդում են հետևյալ գործոնները.

- սպառողները (վերջնական և միջանկյալ),
- ապրանքի պահանջարկը և առաջարկը շուկայում,
- ապրանքի որակը,
- փողի արժեզրկումը, սղաճը,
- մրցակցային պայքարը, (միևնույն ապրանքարտադրողները համարվում են մրցակիցներ),
- մարքեթինգային ծախսերը (տեսակավորում, փաթեթավորում, փոխադրում, գովազդ և այլն),
- ապրանքի իրացման ուղղությունները,
- մենաշնորհային գները, սրունք սահմանվում են մենաշնորհային ձեռնարկությունների կողմից,
- արտադրության տեխնոլոգիան:

Ապրանքի գինը նախկին հասարակարգում, որոշվում էր պեհտության կողմից: Պեհտության կողմից էր որոշվում նաև բնուկչությանը մատուցվող ծառայությունների սակագները: Սակայն շուկայական տնտեսության պայմաններում ապրանքների գները որոշվում են ոչ թե պեհտության, այլ ապրանքարտադրողների կողմից՝ պահանջարկի և առաջարկի հիման վրա: Ապրանքների գները սահմանվում են տնտեսագիտական մտածելակերպի մեխանիզմով: Այդ մեխանիզմն իր մեջ ընդգրկում է հետևյալ գների սահմանման կարգը.

- առաջին, **շարք ցածր գին**, այս դեպքում գինը չի փոխհատուցում ապրանքի արտադրության վրա կատարված ծախսերը (ինքնարժեքը),

ինտենայես ապրանքի իրացումից կատացվի վնաս, որը տնտեսայես ձեռնտու չէ ապրանքարտադրողին,

• երկրորդ, **շարք բարձր գին** .- այս դեպքում ապրանքարտադրողները կստանան մեծ չափով շահույթ, սակայն պահանջարկը ցածր լինելու պատճառով քիչ ապրանք կվաճառվի, որը ձեռնտու չէ ապրանքարտադրողին,

• երրորդ, **հնարավոր գին**. - դա այն գինն է, որ փոխհատուցում է ինքնարժեքը, մարքեթինգային ծախսերը և ապահովում է օպտիմալ չափով շահույթ, այսինքն՝ առավել տնտեսայես ձեռնտու է սահմանել հնարավոր գին, հաշվի առնելով շուկայում պահանջարկի և առաջարկի հարաբերակցությունը և տնտեսայես ձեռնտու լինելը:

Շուկայական տնտեսության պայմաններում սահմանվում է ապրանքների ազատ գներ:

Ազատ են կոչվում այն գները, որոնք սահմանվում են պահանջարկի և առաջարկի հիման վրա: Արևմուտքի երկրներում ապրանքների գները ազատ են արձակվել 1980թ., իսկ Արևելյան Եվրոպայի երկրներում՝ 1989թ., ԱՊՀ-ի երկրներում՝ 1994թվականի հունվարից: Ընդ որում, ապրանքների գները ԱՊՀ-ի երկրներում՝ առաջինը ազատ է արձակվել ՌԴ-ում և հարկադրված կարգով Հայաստանում ևս 1994թ. հունվարից ազատ արձակվեցին ապրանքների գները (1993թ. նոյեմբերի 23-ին շրջանառության մեջ դրվեց ազգային դրամը):

Այսպիսով, մինչև 1980թ. նույնիսկ շուկայական տնտեսության երկրներում ապրանքների գները ազատ արձակված չեն եղել: Դա նշանակում է, որ միատեսակ ապրանքները վաճառվել են միևնույն գներով: Այդ մեխանիզմը բացառում է գների դիսկրիմինացիան, այսինքն՝ խտրականությունը:

Այսպես, ըստ ամերիկյան Ռոբինսոն-Պատմանի օրենքի դեռևս 1936թ. ԱՄՆ-ի կոնգրեսն ընդունել է այս օրենքը, որով պաշտպանվել է սպառողների շահերը: Նույն տեսակի և որակի ապրանքները, լստ այդ օրենքի, վաճառվում էր միևնույն գնով: Մեր երկրում մինչև հիմա Ազգային ժողովի կողմից չի ընդունվել օրենք սպառողների շահերի պաշտպանության մասին, թեև գոյություն ունի համանման հասարակական կազմակերպություն: Սակայն այդ օրենքի պահանջները ԱՄՆ-ում կիրառվել է մինչև 1980 թվականը: 1975թ. ԱՄՆ-ում ընդունվել է Մայլեր-Թայդինգի օրենքը՝ մանրածախ առևտրում, սահմանելով միատեսակ ապրանքների համար միևնույն գները, բայց դա ենթարկվեց քննադատության և 1976թ. դեկտեմբերի 12-ին ԱՄՆ-ի նախագահ Ջերալդ Ֆորդը ստորագրել է Կոնգրեսի կողմից ընդունված օրենքը՝ «Սպառողական ապրանքների գնագոյաց-

սի կողմից ընդունված օրենքը՝ «Մայառողական ապրանքների գնագոյացման նոր կարգի մասին»: Այդ օրենքը վերացրեց արդար առևտուրը, քանի որ մինչ այդ գործում էր միևնույն ապրանքի համար միասնական գին, մինչդեռ այդ օրենքը մանրածախ առևտրում նախատեսում էր կայուն (ֆիքսված) գներ: Նրա խախտողները ենթարկվում էին տույժի:

Այսպես, 1984թ. ԱՄՆ-ի գերագույն դատարանը «Մոնանտո» ագրոֆիրմային տուգանեց թունաքիմիկատները կայուն գներով վաճառելու համար (10 մլն \$):

Գոյություն ունի նաև նվազագույն գին հասկացությունը: Դա այն գինն է, որը փոխհատուցում է ձեռքբերման ծախսերը և ֆիքսված շահույթի չափը: Այդ գինը սահմանվել է Շերման Էլեյտոնի օրենքով:

Գոյություն ունի նաև ֆոստիս (Fosstise -) հասկացությունը, որը կիրառվում է մարքետինգում (market - շուկա): (Fos) Ֆոս նշանակում է պահանջմունքների ձևավորում, սթիս (stise) իրացման խթանում, այսինքն՝ առևտրի բնագավառում շահագրգռում են վերջնական սպառողներին (բնակչությանը), ավելի շատ ապրանքներ գնելու համար:

Ապրանքների գների տեսակները.

Շուկայական տնտեսության պայմաններում գոյություն ունեն նաև հետևյալ տեսակի գները.

• Զեռնարկության մեծածախ գին.- սահմանվում է ապրանքարտադրողի կողմից : Դա այն գինն է, որն ընդգրկում է արտադրանքի յնքնարժեքը, անուղղակի հարկերը և շահույթը:

Այս դեպքում գինը որոշվում է հետևյալ բանաձևով.

Գ = Ի + Շ, որտեղ՝

Գ-ն՝ ապրանքի գինն է,

Ի-ն՝ ինքնարժեքը:

Շ-ն՝ ապրանքի միավորի հաշվով շահույթը:

• **Արդյունաբերության մեծածախ գին** .- Դա այն գինն է, որն ընդգրկում է ձեռնարկության մեծածախ գինը, ակցիզային հարկը և շահույթը,

• **Մանրածախ գին**.- Դա այն գինն է, որն ընդգրկում է արդյունաբերության մեծածախ գինը ու առևտրական ծախսերը և հավելագինը (20%): Մանրածախ գին է կոչվում նաև այն գինը, երբ ապրանքները վաճառվում են բնակչությանը հատերով (փոքր խմբաքանակով):

• **Առևտրական մեծածախ գին** .- Դա այն գինն է, որ ապրանքները առևտրային բազաներում և տոնավաճառներում ապրանքահումքային բորսաներում վաճառվում են մեծ խմբաքանակով: Որպես կանոն,

առևտրային մեծածախ գինը ցածր է մանրածախ գնից,

• **Շուկայական գին**.- Դա այն գինն է, որ ապրանքը վաճառվում է շուկայում և գինը սահմանվում է պահանջարկի ու առաջարկի հարաբերակցության հիման վրա,

• **Պայմանագրային գին**.- Գնորդի և մատակարարի միջև ապրանքների ձեռքբերման գինն է, որը նախատեսված է նրանց միջև կնքված տնտեսական պայմանագրով,

• **Կայուն գին**.- Դա այն գինն է, որն էապես չի տատանվում: Այդպիսի գներին անվանում են նաև ֆիքսված կամ իներցիոն գներ,

• **Հասարարուն գին**.- որոնց մակարդակը որոշակի ժամանակաշրջանում մնում է անփոփոխ,

• **Փոփոխուն գին** .- որոնց մակարդակը ըստ ժամանակաշրջանի պայրերաբար փոփոխվում է,

• **Արդահանման գին**.- Դա այն գինն է, որով վաճառվում են արտահանվող ապրանքները,

• **Ներմուծման գին** .- Դա այն գինն է, որով ներմուծվում է ապրանքն արտերկրից,

• **Սպառողական գին** .- Դա այն գինն է, որով սահմանվում է սպառողական ապրանքների համար:

• **Սպառողական ապրանքներ**.- կոչվում են սննդի, հագուստի, կոշիկի և առաջին անհրաժեշտության ապրանքները (աղ, օճառ, լուցկի և այլն), ինչպես նաև կենցաղային իրերը:

• **Բազային (հիմնային) գին** .- Այն գինն է, որը հիմք է ընդունվում ապրանքի վաճառքի համար,

• **Ելակետային գին** .- նախորդ ժամանակաշրջանում գործող գինն է,

• **Նախադրված գին** .- ոչը նախատեսվում է բիզնես-ծրագրով,

• **Փաստացի գին** .- որը ինքնարժեքից ելնելով սահմանվում է ապրանքի գինը,

• **Աճուրդային գին** .- երբ գույքը դրվում է ազատ վաճառքի,

• **Ֆակտուրային գին** .- որն իրենից ներկայացնում է մատակարարներից ապրանքների ձեռքբերման գինը, ներառյալ ԱԱՀ-ն,

• **Մեկնարկային գին**.- Բորսայում գնանշվող ապրանքների սկզբնական գինը, որը հիմք է հանդիսանում սակարկման համար,

• **Միջազգային գին** .- ինչպիսիք հանդես են գալիս արտաքին առևտրի բնագավառում,

• **Ֆրանկո գին** .- դա այն գինն է, որով մատակարարը երկաթգծով մա-

տակարարում է ապրանքը գնորդին,

• **Ֆոբ (Fob) գին.** - դա այն գինն է, ըստ որի մատակարարն ապրանքը մատակարարում է նավով: Ֆոբ նշանակում է, որ ազատ է նավի կողմ: Այդ գինն իր մեջ ընդգրկում է ապրանքի փոխադրման և մաքսային ծախսերը, ներառյալ ապրանքարտադրողի ինքնարժեքը, շահույթը, ԱԱՀ-ն,

• **Ֆոս (Fase) .-** նշանակում է նավի բորտի կողմն,

• **Ֆոր (For).**- ինչպես ֆրանկո գինը,

• **Միֆ .-** նավով ապրանքի փոխադրման գին, որի փոխադրման և բարձման ծախսերը կատարվում է մատակարարի հաշվին,

• **Մենաշնորհային գին.**- այն գինն է, որը սահմանվում է մենաշնորհային կազմակերպության կողմից: Մենաշնորհային կոչվում են այն ապրանքարտադրողները, սրոնց ապրանքը շուկայում զբաղեցնում է կեսից ավելին,

• **Իրացման գին.**- Այն գինն է, որով ապրանքը վաճառվում է գնորդին: Այդ գինը սահմանվում է ինքնարժեքի, շահույթի և անուղակի հարկերի հիման վրա,

• **Համաշխարհային գին.**- Դա այն գինն է, որը սահմանվում է միջպետական տնտեսական պայմանագրերով,

• **Անվանական գին.**- Դա այն գինն է, որով գնահատվում են արժեթղթերը և մակրոտնտեսական (ՀԱԱ, ՀՆԱ, ԱԵ, ՉԱ) և միկրոտնտեսական (ՀԱ, ՀԵ, Ծ) ցուցանիշները,

• **Իրական գին.**- այն գինն է, որով գնահատվում են մակրոտնտեսական ցուցանիշները,

• **Կադաստրային գին.**- այսինքն անշարժ և շարժական գույքի արժեքի գնահատման գինը:

13.2. Գների սահմանման մեթոդները շուկայական տնտեսության պայմաններում

Շուկայական տնտեսության պայմաններում գոյություն ունի ապրանքների գների սահմանման հետևյալ մեթոդները.

• **ընթացիկ գների հիման վրա:** Որպես ընթացիկ գին համարվում է ապրանքարտադրողի ապրանքի արտադրական գինը, այսինքն՝ արտադրանքի ինքնարժեքը: Դա ամենատարածված և տնտեսագիտորեն հիմնավորված մեթոդ է: Այս դեպքում գինը սահմանվում է ինքնարժեքի և շահույթի հիման վրա.

$$Q = F + C,$$

• **Գների սահմանումը փակ առևտրի հիման վրա:** Այս դեպքում ապրանքի գինը սահմանվում է մրցակիցների գների միջին մակարդակի հիման վրա,

• **Գների սահմանումը անվճարաբերության հիման վրա,**

• **Գների սահմանումը ապրանքի շուկայական արժեքի հիման վրա:**

Այս դեպքում հաշվի է առնվում ապրանքարտադրողի և վաճառքի ծախսերը: Այս մեթոդով իր ապրանքի (տրուկտոր) գինը սահմանել է ամերիկյան «Կատեր Դիլար» ֆիրման՝ ապրանքի արժեքը որոշվել է շուկայական մեթոդի հիման վրա:

Այսպես, տրակտորի արտադրական գինը (ինքնարժեքը)-	20000 \$
• վերադիր ծախսեր երկարակետության համար	3000 \$
• բարձր հուսալիության համար՝	2000 \$
• պահեստամասերի երկարաժամկետ մաշվածություն	1000 \$
• ընդամենը վաճառքի գինը՝	28000 \$
• գեղչ	4000 \$
• Ապրանքի վաճառքի գինը՝	24000 \$

• **Ներմուծման գին:** Այն սահմանվում է համաշխարհային միջին գների ինդեքսի (համաթիվ) սահմանման հիման վրա:

Ապրանքների գների սահմանման համար մշակվում է գների ռազմավարություն և քաղաքականություն:

Այն ցույց է տալիս գնի փոփոխությունը հեռանկարում և գնի սահմանման նկատմամբ մոտեցումները:

Գ Լ ՈՒ Խ 14

**ԿՈՄԵՐՑԻՈՆ ՀԱՇՎԱՐԿԸ ԵՎ ՆՐԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

14.1. Կոմերցիոն (առևտրային) հաշվարկի եուրյունը

Տնտեսավարող սուբյեկտները (նյութական արտադրության ձեռնարկություններ, առևտրային բանկեր, վարկային, ներդրումային, ապահովագրական և այլ կոմերցիոն կազմակերպություններ, անհատ ձեռնարկատերեր) շուկայական տնտեսության պայմաններում աշխատում են կոմերցիոն (առևտրային) հաշվարկի (նախկին հասարակարգում տնտեսական հաշվարկ) սկզբունքով: Կոմերցիոն հաշվարկ նշանակում է առևտրային հաշվենկատություն, այսինքն ընթացիկ ծախսերի (ինքնարժեքի) փոխհատուցումը ապրանքի իրացումից, ծառայությունների մատուցումից ստացված դրամական միջոցների (ֆինանսական հասկացությամբ հասույթի) հաշվին: Տնտեսավարող սուբյեկտները միաժամանակ համարվում են կոմերցիոն՝ առևտրային կազմակերպություններ, քանի որ զբաղվում են ձեռներեցությամբ, այսինքն ազատ տնտեսական շահավետ գործունեությամբ, բիզնեսով՝ կոմերցիոն գործունեությամբ (գործարարությամբ): Նրանք համարվում են ապրանքարտադրողներ (ծառայություն մատուցողներ): Շուկայական տնտեսության պայմաններում չի կարող լինել վնասով ապրանքարտադրողներ (ծառայություն մատուցողներ), այսինքն, երբ ընթացիկ ծախսերը գերազանցեն եկամուտներին: Այսպես, ունենալով մեկ մլն դրամ և ավելի ընթացիկ պարտքեր, կդառնան անվճարուճակ և կհայտնվեն ֆինանսական սնանկացման շեմին: Հետևապես, բոլոր տնտեսավարող սուբյեկտները իրենց գործունեությունը կազմակերպում են կոմերցիոն հաշվարկի հիման վրա: Տնտեսավարող սուբյեկտների տնտեսաֆինանսական գործունեությունն իրականացվում է կոմերցիոն հաշվարկի սկզբունքներով: Ոստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎՇ) մեր երկրում 2004թ. հուլիսի 1-ի դրությամբ գործում են 51240 կոմերցիոն կազմակերպություններ (իրավաբանական անձինք) և 63185 անհատ ձեռնարկատեր, 21 առևտրային բանկեր, վարկային 6, ապահովագրական 17 և այլ կազմակերպություններ, այսինքն միայն նյութական արտադրությամբ 1 բիզնեսով զբաղվում են 126193 տնտեսավարող սուբյեկտներ: Դրանք համարվում են հիմնական հարկատուներ, քանի որ երկրի պետությունից եկամուտների շուրջ 86 տոկոսը ձևավորվում է հարկային եկամուտների հաշվի (Ցավոք, հարկային եկամուտների կառուցվածքում շուրջ կեսը կազմում է ս

վելացված արժեքի հարկը (ԱԱՀ), որն անուղակի հարկ է: Մինչդեռ, տնտեսապես զարգացած երկրներում գերակշռող համարվում են ուղակի հարկերը (հողի հարկը, գույքահարկը, շահութահարկը, ապա եկամտահարկը): Թեև տնտեսավարող սուբյեկտները 2003թ. ապահովել են 12.9 և 2004թ. տասն ամսում՝ 9.5 տոկոս տնտեսական աճ, որը բարձր է ԱՊՀ-ի մյուս երկրների համապատասխան ցուցանիշներից, սակայն դեռևս բարձր է բնակչության աղքատության մակարդակը (49.2%): Բանն այն է, որ «Լինսի» հիմնադրամի հաշվին տնտեսական աճը 2003թ. կազմել է 6%, նշանակում է երկրում իրական տնտեսական աճը կազմել է 6.9 տոկոս:

1992-2004թթ. զգալիորեն ավելացել է տնտեսավարող սուբյեկտների քվաքանակը: Այսպես, 1992-2004թթ. հունվարին երկրում սեփականաշնորհիվ է (1999թ. հունվարից մասնավորեցվել) են 1860 պետական ձեռնարկություններ, 7205 առևտրի փոքր օբյեկտներ և 72 անավարտ շինարարական օբյեկտներ: Դրա շնորհիվ պետությունից հատուկ հաշիվ է մուտքագրվել 109.8 մլրդ դրամ, առևտրի փոքր օբյեկտներից՝ 28.5 մլրդ դրամ, անավարտ շինարարական օբյեկտներից՝ մոտավորապես մեկ մլրդ դրամ, այսինքն ընդամենը 138.6 մլրդ դրամ: Մեր երկրում տարեկան միջին հաշվով հիմնադրվում են շուրջ 7 հազար տնտեսավարող սուբյեկտներ և դրա կեսից ավելի չափով ֆինանսական սնանկացման պատճառով լուծարվում են: Վերջինիս հիմնական պատճառը համարվում է այն, որ չեն ապահովում կոմերցիոն հաշվարկի կազմակերպման սկզբունքների պահանջները: Նյութական արտադրության ձեռնարկությունները, իրենց գործունեությունը կազմակերպում են կոմերցիոն հաշվարկով: Նյութական արտադրության պետական ձեռնարկություններից մնացել են 360-ը, որոնք 2004-2005թթ. ապապետականացվելու են կառավարության սեփականաշնորհման ծրագրով: Այդ ձեռնարկությունների 37.4 տոկոսը 2003թ. տնտեսական տարին եզրափակել են 228.5 մլրդ դրամ վնասով: Երկրի տնտեսության մեջ դեռևս մեծ է ստվերային տնտեսության տեսակարար կշիռը (60 %), որոնք էլ լրիվ կամ մասնակի չափով խուսափում են հարկերից, ուռճացնում են ընթացիկ ծախսերը և նվազեցնում համախառն շահույթը, որպեսզի քիչ վճարեն շահութահարկ (համախառն շահույթի 20 տոկոսը): Այդ երևույթի դեմ պայքարելու նպատակով 2003թ. դեկտեմբերի վերջերին ԱԺ-ի կողմից հարկային փաթեթով փոփոխություններ մտցվեց առանձին հարկատեսակների մասին օրենքներում: Այսպես, այն ձեռներեց իրավաբանական անձինք (տնտեսավարող սուբյեկտներ), որոնց համախառն շահույթը կկազմի իրացման շրջանառության (հասույթի) մինչև 5

տողոսը, ապա նրանք պետքու՞ն պետք է փոխանցեն նաև հասույթի մեկ տողոսը: Հարկ է նկատի ունենալ, որ համախառն շահույթը բաժանվում է հարկվող և չհարկվող շահույթի (այդ դասակարգումը առաջին անգամ կատարել է ամերիկացի գիտնական Դ-Էիդ Մոլոմոնը): Հարկվող շահույթը՝ շահութահարկն է, իսկ չհարկվողը՝ զուտ շահույթը, այսինքն համախառն շահույթի և շահութահարկի տարբերությունը: Վերջինս, միաժամանակ, կոչվում է մնացորդային, բաշխման ենթակա շահույթ, որն էլ տնտեսավարող սուբյեկտների հայեցողությամբ և իրավասությամբ բաշխվում է կուտակման (հատուկ ֆոնդեր՝ գործունեության զարգացման) և սպառման՝ կոնեկտիվի նյութական խրախուսման, օգնության, սոցիալ-մշակութային միջոցառումների, պահուստային կապիտալի ձևավորման և դիվիդենտի (շահաբաժին) բաշխման համար:

Այսպիսով, կոմերցիոն հաշվարկի նպատակը շահույթի ապահովումն է:

14.2. Կոմերցիոն հաշվարկի կազմակերպման սկզբունքները

Կոմերցիոն (առևտրային) հաշվարկը կազմակերպվում է որոշակի սկզբունքներով: Այդ սկզբունքներն են.

առաջին, տնտեսավարող սուբյեկտի տնտեսական ինքնուրույնությունը: Այն ամբողջովում է տվյալ սուբյեկտի կանոնադրությամբ: Առևտրային կազմակերպությունները (ձեռնարկությունները) հանդիսանում են շուկայական տնտեսության անկախ կազմակերպական կառուցվածք և հանդես են գալիս տնտեսական ինքնուրույնության բարձր աստիճանով, ունեն իրավաբանական անձի կարգավիճակ,

երկրորդ, տնտեսական ազատությունը, որը ամբողջովում է նրա գործունեության լիցենզիայով (թույլտվությամբ),

երրորդ, շահույթի ապահովումը:

Կոմերցիոն հաշվարկի պայմաններում առևտրային կազմակերպությունները պետք է համախառն եկամտի հաշվին փոխհատուցեն ընթացիկ ծախսերը և ապահովեն շահույթ: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ շուկայական տնտեսության պայմաններում բոլոր տնտեսավարող սուբյեկտներն իրենց գործունեությունը կազմակերպում են սեփական ֆինանսական պաշարների հաշվին: Որպես սեփական ֆինանսական պաշարներ համարվում են զուտ շահույթը, ոչ ընթացիկ նյութական ակտիվների (հիմնական միջոցների) տարեկան մաշվա-

ծության գումարը, ավելցուկ հիմնական միջոցների վաճառքից ստացված դրամական միջոցները, նրանց լուծարումից ստացված միջոցները, (պիտանի մասերի իրացումից ստացված միջոցները), համատեղ ձեռնարկումներից ստացված շահույթը, ֆինանսական ներդրումներից ստացված շահաբաժինները և այլն:

Միևնույն, նախկին հասարակարգում տնտեսավարող սուբյեկտների, համար գործում էր դատարանի համակարգը, այսինքն սուբյեկտների վնասը ծածկվում էր պետքու՞ն եկամուտների հաշվին: Սակայն, շուկայական տնտեսության պայմաններում տնտեսավարող սուբյեկտների հաշվով վերացված է դատարանի և այն կիրառվում է միայն տեղական ինքնակառավարման մարմինների տեղական բյուջեի դեֆիցիտը ծածկելու համար: Տնտեսավարող սուբյեկտների հաշվով բացառություն է կազմում նպատակային ֆինանսավորումը, որը կատարվում է համապետական նշանակության օբյեկտների կառուցման և միջոցառումների համար (շրջակա միջավայրի պահպանում, մարդկանց և կենդանիների համաճարակային հիվանդությունների դեմ պայքարի հաշվով և այլն),

չորրորդ, ինքնափոխհատուցում և ինքնաֆինանսավորում .-

Ինքնափոխհատուցումը կոմերցիոն հաշվարկի նվազագույն պահանջն է: Ինքնափոխհատուցումն ինքնածախսածածկում է, ինքնաարդարացում, որի դեպքում ընթացիկ ծախսերը փոխհատուցվում են իրացումից ստացված միջոցների (հասույթի) հաշվին: Այս դեպքում հասույթը հավասար է լինում ընթացիկ, այսինքն սահմանային ծախսերին: Հետևապես, այս դեպքում շահույթը հավասար է գրոյի: Շուկայական տնտեսության պայմաններում, տնտեսավարող սուբյեկտներն իրենց գործունեությունը իրականացնում են հիմնականում սեփական ֆինանսական պաշարների հաշվին: Դրանց հիմնական աղբյուրը շահույթն է և հիմնական միջոցների մաշվածության գումարը՝ որպես ուղղակի ծախս: Սակայն, շուկայական տնտեսության պայմաններում, իրենց գործունեությունն ընդլայնելու նպատակով անհրաժեշտ է, որ տնտեսավարող սուբյեկտներին ապահովեն ոչ միայն ինքնափոխհատուցման, այլև ինքնաֆինանսավորման սկզբունքը:

Ինքնաֆինանսավորումը կոմերցիոն հաշվարկի առավելագույն պահանջն է, որը ենթադրում է շահույթի ապահովում,

հինգերորդ, բոլոր տեսակի պաշարների խնայողաբար և արդյունավետ օգտագործումը .-

Պաշարների (նյութական, աշխատանքային, ֆինանսական) խնայողաբար և արդյունավետ օգտագործումը հանդիսանում է տնտեսավարող

սուբյեկտների հիմնական խնդիրը: Դրա շնորհիվ իջեցվում է արտադրանքի ինքնարժեքը, որը շահույթի ավելացման և շահութաբերության բարձրացման հիմնական ուղին է:

Վեցերորդ, փոփոխարժեք սուբյեկտների նյութական շահագրգռվածությունը և նյութական պատասխանատվությունը:

Այս սկզբունքն ենթադրում է տնտեսավարող սուբյեկտների շահագրգռվածությունն՝ արտադրության (ծառայությունների) զարգացման գործում, հաշվի առնելով շուկայի պահանջարկի և առաջարկի հարաբերակցության տնտեսական օրենքի պահանջները՝ կապված ապրանքի որակի բարելավման, հաճախորդների արագ և կուլտուրական (վերաբերմունքային) սպասարկման, հետևապես ապրանքի իրացման գնի, ծառայությունների սակագնի բարձրացման հետ: Մյուս կողմից, տնտեսավարող սուբյեկտներն իրենց գործունեության համար կրում են նյութական (գույքային) պատասխանատվություն:

14.3. Շահույթի էությունը, ձևերը և հաշվարկման կարգը

Կոմերցիոն կազմակերպությունները զբաղվում են պատրաստի արտադրանքի արտադրությամբ և իրացմամբ կամ ծառայությունների մատուցմամբ: Նյութական գործունեությունը համարվում է տնտեսաֆինանսական գործունեություն: Այդ գործունեության ֆինանսական հետևանքը կազմում է շահույթը կամ վնասը:

Շահույթն իրենից ներկայացնում է ապրանքի վաճառքից ստացված դրամական միջոցների մուտքի և կատարված ընթացիկ ծախսերի տարբերությունը: Մակայն տնտեսավարող սուբյեկտը տնտեսաֆինանսական գործունեությունը կարող է ավարտել վնասով: Վնասը՝ ծախսերի գերազանցումն է արտադրանքի վաճառքից ստացված դրամական միջոցների մուտքի նկատմամբ: Այլ կերպ, շահույթը հասույթի և ինքնարժեքի տարբերությունն է, իսկ վնասը՝ ինքնարժեքի և հասույթի տարբերությունը: Այն, միաժամանակ, իրենից ներկայացնում է գնի և ինքնարժեքի տարբերությունը: Վերջինս հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$\text{Եթե } Q = I + C, \text{ ապա } C = Q - I, \text{ որտեղ՝}$$

Q-ն՝ ապրանքի իրացման գինն է՝ միավորի արժեքը,

I-ն՝ արտադրանքի միավորի ինքնարժեքն է,

C-ն՝ շահույթը:

Բանն այն է, որ շուկայական տնտեսության պայմաններում վնասու

ապրանքարտադրողներ լինել չեն կարող, այսպես կենթարկվեն ֆինանսական սնանկացման: Մեր երկրում տարեկան 3-4 հազար տնտեսավարող սուբյեկտ՝ իրավաբանական անձինք և գյեթե նույնքան էլ անհատ ձեռնարկատերեր ենթարկվում են ֆինանսական սնանկացման և լուծարվում տնտեսական դատարանների որսումով: Այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք կազմում են առողջացման լրացուցուցիչ բիզնես-ծրագիր և կենսագործում են կյանքում, նրանք կարճ ժամանակաշրջանում բարելավում են իրենց ֆինանսական դրությունը և ձեռնարկությունը փրկում սնանկացումից: Ցավոք, մեր երկրում նույնիսկ խոշոր ձեռնարկություններն, որպես հարկատուներ, անհիմն ուռճացնում են ընթացիկ ծախսերը և ֆինանսական հաշվետվություն ներկայացնում հարկային տեսչություններին, որ, իբր, աշխատել են վնասով:

Ձեռնարկության խնդիրն է ապահովել իր գործունեության շահութաբեր աշխատանքը: Դրա համար էլ շուկայական տնտեսության պայմաններում նրանք աշխատում են կոմերցիոն հաշվարկի սկզբունքով: Վերջինիս հիմնական նպատակը շահույթի ապահովումն է:

Գոյություն ունի շահույթի բացարձակ և հարաբերական ցուցանիշներ: Արտադրանքի իրացման արժեքի (հասույթի) և ինքնարժեքի տարբերությունը կազմում է շահույթի բացարձակ մեծությունը: Մակայն շահույթի չափը կարելի է հաշվարկել նաև արտադրանքի միավորի հաշվով, ապա այն բազմապատկել իրացման ծավալով: Այսպես, եթե ձեռնարկությունում հացահամապատկել իրացման ծավալով: Այսպես, եթե ձեռնարկությունում հացահատիկի մեկ ցենտների իրացման գինը 12000 դրամ է, իսկ մեկ ցենտների ինքնարժեքը՝ 8000 դրամ, ապա մեկ ցենտների հաշվով շահույթը կկազմի 4000 դրամ (12000 - 8000) և 4000 ցենտներ հացահատիկի իրացման դեպքում շահույթի բացարձակ չափը կկազմի 400g x 4000 դրամ = 16 մլն դրամ:

Բացարձակ շահույթի աղբյուրներին, շահույթի համակարգին, նրա տեսակներին և բաշխման կարգին անդրադարձել ենք «Ձեռնարկությունների ֆինանսներ» դասընթացին վերաբերող սույն ձեռնարկի 8-րդ գլխում: Հետևապես, կրկնությունից խուսափելու համար չենք անդրադառնում նշված հարցերին:

14.4 Շահութաբերությունը, նրա ցուցանիշները և հաշվարկման կարգը

Շահույթի հարաբերական ցուցանիշը կոչվում է շահութաբերություն: Այն իրենից ներկայացնում է շահույթի հարաբերությունը իրացված ար-

տաղյանքի ինքնարժեքին, ոչ ընթացիկ և ընթացիկ կապիտալին:

Գույություն ունի շահութաբերության հաշվարկման հետևյալ ցուցանիշները.

• առաջին, **շահութաբերության մակարդակ**, որն իրենից ներկայացնում է շահույթի հարաբերությունը իրացված արտադրանքի ինքնարժեքին, Շահութաբերության մակարդակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$C_1 = \frac{C \times 100}{I_{\text{ա}}}, \text{ որտեղ՝}$$

C-ն՝ շահութաբերության մակարդակն է, տոկոսով,

C-ն՝ շահույթի ծավալը,

I-ա՝ իրացված արտադրանքի ինքնարժեքը:

Այսպես, ձեռնարկությունը ստացել է 5 մլն դրամ շահույթ և իրացված արտադրանքի ինքնարժեքը կազմել է 12 մլն դրամ, ապա շահութաբերության մակարդակը կկազմի՝

$$C_1 = \frac{5}{12} \cdot 100 = 42.5 \text{ տոկոս:}$$

I-ա նշանակում է, որ իրացված արտադրանքի միավորի հաշվով ստացվել է 0.40 դրամ շահույթ: Այն ցույց է տալիս պաշարների օգտագործման արդյունավետությունը, այսինքն ընթացիկ ծախսերի խնայողության մակարդակը:

երկրորդ, Շահույթի նորմա (չափ). Այն իրենից ներկայացնում է շահույթի հարաբերությունը ոչ ընթացիկ և ընթացիկ կապիտալին, այսինքն հիմնական արտադրական և շրջանառու ֆոնդերին:

Շահութաբերության նորման (չափը) հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$C_2 = \frac{C}{\text{Հաֆ} + \text{Շաֆ}} \cdot 100, \text{ որտեղ՝}$$

C₂-ն՝ շահույթի չափն է տոկոսով,

Շաֆ-ն՝ հիմնական արտադրական ֆոնդերը,

Հաֆ-ն շրջանառու արտադրական ֆոնդերը,

Եթե ձեռնարկության շահույթը կազմել է 5 մլն դրամ, հիմնական արտադրական ֆոնդերը՝ 10 մլն դրամ, շրջանառու արտադրական ֆոնդերը՝ 7 մլն դրամ, ապա շահույթի նորման կկազմի՝

$$C_2 = \frac{5 \text{ մլն դրամ}}{\text{Հաֆ} + \text{Շաֆ}} \cdot 100 = \frac{5}{17} \cdot 100 = 29.4 \text{ տոկոս:}$$

Շահույթի նորման նման ձևով հաշվարկվել է նախկին հասարակարգում, որը տարածված է Արևմուտքի երկրներում: Այդ ցուցանիշը ցույց է տալիս, թե ծախսված հիմնական և շրջանառու արտադրական ֆոնդերը, այսինքն՝ հիմնական և շրջանառու կապիտալի միավորի հաշվով որքա՞ն շահույթ է ստացվել: Որքան բարձր լինի այդ ցուցանիշը, այնքան արդյունավետ կօգտագործվեն հիմնական և շրջանառու միջոցները:

• **երրորդ, կապիտալի շահութաբերությունը.** Այն իրենից ներկայացնում է շահույթի հարաբերությունը կապիտալին և հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$C_3 = \frac{C}{I_{\text{կ}}} \cdot 100, \text{ որտեղ՝}$$

I-կ-ն՝ կապիտալն է, դրամ,

C-ն՝ շահույթը, դրամ,

C₃-ն՝ կապիտալի շահութաբերությունն է, տոկոս:

Եթե ձեռնարկությունը ստացել է 5 մլն դրամ շահույթ և ներդրվել է 15 մլն դրամ ներդրումներ, ապա կապիտալի շահութաբերությունը կկազմի՝

$$C_3 = \frac{5 \text{ մլն}}{15} \cdot 100 = 33,3 \text{ տոկոս:}$$

Այսինքն, ներդրված կապիտալի միավորի հաշվով ստացվել է 0.33 դրամ շահույթ:

Շահույթի նորման կամ կապիտալի շահութաբերությունն օգտագործվում է պետության կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների սակագները սահմանելու գործում: Այդ նպատակով՝ երկրի նախագահը հիմնականապես է ստորագրում ըստ երկրի տնտեսության ճյուղերի շահույթի նորման սահմանելու նպատակով: Այսպես, 1993թ. ՀՀ նախագահի հարմանագրով սահմանվել է շահույթի նորմայի հետևյալ նորմատիվները (չափանիշները).

- արդյունաբերություն և գյուղատնտեսություն՝ 18%,
- տրանսպորտ և կապ՝ 12%,
- լեռնահանքային արդյունաբերություն՝ 25տոկոս:

I-ա նշանակում է, որ բնակչությանը մատուցվող ծառայությունների

սակագները սահմանելու ժամանակ ինքնարժեքին պետք է գումարել շահույթի նորմայի տվյալ չափը՝ ($Q = R + C$):

Այսպես, էլեկտրաէներգիայի մեկ կվտ ժամը երկրում արտադրվում է միջինը 11 դրամով, 25% շահույթի նորմայի դեպքում այն կկազմի $11 + 2.5 = 14$ դրամ, սակայն դեռևս 1993թ. եռաստիճան էներգահամակարգ ստեղծելու պատճառով մեկ կվտ ժամի գինը սահմանվել է 25 դրամ:

Ի դեպ, էներգիայի մեկ կվտ ժամի սակագինը նույնն է ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, որի պատճառով ձեռնարկությունները արտադրում են արտադրանք (մատուցում ծառայություններ) բարձր ինքնարժեքով, և կրճատվում է շահույթը, իջնում շահութաբերությունը: Մյուս կողմից, բնակչության մեծ մասի անվճարունակության պատճառով դեռևս ցածր է էլեկտրաէներգիայի ծախսի վճարման մակարդակը: Էներգիայի բարձր գինը խոչընդոտում է ձեռնարկություններին՝ մեծ և փոքր բիզնեսի զարգացմանը:

14.5. Շահույթի ծրագրավորումը (պլանավորումը)

Շահույթի ծրագրավորման համար հինգ է հանդիսանում բիզնես-ծրագրի արտադրանքի իրացման բաժնի տվյալները և արտադրանքի միավորի ինքնարժեքը՝ ըստ տեսակների, ինչպես նաև արտադրանքի իրացման միավորի գինը: Շահույթի չափը նախատեսվում է բիզնես-ծրագրի «Ֆինանսական պլան» բաժնով: Այն իրենից ներկայացնում է երկկողմանի աղյուսակ, որի ծախս կողմում նախատեսվում է եկամուտները ըստ աղբյուրների, իսկ աջ կողմում՝ ընթացիկ ծախսերն՝ ըստ ուղղությունների:

Ըստ էության, *ձեռնարկության ֆինանսական պլանն* իրենից ներկայացնում է եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Նրանով նախատեսվում է տնտեսավարող սուբյեկտների բյուջեն: Արտադրանքի իրացումից (ծառայությունների մատուցումից) միջոցների մուտքը (հասույթը) որոշելու համար արտադրանքի իրացման ծավալը ըստ տեսակների, բազմապատկվում է իրացման (պայմանագրային, շուկայական) գնով: Ծախսերի չափը որոշելու համար, ըստ արտադրանքի տեսակների, իրացման ծավալը բազմապատկվում է արտադրանքի միավորի նախատեսված ինքնարժեքով, այնուհետև հաշվարկվում է բոլոր տեսակի եկամուտների և ծախսերի հանրագումարը:

Շահույթն իրենից ներկայացնում է համախառն եկամտի և ծախսերի տարբերությունը: Հետևապես, ըստ եկամուտների և ծախսերի հաշվեկշ-

ռի, որոշվում է արտադրանքի իրացումից ստացված ֆինանսական արդյունքը՝ շահույթը կամ վնասը: Եթե եկամուտները գերազանցում են ծախսերին, ապա տարբերությունը կնախատեսվի շահույթ, իսկ եթե ծախսերը գերազանցում են եկամուտներին, ապա տարբերության չափով կնախատեսվի վնաս: Որպես կարգ, ապրանքարտադրողները բինես-ծրագիրը կազմում են շուկայով, քանի որ, ինչպես նշել ենք, շուկայական տնտեսության պայմաններում վնասով ապրանքարտադրողներ լինել չեն կարող: Ընդ որում, տնտեսավարող սուբյեկտների եկամուտների և ծախսերի հաշվեկշռի ձևին և նրա լրացման կարգին անդրադարձել ենք «Ձեռնարկությունների ֆինանսներ» դասընթացով՝ ձեռնարկի 8-րդ գլխում:

14.6. Արտադրանքի իրացման ծավալի որոշումն ըստ անվնասաբերության

Կոմերցիոն հաշվարկի պահանջները ելնելով, շուկայական տնտեսության պայմաններում տնտեսավարող սուբյեկտները պետք է աշխատեն շահույթով, այլապես կդառնան անվճարունակ և կհայտնվեն ֆինանսական սնանկացման շեմին: Դրա համար տնտեսավարող սուբյեկտները կազմում են գործունեության բիզնես-ծրագիր¹: Բիզնես-ծրագրով իրավաբանական անձ ձեռներեցը և անհատ ձեռնարկատերերը նախօրոք պետք է կատարեն հաշվարկ և որոշեն արտադրության իրացման այն ծավալը (բնեղենով), որը կապահովի անվնասաբերություն: Դա նշանակում է՝ որոշել իրացման այն ծավալն, որի իրացումից ստացված հասույթը փոխհատուցի սահմանային ծախսերն, այսինքն ապահովի կոմերցիոն հաշվարկի ինքնավիճակատուցման սկզբունքը: Այլ կերպ, ապահովի անվնասաբերություն: Այդ դեպքում, իրացումից հասույթը հավասար կլինի սահմանային ծախսերին: Հետևապես, շահույթը հավասար կլինի զրոյի: Սակայն, անհրաժեշտ է, որ տնտեսավարող սուբյեկտն ապահովի ոչ միայն ինքնավիճակատուցման, այլև ինքնաֆինանսավորման սկզբունքը: Դրա համար, հարկ է, որ նա ստանա շահույթ: Տնտեսավարող սուբյեկտների տնտեսագիտության առումով արտադրանքի իրացման ծավալն, որն ապահովի անվնասաբերություն, հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$BE = \frac{Fc}{S - Vc}, \text{ որտեղ՝}$$

1. Վ.Ա. Վարդանյան, Ֆինանսական մեներջմենթ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 1999, գլ.4, էջ 277-290:

BE-ն՝ արտադրանքի իրացման ծավալն է,
 Fc-ն՝ հաստատուն ծախսերը,
 S-ը՝ արտադրանքի իրացման գին է, միավորի հաշվով,
 VC-ն՝ արտադրանքի միավորի հաշվով փոփոխուն ծախսերն են:

Լատիներեն արտահայտությամբ բանաձևը հայերեն կհաշվարկվի հետևյալ բանաձևով.

$$\text{Ծի} = \frac{\text{Հտ}}{\text{Իգ} - \text{Փծ}}, \text{ որտեղ}$$

Ծի-ն՝ իրացման ծավալն է,
 Հծ-ն՝ հաստատուն ծախսերը,
 Իգ-ն՝ միավորի իրացման գինը,
 Փծ-ն՝ փոփոխական ծախսերը:

Քանի որ ծախսերի էությանը և տեսակներին անդրադարձել ենք ձեռնարկի 12-րդ գլխում, ապա արտադրանքի իրացման ծավալի որոշման հաշվարկն, որն ապահովի անվնասաբերություն, ցույց տանք գործնական կարգով.

Խնդիր 30. Տնտեսավարող սուբյեկտում (օրինակ՝ Երևանի հացի թիվ 1 գործարան ԲԲԸ), հաստատուն ծախսերը ըստ բիզնես-ծրագրի, ենթադրենք, կազմել է մեկ մլն դրամ, մեկ կգ հացն իրացվում է 120 դրամով, որից փոփոխուն ծախսեր՝ 70 դրամ:

Պահանջվում է որոշել արտադրանքի (հացի) իրացման ծավալն, որն ապահովի անվնասաբերություն:

$$\text{Խծ} = \frac{\text{Հծ}}{\text{Իգ} - \text{Փծ}} = \frac{1000000}{120 - 70} = \frac{1000000 \text{ դրամ}}{50} = 20000 \text{ կգ:}$$

Նշանակում է, որ ԲԲԸ-ն, որպեսզի ապահովի ինքնափոխհատուցման սկզբունքը, այսինքն փոխհատուցի կատարած սահմանային ծախսերը, պետք է արտադրի և իրացնի 20 հազ. կգ հաց: Այս դեպքում շահույթը հավասար կլինի զրոյի: Մակայն, ձեռներեց իրավաբանական անձը պետք է, որ աշխատի շահույթով, որի համար անհրաժեշտ է լրացուցիչ արտադրել և իրացնել ևս որոշակի ծավալով արտադրանք, որպեսզի ստանա իրեն ցանկացած չափով շահույթ:

Ենթադրենք, ըստ բիզնես-ծրագրի ԲԸ-ն ցանկանում է ստանալ 960 հազար դրամ շահույթ: Նշանակում է լրացուցիչ պետք է արտադրել և իրացնել

960 հազար դրամ: 120 դրամ = 80000 կգ: Հետևապես, պետք է ձեռք բերի դրա համապատասխան հումք և նյութեր, արտադրական կախություն, վարձի աշխատողներ և կազմակերպի արտադրությունը այն հաշվով, որ արտադրի ու վաճառի 100 հազար կգ (100 տոննա) հաց, որպեսզի և փոխհատուցի սահմանային ծախսերը և ստանա 960 հազար դրամ շահույթ:

14.7. Շահույթի ավելացման և շահութաբերության բարձրացման ուղիները

Յուրաքանչյուր ձեռնարկության խնդիրն է՝ տնտեսաֆինանսական գործունեությունից ստանալ առավելագույն չափով շահույթ, այսինքն՝ նրանց հիմնական խնդիրն է ապահովել շահութաբեր աշխատանք, որպեսզի չենթարկվել ֆինանսական սնանկացման:

Շահույթը համարվում է ձեռնարկության սեփական ֆինանսական պաշարների, այսինքն՝ ինքնաֆինանսավորման հիմնական աղբյուրը:

Շահույթի ավելացումը և արտադրանքի ինքնարժեքի իջեցումը միավորի հաշվով ուղղակիորեն նպաստում է շահութաբերության բարձրացմանը:

Շահույթի ավելացման և շահութաբերության բարձրացման հիմնական ուղիներն են.

առաջին, արտադրանքի ինքնարժեքի իջեցումը. արտադրանքի որակի բարելավումը, ապրանքարտադրողների մրցունակությունը և աշխատանքի արտադրողականության բարձրացումը: Այժմ առանձին-առանձին անդրադառնանք դրանց էությանը:

14.7.1 Արտադրանքի ինքնարժեքի իջեցումը՝ որպես շահույթի ավելացման և շահութաբերության բարձրացման հիմնական ուղի

Արտադրանքի միավորի հաշվով ինքնարժեքի իջեցումը համարվում է շահույթի ավելացման և շահութաբերության բարձրացման հիմնական ուղի: Դրան կարելի է հիստորի բոլոր տեսակի պաշարների խնայողաբար ու ալոյունավետ օգտագործման միջոցով: Բացի այդ, արտադրանքի ինքնարժեքի կառուցվածքում գնովի հումք և նյութերի և անուղակի ծախսերի տեսակարար կշռի իջեցումը կնպաստի ինքնարժեքի իջեցմանը:

Արտադրանքի ինքնարժեքի իջեցման հնարավորությունները բացահայտելու համար կատարվում է ինքնարժեքի վերլուծություն: Այդ նպատակով որոշվում է ինքնարժեքի կառուցվածքը: Այն իրենից ներկայաց-

նում է ինքնարժեքի առանձին տարրերի (ծախսերի տեսակների) տեսակարար կշիռը արտադրական կամ ընդհանուր ինքնարժեքի նկատմամբ: Դրա համար ինքնարժեքի ամեն մի տարր բազմապատկվում է 100-ով և բաժանվում ինքնարժեքի սակարդակի վրա: Արտադրանքի ինքնարժեքի կառուցվածքը ցույց տանք «Աթենք» մասնաբերքի կոմբինատ ՍՊԸ-ի փաստացի նյութերով (Աղյուսակ 21):

Աղյուսակ 21

«Բժշկական» երշիկի ինքնարժեքի կառուցվածքը «Աթենք» մասնաբերքի կոմբինատ ՍՊԸ-ի նյութերով

No	Ինքնարժեքի հոդվածները	տարրերը,	Ինքնարժեքի մակարդակը, դրամ	Ինքնարժեքի կառուցվածքը, %
1	Հումք և նյութեր		736.0	63.0
2	Արտադրության անձնակազմի աշխատանքի վարձատրության ծախսեր		136.0	11.6
3.	Պարտադիր սոցիալական վճարներ		25.0	5.4
4	Հիմնական միջոցների մաշվածություն		62.6	5.4
5.	Էլեկտրաէներգիա		41.6	3.6
6	Փոխադրական ծախսեր		23.6	2.0
7.	Վարձակալական ծախսեր		-	-
8.	Ապահովագրական ծախսեր		-	-
9	Այլ ուղղակի ծախսեր		27.2	2.3
10.	Վարչական և այլ ընդհանուր ծախսեր		116.0	10.0
	Արտադրանքի մեկ միավորի ընդհանուր ինքնարժեքը		1168.0	100.0

Ինչպես երևում է «Բժշկական» երշիկի մեկ կգ-ի ընդհանուր ինքնարժեքի կառուցվածքից, նրանում համեմատաբար բարձր տեսակարար կշիռ

են կազմում հումք և նյութերը (63%), արտադրության անձնակազմի աշխատանքի վարձատրության ծախսերը (11.6%) և վարչական, այսինքն՝ վերադիր ծախսերը (10%): Հետևապես, արտադրանքի ինքնարժեքի իջեցման ուղիները «Աթենք» մասնաբերքի կոմբինատ ՍՊԸ-ում կհամարվի.

- **Հումք և նյութերի ծախսերի իջեցումը:** Դրան կարելի է հասնել կայուն մատակարարներ ունենալու և հումքն ու նյութերը էժան ձեռք բերելու միջոցով,
- սեփական արտադրության կազմակերպման միջոցով, որին կարելի է հասնել օժանդակ անասնապահական ֆերմա ստեղծելու և տավարի մատղաշ ու խոզեր աճեցնելու միջոցով: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի կատարել ներդրումներ՝ հողատեսք և անասուններ ձեռք բերելու ու անասնապահական շենքեր կառուցելու միջոցով:

Այսպես, մեր երկրի գյուղատնտեսության մեջ ավելի քան 300 ֆերմերային (ազարակային) տնտեսություններ զբաղվում են բուսաբուծությամբ ու անասնապահությամբ և ունեն փսի, կաթի վերամշակման իրենց միջի (փոքր) գործարաններն ու առևտրական տաղավարները: Այդպիսի տնտեսություններն օգտագործում են սեփական արտադրության արտադրանքը որպես հումք, հետևապես, էժան է լինում արտադրվող երշիկի մեկ միավորի ընդհանուր ինքնարժեքը,

- **աշխատանքի վարչապորության ծախսերի փեսակարար կշռի իջեցումը** .- դրան կարելի է հասնել առավել բարձր արտադրողական մեքենասարքավորումների և նոր տեխնոլոգիաների ներդրման, ինչպես նաև աշխատանքի վարձատրության գծով միավորի վարձաչափերը կրճատելու արտադրական նորմաների բարձրացման միջոցով: Մյուս կողմից, հարկ է լայնորեն կիրառել աշխատանքի վարձատրության գործավարձապարզևատրային ձևը և այն կախման մեջ դնել արտադրվող արտադրանքի քանակից և որակից,

- **վարչական և այլ ընդհանուր ծախսերի փեսակարար կշռի իջեցումը** .- դրան կարելի է հասնել վարչակառավարչական անձնակազմի պահպանության և այլ տնտեսական ծախսերը (գրասենյակային, հեռախոսային և այլն) կրճատելու միջոցով: Մասնավորապես, հարկ է էժանացնել վարչակառավարչական անձնակազմը՝ կրճատել ավելորդ հաստիքները, ապահովել աշխատանքների, մասնագիտությունների համատեղելիության, լայնորեն օգտագործել կառավարման տեխնիկական միջոցներ, այդ թվում համակարգչային տեխնիկա:

- **ապրանքային արտադրանքի ծավալի, այսինքն՝ իրացման ծավալի ավելացումը:** Դրա համար անհրաժեշտ է ավելացնել համախառն ար-

տաղաբանքի ծավալը:

Արդյունաբերության մեջ դրան կարելի է հասնել մեքենասարքավորումների (հաստոցներ, սայրքավորումներ), ինչպես նաև արտադրության սաշխատողների թվի ավելացումով,

• **մեքենասարքավորումների արտադրողականության** և աշխատանքի արտադրողականության բարձրացման միջոցով:

• **սայրանքայնության մակարդակի բարձրացումը**, գյուղատնտեսության մեջ համախառն արտադրանքի ծավալն ավելացնելու համար անհրաժեշտ է բարձրացնել մշակաբույսերի բերքատվությունը և կենդանիների մթերատվությունը: Մյուս կողմից, պատրաստի արտադրանքից որքան շատ վաճառել շուկայում, այնքան բարձր կլինի սայրանքայնության մակարդակը, հետևապես և կավելանա հասույթը և ինքնարժեքի մույն մակարդակի դեպքում նաև շահույթը:

• **գիտապեխնիկական առաջընթացի նվաճումների ներդրումը արտադրության մեջ** կապված նոր, առաջադիմական բարձր տեխնոլոգիաների, հոսքագծերի, ռոբոտատեխնիկայի և ավտոմատացման ու համալցարգչային տեխնիկայի ներդրման հետ,

• **աշխատատեղի գործընթացների մեքենայացումը** - որը կնպաստի աշխատանքային ծախսերի կրճատմանը, հետևապես, արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը:

Այսպիսով, արտադրանքի ինքնարժեքի իջեցումը շահույթի ավելացման և շահութաբերության բարձրացման հիմնական ուղին է:

14.7.2. Արտադրանքի որակը և նրա բարելավման ուղիները

Արտադրանքի որակի բարելավումը, որի շնորհիվ կբարձրանա սայրանքի իրացման գինը: Որակով սայրանք արտադրելու համար անհրաժեշտ է օգտագործել բարձրորակ հումք և արտադրական տեխնոլոգիա: Առաջատար ձեռնարկությունները, որոնք արտադրում են որակով սայրանք, ստանում են սայրանքային նշան, որը վկայում է նրա սայրանքի բարձր որակի մասին: Այսպիսով, որակական հատկանիշները պահպանելու նպատակով գոյություն ունեն որակի ստանդարտներ (որակական միասնական չափանիշներ), ինչպես նաև որակը վերահսկող, սերտիֆիկացման և չափաբանության պետական կազմակերպություն: Բացի այդ, գոյություն ունեն նաև առևտրի համաշխարհային կազմակերպություններ:

րի կողմից սահմանված որակի սերտիֆիկատներ (հավաստագրեր), որով նախատեսվում է սայրանքի որակին ներկայացվող պահանջները (ISO-9000 , ISO-9001 և այլն):

Այսպիսով, որակը կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$\Omega_p = \frac{(U_1 - U_0) (Q_1 - Q_0)}{100}, \text{ որտեղ}$$

Ω_p -ն՝ սայրանքի որակի բարձրացումն է՝ տոկոսով,

U_1 -ը և U_0 -ն՝ հաշվետու և նախորդ ժամանակաշրջաններում արտադրված արտադրանքի ծավալն է՝ բնեղեն ձևով,

Q_1 և Q_0 -ն՝ հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների սայրանքի իրացման գինն է:

Այսպես, ենթադրենք Երևանի ալյուրաց կոմբինատ ԲԲԸ-ն հաշվետու ժամանակաշրջանում արտադրել է բարձր տեսակի ալյուր 50 տոննա, իսկ նախորդ ժամանակաշրջանում՝ 30 տոննա: Հաշվետու ժամանակաշրջանում ալյուրի գինը կազմել է 220 դրամ, իսկ նախորդ ժամանակաշրջանում՝ 180 դրամ: Այս դեպքում ալյուրի որակը կբարձրանա

$$\Omega_p = \frac{(50 - 30) (220 - 180)}{100} = \frac{20 \text{ տ} \times 40 \text{ դր}}{100} = \frac{800}{100} = 8 \text{ տոկոս:}$$

14.7.3. Այրանքարտադրողների մրցունակությունը և սայրանքի մրցակցությունը շուկայական տնտեսության պայմաններում

Պատրաստի արտադրանքի արտադրությանը (ծառայությունների մատուցմանը) զբաղվող առևտրային կազմակերպությունները որպես ձեռնարկություններ համարվում են սայրանքարտադրողներ: Ընդ որում, միատեսակ սայրանքարտադրողները համարվում են մրցակիցներ: Շուկայական տնտեսության պայմաններում գոյություն ունի ուժեղ մրցակցություն սայրանքարտադրողների միջև: Դա կապված է առաջին հերթին նոր շուկաների որոնման, շուկաներում դիրքի ամրապնդման և սայրանքի գների սահմանման ու վաճառքի գների հետ: Շուկայական տնտեսության պայմաններում գոյություն ունի գների դեմպինգ (dempinge- գների պատերազմ) հասկացությունը:

Այրանքների գների սահմանման ժամանակ փոքր և միջին սայրանքարտադրողների համար բացասաբար է ազդում մենաշնորհային գները,

ոյունք սուբյեկտիվ կարգով սահմանում են մենաշնորհային ձեռնարկությունները: Ապրանքարտադրողների մրցունակությունը պայմանավորված է նաև արտադրության պայմաններով, կիրառվող տեխնոլոգիայով: Ապրանքարտադրողներն ունեն արտադրության տարբեր պայմաններ, կիրառում են տարբեր տեխնոլոգիաներ, արտադրության պաշարներով ապահովված են տարբեր կերպ: Հետևապես, նրանց միջև մրցակցությունը հակամարտ բնույթ ունի: Մրցունակության տարբեր պայմաններում են գտնվում ապրանքարտադրողները: Երկրի տնտեսության ճյուղերում և նրանց ձեռնարկություններում մրցունակության հարցերը մեր երկրում կարգավորվում է տնտեսական մրցակցության հանձնաժողովի կողմից, որը պետական կազմակերպություն է:

Ապրանքարտադրողների մրցակցության ձևերը լինում են՝ **բարեխիղճ և անբարեխիղճ**: Բարեխիղճ մրցակցությունը կազմակերպվում է իրավական դաշտի հիման վրա՝ հաշվի առնելով շուկայում ապրանքի պահանջարկի և առաջարկի հարաբերակցությունը: Անբարեխիղճ մրցակցության դեպքում ապրանքարտադրողները և նրանց ներկայացուցիչները՝ վաճառողները երբեմն զբաղվում են մրցակցի ապրանքի մասին չարախոսությամբ: Դա անբարեխիղճություն է, որը դատապարտվում է միջազգային առևտրի կանոններով և բիզնեսի սկզբունքներով: Այսպես, 1970թ. Փարիզում կնքված համաձայնագրի 10-րդ հոդվածով դատապարտվում է անբարեխիղճ մրցակցությունը:

Շուկայական տնտեսության պայմաններում կարևորվում է ապրանքի մրցակցությունը: Գոյություն ունի ապրանքի մրցակցության երկու հիմնական ձև՝


Արժեքային մրցակցություն .- դա մրցակցության մի ձև է, որը կապված է ապրանքի գնի սահմանման հետ: Միևնույն գնի դեպքում տարբեր են նույն տեսակի ապրանքարտադրողների շահույթը, քանի որ ապրանքի ինքնարժեքի մակարդակը տարբեր է:

Հետևապես, արժեքային մրցակցության դեպքում տեղի է ունենում պայքար ապրանքի վաճառքի գնի կապակցությամբ: Այդ պայքարում հաղթողները միշտ էլ լինում են մենաշնորհային առևտրային կազմակերպությունները, քանի որ նրանք սահմանում են մենաշնորհային բարձր գներ, որը ոչ միայն հատուցում է ծախսերը, այլև ապահովում է մեծ չափով շահույթ: Մինչդեռ, ապրանքի արժեքի մրցակցային պայքարի ժամանակ որոշ ապրանքարտադրողներ չեն կարողանում գնի հաշվին փոխհատուցել ընթացիկ ծախսերը (ինքնարժեքը) և հայտնվում են ֆինանսական սնանկացման շեյ մին:

Արժեքային մրցակցության միջոցով ապրանքարտադրողները, հանձնաձևն՝ վաճառողները ազդում են ապրանքի պահանջարկի վրա՝ հիմնականում ապրանքի գնի փոփոխման շնորհիվ:

Այժմ ցույց տանք ապրանքի արժեքային մրցակցության ուրվագիծը (Ուրվագիծ 17):

Ապրանքի արժեքային մրցակցության ուրվագիծը



Ապրանքի արժեքային մրցակցության դեպքում ֆիրման, որպես ապրանքարտադրող, գործում է Գ1Մ1 պայմանով, իրացումից մոտք եղած դրամական միջոցները կարող են ավելանալ իրացման ծավալի ավելացման կամ կրճատվել՝ իրացման ծավալի կրճատման պատճառով (Գ2): Դա կավելացնի ապրանքի պահանջարկը (մինչև Մ2):

Ձեռնարկությունը, որը հիմնված է արժեքային մրցակցության վրա, պետք է իջեցնի ապրանքի գինը՝ իրացման ծավալի ավելացման դեպքում:


Այսպիսով, արժեքային մրցակցության դեպքում վաճառողները շեղվում են պահանջարկից՝ բարձրացնելով կամ իջեցնելով ապրանքի գինը:

• **Ոչ արժեքային մրցակցություն**.- Դա մրցակցության այն ձևն է, որը կապված չէ նրա գնի, այլ կապված է ապրանքի դիզայնի (disajne- արտաքին տեսք), որակի, սթայլինգի (stajlinge- ապրանքի չափս), ապրանքի փաթեթավորման, տեսականու ընդլայնման և մարքեթինգային այլ պայմանների հետ:

Ոչ արժեքային մրցակցությունը մեղմացնում է սպառողական պահանջարկը՝ առանձնացնելով ապրանքները (ծառայությունները) ապրանքաշարժի, տեսակավորման, փաթեթավորման, մատակարարման, ապրանքների տարածման (մեծածախ և մանրածախ առևտրի ցանց), սպասարկման և մարքեթինգային այլ գործոնների (գովազդ և այլն) միջոցով: Սպառողների տեսանկյունից ինչքան մեծ է որակով և արտաքին դիզայնով ապրանքի ա-

ռաջարկը, այնքան մարքեթագետները ազատ են գնի սահմանման հարցում, քան համանման ապրանքի մրցակիցների մոտ, որի ապրանքը որակով չէ և անհրաժեշտ ձևով փաթեթավորված ու արտաքին գեղեցիկ տեսք չունի:

Այժմ ցույց տանք ոչ արժեքային մրցակցության ուրվագիծը (Ուրվագիծ 18):
Ուրվագիծ 18



----- Առանձնահատուկ հատկանիշներով ապրանքներ
 _____ Առանց առանձնահատուկ հատկանիշների ապրանքներ

Ոչ արժեքային մրցակցության միջոցով ապրանքարտադրող ձեռնարկությունը, ի դեմս վաճառողի, ապրանքի սպառողական արժեքը փոխարքում է աջ՝ հաջողությամբ առանձնացնելով իր ապրանքը մրցակիցների ապրանքից: Դա նրան հնարավորություն է տալիս:

- առաջին, ավելացնել ապրանքի պահանջարկը D_1 -ից մինչև D_2 սկզբնական գնի՝ Q_1 -ի դեպքում,

- երկրորդ, ավելացնել ապրանքի գինը՝ Q_1 -ից մինչև Q_2 , պահպանելով պահանջարկը D_1 -ի մակարդակում:

Այսպիսով, արժեքային մրցակցության դեպքում վաճառողները շեղվում են պահանջարկից՝ բարձրացնելով կամ իջեցնելով ապրանքի գինը: Տարբերում են ապրանքի գների մրցակցության մի քանի ձևեր:

- **Մաքուր մրցակցություն.** - Դա այն մրցակցությունն է, որի դեպքում շուկան բաժանված է հատվածների, շատ են և վաճառողները, և սպառողները, որոնք գնում և վաճառում են համանման ապրանքներ (օրինակ, հացամթերքներ, գյուղմթերքներ և այլն),

- **մենաշնորհային մրցակցություն** - գոյություն ունի մենաշնորհային մրցակցության շուկա: Դա այն շուկան է, որտեղ մենաշնորհային ապ-

րանքարտադրողը զբաղեցնում է տվյալ շուկայի հիմնական դիրքերը, շուկայի տարողության կեսը և ավելի: Մենաշնորհային մրցակցային շուկան բաղկացած է շատ վաճառողներից ու սպառողներից, որոնք գործարք են կնքում միասնական գնով՝ մենաշնորհային ապրանքի հաշվով,

- **Օլիգոպոլիսպական մրցակցություն (oligopolion)** - Դա այն մրցակցությունն է, երբ շուկայում գործում են վաճառողների ոչ մեծ խմբեր, որոնք զգացմունքային են զնագոյացման քաղաքականության նկատմամբ ու մեկը մյուսի նկատմամբ մարքեթինգային ռազմավարությամբ: Ընդ որում, շուկայում վաճառվող ապրանքները կարող են լինել միատեսակ կամ տարբեր տեսակի:

14.7.4 Աշխատանքի արտադրողականությունը և նրա բարձրացման ուղիները

Աշխատանքը մարդու նպատակահարմար գործունեությունն է, որը կատարվում է աշխատուժի կողմից: Որպես աշխատուժի հանդիսանում է ձեռնարկության փաստացի աշխատողները, այդ թվում արձակուրդում գտնվողները: Աշխատուժը լրացվում է աշխատանքային պաշարների հաշվին: Որպես աշխատանքային պաշարներ համարվում են 16-63 տարեկան աշխատունակ տղամարդիկ և կանայք: Աշխատուժի կողմից կատարվում է երկու տեսակի աշխատանք՝ ֆիզիկական և մտավոր: Կատարված աշխատանքի դիմաց աշխատողները ստանում են իրենց աշխատանքի գինը՝ որպես անվանական աշխատավարձ:

Անվանական, այսինքն՝ հաշվարկված աշխատավարձից կատարվում են եկամտահարկի և պարտադիր սոցիալական վճարքների պահումներ և տարբերությունը կազմում է իրական աշխատավարձը, որն առձեռն կարգով ստանում է աշխատողը՝ դրամարկղից: Ձեռնարկությունների հիմնական խնդիրն է խնայողաբար և արդյունավետ օգտագործել աշխատանքային պաշարները: Դա նշանակում է խնայողաբար օգտագործել աշխատաժամանակը: Վերջինս իրենից ներկայացնում է տարվա աշխատանքային օրերի և օրվա աշխատանքի տևողության արտադրյալը ($307 \text{ օր} \times 8 \text{ ժամ} = 2456 \text{ մարդ-ժամ}$): Աշխատաժամանակի խնայողաբար օգտագործումն ուղղակիորեն նպաստում է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը:

Աշխատանքի արտադրողականությունն ասելով հասկացվում է բարձր արտադրողական աշխատանք, որը հնարավորություն է տալիս միավոր

աշխատաժամանակում (մայր-ժամ) կամ արտադրության մեջ աշխատող մեկ բանվորի հաշվով ավելացնել համախառն արտադրանքի արժեքը:

Համախառն արտադրանքը՝ ոլոշակի ժամնակաշրջանում, սովորաբար, մեկ տարում արտադրված արտադրանքի ծավալն է: Այն չափվում է բեներեն և արժեքային արտահայտությամբ: Աշխատանքի արտադրողականությունը հաշվարկելիս օգտագործվում է համախառն արտադրանքի արժեքային ցուցանիշը: Չեռնարկություններում աշխատանքի արտադրողականության մակարդակը՝ մեկ բանվորի հաշվով, պետք է լինի ավելի բարձր, քան աշխատանքի վարձատրությունը, քանի որ համախառն արտադրանքի արժեքի մի մասը պետք է սպառել (70%-ը), իսկ 30 %-ը կուտակել՝ արտադրության զարգացման համար:

Աշխատանքի արտադրողականության ցուցանիշները և դրանց հաշվարկման կարգը

Որպես աշխատանքի արտադրողականության ցուցանիշներ համարվում են.

• առաջին, **համախառն արտադրանքի արժեքը՝ արտադրության մեջ աշխատող մեկ բանվորի հաշվով:** Այն իրենից ներկայացնում է համախառն արտադրանքի արժեքի հարաբերությունը արտադրության մեջ աշխատողների թվի վրա: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Ամ = \frac{ՀԱ}{Ա_2}, \text{ որտեղ՝}$$

Ամ-ն՝ աշխատանքի արտադրողականության մակարդակն է, դրամ,

ՀԱ-ն՝ համախառն արտադրանքի արժեքը, դրամ,

Ա₂-ն՝ արտադրության մեջ աշխատողների թիվն է, մարդ:

Եթե ձեռնարկության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 125 մլն դրամ, իսկ արտադրության մեջ աշխատողների թիվը՝ 500 մարդ, ապա աշխատանքի արտադրողականության մակարդակը կկազմի՝

$$Ամ = \frac{ՀԱ}{Ա_2} = \frac{125000000}{500} = 25000 \text{ դրամ:}$$

Մեկ բանվորի հաշվով որքան մեծ լինի այդ ցուցանիշը, այնքան բարձր կլինի աշխատանքի արտադրողականության մակարդակը, այսինքն՝ առավել արդյունավետ կօգտագործվի աշխատաժամանակը:

• երկրորդ, **համախառն արտադրանքի արժեքը մեկ ժամվա (մեկ**

մարդ-օրվա) հաշվով: Այն իրենից ներկայացնում է համախառն արտադրանքի արժեքի և արտադրության մեջ ծախսված աշխատաժամանակի հարաբերությունը:

Այսպես, հնգօրյա աշխատանքային շաբաթվա պայմաններում ենթադրենք 500 բանվոր աշխատել են 125000 մարդ-օր (500 մարդ x 250 օր) կամ 10 մլն մարդ - ժամ (125000 X 8 ժամ), ապա 125 մլն դրամ համախառն արտադրանքի արժեքի դեպքում աշխատանքի արտադրողականության մակարդակը կկազմի՝

$$\bullet \text{ մեկ մարդ-օրվա հաշվով՝ } \frac{125 \text{ մլն դրամ}}{125000} = 1000 \text{ դրամ,}$$

$$\bullet \text{ մեկ մարդ-ժամվա հաշվով՝ } \frac{125 \text{ մլն դրամ}}{1000000} = 125 \text{ դրամ,}$$

• երրորդ, **աշխատանքային ծախսերը արտադրանքի միավորի հաշվով:**

Այն իրենից ներկայացնում է տվյալ ճյուղի համախառն արտադրանքի արժեքի հարաբերությունը աշխատանքային ծախսումներին: Ծախսումները լինում են երկու տեսակի՝

• ուղղակի աշխատանքային ծախսումներ, որն իրենից ներկայացնում է արտադրության աշխատողների ծախսած աշխատաժամանակը (մարդ-օր կամ մարդ-ժամ),

• անուղղակի աշխատանքային ծախսումներ, որը համարվում է վարչականավարչական աշխատողների ծախսած աշխատաժամանակը:

Աշխատանքի արտադրողականության այս ցուցանիշը հաշվարկվում է ուղղակի աշխատանքային ծախսումների հաշվով:

Այսպես, ենթադրենք ձեռնարկությունն արտադրել է 500 տոննա խաղող, իրացման գինը մեկ կգ-ի հաշվով 135 դրամ (համախառն արտադրանքի արժեքը 675 հազար դրամ և ուղղակի աշխատանքային ծախսերը կազմել են 40000 մարդ -ժամ): Այս դեպքում մեկ մարդ-ժամվա հաշվով աշխատանքի արտադրողականության մակարդակը կկազմի՝

$$Ամ = \frac{675000}{40000} = 16.8 \text{ դրամ, այսինքն՝}$$

մեկ մարդ-ժամվա ընթացքում արտադրվել է 16.8 դրամի արտադրանք: Մեկ մարդ-օրվա հաշվով աշխատանքի արտադրողականության մակարդակը կկազմի՝ 16.8 x 8 = 134.4 դրամ, այսինքն՝ մեկ օրում ար-

տաղրվել է 134 դրամի արտադրանք:

Եթե տարվա ընթացքում միջին հաշվով մեկ բանվորն աշխատել է 250 օր, ապա աշխատանքի արտադրողականությունը մեկ բանվորի հաշվով կկազմի՝ 33600 դրամ (134.4 x 250):

Աշխատանքի արտադրողականությունը հաշվարկվում է ոչ միայն ձեռնարկություններում, այլև երկրի տնտեսության մասշտաբով: Այդ դեպքում աշխատանքի արտադրողականությունը հաշվարկվում է ՀՆԱ-ի և երկրի տնտեսության մեջ զբաղվածների թվի հարաբերությամբ:

2004թ. ՀՆԱ-ի անվանական արժեքը կազմել է 1694.4 մլրդ դրամ, զբաղվածների թիվը՝ (աշխատուժի և գործազուրկների թվի տարբերությունը) 1340000 մարդ, հետևապես աշխատանքի արտադրողականությունը երկրում մեկ զբաղվածի հաշվով կկազմի 126450 դրամ:

Աշխատանքի արտադրողականության բարձրացման ուղիները

Աշխատանքի արտադրողականության բարձրացման ուղիները հանդիսանում են.

- համախառն արտադրանքի ավելացումը, որին արդյունաբերության մեջ կարելի է հասնել մեքենասարքավորումների և բանվորների թվի, իսկ գյուղատնտեսության մեջ՝ ցանքատարածությունների և անասնազխաբանակի ավելացումով (էքստենսիվ ուղի) և մշակաբույսերի բերքատվության ու կենդանների մթերատվության բարձրացման միջոցով (ինտենսիվ՝ արագացված ուղի),

- աշխատաժամանակի խնայողաբար օգտագործմամբ,
- աշխատատար գործընթացների մեքենայացումը՝ ձեռքի աշխատանքի փոխարինումը մեքենայացմամբ,
- արտադրության մեջ նոր և բարձր տեխնոլոգիաների ներդրումը,
- գլխատեխնիկական առաջընթացի ներդրումը,
- ժամանակակից բարձր արտադրողական տեխնիկայի ներդրումը,
- մեքենասարքավորումների ժամային, օրական և հերթափոխային արտադրողականության բարձրացումը,
- մեքենասարքավորումների պարապորտների կրճատումը,
- մեքենասարքավորումների նորոգումների և տեխնիկական սպասարկման ժամանակին կազմակերպումը,
- արտադրանքի որակի բարելավումը,
- արտադրության մեջ ավտոմատ (ինքնաշխատ) սարքերի օգտագոր-

ծումը.

- ռոբոտոտեխնիկայի ներդրումը,
- գյուղատնտեսության մեջ բույսերի նոր սորտերի և կենդանիների նոր ցեղերի ներդրումը,
- գյուղատնտեսության մեջ արտադրության քիմիացումը և ռոտացման կազմակերպումը:

14.8. Բիզնես-ծրագիրը , նրա բաժինների բովանդակությունը և մշակման կարգը

Բիզնես-ծրագիրն ուղեցույց աստղ է բոլոր ձեռներեցների (անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձ) համար: Բիզնես-ծրագրի կազմումը պարտադիր է բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար, ուրմբ զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ, այսինքն ազատ տնտեսական շահավետ գործունեությամբ:

Բիզնես-ծրագրի կազմումը տնտեսավարող սուբյեկտի տնտեսաֆինանսական գործունեության պլանավորումն է՝ կարճաժամկետ և երկարաժամկետ, իսկ պլանավորումը (ծրագրավորումը) հանդիսանում է ընդհանուր մեքենայների , այդ թվում՝ ֆինանսական մեքենայների հիմնական խնդիրներից մեկը:

Ձեռներեցության զարգացման համար ՀՀ տնտեսության ճյուղերում և առաջին հերթին ագրոպարենային համակարգում սկսած 1992 թվականից շուկայական տնտեսության անցնելու նպատակով ստեղծվեց անհրաժեշտ տնտեսական նախադրյալներ: Մասնավորապես, գյուղատնտեսության մեջ սեփականաշնորհվեց հողը և արտադրության մյուս հիմնական միջոցները և կազմակերպվեցին 336 հազար գյուղացիական և 322 գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ ու շուրջ 100 գյուղատնտեսական պետական ձեռնարկություններ:

Սեփականատերերի բանակը ևս համարվեց շուրջ 300 հազարով և ներկայումս ՀՀ տնտեսության մեջ գործում են ավելի քան 600 հազար սեփականատերեր: Բացի այդ, անհատ ձեռներեցությամբ (տնտեսական շահավետ գործունեությամբ) զբաղվում են ավելի քան 63 հազար անհատ ձեռնարկատերեր և 50.2 հազար տնտեսավարող սուբյեկտներ (անկախ սեփականության ձևից):

Անհատ ձեռնարկատերերի և ձեռնարկությունների կողմից (անկախ սեփականության ձևից) բիզնես-ծրագրի մշակումը և կենսագործումը

հնարավորություն կտա նորացնել ապրանքի տեսականին (ծառայությունները, սպասարկումները), բարելավել տեխնոլոգիան և ապրանքների որակն ու փաթեթավորումը, ծառայությունների, սպասարկումների որակով կատարումը, որն էլ կնպաստի բարեխիղճ մրցակցության զարգացմանը: Սակայն, տեղական շուկաներում դեռևս գոյություն ունեն անորակ ապրանքներ և անբարեխիղճ մրցակցություն, որն, ընդհանրապես, դատապարտվում է միջազգային համաձայնագրերով: Անբարեխիղճ մրցակցության վերացման գործում իր ուրույն դերն ունի ձեռնարկությունների բիզնես-ծրագիրը և նրա գործնական կիրառումը:

Բիզնես-ծրագիրն իրենից ներկայացնում է մի փաստաթուղթ, որում ձևավորվում է անհատ ձեռնարկատիրոջ, ձեռնարկության մասնակցների, տրվում նրա տնտեսական հիմնավորումը, որոշվում պաշարների ձեռքբերման և ապրանքի վաճառքի (ծառայությունների մատուցման) ուղիները, որոնք անհրաժեշտ են վերջնական ֆինանսական արդյունքի հասնելու համար: Որպես կանոն, բիզնես-ծրագիրը մշակվում է մի քանի տարվա (սովորաբար 1-3 տարվա) հաշվով, տարեկան կտրվածքով: Ընդ որում, առաջին տարվա տվյալները, սովորաբար, տրվում է ըստ տարվա ամիսների, իսկ հաջորդ տարիները՝ տարեկան հաշվարկումով: Գործող ձեռնարկության բիզնես-ծրագրի մշակման ժամանակ օգտագործվում է սահուն գրաֆիկ (ժամկետացույց), որի դեպքում ամեն տարի մշակվում է մանրակրկիտ պլան՝ հաջորդ տարվա հաշվով, ինչպես նաև ելնելով տնտեսական իրավիճակից, ճշգրտվում և երկարացվում է բիզնես-ծրագիրը, ևս մեկ տարով: Բիզնես-ծրագրի գործողությունը կախված է ձեռնարկության գործունեության բնույթից և արտադրության չափերից:

Բիզնես-ծրագիրը մշակում է ձեռներեցը (ֆիզիկական կամ իրավաբանական անձ, մի խումբ մասնագետներ՝ մենեջերներ, մարքեթագետներ, տնտեսագետ-հաշվապահներ): Նրանում նշվում է նախագծի էության մասին, գործունեության տեսակը, արտադրության և իրացման համար առաջարկվող ապրանքը կամ ծառայությունը, նրա տնտեսական հիմնավորումը, պահանջարկի և առաջարկի վիճակը, սպառողները, մրցակիցները, արտադրական, մարքեթինգային և կազմակերպական ծրագրերը, որն անհրաժեշտ է նախագծի կենսագործման և վերջնական ֆինանսական արդյունքների հասնելու համար:

Նախագծի կենսագործման համար անհրաժեշտ է հեռանկարային գաղափար և գործողությունների ծրագիր, որոնք հանդիսանում են ձեռներեցների որոնումների ու մշակումների արդյունքներ, թեև ոչ միշտ են ա-

պահովված անհրաժեշտ ֆինանսական միջոցներով, հատկապես ՀՀ անհատ ձեռնարկատերերը:

Արդյունքների ստացման համար անհրաժեշտ է օգտագործել ներքին հնարավորությունները: Դա կարևոր է ձեռներեցի համար:

Սակայն բիզնես-ծրագիրը հիմք է հանդիսանում նաև փոխառու կապիտալ ներդրողների համար: Նրանց հետաքրքրում է բիզնես-ծրագրով ստանալ հետևյալ չորս հարցերի պատասխանները.

- առաջին, ձեռներեցի որակավորումը: Ո՞վ է ղեկավարում ձեռնարկությունը, աշխատանքի փորձը,

- երկրորդ, ծրագրի արդյունավետությունը, միջոցների վերադարձման ժամկետները, եկամուտների ու ծախսերի հոսքը,

- երրորդ, միջոցների վերադարձման երաշխիքը,

- չորրորդ, ֆինանսավորման գործընթացի վերահսկելիությունը:

Հետևապես, հարկ է օգտագործել ոչ միայն ներքին հնարավորությունները, այլև ներգրավել տեղական և օտարերկրյա ներդրողների միջոցները և կազմակերպել համատեղ ձեռնարկություններ ու զարգացնել փոքր բիզնեսը:

Հարկ է նշել, որ Սփյուռքում մեր հայրենակիցներից կան ավելի քան հինգ հազար միլիոնատերեր, որոնց միջոցների մի մասի ներդրումը Հայաստանի տնտեսության տարբեր ճյուղերում, կնպաստի նպա արագ զարգացմանը, շուկայական տնտեսության փոխադրմանը, մոր աշխատատեղերի ստեղծմանը, աշխատունակ բնակչության զբաղվածության հիմնահարցի մեղմացմանը, բնակչության եկամուտների ավելացմանը և գոյն նվազագույն պահանջումների բավարարմանը: Օրինակ, մեր հայրենակից, հնդկահայ հայտնի գործարար Հովսեփ Մեֆերյանն իր միջոցների ներդրումով 1993-1996 թթ. Երևանում կազմակերպել է մի քանի համատեղ ձեռնարկություններ՝ և առաջին հինգ տարիներին չի նախատեսում շահույթ: Մեծ ներդրումներ է կատարել ամերիկահայ աշխարհահռչակ ձեռնարկատեր Ջորջ Քրոքորյանը, որի միջոցներով (165 մլն \$) ստեղծվել և դեռ գործում է «Լինսի» հիմնադրամը:

Օտարերկրյա ներդրողներին անհրաժեշտ է համոզել, և հարկային քաղաքականությամբ խրախուսել նրանց կապիտալի մեծ մասն ընդգրկել Հայաստանի տնտեսության մեջ, ապահովելով միջոցների հուսալիությունը և նախագծերի փոխհատուցումը: Հենց այս խնդիրն էլ պետք է լուծի բիզնես-պլանը՝ իր բաղկացուցիչ մասը կազմող մարքեթինգի ծրագրով:

Այսպիսով, բիզնես-ծրագրի մշակումը անհրաժեշտ է հետևյալ խնդիր-

ների լուծման համար.

- առաջին, անհատ ձեռնարկատիրոջ կամ ձեռնարկության նպատակների ձևավորումը, քանակական և որակական ցուցանիշների որոշումը,

- երկրորդ, փոխկապակցված արտադրական, մարքեթինգային և կազմակերպական ծրագրերի մշակումը, որն ապահովի առաջադրված խնդիրների կատարումը,

- երրորդ, ֆինանսավորման անհրաժեշտ ծավալների որոշումը և նյա աղբյուրների որոնումը,

- չորրորդ, դժվարությունների կառավարման, մարքեթինգային և բիզնեսի իրավիճակների ու հիմնահարցերի բացահայտում, որոնց հետ առճակատման է հանգվում նախագծի կենսագործման ժամանակ,

- հինգերորդ, իրականացվող նախագծի նկատմամբ վերահսկողության համակարգի կազմակերպում և տնտեսական հիմնավորում:

Բիզնես-ծրագրի առաջին հինգ ուղղությունների վերլուծությունը վկայում է այն մասին, որ այն անհրաժեշտ է ձեռներեցին նույնիսկ այն դեպքու, եթե փոխատվական կապիտալի մասնակցությունը ծրագրում չի նախատեսվում:

Շուկայական հարաբերությունների զարգացման ներկա ժամանակներին և հատկապես 1994-1997թթ. ՀՀ տնտեսության ճյուղերում արտադրության անկման և ազգային դրամի արժեզրկման պայմաններում, ձեռնարկությունները (անկախ սեփականության ձևից) անհրաժեշտություն չէին զգում, իսկ ոմանք էլ պատկերացում չուներին բիզնես-պլանի, այդ թվում՝ մարքեթինգի ծրագրի մասին, մինչդեռ ներկայումս կան շատ ձեռնարկություններ, որ ճիշտ են կողմնորոշվում շուկայական հարաբերությունների ներկա պայմաններում, թեկուզ և ելնելով մեծ ու փոքր բիզնեսի զարգացման համար վարկավորման անհրաժեշտությունից, կազմում են բիզնես-ծրագիր, այդ թվում՝ վարկավորման ծրագիր:

Մակայն տնտեսական բարեփոխումները շոշափելի արդյունք կարող են տալ միայն այն դեպքում, երբ ստեղծվի բարենպաստ պայմաններ սեփական և փոխատվական միջոցների՝ վարկերի ներդրման համար՝ հատկապես արտադրության զարգացման ծրագրերի դեպքում: Հենց այդ ժամանակ բիզնես-պլանի հիմնավորված, խելացի մշակումը, տեխնիկա-տնտեսական հիմնավորումը կհանդիսանա ձեռնարկությունների գործունեության անհրաժեշտ պայման: Այդ գործընթացին լրացուցիչ խթան է հաղորդում պետական ձեռնարկությունների զանգվածային սեփականացումը և բաժնետիրական ընկերությունների (ՓԲԸ, ԲԲԸ) կազմա-

կերպումը: Բաժնետիրական ընկերությունները և մյուս ձեռնարկությունները, խիստ կարգով ֆինանսական միջոցների կարիք են զգում՝ արտադրության վերակառուցման և նոր տեխնոլոգիաների ներդրման, ապրանքատեսականու նորացման կապակցությամբ, հատկապես արդյունաբերության ճյուղերում և մասնավորապես, գյուղատնտեսական հումք վերամշակող սննդի արդյունաբերության ձեռնարկություններում: Բիզնես-պլանի մշակումը հնարավորություն է տալիս լուծել ևս մեկ կարևոր խնդիր՝ կանխատեսել կառավարման և մարքեթինգային յրավիճակների փոփոխությունները և կառավարել այն:

Համաշխարհային գործնական կյանքում բիզնես-ծրագրի մշակումը տեղի է ունենում նրա ձևավորմանը ներկայացվող միասնական պահանջների հաշվառման հիման վրա: Կոնկրետ բիզնես-պլանի բովանդակությունը կախված է ծրագրի առանձնահատկություններից, որը որոշվում է մի շարք գործոններով՝ կապված նախագծի ճյուղային ուղղվածության, ձեռնարկության չափերի, նոր ապրանքի նախագծման, առաջադիմական և բարձր տեխնոլոգիաների ներդրման և ֆինանսական պայմանների բարելավման հետ: Գոյություն ունի որոշակի առանձնահատկություն գործող և նոր կազմակերպվող ձեռնարկությունների բիզնես-պլանի միջև: Դասական բիզնես-ծրագրի մշակման հիմնադիրներն են Ջոն Մակկորմուկը և Ռեյ Քրոկը (ԱՄՆ):

Այսպիսով, միջազգային առումով մշակված է բիզնես-ծրագրի հետևյալ դասական կառուցվածքը. (Ուրվագիծ 22):

Ուրվագիծ 22

Բիզնես-պլանը և նրա փոխկապակցվածությունը մարքեթինգի ծրագրի հետ

Բիզնես-պլանի կառուցվածքը

1. Տիրոջուսային թերթ (արտադրանքի, ծառայության բաժին),
2. Ներածական մաս (իրացման շուկայի գնահատում),
3. Ձեռնարկության գոծունեության իրավիճակի վերլուծություն և մրցակցություն,
4. Բիզնես-ծրագրի էությունը,
5. Մարքեթինգի ծրագիր,
6. Արտադրական ծրագիր,
7. Կազմակերպական պլան,
8. Ռիսկի գնահատում,
9. Ֆինանսական պլան,

10. Անփոփ բաժին,

11. Հավելվածներ:

Մակայն բիզնես-պլանի առանձնահատկությունները չեն կյանք սկզբունքային բնույթ: Ցանկացած դեպքում, ձեռներեցին անհրաժեշտ է հստակ ձևակերպել ծրագրի հիմնական գաղափարը և կարողանալ հիմնավորել այն շուկայական հնարավորությունների վերլուծության արդյունքներով:

Այժմ պարզաբանենք բիզնես-պլանի առանձին բաժինների բովանդակությունը և մշակման կարգը, որը կլինի գիտական օգնություն արտադրությանը և ուսումնական գործընթացին կապված կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման հետ:

1. Տիրապետային քերթ

Բիզնես-պլանի այս բաժնի նպատակն է պատկերացում տալ նախագծի մասին: Նրա հիմքը թաքնված ներդրողն է, որը կարող է միանգամից որոնել, թե նախագիծը իր համար ինչպիսի՞ հետաքրքրություն է ներկայացնում:

Սովորաբար, բիզնես-պլանի տիրապետային քերթում արտացոլվում են.

- ձեռնարկության լրիվ անվանումը (հիմնադիրների անվանումը և հասցեն),
- տեղեկություններ սեփականատիրոջ կամ հիմնադիրների, ձեռնարկության կարգավիճակի և առաջարկվող ծրագրի էության մասին,
- ծրագրի ընդհանուր արժեքը, ֆինանսավորման արտաքին աղբյուրների պահանջը և նրա ենթադրվող եղանակը (փայլավճարներ, բաժնետոմսերի թողարկում, վարկեր, գրանտ՝ դրամաշնորհ և այլն),
- տվյալ փաստաթղթի բնութագիրը, որը ենթակա չէ հրապարակման, քանի որ այն հանդիսանում է կոմերցիոն (առևտրա-գործարքային) և ընդհանրապես, բիզնեսի գաղտնիքն ու ծրագիրը մշակողների հեղինակային իրավունքը:

2. Ներածական մաս

Այս բաժնի գլխավոր խնդիրը թաքնված ներդրողի հետաքրքրության ամրապնդումն է ծրագրի նկատմամբ՝ նրա առավել հիմնադրալ, կարևոր դրույթների համառոտ լուսաբանման հիան վրա: Կախված բիզնես-պլանի ընդհանուր ծավալից, տվյալ բաժնի չափը կարող է կազմել 2-4 համակարգչային էջ: Այս բաժնում պարզաբանվում են հետևյալ հարցերը.

- արտադրանքի տվյալ տեսականու հաշվով (ըստ ծառայությունների ձևերի) պահանջարկի գնահատականը ձեռներեցի կողմից՝ շուկայական իրավիճակի վերլուծության անցկացման հիման վրա և ապագայում նրա փոփոխման հեռանկարները,

- ծրագրի տնտեսական հիմնավորումը հեռանկարի հաշվով, այսինքն՝ բիզնես-պլանի ընթերցողին համոզել այն բանում, որ նախագծվող ապրանքը (ծառայությունը) կունենա մեծ պահանջարկ և նրանից կօգտվեն մեծ թվով սպառողներ (հաճախորդներ),

- ծրագրի կենսագործման համար կապիտալի անհրաժեշտ չափը, նրա օգտագործման ուղղությունները, սեփական միջոցներով ձեռներեցի մասնակցությունը:

Ներդրողը բիզնես-ծրագրի մասին դատում է ներածական մասից: Հարկ է նշել, թե կոնկրետ ինչպիսի՞ գործունեությամբ է զբաղվելու ձեռներեցը, որքա՞ն դրամական միջոցներ են անհրաժեշտ ներդրել, ինչպիսի՞ առաջարկ է ապահովում և ինչու՞ է ձեռներեցը համոզված, որ ձեռնարկությունը կհասնի հաջողության:

Բիզնես-պլանի այս բաժնի մշակմանը խորհուրդ ենք տալիս ձեռնամուխ լինել այն բանից հետո, երբ արդեն պատրաստ են մյուս բաժինները:

3. Զեռնարկության գործունեության իրավիճակի վերլուծություն և մրցակցություն

Բիզնես-պլանի այս բաժնի խնդիրը ծրագրի գլխավոր, գաղափարի տնտեսական հիմնավորումն է: Չրա համար էլ այս բաժնում բերվում են մարքեթինգային համալիր հետազոտությունների արդյունքները ըստ հետևյալ ցուցանիշների՝ նախորդ մի քանի տարիների հաշվով.

- ապրանքի վաճառքի (ծառայությունների մատուցման) դինամիկան (փոփոխական զարացումը) ճյուղում, ձեռնարկության գործունեության տվյալ ոլորտում և նրանց աճի կանխատեսվող տեմպերը,
 - գնագոյացման միտումները (զների մակարդակը և նրանց փոփոխությունը, գնագոյացման հիմնական գործոնները, զների փոփոխման նկատմամբ սպառողների (հաճախորդների) հակազդեցությունը,
 - մրցակիցների բազմակողմանի բնութագիրը (նրանց ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ռազմավարության հնարավոր գնահատականը),
 - սպառողների բնութագիրը, շուկայի հիմնական հատվածների առանձնացումը, սպառողական նախապատվությունների գործոնները:
- Այս բաժնում պետք է ցույց տալ հետևյալ հարցերի պատասխանները.
- ճյուղում ինչպիսի՞ն են եղել ապրանքի (ծառայությունների) վաճառքի ծավալները վերջին 3-5 տարում,
 - ինչպիսի՞ աճի տեմպ է ապահովվում,
 - այդ ճյուղում վերջին երեք տարում ինչքա՞ն նոր ձեռնարկություններ են հիմնադրվել,

• վերջին տարիներին ապրանքի (ծառայության) ինչ նոր տեսակներ է արտադրվել (մատուցվել),

• ի՞նչ պաշարների, գործոնների հաշվին կարելի է առաջ անցնել մրցակիցներից:

4.Բիզնես-ծրագրի էությունը

Այս բաժնում շարադրվում է ծրագրի հիմնական գաղափարը: Կապիտալ ներդրումը հստակ պետք է պատկերացնի նրա էությունը, ձեռնարկության տնտեսական նախադրյալները և միջոցներով ապահովվածությունը: Այդ կապակցությամբ տվյալ բաժնում արտացոլվում են հետևյալ խնդիրները.

• ձեռներեցի հիմնական նպատակները՝ անկախ սեփականության ձևից (սեփական նոր գործ սկսելը, նոր ապրանքի նախագծում և շուկա թափանցում, նոր շուկաների նվաճում, շուկայի հատվածների ընդլայնում),

• սպառողների բնութագրերը,

• արտադրանքի տեսական ու մանրակրկիտ նկարագրումը, ուրի չափանիշները պետք է համապատասխանեն շուկայի ընտրված հատվածի պահանջներին,

• մշակման փուլերը և լիցենզիան, արտոնագրային իրավասությունը և ապրանքի պաշտպանվածությունը անբարեխիղճ մրցակցությունից,

• ձեռնարկության բնութագրերը ծրագրի կենսագործման համար, գտնվելու վայրի առավելությունները և թերությունները:

• ծրագրի ընդհանուր արժեքը՝ կապիտալ ներդրումների չափը:

Սեփական ֆինանսական պաշարներով ապահովվածությունը՝ արտադրական, մարքեթինգային ու արտադրության կազմակերպման ու կառավարման ծախսերը:

Այս բաժինը մշակելու համար հարկ է պատասխանել հետևյալ հարցերին.

• ինչպի՞սի ապրանք է առաջարկվում արտադրել (կամ ծառայություն մատուցել),

• նկարագրել առաջարկվող ապրանքը, ներառյալ լիցենզիան (արտոնագիրը), պատճենահանումը կամ ապրանքային, ֆիրմային նշանները (ծառայությունների մատուցման, սպասարկումների տեխնոլոգիան),

• որտե՞ղ է տեղաբաշխվելու ֆիրման,

• տարածքը, շենքը ենթակա է՞ նորոգման: Ինչք՞ան կկազմեն նորոգման, վարձակալման ծախսերը,

• դա ձեր սեփական տարածքը, շենքն է՞, թե՞ առաջարկվում է այն վարձակալել,

• հարմա՞ր է այդ շենքը, տարածքը,

• ինչպիսի՞ մասնագիտությունների աշխատողներ են ձեզ անհրաժեշտ և ուրքա՞ն,

• գրասենյակի (օֆիսի), արտադրամասի համար ինչպիսի՞ կահավորում, սարքավորումներ են անհրաժեշտ,

• կարելի՞ է այդ սարքավորումները վարձակալել, թե՞ հարկ է այն գնել,

• ու՞նեք ձեռներեցության փորձ

• ունե՞ք ղեկավար աշխատանքի փորձ,

• նշեք ձեր մասին, տարիքը, կրթությունը, հակումները, նախասիրությունները, հետաքրքրությունները (իրավաբանական անձի դեպքում ղեկավար անձնակազմի մասին),

• ինչու՞ եք որոշել դառնալ ձեռներեց (անհատ ձեռնարկատեր),

• ինչո՞վ եք համոզված ձեր հաջողության մեջ,

• ինչպիսի՞ փուլում է գտնվում ձեր նոր ապրանքի նախագծումը:

5.Մարքեթինգի ծրագիր (marketing micse)

Այս բաժնում հստակ ձևով որոշվում են մարքեթինգի բոլոր տարրերը՝ ցույց տալով, թե՞ ինչ պետք է կատարել, ու՞ն կողմից, ե՞րբ և դրա համար ինչպիսի՞ միջոցներ են անհրաժեշտ: Մարքեթինգի ծրագրի մշակման դասական հիմնադիրներից է ամերիկացի Ֆրենկ Պերոյուն:

Մարքեթինգի ծրագրում հարկ է պատասխանել հետևյալ հարցերին.

• ապրանքի (ծառայությունների) ծավալները,

• իրացման ուղղությունները,

• պահանջումքների ձևավորումը (ֆոս) և իրացման խթանումը (սփս)՝ միասին ֆոսփս (Fosstisse),

• գովազդի կազմակերպումը,

• նոր ապրանքի (ծառայության) նախագծումը և տեսականու ընդլայնումը (diversification),,

• նպատակային ցուցանիշները:

6.Արտադրական ծրագիր

Այս բաժինը բովանդակում է բոլոր խնդիրներ ցանկը, որոնք ծագում են արտադրության ոլորտում և նրանց լուծման ձևերը:

Այս բաժնի մշակման ժամանակ հարկ է լուսաբանել հետևյալ հարցերը.

• արտադրանքի արտադրության (ծառայությունների մատուցման) ծավալները և տեսականին,

• արտադրական հզորությունները, որոնք անհրաժեշտ են արտադրական ծրագրերի կատարման համար,

• տեխնոլոգիական գործընթացի նկարագրերը,

• ենթակապալառուները, արտադրական տարածքները, հնարավոր մատակարարները և անհրաժեշտ հումքն ու նյութերը,

• արտադրանքի ինքնարժեքը և նրա իջեցման հնարավորությունները:

7. Կազմակերպական պլան

Բիզնես-պլանի այս բաժնի խնդիրները կապված են նախագծի մշակման ուղղությամբ կազմակերպչական միջոցառումների ապահովման հետ: Գործող ձեռնարկությունների առումով այն կապված է նրանց կազմակերպական և կառավարման կառուցվածքների համապատասխանեցման աստիճանի հետ:

Այս բաժնի կառուցվածքը, հարկ է, որ ընդգրկի հետևյալ հարցերը,

- ձեռնարկության կազմակերպական-իրավական ձևը,
- արտադրական կազմակերպական, մարքեթինգային և կառավարման կառուցվածքները,
- ձեռներեցների և ղեկավար անձնակազմի բնութագրերը,
- կադրային քաղաքականությունը և անձնակազմի հետ տարվող աշխատանքի վիճակը:

Այս բաժինը մշակելու համար անհրաժեշտ է տալ հետևյալ հարցերի պատասխանները.

- ինչպիսի՞նք է հիմնադրվող ձեռնարկության սեփականության ձևը,
- եթե՞ խոսքը վերաբերում է ընկերակցությանը, նկարագրեք գործընկերների և կանոնադրական կապիտալի՝ բաժնետիրական (հաշվառման ստանդարտով՝ բաժնեհավաք կապիտալ) չափը,
- համաձայնագրի էությունը,
- եթե՞ խոսքը վերաբերում է բաժնետիրական ընկերության ստեղծմանը, նկարագրեք հիմնադիրներին, հիմնական փայտերերին և թե փայտբաժնի ո՞ր մասն է տնօրինում ձեռնարկության տնօրինությունը (հիմնական կապիտալի ո՞ր մասը),
- ինչքա՞ն բաժնետոմսեր և ինչպիսի՞ տեսակի (ձայների իրավունքով և առանց ձայների իրավունքի) բաժնետոմսեր են արդեն թողարկված: Որքա՞ն է նախատեսվում թողարկել ևս,
- թվարկեք տնօրենների խորհրդի անդամներին (ազգանունները, հասցեները, համառոտ կենսագրական և աշխատանքային տեղեկությունները),
- ո՞վ է իրավասու ստորագրել ֆինանսական փաստաթղթերը,
- ո՞վ է ընդգրկված ձեռնարկության ղեկավար անձնակազմում: Ցույց տվեք ազգանունները, հասցեները և կենսագրական ու աշխատանքային

համառոտ տեղեկությունները,

- ինչպե՞ս է բաշխվում ղեկավար անձնակազմի միջև պարտականությունները,
- ի՞նչ չափով աշխատավարձ է նախատեսվում ձեռնարկության ղեկավար անձնակազմի համար:

8. Ռիսկի գնահատում

Բիզնես-պլանի այս բաժնում բնութագրվում է հիմնահարցերը և դժվարությունները, որոնց հետ հարկ կլինի առճակատվել ծրագրի կենսագործման ժամանակաշրջանում:

Կապիտալ ներդրողը պետք է համոզվի, որ ձեռներեցը լուրջ է մտնում գործին և պատրաստ է գնալ ռիսկի, բարդությունների, որոնք միշտ էլ ուղեկցում են՝ նույնիսկ ամենալավ մշակված ծրագրի իրականացմանը: Այս բաժնում հիմնավորվում են հնարավոր բոլոր տնտեսական (ապահովագրվող և չապահովագրվող) ու ֆինանսական ռիսկերը:

9. Ֆինանսական պլան

Բիզնես-պլանի այս բաժնի խնդիրը հանդիսանում է ամբողջ նախագծի տնտեսական գնահատականը՝ ծախսերի փոխհատուցման, շահույթի չափի, շահութաբերության մակարդակի և ձեռնարկության ֆինանսական դրության տեսանկյունից: Լրիվ տեսքով այս բաժինն ընդգրկում է մի շարք ֆինանսական փաստաթղթեր, որոնք հանդիսանում են.

- եկամուտների և ծախսերի ամփոփ հաշվեկշիռը (եկամուտները, ինքնարժեքը (ընթացիկ ծախսերը), համախառն շահույթը, հարկերը, գուտ շահույթը),

Սովորաբար, ծրագրի կենսագործման առաջին տարում հաշվեկշիռը կազմվում է ամիսների կտրվածքով, իսկ հետագա ժամանակաշրջանի հաշվով՝ տարեկան հաշվարկումով.

- դրամական հոսքերի (մուտքերի և ծախսերի), այսինքն՝ ֆինանսական պլանը՝ նույն պարբերականությամբ (մուտքեր և վճարումներ), ըստ ուղղությունների և կանխիկ փողի մնացորդը,
- ֆինանսական՝ հաշվեկշռային պլան՝ առաջին տարվա հաշվով (ակտիվներ, պասիվներ՝ սեփական կապիտալ ու պարտավորություններ),
- ըստ աղբյուրների ֆինանսական պլանը (սեփական ֆինանսական միջոցներ, վարկեր),
- դրամական միջոցների օգտագործումը:

10. Ամփոփ բաժին

Բիզնես-պլանի մշակումը սկսվում է վերջից՝ ամփոփ բաժնից: Այն, ի-

հարկե, պետք է ամփոփվի վերջում, երբ պատրաստ են բոլոր բաժինները և հստակ է ծրագիրը: Ամփոփ բաժինը կապված է ծրագրի համար պահանջվող սեփական և փոխառու կապիտալի պահանջի հիմնավորման հաշվարկների հետ:

Այն պետք է չգերազանցի չորս, իսկ բիզնես-ծրագիրը՝ 25 համակարգչային էջից: Այն պետք է շարադրվի պարզ, հստակ և տնտեսապես հիմնավորված կարգով:

Բիզնես-պլանի ամփոփ բաժնի վերջին էջը պետք է նվիրվի վերջնական ֆինանսական արդյունքին, որին կցվում են նաև առանձին հաշվարկներ՝ հավելվածների ձևով:

Բիզնես-պլանը հանդիսանում է բոլոր ձեռներեցների համար ուղեցույց աստղ, որով էլ կազմակերպում են ձեռնարկության տնտեսաֆինանսական գործունեությունը:

Բիզնես-պլանի մշակման հիմնական փուլերը և հիմնահարցերը

Ըստ բիզնես-պլանի հիմնական բաժինների կառուցվածքի և բովանդակության չափի, կարելի է եզրակացնել, որ նրա մշակման համար հարկավոր է որոշակի ժամանակ: Այդ կապակցությամբ հիմնական որոշումների մշակման և ընդունման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքումը երկարատև գործընթաց է: Պարզ է, որ բիզնես-պլանի տնտեսական հիմնավորվածությունը որոշակի չափով կապված է նրա տեղեկատվական հիմքի հավաստիությունից: Այդ փաստաթղթի կարճ ժամկետում մշակելը հնարավոր է միայն մշտական գործող համակարգի ուսումնասիրման հիման վրա, ելնելով ձեռնարկությունում մարքեթինգային վիճակի վերլուծությունից:

Բիզնես-պլանի մշակման սկիզբը կապված է մարքեթինգային հետազոտությունների և իրավիճակի վերլուծության հետ: Առաջին հերթին, անհրաժեշտ է զննահատել ձեռնարկության գործունեության ընթացիկ վիճակը: Դրա համար տրվում է ձեռնարկության և թողարկվող արտադրանքի ընդհանուր բնութագիրը, զննահատվում է հիմնական ֆոնդերի, կազմակերպական և կառավարման կառուցվածքի, տեխնոլոգիական և գիտատեխնիկական առաջընթացի ներդրման վիճակը, սպասարկող շուկաները և սպառողների հիմնական խմբերը, ինչպես նաև անձնակազմի աշխատանքային գործունեության և ձեռնարկության ֆինանսական վիճակը:

Որոշելով ձեռնարկության ուժեղ և թույլ կողմերը, կտեղծվի հիմք

ռազմավարական զարգացման և բիզնես-ծրագրի մշակման համար:

Մյուս կողմից, ձեռնարկության ներքին իրավիճակի վերլուծությունը լրացվում է մարքեթինգային միջավայրի վիճակի ուսումնասիրությամբ, որը պետք է բնութագրի տնտեսական իրավիճակը շուկայում: Հարկ է նաև զննահատել տարբեր տնտեսական իրավիճակ ստեղծող գործոնների գործողությունները, որոշել սպառողական առավելությունների (նախապատվության) համակարգը, տալ հիմնական մրցակիցների բնութագիրը: Նշված հետազոտությունների հիման վրա բացահայտվում են ձեռնարկության և նրա կառուցվածքային ստորաբաժանումների (արտադրամաս, բրիգադ, ստրատեգիական տնտեսական ստորաբաժանումներ և կենտրոններ) թաքնված հնարավորությունները, որոնք կարող են օգտագործվել՝ որպես հիմք զարգացման ռազմավարության մշակման համար: Ընդ որում, կարող են մշակվել մի քանի տարբերակներ, արտադրության հիմնական ուղղության (մասնագիտացման) և ապրանքատեսականու պահպանումը, արտադրության դիվերսիֆիկացիա (արտադրական կարողությունների վերակառուցում, թողարկվող արտադրանքի նորացում, շուկայի բաժնեմասի ընդլայնում՝ ի հաշիվ մարքեթինգի համալիր տարրերի զարգացման): Այնուհետև, կատարվում է այդ հնարավորությունների վերլուծություն և ընտրվում է առավել արդյունավետ տարբերակը՝ կառավարչական, մարքեթինգային օպտիմալ (լավագույն) որոշման հիման վրա:

Ընդունված նախագիծը բովանդակում է հիմնական նպատակը, որը պետք է կենսագործել գործնական կյանքում: Ելնելով դրանից, որոշվում է առանձին կառուցվածքային ստորաբաժանումների և ծառայությունների խնդիրները ու զարգացման ուղղությունները: Նման տեղեկատվությունը աշխատանքների ընդհանուր կարգի և գրաֆիկի հետ մեկտեղ հասցվում է անմիջական կատարողներին, որոնք էլ մշակում են կոնկրետ ծրագրերի միջոցառումներ՝ ըստ իրենց ստորաբաժանման զարգացման ուղղությունների:

Հաջորդ փուլերում տեղի է ունենում ծրագրերի ամբողջացում, կորեկտիվակա (ճշգրտում) և բիզնես-պլանի վերջնական տարբերակի հաստատում: Վերջինս դառնում է ուղեցույց՝ ամբողջ ձեռնարկության և կառուցվածքային ստորաբաժանումների, ծառայությունների համար և ուղարկվում է պոտենցիալ ինվեստորին (ֆինանսական հնարավորություն ունեցող ներդրողին) ծանոթանալու և նախագծի իրականացմանը մասնակցելու համար: Ըստ նախատեսված միջոցառումների իրականացման, բիզնես-պլանը օգտագործվում է հետևյալ նպատակներով.

• նրա կատարման ընթացքի վրա վերահսկողության կազմակերպում նախատեսված և փաստացի ցուցանիշների հիման վրա,

• շեղումների առկայության դեպքում անհրաժեշտ ճշերտումների, կարգավորումների կատարում:

Բիզնես-պլանի նախապատրաստման և մարքեթինգային գործունեության մակարդակի միջև սերտ կապի առկայության պատճառով ձեռնարկությունները դժվարանում են բիզնես-պլանի մշակման գործում: Հիմնական դժվարությունը մարքեթինգային անհրաժեշտ տեղեկատվության ստացման հիմնահարցերն են, նրա հուսալիությունը, հավաստիությունը, ձեռնարկության փորձի բացակայությունը, ինքնուրույն կատարելու շուկայի համալիր ուսումնասիրություն: Մյուս կողմից, դրա պատճառներից մեկը հանդիսանում է տնտեսագիտական ծառայությունների անգործությունը և մարքեթինգային ծառայությունների բացակայությունը մեր երկրի շատ ձեռնարկություններում: Հենց դրա համար էլ բիզնես-պլանի, այդ թվում մարքեթինգի ծրագրի մշակման վրա ծախսվում է մեծ չափով աշխատածամանակ և ներկայումս, գրեթե, միայն մշակում են վարկային ծրագիր՝ առևտրային բանկերից վարկ վերցնելու համար: Դրա համար հարկավոր է ձեռնարկություններում ոչ միայն գործի դնել տնտեսագիտական ծառայությունը, ստեղծել մարքեթինգի ծառայություն, նրա կառուցվածքում ընդգրկելով ներկայիս իրացման բաժինները, առևտրային ծառայությունում ստեղծել շուկայի համալիր ուսումնասիրման խումբ: Մյուս դժվարությունը կապված է մարքեթինգի համալիր միջոցառումների (ծրագրերի) նախատեսման փորձի պակասի, հատկապես, կապված տնտեսական և զների քաղաքականության, ծրագրերի մշակման, պահանջարկի ձևավորման և իրացման խթանման, այսինքն՝ ֆոսֆիտի համակարգի ծրագրման և ապրանքի իրացման կազմակերպման հետ: Բիզնես-պլանի մշակման մյուս դժվարությունը կապված է ազգային դրամի արժեզրկման, ձեռնարկությունների ֆինանսական ծանր վիճակի, ֆինանսական սեփական միջոցների և նույնիսկ փոխառու միջոցների (հատկապես երկարաժամկետ) հիպոթեկային, առևտրային վարկերի փոքր ծավալների հոտ:¹ Այդ վիճակը շտկելուն անշուշտ, կնպաստեն սեփականաշնորհման (մասնավորեցման) գործընթացը, տնտեսավարման առա-

ջավոր ձևերի, մարքեթինգի գործնական ներդրումը¹, ձեռնարկատիրական գործունեության մեջ և անցումը մենեջմենթի մեթոդների և ձեռներեցության սկզբունքների կիրառման, ինչպես նաև ներքին փոխառու միջոցների, հարկային քաղաքականության բարելավման, տեղական և օտարերկրյա ներդրումների և համատեղ ձեռնարկությունների ավելացման, գործող ձեռնարկությունների տեխնոլոգիական վերազինման, արտադրական հզորությունների ընդլայնման հիման վրա:

Բիզնես-ծրագրի հիմնավորված լինելու համար կարևորը նյութական, աշխատանքային և ֆինանսական պաշարների տարեկան պահանջի, ինչպես նաև իրացման ծավալի որոշումն է՝ ըստ անվանաբերության և գործառնական լծակի արդյունաբերության, որին անդրադարձել ենք նախորդ հարցերում:

✱

1. Վազգեն Վարդանյան - «Բանկային գործ. բանկային մենեջմենթ. փող. վարկեր. բանկեր», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2004 էջ 391-526

1. Վ. Ա. Վարդանյան - Մարքեթինգի գործնական ներդրման և նրա ծրագրի մշակման կարգը («Մոլվես Խորենացի» գիտական հանդես, N2, 2002

1. А.М. Бабич, Л.Н. Павлова - финансы, учебник, М.2000.
2. Общая теория финансов – (под ред. Л.А. Дробозиной), М.1995.
3. Д.С.Моляков, Е.И.Шохин - Теория финансов предприятий, М.2001.
4. Финансы. Учебник, 2-ое издание, /под ред. В.В.Ковалева/, М.2004
5. Финансы: Денежное обращение. Кредит. Учебник для вузов (под ред. Л.А. Дробозиной), М.1997.
6. Финансы предприятий – Учебное пособие (под ред. Е. Бородиной), М. 1995.
7. В.И. Малыхин - Финансовая математика, М.1999.
8. Финансы в управлении предприятием (под ред.А.М.Ковалевой), М.1995.
9. О.В.Ефимова - Финансовый анализ, М.2002.
- 10.Н.Н. Тренев - Управление финансами, М.2000.
- 11.И.Т. Балабанов - Основы финансового менеджмента. Учебное пособие. М. 1997.
- 12.Дж. К.Ван-Хорн - Основы управления финансами, М.2000.
- 13.С.И.Берлин - Теория финансов. Учебное пособие, М.2000.
- 14.Н.Е. Заяц, М.К. Фисенко - Теория финансов - Минск, 1997.
- 15.И.А. Бланк - Стратегия и тактика управления финансами, Киев, 1996.
- 16.И.А.Бланк – Основы финансового менеджмента, М.1999.
- 17.Практикум по финансовому менеджменту (под ред Е.С. Стояновой), М.2000.
- 18.Е.С.Стоянова и др.-Управление оборотным капиталом, М.1998.
- 19.Э.П. Уткин - Финансовое управление, М.1997.
- 20.Финансы – (под ред. проф. А.М. Ковалевой, В.И. Колесникова), М.1999.
- 21.А.Д. Шеремент, Р.С.Сеифулин-Финансы предприятий, М.1999.
- 22.В.Г.Белолипецкий –Финансы фирмы, учебное пособие, М. 1998.
- 23.А.П. Белых - Основы финансового рынка, М.1999.
- 24.В.В. Ковалев - Управление финансами, учебное пособие, М.1998.
- 25.А. Крушивиц – Финансирование и инвестиции, М.2000.
- 26.Роберт Н.Холм - Основы финансового менеджмента, М.1993.

- 27.В.Г.Савицкая - Анализ хозяйственной деятельности предприятий, М.1998.
- 28.Статистика финансов, учебное пособие (под ред. проф. Салино В.Н.), М. 2000.
- 29.Э.П. Уткин – Финансовое управление, М.1997.
- 30.Финансовый менеджмент (теория и практика), под ред. Е.С. Стояновой, М.1999.
- 31.В.В. Глухов и др.- Финансовый менеджмент (участники рынка, инструменты, решения); Учебное пособие, М.1995.
- 32.Н.А. Сафронов – Экономика организаций (предприятий), М.2004.
- 33.В.К. Складенко и др.- Экономика предприятий, М.2004.
- 34.А.С. Пелих - Экономика предприятий (фирмы), М.2004.
- 35.М.С. Абрютин - Экономика предприятий. Учебник, М.2004.
- 36.И.О. Волков – Экономика предприятий. М., 2001.
- 37.А.Е. Кирлик и др.- Экономика предприятий; М.2004.
- 38.В.А. Швандер - Экономика предприятий, Учебник. М.2004.
- 39.Экономика. Учебник (под ред. А.С. Булатова), М.1995.
- 40.Н. Зайцев - Экономика промышленной предприятий. Учебное пособие, М.1996.
- 41.Р. Макконелл, Л. Брю-экономика, М.1997.
- 42.Экономика предприятия (под ред. А.И. Руденко и др.), Минск, 1995.
- 43.Экономика предприятий (под ред. В.Я. Горфонкалая), М. 1997.
- 44.В.А. Абчук – Задачник по экономике, М.1997.
- 45.В.Грузинов- Экономика предприятий и предпринимательства, М.1994.
- 46.О.Н.Лихачева- финансовое планирование на предприятие, М.2004
- 47.Լ. Բաղանյան և ուրիշներ –Չեռնարկատիրական կազմակերպությունների ֆինանսներ (խնդիրների ժողովածու), Երևան, 2002:
- 48.Ֆինանսներ և վարկ (ԵրԳՏԻ-ի կրատ, Լ. Բաղանյանի խմբ.), Երևան, 2003.
- 49.Աշոտ Բայադյան – Չեռնարկությունների ֆինանսական դրության գնահատումը, Երևան, 2002:
- 50.Վ.Ա. Վարդանյան – Ֆինանսական մենեջմենթ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 1999.
- 51.Վազգեն Վարդանյան- Բանկային գործ. Բանկային մենեջմենթ.

Փող վարկեր. Բանկեր. Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2004.:

52. Մերուժան Գալստյան, Չեռնարկությունների ֆինանսներ, Երևան, 2003:

53. Տիգրան Դավթյան - Արժեթղթերով գործառնություններ, Երևան, 2003.

54. Աշոտ Մարկոսյան - Շուկայական տնտեսության հիմունքները, Երևան, 2000.

55. ՀՀ օրենքը «Անվճարունկության (սնանկացման) մասին, Երևան, 2004:

56. ՀՀ օրենքը պետությունների մասին, Պաշտոնային տեղեկագիր, թիվ 4, 2004:

57. ՀՀ օրենքը պետությունների մասին, Պաշտոնային տեղեկագիր, թիվ 3, 2005:

58. "Деловой экспресс" – շաբաթաթերթ, N1-24 , 2003-2005:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ3

**1-ԻՆ ԲԱԺԻՆ – ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
(ՖԻՆԱՆՍՆԵՐ)**

**ԳԼՈՒԽ 1. ՖԻՆԱՆՍԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

1.1. Դասընթացի էությունը, խնդիրները և մեթոդները5

1.2. Ֆինանսների էությունը և ծագման նախադրյալները.....7

1.3. Ապրանքափողային, ֆինանսական և դրամական կարաբերու-
թյունները որպես ֆինանսներ7

1.4. Ֆինանսների և փողի առանձնահատկությունները10

1.5. Ֆինանսերի տեսակները և ֆունկցիաները (գործառույթները).....13

1.6. Ֆինանսների դերը և սկզբունքները17

**ԳԼՈՒԽ 2. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱ ԿԱ-
ՌՈՒՅՎԱԾՔԸ : ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐ**

2.1. Պետության ֆինանսական համակարգը և նրա կառուցվածքը29

2.2. Պետության ֆինանսական քաղաքականությունը.....36

2.3. Ֆինանսական շուկաները և նրանց դասակարգումը43

2.4. Բյուջետային համակարգը, նրա կառուցվածքը, իրավական
հիմքերը և սկզբունքները49

**ԳԼՈՒԽ 3. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐԸ**

3.1. Ադամ Սմիթի արժեքի աշխատանքային, սահմանային օգտակարու-
թյան և հարկային տեսությունները60

3.2. Դավիթ Ռիկարդոյի հարկային տեսությունը.....61

3.3. Ջեյմս Միլի արդյունավետ հարկային տեսությունը, նվազագույն
զանքյուղ և չհարկվող եկամտի նվազագույն շեմ հասկացությունների էու-
թյունը61

3.4. Ֆինանսների մասին մարքսիստական տեսությունը և նրա ազդեցու-
թյունը շուկայական տնտեսության ֆինանսների ընդհանուր տեսություն-
ների վրա.....64

3.5. Ջոն Զեյնզի հարկային տեսությունը և շուկայական տնտեսության

պետական կարգավորումը	67
3.6. Նեոքեյնզականների ֆինանսների ընդհանուր տեսությունները հակաճգնաժամային իրավիճակների վերաբերյալ.....	68
3.7. Ֆինանսների ընդհանուր տեսությունները Ռուսաստանում և Հայաստանում.....	70
3.8. Հարկային քաղաքականությունը , հարկերի ետքումը, հարկային հասկացությունները և հարկերի բնութագիրը Հայաստանում.....	71
3.9. Արթուր Լաֆերի կորը՝ հարկադրույթների և պետությունների եկամուտների փոխադարձ կապի վերաբերյալ	102

ԳԼՈՒԽ 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ (ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ) ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

4.1. Ֆինանսական ծրագրավորումը (պլանավորումը) և ֆինանսավորումը շուկայական տնտեսության պայմաններում	106
4.2. Բյուջե հասկացությունը և նրա տեսակները՝ ըստ բնույթի ու եկամուտների ապահովվածության	115
4.3. Պետական ֆինանսներ և պետական բյուջե	120
4.4. ՀՀ օրենքը պետությունի մասին	124
4.5. Պետությունի եկամուտները և նրա աղբյուրները	141
4.6. Պետությունի եկամուտների կառուցվածքը և նրա որոշման կարգը.....	142
4.7. Պետությունի ծախսերի ետքումը և նրանց ուղղությունները	146
4.8. Պետությունի ծախսերի կառուցվածքը և նրա որոշման կարգը.....	147
4.9. Պետությունի դեֆիցիտը (ճեղքվածքը)-և նրա ծածկման աղբյուրները	150
4.10. ՀՀ պետությունները 2004-2005թթ.....	154
4.11. Պետությունի կատարման վիճակը Հայաստանի Հանրապետությանում (2002-2004թթ.).....	165
4.12. Արտաբյուջետային սոցիալական հիմնադրամ և պետական ապահովագրություն	173

ԳԼՈՒԽ 5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԲՅՈՒՋԵ

5.1. Պետական և տեղական բյուջեների փոխհարաբերությունները.....	185
5.2. Տեղական բյուջե: Նրա քննարկման և հաստատման կարգը.....	192
5.3. Տեղական բյուջեի եկամուտների աղբյուրները և ծախսերի ուղղությունները	193

ԳԼՈՒԽ 6. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ

6.1. Տնային տնտեսությունների՝ բնակչության ֆինանսների ետքումը.....	208
6.2. Բնակչության եկամուտներն ու ծախսերը և նրանց կառուցվածքը.....	220

ԳԼՈՒԽ 7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍԱՐԽՆՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Ֆինանսական մարմինները	224
7.2. Ֆինանսական աշխատանքների կազմակերպումը.....	231
7.3. Ֆինանսական վերահսկողություն.....	241

2-ԴԻ ԲԱԺԻՆ - ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԳԼՈՒԽ 8. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ (ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՖԻՆԱՆՍՆԵՐ

8.1. «Չեռնարկությունների ֆինանսներ» դասընթացի ետքումը, խնդիրները և մեթոդները	245
8.2. Ֆինանսական ծրագրավորումը (պլանավորումը) ձեռնարկություններում՝ շուկայական տնտեսության պայմաններում	248
8.3. Չեռնարկությունների ֆինանսական պլանը՝ եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը	252
8.4. Չեռնարկությունների ներդրումները հիմնական կապիտալում և նրա հաշվին կատարվող ծախսերը	257
8.5. Չեռնարկությունների ներդրումները շրջանառու կապիտալում և նրա հաշվին կատարվող ծախսերը	265
8.6. Կապիտալ ներդրումները և նրա տեսակները.....	269
8.7. Չեռնարկությունների շահույթի տնտեսական ետքումը և գործառույթները: Համախառն շահույթի ձևավորման աղբյուրները և բաշխման կարգը.....	289
8.8. Անվճարաբերության ապահովումը գործառնական լծակի արդյունավետության միջոցով	299
8.9. Տնտեսավարող սուբյեկտների ինքնաֆինանսավորումը և սեփական ֆինանսական պաշարների աղբյուրները	303
8.10. Ֆինանսական լներիղջ.....	306

3-րդ բաժին- ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 9. ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՂԱԿՆԵՐ

9.1. «Չեռնարկությունների տնտեսագիտություն» դասընթացի էությունը, խնդիրները և մեթոդները312

9.2. Չեռնարկությունները որպես երկրի տնտեսության հիմնական օղակներ. Ապրանքը և նրա հատկանիշները: Ապրանքի թվային ծածկագիրը316

9.3. Սեփականության ձևերը և ձեռնարկությունների տեսակները շուկայական տնտեսության պայմաններում318

9.4. Չեռնարկությունների ձևերը և արտադրության չափերը բնութագրող ցուցանիշները333

9.5. Չեռնարկությունների տնտեսական պաշարները, ունեցվածքը և կապիտալը336

ԳԼՈՒԽ 10. ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

10.1. Արտադրության էությունը, և նրա տեսակները.....338

10.2. Արտադրության կազմակերպման սկզբունքները: Արտադրության կենտրոնացում և համակենտրոնացում340

10.3. Արտադրության մասնագիտացում և տեղաբաշխում341

ԳԼՈՒԽ 11. ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ:

11.1. Չեռնարկությունների ոչ ընթացիկ նյութական ակտիվները և նրանց դասակարգումը : Հիմնական միջոցները, նրանց դասակարգումը, կառուցվածքը, օգտագործման արդյունավետության ցուցանիշները և հաշվարկման կարգը.....349

11.2. Չեռնարկությունների հիմնական միջոցների մաշվածությունը և նրա հաշվարկման մեթոդները շուկայական տնտեսության պայմաններում362

11.3. Չեռնարկությունների հիմնական միջոցների նորոգման կազմակերպումը և օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիները.....373

11.4. Չեռնարկության ընթացիկ ակտիվները: Շրջանառու միջոցների էությունը, դասակարգումը և կառուցվածքը374

11.5. Շրջանառու արտադրական ֆոնդերի օգտագործման ցուցանիշները, նրանց հաշվարկման կարգը և բարելավման ուղիները.....376

11.6. Շրջանառու միջոցների ծրագրավորումը: Հումք և նյութերի տարեկան պահանջի ծրագրավորումը և չափավորումը382

ԳԼՈՒԽ 12. ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐ ԵՎ ԱՐՏԱԳՐԱՆՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ

12.1. Չեռնարկությունների արտադրական ծախսերը և նրանց դասակարգումը389

12.2. Վարչական և քնդիանուր այլ ծախսեր: Նրանց բաշխման մեթոդները392

12.3. Արտադրության սահմանային ծախսեր: Հաստատուն և փոփոխուն ծախսեր395

12.4. Արտադրանքի ինքնարժեքը, նրա տեսակները և հաշվարկման կարգը396

ԳԼՈՒԽ 13. ԳԻՆ ԵՎ ԳՆԱԳՈՅԱՑՈՒՄ: ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԻ ԳՆԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1. Ապրանքի գին և գնագոյացում: Ապրանքի գնի ձևավորումը և գների տեսակները.....400

13.2 Ապրանքի գնի սահմանման մեթոդները շուկայական տնտեսության պայմաններում404

ԳԼՈՒԽ 14. ԿՈՄԵՐՑԻՈՆ ՀԱՇՎԱՐԿԸ ԵՎ ՆՐԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

14.1. Կոմերցիոն (առևտրային) հաշվարկի էությունը.....406

14.2. Կոմերցիոն հաշվարկի կազմակերպման սկզբունքները408

14.3. Շահույթի էությունը, ձևերը և հաշվարկման կարգը410

14.4. Շահութաբերությունը, նրա ցուցանիշները և հաշվարկման կարգը...411

14.5. Շահույթի ծրագրավորումը (պլանավորումը)414

14.6. Արտադրանքի իրացման ծավալի որոշումն ըստ անվնասաբերության415

14.7. Շահույթի ավելացման և շահութաբերության բարձրացման ուղիները.....417

14.7.1.Արտադրանքի ինքնարժեքի իջեցումը որպես շահույթի ավելացման և շահութաբերության բարձրացման հիմնական ուղի417

14.7.2.Արտադրանքի որակը և նրա բարելավման ուղիները420

14.7.3. Ապրանքարտադրողների մրցունակությունը և ապրանքի մրցակցությունը շուկայական տնտեսության պայմաններում421

14.7.4. Աշխատանքի արտադրողականությունը և նրա բարձրացման ուղիները425

14.8. Չեռնարկությունների բիզնես-ծրագիրը, նրա բաժինների բովանդակությունը և մշակման կարգը429

ՎԱԶԳԵՆ ԱՐԱՄԱՅՅԻՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԸՆԳՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ՖԻՆԱՆՍՆԵՐ.
ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍՆԵՐ.
ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Ուսումնական ձեռնարկ

ВАЗГЕН АРАМАЙСОВИЧ ВАРДАНЯН

**ОБЩАЯ ТЕОРИЯ ФИНАНСОВ. ФИНАНСЫ.
ФИНАНСЫ ПРЕДПРИЯТИЙ.
ЭКОНОМИКА ПРЕДПРИЯТИЙ.**

Учебное пособие
/на армянском языке/
"Егея" Ереван, 2005

**Տեքստի համակարգչային շարվածքը՝ Ժաննա Արարատյանի
Մասնագիտական խմբագիր՝ Կարինե Թերլեմեզյան
Տեխ. խմբագիր՝ Գոհար Բարսեղյան**